


418



9(47.925)
F

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

A II
10199



Տպագրիչ-Հրատարակիչ Ջ. Գալինսկի Զ. Քիւրառ
և ԳՈՒԻՍ ՊԱՊԸ ԱԼԻ ԶԱՏՏԷՍԻ ՕՐԻԱՆ ՊԷՑ ԽԱՆ ԲԻԻ 25

1912



ԱՍԵՆ ԻՐԱՐՈՒՄ Ե ՇԵՂՆԱԿՆ ՎԵՐԱՊԱՅՈՒՄ

Ազնի՛ւ բարեկամ ,

Մասնաւոր գրով մը հաղորդելով ինձ՝ քե՛ քան սարիներու աշխատութեամբ երկասիրուած « Հայկական Պատմութիւն » մը առաջադրած էք հրատարակել, քանի մը-տողով ալ՝ այդ առթիւ՝ կը յայնչէք քե՛ այդ ընդարձակ գործը պատրաստած էք , մեկ կողմէ՝ ազգային աւանդութիւններու մասը շանտեսելով , եւ միւս կողմէ՝ լուրջ մտադրութիւն ընծայելով կարող գիտուններու ձեռամբ կատարուած ուսումնասիրութեանց եւ հետազոտութիւններու՝ մեր պատմութեան վերաբերմամբ :

Ձեմ վարանիւր այժմէն շնորհաւորելու ձեր ձեռնարկը՝ որ հարկաւ պիտի արժանանայ յայնչի ընդունեցողութեան՝ իբրեւ ամբողջական երկ մը , որուն պէտքը շահ զգալի է արդէն եւ որուն տեղը՝ մեր այժմու վիճակին մէջ նշանակալից ըլլալու սահմանուած է , քե՛ մասնաւոր՝ դարաւոր ժամանակամիջոցներով շարունակուած մեր պատմական կեանքը՝ քե՛ ոչ խստօրէն գիտակաճ, գեթ գեղեցկագիտական ու իրական արժեքովը ներկայանայ մեզի :

Մեր մասնաւոր խօսակցութեան միջոցին ալ՝ իրաւունքով մը կը ծանրանայիք արդէն՝ նիւրիսն այդ կրկնակ կողմերուն վրայ , հաւաստելով միանգամայն քե՛ ջանացած էք Հայ ժողովուրդի՛ ճակատին տարտամ տրամադրութիւնները՝ ի մասին իր պատմութեան՝ որոշ ուղեգիւծով մը (orientatoin) դարձնել ձեր գործին բովանդակ ընթացքին մէջ :

ձիւղ է որ դժուար է բարձրագոյն ֆալսֆակրութեան մը իրականութիւնը սպասել՝ ա՛ր եւ է գիւրական եւ ներկուս գրիչի զօրութեամբ իսկ՝ կենսունակ ու խայտալից բնակչութիւններ վերակոչելով


աւերակներու վերածուած աշխարհի մը ծոցէն . բայց եւ այնպէս կարեւոր և մեզի համար մեր անցեալի հեռանկար տեսարանագրութիւնը յօրինել՝ որչափ ալ շեղ ու միազազազ չըլլայ ան իր տեսակին մէջ, եւ որչափ ալ կարելի չըլլայ — կորսուած կամ հետախաղաղ ծածկուած յիշատակարաններու երեսէն — մերինին նման թկտէ կանխայարոյց՝ բայց գժբազդ ցեղի մը առաջին զարումները դիտել մօտէն, ու հայ առ հայ հետեւիլ անոր նախնական ձկնումներուն, ինքնայատուկ յառաջխաղացումին, զինքն ապրեցնող բարոյական ուժերուն, անոր հոգեբանական հաւաքական երեւոյթներուն, անոր բնկերային ու հաղափական սահմանագրութիւններուն, եւ նոյն իսկ անոր վերջնական կազմակերպութեանց ամէն մէկ ազդակներուն:

Յուսալով սակայն որ՝ Ձեր պատուական աշխատութիւնը պիտի կրնայ իր քանկագին նպաստ բերել մեր ազգի պատմութեան ըստ կարելոյն, մանաւանդ թէ՛ լուրջ ու պակասեղի բնթեցման մը նիւրբ մասակարարել հայ ժողովուրդին, կը փութամ մազթել Ձեր Սիրելութեան կատարեալ յաջողութիւն Ձեր գնամատչելի ձեռնարկին համար:

Ընդունեցէ՛ք սիրոյ ողջոյններս

Աղօթարար

ԵՂԻՆԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ



Քսան տարիներու խղճամիտ և բաւական տաժանքոտ աշխատութեան մը կը պարտիմ ներկայ հրատարակութիւնը, ինչպէս յիշուած է արդէն Ամեն. Տ. Եղիշէ Սրբազան Դուրեանի պատուական համակին մէջ, որ ներկայ գործիս գլուխը՝ կը փայլի:

Ոչ բանասէր մըն եմ, ո՛չ ալ հմուտ պատմագէտ մը, պարզ աշխատաւոր մըն եմ գրչի, անխոնջ մշակ մը, բոլոր մտաւորական ու բարոյական ուժերս նուիրած իմ ազնուական ցեղիս, որ քանի՛ դարերէ ի վեր, Ասիայ ծոցը ծնած, սնած, հո՛ն ապրած, հո՛ն չարչարուած, մինչև այսօր կը պահէ իր պատկառելի գոյութիւնը, տեսած ըլլալով մէկիկ մէկիկ անձնտացու՛մը մեծ ազգերուն և փուլու՛մը պետութիւններուն, որոնք դարերով վարեցին նախնական մարդկութեան ճակատագիրը . . . :

Մեր ազգային պատմութիւնը գրուած է շատերու կողմէ, սկսեալ Ազաթանգեղոսէն, Փաւստոս Բիւզանդէն, Մովսէս Խորենացիէն, Ղազար Փարպեցիէն, Թովմա Արծրունիէն, Վարդան Պատմիչէն, Ներսէս Կյայեցիէն (Շնորհալի), Սամուէլ Երէց Անցիլիէն, Արիստակէս Լաստիվերտցիէն, Առաքել վարդապետ Դավրիժեցիէն, բոլոր նախնի մատենագիրներէն՝ մինչև Հ. Մ. Չամչեան, Գարագաշեան, ևն: Երեւցած են նաև բազմաթիւ դասագիրքեր և գիտական ուսումնասիրութիւններ թէ՛ օտար և թէ՛ մերազնեայ բանասէրներուն կողմէն:

Թէ՛ այս թանկագին յիշատակարաններէն — որոնք ժամանակին հրատարակուած են մասնաւորապէս Մխիթարեաններուն կողմէն — թէ՛ վերջին ժամանակներու մէջ կատարուած գիտական խուզարկութիւններէն, սեպագիր արձանագրութիւններու յայտնութիւններէն և ուրիշ վաւերական աղբիւրներէ, մանաւանդ, Վիէննայի Մխիթարեանց պատուական պարբերականին — Հանդէս Ամսօրեան կ'ակնարկեմ — մէջ երեւցած մատենախօսականներէն ու բանասիրականներէն ջանացած եմ օգտուիլ, ներկայ երկասիրութիւնս յուրձ ու հաստատուն հիմերու վրայ դնել կարենալու համար:

Սակայն, պէտք է խոստովանիմ, ամէն ազգերու պատմութեան սկզբնաւորութեան և վերջաւորութեան մէջ է որ պատմագիրը կը հանդիպի մեծ խոչընդոտներու, վարանումներ կ'ունենայ, թէ ուրկէ՛ պիտի սկսի, և ո՛ւր պիտի վերջացնէ:

Պատմութիւն մը գրել՝ թէ՛ դիւրին է, թէ՛ դժուար. դիւրին՝ անոնց համար որոնք առասպելներ պիտի ուզեն հրամցնել և այդ առասպելներով գգուել ու խանդավառել իրենց պատկանած ցեղին փառասիրութիւնները, արդար թէ անարդար. դժուար է, երկիւղած պատմագէտներու և խզճամիտ բանասէքներու համար, որոնք կը պատկառին ճշմարտութենէն և կը փափագին ապագայ սերունդին աւանդել անջնջելի յիշատակարան մը:

Ինչպէս բոլոր ազգերուն, մերինին ալ ծագումը կը կորսուի մշուշապատ անցեալներու, նախապատմական, առասպելական դարերու թանձր վարագոյրին տակ: Մեր նախահայրը կը ներկայանայ հերոս մը, Ազատութեան նախանձովը բորբոքած, Առաջին Ըմբոստը՝ Առաջին Բռնակալին դէմ. ա՛յսպէս կ'աւանդէ մեզի մեր պատմութեան Հայրը, անմահ Խորենացին, և ա՛յսպէս կը գրեն կամ կ'ընդօրինակեն յաջորդող, յետագայ պատմիչները: Բայց ո՞ր ազգը չունեցաւ իր Հերոս—Նախահայրը...

Աւանդութիւններ կան, որոնք դարերով նուիրագործուած, պէտք է ապրին յաւիտեան, հոգ չէ թէ, այդ նուիրական աւանդութիւնները տապալող գիտութեան անողոք թաթը բարձրանայ և յեղաշրջէ պատմութիւնը:

Եթէ այդ աւանդութիւնները, այդ առասպելները գոյութիւն իսկ չունենային, ստեղծել պէտք էր զանոնք. ասիկա, ամէն ազգի մէջ, բնական, բնազդային փոփոագ մըն է: Ազգին սակայն, գիտական հետազոտութիւնները կան, որոնք բնոյթ ունին լուսաւորելու անյիշատակ Անցեալին ազլամուղջները: Սեպածեւ արձանագրութիւններուն բանալին գտնուած է հիմա, և տարուէ տարի նոր յայտնութիւններ պիտի աւելնան, այնպէս որ, դարերէ ի վեր մութ, անմեկնելի, անձանօթ մտացած շատ մը պատմական երևոյթներ և իրականութիւններ պիտի մերկացուին իրենց իսկական նշանակութեամբ: Մենք ո՞րը պիտի բնորոնք այս երկուքէն, որո՞ւն առաջնութիւն պիտի տանք, հո՞ս է հարցը:

Ահաւասիկ մեր ծրագիրը, երկու խօսքով:

« Հայկական Բնիկ. Պատմութիւն » երկիւս մէջ առաջին մասնողութիւնս եղած է ատաղձներուն հաւաքումը. բան մը. զոր յաջոյցած եմ գլուխ հանել, ամբողջացնել, տարիներու ընթացքում, դիւրամբոնելի աստանքներով ու զոհողութիւններով. երկրորդ՝ բաղդատել, զանազանել, ընտրել ազրիւրները. և երրորդ՝ իրենց յատուկ սեղը տա բանասիրական և քննադատական վարկածներուն ու վճիռներուն:

Հ. Մ. Չապչեանի եռահատոր պատմութիւնը, ինչո՞ւ չը խոստովանինք, 1784ին տպագրուած, միակ վաւերական, լիակատար պատմական երկասիրութիւնը պիտի համարուէր, եթէ զերծ րլլար ան՝ ժա-

մանակագրական սխալներէ, դէպքերու կարգ մը խեղաթիւրումներէ, մանաւանդ Ռուբինեան Հարստութեան շրջանին վերաբերեալներուն մէջ, և մանաւանդ — ինչ որ ազգային դժբաղդութիւն մըն է —, ազանդամոյ սգիէ ու ձգտումներէ: Եւ սակայն, արդար ըլլալու համար, կը կրկնենք, Հ. Մ. Չամչեանի «Հայոց Պատմութիւն» ր հոշակապ դործ մըն է, թէ՛ ազգային և թէ՛ օտարազգի, ՚ին ու նոր պատմագիրներու ծանօթութիւններովը հարուստ:

Ահա՛, մասնաւորապէս այդ ընդարձակ դործէն Զանազան ևս օգտուիլ, առաջնորդ ընտրելով զայն ներկայ երկասիրութեանն պատմական կարգի մասին:


Աւելորդ է ուրիշն բնի, ևս յարգած ևս մեր ազգային ծագման մասին հայ նախնի պատմագիրներուն ուսանողութիւնները: Հայկ նահապետը դէմք մըն է. քառասուն դարերէ ի վեր, մերթ պայծառ, մերթ միգամած երկինքէ մը կը մտտի, Հայուն Երկինքը. ոճիր մը պիտի ըլլար հրաժարիլ Հայկի ու Բեյի պատմութենէն, առասպել իսկ ըլլար ան: Միայն, դեռ այդ պատմութեան շրջամ, փախազեցայ մեր ընթերցողներուն ներկայացնել նախնական խիտա կարեւոր գիտելիքներ, որոնք իր նախապատմական ծառային անշուշտ, և որոնք քաղւած են յարգելի ԼէՕի Ս. ՄԵՍՐՈՊէն:

«Հայկազանյ» կոչուած շրջանէն, միայն վաւերական նկատուածները կարգով պատմել յետոյ, անցած ևս Մակեդոնական փրոպետութեան, այն շրջանի ժամանակակից յայն, լատին պատմագիրներուն հետեւելով, յետոյ, մինչև ցարդ «Արշակունիաց հարստութիւն» յորջորջուած շրջանը յարմար դատած ևս կոչել «Արշակունի կամ Արարատեան հարստութիւն, ինչպէս պիտի տեսնուի իր կարգին»:

Քուսեակ հարստութիւններէն վերջ, կըր հայ ազգը վերջնականապէս կը զրկուի իր քաղաքական անկախութենէն, երբ զանազան կողմերէ կը խուժեն թշնամիները. և՛ ի Հայոց Աշխարհը կը մասնուի անխլանութեան. այդ թուականէն կը սկիի նոր շրջան մը, որ ՚ինդ վեց դարերէ ի վեր կը տեսէ մինչև ցայտար: Այդ շրջանը Զանազան ևս հնարաւոր մանրամասնութիւններովը պատմել, մանաւանդ, երկրագունտիս զանազան կողմերը զայգիթած, և հոն հաստատուած ու այն տեղերու բնակչութեանց մէջ ձայնուած մեր ազգի հաստատման կեանքը պատկերացնել իր բազմապատիկ կողմերովը:

Յուսարով թէ սոյն ձեռնարկս պիտի արժանանայ քաջապարտութեան, և այս կարգի երկասիրութեանց աւելի կատարելաները տեսնելու անկեղծ փափաքով, կը կնքեմ ներածութիւնս:

ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ



Ը Ն Դ Յ Ա Ն Ո Ւ Ի Ր Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ն Ա Ն Ա Գ Ո Ւ Կ

Ա

Ինչպէս յիշեցի Ներածութեանս մէջ, ներկայ Պատմութեանս իբր նախադուռ ծառայելու համար Լեօի Ս. Մեսրոպէն կը քաղեմ հետեւեալ շահեկան տեսութիւնները, որոնք մեծ արժէք ունին արեւելքի քաղաքակրթութեան և պատմութեան թատրոնին վրայ հայ ազգին կրեւման և դերին տեսակէտներովը: —

Հին լատինական առած մը կ'ըսէ թէ լոյսը կուգայ Արեւելքէն: Եթէ արեւի լոյսին վերաբերէր ատիկա, չէր իսկ արժեր այդ մասին առած մը շինել ու կրկնել իբր ճշմարտութիւն, որովհետեւ ո՛վ չի գիտեր թէ արեւելքէն կը ծագի արեւը. բայց յիշեալ խօսքին մէջ, լո՛կ այդ հանրածանօթ իրողութիւնը չէ՛ որ ծածկուած է: Աւելի խորունկ իմաստ մըն ալ կայ. այո է թէ՛ աշխարհը մտաւոր լոյսը ստացաւ արեւելքէն:

Նախապատմական ազջամուղջին, քաւոսային խաւարին մէջ, Արեւելքը՝ այն անգն էր, ուր առաջին անգամ վառեցան մարդկային քաղաքակրթութեան ճրագները: Այդ լոյսերուն հայրենիք հանդիսացան հարաւային քանի մը մեծ գետերու հովիտներ, ուր նախնական մարդը գտաւ աւելի մեծ յարմարութիւններ բնութեան դէմ կռուելու և իր կացութիւնը բարւոքելու համար:

Չինական, հնդկական, եգիպտական գետահովիտները մէկզի, նաագոյն քաղաքակրթութեան օրօրոցներէն մէկը շատ մօտ էր այն երկրին, որ Հայերսէն պատմական հայրենիքը դարձաւ: Հայաստանի լեռներէն բղխող երկու մեծ գետեր, Եփրատն ու Տիգրիսը, իրենց

ընթացքի ստորին սահմաններուն մէջ, Թիջագետքէն մինչեւ Պարսից Մոցը, տասնեակ դարերով, իրենց եզերքներուն վրայ, մարդկային խելքի և առաջդիմական ոգիի զարմանալի գործերը կը պահէին: Մինչդեռ արդի Եւրոպան տակաւին բոլորովին վայրենի էր և իր բնակիչները, զազաններու պէտ, անտառներու մէջ կը բնակէին, ասղին, Տիգրիս-Եփրատեան գետահովտը, ահագին քաղաքներ ծաղկած էին, հրկրագործութիւնը, արուեստները, գիտութիւնը, այն աստիճան առաջացած էին որ՝ մարդիկ փարթամութեան բարձրագոյն աստիճանները հասած էին:

Ճիշդ այդ հովտին մէջ է որ կազմակերպուեցաւ ասիական առաջին մեծ պետութիւնը, Ասորեստանը:

Միջագետքը, իրաւ է, համաշխարհային քաղաքակրթութեան մեծ օրօրացն էր, բայց, կային նաեւ ուրիշ մասնաւոր, տեղական շրջանակներ, ուր լուիկ, առանց բովանդակ աշխարհի ուշադրութեան արժանանալու, ազգութիւններ կը զարգանային: Այս կարգի վայրերէն էր մեր Արաքսի հովտը: Անյիշատակ, վաղնջական ժամանակներէ ի վեր, հոն կ'ապրէին Ուրարդեան կամ Նախահայեր կոչուած ցեղերը: Ասոնք պետութիւն ժր կազմեցին, զօրացան, քաղաքակրթուեցան, տարածուեցան մինչեւ Վանայ Լճին եզերքները, և ուրիշ տեղեր: Քրիստոսէ վեց դար առաջ, այս ցեղերու բնակավայրերը — Արաքսի և Վանայ Լճին աւազանները — ենթարկուեցան արեւելլքէն խուժող բարբարոսներու արշաւանքին: Երկիրը քարուքանդ եղաւ և Նախահայոց թագաւորութիւնը ջնջուեցաւ. ստուարաթիւ ազգաբնակչութեան մը մէկ մասը միայն ազատեցաւ կոտորածէն, բայց ան ալ հեռացաւ ուրիշ տեղեր, բնիկ երկրին մէջ թողելով փոքր, տկար բնկորներ:

Այդ ստեղծի փոթորիկներուն վրոյ բաւական ժամանակ անցնելէ յետոյ, Ուրարդեան երկիրներուն մէջ երեւան կուգայ նոր ազգ մը, Հայերը: Ասոնք, եթէ ճիշդ է արդի գիտնականներուն ենթադրութիւնը, Արեւմուտքէն եկան, Փոփուգիայէն: Եօթներորդ դարու (Ք. Ա.) վերջերը, այդ երկրէն դուրս ելլելով, կամաց կամաց առաջացան, հայկական լեռնաշխարհը գրաւեցին, աւելի խաղաղ միջոցներով քան թէ զէնքի ուժով, իրենց մէջ ձուլեցին տեղացի բնիկ ազգերը:

Որո՞նք էին այդ նորիկները, ի՞նչ ազգէ: Այդ մասին հաստատ տեղեկութիւններ կը պակսին, ազգային աւանդութիւններն ալ կցկրտուր բաներ են, մակերեսային: Յայտնի է միայն թէ՛ այդ ազգը կը պատկանէր հնդեւրոպական ցեղին, Ուրարդացիներու հետ ո՛չ մէկ ազգակցութիւն ունէր: Իրրեւ քաղաքական կազմակերպութիւն մը, աչքառու ոյժ մը չէր ներկայացնէր ան: Իսկ իրրեւ մշակոյթի ընդունակ մարմին մը խիստ որոշ, բարձր յատկութիւններ պարունակող ինքնաւրոյնութենէ զուրկ էր: Հովիւ, երկրագործ ժողովուրդ մըն էր,

որ իրեն հետ կը բերէր արիակոն ցեղին յատուկ պաշտամունքներ, հասարակական-իրաւական, բնտանեկան կազմակերպութիւն մը:

Պատմական յիշատակարանները, առաջին անգամ Ս. Դարուն (Ք. Ա.) կուտան Հայաստանի անունը: Այդ շրջանին մէջ, ասոնց երկիրը Պարսկաստանի դէմ ազատամարտ եւ վերստին նուաճուած է Դարեհի ձեռքով: Կը թուի թէ այդ միջոցին, Հայերը տակաւին Հայաստանի արեւմտեան սահմաններուն մէջ կեդրոնացած էին: Ասկէ աւաջ, արեւմուտքէն դէպի արեւելք իրենց շարժումին ատեն, Հայերը Մարաց պետութեան լուծին տակ ինկոմ էին: Այդ նախնական շրջաններուն մէջ ալ, յոյն դարավար ու մատենագիր Քսենոփոնը տեսաւ Հայերը, և նկարագրեց զանոնք: Որքան կարելի է դատել այդ նկարագրութենէն, Հայերը քաղաքակրթութեան բաւական ստոր աստիճաններուն վրայ կը գտնուէին և ունէին այդ գրութեան համապատասխան ընկերային կազմակերպութիւն մը: Քսենոփոնը չ'ըսեր թէ այդ շրջանին՝ Հայերը թագաւորութիւն ունէին, Հայերուն երկիրը կը կառավարուէր պարսիկ նախարարէ մը (սագրոտի), և ասկէ զատ, միակ իշխանութիւնը, որուն կը հանդիպինք այդ նկարագրութեան մէջ՝ գիւղական տանուտէրն է:

Սակայն, ատիկա չի' նշանակեր թէ Հայաստանը թագաւորութիւն չունէր. ոագրափը՝ Հայոց թագաւորն է, ինչպէս կ'ենթադրեն գիտունները: Եոյն Քսենոփոնը, ուրիշ աշխատութեան մը մէջ, մանրամասնորէն նկարագրած է Հայոց Տիգրան թագաւորը, անոր բնտանիքը, Բայց սեփական թագաւոր ունենալը չէր արգիլէր որ երկիրը հպատակ ըլլար ուրիշ տէրութեան մը: Այս երեւոյթը շատ սովորական է հին ժամանակներու մէջ, մանուանդ Արեւմտեան Ասիոյ մէջ:

Եւ այսպէս, սկիզբէն ի վեր, հայ ազգը, մեր ձեռքը հասած տեղեկութիւններէն դատելով, պատմութեան բեմին վրայ երևան եկած է իբրեւ ուրիշներու հպատակ: Անտարակոյս, ո՛չ իր ցեղային յատկութիւններով, ո՛չ ալ իր թիւով, ան չէր կրնար անկախ դեր մը խաղալ այնպիսի ժամանակ մը, երբ Առաջուոր Ասիոյ մէջ կը կազմակէրպուէին վիթխարի, աշխարհակալ միապետութիւններ: Սակայն կարեւոր է նըկատի առնել այն կազմակերպութիւնը, զոր Հայաստան ստացաւ երբ արդէն վերջացած էր Հայերուն առաջխաղացումը և երբ վերջնականապէս իրենց մէջ խառնուեցաւ բնիկ ազգարնակութիւնը, որ տեղին վրայ կը գտնուէր:

Ուրարդական կամ նախահայոց երկրին մէջ գոյութիւն ունէին մեծ թիւով՝ անկախ փոքր իշխանութիւններ, որոնք սեպաձեւ արձանագրութիւններուն մէջ կը կոչուին րապաւորուրիւնցեւ, և որոնք, ստիպիչ պարագաներու մէջ, գիտէին միարանիլ արտաքին թշնամիին դէմ:

Հայերը, անոնց երկիրները գրաւելով, չր կրցան մէջտե-

դէն վերցնել տեղական անկախութիւններու այդ սիւղեւը, այլ հարկադրուեցան ատոր ենթարկել իրենց պետական կազմակերպութիւնը, այնպէս որ Հայաստան, իր քաղաքական գոյութիւնը վերջնականապէս կը հաստատէ փոքր անկախութիւններու խիտ ցանցի մը տակ :

Ատոնք են մեր նոտաբարութիւնները, որոնք, ինչպէս յայտնի է, ամենազխաւոր պատճառներն էին երկրի մշտական տկարութեան : Այդ ձեւով կազմակերպութիւնը չէր թոյլատրեր որ երկիրը կեդրոնացընէ իր ուժերը, ինք իր վիճակը տնօրինէ ընդհանուր, հաւաքական ջանքերով և հանդէս բերէ իր ընդունակութիւններուն միահամուռ պատկերը : Ներքնապէս թոյլ մարմին մը, միշտ ենթարկուած էր մեծ տէրութիւններու խիստ ազդեցութեան :

Ազդեցութիւններու հարցը չափազանց կարեւոր է իւրաքանչիւր փոքր ազգութեան համար, որ ուրիշներու հպատակած է : Ատիկա իր քաղաքական և հոստարակական դաստիարակութեան հարցը կը ներկայանայ. աստիկա այն միջավայրն է, ուր տիրող կարգերն ու օրէնքները կը մշակեն որոշ դրութիւններ, աշխարհահայեացքներ, պաշտամունքներ : Ուստի, մենք պիտի ծանօթանանք այն միջավայրին հետ, որուն ենթարկուեցան Հայերը, իրենց նոր հայրենիքին մէջ. ուրիշ խօսքով, պիտի տեսնենք թէ ինչ էր պարսիկ միապետութիւնը, որուն մասը կը կազմէր Հայաստանը : Ինչ էր առ հասարակ ասիական միապետութիւնը :

Ինչպէս ըսինք, ասիական առաջին մեծ պետութիւնը կազմուեցաւ Միջագետքի մէջ : Ատիկա էր Ասորեստանը, որ կը ներկայացնէր Տիրիս - Նիփրատեան հովտին քաղաքակրթութիւնը :

Պետութիւն մըն էր այդ, որուն հազարամեայ տարեգրութիւնները կը խօսին անվերջ նուաճումներու, պատերազմներու վրայ : Պատերազմը տարրն էր, ստանց որու՝ Ասորեստան չէր կրնար ապրիլ : Ձինւորական բանակ մըն էր, որ չէր կրնար հանգիստ նստիլ իր տեղը, և որ, կը տիրապետէր անթիւ անհամար ազգերու :

Ասորեստանի աստուածը՝ արիւնի, զազանութիւններու աստուած էր, ան կը հրամայէր անխնայ ըլլալ և անդուծ, քանդել, աւերել, և ասորեստանեան թագաւորները պարծանքով կը յիշեն թէ իրենք ամենայն ճշդութեամբ կը գործադրէին այդ ահաւոր պատուէրները :

« Ես կտորեցի, ես չը խնայեցի, ես քարուքանդ ըրի, այնպէս որ՝ մարդու և անասունի ձայն չէր լսուեր. ես մարդիկները ցից հանեցի, ես ապստամբներու մորթիք քերթել տուի ողջ ողջ և այդ մորթով ծածկեցի բերդի պատերը, ես բռնաբարեցի ազջիկներն ու աղաքները : »

Այս և ատոր նման արարքներու անվերջ կրկնութիւններ կը պարունակեն իրենց մէջ ասորեստանեան արձանագրութիւնները, սոսկու՛մ ու զգու՛նք ազդելով ընթերցողին :

Չինւորական արիւնարբու բռնապետութիւնը շարունակ պիտի զարգացնէր զազանական ոգին, իր յաջողութիւններուն համար: Այդ բռնապետութեան կեղորոնը կը կազմէր երկրաւոր աստուած մը, որուն առջև կը սողար ամէնք. այդ աստուածը՝ նոյնինքն թագաւորն էր: Ամբողջ պետութիւնը, մեծէն մինչև փոքրը, թագաւորին ստրուկն էր: Քոնակայը մէն մի կեանքի տէրն էր և իր քմահաճոյքէն, իր կամայականութենէն կախուած էր անհասանելի և ամբողջ հասարակութիւններու կեանքը կամ մահը: Իր մէն մի խօսքը, մէն մի ակնարկը՝ երկնային պատգամ մըն էր այս երկրի վրայ, ամէն բան անո՛ր կը ծառայէր, և անո՛վ երկիրը կենդանութիւն կը ստանար կամ կ'իյնար:

Ինչպէս որ յատուկ է զինւորական միապետութեան, Ասորեստան մէն ատեն միայն կը բորգաւածէր, երբ իր թագաւորը՝ եռանդոտ, ուժեղ մարդ մը կ'ըլլար. արշաւանքները, պատերազմական աւարը, տուրքերը կ'առատանային: Իսկ երբ թագաւորը թոյլ ու անընդունակ կ'ըլլար, բռնապետի անասնման երջանկութիւնը միայն կը վայելէր, և պետութիւնը, հակառակ իր զրաւած դիրքին, կը թուլնար, փառքէ կը զրկուէր:

Ասորեստանեան արիւնամարտ պաշտամունքներուն հետ կը զարգանար նաև մշակոյթը, որ ամբողջովին Քարելոնէն փոխ առնուած էր: Թագաւորները, իրենց քմահաճոյքներուն մէջ կը հովանաւորէին միեւնոյն ժամանակ երկրագործութիւնն ու արուեստները, հանրային շինութիւններ կը կառուցանէին. ջրանցքներ պեղել ու բանալ կուտային: Գիտութիւնը, զրականութիւնն ալ աստճգիտութեան քայլեր կ'առնէին: Բայց այդ բովանդակ մշակոյթի գործունէութեան վրայ ալ դրոշմուած էր զինւորական բռնապետական պաշտամունքը: Քանգակագործը թագաւորին յաղթութիւնները կ'արձանագրէր քարերու վրայ, ճարտարապետը թագաւորական պալատներ կը կառուցանէր, անոնց տալով բերդի կերպարանք ու ամբութիւն: Աստղաբաշխութիւնը բաւական ծաղկած էր, բայց անոր հիմք ո՛չ թէ գիտական ճշմարտութիւններ որոնելու, այլ գոյքնական կեանքի ծառայելու մէջ կը կայանար. գուշակելու էր թէ թագաւորը, այս կամ այն արշաւանքի մէջ ի՞նչ յաջողութիւն կ'ունենայ. զանելու էր մարդուն ճակատագիրը, իմանալու էր թէ ի՞նչ բազմ սահմանուած է անոր համար, ե՞նչ Քուրմերը, ժամանակին գիտունները, այդ կորցի հարցերով կը կը պարսպէին:

Քաղաքակրթութիւնը կա՛ր, այո՛, և նոյնիսկ հիմա, անոր փառասոր մնացորդները հիացում կը պատճառեն գիտուններուն և բանասէրներուն: Սակայն ի՞նչ էր այդ քաղաքակրթութեան ողին. ան ի՞նչ կուտար ամբողջ ժողովուրդին, այն ա՛նագին բազմութեան, որ պետութեան փառքին համար կ'աշխատէր:

Յարգելի Լէօն, իր տեսութիւնները պարզելէ յետոյ ասորեստանեան քաղաքակրթութեան մասին, պէտք կը զգայ նեղինակաւօր գիտուններու կարծիքներէն փոխառութիւններ ընելու և կը շարունակէ . —

« Պօքլ, իր Քաղ սփակրբուրեան Պատմութիւնը նշանաւօր գիրքքին մէջ, քննութեան ենթարկելով Ասորոյ և Ափրիկէի, առհասարակ տաք երկիրներու նազօոյն քաղաքակրթութիւնը, այսպէս կը բնորոշէ զայն . —

« Ժողովուրդը զրօ մըն էր, երբէք ձայն չունէր պետական կառավարութեան մէջ ո՛չ մէկ վերահսկողութիւն այն հարստութեան վրայ, որ ծնունդ էր իր աշխատասիրութեան : Անոր միակ գործը՝ աօխասիլ էր, և միակ պարտականութիւնը՝ հնազանգիլ : Անա՛ թէ ո՛ւր է տրամադրութեան սկիզբը, զէպի նանդարտ, ստրկական նապօնդութիւն, որ, ինչպէս դիտենք պատմութենէն, միշտ այդպիսի ազգերու յառկանիշն էր :

« Այդ հարուստ և արգաւանդ երկիրներուն մէջ շատ մը փոփոխութիւններ տեղի ունեցած են, բայց բոլորը՝ վերէն սկսեալ են, ո՛չ թէ վարէն : Ատոնց մէջ երբէք չը կար ուսման վարական տարր մը : Եղած են բազմաթիւ պատերազմներ թագաւորներու, հարստութիւններու մէջ, եղած են յեղափոխութիւններ՝ արքունիքի մէջ, յեղափոխութիւններ՝ գանձի վրայ, բայց ո՛չ երբէք՝ ժողովուրդի մէջ .

« Նոյնիսկ այն վիթխարի շինութիւնները, որոնք այսօր հին աշխարհի պարճանքը կը կազմեն, ժողովուրդի դժբաղդութեան վկաններ պէտք է համարել : Այսպէս եգիպտական բուրգերը, ստրուկ հարստահարուած ժողովուրդի մը ասուագանքները կը պատմեն :

« Որպէս զի կարելի ըլլայ կառուցանել այդպիսի սոսկալիթխար և միեւնոյն ժամանակ այդքան անօգուտ բաներ, կ'ըսէ Պօքլ, պէտք է որ կառավարիչները բնակալներ ըլլային, իսկ ժողովուրդը՝ ստրուկ : Ժողովուրդի ամբոխին ու աշխատող անասուններու միջև տարբերութիւնը քիչ էր . զայն ո՛ր և է բանի մը չէին ընդունակ համարեր, անընդհատական և անվարձ աշխատանքէ զատ : Ամբողջ ժողովուրդը բանւորական ուժերը փոքրամասնութեան անպայման արամազրութեան տակ կը գանուէին և այս կերպով, ընդունակութիւնն ու արուեստը մատարեր կ'ըլլային անոնց, որոնց պէտք է օգուտ բերէին : »

Յետոյ կը շարունակէ Լէօ իր տեսութիւնները . —

Անա՛ւասիկ ասիական քաղաքակրթութեան էութիւնը : Անիկա մարդու արտաքին կեանքը կը շօշափէր ափողջապէս, և չնորճալի քանդակագործը, ընդունակ ճարտարագետը, ինչպէս առհասարակ ամէն մարդ, ստրուկներ էին : Երբէք գոյութիւն չունէին, ո՛չ նանրային, ո՛չ անհասական զարգացման զաղափար, ազատութեան ո՛չ մէկ բերքաւում : Ամէն տեղ լուծը ծանրացած էր : Թագաւորին ուղածը կըլլար միայն . — օրէնք, իրաւունք, կարգ, ամէնը :

Գարաւոր նուաճումներով ձեռք բերուած երկիրներէն կազմուած էր ստորեստանեան անազին պետութիւնը, քայքայ երկիրները միութիւն չէին ներկայացնէր, իրարու հետ ներքին կապերով չէին կապուած: Իմ լուծս զբի անոնց վրայ, կ'ըսէ Նինուէի թագաւորը, պատմելով թէ ինչպէս յաղթեց, ինչպէս ջարդեց ու քանդեց այս ինչ երկիրը: Այդ լուծը ծանր էր և յաղթուածները, ամէն պատեհ առիթի մէջ, կ'աշխատէին ազատի անկէ: Ապստամբութիւնները կը ճնշուէին սոսկալի գազանութիւններով: Ասորեստանը լո՛կ մէկ միջոց գիտէր, իր հպատակները հնազանդութեան մէջ պահելու համար, այն է, սարսափ ազդել: Սակայն զարմանալի է թէ՛ նոյն այն վաղեմի ժամանակներուն մէջ ի՛նչ, ան յոռի դաստիարակ մըն էր ժողովուրդներուն համար: Կարելի չէ առանց յուզմունքի կարդալ այն ապստամբութիւններուն պատմութիւնը, որոնք Ուրարդեան երկիրներու մէջ տեղի ունեցան Ասորեստանցիներուն դէմ: Յաղթական տիրապետող՝ արիւն ու աւերք սփռեց երկրին վրայ, լեռներու սրածայր կատարներն անգամ յաղթուածները չկրցան աղատել այն գազանային պատիժներէն, զորոնք Նինուէի թագաւորները կը հնարէին այնպիսի տաղանդով: Եւ սակայն, այդ սարսափներուն մէջ, առանձին ցեղեր կը շարունակէին կռուիլ, առանց նկատելու թէ իրենք փոքրաթիւ, ակար էին և չէին կրնար ունենալ յաղթելու ո՛չ մէկ յոյս:

Այսպէս, երկար ու երկար ատեն ապրեցաւ Ասորեստանի բռնապետութիւնը, մինչև որ երեւան եկաւ ուրիշ նոր, հզօր ազգ մը, որ անոր դէմ ուղղեց իր հարուածը:

Մարաստանն էր ան:

Եւ ստորեստանեան անազին պետութիւնը փլու ու քայքայուեցաւ այդ մէկ հարուածէն:

Պատմութիւնը պատրաստած էր այդ վիճակը. Ասորեստան, իր սեփական սխաղէմին, իր բռնապետական պաշտամունքին զոհը դարձաւ:

Չ. դարուն, (Ք. Ա.) Մարաց թագաւորը Նինուէն պաշարեց Երբելոյի թագաւորին հետ:

Հռչակաւոր մայրաքաղաքը, որուն հպատակած էին անթիւ ազգեր, և որուն մէջ ամբարուած էին ազգերու հարստութիւնները, իրրեւ աշխարհակալ թագաւորներու սեփականութիւն, ծածկուեցաւ, անյայտացաւ իր աւերակներուն ներքեւ: Եւ 50-60 տարի վերջ, ստորեստանեան հսկայ պետութիւնէն ո՛չ մէկ յիշատակ մնաց և Նինուէի տե՛ղն անգամ յայտնի չէր:

Ինչ տպաւորութիւն թողուց աշխարհի վրայ այդ կործանումը:

Հրէական ազգը, իր անձին վրայ փորձած էր թէ ինչ է ստորեստանեան սուրը, թէ ինչ է Նինուէի համատարած լուծը, և անոր մար-

գարէներէն մէկը՝ Նաոււ՝ այսպէս կը խօսէր Նինուէի վախճանին վրայ. —

« Վա՛յ արիւնհեղութեանց քաղաքին, որ ամբողջովին լի է ստու-
թեամբ և յախճատակութեամբ: Կը լսուին խարազանի շփնդը և թա-
ւաղող անիւններուն շառաչները, ձիերուն խրինջոցը և սլացող կառքի
աղմուկը: Զիաւոր զօրքը կ'արշաւէ, կը շողայ սուրը, կը փողփողին
նիզակները, քաղմաթիւ վիրաւորներ, մեռածներու քաղմութիւն, վերջ
չունին զիակները: Բոզի պունկութիւններուն համար է ստիկա, բոզի,
որ չնորհագեղ է, իբրև կախարդութեանց արկին, որ ազգերը կը
ծախէ իր բողոքութեամբ և ազգատոհմերը՝ իր կախարդանքներով:
Վէրքիդ բուժում չը կա՛յ, կսկծեցուցի՛չ է քու խոցդ: Եւ ամէն ոք,
քու լուրդ լսելով, պիտի ծափահարէ, որովհետև որո՛ւ վրայ չէ տա-
րածուած քու չարութիւնդ: »

Երկարօրէն խօսեցանք Ասորեստանի մասին, բայց նկարեցինք
Ասիոյ հողէն ծնած պետական սիսդէմը: Ասորեստան էր նախատիպը,
հայրը: Իրմէ ետք, Առաջաւոր Ասիոյ զանազան կողմերը, զանազան
ժամանակներ, զանազան չափերով, բռնապետութեան այս ձեւը սովոր-
ական դարձաւ: Այսօր ալ, ասիական երկնքին տակ, շատ բան ան-
փոփոխ մնացած է: Էութիւնը, ոգին, միշտ մնաց:

Բայց այն չըջանին, մինչ Ասորեստանի կործանումը, մարգարէի
գեղեցիկ խօսքերով, բոլոր տեղերուն մէջ, ծափահարութիւն կը յա-
րուցանէր, անդիէն, այս տեղերէն հեռու, Արեւմուտքի մէջ, Պալ-
քանեան թերակղզիին ամենէն հարաւային ծայրերը, և զայն չըջապա-
սող կղզիներուն վրայ, հիմնովին հակառակ տեստրան մը կը պարզուէր:

Հո՛ն կը զարգանար ազատ մարդկութիւն մը, որ իր մտաւորական
սքանչելի գործունէութեամբ, եւրոպական քաղաքակրթութեան հի-
մերը դրաւ:

Հեյլէն ազգն էր ան:

Փոքրիկ ազգ մը, փոքրիկ երկրի մը վրայ: Սակայն այդ արի մը
ժողովուրդը՝ մտքի հերոս հանդիսացաւ: տակաւ հանրային կարգեր
մշակեց, հանրապետական սկզբունքը գործադրեց քաղաքացիական
իրաւունքներ ու պարտաւորութիւններ օրինականացուց և առաջ տա-
րաւ անհատի ազատ զարգացումը: Հո՛ն այլ եւս աշխարհակալութիւնն
ու սուրը չէ՛ր որ կը բարձրացնէր մարդը, այլ տաղանդը, խելքը, ի-
մաստութիւնը: Հո՛ն պետական զաղափարը բոլորովին ուրիշ կերպա-
բանք մը ստացաւ. բռնապետութիւնը չէր կլկեր ամեն բան, ասոր
տեղ ուրիշ աւելի բարձր ու վսեմ, իսեպալ մը կար, Հայրենիքի Ըմբռ-
նումը: Ամէնքը Հայրենիքին կը հպատակէին, ո՛չ թէ սարսափէ ստիպ-
ւած, այլ գիտակցօրէն, այնպիսի ջերմ սիրով մը, որ հրաշալի
անձնազոհութեան աստիճանին կը հասնէր:

Նշանակելի է թէ՛ Ելլադան աշակերտեց Արեւելքին: Շատ բան սովորեցաւ Ասորեստանէն, Բաբելոնէն, Փրինիկէէն ու Եգիպտոսէն, Պնչև իսկ աստուածներ փոխ առաւ այն տեղէն: Բայց իր ոգին անկախ պահեց, իր փոխ առածը վերստին մշակեց, և քաղաքակրթութեան գոյնը հաղորդեց անոր:

Ասիացին լո՛կ իր երեւակայութիւնը կը զարգացնէր. անեղ էին իր աստուածները, գերմարդկային հանգամանքներով շրջապատուած իրենց յատկութիւններով, իրենց կերպարանքով երկիւղ կ'ազդէին: Յոյնը, ընդհակառակը, աստուածները մտանցուց մարդկային հասկացողութիւններուն, անոնց մէջ մարմնացուց մարդկային հոգին ու ձրգտունները: Երեւակայութեան գերի չէր, իրեն առաջնորդողը բանականութիւնն էր, որ զինք կը հրաւիրէր ուսումնասիրելու բնութիւնը, մտնելու անոր զաղանիքներուն մէջ, գտնելու զայն կառավարող օրէնքները: Այդ խուզարկող, որոնող պատճառներ ու հետեւանքներ տեսնող ուսումնասիրութիւնն էր որ փարթեամ ծաղիկներու պէս, բացաւ քաղաքակրթութեան, լուսաւորութեան բոլոր գործօնները. գիտութիւնը, գրականութիւնը՝ իր բոլոր ճիւղերով, գեղարուեստը, այդ հիանալի ազգին համար ոսկեգար մը բերին: Արեւելքի մէջ ամէնքը մէկ էին, թագաւորի առջև ստրուկներ. հոն, ձիւքը, ընդունակութիւնը, չէին կրնար հասցնել մեծագործութիւններու, մինչդեռ, Յունաստանի ազատ միջնորդարին մէջ կը քաղմանային մեծ տաղանդները, որոնք կը թագաւորէին մարդիկներու մտքերուն վրայ, խաղաղ կեանքի մէջ հերոսներ կը հանդիսանային, հանրային բարիքին աշխատելով:

Այդ ազգը փոքր էր, բայց մեծ ու հզօր էր իր ազատ հիմնարկութիւններով:

Հոս, Յունաստանի մէջ, Եւրոպան էր, իսկ հոն, Ասորեստանի մէջ, Ասիան: Երկու անուններ, որոնք լոկ աշխարհագրական իմաստ մը չունին: Աստուք երկու ոգիներ են, երկու սկզբունքներ, իրարու ներհակ, զիրար թխտող, իրարու հետ անհաշտ: Եւ անոնք իրարմէ հեռու չի մնացին, անտարբեր ու առանձնացած չէին: Անոնք իրարու զէմ կանգնեցան, իրարու զէմ զինուեցան: Ասիոյ ու Եւրոպայի, Արեւելքի ու Արեւմուտքի միջև սկսաւ պայքարը, արիւնոտ պայքար, որ տանջանքներու և զարնուրելի ցնցումներու անվերջ շղթայ մը դառնալով, երկարածգուեցաւ այն ժամանակներէն մինչև մեր օրերը, և տակաւին լուծում չէ՛ ստացեր:

Արեւելեան Հարցը սկսաւ, երկու սկզբունքներու տիրապետութեան հարցը. մէկ կողմէ՛ մշակոյթ, քաղաքակրթութիւն, ազատութիւն. միւս կողմէ՛ բունակալութիւն, անշարժութիւն, ստրկութիւն:

Դարերու ընթացքում, զէնքին կը յանձնուէի հարցին լուծումը. Ո՞վ պիտի տիրապետէ...:

Ասիան էր պայքարը սկսողը, և առաջին արիւն թափողը:

ՀԱՅԿ. ԸՆԴՀ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



Յնչորդորար, կարգին պիտի խօսինք սեպածև արձանագրութիւններէն քաղուած և նորագոյն ուսումնասիրութեանց շնորհիւ ձեռք բերուած թանկագին յայտնութիւններուն և արդիւնքներուն, ինչպէս նաև աշխարհագրական դիրքին, տարածութեան, բնական կազմուածքին, կլիմային և ուրիշ նկարագիրներուն վրայ այն երկրին, որ Հայաստան անունով ծանօթ է վաղնջական դարերէ ի վեր, և ուր առջին անգամ երեսցաւ հայ ազգը, ապրեցաւ, կուուեցաւ քաղաքական անաւոր փոթորիկներու դէմ, և անբաղդատելի մարտիրոսութեան մը գնով պահպանեց իր գոյութիւնը մինչև մեր օրերը:

Խնդիր չէ՛ թէ մեր ազգին երեւումը, պատմական բեմին վրայ՝ նուիրագործուած չըլլայ քառասուն դարերու հնութեամբ մը, զոր կ'ընծայեն անոր մեր ազգային գրեթէ բոլոր նախնի և արդի պատմիչները. մեզի համար էականը, կենսականը՝ գերն է, զոր ան կատարած է տիեզերական պատմութեան մէջ:

Հայր Միքայէլ Չամչեան, Հայոց նախնի պատմութիւններուն ստուգութեան առթիւ այսպէս կը գրէ իր հոյակապ գիրքին մէջ. —

« Հոս կ'ուզեմ ծանուցանել այս մէկ բանն ալ, որ թէև շատերուն նորալուր և անհուսառայի պիտի երեւայ, բայց անոնք որ բոլոր ազգերու պատմութիւններով պարապած են, պիտի արդարացնեն ըսածներս: Արդ, պէտք է գիտնալ թէ, ուրիշ ազգերու գիրքերուն մէջ, ինչպէս յոյներուն, յատիններուն և ուրիշներուն, ո՛րքան ալ ջանանք ստոյգ պատմութիւն մը չենք գտներ իրենց ազգի նախնիքներուն վրայ, թէ ո՛վ եղաւ Նոյէն ասդին, անոնց ազգին մէջ առաջին նախահայրը, և թէ ի՞նչպէս սերեցան անոնց յաջորդները. ինչ որ կը գտնենք, կամ սուսակարանութեամբ աւանդուած են և կամ առասպելներով խառնուած, ինչպէս որ նշանաւոր հեղինակներն ալ կը վրկայեն: Ամենքն ալ տարժօրէն կը խօսին մինչև Տրոփազայի պատերազմը, և գրեթէ երազներ կը պատմեն:

« Այսպէս, հոսմայեցի երեւելի պատմիչը Յուստինոս (Պիրք Բ. Գլ. 2.), կը գրէ. — « Ամէն հասխօսութիւն առասպելախառն է: » Նոյնը կը հաստատէ Կալլին, փիլիսոփայութեան մէջ (Հատ. Գ. էջ 15): — Տրոփազայի պատերազմէն առաջ, կ'ըսէ, չիկայ հեթանոսական պատմութիւն մը, մանաւանդ թէ՛ ինչ որ այն պատմութիւններուն

մէջ ոլիմպիական թուականէն առաջ պատահած կը կարծուի, բոլորովին առասպել է, խիստ մուխ: » Նոյն գիրքի 20 էջին մէջ կ'ըսէ. — Մեր կը գտնուի ուրինն ազգ մը, որ իր ծննդոցին ու ծագումին մէջ առասպելներ չի մտցներ: Որովհետեւ, ինչպէս իրենք ալ կը խոստովանին, նախնիքներու հին մատեանները չը գտան. նոյնը կը վկայէ Դիոդորոս Սիկիլիացին ալ, որ երեսուն տարի տառապեցաւ նախնի պատմութիւնները պրպակելով, և ստոյգ բան մը չը գտաւ, բայց միայն սկսեալ նենստէն:

Տեսէք հիմա թէ որքան խորունկ է պատկանելի Միլիթարիանին համոզումը, մեր ազգային պատմական աւանդու միւսներու ստուգութեանը մասին:

« Իսկ պատմութիւնները, կրտէ, որոնք մեր ազգին մէջ կ'աւանդուին մեր նախնիքներուն վրայ, Հայկէն սկսեալ մինչեւ Պարոյր և Սարգանարազ, վստահօրէն կ'ըսենք թէ բոլոր ազգերու պատմութիւններէն աւելի ստոյգ են ու կարգի դրուած, այնպէս որ ո՛չ մէկ ազգ, նոյնիսկ Եղիպտացիներն ու Քաղդէացիները, չունին այդպիսի պատմութիւններ: Եւ ասոր ապացոյցը սա է թէ՛ մեր պատմութիւնները հանուեցան այնպիսի դիւաններէ, որոնք աւելի հնագոյն էին և ստուգագոյն քան թէ՛ բոլոր ազգերունը, որովհետեւ անոնք հանուեցան նախնիքներու ստոյգ ժամանակագրութեանէն, այն մատեանէն, զոր Մեծ Աղեքսանդրը քաղդէացիներու լեզուէն յանարէնի թարգմանել տուաւ, որուն օրինակն ալ նինուէի դիւաններուն մէջ պահուեցաւ: »

Եւ յետոյ կը ներկայացնէ Մարիբաս Կատինայի պատմութիւնը, որուն վաւերականութիւնը հաստատելու համար բաւական կը յոգնի. —

« Ասիկա Մարիբաս Կատինայէն մնացած է, կ'ըսէ, որովհետեւ, այդ մարդը Վաղարշակի կողմէն (ինչպէս որ պիտի պատմենք առաջիկային) Արշակ թագաւորին դրկուելով, ասոր հրամանովը, նախնիքներու այն մատեանը գտաւ նինուէի դիւաններուն մէջ, և անկէ կարգով հանելով հայ նախնիքներու պատմութիւնները, բերաւ Վաղարշակին, որ զայն պահել տուաւ արքունիքը: (Խոր. Ա. 8): Եւ կարելի չէ ըսել թէ՛ Մարիբաս այն գրքին մէջէն անհաւատարմարար հանեց Հայոց պատմութիւնները, քանի որ ան չէր կրնար ընել այդ բանը, որովհետեւ Վաղարշակ թագաւորը ստոյգ մատեաններէն ստոյգ պատմութիւններ կ'ուզէր, և Մարիբաս ինչպէս կը համարձակէր այն ստոյգ մատեաններէն անհաւատարմօրէն ներկայացնել յերիւրուած խօսքեր, չէ՛ որ խարբբայ կը համարուէր և թագաւորի դաւաճան, և իր կեանքը կը վտանգուէր: Արդ, այն մատեանները, որոնց մէջէն քաղուեցան մեր ազգին պատմութիւնները, ինչպէս նաև անոր նման նախնի ճշմարիտ պատմութիւններ, ժամանակներ անցնելէ յետոյ կորսուեցան և չ'իսկան ուրիշ ազգերու ձեռքը. այլապէս, զոնէ անոնց հին պատմու-

թիւններուն մէջ կը յիշատակուէր ան. բայց տեղ մը չ'երեւիր անոնց յիշատակը, ո՛չ ալ անոր նախնի մտքի նշմարանքը, ո՛չ Հերոդոտի գիրքերուն մէջ, ո՛չ ալ ուրիշներուն, որոնք Աղեքսանդրէն առաջ կ'ապրէին. ամէնուն մէջ ալ խառնիխուռն ստեղծարանութիւններ կը պատմուին նախնիքներու մասին:

« Մէկը թերեւս պիտի ըսէ թէ Մարիրասի գրուածքներն ալ կորսուեցան, բայց սուտ է, որովհետեւ Խորենացին անկէ կ'առնէ ու կը գրէ: Իսկ եթէ ըսես թէ՝ Խորենացին Մարիրասի աւանդածէն տարբեր բան մը գրի առաւ, պարտաւ խօսք է, որովհետեւ Խորենացին չէր համարձակիր ընել ատիկա, ո՛չ թէ վասն զի բարեպաշտ մէկն էր, այլ որովհետեւ ուղղամիտ էր. հետեւաբար, բոլոր ի՛նչ որ կը պատմէ, յայտնապէս կ'աւանդէ թէ՛ ո՛ւրիշ քաղած է: Արդ, եթէ Մարիրասէն տարբեր բան մը քաղած ըլլար, ի՛նչպէս կրնար գրել ու իր ժամանակակիցներուն ըսել թէ՛ Մարիրաս այսպէս կը գրէ. չէ՞ որ իր ժամանակակիցները պիտի կշտամբէին և ըսէին իրեն թէ՛ ո՛ւր է Մարիրաս և ո՛ւր կը գրէ այդ բանը: Ուրեմն, Խորենացին հաւատարմօրէն քաղեց Մարիրասէն, և այս վերջինը, ինչպէս որ ըսինք, հաւատարմաբար հանեց Նինուէի դիւանէն. նոյնպէս, Նինուէի գիւմնագիրն ալ հաւատարմութեամբ գրեց, քանի որ չէր կրնար խարդախել, որովհետեւ այդպիսի գիւմններու մէջ խարդախութիւն չի՛ մտներ, որովհետեւ ժամանակակից մարդ մը կը գրէ՝ ժամանակակից թագաւորներու Մէկ խօսքով, պէտք է ըսել թէ՛ աշխարհի մէջ՝ նախնիքներու արտաքին պատմութիւն մը չի կա՛յ որ հայոց պատմութիւններէն աւելի ստոյգ եղած ըլլայ Ատիկա զժուար է լսել ուրիշ ազգերու պատմագիրներուն համար, բայց ատիկա չի կրնար եղծել ճշմարտութիւնը, մինչև որ զայն հերքելու զօրաւոր պատճառ մը գոյութիւն չունենայ:

« Ըսողներ ալ կան թէ, նախնիքներու գործերուն մէջ, լսկ Հելլեններու գրութիւններուն պէտք է հաւատք ընծայել. բայց ատիկա ծիծաղելի է, որովհետեւ Հելլենները վերջին ժամանակներու մէջ ծաղկեցան և բնաստեղծութեամբ յորինած են իրենց գրածները թէ՛ նախնիքներուն և թէ՛ յետագաներուն վրայ. իրերու ճշմարտութենէն աւելի՛ հող տարած են հիւսուածքի գեղեցկութեանը: Եւ անոնց այս բանը գտնողը միայն ես չեմ, հռչակաւոր պատմաբան Յովսէպոս ալ այսպէս կը կարծէ. որովհետեւ, Ապիոնի դէմ (տես Ա. Գիրք, համար 2, էջ 438, տպագր. Ամատ.) այսպէս կը գրէ. — « Խիստ զարմանալի են անոնք, որ կը կարծեն թէ՛ նախնի գործերու մասին պէտք է լս'ի Հելլէններուն հաւատք ընծայել և անոնցմէ միայն տեղեկանալ և վերահասու ըլլալ ամբողջ ճշմարտութեան. իսկ մեզի (հրէից) և ուրիշներու երբէ՛ք չը հաւատալ: Բայց ես կը կարծեմ թէ այս մասին բոլորովին հակառակը պէտք է հաստատել, եթէ կ'ուզենք զոնազան

անտի կարծիքներու չը յարիլ, այլ, նոյնիսկ այն իրերուն մէջէն ճիշդը կշռել. որովհետեւ, Հելլէններուն մէջ, ամէն բան նոր ծագկած պիտի գտնես, ինչպէս, քաղաքներու շինութիւն, արուեստներու ճարտարութիւն, և օրէնսգրութիւններ, և ամենէն ետքը, նոր սկսան ձեռնարկել պատմագրութիւն. մինչդեռ, Եգիպտացիներուն, Քաղղէացիներուն և Փիւնիկեցիներուն մէջ — թողունք Երրայեցիները — նոյնիսկ անոնց՝ Հելլէններուն վկայութեան համաձայն, սկիզբէն ի վեր աւանդուած կը մնան յիշատակարանները:»

«Յետոյ, (Յովսէպոս) վկայութիւն կը բերէ Հելլէններու երեւելի մատենագիրներէն թէ անոնք ինչպէս, փիլիսոփայութեան և մատենագրութեան մէջ աւելի նին կը ճանչնան ուրիշ ազգերը, և զիրենք ասոնց աշակերտ կը նկատեն: Եւ յետոյ, (Ա. Գիրք, համար 3, էջ 439) կ'աւելցնէ. — «Ուրեմն ո՞վ չ'ըսեր թէ Խիւմար սնապարծներ են Հելլէնները, իրենք իրենց կարծելով թէ միայն իրենք զիտեն վաղեմի բաները, և թէ՛ միայն իրենք անվթար կ'աւանդեն անոնց ճշմարտութիւնը, և ո՞վ, նոյն իսկ անոնց մատենագիրներէն, զիւրաւ չը հասկնար թէ ո՞չ մէկ բան գիտցած ու չարագրած են հաստատ տեղեկութեամբ. այլ, անոնցմէ ամէն մէկը, իր կարծած ձեւովը ջանացած է ներկայացնել. հետեւարար, իրենց գիրքերո՞վ իսկ զիրար կը յանդիմանեն և միւսնոյն բաներուն վրայ հակառակը կը պնդեն:»

«Յետոյ ցոյց կուտայ թէ ինչպէս յունաց մատենագիրները յաջորդարար իրարու գործերը կը պարտաւեն, և շատ մը սխալներ գտնելով զիրար կը կշտամբեն: Իսկ թէ անոնց գրուածներուն մէջ ո՞ւրկէ սխալներ սպրդած են, երկու պատճառներ կը ցուցնէ (Տես Ա. Գիրք, համար 4, էջ 439). — «Նախ, որովհետեւ, կ'ըսէ, սկիզբէն ի վեր, յոյները բնաւ հոգ չը տարին հանրային դէպքերը զիւսաններու մէջ գրոյմելու, և այդ պատճառով մեծ սխալներու ճամբայ բացուեցաւ և տեղի տրուեցաւ համարձակ ստորանութեան, ամէն անոնց որ ուզեցին նախնիքներուն դէպքերը գրել: Եւ այսպէս, քանի որ երբէք հաստատուն յիշատակագիր մը չը կար մէջտեղ, որ ուսուցիչ ըլլար հետամուտ ուսանողներուն, և կշտամբող՝ սուտակասպտաններուն, մատենագիրներուն մէջ բազմազան այլայլութիւն ծագեցաւ: Երկրորդ պատճառը, կ'ըսէ, այն է թէ՛ անոնք որ իրենք զիրենք անգամ մը չարագրութեան կը նուիրէին, ճշմարտութեան հոգ չը տարին, թէ և իրենց բերնին մէջ միշտ պատրաստ ունէին այս խոտտումը, այլ աշխատեցան խօսքի ճութութիւն ցոյց տալ: Եւ քանի՛ կ'ուզէին ուրիշները գերազանցել, ախչափ աւելի կը վարժեցնէին զիրենք ատոր մէջ, և այդ պատճառով է որ անոնցմէ ոմանք առասպելներ հիւսեցին և ուրիշներ կեղծաւորաբար քաղաքներ ու թագաւորներ դավեցին. իսկ եղան այնպիսիներ ալ, որ նոյն իսկ երկերն ու ասոնց հեղինակները չքմեղացուցին».

կարծելով թէ այս կերպով վատահուժիւն ներշնչած կ'ըլլային, ևն : Արդարև, իրենց ոճին ու ճարտասանութեան մասին պէտք է յարգենք Յոյները, բայց ո՛չ թէ վաղեմի պատմութեան ճշմարտութեանը մասին, մանաւանդ, իւրաքանչիւր հայրենի աշխարհի սեփական գործերուն մէջ : »

Հայր Մ. Չամչեան, իր յորինած Հայոց պատմութեան վաւերականութեւնը չէր կրնար արդէն ապացուցանել, եթէ Մարիրաս Կատինայի մը գոյութիւնը չընդունէր, և եթէ, միեւնոյն ժամանակ, չը պաշտպանէր Մովսէս Խորենացին, մեր պատմութեան հայրը : Սակայն, կ'երեւի, ինք ալ գուշակած էր թէ ապագային պիտի երեւան գային քննադատներ, որոնք պիտի յեղաշրջէին ՚հինը, կասկածելի պիտի ենթադրէին Նինուէի դիւանին մէջէն աւնուած մատենին, նոյնիսկ Մարիրաս Կատինային գոյութիւնը, միւս կողմէ, հայրենասէր պատմագիր, ազգայնամոլ ըլլալու աստիճան, չէր ներեր երբէք վաղեմի մատենագիրներուն, թէ՛ յոյն թէ՛ լատին. որոնք հայ ազգին շատ փոքր տեղ մը տուած էին ազգերու պատմութեան մէջ : Այս կարգի պատմիչները հերքելու, նոյն իսկ վարկարկելու համար, չէր թերանար օտար ազգիւրներ պրպտելու, և օտար, երբեմն ալ, յոյն ու լատին մատենագիրներ վկայութեան կանչելու. և այս բոլորը՝ միմիայն իր յորինած պատմագրութեան վաւերական դրոշմ մը տալու նպատակով :

Յոյն մատենագիրները ձաղկելէ յետոյ, կը յարէ .

« Ինչպէս որ Յովսէպոս ալ կը գրէ Հրէից պատերազմներու գիրքին յառաջաբանին մէջ. — Մեր մէջ յարգ ունի պատմութեան ճշմարտութիւնը, որու մասին Յոյները բնաւ հոգ չեն տանիր : » Հետեւաբար, ինչպէս որ Կարմէթ կը վկայէ իր պատմութեան գիրքին յառաջաբանին մէջ (Տես Հատոր Ա.) պէտք չէ անոնց ամէն խօսքերուն հաւատալ վատահուժեամբ, այլ զգուշութեամբ :

Յետոյ, այսչափով չը շատանալով, կը շարունակէ . —

« Ասոնք ըսինք ՚հին պատմութիւններուն համար, և ո՛չ թէ անոնց համար, զորոնք Յոյն ու Հուովմայեցի պատմիչներն աւանդած են իբրև ազնաատես ու ժամանակակից, որովհետև յայտնի է թէ այդ վերջինները, ճշմարիտ ու անխարդախ կերպով կ'աւանդեն, սակայն, կարելի է ըսել թէ ասոնց մէջ ա՛յլ կը գտնուին մէկ քանի արատներ, որոնք կը բաժնուին չորս տեսակներու : Նախ՝ արեւելեան զանազան ազգերու պատմութիւնները կը շփոթեն երբեմն իրարու հետ, ինչպէս, տեղ տեղ, Պարսիկներունը՝ Հայերուն, և Հայերունը՝ Պարսիկներուն և Մարաց պատմութեան հետ, զորոնք երբեմն ալ Պարսեւներ կը կոչեն առ հասարակ, և Պարսիկներուն վրայ խօսած ըլլալ կը կարծեն :

և Պարսիկներուն վրայ խօսելով, Հայերուն գործերը կը խառնեն անոնց հետ, ինչպէս նաև Պարսիկներունն ալ՝ Հայոց գործերուն հետ. և ասոր պատճառը յայտնի է, չէ՞ որ երկար ժամանակներ Պարսիկներուն ու Հայերուն թագաւորները նոյն ազգէն էին, այսինքն՝ Պարթեաներէն: Երկրորդ՝ երբեմն առանձին գաւառի մը կամ իշխանի մը մասնաւոր դէպքերը կ'աւանդեն առ հասարակ բոլոր ազգին վրայ, և ընդհակառակը, երբեմն ալ, ամբողջ ազգի մը դէպքերը՝ մասնաւոր մէկու մը կը վերագրեն, ինչպէս կ'երեւայ յայտնապէս, եթէ այլևայլ ազգերու պատմութիւնները բաղդատուին իրարու հետ: Երրորդ՝ երբ պատմութիւն մը կ'աւանդեն, տեղ տեղ ա՛յնպէս կը նկարագրեն գործերը, և մէն մի արարք ու խօսք ա՛յնքան մանրամասնօրէն մէջ կը բերեն որ, ընթերցողները կը կարծեն թէ՛ այդ գրողը ներկայ եղեր և իր աչքովը տեսնելով՝ իսկոյն գիրի առեր է դանոնք: Ասոնց զէմ պատշաճօրէն կարելի է գործածել Պլուտարքոսի այն խօսքը, զոր կը գրէ ան Կրասոսի պարտութեան առթիւ, ուր, շատ մը խօսքեր մէջ բերելէ յետոյ, կ'ըսէ (Տես էջ 456). — « Ասոնք աւելի խորհրդածութեամբ կը պատմուին քան թէ ճշմարտութեամբ: » Թէև Պլուտարքոս, այս կէտին մէջ ուրիշները կը գերադանցէ: Զորրորդ՝ որովհետև այս մասնագիրներէն շատերը՝ իրենց գործերը նուիրեցին հոովմայեցի նշանաւոր մարդիկներուն ու կայսրերուն, ամէն բանի մէջ աշխատեցան անոնց կողմը բարձրացնել, ձախողութեաներուն վրայ քոչ քաշել, և վնասները զանց ընել. և ասիկա գրեթէ անոնց սովորութիւնն է, ինչպէս որ, Հռովմի մեծանուն ճարտասան Կիկերոն Տուլիոս, Մանիլեան օրէնքի ատենարանութեան մէջ կը խոստովանի. — « Պէտք է, կ'ըսէ, մեր կրած աղէտներուն, վնասներուն վրայէն լրուութեամբ անցնել, ինչպէս սովորութիւն է բանաստեղծներուն, որոնք հռովմայեցիներուն արարքները կը վիպագրեն: » Եւ քանի մը խօսքերէ վերջ, կը խոստովանի թէ՛ ինք ակամայ յիշեր է Հռովմայեցիներուն կրած ձախողութիւնները: »

Այսպէս, զանազան օտար պատմիչներէ վկայութիւններ, փաստեր մէջ կը բերէ Հ. Մ. Չամչեան, հաստատելու համար թէ՛ յոյն և հռոմայեցի պատմագիրները, գրեթէ առանց բացառութեան, կողմնակալ ոգի մը դրած են իրենց գրուածքներուն մէջ և թէ՛ առանց լրջօրէն ուսումնասիրած ըլլալու Արեւելքը, և հոն բարգաւաճող ազգերուն կեանքը, և առանց պատկառելու ճշմարտութեանէն, պարզապէս ուրիշներուն, մանաւանդ իրենց ժամանակակից մեծ անձնաւորութիւններուն հաճելի ըլլալու համար, խեղաթիւրած են դէպքերը:

Յետոյ, չարունակելով իր պաշտպանողականը, Հայոց պատմութեան ստուգութեան ու վաւերականութեան մասին, ուրիշ փոխառութիւն մըն ալ կ'ընէ հրեայ պատմագիր Յովսէպոսէն:

« Յովսէպոս, կը գրէ Չամչեան, Հրեաներու պատերազմներուն վրայ յօրինած իր գիրքի յառաջարանին մէջ կ'ըսէ. — « Հրեաներուն ու Հռովմայեցիներուն պատերազմը գրելու ձեռնարկեցին ոմանք, ո՛չ թէ որովհետեւ անձամբ ներկայ եղած էին, այլ, պարզապէս գրի առին ասկէ անկէ իրենց տկանջը հասած սուտ ու փուտ գրոյցներ, ինչպէս կ'ընեն բանահիւսնները: Իսկ անոնք որ ներկայ եղած էին իրենց պատմածողէպերուն, կա՛մ ի շնորհուկս հռովմայեցիներուն և կա՛մ Հրէից հանդէպ իրենց ատելութեան պատճառով, աղաւաղեցին իրականութիւնը. արդէն ասոնց գրուածքներուն մէջ կը տեսնուի կէս մը չարաօտութիւն, կէս մըն ալ գովասանք, և ո՛չ երբէք պատմութեան անվթար հաւատարմութիւն մը: »

Եւ յետոյ կ'աւելցնէ Յովսէպոս. —

« Թո՛ղ թէ ո՛չ միայն ուղղամտութիւն չեն դներ իրենց պատմութեան մէջ, այլ նոյնիսկ, չեն կրնար հասնիլ իրենց հետապնդած նըպատակին, որովհետեւ ուզելով հռովմայեցիները մեծ ներկայացնել, հրէից գործերը կը պզտիկցնեն ու կը նուաստացնեն. բայց ես չեմ գիտեր թէ ի՛նչպէս մեծ կրնան համարուիլ անոնք որ պզտիկներու յաղթած պիտի ըլլան... »

Հայր Մ. Չամչեան, չը շատոնալով Յովսէպոսի այս հեզնող ու կծու քննադատութիւնով, ի՛նք ձեռք կ'առնէ դարձեալ խարազանը, ձաղկելու համար օտար պատմիչները:

« Թէեւ ասոնք, կը գրէ, երբեմն Հռովմայեցիներու հակառակորդներն ալ կը մեծցնեն, բայց այնպիսի պարագաներու մէջ, երբ Հռովմայեցիները պիտի յաղթեն անոնց, որպէս զի ցոյց տան թէ՛ Հռովմայեցիները յաղթող են այնպիսի հզօր ազգերու: Ասոնք, տեղ տեղ իրենց ներքին մարդը կը մատնեն, այնպէս որ կը հասկցուի թէ իրենք կ'ուզեն ուրիշ ազգերը յիմարներ ցոյց ապա Հռովմայեցիներուն քով. իբր թէ Հռովմայեցիները միւս ազգերուն հանձարեղ գիւտերը աւելի՛ լաւ գիտեն քան թէ զանոնք հնարողները. և դարձեալ, հռովմայեցիները աւելի լաւ գիտեն ուրիշ ազգերու երկրին ճամբաները, քան թէ անոնք որ հոն սնած էին. ուստի և կը գրեն թէ հռովմայեցիները, օտար երկիրներու մէջ, որոնց ելքին ու մուտքին անտեղեակ էին, իրենց պահով ճամբայ և առատ պաշար կը գտնէին, իսկ բնիկները, իրենց երկրին, և իրենց ամբարանոցներուն տեղեակ ըլլալով, չէին գիտեր թէ ո՛ւրիկէ կերակուր պիտի գտնեն իրենց: Եւ թէ հռովմայեցիները, օտար երկրի մէջ, գիտէին ու կը գտնէին յարմար բնակետղ, իսկ երկրին բնիկները, այնպիսի տեղեր կը բանակէին, ուր բնակէին գաներ իրենք գիրենք ազատելու ճամբաներ: Իսկ եթէ տեղ մը ըստիպուին պատմել թէ հռովմայեցիները յաղթուեցան ուրիշ ազգերէն, ասէն կենսով կը ջանան արդարացուցիչ պատճառներ մէջ բերել, ցոյց

տալու համար թէ՛ մ'չ թէ սկարութեան կամ անխելք վարմունքի մը պատճառով տեղի ունեցաւ այն պարտութիւնը, այլ այս կամ այն բանին համարք Մէկ խօսքով, ասոնք որչափ ալ ստոյգ կը գրեն արեւմտեան ղէպերուն վրայ, նոյնչափ այլ ընդ այլոյ բաներ կը գրեն արեւելեաններուն վրայ: Ինչպէս որ, ընդհակառակը, արեւելեան պատմիչները որչափ ստոյգ կը խօսին արեւելեան ղէպերու մասին, նոյնչափ անստոյգ բաներ կը պատմեն արեւմտեաններուն վրայ. որովհետեւ ամէն մէկը, աւելի լաւ գիտէ իրենք, քան թէ ուրիշներունը. և ասոր շատ կը յարմարի այն տաճը որ կ'ըսէ թէ տիմարը՝ իր տունին մէջ աւելի գիտէ քան թէ իմաստունը՝ ուրիշի տունին մէջ. ինչ որ աւելի կը պատշաճի պատմութեան համար:

Արեւելեան ղէպերու մասին Հռովմայեցիներուն պատմութիւնները կրնան անխարդախ համարուիլ, մանաւանդ ժամանակակիցներուն. բայց արեւելեաններուն պատմութիւնները՝ ա՛յլ աւելի վստահելի են. ինչպէս կը գրէ Խորենացին ալ (էջ 85). — « Թէ և մեզի յայտնի է յայն ու Հռովմայեցի մատենագիրներուն արժանաճաւատ հանգամանքը, սակայն արեւելեան մատենագիրները, իրենց ղէպերուն նկատմամբ աւելի ճշգրիտ տեղեկութիւններ կրցած են ունենալ: »


Հայր Մ. Չամչեան հետեւեալ տողերով կը կնքէ իր տեսութիւնները նախնի Հայոց պատմութեան ստուգութեանը մասին. —

« Այս ամէնը գիտնալով, թէ և անոնց մէջ շատ խօսքեր դասնք մեր ազգին նկատմամբ, բայց անոնցմէ ա՛յն մասերը միայն առինք, որոնք յաջողեցանք ստուգել մեր պատմագրութեանց հետ քաղզատելով, մանաւանդ Խորենացիի խօսքերուն հետ. վասն զի, ինչպէս ըսինք, ինչ որ ան կ'աւանդէ մինչև Սանատրուկի մա՛ը և անկէ անդին ալ, ճշգրտապատում մատենաներէ առած է և արքունի զիւաններէ, որոնց ստուգութեանը բաւարար ասպացոյց մըն է անոնց առանց աչառութեան և պատրուակի խօսքը: Ինչպէս որ նոյնը կը տեսնենք մեր բոլոր միւս պատմագիրներուն քով ալ, որոնք առանց խեղաթիւրելու կը ներկայացնեն եղիւրթիւնները, և բան մը չեն ծածկեր: Այդ պատճառով է որ մենք ալ համարձակեցանք, աւելի՛ ասոնց քան թէ ուրիշներուն հաւատք ընծայել: »

Հայր Միքայէլ Չամչեան, այսպէս մէկիկ մէկիկ իր դիտողութիւնները կը դնէ օտար պատմիչներէն շատերուն անհիմն և յաճախ երեւակայական ստեղծարանութիւններուն դէմ, կը պաշտպանէ իր սեփական աղբիւրները, ազգային պատմագիրները, որոնցմէ քաղած է իր բոլոր գրածները: Յետոյ, մանաւոր գլուխ մըն ալ կը բանայ, բացատրելու համար մեծ, անթիւ օգուտները, որոնք կրնան քաղուիլ պատմու-

թիւններու ընթերցումէն, եթէ, մանաւանդ ուշադրութեամբ և ինամով հետեւի ընթերցողը մէն մի դէպքի, և եթէ ինք այ անձամբ որոնայ և վերահասու ըլլայ այն դէպքերու շարժառիթներուն և հետեւանքներուն :

Արդ, մեր ազգային Ընդհանուր Պտտմութեան նախադուռը բանալի է յետոյ, ներս կը մտնենք, ուր դարերու փոշիներու տակ ծածկուած կը մնան բոլոր պատերազմները, բոլոր փոթորիկները, մէկ խօսքով, հայ ազգին բովանդակ շիջելափառ անցեալը, այնքան սրտաճմիրկ ու քստմնելի դուռագներով . . . :



ՀԱՅԿԱԶԱՆՑ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Ս. Մ Ա Ս

Ն Ա Շ Ա Պ Ե Տ Ն Ե Ր

Ք Ղ Ո Ւ Ն Ա .

Հայ ազգին ծագումը, ազգային եւ օտար պատմիչներու համաձայն . — Ասորեստանի բռնաւորը ներքովը կամ Բել .

— Հայկ նահապետք . — Բելի դեմ կ'ապսամբի եւ կը

պատերազմի . — Պատերազմին վախճանը . — Հայկի

սերունդը . — Բելի որդիներուն եւ ասոնց

յաշորդներուն քաղաւորութիւնը :

Հայաստան կը կոչուի այն երկիրը, որ Փոքր Ասիոյ արեւելեան կողմէն մինչեւ Մարաստանի սահմանները կը տարածուի, հիւսիսէն Պոնտոսի եւ Կովկասի լեռնաշղթաները եւ հարաւէն Միջագետքը :

Բայց ուրիշ՝ ծագում առած է այդ անունը, եւ ինչ է իր նշանակութիւնը : Ասորեստանեան փրապետութեան վաղնջական դարերուն մէջ զանազան յորջորջումներ առած էր ան . ինչպէս, Արարատ կամ Ուրարդու, Սիւպան, կամ Սիւպնա, Էննիք կամ Հաննիք, Նայիրի, Բիանիա կամ Վանեա, Մաննա, ևն. ևն :

Արարատը յիշուած է յաճախ Ս. Գիրքին մէջ (Տես Ծննդոց Բ. 11, Նայի Լէ. 38 եւ Երեմիա Բ. 27) . Արարդուի կամ Արարդիի փոփոխուած մէկ ձեւը, Սալմանասարի Ասուրբանիպալի արձանագրութիւններուն մէջ յիշուած է . Դարուն (Բ. Ա.) :

Ասորեստանցիներն ու Բաբելոնացիները Ուրարտու կը կոչէին դաշտերուն հիւսիսարեւմտեան կողմը: Կ'երևայ թէ, ինչպէս կը յիշէ Քէորդ Ասլան, իր Հայ ժողովուրդի վրայ պատմական ուսումնասիրութիւններ ֆրանսերէն կարեւոր երկին մէջ, այդ անունը տրուած է նախ այն երկրին, որ Եփրատի երկու թեւերուն, Արաքսի ախունքներուն միջև կը տարածուի, և թէ ի վերջոյ, համանուն լեռան դրացի գաւառը միայն ճանչցուած է այդ անունով:

Շմիտի կարծիքով, Աւարաս կամ Ուրարտու բառը կը նշանակէ բարձր երկիր: Ուրարտեան արձանագրութեանց Սիւլպանը կամ Սիւլպանան՝ յետոյ եղած է Ասորիներուն Սիւլպանը կամ Սիւլպանը, նոյնինքն մեր Ծոփքը կամ Ծոփաց աշխարհը, իսկ Ասորեստանցիներուն Էն-ձիդը կամ Էնձին՝ հայ մատենագիրներուն կողմէն ալ յիշուած է Հանձիտ անունով: Սյա նաճանգը կը տարածուի Ծոփքի արեւելեան կողմէն և կը խառնուի Աղձիի կամ Աղձիկի, ուր արեւմտեան Տիգրիսի ախունքները կը բոլան:

Նաիրի կամ Նահրի, քանի մը քննադատներու կարծիքով, գետերու երկիր կը նշանակէ, և առաջին անգամ, ԺԱ. դարուն (Ք. Ա. յիշուած է Թիլատպալասար Ա.ի արձանագրութեանց մէջ: Ասորեստանեան թագաւորը, Նաիրի անունով կը հասկնայ Վանի աւազանը, և արեւելեան Եփրատի բարձրադիր նովիտները: Ասիկա Վանի թագաւորութեան հիմնարկութենէն առաջ յիշուած յորջորջում մըն է: Սարգոնէն ետքը, ալ չէ յիշուեր: Փալով Բիանիայի, որ ձեւափոխուած է Վանէի, մեր օրերու Վանը, տեղական արձանագրութեանց յորջորջում մըն է, որ Պաղատէօսէն ալ յիշուած է Վօլանէ ձեւին տակ:

Մաննա կամ Ման, որ Ուրարտուէն առանձին և անկախ փոքրիկ տէրութիւն մը կը կազմէր, Ս. Գիրքի Միւնիլին է, դասական աշխարհագէտներուն Մադիանը: Վանայ լճին արեւելեան կողմը կը տարածւէր և մասամբ կը պարփակէր այն երկիրը, որ աւելի յետոյ կոչուեցաւ Արմէնո - Մարաստան:

Հայերը, հիմնուելով Մովսէս Խորենացիի աւանդած պատմութեան վրայ, մինչև վերջին ժամանակներս կ'ենթադրէին թէ այս անունը Հայկի սերունդի նահապետներէն Արամ անուն անձնաւորութենէ մը փոխ առնուած էր: Ստորոսն և Փ. Բիւզանդացի կը վերագրեն զայն Արմենոսի, դիւցային անձնաւորութիւն մը, Թէոստիա ծնած, որ եկած է եղեր Եփրատի բարձր հովիտը, Արգոնաւորդներուն արչաւանքէն ետքը:

Ներսէս Ենորճայի հայրապետը, Է. Գարուն, Արմենոսիէն առնուած կը կարծէ Արմէնիա անունը: Պողոտարի կարծիքով, Արմէնիան նոյնինքն Հաք Մեհենն էր, այսինքն Աստուածաշունչի աւանդութեան Մեհենի լեռը:

Գարազաշեանի կարծիքով, Արմէնիան, կամ թէ Արմենիկ կամ

էրիսէն, Ավեստաի մէջ գործածուած է և Իրանի արեւմտեան կողմի երկիրն է: Այս յորջորջումը Գարեշի ժամանակէն մնացած է, քանի որ առաջին անգամ Քինուսուկի արձանագրութեան մէջ յիշատակուած է: Տը Դառա կ'ուզէր զայն բացատրել Բար Միննիով. Բար մասնիկը, Փոքր Ասիոյ լեզուներուն մէջ, տեղ, բնակալայր կը նըշանակէ: Կարծողներ ալ եղան թէ Մարաց օրով Ուրարդուն Հարմնիտոյ կը կոչուէր և յետոյ Պարսիկները զայն վերածած են Արմէնիայի:

Վիզթօր, Լանկուա և Վիէննայի Մխիթարեաններէն Հայր Գաթրճեան, ասո՞նք եղան որ առաջին անգամ դիտել տուին թէ Մօվսէս Խորենացիի պատմութեան —ինչպէս կը տեսնուի Սէրէոսի անանուն ցանկէն— մէջ յիշատակուած առաջին նահապետներուն անունները, առհասարակ Արմա մասնիկով կը վերջանան, ինչպէս է Աստուածաշունչի Թօգ-Արման:

Յ. Լընօրման, իր Պասմուրեան Ծագումները գիրքին մէջ կը հաստատէ թէ՛ Քիրէրդ, Տիլլըմէն և Միխայէլիս, այս երեք գիտուններն են որ Թօգ Արման եփրատեան Արմէնիային հետ կը նոյնացնեն. հետեւաբար Արմէնիա կամ Արմէնէ յորջորջումը կը պարտինք Արմաներուն կամ Արմեններուն, բնիկ թրակեան դաղթականներուն, որոնք, է. Գարուն (Ք. Ա.) տիրեցին Եփրատի բարձր հովիտներուն, համաձայն Ատրարոնի պատմած աւանդութեան, որուն մէջ Արմաները տո՞մային հերոսի մը ձեւը ստացած են: Իսկ մենք որ հայ կը կոչուինք, մեր հայրենիքը կ'անուանենք Հայաստան այսինքն, Հայոց տուն: Եւ այս յորջորջումը կը պարտինք Փոքր Ասիոյ Խաթեան ցեղախումբերուն, որոնք Արմաններուն խառնուեցան:

Արդ, կը հարցնենք. — Որո՞նք եղած են Հայաստանի առաջին բնակիչները:

Մեր բոլոր ազգային պատմութիւնները միարեբան կը վկայեն թէ՛ սկիզբէն ի վեր Արարատի լեռնադաշտն եղած է մեր գաղթաւայրը, և թէ՛ հայ անունը կը պարտինք Հայկի, ևն, ևն:

Մտիկ ընենք հիմա թէ այս մասին ի՞նչ կը գրէ Գէորդ Ասլան, երեք տարի առաջ Բարիզ հրատարակուած իր գիրքին մէջ:

« Հայկական պատմութեան քննարկներուն համեմատ, շատ հին դարերէ ի վեր Արարատի սարահարթը զաղթած են հայերը, որոնք այսպէս կոչուած են իրենց նախահայր Հայկի անունով, Սենարի բնիկներէն, որ եկած չոն հաստատուած է եղեր, Բարեխնի Բեկին հայաձանքներէն փախչելով: Հայկի սերունդէն՝ Արամի փայլուն շրջանը, և ասոր պատերազմական արշաւանքները ծնունդ տուեր են Արմէնիա յորջորջումին: Բայց ո՞չ մէկ կերպով կը հաստատուի Աստուածաշունչի աւանդութեանց վրայ յերիւրուած այս պատմութեանը, ո՞չ ալ, այդքան վաղընջական դարու մը մէջ, Արաքսի ու Եփրատի գաւառներուն մէջ հայերուն ներկայութիւնը, ևն. »

« Միւս կողմէ, կը շարունակէ Գէորգ Ասլան, երեւան ելած վաւերագիրները, գիտուններուն հետազոտութիւնները կը հաստատեն թէ մենք պէտք է նոյնպէս մերժենք ցեղագիր գիտուններուն կողմէն երկար ժամանակ ընդունուած սխալներ, որուն համաձայն, Արարատ սարահարթը զաղթավայր եղած է արեւելքէն եկող իրանեան ճիւղի մը. ինչպէս Մարացիներն ու Պարսիկները, ճիւղ մը, որ հոն հաստատուած է եղեր ամենաճին դարերէ ի վեր ճնունդ սայլով հայերուն: Ասիկա ենթադրութիւն մըն է, Մարաց և Հայոց միջեւ լեզուի ու բարբերու աւելի կամ նուազ իրական նմանութեան մը վրայ ձևուած, առանց հաշուի անելու նախնիքներուն աւանդութիւնները, որ հայերը մերձաւոր կ'ընէ Փոքր Ասիոյ ժողովուրդներուն, մասնաւորապէս Փոլիզիացիներուն: Արդի ձեռք բերուած ծանօթութիւնները ցոյց կուտան թէ՛ Արարատի սարահարթին նախնական բնակչութիւնը զանազան ծագումներ ունեցող ժողովուրդներու համախոնուած մըն էր: Արարատ, ինչպէս լեռնոտ երկիրներուն մեծագոյն մասը, յաջորդաբար ասպատակուած է ժողովուրդներէն, որոնք անոր բոլորաթիւրը կը բանակէին, Կասպից, Մարաստանի, Միջագետքի, Փոքր Ասիոյ ժողովուրդներ: Յաջորդական զաղթային հոսանքներ հոն թափած են, մէկ կողմէ Սկիւթացի կամ Թուրանեան ցեղախումբեր, Ալաններուն Սասպիրներուն արեւակիցներէն, զորոնք Եզկիլէյ կը կոչէ Գոգ և Մազոգ, և միւս կողմէ, Մարացիներ, Արամէցիներ և Փոքր Ասիոյ Հնդեւրոպացիներ: Ասոնք, ինչպէս որ կը տեսնուի, տարբեր լեզուներով ու բարբերով փոքր ժողովուրդներ էին, որոնց անունները ա՛յնն յիշուեր պատմութեան մէջ: Հիւսիսի զաղթականները դրաւեցին անշուշտ Արաքսի հովիտը, և թերեւս Վանի աւազանը, բայց չը կրցան առաջանալ Եփրատի կողմէն, ուր արդէն տեղաւորուած էին Փոքր Ասիոյ և Միջագետքի ցեղախումբեր: Պէտք է կարծել թէ այս փոքրիկ ժողովուրդները դարերով ապրեցան, առանց խառնուելու, առանց ձուլուելու, ևն: »

Վերջապէս, Սէյսի և Լէհմանի ուսումնասիրութիւններէն ի վեր, բոլոր գիտունները միաձայնութեամբ կ'ընդունին, թէ՛ Արարատի նախնական բնակիչները Խայտեանք կը կոչուէին, շղղային աստուած Խայտիսի անունով, ճիշտ ինչպէս որ Ասորեստանցիները իրենց անունը փոխ առած են Ասուր աստուածէն: Եւ դարձեալ բոլոր գիտունները միաճամուռ կը վկայեն թէ Հայերը Թրակափոխիզեան ծագում ունին, և նախահայերը կը կոչուին Խայտեաններ:

Թէ՛ գիտուններուն ուսումնասիրութիւնները, և թէ՛ սեպածեւ արձանագրութեանց յայտնութիւնները մեզի կը սովորեցնեն թէ՛ Խայտեանները հզօր ցեղ մըն էին և թէ՛ Արարատի թագաւորները հպարտ պատերազմիկներ եղան, ուղղեցին իրենց զէնքերը դէպի արեւելք:

հիւսիս, արեւմուտք, մինչև իսկ հիւսիսային Սիւրիա արշաւեցին և Նրկար ժամանակ ճակատամարտներ մղեցին Ասորեստանի դէմ և, ապահովեցին իրենց համար գերակշիռ դիրք մը, պահելով միննոյն ժամանակ իրենց անկախութիւնը և Այս Խալտեանները ստրված էին այդ նահագոյն դարերուն, գրեւտ արուեստը, և, քաղաքակրթութեան սրուշատիճանի մը հասած էին: Գեո մինչև ցարդ Վանի մէջ այս քաղաքակրթութեան նախընթացը կը տեսնուին: Եւ այսպէս, այդ անկախ լեռներուն մէջ ապրեցան դարերով ու դարերով, քաղաքներ, բերդեր կառուցին, ջրանցքներ պեղեցին, ստորերկրեայ ջրուղիներ բացին, որոնց մէկ քանիները տակաւին կանգուն կը մնան: Հայ թագաւորներուն յաղթանակները պատմող սեպածե արձանագրութիւններ կան թէև, բայց ասոնք երբէք չեն ճշդեր ո՛չ այդ ժողովուրդներուն ծագումը, չեն պատմեր թէ ի՛նչ պարագաներով իջան Արաքսի հովիտը և անկից՝ Վանի աւազանը, ուրկէ նետղհեաէ տարածեցին իրենց տիրապետութեան շրջանակը: Այսպէս, երկա՛ր դարեր տեսող կեանքէ մը վերջ, Խալտեանները, մարական յաղթանակին սկիզբները, բեմէն աննետացան, և իրենց թագաւորներուն՝ Առաջաւոր Ասիոյ պատմութեան մէջ խաղցած դերին փառաւոր փայլը չը հասաւ ին դարերու մատենագիրներուն, կը գրէ Գէորգ Ասլան իր նոյն գիրքին մէջ (էջ 37):

Անաւատիկ ինչ որ կը յայտնէ մեզի արդի գիտութիւնը հայ ազգի ծագման մասին, որ դարերու մշուշներովը պարուրուած է սակայն: Իսկ մեր ազգային պատմիչները, որոնց զլուխը կը գտնուի Քերթուրահայր Խորենացին, քառասուն դարերու հնութիւն մը կ'ընծայեն մեր ազգին և մեզի Նախահայր կուտան, ինչպէս բսինք արդէն, Հայկանունով հերոս մը, Հայ ազգին հիմնադիր նահապետը:

Ջրնեղեղէն ետքը, Նոյի սերունդը բազմացած, տարածուած էր երկրագնդին զանազան կէտերուն վրայ:

Քամի ցեղէն, Քուշի որդի Ներրովթ անուն հսկայ մը, նոյնինքն Բելը, ժամանակներու ցեղապեաներուն մէջ ամենէն աւելի հզօր և սարսափելի դարձած, յաջողած էր նուաճել և իրեն նաղանդեցնել բազմաթիւ ցեղախումբեր, որոնք, գրեթէ ասանց ընդգրկմութեան փորձի մը, հպատակութիւն յայտնեցին իրեն: Եւ այսպէս, իր միահեծան իշխանութիւնը հաստատեց այդ կողմերը բոլոր ժողովուրդներուն վրայ:

Օտար պատմագիրները Բել կը յորջորջեն այդ հսկան, ուրիշներ՝ Քաքոս, կամ Քարբուշ, ի ամ քուշորդի և ուրիշ պատմիչներ՝ տարբեր տարբեր անուններով կը ճանչնան Ներրովթը:

Կ'աւանդուի թէ Ներրովթ հիմնած է Բարկաստանի մէջ, Եփրատ գետին վրայ, երեք քաղաքներ. — Արէդ, Աքադ և Քաղանէ, նաև, նոյն գետին եզերքը շինած է Բարկուն քաղաքը:

Ներբովթ, տարուէ տարի զօրանայով, և նորանոր յաղթութիւն-ներով ընդարձակելով իր երկրին սահմանները, Բաբելոնէն(*) անցաւ Ասորեստան, ուր դարձեալ երեք նոր քաղաքներ շինեց Հոռոդ, Գասէման և Քաղէն: Այս վերջին քաղաքին անունը քաղդէական և լատինական թարգմանիչները զործածած են: Իսկ Եօթանասուներու թարգմանութեան մէջ քաղաք յորջորջուած է, ինչպէս նաև Սամարացիներուն և Ասորիներուն թարգմանութեան մէջ, որոնք Խալախ կը հնչեն դայն:

Այդ երեք քաղաքներէն զառ, Բել ուրիշ քաղաք մըն ալ հիմնեց, Տեգրիսի վրայ, և զայն իրեն մայրաքաղաք ըրաւ: Յետոյ Նինոս նորոգեց այդ քաղաքը, որ իր անունով կոչուեցաւ Նինուէ:

Ասորեստանի այս հզօր բռնաւորին ժամանակակիցներէն էր Հայկ հերոսը, որ մեր ազգին նախահայրը պիտի ըլլար:

Խորենացին, Մարաբասի գիրքէն ասնելով, հետեւեալ ամականներով կ'որակէ Հայկի անձը.

« Հայկ հերոս մըն էր, գեղապատշաճ, քաջագանգուր, խայտաշուրի, անձնխայ, հաստաբազուկ, հաստաղեղ, կորովածիզ, քաջ ուշիմ ու խոհեմ »:

Հայկ հերոս էր, զիւցազն, յարեթեան տոհմին երիցութեան ազնուական հանգամանքովը, գեղապատշաճ էր, որովհետեւ զէմքը գեղեցիկ էր և իր մարմնի բոլոր անդամները ներդաշնակ ու պատշաճ համեմատութեամբ մըն էին. քաջագանգուր էր, գանգուր աղւոր վարսեր ունէր. խայտաշուրի էր, անոյշ ու զուարթ նայուածքին համար. անձնեայ էր, այսինքն, բարձր հասակով և իր վեհաշուք, արտանան տեսքով. հաստաբազուկ էր, իր հզօր բազուկներուն և անպարտելի ձեռքերուն համար. հաստաղեղն ու կորովածիզ էր, այսինքն լաւ նշան կ'առնէր և ճարտար աղեղնածիզ մըն էր. մէկ խօսքով, ճշմարիտ հերոսի յատուկ բոլոր ձիրքերը կը միացնէր իր անձին վրայ:

Նոյի որդիներէն Յարեթի սերունդէն, Փամէրի տղուն Թորգոմի որդին էր Հայկ, որ Բելի արքայատուութեան օրով, աշտարակայինութեան և Նինուէի հիմնարկութեան միջոցին հոն կը գտնուէր, ուրիշ նահապետներու հետ:

Բաբելոնի մէջ երկար տարիներ ապրեցաւ, հոն ծնաւ բազմաթիւ որդիներ՝ Արմենակէն ետք, Մանաւազ, Խոս, և ուրիշներ, և իր ընտանիքը տարուէ տարի կ'աւելնար, և ինք, արդէն ազդեցիկներէն, մեծ յարգ կը վայելէր ու հոչակ հանած էր:

(*) Ընրեցողները պէտք չէ շփոթեն այդ Բաբելոնը հիմակուան Պաղատի հետ, որուն հիմն ամուսն Բաբելոն է, եւ որ կառուցուած է Տիգրիս գետին վրայ. այս քաղաքին հիմնադիրը Նեբոպոլ չէ:

Բնազդով ազատաւէր, ամէն օր, իր աչքին առջև կը տեսնէր
անմեղ ժողովուրդին տառապանքները, Բեկի բռնապետական լուծին
տակ, և կը մտածէր թոթուել, նետել զայն, և ազատել թէ իրեննե-
րը և թէ՛ իրեն յարող բոլոր ցեղախումբերը :



Հ Ա Յ Կ Ն Ա Հ Ա Պ Ե Տ

Այսպէս, քանի մը տարիներ համբերեց, ջանաց բազմապատկի
համահոսներու թիւը, և իր ուժին վրայ վստահ, վճռեց ապստամբիլ :
Իր բոլորաբը համախմբեց իր բոլոր օրդիները, թուաները, օրանց
թիւը, ազգային պատմիչներուն համեմատ, երեք հարիւրի կը հասնէր :

իր ընտանիքի միւս անդամները, իր մերձաւոր պարագաները, այդ թէ կին, ինչպէս նաև իր համայնոհները, որոնք վաղուց յարած էին իրեն, գոյքերով, անասուններով և ինչքերով, մեծ կարուստ մը կազմած մեկնեցաւ Բարեկրնի երկրէն և ուղղուելով դէպի հիւսիսային կողմը, և Արարատի կողմը, դաշտավայր մը հասաւ, կանգ առաւ լեռան ստորոտ մը, ուր հաստատեց իր բնակութիւնը:

Հայկ, այդ դաշտավայրին մէջ բազմաթիւ ընկիւններ գտաւ, հովիւ ու երկրագործ, որոնք, վաղուց հոն կը բնակէին, անկախ, փոքրիկ ժողովուրդներ: Ասոնք իրեն հպատակեցուց առանց ընդդիմութեան հանդիպելու: զիւզեր, աւաններ հիմնեց և հոն խշխան կարգեց իր կաղնուս թուը: Իր անդրանիկ զաւկին Արմենակի որդին:

Յետոյ ինք, իրեններով և իր գոյքերով, անցաւ դէպի հիւսիս արեւմուտք, ուր, բարձրագիւր դաշտավայրի մը մէջ հաստատեց իր բնակութիւնը, և այդ տեղը Հաբէ յորջորջեց, ուզելով յետագայ սերունդին աւանդել — ինչպէս կը պատմեն Խորենացին, Յովհաննէս Կաթողիկոսը, Գրիգոր Մագիստրոսը, և Վարդան պատմիչը — թէ՛ հոն առաջին հանգամ բնակեցան Թորգոմի տունէն սերող ազգին հայրերը:

Հայկ նահապետը, որքան ազատատէր հերոս, նոյնքան աշխարհաչէն ու խաղաղատէր մարդ, նոր նոր շինութիւններով կը ծաղկեցնէր իր տիրացած երկիրները, իր անունով աւան մը շինեց, և Հայկաեկն կոչեց զայն:

Հայկի համբաւը լսելով, այդ դաշտավայրին հարաւային սահմաններուն ժողովուրդները, գունդ գունդ կը վազէին անոր ոտքը, յօժարակամ իրենց հպատակութիւնը կը բերէին, և Հայկ, տիպար նահապետ մը, գրկաբաց կ'ընդունէր այս նորեկները, և այսպէս, ամէն օր կ'աճէր, կը բազմանար իր հաւատարիմ հպատակներուն թիւը:

Սակայն երկար չպիտի տեւէր խաղաղութիւնը, Բարեկրնի մէջ մեծ աղմուկ հանած էր Հայկի ապստամբութիւնը: Բեւ, որ իր բռնապետութիւնը կը տարածէր Ասորեստանի ամէն կողմերը, սաստիկ զայրացած էր Հայկի դէմ, որ յանդգնած էր այդպէս ընդվզել և իրեն հետեւէն քաշել տանիլ ուրիշ ապստամբներու ամբոխ մը:

Արքունիք հրաւիրեց աւագանին, իր սարուկ ու հացկատակ արբանեակները, որոնք կը պաշտէին զինք իրրև թագաւոր և իրրև Աստուած. և ասոնց ներկայութեան ըրաւ իր հանդիսաւոր երդումը՝ բնաջինջ ընել Հայկայ սերունդը, եթէ սա յամառէր տակաւին ապստամբի զիրքը պահելու: Սակայն, Բեւի խորհրդականները, որոնք մօտէն ուսումնասիրած էին Հայկի նկարագիրը, խորհուրդ տուին Բեւի, նախ պատգամաւորութիւն մը զրկել Հայկի, հնազանդութեան յորդորելու զանի, և եթէ դարձեալ յամառէր, այնուհետև բանակ մը հանել անոր վրայ:

Բեկ բռնաւոր մը թէև, ստիպուեցաւ անսալ իր արբանեակներու խորհուրդին, որովհետև ինք ալ կը ճանչնար Հայկը, անպարտելի ներսը:

Ուստի իր հաւատարիմ մարդիկներէն բաղկացած պատգամաւորութիւն մը զրկեց, որուն գլուխը կը գտնուէր իր որդիներէն մէկը՝ Բաբ, որ արդէն ծանօթ էր Հայկի:

Ահա՛ Բեկի պատգամը, Խորենացիին և ուրիշ ազգային պատմագիրներու աւանդութեանց համաձայն.

« Գացիր բնակեցար հիւսիսի ցուրտ սառցոյններուն մէջ, բայց տաքցո՛ւր, մեղմէ՛ գոռոզ բարձրուդ սառած ցրտութիւնը, և ինծի՛ նշանազանդելով՝ խաղաղութեան մէջ ապրէ՛, իմ երկրիս մէջ, ո՛ւր որ քեզի հոճելի թուի, հոն բնակէ՛: »

Հայկ չպիտի կրնար ա՛յսքան նուաստացուցիչ պայմանի մը դէմ անտարբեր մնալ, խիստ լեզուով մը մերժեց Բեկի հրաւերը, և վստեց անոր պատգամաւորները, որոնք ձեռնունայն վերադարձան:

Պատգամաւորներուն մեկնումին յաջորդօրը Հայկ սկսաւ պատե-րազմի պատրաստութիւններուն: Բեկի ամբարտաւան բնաւորութիւնը ծանօթ էր իրեն, գիտէր թէ ան չպիտի մարսէր այս պատասխանը և թէ՛ պատերազմով պիտի ուզէր յագեցնել իր բռնապետի կիրքը:

Հայկի գուշակութիւնը կատարուեցաւ:

Պատգամաւորները վերադարձած և Բեկի բերած էին Հայկի պատասխանը:

Բեկ կատողեցաւ, և տուանց կարեւորութիւն տալու իր պալատականներու թկադրանքներուն, — որոնք կ'աղաչէին որ քիչ մըն ալ համբերէր, երկրորդ պատգամաւորութիւն մըն ալ զրկէր, և մերժումի պարագային՝ միայն պատերազմի ձեռնարկէր —, հրամայեց անմիջապէս չարժման մէջ դնել իր բանակը:

Ընդարձակ դաշտավայրերու մէջէն անցնելով, Բեկի բանակը սարսափ ու աւերք սփռեց ամէն տեղ, մինչև որ Արարատի երկիրը հասաւ, Հայկի թոտան Կաղմոսի բնակած երկրին սահմանները:

Կաղմոս, Արմենակի որդին, Հայաստանի արեւելեան հարաւային սահմաններուն պահպանութիւնը կը կառարէր իր մարդիկներով: Երբ իմացաւ թէ Բաբելոնեան բանակը մօտեցած է իր սահմաններուն, ստակաց, և իսկոյն գաղտնի սուրճանդակներ հանեց իր Մեծ Հօրը քով, իմաց տալու թէ՛ Բեկը մեծ բանակով մը մօտեցած է արդէն և կը պատրաստուի յարձակողականի:

Խորենացիին հետեւեալ խօսքերը կը դնէ Կաղմոսի սուրճանդակներուն բերնին մէջ. —

« Բեկի մեծ ներսիդ՝ յայտնի թո՛ղ ըլլայ թէ՛ Բեկ քու վրայ կուգայ քաջերու և հսկաներու բաղմութեամբ մը, և ես երբ հասկցայ

թէ սահմաններու մտեցած է, քեզի մարդ դրկեցի, ազգարարելու համար անոր գալուստը ուրեմն, ածապարէ՛ խորհիլ թէ ի՞նչ պիտի ընես:»

Իսկ Կաղմոս, սուրճանդակները ճամբու դնելէ յետոյ, խուճապահար, առաւ իր ընտանիքը, մեծ ու փոքր, և ածապարեց զայ ապաստանիլ իր մեծ հօր՝ Հայկիքով, որովհետև Բեյի բանակը կառաջանոր հետզհետէ և իր երկրին սահմանները կը բռնաբարէր:

Հայկ, ուշիմ ու քաջասիրտ, տունց շուարելու, զլուխ հանեց առաջուց սկսած պատրաստութիւնները, և ամէն պատահականութեան դիմադրելու կազմելու յօտար, կը խրախուսէր իրենները, չը վախնալու թիւէն և արճամարհելու ամէն վտանգ:

Բեյ իր զօրքերու ստուար թիւին և ուժին վրայ վստահ, կ'առաջանար դէպի Հայկի երկրին սահմանները, թալլելով, աւերելով ու վայրագութիւններ գործելով: Սակայն Հայկ, ինչպէս ըսինք վերև, ժամանակին աւարտած էր իր սաղմական պատրաստութիւնները: Իր որդիները, թոռները, թիւով երեք հարիւր, անվահեր սաղմակներ էին առհասարակ, ընտիր ու կորովի աղեղնածիղջներ, քաջ նշանառուներ, ո՛չ նուազ խիզախ յարձակողներ: Բարեւունէն իրեն ընկերացող պատերազմիկները յարած էին Ազատութեան այս անդրանիկ հերոսին, և սիրայօտար հնազանդած՝ անոր:

Այս փոքրութիւ, բոյց ընտրուած մարտիկներով, բոլոր՝ աղեղնաւորներ, Հայկ հասաւ ծովակի մը եզերքը, Վանի սահմանները, նոյնինքն արդի Վանայ կամ Բզնունեաց ծովը:

Հայկ ուզեց քիչ մը կանգ առնել հոն, պատերազմական գործուղութեան չը սկսած:

Խանդավառութիւն մը կը տիրէր այս փոքրիկ բանակին մէջ, և Հայկ իր որդիներուն, թոռներուն և իրեն յարող ուրիշ ցեղապետներու մէջ կանգնած, արտասանեց հետեւեալ խօսքերը, ինչպէս կը գրեն մեր ազգային պատմիչները.—

« Երբ Բեյի բանակին հանդիպինք, ըսաւ Հայկ, ճակատամարտին ա՛յն կողմը դիմենք, ուր Բեյ ինքը կը գտնուի, և մեր մատներուն յաջողակութիւնը ցոյց տալով զարնենք զանի, և անոր թիկնազահները ցրուենք. և մենք պիտի վաստիկինք յաղթութիւնը. իսկ եթէ չը յաջողինք, քաջութեամբ մեռնինք, և մեր բոլոր ունեցածը Բեյի ձեռքը թող անցնի:»

Հայկ դիւցադնի ճառէն խրախուսուած ու ելեքարացած, փոքրիկ գունդը, Հայկին հրամանատարութեան և առաջնորդութեան տակ, սկսաւ վերստին ստաջանայ և եկաւ հասաւ զաշտերու և յեաներու մէջտեղը, ուր կեցաւ, դադար առաւ բարձր բլուրի մը գագաթը, որուն աջ կողերէն ջուրեր կը վազէի ՝

Այդ բլուրին գազաթը կեցած, կը դիտէին: Յանկարծ տեսան Բեյը, չըջապատուած իր բազմաթիւ զօրքերէն, կ'առաջանար հեռուէն, և ամէնքը միտասին, փոթորիկայոյզ ամպերու պէս կ'արշաւէին, փոշին կը բարձրանար ու կը պատէր մթնոլորտը:

Յանկարծ, Բեյ իր խառնամբոխ զօրքերէն զատուելով, մէկ քանի ընտրուած կաբիճներու հետ, հասաւ գիմացի բլուրը, որ ջուրներուն ձախ կողմը կը դանուէր: Ահա՛ այդ բլուրէն էր որ Բեյ սկսաւ իր զօրքերով վար իջնել, յարձակոււմ մը գործելու համար Հայկի վրայ:

Բեյ երկաթի սաղաւարդ մը կը կրէր գլուխը, գազաթին վրայ զարդերով, և կուրծքը ու կունակը՝ պղնձէ տախտակ հագած էր, թեւերն ու ծունկերը զրահապատ, մէջքը գօտի, և երկայրի սուր մը կախուած ազդրէն, աջ ձեռքը՝ խոշոր նիզակ մը, ձախ ձեռքը՝ վահան մը, իսկ իր երկու կողմը շարուած էին քաջ վաղակաւորներ ու աղեղնաւորներ:

Հայկ, եթէ պէտք է հաւատ ընծայենք մեր ազգային աւանդութիւններուն և պատմագիրներուն, փորձ ազգմագէտ մըն էր, տեսաւ Բեյի առաջխաղացումը, երբէք չը շփոթեցաւ. անմիջապէս կազմակերպեց շարքերը. իր աջ կողմը զրաւ իր անդրանիկ որդին Արմենակը, երկու եղբայրներովը. իր ձախ կողմը՝ Կաղմոսը զրաւ, ինչպէս նաև իր միւս երկու որդիները, որոնք հոշակաւոր կաբիճներ էին. իսկ ինքը կեցաւ առաջին կարգը, իր ետեւէն շարելով միւս պատերազմիկները, որոնք եռանկիւն մը կը կազմէին:

Երկու թշնամի կողմերը յանկարծ դէմ առ դէմ դտան գիրար. ընդհարումը ստսկալի եղաւ, կատաղի, աննկարագրելի. փոշին կը բարձրանար և կը խափանէր արեւը. պարսատիկներու քարերը կը թռչէին, աղեղներէն նետեր կը սրանային և վիրաւորուածներուն ու սպաննուածներուն դիակները կը տապալէին: Ժխոր, խառնածայն, գոռուգոչ, դզրումներ: Պատերազմը կը տեսէր այսպէս առանց երկու կողմերէն մէկուն յաղթութեան. երկուստեք կը շարունակուէր ճակատամարտը, հաւասար թափով:

Բեյ, որ իր բռնակին թիւին ու զօրութեան վստահած, նախապէս կարեւորութիւն չէր տուած Հայկի փոքրիկ գունդին, յանկարծ ստսկաց, Երբ ակնատես եղաւ ճակատամարտին: Զգաց, պատկառելի ուժի մը դէմ կը զանուէր ինք. թշնամին խտտելի թշնամի մը չէր, ընդհակառակը, իր ստուար ու վիթխարի շարքերուն մէջ քայքայում ու խուժապ ձգելու աստիճան զօրուոր էր ան, ուստի, խորհեցաւ, խոհեմութիւն նկատեց նահանջել, կամացուկ մը դառնալ հետ, վերջուտին մագլցի բարձրանալ բլուրը, ուրիշ իջած էր. այդ կերպով կը յուսար ինքզինք ապահով դիրքի մը մէջ դնել, միեւնոյն ժամանակ, միանալ ուրիշ օղնական գունդերու հետ, որոնց ակնդէպ կըստատէր

որպէս զի նոր, միացեալ ուժերով աւելի աճեղ ու կատարի ճակատս . մարտ մը կարենար մղել :

Սակայն, Հայկ հեռուէն կը դիտէր Բեյի մէն մի շարժումը, նըշմարեց այս վերջինին նահանջի փորձը . խորհեցաւ թէ մնասակար և վտանգաւոր էր դեռ սպասել, և յետաձգել յարձակումը, թանկագին առիթ մը ձեռքէ հանած պիտի ըլլար, և թէ թոյլ սար որ Բեյ գործադրէր իր նահանջի ծրագիրը : Շուտով համախմբեց իրենները, կըրկին ու կըրկին խրախուսեց և ոգեւորեց զանոնք, և սկսաւ առաջանալ դէպի թշնամի բանակը :

Սուճապը սոսկալի էր, ամէն կողմէ բարձրացան աղաղակները, փոշիի ամպերը ծածկեցին մթնոլորտը, և խառնակութիւնը կատարեալ եղաւ :

Այս ընդհանուր խուճապին մէջ, Հայկ ինքզինք առաջ նետեց, խոյացաւ, յարձակեցաւ Բեյի դէմ, և վայրկեանապէս իրեն հետեւեցան իր որդիները, թոռները, և միւս զինակիցները :

Յանկարծ, բլուրին լանջքին վրայ կանգ առաւ Հայկ, ինքզինք հաւաքեց, և իր բովանդակ ուժովը պինդ մը քաշելով լայնալիճ աղեղը, ա՛յն աստիճան ուժովին արձակեց երեքթեւան նետը, որ թռաւ անցաւ Բեյի կուրծքին պղնձի տախտակէն և կռնակին մէջէն դուրս ելաւ :

Կ'արժէ հոս գնել հայր Արսէն Կոմիտաս Բաղրատունիի Հայկ Դիւցապի հետեւեալ տողը,

« Եւ քոնաւ յաղիւղանեց նեց վրկուրեանց Հայաստանայց »

Եւ իրօք այդ նետը, Հայկի աղեղէն թռած, Հայոց փրկութեան նետը պիտի ըլլար, այդ աղեղէն թռաւ ազգին ազատութիւնը բերող նետը, Բեյ տապալեցաւ, ինկաւ գետին, մեռած էր :

Աւելորդ է ըսել, վաղեմի դարերու պատերազմներուն մէջ, ահագին բանակը՝ հրամանատարի մը կեանքին կամ մահուան կապուած էր . երբ պետը սպաննուէր, բոլոր զօրքերը ցիր ու ցան, կը փախչէին անմիջապէս, կարգ ու կանոնը կը խանդարուէր շարքերուն մէջ . ա՛յս եղաւ նաև Բեյի սպարապան . իր բաղձաթիւ զօրքերը, Հայկի ամենի յարձակման դէմ գնելու ա՛յ անկարող, մանաւանդ տեսնելով իրենց հրամանատարին անսպասելի մահը, շուարած, սկսան զիրար ջարդել, փախչող փախչողի, անհուն աւարներ թողելով ճակատամարտի դաշտին վրայ :

Յագթութիւնը կատարեալ էր, Բեյի ահագին բանակին հետքը չէր նշմարուեր . տեղին օտարները, կը փախչէին հալածական, մոլորած հօտերու, արջառներու պէս, սրոնք սար ու ձոր ինկած, կը թափառին անհովիւ :

Հայկ, անմիջապէս հրամայեց իր ուղեմիկներուն, ժողովել սպարա-

եալներուն աւարները . յետոյ , նոյն ճակատամարտին տեղը չէնցուց
բնակութիւններով , և յորջորջեց զայն Հարֆ , կ'աւանդեն ազգային
պատմիչները . այդ գաւառը՝ Հայոց Ձոր , իսկ այն տեղ , ուր Բեկ ին-
կաւ , Գերեզմանք կոչուեցան :

Այնուհետեւ , երբ բոլոր կողոպուտներուն փրացան , Հայկ հրա-
մայեց իրեններուն զմուսել , զեզերով պատել Բեկի դիակը . և փոխադ-
րել Հարք , և բարձր բլուրի մը զազաթը թաղել զայն , իրրեւ յաղթու-
թեան փառաւոր յիշատակարան մը :

Հայկ , այդ ուարէն կարեւոր մաս մը յանձնեց Կաղմոսի , ինչպէս
նաև շատ մը կորիճներ սուաւ անոր , և հրամայեց վերադառնալ իր
տեղը , զարձեալ պահպանելու համար երկրին սահմանադրութիւնները :

Իսկ ինք իր երկիրը վերադարձաւ , Հարք գաւառը , ուր հաստա-
տեց իր նահապետական , կամ որ նոյն է , միապետական իշխանու-
թիւնը :

Ինչպէս տեսնաք , մեր ազգին նախահայրը խաղաղատէր հերոս մըն
էր , աշխարհաչէն , ո՛չ թէ աշխարհակալ , և եթէ Բեկի դէմ ապստամ-
բեցաւ , ուրիշ նպատակ չունէր , բայց միայն տապալել բռնապետու-
թիւնը , և վերստին ձեռք բերել սպառուած ազատութիւնը , մարդուն
ամենէն նուիրական իրաւունքը :

Խորհնացի իրաւամբ կը պանծացնէ զանի , իրրեւ աննման հերոս
մը , քաջ ուշիմ ու խոնձի :

Իսկ ԺԳ . Գարու ազգային պատմիչներէն , Վարդան վարդապետը (*)
որ իր դրած պատմութիւնը կը հասցնէ մինչև Հեթում Ա . ի ժամանա-
կը , և Կոստանդին Կաթողիկոսին մահը , այսինքն մինչև 1267 , Հայկի
արարքը շատ մեծ կը դաւանի և կ'ըսէ թէ՝ Հայկ աստուածային փառ-
քի նախանձախնդիր էր , որովհետեւ . « Երկրի եօրանսուերմէկ նսնա-
պեհներուն հետ , չը պատեց Բեկի արձանը , այլ , Ասուծմէ
հաշախուրւած , սասկեցուց նոյնիքն ողջը , կուպատեռւրեան աւազ-
նուղը : »

Եւ իրօք , եթէ նկատի ունենանք Հայկի անձնական ձիրքերը , և
սխրագործութիւնները , մասնաւորապէս Բեկի վրայ տարած յաղթու-
թիւնը , և բազմաթիւ ցեղերու նուաճումը , հասարակ մարդ մը չը
թուր ըլլալ Հայկ , ազգի մը նախահայրը ըլլալու բոլոր շքնաղ յառ-
կութիւններով օժտուած է ան , ինչպէս կը վկայեն բոլոր նախնի մա-
տենագիրները :

(*) Վարդան վարդապետը , Բրիտանիա առաջ ապրած մեր նախնի-
ներուն կեանքը գրած է սեղ սեղ փոխ առնելով վերստին ու մտե-
րուն զիբեհեհ . եւ ամեն կեցով պատմութիւններու հմտս , մանա-
ւանդ հետազոտող միտք մը կը յայտնու .

Քրիզոր Մազիսարոս և Յովհաննէս Կաթողիկոս կը գրեն թէ՛ Հայկ, այդ պատերազմէն ետքը, ինքզինք տուաւ աշխարհաշէն գործերու, խաղաղութեան մէջ հովուելով ժողովուրդը, քաղաքական կարգեր սեղծեց, գիւղեր, քաղաքներ հիմնեց, և երկար տարիներ ապրելէ յետոյ, բնական մահովը մեռաւ իր երկրին մէջ, և իր անդրանիկ զաւակին՝ Արմենակի յանձնեց իր ամբողջ ազգը:

Պատմագիրները տարակարծիք են Հայկի կեանքին երկարութեան մասին. բայց ընդունելով Աստուածաշունչի վկայութիւնը, այն դարուն առ նուազն չորս հարիւր տարի կ'ապրէին մաքրիկ, որոնք իրենց բնական մահով կը մեռնէին: Նկատելով թէ մեր նախահայրը ժամանակակից է Ս. Քիրքի նահապետներուն, կարելի է ընդունիլ թէ երեք չորս հարիւր տարի ապրած է ան: Սակայն, մեզ այնքան չը շահագրգռեր այդ կեանքին երկարութիւնը, որքան անոր արդիւնաւորութիւնը:

Մեր ազգին համար պատուարեր է նախահայր ընդունիլ Հայկի պէս հերոս մը, որմէ և որու զուակներէն սերած ենք մենք, թէև ունինք զանազան յորջորջումներ. օրինակի համար Թորգոմեաններ, կամ Թորգոմի աուն, Հայկի հօրը Թորգոմին անունովը. նոյնպէս Ասքանազեաններ, Թորգոմի եղբօր՝ Ասքանազի անունովը. երբեմն ալ Յարեթեաններ, Թորգոմի նախահաւուն անունովը: Իսկ աշխարհը, ուր սիրուեցաւ ու աճեցաւ Հայկի սերունդը, Հայաստան կոչուեցաւ:

Հայկի զաւակները — հայրենի իշխանութիւնը՝ անդրանիկ որդին Արմենակը ժառանգելէ յետոյ —, ցրուեցան զանազան զաւառներու մէջ, որոնց անկախ տէրը դարձան, և այսպէս, ժամանակին հոլովումովը, Հայկի տոհմէն շատ մը նահապետութիւններ առաջ եկան, որոնք այն աստիճան զօրացան որ իւրաքանչիւրը հազարաւոր ու բիւրաւոր հզատակներու տիրեց, ինչպէս նաև բազմաթիւ զաւառներու և երկիրներու, և սեփական բանակ մը պահեց: Անա՛ այս նահապետութիւնները, քիչ քիչ զօրացած ու ընդարձակուած, եղան մէկ մէկ նախարարութիւն, որոնց վրայ պիտի խօսինք առաջիկային:

Գալով Հայկ նահապետին եղբայրներուն, ինչպէս կը գրեն Ուոպելանց ու Վարդան պատմիչները, զանազան վայրեր զաղթեցին:

Հիւսիսի կողմերը գացին Եգրէս ու Կովկաս, որոնցմէ սերեցան Եգերացիները և Կովկասի բնիկները. ուրիշներ ալ՝ ուրիշ սահմաններու մէջ ցրուեցան, որոնցմէ ծնունդ առին Թորգոմացիները, որոնք դարեր վերջը, Թուրքերուն օրէնքներն ու լեզուն ընդունեցին և թիւրքմէն կոչուեցան. և որովհետև մեր Հայկ նահապետը հօրեղբայր կը համարուի այս վերջիններուն, մինչև այսօր սովորութիւն բրած են Հայերը յորջորջել հօրեղբորդի (եմօղլու):

ժԱ. Դարու յոյն ճգնաւորներէն Գէորգ Կեղրնոս, որ աշխարհիս
սկիզբէն մինչև Բիւզանդական Սահակ Կոմնենոս կայսեր ժամանակը



Հ Ա Յ Կ Դ Ը Ս Պ Ա Ն Ն Է Բ Ե Լ Ը

(1057) ըերած կապած իր պատմութեան մէջ շատ մը բաները պատ-
մէ Հայոց մասին, կը գրէ թէ, Բելի ժամանակակից բռնաւորներէն ա-

սորեատանցի Թուրսը, պատերազմի մը մէջ սպաննած է Յարեթի տունէն Հայկի եղբայրը՝ Կովկաս, որուն երկրին տիրած է, թերեւս Բելի մահուան վրէժը լուծելու համար:

Յետոյ կուգայ Հայկի միւս եղբայրը՝ Քարթլ: Սա ալ գաղթած էր ղէպի հիւսիս, լեռան մը վրայ. Արմաղ անունով, ուր շինած էր իր տունը, բերդը, զոր իր կրտսեր աղուն անունովը Որբէթ կոչած է, որդի Շամշոզդէն: Ասոր երէց որդին Մծխիթան շինած է համանուն քաղաքը: Նոյն պատմիչները կը կարծեն թէ տանցմէ սերած ըլլան Վրացիները: Կը գրեն նաև թէ՛ ասոնք թագաւոր չունէին, այլ պարզ պետ մը, և երբ, ժամանակներ վերջ, իրենց պետերէն Ազրամէսը մնաւ, չորս իշխանութիւններու պառակտուեցան և սկսան զիրար հարածել, մինչև որ ինկան Պարսից իշխանութեան ասկ, որոնց լուծը շատ ծանր էր:

Մինչ ասոնք այսպէս կը ստապէին ու կը շարշարուէին, Չինաստանի մէջ ահագին խռովութիւն մը պայթեցաւ և անթիւ անհամար փախստականներ, ճորայ կիրճէն անցնելով, եկան ապստամբեցան Վրաց երկիրը, զիմեցին ասոնց աւագանիին և բռին. — Յունաց կամ Պարսից երկիրը մտադիր ենք երթալ մեզի բնակարան մը գտնելու համար. եթէ դուք մեզի տեղ տաք, ձեր մէջ պիտի բնակինք և ձեր թշնամիներուն ղէմ պիտի պատիրազմինք: Վրացիները սիրայօժար ընդունեցին այս փախստականները, զորոնք բնակեցուցին Որբէթի բերդը, և անոր գաւառներուն մէջ, ասկէ՛ իրենց անունը Որբուլ, այսինքն Որբէթացիք, որոնք կը կոչուին նաև Որբէլեան կամ Ուուպելեան: Ասոնք զօրովիզ եղան Վրաց ազգին, տալով բանակի զօրապետներ, ու անոնց թշնամիներուն ղէմ՝ զարմանալի քաջութիւններ գործեցին: Ու երբ Փաւնուաս անուն մէկը թագաւորեց Վրաց վրայ, ա՛յ աւելի պատիւ գտան Չինաստանի փախստականները և շատ զօրացան, թէև, դարեր անցնելէ յետոյ, շատ քիչեր մնացին անոնցմէ Վրաստանի մէջ:

Քիչ մըն ալ Բելի որդիներուն և անոնց յաջորդներուն վրայ խօսինք, և յետոյ փակենք այս գլուխը:

Սիւնկելոս(*) և Կեղրնոս կը պատմեն թէ, Բելի, այսինքն Ներսիսի մահուան վրայ, Ասորեատանի մէջ տարածայնուեցաւ թէ ասուածներուն քով փոխադրուած է ան. ասոր վրայ, որդիները, Բելին անունով այն երկրին մէջ կանգնեցին արձան մը, Բահայ, ինչպէս որ կը յիշատակեն մասենազիրները, որոնց մէջ է Յովհան խմաստաէրը (Ի բանի

(*) Յոյն պատմիչ Ը. դարու, աբխազի ստեղծուեան կրակի ու կը հուսցնէ մինչև Կիովկէսիանոս կայսրը, շատ մը բաներ Բաղելով հին մասենազիրներէն:

ընդդէմ պողիկեանց) , և ժողովուրդները զանի իրր աստուած կը պաշտէին , այլ և այլ առասպելներ շինելով անոր վրայ : Ուրիշներ ալ , զարեր ետքը , երկինքի համաստեղութեանց կարգը դասեցին զանի , վաճանաւոր Որիոն հսկան , ինչպէս կը գրէ Կեդրենոս (Տես էջ 14) , զոր Աստուածաշունչի մեր թարգմանիչները Հայկ կոչեցին (Տես Յոր. 1Ը. 31 . և Եւսայի ԺԳ. 10) , որովհետեւ ան էր Բեկին յաղթողը , և որովհետեւ Որիոն , այբինքն Բեկ , որսորդ կը նշանակէր , ուստի , համաստեղութեան մէջ , անոր քովը կը գնին որսորդ զամբռ մը , և նապաստակ մը :

Ըսինք թէ այլ և այլ առասպելներ շինած են Բեկի մասին , մէկ հատը միայն կը բաւէ հոս գնել , միւսներուն վրայ ալ զազաւտար մը տուած ըլլալու համար . օրինակի համար , կը պատմուէր թէ Բեկի հասակը 60 կանգուն բարձր էր . և երբ աշտարակը փլաւ . այն աշտարականման հսկային վրայ ինկաւ , և ջախջախելով սպաննեց զանի : Անա՛ այս առասպելը մէջ բերելով , Յովհանն իմաստասէր կը կարծէ թէ Բեկի ժամանակէն ծնունդ առած է Կուսպաշտութիւնը : Նոյն իմաստասէրը կ'ըսէ թէ մարդիկ իրրեւ աստուած պատեւեցին Բեկը , իր տակադիթիտար հասակին համար : Եւ ասոր ամբարշտութեան խուարը բոլոր տիեզերքը պատեց ու կուրցուց , իւրաքանչիւր լեզու տարբեր անուն մը տալով անոր . օրինակի համար , Քուչացիները՝ յորժորջեցին զանի՝ ներբովթ , Բարեկացիները՝ Բեկ , Փղշտացիները՝ Բահաղ , Հեկլենայիները՝ Գիոս , Պարսիկները՝ Որմիզդ , Հոյերը՝ Արաւազդ : Աւելորդ է ըսել թէ՛ Բեկին հասակին վրայ շինուած է Նարեգոգոնոսորի սրճանը (Տես Ս. Գիրք , Դանիէլ Գ. 1) :

Ինչպէս Բեկի , նոյնպէս ուրիշ իւրաքանչիւր ազգի նախնի նահապեաններուն վրայ զանազան առասպելներ կ'աւանդուին . ինչպէս , օրինակի համար , Բիւրասպիի վրայ , որ Բեկի օրով , Պարսիկ առաջին նահապետը կը կարծուի եղած ըլլալ (Տես Սոր. Ա. 31 և վերջը) :

Բեկի որդին Բար յաջորդած էր իրեն , ինչպէս կ'աւանդէ Սորենացին , հին մասնագիրներէն առնելով , և ընդարձակած էր իր հօրմէն ժառանգած թագաւորութիւնը : Բարին յաջորդած է իր որդին Անեւրիս , և յաջորդաբար Արբէլ , Քայաղ , Արբէլ Բ. , յետոյ Մեծն Նինոս և ուրիշներ :

Այս իշխանութիւնը , որ երկրի առաջին բռնապետութիւնը կը համարուի , Ասորեստանեան թագաւորութիւն կոչուեցաւ և տեւեց չորսջ 15 դարեր , Բեկի տիրապետութենէն սկսելով մինչև Սարգանարազի վախճանը :

Իսկ Բեկի մեծ հօրեկոթ՝ Քամի տղան Մեոզրեմ՝ Եգիպտոսի մէջ հաստատած էր թագաւորութիւն մը , որովհետեւ , շատ մը պատմիչներու համաձայն , Բարեկունի Աշտարակին մէջ , լեզուներու խառնակութենէն

ու բաժանումէն ետքը, Մեսդրեմ իր զաւակներով Եգիպտոսի կողմերը գաղթած է, և ինն հաստատելով իր իշխանութիւնը, խաղաղօրէն կառավարած և իր անունով իբր թէ Մսրը կոչած է: Բայց անոյ մահուընէն ետքը, իշխանութիւնը չորսի բաժնուելով, բաւական երկար ժամանակներ տեւած է այլ և այլ փոփոխութիւններ կրելով մինչև և Նեքտանեմ, որ Մեծ Աղեքսանդրի հօր՝ Փիլիպպոս թագաւորի օրով կ'ապրէր, Եգիպտոսի վերջին թագաւորը:

Եգիպտոս վաղեմի քաղաքակրթութեան օրօրոց մը կը համարուի Ասորեստանի հետ. ինն ալ զանազան գիտութիւններ ծագկած ու գիւտեր հնարուած են և ինն հիմնուած է առաջին անգամ տուրքի գրութիւնը: Այս մասին Հերոդոտ, Մանեթոս, Սիկիլիացի Դիոդորոս և ուրիշ քաղմաթիւ պատմագիրներ շատ բաներ գրած են, ինչպէս նաև Ս. Գիրքը:

Ասորեստան՝ Քաղդէաստանի հետ և Եգիպտոս, ասոնք եղած են առաջին հռչակաւոր տէրութիւնները. Ասորեստանեանը՝ քաջութեան, իսկ Եգիպտականը՝ իմաստութեան կողմէ:

Բելի որդիներուն և ասոնց յաջորդներուն նկատմամբ, մեր ազգային պատմիչներէն Վարդան վարդապետը, մեհնական հին մասնաններէն և յոյներէն քաղելով, հետեւեալը գրած է. —

«Ներբովթ առաջին անգամ թագաւորեց Բարելոնի մէջ, հիւսածոյ, ո՛չ թէ կռածոյ թագով պսակուած, Սերուքայ ՄՁ. տարին: Եօջ քաղաքը շինեց, Ասպահան ըսուածը, և Թորգոմի որդի Հայկէն ըսպաննուեցաւ: Եւ Քաղդէացի Թիրոսը թագաւորեց, որուն օրով հնարուեցաւ ոսկերչութեան և արծաթագործութեան արուեստը: Ասոր յաջորդեց Սամբրոս, Սեմի սերունդէն, 72 տարի: Այս թագաւորը սկսած է վրան գիրով դահեկան ու գրամ շինել. և ասոր օրով գտնուած է պատկերի քանդակագործութիւնը, կազմարարութիւնը, չափ ու կշիռը և ամէն տեսակ բարեկարգութիւններ: Ասոր նկատմամբ Մենասարոս մոզը պատմած է թէ երեք այք ունէր. . . . Թարայի եօթներորդ տարին Արփի ազատը թագաւորեց 18 տարի: Եւ ասոր յաջորդեց Աթուրացի Վիլոսը, նոյնինքն Արբէլ Բ., զոր պատմագիրներէն մէկ քանինները Բելի հետ կը շփոթեն: Այս թագաւորը, Բարելոնէն փոխադրուեցաւ Աթուրիա, այսինքն Նինուէ, և 52 տարի թագաւորեց: Իսկ Բարելոնի մէջ, Քասրոս անուն մէկը թագաւորեց: Սակայն, Թարայի եղբայրը Սաճերոն որ քրմապետ էր, սպաննեց զանի, որովհետեւ Կայնան կուռքը յափշտակած էր իրմէ: Վիլոսի մահուընէն ետքը, Նինոս որդին ժառանգեց Ասորեստանի թագը:

Սորենացին այդ Կայնանը յիշած է, բայց ասոր յիշատակութեան չենք հանդիպիր ո՛չ ուրեք, ո՛չ Երրայեցիներու, ո՛չ Ասորիներու:

ո՛չ Քաղզէացիներու, ո՛չ Սամարացիներու, ո՛չ ալ Լատիններու բնագիրներուն մէջ: Իսկ Եօթանասուններու թարգմանութեան մէկ քանի օրինակներուն մէջ կը յիշուին և ուրիշ մէկ քանիներուն մէջ չ'են յիշուիր: Մեր Աստուածաշունչի մեջ ալ չեն յիշատակուած, ո՛չ Մերնդոցի գիրքին մէջ, ուր մեր նախնայրերուն կեանքի տարիները շարուած են, ո՛չ ալ Մնացորդաց գիրքին մէջ: Մէկ քանի Հուլիոսի օրինակներու մէջ (Տես Ա. Մնաց, Ա. 18), փակագիծի մէջ դրուած է Կայնանի անունը, բայց կ'երեւայ թէ ուրիշները մտցուցած են զայն, որովհետեւ Խորենացիի ժամանակը, Ս. Գիրքի մեր թարգմանութեան մէջ չի գտնուիր այդ անունը, ինչպէս կը զբէ նոյն ինքն Խորենացիին (Ա. Գրուխ 4.) :

Նոչնպէս, Յովսէպոս ու Փիլոն, որոնք Եօթանասուններու թարգմանութեան ընթերցումներովը շատ պարսպած են, Կայնանը չեն յիշեր, ո՛չ ալ Եւսեբիոս իր ժամանակագրութեան մէջ, ո՛չ Անտիոքացի Թէոփիլոս, ո՛չ Եպիփան, ո՛չ ալ Ափրիկիանոս: Ասոնք, ինչպէս նաեւ Երանոս, Որոզինէս և Պոլեմոս ու Բիւռոս, հեթանոս պատմիչները, Կայնանը դուրս ձգած են նախնայաներուն շարքէն:

Գալով Խորենացիին, որ Կայնանը Նոյի չորրորդ շառաւիղը կը նկատէ, պնդելով թէ գրեթէ բոլոր ժամանակագիրները զրած են այդ մասին, ան հիմնուած է Կայնան անունին վրայ, որ կը գտնուի Ղուկասի Աւետարանին մէջ (Գ. 36): Վերջապէս Կայնանի մասին կարծիքները տարրեր են:

Բոլոր վաղեմի պատմագիրները, ինչպէս տեսանք, իրարմէ փոխ առած, ընդօրինակած ու նորակերտած են այս առասպելական շրջանին վերաբերեալ շատ մը դէմքերն ու դէպքերը:



Արմենակ Նահապետք. — Արամայիս. — Ամասիա.
Գեղամ — Սիսակ. — Հարամ:

Հայկի ժա՛նուքնէն ետք, անդրանիկ որդին Արմենակ, որ, ինչպէս անսանք, Բելի դէ՛մ մզուած ճակատամարտին մէջ կարեւոր մասնակցութիւն մը բերաւ, չօրը յաջորդեց, իբրև Հայկազանց երկրորդ նահապետք: Հարք գաւառը թողուց իր երկու եղբայրները, Սոս ու Մանուսազ իրենց ինչքերով, գոյքերով, արջաւաներով ու բոլոր ընտանիքներով, և ինք, իր բազմանդամ ընտանիքով մեկնեցաւ, գնաց ՚հրօրսային արեւելեան կողմերը, ու իջաւ դաշտավայր մը, որ չըրջապատուած էր ամպածրար լեռներով: Այս դաշտին մէջտեղէն, երկայնքը, արեւմուտքի կողմէն, խախտածայն գետ մը կը կտրէր կ'անցնէր, և լեռներու կողերէն կը բզիւէին վճիտ, ականակիր աղբիւրներ:

Արմենակ, ՚հրօրի կողմը, բարձր ու հսկայ լեռան մը ստորտար, իրեն բնակավայր ընտրեց, ուր անկէլ առաւ սօսիներու անձուն անտառ մը: Եւ այդ լեռը կոչեց իր անունով Արագած, կամ Արմենագած, այսինքն Արմենակի տեղը, իսկ բոլոր կալուածները յորջորջեց Ան Արագածի:

Արմենակ, խաղաղատէր նահապետ մը, կրրէք չը պատերազմեցաւ, ո՛ր և է թշնամի ցեղախմբի մը հետ: Իր օրով, Հայաստանի բնակիչները շատ երջանիկ էին, ամէն մարդ իր գործին, Նովիւ, երկրագործ, բովանդակ ժողովուրդը կ'աշխատէր խաղաղօրէն և իր քրտինքներուն արդիւնքը կը վայելէր յիստատօրէն: Ասոր օրով զարգացան կրօնային պաշտամունքները, սօսիներու անտառին մէջ, ուր դուռդագուռը կը դիմէին հաւատացեալները, պաշտելու համար Բնութիւնը:

Արմենակ շատ տարիներ ապրեցաւ. Հարքի մէջ, յետոյ, իր աղգին կառավարութեան զեկը յանձնելով իր Արամայիս գաւակին, քաշուեցաւ իշխանութենէ, և քիչ յետոյ մեռաւ, բաւ աւտնդութեան, 46 տարի, կամ Եօթանասուներուն վկայութեամբ՝ 96 տարի իր նահապետական իշխանութիւնը վարելէ յետոյ:

Արմենակ, ինչպէս արդէն գրեցինք նախընթաց գլխուն մէջ, ուրիշ եղբայրներ այ ունէր. ասանցմէ Մանուսազ՝ Հարք գաւառը ժաւանդեց և հոն բնակելով, աճեցաւ ու բազմացաւ. քաղաք մըն ալ

չինեց հոն, Մանաւազակերտը: Ասոր Բազ որդին ժառանգեց արեւմտեան հիւսիսի կողմը զանուազ աղի ծովակին եզերքներու զաւարը, որոնք — թէ՛ ծովակը, թէ՛ զաւարը — Բազի անունովը յորջորջուեցան Բզնունեաց, այսինքն Վանայ երկիրը, և Աղթամարայ ծովը: Իսկ իսոկորայրը շատ մը շինութիւններ հիմնեց ու ծաղկեցուց այն կողմերը:

Մանաւազէն, Բազէն ու իսոկն սերած են Մանաւազեանները, Բզնունիները, իսոկոսուանիները, որոնք ապագային, հզօր ու արինախարարութիւններ պիտի կազմէին:

Արմենակ ուրիշ բազմաթիւ եզրայրներ ու քոյրեր ալ ունէր, Հայկի հարազատ ծնունդները, որոնց անունները մեզի անձանօթ են. միայն աւանդութիւն մը կը պատմէ թէ՛ հայկական ամիսներուն անունները փոխ առնուած են անոնցմէ:

Արմենակի անդրանիկ որդին Արամայիս, իր հօր ժառանգութեան փրանալով, Արարատեան աշխարհի այն դաշտավայրին մէջ, իրեն համար քաղաք մը հիմնեց բլուրի մը գագաթը. Գեհոն գետին եզերքը, և քաղաքը կոչեց իր անունով, իսկ գետը՝ իր Երաստ կամ Արաստ խոտին անունով Երաստ կամ Արաքս: Այդ թուականէն սկսեալ, այս քաղաքը Հայոց Աշխարհին առաջին և գլխաւոր, յետոյ արքայանիստ քաղաքը եղաւ մինչև Հայկազանց Հարստութեան բարձումը:

Արամայիս ալ բազմածին էր, շատ որդիներ ունեցաւ, որոնցմէ մէկը Շարա, որկրածոյ մին էր, միեւնոյն ժամանակ, բազմանդամ ընտանիքի մը հայր: Արամայիս, Շարայի հայրը, պորտաւորուեցաւ զանի զատկ միւս որդիներէն, և զրկեց մատակայ բերրի, արգասանդ գաշտ մը, որուն մէջէն ջուրեր կը հոսէին ամէն ուղղութեամբ, նոյնինքն Ախաւրեան գետը:

Շարայի բնակութիւնը հոս հաստատուած, սերունդը հետզհետէ անճեցաւ ու տարածուեցաւ այն ընդարձակ, յուսթի գաշտավայրին մէջ որ անոր անունով կոչուեցաւ Ծիրակ, շտեմարաններով հարուստ զաւարը:

Ծիրակացիները, աշխատատէր հողագործներ, սակաւ սկսած էին զգալ իրենց ուսերուն վրայ Շարայի ներկայութեան ծանրակշիւր բեռը: Շարա, անմրցելի շատակեր մը, միեւնոյն ժամանակ հրաշալի սերնդագործ մը, զաւառին բերքերուն մեծագոյն մասը կը լսփէր իր ստուարաթիւ զաւակներուն ու ասոնց ընտանիքներուն հետ, թէև Ծիրակ հոչակաւոր էր իր արգասաբեր հողով: Փողովուրդը Շարայի որկրամոլութեան վրայ առած մը շինած էր, զոր յաճախ կը յեղեղէր, և որ իտրենացիի ժամանակակից սերունդին մէջ ալ տարածուած էր. —

« Երե Բու՛ Շարայի որկորն է, մեր՛ Ծիրակայ ամբարեմ շեն. » այսինքն, եթէ զուն Շարայի որկորն ունիս, մենք Ծիրակի շտեմարան-

ները չունինք. (Սոր. Ա. 11): Այդ առածով ըսել կ'ուզէին. — Եթէ զուն Շարայի պէս շատակեր ես, մեր ամբարները չեն բաւեր քեզի, այլ Շիրակի երկրին շտեմարանները պէտք են:

Արամայիս, Արմենակի հարազատ ժառանգն ու յաջորդը, Արմաւիրի մէջ ապրելով, գրեթէ 40 տարի իր ազգը կառավարելէ յետոյ, իրեն յաջորդ կարգեց իր որդին Ամասիա ու մեռաւ:

Ամասիա, իր հօր Արամայիսի մահուընէն ետքը, Արմաւիր բնակեցաւ, և ունեցաւ երեք որդիներ, Գեղամ գեղեցիկ, Փառոս՝ արի, և Յոյակ՝ կայտառ: Ամասիա, ասոնք ամէնքը միասին առաւ տարաւ արեւելքի հարաւային սահմանները, և եկաւ Արարատ լեռան մօտ, ուր, լեռան ստորտար, զուարճագեղ տեղեր, այդ լեռնէն բխող աղբիւրներու ակունքներուն քովերը, մեծամեծ ծախքերով շինել տուաւ երկու աւաններ, իրարմէ մէկ օրուան ճամբայ հեռու, մէկը՝ արեւելքի, միւսը՝ արեւմուտքի կողմը:

Այս երկու քաղաքները տուաւ իր Փառոս ու Յոյակ որդիներուն որոնց անուններով յորջորջուեցան այն վայրերը. մէկը՝ Փառախտո, միւսը՝ Յոյակերտ: Իսկ Արարատ լեռը, իր սեփական անունով կոչեց Մասիս, և լեռան հովիտներուն մէջի զաւառը՝ Մասեաց Ոսն. իսկ ինք, Գեղամին հեա, Արմաւիր վերադառնալով, ժամանակ մըն ալ ապրեցաւ, յետոյ մեռաւ, չուրջ 32 տարի իր նահապետական իշխանութիւնը վարելէ յետոյ:

Գեղամ յաջորդեց իր հօր՝ Ամասիայի, և քանի մը տարի Արմաւիրի մէջ ազգը կառավարելէ յետոյ, հոն թողուց իր տղան Հարմա իր զաւակներով, և անոր յանձնելով իշխանութիւնը, անցաւ Արաքս գետին միւս կողմը, դէպի արեւելքի հիւսիսային կողմերը: Հասաւ ծովի մը եզերքը, — որ յետոյ Սեւանի ծով պիտի կոչուէր —, հոն հիմնեց շէնքեր, գիւղաքաղաքներ և բնակարաններ, զորոնք ամէնքը կոչեց Գեղարեւոնիք. իսկ այն տեղի լեռը՝ Գեղամի կամ Գեղամե, օրուն անունով կոչուեցաւ ծովակն ալ, Գեղամայ ծով:

Հոս ժամանակ մը կենայէ յետոյ, Գեղամ այս տեղը յանձնեց իր միւս զաւակին, որուն անունը Սիսակ էր, գեղեցիկ տեսքով երիտասարդ մը, վայելուչ նասակով, քաջազեղ, ճարտասան և ա՛յնքան հեզ, որ ակոյց կը կոչուէր:

Գեղամ ասոր պարզեւեց իր ստացուածքներուն մեծագոյն մասը, և արեւելեան կողմը, այն ծովակին հարաւային կողմի շատ մը վայրերը ժառանգութեան տուաւ անոր: Սիսակ հոն բնակութիւն հաստատեց, շէնցուց այն տեղերը, բոլոր սահմաններովը, և իր անունով յորջորջեց զանոնք Սիսակ կամ Սիսական, որ յետոյ Սիւնիք պիտի կոչուէր: Ասկէ ծագում առաւ Սիւնեաց կամ Սիսակեանց նախարարութիւնը, ինչպէս կը գրէ Սորենացին (Ա. 11 և Բ. 7):

Միասկ աւելի ընդարձակից իր աէրութիւնը, տրեւելքի կողմը, մինչև Կուր գետը, և այդ կողմերու բոլոր բնակչութիւնները նուաճեց: Ոմանք կը պատմեն թէ՛ իրեն հպատակեցուցած է նաև Կուրի միւս կողմի բնակիչները, մինչև Կասպից ծովուն սահմանները: Այդ պատճառով, Կուր գետին ու Կասպից ծովուն միջև գտնուող երկիրը՝ Աղուանք հոչուեցաւ Միասկին երկրորդ, այսինքն Աղու անունովը: Ուրիչ պատմագիրներ ալ կը կարծեն թէ՛ Միասկէն սերած բընակչութիւնները, Կուր գետէն մինչև Կասպից ծովը տիրուած, ճիշտանք ալ կոչուեցան, Միասկի որդիներէն մէկին անունովը, որ Միրուան կը կոչուէր:



Հ Ա Յ Կ Ի Ո Ի Բ Ե Լ Ի Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ը

Յետոյ Գեղամ ետ դարձաւ, եկաւ դաշտի մը մէջ, որ կը զըսուէր Արաքս գետին ու Սեւանայ ծովին միջև, և հոն, լեռան ըստորտը, ձորի մը եզերքը, քաղաք մը շինեց, Գեղամի կամ Գեղամի անունով, որ յետոյ, իր թոռներէն Գառնիկ անուն մէկու մը կողմէն նորոգուելով, Գառնի կոչուեցաւ:

Իսկ Գեղամ, այս աշխարհաշինութիւններէն ետքը, երկար տարիներ ապրեցաւ, և զրեթէ 50 տարի իր նահապետական իշխանութիւնը վարելէ յետոյ մեռաւ Գեղամէի մէջ:

Գեղամի յաջորդեց իր պայազատ ժառանգը Հարմա, որ, Արմառիբի մէջ նստաւ, և տաշուած յղկուն քարերէ պարիսպով մը պատեց իր մայրաքաղաքը, որուն մէջն ու դուրը հոյակապ պալատներ շինեց: Սա, իր հօր յաջորդելով, իր ազգը 31 տարի կառավարելէ յետոյ մեռաւ, նահապետական միապետութիւնը թողլով իր Արամ զաւկին:

Այդ շրջանին, երեք Հին Յամաքներուն մէջ սփռուած էին մարդկային զանազան ցեղերը: Հայաստան խիստ շէն էր ու բազմամարդ, նոյնպէս Յունաստան, Ասորիստան, Մարաստան, Հնդկաստան ու Չինաստան: Ստիպան քաղաքակրթութեան գլխաւոր վտարաններ կը համարուէին Ասորիստանն ու Եգիպտոսը:

Այդ դարերու մէջ ապրած ազգաբնակութեանց վրայ աւելի պայծառ զաղափար մը տալու համար, այս էջերուն մէջ թարգմանաբար կ'արտագրենք Գէորգ Ասլանի գրքին հետեւեալ հատուածները, որոնք մեծ խնամով քաղուած են արդի դարու գիտուններուն ու խուզարկուներուն ձեռքով կատարուած ուսումնասիրութիւններէն. —

« Հայաստանի հիմակուան բնակչութիւնները բնորոշող զիմագծերէն շատերը, կը գրէ Գէորգ Ասլան, կը տեսնուին Արարատի նախնի բնիկներուն մէջ ալ: Ասոնք բարձրահասակ էին, ինչպէս կը հաստատեն վաւերական յիշատակարանները, կայտառ, դանդաղ, յամառ աշխատութեան ու պատերազմի մէջ շարքաշ, իրենց անկախութեամբ հպարտ: Ասոնց մէջէն մաս մը՝ հովուական կեանք մը կը վարէին, թափառական, իրենց հօտերը պահպանելու, և ստիպուած էին, եղանակին համեմատ, ձորէ սար արօտավայր փնտռելու, յետոյ, ձմեռները, ձիւներէն ու սառերէն, ստորերկրեայ բնակարաններու մէջ փակուած, ինչպէս Քսենեփոսի օրով, նոյնպէս մեր օրերը:

« Երբ հողը ձեռնառու էր, կը մշակէին զայն և սուտա հունձքեր կը հանէին անկէ: Բայց երբ երաշտութիւնը կամ յերուզանկներուն ասպատակութիւններն ու պատերազմի արշաւանքները՝ բնակչութիւնը կը գրկէին իր հունձքերէն, յաճախ սովէ կը տառապէր ան: Ընտանաբար ւետոր թիչ զարգացած էր իր մէջ, քանի մը մեռաղներու կամ զէնքերու արուեստներէն զատ — ինչպէս կը գրէ Մասրէթօ, իր Արեւելի ժողովուրդներուն հին պատմութիւնը» գրքին մէջ —:

«Ամուր կամ բարձրագիւր ապառաժներու վրայ կառուցուած անառիկ բերդաքաղաքներ կը բնակէին, ինչպէս են Տոսը, Մոխրաբերդ Արճէշ, Վաւի աւազանին մէջ, Ետիաուս, Էրուանդ, Երուանդակերտ Արաքսի հովտին մէջ, Աղձի՝ արեւմտեան Տիգրիսի աւազանին մէջ Բալու՝ Արամանիի վրայ: Անոնք տաճարներ կառուցած էին, իրենց աստուածները պատսպարելու համար, և, կը կարծուի թէ աստղային բներեւոյթները կը գերակռէին իրենց զիցարանութեան մէջ. գե-

բազոյն աստուած մը կար, Խալի, որ կը պաշտպանէր բովանդակ ազգը, և իր անունը կուտար անոր, ինչպէս Ասուրը՝ Ասորեստանցիներուն: Կար նաև Դէխուրաս, օղին աստուածը. Արդենիս, արեւուն աստուածը, նոյնպէս ուրիշներ, որոնք որոշ ցեղերու մէջ կը պաշտուէին:

« Ասորեստանի առաջին երկրակալները, որոնք է. Գարուն (Գ. Ա.) դէպի հիւսիս արչաւեցին, Նայիրի յորջորջեցին բարձր լեռնադաշտը, և Սալմանասար Ա. Քրիստոսէ 4300 տարի առաջ նուաճեց այդ գաւառներու բոլոր փոքրիկ արքաները:

« Այս վերջինները, Թիլասպալասար Ա. ի օրով, իրարու հետ միացան, բայց Ասորեստանի թագաւորը զիրենք կրցաւ հարկատու ընել, և Ուրարտուն ամբողջ դար մը Նինուէի հպասակ մնաց: Քրիստոսէ առաջ, Թ. դարուն սկիզբները, երկու թագաւորութիւններ կազմուած էին. մէկը՝ արեւելքի կողմը, Մաննայի մէջ, իսկ մյուսը՝ երկրին կեդրոնը, Ուրարտուի մէջ: Այս վերջինը, այսինքն Ուրարտուն, Արարատէն զտո, Բիանիայի նահանգն ու Արածանիի աւազանն ալ կը պարունակէր: Սեպաձեւ արձանագրութիւններուն երեւան հանած ամենահին թագաւորը Արանիէն է, Շարղուրի կամ Շեաուրի մը յաջորդը, — որ ժամանակակից է Սալմանասար Բ. ի (860-825) —, Ասորեստանի դէմ իր մղած պատերազմներուն մէջ զժբաղդը, կ'երևայ թէ սպաննուած է ճակատամարտի մը մէջ, թէ՛ իր բանակը, թէ՛ իր զանձը կորսնցնելէ յետոյ:

« Սակայն այդ պարտութիւնը չէր բնաւ տկարացուցած Ուրարտուն: Շարղուր Բ. ի յաջորդեց իր որդին Իչպուինիս, 828ին, որ կերևայ թէ Բիանիան նահանգի վերածած է: Հոս փոխադրեց իր կառավարութեան աթոռը և Թուսպան(*) ըրաւ իր սեփական բնակավայրը:

« Իր որդին Մենուաս — նոյնինքն Մովսէս Խորենացիի պատմութեան Մանաւազը —, քանի մը տարուան մէջ կը կրկնապատկէ իր տիրած երկիրներուն սահմանը, 790ին: Յարձակեցաւ Ուրմիա լճին զրացի ցեղախումբերուն՝ Մուրձաձիրի, Գիլգանի, Դայալինի վրայ, յետոյ իջաւ Արածանիի աւազանը, նուաճեց նահանգին Խաթինները և հարկ մը զրաւ Միլիսի (Մելիտինէ) վրայ:

(*) Մեր Տոսպը: Իսպուլիմի՛ս է որ առաջին անգամ առիաստած է կառուցանել Վանի բերդը, ինչպէս կը յայտնուի այս բազմի միջնաբերդին դռներէն մեկուն վրայ Բանգակուած արձանագրութեան: Այն անուր կառուի է նոյնացնել մեր ազգային մասեակազմներու Բզնուիին հետ. Վանայ լիճն ալ արդէն Բզնուցեաց ծով կը կոչուի:

« Արմաւիրի, Կարինի քով գտնուած շատ մը վաւերական յիշատակարաններ կը վկայեն թէ՛ Մենուաս իր ղէնքերը տարած է ղէպի հիւսիս ու հիւսիս արեւմուտք: Նոր քաղաքներ հիմնեց, որոնց մէջէն է Մանազկերս բերդաքաղաքը, Արածանիին եզերքը, որ մինչև ցարդ կը պահէ իր անուըն: Ինք շինած է Տուսպայի մեծ ջրուղին — որ ցարդ կայ և կը կոչուի Շամիրամ —, պարտէզներ տնկեց, և օժտեց քաղաքը, անտառիկ, անյարձակելի դիրքով մը: Տոսպ, այսպէս անբողջանալէ յետոյ, հետեւեալ դարուն, թագաւորութեան մայրաքաղաքն ու պողոտան եղաւ:

« Մենուասի որդին Արդիշատիս, որ իրեն յաջորդեց 792-784ին միջոցները, հարկադրուեցաւ պատերազմելու Սալմանասար Գ.ի ղէմ, որ կ'ուզէր վերստին ետ առնել Ուրարդուի գրաւած երկիրները: Պատերազմը տևեց 3 տարի, և Վանի թագաւորը գրեթէ միշտ յաղթող հանդիսացաւ:

« Իր որդին Շարգուրիս Գ. թագաւոր եղած տարին (760 կամ 755). նախ յարձակեցաւ Մանուայի վրայ. հոսկէ, Ասորեստանի արկարութենէն օգտուելով, ղէպի հարաւ դարձած էր, իջնելու համար Սիւրիս, զոր Ասորեստանցիները թողուցած մեկնած էին: Ապիպեց Խատիի մարդիկները հաւատարմութեան երզում ընելու երկն: Արպատ (*) առնուեցաւ և եղաւ զլխաւոր խորխոխը, որուն վրայ հիմնուեցաւ Սիւրիոյ ուրարդեան տիրապետութիւնը: Բայց Շարգուրիսի կողմէն փորձուած բազմ չունեցաւ երբէք այն յաջողութիւնը, զոր ունեցան Տիգրանի ծրագիրները, հռովմէական շրջանին: Թէլլատպալասար Բ. ի կողմէն մեծ յաջողութիւն մը (743), վերջ դարաւ Շարգուրիսի ձեռնարկին, որ հազիւ կրցաւ վերագոհանալ իր երկիրներուն մէջ: Մէկ քանի տարի վերջ, Ասորեստանի թագաւորը արշաւեց Ուրարդուի վրայ, և հասաւ Տուսպայի պարիսպներուն օտքը: Քաղաքը, ինչպէս այսօր ալ, կը բաղկանար պարտէզներով շրջապատուած արուարձաններէ, կոճակը տուած մեկուսացած բլուրին, ուր բերդը կառուցուած է: Թէլլատպալասար՝ անտառիկ դղեակը միայն պաշարեց՝ աւերեց արուարձանները, այրեց բոլոր ինչ որ գտաւ դաշտին մէջ, յետոյ վերցուց բանակը, իրեն հետ գերի տանելով ամէն հանդիպածները: Ուրարդուն չէր նուաճուեր, բայց իր տէրութիւնը մահացու հարուած մը կ'ընդունէր ատով:

« Ասորեստանի ղէմ մարտնչումը վերստին սկսուեցաւ, քսանըհինգ տարի ետքը, Ռիւսաս Ա.ի (**) թագաւորութեան ատեն (730-

* (՝) Հալեպի մօտերը, որ այսօր կը կոչուի Թէլ-Աւպաս:

(**) Ռիւսաս, Ռուսաս կամ Իւրաս, պէտք է նոյնացուի Ռշտունիին, Հայաստանի մեծաբոյն ընթանիմեռէն մեկուկ հետ, որ կրցած էր ապրիլ

714)։ Ռուսաստանի Շարդուրի որդին էր, որ Ասորեստանի դէմ ահուկի հակառակորդ մըն էր։

« Արաքսի հովտին, Սեւանի լիճին եզերքի յաղթական կոթողները մասնանիչ կ'ընեն անոր զօրութիւնը, և ցոյց կուտան թէ երասխեան դաշտավայրը անոր թագաւորութեան մասը կը կազմէր։ Սարգօն պէտք ունեցաւ շատ մը պատերազմներու, յաղթելու համար Ռուսաստանի որ պարտութիւններէն վնասած, ինքզինք սպաննեց ի վերջոյ։ Սակայն իր մահուան հետեւանքը չեղաւ Ուրարդուի հպատակութիւնը։ Ռուսաստանի եղբայրը Արգիշտ Բ. արիարար դէմ դրաւ ասորեստանեան բանակներուն, ինչպէս կը գրէ Մասրէրօ։

« Ուրարդու և իր զաշնակիցներուն մղած այս պատերազմները նինուէի դէմ շատ կ'ուրախացնէին Հրեաներուն սիրտերը, և Երեմիա կ'աղաղակէր. « Վեր առէ՛ք երկրին մէջ դրօշակը, շեփորը զարկէ՛ք աղջերուն դէմ, աղջերը պատրաստեցէ՛ք անոր դէմ. անոր դէմ հանեցէ՛ք Արարատի, Միննիի և Աքքանազի թագաւորութիւնները^(*)։ (Տե՛ս Երեմ. Բ. 27)։

« Արգիշտ Բ. ինչ յաջարկած էին Մենուաս Բ. կամ Ռիւսաս Բ. Երեմնաս կամ Երեմնուաս, Ռիւսաս Գ. և Շարդուրի Գ. (645—620)։ Սակայն անսպասելի թշնամի մը կը պահուըտէր Ուրարդուի ետին, Կիմերացիները (Փամիրք) ու Շակերը։ Սկիւթացիները Կասպից ծովէն զուրս կը խուժէին հեղեղի պէս ու կը հարուածէին զայն։ Ուրարդու կը հարկադրուէր համաձայնիլ Ասորեստանի հետ և անոր հետ ամէն վէճի պատրուակ հեռացնել։

մինչեւ Քրիստոսի Ը. Դարը։ Ուրարդուի ուրիշ անուցներուն նոյնացումը ցոյց կուտայ քե Հայաստանի աւագանիներէն շատերուն ծագումը՝ նախկին Ուրարդուներուն կը հասնի։ Իւնի կամ ունի վերջաւորութիւնը, որ հայերէնի մէջ ընթանիքներուն անուցները կը ծառայէ որոշելու, անսարակոյս ուրարդեան ծագումն է։ Դարձեալ կը գտնենք այդ վերջաւորութիւնը, նախնի ուրարդուի անուցներուն մէջ. օրինակ, *իլի, իւլի, իւնի* ձեւին տակ։

(*) Երեմիա մագարէն որ գրած է 592 (Ք. Ա.) ին, հաւանակածօրէն չէ՛ տեսած Բաբելոնի առումը Կիւրոսէն (538), այնպէս որ վերի խօսքերը պէտք չէ կարծել քե Բաբելոնի կը վերաբերին, ինչպէս սովորաբար կը կարծուի։ Երեմիայի Աստուածը, ապահովապէս սեպածէ արձանագրութեանց Աշքուղային պէտք է ըլլայ, դատական Սկիւթացիները, որոնք, այդ շրջանին, հաստատուած էին Կուրի հովիտը, ինչպէս կը վերկայէ Ռիւզլէր Մասրէրօ։ Մարգարէին այդ խօսքերը կ'ակնարկեն նիւզ երեք դրացի երկիրները, որոնք դառնակցած էին Ասորեստանի դէմ։

« Սենեքերիմի երկու որդիները : Շարեղեր կամ Սարազար և Աղ-
րամելեք, կրցան ապաստանիլ Ուրարդու, իրենց հայրը սպաննելէ յե-
տոյ, առանց այդ կերպով, պատերազմի առիթ մը տուած ըլլալու :

« Ռուսաս Բ. (670—645) շատ արշաւանքներ ըրաւ արեւմուտ-
քի մէջ, առաջացաւ մինչեւ Մնլիտինէէն անդին, Խատիի երկիրներուն
մէջ, բայց նախընթաց պատերազմները տկարացուցած էին Ուրար-
դուն ա՛յն աստիճան որ չը կրցաւ երբէք Քամիրներուն ու Սկիւթա-
ցիներուն դէմ դնել :

« Ասոնք իրենց ետեւէն քաշեցին տարին Մուշքիները, Արմէննե-
րը, Խատիները և բոլոր դրացի երկիրներուն մարդիկները, յարձակե-
լու համար Ուրարդուի և Ասորեստանի վրայ, զորոնք արիւնի ու կը-
րակի մատնեցին : Այս բարբարոսներուն վայրագութիւնները կարելի է
երեւակայել, տչքի առջեւ բերելով Միջին Գարուն անցած դարձած-
ները, Հոներուն, Թուրքերուն ու Մոնկոլներուն արշաւանքին ասնե-
ները : Քաղաքները հրդեհուած, բնակչութիւնները ջարդուած, Ուրար-
տուի թագաւորները սարսաւորուեցան լեռներու մէջ ապաստանիլ,
և ժամանակ մը վերջ, անհետացան, երբ եկան Մեղացիները(*) (580)
վերջին հարուածը տալու :

« Պատերազմիկ բնակչութեանց բեկորները դացին ամբոնայ լեռ-
ներուն մէջ. ոմանք՝ դէպի Կովկաս ու Պանտափ լեռները. ուրիշներ՝
Տօրոսի կիրճերուն մէջ, ուր ստուարացուցին Կարդուքներուն(**)
(Կորդուացի) շարքերը :

(*) Ուրարդուի վերջին բազաւորներուն ժամանակագրութիւնը դեռ
անստոյգ է : Հայր Սանալիսեանի ցուցակին համաձայն, որ յաջորդով
պիտի երեւայ, Շարգուրիս Գ. ին պէտք է յաջորդած ըլլան Իրկուսա
(620) եւ Մեդասս (600), որ ուրարդեան վերջին բազաւորն է եղեր :
Իսկ Բելեփի ու Լեւեմանի ցուցակը կանգ կ'առնէ Շարգուրիս Գ. ի մը
վրայ :

(**) Մեր օրերու Քուրսերը, որոնց ցեղագրական գետիներ կը տա-
րածուի Իսոսի ձոցէն մինչեւ Պարսկաստանի սահմանազրուխը, միեւ-
նոյն ցեղին չեն պատկանիր. ոմանք Հայերու եւ Պարսիկներու պատ-
ւասում մըն են, սւրբներ՝ Թուրքերու, Արաբներու, Թարարներու : Օ-
սար տարերը դուրս ձգելով Քուրսերը յայտնապէս վաղեմի Կորդուացի-
ներուն յաջորդներն են. Վանի հարաւակողմի լեռներուն մեջ բանա-
կած : Զազա Քուրսերը, վաղընչական ժամանակներու մեջ, Տեքսիմ հաս-
տատուած ըլլալու են, բայց զանազան ցեղախումբերուն սփռուիլը զգեպի
Արեւմուտք, դէպի Ամիքի եւ Ուրֆայի գաւառները. Թ.՝ գարեւ կըսկսի :
Նկատելով անուկներուն նմանաձայնութիւնը, Վանի լեռնազաւթին մեջ

« Սակայն, փոթորիկի շրջանէն ետքը, բնիկ հողատէր ընտանիքները հաշտուեցան ու խառնուեցան ի վերջոյ Արարատի նոր աւերերուն ծոցին մէջ: Ուրարդուի թագաւորութիւնը չուսով մոռցուեցաւ և իր թագաւորներուն կողուցած քաղաքները, բերդերը, Տասպի յիշատակարանները՝ Նինոսի ու Շամիրամի առասպելներուն հետ չբփոթուեցան: »

3 Պատմութիւնը մոռցաւ Նինուէի, Բարեկոնի և Վանի թագաւորներուն կատարած գործերը, տիրանարու համար Նինոսի ու Շամիրամի աստուածին: Պատմեցին թէ, զարերու արշարլայսին մէջ, Նինոս անուն պետ մը, յաջորդաբար նուաճած էր Բարեկատանը, Մարաստանը, Հայաստանը և Հնդկաստանի ու Միջերկրականի մէջտեղի բոլոր երկիրները: Շամիրամ, աղաւնի աստուածուհին, Նինոսի ամուսինը եղաւ և ինք հինեց կ'ըսեն Բարեկոնը, Հայաստանի մէջ Վանը կամ Շամիրամակերտը, Կիլիկիոյ մէջ Տարսոնը. վերջապէս, բոլոր քաղաքները, բոլոր շինութիւնները, որոնց յանդգնութիւնը կը զարմացնէր յետագայ սերունդը, ինչպէս կը գրեն Մասրէրո և Գարադաշեան: Տարտամորէն յիշողութեան մէջ կը պահուէին Ուրարդուի ու Բիանեայի՝ աւինէն հոչակաւոր թագաւորներէն մէկ քանիներուն անունները, [զորոնք Մովսէս Խորենացին փութկատորէն աւելցուցած է նախնի ժամանակներուն Հայաստանի կարծեցեալ թագաւորներուն ցանկին մէջ: Մովսէս Խորենացին, նախնի ժամանակներու կամ Հայկազանց իր պատմութիւնը կը վերագրէ Նիսիրինցի Մարիրաս Կատինայի մը, որ Հայաստանի պատմութիւնը գտեր է եղիւր Նինուէի արքայական արխիվ-

իւրեց ներկայութիւնը, ամենանին ժամանակներէ ի վեր, մտրդ կը փորձուի զանոնք խալիկներուն հետ նոյնացնելու, բէռ նին մասեցալիւրները սարբերութիւն մը կը զենն այս երկու ժողովուրդներուն միջեւ: Ամեն պարագայի մէջ, Կորդուացիները իրենց ծոցին մէջ բնդուեցած են խալիկներուն մէկ մասը: Քուրսերէն լեզուն ա՛յնքան էիջ նանչցուած է որ կարելի չէ տեսնել թէ, պարսիկ, արաբ, բուրբ ու հայ բառերէն զաս, որոնցմէ փոխ աւած է ան, արգեօ՛ մերձաւորութիւն մը չունի՞ ուրարդեան արձանագրութեանց լեզուին հետ: Մուշի եւ Տերսիմի գաւառներուն մէջ խօսուող զազաերէնը՝ Կովկասի Օսէսներուն իսթովին հետ կապակցութիւն ունենալ կը կարծուի, եւ այդ մասնաբարբառին ու խալիկներու լեզուին մերձաւորութիւնները կը հաստատեն շատ մը լեզուագէտներ: Այդ լեզուիները, որոնք ո՛չ մէկ ազգի հետ խառնուեցան, երկար ատեն բնամի ապրած են Հայերուն հետ, ինչպէս Քսենոփոնի, նոյնպէս արդի ժամանակները, Քուրսը նայն էր մնացեալ. աւարով ու կողպուսով կ'ապրէր, ցեղախմբային կռիւներ ունի եւ չէ դապրէր զեռ խաղաղ բնակիչներէ փրկանք պահանջել:

ներուն մէջ, Քրիստոսէ 150 տարի առաջ: Բայց հայ պատմիչը չատ անգամ իր երեւակայութեան կ'ապուինի և շատ մը նշաններ ցոյց կուտան թէ՛ անոր Մարաբասը, եթէ երբէք գոյութիւն ունեցած է, քրիստոնեայ մատենագիր մըն է, թիբեւս Բ. կամ Գ. դարերուն ասորական դպրոցէն (Տես Փարագաշեանի Քննական Պատմութիւն Հայոց): Հակառակ ասոր, նախնի դարերու այս պատմութիւնը քիչ վաւերագրական է և կը նմանի աւելի գրական երկի մը, որ մինչև երկինք կը հանէ իր երեք անձնաւորութիւնները. — Հայկը, Արամը և Տիգրան Հայկազունը:

« Արդարեւ հոս կը գտնուին, թէև գէշ դասաւորուած, ո՛չ հայկական, այլ Ուրարդուի թագաւորներուն իրական անունները, ինչպէս Արամ Արամէն, Սարմանասար Գ.ի ժամանակակից, Սուր՝ Սարգուրիս, Երուանդ՝ Իրէվէնասը: Հայաստանի քանի՛ քանի վայրեր, ինչպէս, Մանուագակերտ, Արճէշ՝ Վանայ լճին հիւսիսային եզերքին վրայ Երեւան՝ Արաքսի հովտին մէջ, Երուանդակերտ՝ Անիի մօտ, պահած են Մենուասի, Արգիստի և Իրէվէնասի անունները:

« Հայաստանի իշխանական ընտանիքները, ինչպէս Ռշտունիները, Մանուագեանները, Բզնունիները, Արծրունիները, որոնց վերջինը Վանի երկրին վրայ կը թագաւորէր, մինչևև մեր ժԱ. թուականը, նոյնիսկ պահած են Ռուսասի, Մենուասի, Իշպուին-խաի, Արգիստ-խաի անունները, բոլորն ալ սերած՝ Բիանիացի նախնի թագաւորներէն:

« Հետեւաբար, Ուրարդուի թագաւորութեան անկումովը չէին անհետացած անոր ժառանգորդները, որոնք Հայերու մէջ խառնուեցան, պահելով իրենց սեպուհի կամ տէրոջ առանձնաշնորհումները:

« Արչաւանքներուն փոթորիկը կործանած էր նաև Ուրարդուի գերագոյն աստուածը, այն աստուածը որ շարունակաբար կը պաշտպանէր անոր թագաւորներուն գէնքերը: Բայց այս աստուածն ալ չը մոռցուեցաւ. Սայտին, յետագայ սերունդներուն երեւակայութեանը մէջ փոխակերպուեցաւ հերոսի մը, հսկայի մը, որ անցեալ դարերու մարտնչումները կ'անձնաւորէր: Յետոյ, կը նոյնանայ Հայոց Հայկին(*) հետ, որ ըստ Թուանդութեան, յազթած է Բեիին, ուրիշ հերոս մը, որ կ'անձնաւորէր Նինուէն ու Բաբելոնը:

(*)Մ. Գիրքի րարգմանիչները՝ Հայկի մէջ անձնաւորութիւն մը կը տեսնեն, Յոյներուն՝ Ուրիսին նմանօր: Ազարանգեղոս կը նանչայ զանի ճակայ մը: Մովսէս Խորենացի'ն է որ զանի Հայոց նախահայր կ'ընէ, հետեւելով ասոր մէջ իր սիրական դուրեպան, որով ազգերը կը սերեցնէ համանուն անձնաւորութեան մը: Երբէք կարեւորութիւն չի տար Հայկի մասին զրուցուած առասպելներուն (Խորենացի Ա. 21): Եւ որովհետև Հայկ հեռաւային անձնաւորութեան մը, յիստասուածի մը

« Փողովորդային երեւակայութիւնը կը հաւատար ճակատամարտի մը, որ տեղի ունեցած է եղեր Վանայ լիճին հիւսիսային եզերքներուն մօտերը, և որուն մէջ, Բել սպաննուած է եղեր Հայկի ձեռքովը: Ժամանակը ջնջած ըլլալով պատմական զէպքերու ամէն յիշատակ, այդ ամբողջ անցեալը՝ ազգային աստուածներու պարզ կռիւի մը վերածուած էր: Ուրարդուի թագաւորութիւնը պատմութեան բեմէն անհետացած էր, սերունդին թողելով լոկ աղօտ յիշատակ մը՝ Ասորեստանի դէմ իր պատերազմներէն և մէկ քանի անուններ՝ իր ամենէն մեծանշակ իշխաններէն:»

Ահաւասիկ Ուրարդուի վեհապետները, ասորեստանեան և ուրարտեան արձանագրութեանց համեմատ. —

Շարղուր (Իս) կամ Շետուր	...	Արգիսա (Իս)	...
Արամէ	850	Մենուաս	...
Լուաիբիբ (Իս)	843	Երիմենոս	...
Շարղուր	833	Ռուսաս	643
Իշպուին (Իս)	828	Շարղուր	640
Մենուաս	720		

Հոս կը գնենք նաև Հայր Յ. Սանալճեանի ցուցակը.

Արամ (Իս)	860	Արգիշա Բ.	744
Լուաիբիբ (Իս)	843	Ռուսաս Բ.	685
Շարղուր	835	Իրեմենոս Գ.	675
Իշպուին	820	Ռուսաս Գ.	670
Մենուաս Ա.	800	Շարղուր Գ.	645
Արգիշա Ա.	780	Իրզուաս	620
Շարղուր Բ.	755	Մենուաս Գ.	600
Ռուսաս Ա.	730		

ՍԱՐԳՈՆԵԱՆՆԵՐԸ

Սարգան	722—705	Ասուրբանիբադ	626
Սինեքիբիբ	681	Ասուրիկանի	606
Ասորգան	668	Նինուէի Անկումը	608-606

յասուկ բոլոր նկարագիրներով օժտուած է, կարելի է զանի վստահօրէն նոյնացնել արձանագրութեանց հայկիս աստուածին հետ. արդէն երկու անուններուն միջեւ կայ նմանութիւն մը, ջնջելով իս վերջաւորութիւնը, որ շատ հասարակ է ուրարդեան անուններու մէջ, կ'ունենանք հայկ կամ Հայր, զոր Հայերը Հայկ կամ Հայր քրած են, հընչուքի կամ ձայնի փոփոխման օրէնքով:

Արամ Նահապետ, իր երկրակալութիւնները. — Արամի պատերազմները Մարաց Նիսիսի իշխանին, Բաբելոնի Բաբելոնին ու Քաղեայ Պալատիսին դէմ. — Մեակ Մարզպանը. — Փոքր Հայք. — Ասորեստանի Նինոս քաղաքը. — Արամ Նահապետին Մարգարէտ վարձակալը. — Արամի մանր :

Հայկազանց հարստութեան մէջ կարկառուն դէմք մըն է Արամ Նահապետը, Հարմայի որդին, որ իր հօր յաջորդելէ յետոյ, կարճ ժամանակի մը մէջ մեծ յարգ ու համբաւ ստացաւ ո՛չ միայն բնիկ երկրի ժողովուրդներուն քով, այլ մանաւանդ մերձաւոր թէ հեռաւոր երկիրներու մէջ: Մեր ազգային բոլոր պատմիչները միտերան կը վկայեն թէ՛ Արամ արի ու խոճեմ հերոս մըն էր: Իր Նահապետական իշխանութեան սկիզբները, մեծ հող տարաւ կանոնաւոր բանակ մը կազմակերպելու, թշնամիներու յարձակումներուն դէմ հայրենիքը կարենալ պաշտպանելու համար:

Ազգային պատմագիրներուն համաձայն, Արամի նախնիքները, Արմենակէն մինչև Հարմա, ամենքն ալ խաղաղօրէն կառավարած էին իրենց երկիրը, և հող տարած էին միայն ծաղկեցնելու զայն նորանոր շինութիւններով: Իսկ, սեպածև արձանագրութեանց յայտնութիւնները կարևոր ընդհարումներ կը յիշեն Ասորեստանի և ուրիշ զբարացի թշնամի ցեղերու հետ, որոնք ի վերջոյ ետ մղուած են Ուրարտեան իշխաններու անվիհճի դիմադրութեան և անպարտելի զէնքերու ուժովը: Բնականաբար Արամի մտատեւեռումը պիտի ըլլար նոյն հայրենի սահմանները մաքրել օտարներու ներկայութենէն և, եթէ կարելի ըլլար, իր իշխանութիւնը տարածել աւելի հեռուները: Հայկազանց հարստութեան այս հոյակապ դէմքը, որ պիտի յաւեժմանար ապագայ դարերուն մէջ և որ, միևնոյն ժամանակ, իր սերունդը պիտի ապրեցնէր իր անունով, նախնիքներէն իր ժառանգած հայրենիքին սահմանները շատ նեղ ու փոքր կը գտնէր իր փառասիրութեան համար, չպիտի բաւականանար յարձակումները վանելով ու սահմազրուիւնները մաքրագործելով. կը փափագէր ընդարձակել իր երկիրը տիրանալ ուրիշ երկիրներու, ապագային ո՛ր և է յարձակման մը պատահականութենէն զերծ մնալու համար:

Դէպքերը պիտի արդարացնէին սակայն Արամի մտահոգութիւնները հայրենիքին պաշտպանութեան նկատմամբ, ամէն կողմէ թշնամիներ սկսած էին երեւնալ և անհանգիստ ընել սահմանազխի հայ բնակչութիւնները :

Ատնց առաջինը՝ Մարաց Նիւքար իշխանը կը կարծուի եղած ըլլալ, ամբարտաւան բռնապետ մը, որ, Հարմայի մահուընէն երկու տարի առաջ, մեծ թիւով զօրքեր լեցուցած էր հայկական սահմաններուն մէջ, առժամապէս նուաճած էր այն կողմերու բնիկները, որոնցմէ երկու տարիէ ի վեր բռնի տուրք կը ստանար : Այդ իշխանը, իր առաջին յաջողութիւններէն շփացած, կը պատրաստուէր իր շարքերով առաջանալ ներսերը, և նոր գրաւումներով ընդարձակել իր իշխանութեան սահմանները : Սակայն, ասդին, Արամ նահապետը կը հսկէր արթուն, անմիջապէս պատերազմի հրաւէր ուղղեց իր ժողովուրդին : Ամէն կողմերէ համախմբուեցան շուրջ յիսուն հազարէ բաղկացած բանակ մը, քաջ աղեղնաւորներ, որոնք, իր հրամանատարութեան տակ, սկսան առաջ խաղալ գէպի սահմանները, ուր Նիւքար հաստատուած էր իր գունդերով և երկիրը կը թալլէր ու կ'աւերէր, ամէն տեսակ վայրագութիւններ ի գործ գնելով տեղացիներուն վրայ :

Արամ յաջողեցաւ պաշարել Նիւքարի զօրքերը, որոնք, մէկ քանի դիւրին յաղթութիւններէ զինովցած, իրենք զիրենք սուած էին կերուխումի, կողոպուտի :

Օր մը, արեւծագէն առաջ, Արամ յանկարծ իր զօրքերով յարձակեցաւ Նիւքարի բանակին վրայ : Խուճապը տիրեց հոն, թշնամի բանակին մէջ սկսաւ քայքայումը, ընդհանուր խառնակութեան ու շրփոթութեան մէջ, զօրքերը զիրար սկսան հալածել, հորուածել ու ջարդել, այնպէս որ իրենց հրամանատարը Նիւքար ստիպուեցաւ փախուստի գիմել, գոնէ ինքզինք ազատելու յոյսով : Նոյն պահուն, Արամ արծիւի պէս խոյացաւ անոր վրայ, իր ձեռքովը զանի ողջ ողջ բռնեց : Աւերորդ է ըսել, զօրքերը, անգլուխ մնացած, սկսան փախչիլ հայածական :

Կռիւը վերջացաւ հայկական զինւորներուն փառաւոր յաղթանակովը :

Արամ, հարուստ աւարներով ճոխացած, յաղթական վերադարձաւ Արմաւիր, ս'ւր իրեն հետ բերած էր Նիւքարը, իրրե յաղթութեան աւար : Հրամայեց անոր ճակատը վարսել երկաթի ցից մը, և Արմաւիրի պարիսպին աշտարակին զագաթը գամել զանի :

Այսպէս, հայրենիքի առաջին թշնամին ջախջախելէ և անոր գոռոզ գլուխը հասարակութեան ծաղրին ու անարգանքին նշաւակ ընել տալէ յետոյ, Արամ առաջ տարաւ իր աջող արշաւանքները, մինչև որ տիրեց անոր երկրին և հարկատու ըրաւ բոլոր հը-

պատակները, իր իշխանութիւնը տարածելով մինչև Արասպ լեռը: Այնուհետև, ինք իր երկիրը քաշուելով, Նիւքարի գրաւում երկիրներուն պահպանութիւնն ու կառավարութիւնը յանձնեց Սիսակեաններուն:

Արամ հաղիւ թէ սկսած էր պարագլի իր երկրին ներքին բարեկարգութիւններով, նոր, արտաքին թշնամի մը, հայրենիքի սահմաններուն մօտենալով, կը սպառնար յարձակում գործել զէպի ներսերը: Այս թշնարին Բարեկացի Բարչանն էր, գոռոզ ու սէգ բռնաւոր մը, որ նախապէս յարձակած էր Ասորեստանի Արրէլ Բ. թագաւորին վրայ, ասոր ձեռքէն յախշատկած էր իր հիննամ քաղաքը՝ Արրէլա կամ Արվիլ, և քառսուն հազար հետեւակներէ, հինգ հազար հեծեակներէ բաղկացած ստուար բանակով մը կ'առաջանար Հայաստանի սահմանները:

Արամ, թէև խաղաղատէր նահապետ մը, բայց չէր կրնար անտարրեր և անհոգ վարուիլ այս արտաքին վտանգին հանդէպ: Շուտով համախմբեց ընտիր բանակ մը, աղեղնաւորներէ ու վազակաւորներէ, և առաջ խաղաց այս նոր բռնաւորին վրայ, որ Նիւքեարէն աւելի վտանգաւոր կերեւար:

Արամի զորագունդերը վարժուած էին իրենց կեանքը զոհելու հայրենի հողին պաշտպանութեան համար, ո՛չ յորդորներու պէտք ունէին, ո՛չ ալ խրախուսանքի: Իրենց արի նահապետին հրամանատարութեան տակ, անկողն, անմարդածայն լեռներ ու ձորեր կտրելով անցան, և վերջապէս հասան ընդարձակ դաշտավայր մը, ուր Բարչամ իր բանակը դրած էր:

Հանդիպումը յանկարծական եղաւ, Արամ իր ընտիր զօրքերով նախայարձակ խոյացաւ թշնամի զորագունդերուն վրայ, Զտիջտխեց ասոնց առաջին կարգը: Խուճապ ու սարսափ արիւց բոլոր շարքերուն մէջ: Բարչամ չուարած, այս առաջին պարտութենէն ուժաթափ ու ստոկումնահար, փախուստի ելք մը կը խորհէր: Նոյն պահուն, հայկական զօրքերը, իրենց հրամանատարին օրինակէն խրախուսուած, առիւծի պէս յարձակեցան երկրորդ անգամ և ցիրուցան ըրին Բարչամի գունդերը, որոնք հալածական, իրարու գիակները կոխկոտելով, լեղապատառ սկսան փախչիլ:


Ընդհանուր էր խուճապը, Բարչամ իր բանակին մնացորդով յաջողեցաւ Կորդուաց լեռներէն անցնիլ Ասորեստանի դաշար, ուր երկու բանակները խառնուեցան իրարու:

Աղեղներէն Խեանքը կը թուչէին ու վազրերը կ'իջնէին անընդատօրէն, ընդարձակ դաշարը կը ներկուէր արիւնով: Այս խառնակութեան միջոցին, Արամ նահապետը, որ բարձր հողաբլուրէ մը կը գիտէր ձեկատամարտը, յանկարծ տեսաւ Բարչամը, որ իր զօրքերէն չըջապատուած, կ'աշխատէր ինքզինք ազատել ընդհանուր կոտորածէն:

Արծիւի թևով սրացաւ, ինկաւ դունդին վրայ և վաղրի մէկ հարուածով սպաննեց Բարշամը :

Վայրկենապէս դադրեցաւ ճակատամտարը, Բարշամի զորքերը, տեսնելով իրենց իշխանին եղերական մահը, անմիջապէս անձնատուր եղան :

Այսպէս վերջացաւ այս երկրորդ պատերազմը, դարձեալ Հայերուն յաղթութեամբը . և Արամ, տաքաւ աւարներով դարձաւ Արմաւիր, ուր իրեն կը սպասէր իսանդավտո ընդունելութիւն մը, ժողովուրդի ամէն դասակարգերուն կողմէն :



ՆԻԻՔԱՐԻ ԵՂԵՐՄԱԿԱՆ ՎԱՅՆՃԱՆԸ

Արամ իր իշխանութիւնը շտարածեց այս նոր գրաւուած երկրամասին վրայ, որ Հայաստանի սահմանակից էր ու դրացի, և որուն պահպանութիւնը յանձնեց Կաղմասի ցեղին :

Արամի մզած պատերազմներուն շարունակութիւնը պահ մը կընդհատենք կարևոր ծանօթութիւններով, որոնք կը վերաբերին իրեն ու Արամայիսի, և զորոնք փոխ առած ենք Հայր Միքայէլ Չամչեանէն : Այս ծանօթութիւնները պէտք է գետեղել այս աղերսուն մէջ, մեր ընթերցողներուն գաղափար մը տալու համար թէ՛ սրբան մեծ էր Արամի համբաւը՝ օտարներուն քով և թէ՛ սուրկէ՛ ծագում առած է մեր Արմէն յորջորջումը :

Ահաւասիկ թէ ի՛նչ կը գրէ Չամչեան . —

« Յովհաննէս Կաթողիկոսը , Արմենակի տղուն Արամայիսի համար այսպէս կը գրէ . — « Ասոր քաջութեան արարքները , ինչ առաջ ապրած մատենագիրներէն պատմուած է » : Ասով ցոյց կուտայ թէ Արամայիսի մասին շատ բաներ գրուած կան , բայց թէ որոնք էին գրողները , և թէ ի՛նչ գրած են , չենք գիտեր . որովհետեւ , Խորենացին , որ Արամայիսի առաջին պատիւը եղած է , Մարիրատէն առնելով , անոր մասին քիչ բան կը գրէ , ինչ որ Խորենացին զանց ըրած էր Մարիրատի գիրքէն , ուրիշները թերեւս առին ու լոյս աշխարհ բերին : Այլապէս , Յովհաննէս Կաթողիկոսին խօսքերը՝ ուրիշ մէկի մը կը վերաբերին . այդ պատճառով , մենք չը համարձակեցանք պատմութեան մէջ գրելու թէ ան (Արամայիս) շատ գործեր ըրած է :

« Սիկիւնացի Դիոզորոսը (Գիրք Բ . Գլ . 1) , մեր Արամի պատմութիւնը Բարչամ յիլուզակի գործերուն հետ խառնելով՝ ասանկ բան մը կը գրէ . — « Նինոս , իր իշխանութեան ներքեւ առաւ Արմէնեաններուն (Հայերուն) քանի մը քաղաքները , և ասոնց Բարչամ թագաւորը (*) մեծ ընծաներով զիմաւորեց իրեն և , թէ՛ զինք , թէ՛ իր թագաւորութիւնը հպատակեցուց անոր տէրութեան . սակայն , Նինոս , վեհանձնորէն վարուելով , զանի Արմէնիոյ , այսինքն Հայաստանի թագաւորութեան մէջ հաստատեց նորէն և պաշար ու օգնական զօրք առաւ անկէ » : Բայց այս խօսքերը փոփոխուած կ'երեւան և Արամի պատմութիւններուն հետ խառնուած , և կամ թերեւս Արմէնիա ըսելով՝ պատմիչը կը հասկնայ Ասորիներուն երկիրը , որոնք Արամայիսներ այ կը կոչուին » :

Այս հակիրճ տեսութենէն ետքը . Հ . Մ . Չամչեան կ'անցնի ուրիշ հարցի մը լուսաբանութեան . կը ջանայ իր ըմբռնած չափովը մեկնաբանել մեր ազգին Արմէն յորջորջումը , և կը գրէ . —

« Ինչպէս որ պատմութեան մէջ յիշեցինք , Խորենացիին (Ա . 11) , Յովհաննէս Կաթողիկոսին և ուրիշներու համաձայն , հայոց ազգը կոչուեցաւ Արմէն կամ Արաւեան՝ Հորմայի տղուն Մեծ Արամին անունով . բայց Ծնորնայի բոսանաւորներուն մէջ կ'ըսուի թէ՛ Հայկի տղուն Արմենակին անունով կոչուեցան այդպէս , այսինքն Արմէն , որովհետեւ նախնիքներու վիպասանութիւններուն մէջ (Չ) այսպէս գրուած է .

Այլ թուրքումայ ըլ Հայկ ծնեալ ,
Յուրմե եւ Հայք մեք անուանեալ .
Արամանեակ անդրանկացեալ ,
Ռոյլ Արմեմե մեք կոչեցեալ ,
Քանգի յարդոլ ազգաց Եղեալ
Եւ քաջութեամբ անուն առեալ
Եւ ի սմանե Կազմոս ծնեալ ,
Այն որ զԹեյայն գալ զեկուցեալ :

« Նոյնը կ'երկրորդէ Ղրիմեցի Մարտիրոս վարդապետը. —

Որոյ սերունդք Հայք անուանին,
Նախնոյն անուամբ յիշատակին,
Արամանեակ Հայկայ որդին,
Վասն այն Արմէնի մեզ ասացին:

« Այս վկայութիւններուն նայելով՝ կտրելի է ըսել թէ՛ մեր ազգը
թերեւս Արմենակէն ընդունած ըլլայ այս անունը:

« Իսկ օտար մատենագիրներէն Մտրարոն (Գիրք ժԱ. երես 536),
Յուստինոս (Գիրք ԽՖ. Գլ. 2), նոյնպէս Սիմէոն Մագիստրոս (Հա-
մար Ա. էջ 402), Յովսէփ Գեհեղ (Գիրք Ա. էջ 13) և ուրիշներ,
տարբեր կերպով կը խօսին. կ'ըսեն թէ Հայերը, և իրենց երկիրը ո՛չ
թէ Հայկի ծնունդներէն Արամի կամ Արմենակի, այլ Արմէնիոս կոչ-
ւած կամ Թէսալիոյ Արմէն քաղաքը բնակող Թէսալիացիի մը անունով
(որ Յաստիւի ընկերներէն մին էր) Արմէն կամ Էրմէնի, այսինքն Արամ-
եան կը յորջորջուին: Բայց այս ենթադրութիւնը այնքան հեռու է
ճշմարտութենէն, որքան հեռու է Թէսալիան Արամեան երկրէն, և ա՛յ
աւելի:

« Բայց թէ ինչի՞ վրայ հիմնուած է անոնց այս խօսքը, զիտցի՛ր որ
Յոյներուն ու Հռովմայեցիներուն հին պատմիչները — որոնց կը հա-
ւատան արդի մատենագիրները —, որովհետեւ իրենց ձեռքը չունէին
ո՛չ իրենց պատմութիւնը, ո՛չ ալ ուրիշ ազգերունը, երբ որ կ'ուզէին
վէպերու շէնքը կառուցանել, տիեզերքիս վրայ այնչափ ազգերու զա-
նազանութիւնը նկատելով, նախ իրենց ազգին հիմը դրին ստեղծա-
բանութեամբ մը, որ թէեւ առասպել էր, բայց երկար ժամանակներ
զիրքերու մէջ անցնելով՝ ստոյգ համարուած եղաւ, մանաւանդ որ
առականրով այ զարգարուած էր: Անոնք, իրենց պատմութիւնը յե-
րիւրելիէ յետոյ, ուրիշ ազգերու ծագման պատմութիւնն ալ նաբեցին
անոնցմէ իւրաքանչիւրին այլ և այլ խօսքեր յարմարցնելով, և անոնց
սկզբնաւորութիւնը՝ աշխարհիս մէջ տեղի ունեցած այլ և այլ դէպքե-
րէն առին, և շատերուն ծագումն ու յորջորջումը առին Արգանա-
ւորդներուն կամ Տրովացիներուն: Թեսալիացիները, որոնցմէ էր կ'ը-
սեն, վերոյիշեալ Արմենիոսը, Արգանաւորդներուն պետ Յաստիւի Թե-
սալոս ազէն աւեր են իրենց անունը: Մարերը, որոնք Մեդացիներ ալ
կը կոչուին, նոյն Յաստիւի Մեդէա կնոջ Մեդոս որդիէն սերած կը
կարծուին: Վրացիներն ու Աղուաններն ալ՝ անոր ընկերներէն: Հենիք-
ները, որոնք Վրաց ու Հայոց սահմանակից էին, սերած են կառապան
Կաստոր ու Պողոսքս երկուորեակ եղբայրներէն. թո՛ղ ուրիշները,
ինչպէս որ կը զրեն Սիկիլիացի Դիոդորոս (Գիրք Դ.), Պլինիոս (Գիրք
2. Գլ. 4 և 13), Տակիտոս (Տարեգր. Գիրք 2. Գլ. 34) և ուրբներ,
զորոնք աւելորդ է հոս նշանակել:

« Բայց եթէ կ'ուզես ասոնց հաւատալ, լսէ՛, ինչ կը խօսին եր-
րայական ազգին ծագման մասին ալ, որոնց պատմութիւնը աւելի
յայտնի և ստոյգ է քան թէ բոլոր միւս ազգերունը, մանաւանդ որ
Աստուածաշունչէն է: Տակիտոս Կուսնեկոս, մեծանուն մատենագիրը,
որ այնքան հռչակ հանած է պատմագրութեանց մէջ, պէս պէս կար-
ծիքներ առաջ բերելով (Գիրք Պատմ. Ե. Գլ. 2), այսպէս կը գրէ. —
« Հրէից համար կ'ըսուի թէ ասոնք, վերջին ժամանակները, Կրեաթի
կղզիէն պանդխտելով, փախստական եկան քնակիլ Լիբիոյ մէջ, երբ որ
Սատուրնոս, Յովէի (Արամազդ) զօրութենէն վնասուելով, հրաժարե-
ցաւ թագաւորութենէն: Եւ ասոր իբր փաստ ցոյց կը տրուի Կրեաթի
մէջ հռչակաւոր Իդոս լեռան սնունը, որուն պատճառով, հոն քնա-
կողներն ալ Իդայեաններ կը կոչուէին. և սակէց այն բարբարոսներուն
(Հրէական ազգը) վրոյ աւելցաւ Յուդայեան մականունը: Սուրիշներ
կ'ըսեն թէ, Իգիտի թագաւորութեան օրով, երբ ժողովուրդը շառ-
ցաւ Եղիպտոսի մէջ, անկէց՝ զուրս կլան ու արքածուեցան մտակայ
երկիր մը. Երուսաղէմ ու Յուդա սնունով երկու հեզիներ էին ա-
նոնց առաջնորդները:» Եւ այդ պատճառով է որ, կ'ըսէ Տակիտոս,
հրեաները կը կոչուին Երուսաղէմացիներ և Յուդայեաններ:

« Օտար մատենագիրները այս և ասոր նման ենթադրութիւններով
է որ Երրայեցիներու մասին պատմութեան այլ և այլ չէնքեր կը
կառուցանեն: Ինչպէս կը տեսնուի նաև անուանի Յուսաֆնոսի գիր-
քին (ԼԶ. Գլ. 2) մէջ, ուր կ'ըսէ թէ Մովսէս Յովսէփ նահապե-
տին որդին էր, և Մովսէսի աղան՝ Արուսա կամ Ահարոն, որ Եղիպ-
տացիներուն քահանան էր, կ'ըսէ, և Մովսէսէն ետքը թագաւոր
կարգուեցաւ, ևն ևն: Արդ, եթէ Երրայեցիներու պատմութիւննե-
րուն մէջ այսչափ տարբեր բաներ կը գրեն օտար պատմիչները,
մեզի համար ուրեմն ինչէ՞ր պիտի գրեն: Բայց ներկու է ասոնց,
որովհետև, ինչպէս ըսինք, ուրիշ ազգերու ստոյգ պատմութիւնը
չունէին, և մեծ բան է որ այսչափ ալ կրցան գրել:

« Իսկ Յովսէպոս նախնիքներու գիրքին մէջ (Ա. 6.) արտեան-
ները, այսինքն հայերը կը սերեցնէ Սեմի Արամ սպուն Եզում որ-
դիէն, որուն հետեւած են նոյնպէս Միւնիկեղոս, Կեղբնոս և Զոնա-
րաս, ինչպէս նաև ուրիշ մէկ քանի յոյն պատմիչներ, որոնցմէ ա-
ռած են արդի հեղինակներն ալ, ինչպէս է Անտան Բոնուկեանց որ
Լուսասորչի պատմութիւնը գրած է: Այս կարծիքը ստոյգ ենթադ-
րելով, Կուսնեկոս Ալափեաէ (Մեկն. Մննդ. Բ. 4), Արամ բար
ստուգարանելու կ'ըլլէ և ասով կ'ուզէ Հայաստանի աշխարհին ի-
մասար: « Եթէ, կ'ըսէ, իրրայական ստուգարանութեան նայինք,
Արամ, Արմենիա բառերը կը նշանակեն բարձր և գերազանց, որով-
հետև Արմենիա աշխարհը (Հայաստան), երկիրս բոլոր մասերէն աւե-

լի բարձր է. ասիկա անո՛վ ալ կը հաստատուի թէ, կ'ըսէ Կուսնե-
լիոս, ջրհեղեղը քաշուելէն յետոյ, Նոյի տապանը նստաւ Արմենիայի
լեռան վրայ »:

« Այս մատենագիրները, որովհետեւ միայն մէկ Արամ կը գրու-
նեն Ծննդոց Գիրքին մէջ, այն է, Սեմի որդին, ասոր անունո՛վը
կը յորջորջեն Արմենիա, այսինքն Հայաստանի ազգն ու երկիրը. իրօք,
եթէ զխոնային որ Հայերը սկիզբէն ունէին Արամ անուն երեւելի նա-
հապետ մը, չպիտի համարձակէին այնպէս ենթադրել. հետեւաբար,
հարկ չիկայ երկարաբանութեամբ պատասխանել անոնց: Բայց զիտե-
լի է թէ, Սիւնկեղոս և Կեղրենոս — որոնք, ինչպէս ըսինք, Յովսե-
պոսի հետեւելով, Սեմեան Արամէն կը սերեցնեն Հայերը —, ուրիշ
տեղ մը կը շտկեն սխալին, Յարեթի տղուն Գամէրի որդի Քորզոմէն
սերեցնելով զանոնք, ինչպէս որ նոյնը կը կարծէ Եւսեբիոս, ժամա-
նակագրութեան մէջ, և Հիւպոլիտոս Բորզուեցին (էջ 414), ինչպէս
նաև ասորի Դիոնեսիոս Պարապիրը (Հասոբ Բ. Գ. 32):

« Իսկ Բիէն Լըպրէօն, Փրանսացի նոր մատենագիրներէն, քրիս-
տոնեաներու ծէսերուն քաջանմուտ, նշանաւոր մարդ, որ Հայոց Պա-
տարագամատոյցին վրայ գրած է շատ մը հմտայից բաներ, թէև ու-
րիշներու կարծիքներուն համեմատ՝ Հայոց ազգը Սեմի տղուն Արամէն
սերած կը համարի, բայց կ'ենթադրէ թէ հայ անունը Հայկէն ըն-
դունած են, և թէ՛ նոյն Հայկը Արամի որդին է, ևն: « Առհասա-
րակ, կ'ըսէ, վաղեմի աւանդութիւն մը տարածուած է թէ՛ Հայերը
Սեմի հինգերորդ շառաւիղ՝ Արամէ սերած են, ուստի և Արմենի կը
կոչուին, ըստ որում, Պարսիկներն ու Արարներն ալ մինչև ցարդ
այդպէս կը յորջորջեն զանոնք, և իրենց լեզուն՝ հայկական կը կո-
չն, իբր թէ, ինչպէս հնագոյն հեղինակներ կը պատմեն, հայ (այ-
սինքն Հայկ), Արամի կրտսեր որդիներէն մէկը, իր ազգը պաշտպա-
նած է բռնաւոր Ներբովթէն, ինք է որ զովելի քաջութեամբ տիրած
և հաստատած է Հայաստանի թագաւորութիւնը, որ զերծ մնացած է
Ասորեստանեաններուն յուժէն: »

« Բիէն Լըպրէօն այս մեկնաբանութիւններէն ետքը, (Վիճ. Ժ.
Պր. 4. էջ 23), իր խօսքին իբր հաստատութիւն, կը յիշէ նախ թէ
Սենեքերիմի որդիները փախտական ինկան Հայոց իշխանութեան
երկիրը: »

« Մեծանուն մատենագիրներէն շատերն ալ, օտար պատմագրու-
թեանց մէջ շատ յոգնած և ստոյգը չը գտնելով, տեսակ տեսակ բաներ
հնարած են մեկնաբանելու համար թէ Հայերը ինչէ՛ն Արմենիք կը կոչ-
ւին: Ասոնցմէ մէկը՝ Կալմէթ (Մեկն. Ծննդ. Բ. 4), երկարօրէն խօ-
սելէ յետոյ յոգնարեկ, այս ալ կ'աւելցնէ. — « Կարելի է ըսել, թէ

Արևեցիա անունը կրնայ ծագիլ երբայական հաւ բառէն, որ լեռ կը նշանակէ, և մեցնի բառէն, որ Հայաստանի մէջ բնական ազգի մը անունն է, զոր Երեմիան ալ յիշած է կ'ըսէ. (ՄԱ. 27), որովհետեւ լատինական թարգմանութեանց մէջ մեցնի գրուած է հոն: Ասոր պէս ուրիշներ ալ այլևայլ բաներ կը գրեն, և մեղադրելի ալ չեն, որովհետեւ ազգին հարազատ պատմութեան տեղեակ չէին:

« Ուրիշներ ալ կան, որոնք ըստ Ստրաբոնի (Գիրք Ա. էջ 41 և 42), արամեան ազգը կը դասեն Ասորիներուն և Արարներուն հետ, և ինչպէս վերև ըսինք, հայերէնն ու ասորերէնը ա՛յնչափ մօտ կը համարին իրարու, որ Հայերը, կ'ըսեն, կը հասկնան Ասորիներուն լեզուն, և փոխադարձաբար:»

Պատմե՛նք հիմակ Արամ նահապետի կեանքին միւս գրուածները, ա՛յնքան փոթորկայոյզ, և ա՛յնքան հարուստ ու բեզուէ՛ յաղթութիւններով ու նորանոր երկրակալութիւններով:

Ինչպէս տեսանք արդէն, Բարչամ բարելացին սպաննուած, ահագին բանակը քայքայուած, անոր երկիրը գրաւուած ու Կաղմոսի ցեղին կառավարութեանը յանձնուած էր արդէն, և Արամ կը յուսար ժամանակ մը հանգչիլ, պարապելով լո՛կ իր ժողովուրդին տնտեսական յառաջիմութեան գործովը:

Սակայն, դէպքերը շուտով վրայ հասան վերստին վրդովելու երկրին խաղաղութիւնը: Արամ պարտաւորուեցաւ երկու հազար հեծեակներով և քառասուն հազար հետեւակներով արչաւել դէպի արեւմուտք, Կապադոկիոյ կողմերը, Հայաստանի սահմանները պաշտպանելու համար նոր ու հզօր թէ՛ նամիւ մը դէմ:

Այդ նոր թէ՛ նամին էր Քաղեայ Պայապիս անուն տիրան մը, Քամի սերունդէն, որ իր բռնապետութեան տակ նուաճած էր երկու ծովերուն — Սև ու Միջերկրական ծով — մէջտեղի ընդարձակ երկիրներուն մեծ մասը: Այս բռնաւորը, իմացած ըլլալով Արամի յաղթութիւնները, և սպառնացող վտանգ մը նշմարելով անոր առաջխաղացումին մէջ, ինք ուզեց նախայարձակ ըլլալ, ուստի, առանց կանխաւ պատերազմ յայտարարելու, ստուար բանակով մը սկսաւ առաջանալ Հայաստանի սահմանները: Սակայն, Արամ արթուն էր, շուտով իմացած էր այս նոր յարձակումի լուրը, և ահագին ուժերով փութացած էր հասնելու սահմանագլուխը:

Արիւնահեղ ընդհարումներէ ետքը, Պայապիս յաղթահարուած ու ցախցախուած, ասիական ծովի կղզիներէն մէկուն մէջ ինկաւ փախըստական: Իսկ Արամ, Կապադոկիա վերադարձաւ, ուր հայ մարդպան մը կարգեց, Մշակ անուն, հօն թողուց նաև տասը հազար զօրք, երկիրը պահպանելու համար, և տեղացիներուն հրամայեց միայն հայերէն լեզու խօսիլ. իսկ ինք, ուրիշ քանի մը կարեւոր կարգադրութիւններ ալ ընելէ յետոյ, վերադարձաւ իր երկիրը: Հօս ալ:

զանազան սահմաններու մէջ, կարգ ու կանոն հաստատեց ամէն կողմերը, և իր համբաւը տարածուեցաւ մինչև հեռաւոր երկիրները, որոնք Արամով ճանչցան զմեզ և սկսան անոր անունով Արմէն կոչել մեր ազգը, այսինքն Արամեան և մեր երկիրը՝ Արմենիա:

Մշակ մարդպանը կապաղովկիոյ առաջին իշխանը կը կոչուի քանի մը պատմիչներէ, որոնցմէ են Փիլոստորդիոս և Կոստանդին Պետրոսովիչն, որոնք Մոսկով անունը կուտային անոր: Այս մարդպանը, խաղաղասէր ու շինարար մարդ, քաղաք մը հիմնեց, պարսպապատ, և զայն Մոսկ յորջորջեց իր անունով. սակայն կապաղովկիոյ բնիկները, չիկարենալով շիտակ արտասանել, Մաթակ անուանեցին այդ քաղաքը, որ մեր օրերու Կեսարիան պիտի ըլլար:

Մինչև Արամի իշխանութեան սկիզբները, բուն Հայաստանը, որ Մեծ Հայք կը կոչուէր, մեծ տարածութիւն մը չունէր. Արամ ընդարձակեց զայն նորանոր գրաւումներով. այսպէս, կապաղովկիան, որ Մեծ Հայքի սահմաններէն դուրս էր, Առաջին Հայք կոչուեցաւ, որովհետեւ առաջին անգամ այդ երկրամասը գրաւուեցաւ և հայկական սեփականութիւն դարձաւ: Ինչպէս որ մեր ազգային պատմիչներէն մէկ քանինները կը վկայեն, որոնցմէ է Վարդան պատմիչը, կապաղովկիան, մասնաւոր անուն մըն ալ ունէր Արմենիակ կամ Արամենեակ: Յովհաննէս Կաթողիկոսը կը զրէթէ իր ժամանակակից Յոյներն ալ Արմենիկ կ'անուանէին այն կողմերը: Նոյնպէս, յոյն պատմիչները Արմենիաքոն կը կոչեն այն գաւառը, և բնակիչները՝ Արմենաի:

Յետոյ, տարիներու ընթացքին մէջ, Արամ հետզհետէ գրաւեց ուրիշ նոր երկիրներ, և ծովէ ծով ընդարձակեց հայրենի սահմանները, ու բազմաթիւ բնակչութիւններ տեղաւորեց: Այդ պատճառով է որ ետքէն գրաւուած նոր գաւառները կոչուեցան Երկրորդ Հայք, Երրորդ Հայք. ու այս երեքն ալ միասին կոչուեցան Փոքր Հայք. իսկ այս երեքին զրացի եղող Մեծ Հայոց տասնըհինգ նահանգներէն մէկը, որ Եփրատի եզերքը կը զանուի, Չորրորդ Հայք կոչուեցաւ: Եւ: Սակայն, ինչպէս կը զրէթաննէս կաթողիկոսը, երկար դարեր անցնելէ յետոյ, Բիւզանդական հայ կայսրերէն Մօրիկ, ասոնց անունները փոխեց:

Հ. Մ. Չառնեան հետեւեալ ծանօթութիւնները կուտայ Մաթակ քաղաքին վրայ.—

«Յովսէպոս, կ'ըսէ, Նախնեաց Գիրքին մէջ (Ա. 6), կը կարծէ թէ Մաթակ քաղաքը Յարեթի տղուն Մոսոքէն առած է իր անունը և թէ՛ Մաթակցիները, զորոնք Մոսոքեցիներ կ'անուանէ Յովսէպոս, այն Մոսոքէն սերած են, որոնք հիմա, կ'ըսէ, կապաղովկիացիք կը կոչուին: Եւ կը յարէ թէ այս յորջորջումին յայտարար նշանն այն է որ՝ քաղաքը մինչև ցարդ Մաթակա կը կոչուի, և կը հետեւցնէ թէ ամբողջ ազգը կը կրէր այդ անունը, ևն:

Հերոզոս(*) և Կոնստանս(**) պատմիչներուն համաձայն, Արամ նահապետին օրով կ'ապրէր Ասորեստանի Նինոս թագաւորը, Բելի սերունդէն Արբէլ Բ. ի աղան: Նախնիքներու զիրքերը քանի' կը կարգար, այնքան իր սրտին մէջ բոց մը կը վառէր, նախանձի բոց մը, ինք ալ կ'ուզէր մեծ համբաւ վաստկել և կը փափագէր որ միայն իր անունը յիշուի ապագայ դարերուն մէջ, իբրև յաղթող աշխարհակալ: Աւանդութիւն մը կ'ըսէ թէ Նինոս հրամայած է այրել իրմէ առաջ եկած զացած փաջերու պատմութեանց զիրքերը:

Ինչպէս կ'երեւայ, Նինոս աղայութենէն ի վեր խելքը միտքը զէնքի սուած էր: Տեսքոս, վայելչահասակ հուժկու աղաքներ ժողովեց, ամէնքն ալ իրեն հասակակից, զինատարժութեան վարժեցուց զանոնք, սովորեցուց նաև շարքաշ կեանքը, պատերազմի նեղութիւններուն ու վիշտերուն դիմանալ, յետոյ, ուրիշ մեծ թիւով զօրքեր ալ համախըմբելով, և նախնի արարացիներուն հետ միաբանելով, ասոնց հետ մէկտեղ արշաւեց շատ մը երկիրներու վրայ, որոնց սիրեց առանց դժուարութեան:

Նինոսի յաջող արշաւանքներուն համբաւը շուտով տարածուեցաւ. և ինք յաղթանակէ յաղթանակ առաջանալով, Գրաւեց նաև Եգիպտոսը և հուռածնց անոր բոլոր սահմանները, յետոյ, իր ահագին բանակը դարձուց դէպի Բակտրիա և Հնդկաստան, ինքզինք բովանդակ Ասիոյ բացարձակ տէրը հռչակելու նպատակով, սակայն, բազըը չի ժպտեցաւ այս անգամ, Նինոս, ձախողուածներու մատ-

(*) Ինչպէս Խորենացիին ալ յիշած է Հերովդոտոս անուևով, Հերոզոսու Ալիկաոնացիին օտար պատմաբաններուն հայր կոչուած է, Լիստոսի ու Տրիայ որդին, Քրիստոսէ 480 տարի առաջ ծնած: Նախ Ասմոս կողին առանձնացաւ, յետոյ նամբարդէց Եգիպտոս, Թալիա եւ ամբողջ Յունաստանը, եւ իր ուղեւորութեան մէջ տեղեկանալով ազգերու ծագումին ու պատմութեան, իր գիրքը շարագրեց, զոր աւարտելով Արեւնացիներուն առջեւ կարդաց: Յոյները մեծ փառով կը պատուէին, այս պատմաբանը, եւ նոր մուսա կը յորշորչէին զինքը: Ունի անանկ դիւրին, մեկին ու փոքր ոն մը, որով կը բերազանցէր բոլոր պատմաբանները:

(**) Յոյն անուանի բժիշկ ու պատմաբան, Քրիստոսէ 400 տարի առաջ, յանկարծ երեւան ելած է պատերազմին մէջ զոր Փոքր Կիւրոսը մղեց իր եղբոր՝ Պարսից բազաւոր Արսաւես Մենմոնի հետ: Այն պատերազմին մէջ, կը պատկէ նոյնինքն Կեսարիա, վիրաւորուած Արսաւեսը բժշկեցի եւ: Կեսարիա 23 զիրքերու մէջ ամփոփած է Ասորեստանցիներուն ու Պարսիկներուն պատմութիւնը, որմէ շատ բաներ մէջ կը բերէ Սկիւիացի Դիոդորոսը, Եւսեբիոս ու Փոս:

նուեյով, հարկադրուեցաւ բանակովը մէկտեղ եւ քաշուիլ ու իր երկիրը վերագոռնալ, Բակտրիոյ ընդարձակ ամալութիւններուն մէջ թողով հազարաւոր դիակներ իր վիթխարի բանակէն:

Սակայն, Նինոս կը սիրէր ապրիլ պատերազմներու կեանքը, պարտութիւնները չէին կրնար ազդել անոր սազմաշունչ հողիին, ընդհակառակը, աւելի կը զրգռէին անոր անորթականները, նոր յաղթութիւններով ու երկրակալութիւններով մուցնելու պարտութիւններուն տըխուր յիշատակը:

Դիոնեսիոս Այլիկաոնացին(*), Դիոդորոս Սիկիլիացին(**), Ապպիանոս(***), և Յուստինոս(****), ինչպէս և մեր Խորենացին, ամենքն ալ ընդարձակօրէն նկարագրած են Նինոսի արշաւանքները:

Ինչպէս վերեւ յիշեցինք, Նինոս շատ կը սիրէր նախնիքներու պատմութիւնը, շարունակ կը կարգար հին ձեռագրիները: Այս պատմութիւններէն իմացած ըլլալով թէ իր նախահաւը Բէլ սպաննուած է Հայկէն, կը մտածէր վրէժը լուծել այս վերջինի սերունդէն: Արդէն, Հնդկաստանէն վերադարձին, իր կրած մէկէ աւելի պարտութիւններէն դառնացած, կը խորհէր կազմակերպել արշաւանք մը որ իրեն դիւրին յաղթութիւններ կը խոստանար: Հայաստանի վրայ կ'ուղէր քաջի, երկրակալութեան տենչէն աւելի՝ վրէժխնդրութեան ոգիէն մղուած,

(*) Դիոնեսիոս, մեծահռչակ պատմաբան եւ հնախօս, Օդոսոս կայսեր օրովը կ'ապրէր: Հոռոմի մեշ քաներկու տարի մնալով, նախնի Հրոռովմայեցիներուն պատմութիւնը գրեց յունարէն, 20 գիրքերով, որոնցմէ միայն 11ը մնացած է: Ունի ուրիշ հասակօրէ գրուածներ ալ:

(**) Սիկիլիացի 'Դիոդորոսը՝ Սիկիլիոյ Արկիւոս քաղաքէն է, մեծանուն եւ հանրածանօր յոյն պատմիչը, պատմութեան 40 գիրքեր գրած է, որոնցմէ միայն 15ը կայ հիմա, եւ ուրիշ քանի մը կտոր գրուածներ: Երեսուն տարիներ սոյոյ պատմութիւններ հետագօտելի յետոյ, գրեց իր վիպասանութիւնները: Սոսկայի տառապանքներով նամբորդած է Եւրոպա ու Ասիա եւ լաւ մը տեղեկանալով ամեն բանի, գրեթէ բոլոր միւս պատմիչներէն աւելի նշողապատմ եղած է վաղնիմի դէպքերու մասին:

(***) Ապպիանոս անուանի յոյն պատմաբանը՝ Տրայիանոս, Ասրիանոս եւ Անտոնինոս Պիոս կայսերուն օրովը կ'ապրէր, հոռովմեական պատմութիւնը շարագրած է, ինչպէս նաեւ արեւելեաններուն եւ ուրիշ ազգերունը:

(****) Այս մեծանուն պատմաբանը, Բ. Դարուն, Անտոնինոս Պիոս կայսեր օրով կ'ապրէր, լատիներէն գրեց Տրովպիոս Պոմպեոսի երեւելի մասնագրիս պատմութեան բովանդակութիւնը:

ուստի բովանդակ հայ ազգը ընաջինջ ընկու թագուն զիտաւորութեամբ՝ սկսաւ նոր արշաւանքին պատրաստութիւնները տեսնել :

Սակայն, Ասորեստանի արքունիքին աւագանին տարբեր կը խորհէր . անոնք ստոյգ տեղեկութիւններ ստացած էին Արամ Նահապետի մասին . շատ լաւ գիտէին թէ Նինոսի համար ազիտարբեր պիտի ըլլար այդպիսի պատերազմ մը , որովհետեւ Արամին մեծ համբաւը տարածուած էր հեռաւոր երկիրներուն մէջ , ուստի խորհուրդ տուն Նինոսի հրաժարիլ երկրին համար ա՛յնքան վտանգաւոր այդ գաղափարէն :

Նինոս , պատերազմասէր թէև , զիտէր նախատեսել զէպի Հայաստան արշաւանքի մը տխուր հետեւանքները . ուստի , անսաց իր աւագանիներու խորհուրդին , և փափաքելով բարեկամանալ Արամ Նահապետի պէս հզօր զրացի վեհապետի մը հետ , յատուկ պատգամաւորութիւն մը զրկեց ասոր քով , արքայական թանկագին նուէրներով . զանի իր երկրորդը կոչեց և արտօնեց անոր մարգարտէ վարսակալ դնելու :

Այս կերպով ապահովելէ յետոյ իր երկրին արտաքին խաղաղութիւնը , ձեռնարկեց ներքին բարեկարգութիւններու . հիմէն նորոգեց Աթուր մայրաքաղաքը , ուր կը նստէր ինք , Տիգրիսի եզերքը , և իր անունով յորջորջեց զայն Նինուէ , որուն երկայնութիւնը հարիւր յիսուն հասարակ ասպարէզ էր , այսինքն եօթնուկէս փարսախ . իսկ մայրաքաղաքին շրջանը կարելի էր ընել երեք օրուան մէջ , ինչպէս կը գրէ Յովնան մարգարէն : Պարիսպին բարձրութիւնը հարիւր ոտք , նոյնչափ ալ լայնութիւնը , այնպէս որ երեք կառքեր դէմ առ դէմ կրնային անարգել ընթանալ :

Նինոս այս մեծագործութիւնները գլուխ հանելէ յետոյ , վերստին պատերազմի սկսաւ Բակորիացիներուն դէմ , և Ասիայէն ստուարութիւ բանակ մը ժողովեց , որ ըստ Կտէսիաս պատմիչի , կը բաղկանար մէկ միլիոն եօթը հարիւր հազար հետեւակներէ , և երկու հարիւր հազար հեծեակներէ , որոնց մէջ էին նաև տասնըվեց հազար գերանդաղէն կառքեր :

Բակորիոյ թագաւորը , իմացած ըլլալով Նինոսի առաջխաղացումը , ինք ալ համախմբեց չորս հարիւր հազար զօրք և կիրճերուն զարանակալ սպասեց Նինոսի : Երբ այս վերջինը զինուորներուն մէկ մասը կիրճերէն անցուց , յանկարծ Բակորիոյ թագաւորը դուրս ելաւ թագստոցներէն , և Նինոսի բանակէն հարիւր հազար զօրք ջարդեց : Սակայն Նինոս երբէք չը վհատեցաւ , ամէն տաժանքներու զիմացաւ , ու մտաւ անոր երկիրը , քարուքանդ ըրաւ հանդիպած զիւզերը , քաղաքները , անդթօրէն ջարդեց բնակչութիւնները , և աւեր ու սարսափ սփռելով շուրջանակի , հասաւ անուանի և անա-

որիկ զիրքի մը վրայ շինուած Բակարի մայրաքաղաքը, զոր պաշարեց:

Նինոս մէկ քանի անգամներ փորձեց պարսպները խորտակել ու բռնի ներս մտցնել իր բանակը. սակայն, ներսէն ահռելի զիմադրութեան մը հանդիպեցաւ և նոյնիսկ բաւական լուրջ վտանգներ անցուց: Ի վերջոյ, իր Մենոն զօրավարին կինը Շամիրամ՝ հնարք մը գտաւ, որուն շնորհիւ Նինոս յաջողեցաւ վերջնականապէս զբաւել մայրաքաղաքը, և իր յաղթական բանակով ներս մտնել:

Յետոյ, իր երկիրը վերադարձաւ ու սօնեց իր յաղթութիւնները: Իր թագաւորութեան ամբողջ տւեղութեանը մէջ, երբեք չլազրեցաւ իր նախկին բարեկամական յարաբերութիւնները մշակելէ Արամի հետ, որ իր փառքին գաղաթնակէտը հասած էր արդէն, հայրենի սահմաններէն հեռու վտարած ըլլալով բոլոր թշնամիները: Արամ, կէս դարէ աւելի, այսինքն 58 տարի կառավարեց իր երկիրը, և իր վերջին օրերուն մէջ, կառավարութիւնը յանձնելով իր Արայ որդիին, մեռաւ:

Խորենացին շատ համառօտ գրած է Արամի և իր յաջորդներուն գործերը, ինչպէս որ ինք ալ կը վկայէ իր պատմութեան մէջ (Ա. 12 և 13):

Քանի մը ծանօթութիւններ Նինոսի և Շամիրամի վրայ, և վերջացնենք այս գլուխը:

«Մատենագիրներէն շատերը, կ'ըսէ Հ. Մ. Չամչեան, որոնց մեջ են Կեփաղիոն, (*) ու Սիւնկեղոս, կը կարծեն թէ մեծ Նինոսը Բելի որդին է, Բելին անունը չփոթելով վերջին Արբէլի անունին հետ, ոմանք ալ կը կարծեն թէ նոյնինքն Բելն է ան, և Սիկիլեան ժամանակագրութեան մէջ կ'ենթադրուի թէ՛ Ներբովթի կինը Շամիրամն էր, որմէ ծնան Նինոս ու Պիկոս, և այս վերջինէն ծնաւ Բելը. այդպէս կ'ենթադրէ Կեղրենոս և ուրիշներ ալ, և ոմանքն ալ խառն կը խօսին: Բայց Խորենացին (Ա. 4.) Մարիբասի վկայութեան համաձայն, նախ կ'ենթադրէ թէ Բել ու Ներբովթ նոյն են, ասոր համաձայն կը զանուին մատենագիրներէն շատերն ալ, ինչպէս Եւսեբիոս, Ս. Հերոնիմոս, Ս. Օգոստինոս և ուրիշներ, նոյնպէս նոր մատենագիրներէն Կուռնելիոս Ալափիաէ (Մեկն. Ծննդ. Ժ 10), Դիոնսիոս Պետաւիոս, Բերտոս Լաւրենտիոս, և ուրիշներ: Եւ յետոյ, Խորենացին ալ, Աբիւղենոս Երեւելի պատմաբանին բնագիրը մէջ բերելով, կը հաստատէ թէ՛ Նինոս Բելէն ետքը եօթներորդ էր, այս

(*)Յոյն պատմաբան մըն է, Բ. Դաբուն, Ագրիանոսի օրով ապրած, որ ունի պատմութիւն մը, սկսեալ Նինոսի մահուրեկն մինչեւ Մեծ Աղեփաւորը, իտեհեացիս ալ յիշած է զանի (Ա. 17):

կարգով. — Ներքովթ կամ Բեյ, Բար, Աներիս, Արբէլ, Քայաղ, Արբէլ Բ., Նինոս, որուն կինը Շամիրամ էր, ասկէ բացայայտ կ'երեւայ թէ Բեյէն մինչեւ Նինոս, ուրիշ անձեր ալ կային. հետեւաբար Նինոս չի' համարուիր Բեյի որդին, ո՛չ ալ նոյնինքն Բեյը: Ս. Կիրեղ ալ կը թուի հաստատել ասիկա, որովհետեւ, Յուլիանոսի գէտիբ գիրքին մէջ կը պատմէ թէ՛ ջրհեղեղէն 900 տարի ետքը (կամ քիչ մըն ալ աւելի), Արբէլ թագաւորեց Ասորեստանի վրայ, և իրմէ ետքը՝ Նինոս որդին և յետոյ Շամիրամ: Կիւրդի այս խօսքը կը յիշէ Գղիկաս^(*) իր Բ. Գիրքին մէջ, ուր յայտնապէս կը տեսնուի թէ՛ Բեյին ու Նինոսին մէջտեղ կար Արբէլը, և ինչպէս որ ան կար, ուրիշներ ալ կային:

«Եւ թէեւ հին պատմագիրներէն շատերը, — որոնց մէջ է Եւսէբէոս ալ —, զանց կ'ընեն այդ պարագան, բայց ասիկա բան մը չէ, որովհետեւ, զուցէ տարակուսելի կարծելով և կամ ժամանակին չափը չի գտնելով, չեն յիշած. և ուրիշներ թերես անոնց անուաներուն չհանդիպեցան, և կարծեցին թէ գոյութիւն չունին անոնք, և կամ թերեւս անոնց անուաները ջնջուած են: Դիողորոս՝ (Գիրք Բ. Գլ. 4) կ'ըսէ. — Առաջին ժամանակները, Ասիոյ մէջ տեղացի բնակիչներէն թագաւորեցին, որոնց գործերն ու անուաները՝ ժամանակին երկարութիւնը ջնջեց:»

«Բայց Սիւնկիղոս, Բէլին ու Նինոսին միջեւ գտնուող այն հինգ անձերուն կարգը զանց կ'ընէ իր տեղը զետեղելու, և անոնցմէ չորսը՝ քսանութը անձերէ վերջը կը դնէ, Տեւտամոսի յաջորդ Տեւտէոսէն անմիջապէս ետքը կցելով այսպէս. — Տեւտէոս թագաւորեց 44 տարի, Արբէլ՝ 42, Քայաղ՝ 45, Աներիս՝ 38, Բար՝ 37: Սիւնկիղոս՝ Ափրիկիանոսէն առած է այս կարգը, եւն.:

«Իսկ յետագայ մատենագիրները կտակածելով՝ զանազան խօսքերով կը պատմեն, և իրականութիւնը չեն գտներ: Եւ ասոնց խօսքերուն այլեւայլութեան հիմը այս է որ, այս մատենագիրները, պատմութիւններուն նայելով կը գտնեն թէ Բէլը նախնի մէկ մը եղած ըլլալու է, իսկ Նինոս՝ ետքէն եկած է, և որովհետեւ այս երկուքին մէջտեղը չեն գտներ ուրիշ մէկը, երբ Նինոսը կ'ախարհկեն, Բէլը վար կ'իջեցնեն, Ներքովթէն զատ մէկը չինելով զանիկա, և կը դնեն զատաւորներուն ժամանակները, երբ Իմրայէլացիները Արին թագա-

(*) Միխայէլ Գղիկաս, Փ. Գառու Սկիլիացի յուճաց պատմիչը Փ. Բ. զանազան խորհրդածութիւններով գրած է համառօտ պատմութիւն մը, չորս մասերով, աշխարհի սկիզբէն մինչեւ Ալեյս Ա. կայսեր մահը, 1118ից:

ւորին ծառայութեանը մէջ էին, ինչպէս որ կ'ընէ Ովսերիոս(*) և ուրիշներ: Իսկ երբ լոկ Բեյը կ'ահկնարկեն, Նինոսը վեր կը տանին և զանի Բեյի որդին կ'ընեն, և աշտարակաշինութենէն քիչ մը վերջը կը դնեն, ինչպէս կ'ընէ Պատաւիոս՝ ժամանակներու քննութեան մէջ և Դիրեն՝ Ս. Գիրքի մեկնութեան մէջ և Պովսեր՝ Պատմութեան Թաղիկները գիրքին մէջ, և ուրիշներ: Սակայն Կալմէթ, որ Նինոսի պատմութիւնը կը դնէ աշտարակաշինութենէն անմիջապէս ետքը, Դատարներու ժամանակներու մէջ կը խառնէ անոր թուականը: Եւ դարձեալ իր պատմութեան մէջ Ներքովին ու Բեյը նոյնը կը համարի. իսկ ուրիշ տեղեր, Նինոսի ժամանակներուն նայելով՝ Բեյը Ներքովին զատ մէկը կը համարի: Պատմութիւններու և ժամանակներու այս տարբերութիւնները կը հատուտեն նախ՝ իրերուն անստուգութիւնը, և երկրորդ թէ՛ Խորեն սցիին պատմութիւնը աւելի ստույգ է քան թէ ուրիշներունը:

«Իսկ Նինոսի մահուան համար, շատերը շատ բաներ կը պատմեն: Խորենացին (Ա. 16) կ'ըսէ թէ՛ իր Ծամիրամ կնոջ մոյլ ու շարատը բարքը տեսնելով՝ իր թագաւորութիւնը թողուց և Կրեաէ գնաց ու հոն մեռաւ անձանօթ վիճակի մը մէջ: Դիողորոս Սիկիլիացին կը պատմէ (Բ. 3) թէ Նինոսէ մեռաւ, իր թագաւորութեան մէջ. իսկ ոմանք կ'ըսեն թէ՛ անոր կինը Ծամիրամ խնդրեց որ միայն հինգ օր իրեն հորձէ ամբողջ իշխանութիւնը. ու երբ որ առաւ, ձերբակալել ու սպաննել առաւ զանի:


«Այս Ծամիրամին համար կ'ըսեն ոմանք թէ՛ միայն մէկ որդի ունէր, այն է Նինուասը, իսկ Խորենացին և ուրիշներ թէ՛ շատ որդիներ ունէր, և ասիկա հաւանական կ'երևայ: Դիողորոս (Բ. 5) կը պատմէ նաև թէ Ծամիրամ Հնդկաստանէն դառնալէն յետոյ, լսեց որ իր առաջին զործակալներէն մէկը՝ Ոքոխարա, այն է Զրադաշա, Նինուասի հետ կը խորհէր սպաննել զինք, ուստի ինք յօժարեալամ իշխանութենէն հրոժարելով՝ յանձնեց զայն իր աղուն, և ինք, կ'ըսէ, իսկոյն աներևոյթ եղաւ, աստուածներուն քով փոխադրուելով: Ստոր վրայ ուրիշներ աւելցուցին թէ՛ աղանիի փոխուեցաւ: Իսկ Յուստինոս (Ա. 2) կը պատմէ թէ՛ որովհետև ինք քիչ մը ծուռ աչ-

(*) Յակոբ Ովսերիոս, Ժէ. Դարու, խիստ անուանի եւ հռչակաւոր մատենագիրներէն է. Իրլանտայի Ար.Մաթ. Բաղամիս արքեպիսկոպոսը: Բազմաքիւ երկեք ունի, որոնց մէջ նշանաւոր է աբխազի տարեգրութիւնը մինչեւ երկրորդ ասնարին կործանումը, մեծաթեմբ երկասիրութիւն մը, որ գրեթէ եզական կը համարուի նոյն իսկ ներկայ դարուն մէջ: Վախճանեցաւ 1655ին :

քով կը նայէր իր նինուսա տղուն, այս վերջինէն սպաննուեցաւ։
Յուստինոսի այս կարծիքը կը համաձայնի մերինին, զոր պատմու-
թեան մէջ գրինք, այնպէս, ինչպէս Խորենացին աւանդած է այնքան
ճշգրտօրէն։

« Դիտելու է դարձեալ որ կաստորիոս ու Եւսեբիոս, նոյնպէս
Խորենացին, ձեռագիրներուն համաձայն, Շամիրամէն մինչև Սար-
գանարազ երեսունընդ թագաւորներ կը դնեն, ոմանք ալ՝ երե-
սունըչորս։ Սիկիլիացի Դիոդորոսը՝ քսանըինը կամ երեսուն. Սիւն-
կեղոս, Ափրիկիանոսէն առնելով, Բելէն մինչև Սարգանարազ, խա-
ռըն կարգով մը կը թուէ քառասունըմէկ թագաւորներ, որ Խորենա-
ցիին ցոյց տուած թիւին կը համապատասխանէ. ուրիշներ ալ ուրիշ
տեսակ։ Մենք առաջին կարծիքը հաւանականագոյն գտնելով՝ այն-
պէս գրինք, և չ'ուղեցինք Խորենացիի խօսքերէն շեղիլ, որովհետև,
այս մասին իրմէ դուրս կարելի չէ աւելիստոյգ բան մը գտնել, ինչպէս
որ բացայայտօէն կը տեսնուի ուրիշներու պատմագրութեանց մէջ, ա-
նոնք որ Մտրիբասի պատմութենէն տեղեկութիւն չունին, այլ և այլ
բաներ կը խօսին և սաստիկ կը նեղուին, ինչպէս կը տեսնենք Պի-
տալիոսի Ժամանակներու Քննութեանց մէջ (Գիրք Բ. Գլ. 13)։

«Արամնահայետը, ինչպէս ըսինք, մեր ազգային պատմութեան մէջ
յաւէտ պիտի մնայ տիպար հայրենասէր իշխան մը, որ զիտցաւ կազ-
մակերպել առաջին զինուորական կարգերը, և իր իշխանութիւնը
պատկառելի ընծայել օտարներուն առջև։ Երկու բառով կարելի է ո-
րակեղ գրինք, Երկրաւեկն և Երկրակալ։»



Արայ եւ Շամիրամ. — Արմենեանց եւ Հայք. — Քեսացիք. —
 Արմենահայ ցեղախումբերուն չուերք. —
 Կարդոս . — Անուշաւան:

Արայ հրաշագեղ երիտասարդ մըն էր, Արամի հարազատ որդին ու ժառանգորդը, որ իր հօր մահուընէն ետքը յաջորդեց անոր և ձեռք առաւ Հայաստանի կառավարութիւնը:

Մեր ազգային պատմութեան առասպելային շրջանի փայլուն ստեղերէն մին է Արայ, որ իր մարմնական գեղեցկութեան համար զեղեցիկ կոչուած է:

Արայ, իր հօր արժանաւոր յաջորդը, մաղ մը չի չեղեցաւ անոր հետեւած արտաքին քաղաքականութենէն, և անվթար պահեց նախկին բարեօք յարաբերութիւնները Նինոսի հետ, որմէ պատիւ ու մեծարժէք ընծաներ ալ ընդունեց, բացի մարգարտէ վարսակալէն, զոր արդէն իր հօրմէն ժառանգած էր:

Ասորեստանի պէս հզօր ու ահարկու տէրութեան մը հետ իր դաշնակցութեան չնորհիւ, պատկառանք կ'ազդէր դրացի ժողովուրդներուն, որոնք սիրայօժար կը հնազանդէին իր նահապետական իշխանութեան:

Արայի առաջին գործը՝ բարեկարգել եղաւ ընդարձակ երկիրը, զոր իր հայրը թողած էր: Նախ բանակը վերակազմեց, բոլոր սահմանադրուիւնները բերդերով ամրացուց, օտար յարձակումներու դէմ միշտ կազմ ու պատրաստ ըլլալու համար:

Նինոսի մահուընէն ետքը, Արայի իշխանութիւնը զօրացաւ: Պարզ նահապետ մըն էր նախ, յետոյ, արքայօրէն կառավարեց բովանդակ հայրենիքը, ինչպէս կը գրէ Խորենացին: Հօյտկապ պալատներով ու հանրային շէնքերով ճոխացուց իր մայրաքաղաքը՝ Արմաւիր. իր օրով է որ Հայաստանը կոչուեցաւ Արարատ կամ Այրարատ, և իր իշխանութիւնը Արարատեան: Իր օրով ծաղկեցան բոլոր արուեստները. երկրագործութիւնն ու վաճառականութիւնը հսկայաքայլ առաջդիմեցին. երկրին ամէն կողերը նոր ճամբաներ շինուեցան, հասարակաց պողոտաներ և հաղորդակցութեան նոր միջոցներ ստեղծուեցան:

Մինչ այսպէս, Արայ երկրին ներքին բարեկարգութիւններովը կը զբաղէր, Նինուէի մէջ կը մեռնի Նինոս թագաւորը, և Ասորես-

տանի գահը կը բարձրանայ իր կինը Շամիրամ, որ հոչակաւոր թագուհի մը պիտի ըլլար:

Հերոդոտոս (Ա. 184), Կտէսիա, Գիոտոր (Բ. 2, 3), Ստրաբոն (Գիրք Փե.) Կեփաղիոն, Յուստինոս (Գիրք Ա. 2), ինչպէս նաև մեր ազգային պատմիչներէն Խորենացին (Ա. 14), Յովհաննէս Կաթողիկոս և Մագիստրոս, բոլոր այս նախնի ազգային թէ օտար պատմիչները, աւանդութիւններէն քաղելով և իրարմէ առնելով, զսնագան առասպելներ կը պատմեն Շամիրամի ծնունդին, կեանքին ու մահուան վրայ:

Օրինակի համար, կ'ըսեն թէ Ասորիներու և Ասկալոնացիներու շաստուածուհի Գերկեաէն ծնած ըլլալով, անապատի մը խոտոջը ձրգւեցաւ, ուր կերակրուեցաւ վայրենի աղաւնիներէ: Ժամանակներ ետքը, արքունի հովիւները կը գտնեն կրտսան և կը բերեն կը յանձնեն իրենց Սիմոս իշխանին, որ զանի կ'որդեգրէ և կ'անուանէ Շամիրամ, այսինքն Աղաւնի: Տարիներ կը բոլորուին ու կը մեծնայ Շամիրամ: Օր մը, Ասորեստանի թագաւորին զօրավարներէն մէկը Մենոն Սիմոս իշխանին տունը կուգայ, կը տեսնէ աղջիկը, կը սիրէ ու իրեն կնութեան կ'առնէ:

Կ'անցնին տարիներ, և Նինոս Բակորիոյ վրայ կ'արչաւէ ստուար բանակով մը: Այդ բանակին մէջ կը գտնուէր Մենոն զօրավարը, ինչպէս նաև իր կինը Շամիրամ: Ինչպէս յիշուեցաւ նախընթաց գլխուն մէջ, Նինոս ահազին դժուարութիւններ կրեց Բակորիի պարիսպներուն տակ, և ի վերջոյ, Շամիրամի մէկ հնարքին շնորհիւ յաջողեցաւ առնել մայրաքաղաքը, և սիրահարուելով Մենոնի կնոջ, իրեն կնութեան ուղեց առնել: Մենոն, Նինոսի ապիրատութիւնը տեսնելով, յուսահատութենէն ինքզինք սպաննեց. իսկ Նինոս հասաւ իր փափագին, իրեն կնութեան առաւ Շամիրամը, որ յետոյ երբ Նինոս մեռաւ, գահը բարձրացաւ:

Ասորեստանի թագուհին, որքան հանձարեղ, նոյնքան փառամոլ էր: Իրեն առաջին զօրծ ըրաւ պրպտել իր ծագումը, ու կարծելով թէ իրօք աղաւնիներէ սնուցուած էր ինք, և թէ այդ պատճառով է որ Շամիրամ կը կոչուէր, Ասորեստանցիներու դրօշակներուն վրայ դնել սուաւ աղաւնիի պտակերը, և իր յաջորդները նոյնը շարունակեցին:

Ստրաբոն (*) կ'ըսէ թէ այս թագուհին Ասորեստանցիներուն բոլոր թագաւորներէն աւելի զօրաւոր ու մեծագործ կղած է, և ինք կղած է կիներուն մէջ առաջին թագաւորողը:

(*) Մեծաճուռն յոյն երկրագիտի, փիլիսոփայ եւ պատմաբան, որ Օգոստոս կայսեր օրերուն կը ծագկեր. արեւելեան ազգերուն վրայ կարեւոր գրուածներ բողոքած է:

կենցաղասէր, վաւաչոտ կին, կը սիրէր խաղերը, զբօսանքները, սողովուրդին համար հանրային հաստատութիւններ չինել տուաւ. համբաները հարթել ու քաղաքներուն մէջ ջուր բերել տալով, ամէն կողմերէն աւատօրէն աղբիւրներ հոսեցուց ու գեղեցիկ պարտէզներ անկել տուաւ: Բարելոնը նորօգեց հրաշայի ձեռակերտներով, բոլորովին կերպարանափոխ ընելով նախկինը, որուն կառուցումը Բելլին կը վերագրուի:

Այս աշխարհաշէն գործերը գլուխ հանելէ յետոյ, նոր երկիրներ գրաւելու տենչով, արշաւեց Եթովպիա, ուղեց Լիբիա երթալ, Ամմոնի Գիտսին տաճարը տեսնելու և դարիրայէն խորհուրդ հարցնելու համար: Նոյն տաճարին քուրմը նետուեալ պատգամը տուաւ իրբև պատասխան իր հարցումին, — «Քու որդիդ Նինուաս դարանակալ է քեզի, և քու մահուընէդ ետքը՝ Ասիայէն մաս մը՝ քեզի աստուածաժպայել պաշտօն ու պատիւ պիտի ընծայէ »:

Շամիրամ, առաջ տանելով իր երկրակալութիւնները, անթիւ անհամար զօրքերով կ'անցնի Հնդկաստան: Հոս, փիղերը ճրաշքներ կը գործէին պատերազմի մէջ, և որովհետև Շամիրամի բանակը զուրկ էր փիղերէ, ուստի, փիղերու նմանութեամբ հազարաւոր ուղտեր կը պատրաստէ, Հնդկիները խաբելու համար:

Հնդկիներու թագաւորը, իմացած ըլլալով թէ՛ Շամիրամ իր սահմաններուն կը մօտենար, պատգամաւորներ զրկեց իրեն հարցնելու համար թէ ո՞վ է ինք, ինչո՞ւ կուգայ և ի՞նչ կ'ուզէ:

Շամիրամ նետուեալ ամբարտաւան պատասխանը կուտայ. — Հիմա՛ պիտի ցուցնեմ քեզի թէ ո՞վ եմ ես և ի՞նչ կ'ուզեմ:

Եւ առանց սպասելու, հրաման կ'ընէ բանակին առաջանալ զէպի Քնդոսի գետեզերքը: Բազմաթիւ լաստերով կամուրջներ չինել կուտայ և իր ստուարաթիւ զօրքերով կ'անցնի միւս կողմը: Լաստէ կամուրջներուն պահպանութեան համար հոն թողլով վաթառու հազար զօրք, ինք կը մտնէ երկրին ներսերը:

Հնդկաստանի թագաւորը, յանկարծակիի եկած, կ'ընդառաջէ Շամիրամի, հազարաւոր փիղերով, որոնք խուժելով թշնամի բանակին վրայ, Ասորեստանի թագուհիին ուղտերը կը կրիսկուտեն ու զօրքերուն մէջ խառնակութիւն ու խուճապ կը ձգեն: Այդ միջոցին Շամիրամ երկու վէրք կ'ըլտանայ Հնդկաստանի թագաւորէն, որ կը նետափնդէր տակաւին զանի:

Սիկիլիացի Գիոգորոսը կը պատէ թէ, ընդհանուր խուճապ տագնապին ու չփոթութեան մէջ, Ասորեստանի անվհեր թագուհին նոր հարքներ կը մտածէր կարգը վերահաստատելու իր քայքայուած բանակին մէջ, և սակայն, խառնածայն ժխորը, իրարանցումը, խուճապը կը սիրէին ամենուրեք և անկարելի էր զիրար լսել, այնպէս որ,

Շամիրամ կը պարտաւորուի փախուստի ելք մը գտնել իր զօրքերով, գոնէ հասնելու համար մինչև լաստէ կամուրջը, որ ձգուած էր Ինդոս գետին վրայ:

Կամուրջէն անցքը սոսկալի տեսարան մը կը պարզէր, աննկարագրելի խուճապ մը զօրքերուն մէջ, որոնք, թշնամիներէն հայածական, զիրար կը կոխկռտէին և շատերը զետը կը նետուէին ուղտերով միասին: Այսպէս, բանակէն կարեւոր մաս մը կը խեղդուի գետամոյն, մաս մըն ալ կը ջարդուի և մնացորդ մասը հազիւ կը յաջողի անցնիլ գետին միւս եզերքը:

Բարեբաղդարար, նոյն պահուն, Հնդկաց թագաւորը, որ դեռ կը հետապնդէր Ասորեստանի թագուհին, յանկարծ կանգ կ'առնէ, արգիլւելով պատգամախօս դաբիրայէ մը, որ կը յորդորէր իրեն անմիջապէս նահանջել ու ետ քաշել իր զօրքերը:

Եւ Շամիրամ, իր բանակէն ստուար մաս մը կորսնցնելով Հնդկաստանի լեռներուն մէջ, հազիւ կը յաջողէր անվտանգ վերադառնալ Բակտրիա, հոսկէ՝ Բաբելոն, և ի վերջոյ՝ Նինուէ, ուր, արքունիքին խորը քաշուած, օրերով ու շաբաթներով չ'երեւար, գաղտնապէս ողբալով իր կորուսանքը:

Մեր պատմիչներէն Խորենացի, Յովհաննէս Կաթողիկոս ու Գրիգոր Մագիստրոս, գրեթէ նոյն կերպով կը պատմեն Արայի ու Շամիրամի պատերազմը:

Շամիրամ, Նինոսի մահուընէն ետքը, միահեծան տիրուհին դարձած էր Ասորեստանի, և իր արքունիքին մէջ կ'ուպրէր ցոփ ու շուայլ կեանք մը, հոմանիներէ չըջագատուած: Իմացած ըլլալով Արայ նահապետին գեղեցկութեան համբաւը, մասնաւոր պատուիրակութիւն մը զրկեց Հայաստան, Հայոց նահապետը հրաւիրելու իր արքունիքը, և իրեն հետ ամուսնանալով՝ Ասորեստանցիներուն վրայ թագաւորեցընելու համար Նինուէի մէջ: Թագուհին, առանց տեսած ըլլալու, սիրահարած էր Արայի, և կը ինզրէր որ, եթէ Ասորեստանի գահը բազմել իսկ չէր ուզեր, Նինուէ գար անգամ մը, զոնէ ժամանակ անցընէր իրեն հետ, արքունիքին մէջ, իր տափանքը յաղեցնէր ու յետոյ առատ պարգեւներով իր հայրենիքը վերադառնար:

Այս առաջին պատուիրակութիւնը ձեռնուեանայ կը վերադառնայ Նինուէ, Արայի մերժողական պատասխանը բերելով Շամիրամի: Սակայն այս վերջինը չի՛ յուսահատիր, երկրորդ պատուիրակութիւն մը կը զրկէ Արայի, մեծամեծ խոտուումներով: Արայ անզրպուելի կը մընայ իր նախնին որոշման մէջ, չուզեր դրժել իր ամուսնական ուխտին դէմ, զոր կնքած էր իր օրինաւոր կնոջ՝ Նուարդի հետ: Շամիրամ կը բորբոքի, երրորդ, չորրորդ, հինգերորդ անգամ, ուրիշ պատուիրակութիւններ կը զրկէ, որոնք սակայն ամենքն ալ կը ձախողին:

Զայրացած, Շամիրամ պատերազմ կը յայտարարէ Արայի դէմ, և ինք անձամբ կ'անցնի իր զօրքերուն գլուխը, որոնց խտաբ կը պատուիրէ զգուշանալ մահացու հարուածներ ուղղելէ Արային, և ջանալ ողջ ողջ բռնել զանի ու բերել իր առջև։

Ասորեստանեան բանակը հասաւ Արայի դաշտը, ալսինքն Արարատ, ուր համախմբուած էին արդէն հայկական զօրազունները։ Ճակատամարտի խառնակութեան մէջ ինկաւ Արայ, մահացու կերպով վիրաւորուած՝ հասարակ գինւորէ մը։ Հայոց նահապետի մահուն յուրը թշնամի բանակին մէջ տարածուեցաւ վայրկենապէս և հասաւ մինչև Շամիրամի ականջը։ Թագուհին կակիծէն ինքզինք կորսնցուց, մեծ սուգով սղորոց Արայի մահը, և հրամայեց անմիջապէս զազրեցնել թշնամութիւնները։ Յետոյ Արայի դիակը փնտռել ու զտոնել տարով, ապահով տեղ մը դնել տուաւ, յուսադով թէ զիւթական հնարներով պիտի յաջողէր վերակենդանացնել զանի։


Սակայն հայկական զօրքերը, իրենց նահապետին եղբրական վախճանը տեսնելով, աւելի զրգռուեցան և ուղեցին անոր մահուն վրէժը լուծել, ուստի կատաղի թափով մը յարձակելով Շամիրամի բանակին վրայ, մեծ ջարդ մը տուին։ Շամիրամ նկատելով որ զիւթական միջոցներով կարելի չէր ըլլար յարուցանել իր սիրականը, և թէ՛ մահուանդ, դիակը նեխած էր արդէն, հրամայեց խորունկ փոսի մը մէջ նետել զայն ու ծածկել աչքերէ։ Յետոյ, իր հոմանիներէն մէկը շքեղ հագուստներով զարդարելով, լուր տարածեց թէ ատուածները լիզելով կենդանացուցած են Արան։ Իւ այս շինուա զրոյցին հաստատութեան իրրեւ գրաւական, դեւի արձան մը կանգնել տուաւ իսկոյն և սկսաւ ի ոչյան երախտագիտութեան, զո՞ մտուցանել անոր։

Հայոց զօրքերը հաւատ ընծայեցին այդ սուտին, և ժամանակի մը համար զաղբեցուցին իրենց շարձակումները, և Շամիրամէն ինդրեցին իրենց վերադարձրնել յարուցեալ նահապետին։ Ասորեստանի թագուհին մերժեց անոնց խնդրանքը, պատրուակելով թէ՛ Արայ պատանդ պիտի մնար իրեն քով։ Յետոյ, Արայի կարգոս որդին, որ տասներկու տարու պատանեակ մըն էր, Հայոց նահապետ կարգեց և իր սիրական Արային յիշատակը յաւերժացնելու համար, կարգոսի անունը փոխեց Արայի։

Այսպէս վերջացաւ Արայի ու Շամիրամի պատերազմը։ Ասորեստանի թագուհին, Հայաստանի գեղեցկութենէն հրապուրուած, ժամանակ մը հոն ապրեցաւ իր բանակով։

Որքնային կը պատմէ թէ Շամիրամ, Հայոց երկրին գեղեցկութիւնը, օգերուն մաքրութիւնը, վճիտ ու ականակիտ աղբիւրները տեսնելով, շատ ախորժեցաւ և Արայի դաշտին մէջ (Արարատ), Աղթամարայ ծովին արեւելեան կողմը հոյակապ կառոյցներ բարձրացուց,

և ահագին ամբարտակ մը շինեց ծովին եզերքը, նաև հրաշակերտ քաղաք մը. նոյնինքն Վանը: Այս շինութիւններուն համար 12000 զործաւորներ և 600 հմուտ ճարտարագետներ բանկցան, ինչպէս կը յիշատակէ նաև Սարգսն (Գիրք ժԱ. 529 և ժԲ. 559):



ՇԱՄԻՐԱՄ ԿՈՂԲԱՅ ԱՐԱՅ ԳԵՂԵՑԻԿԸ

Շամիրամ, ծովեզերքի թուճքին շինութիւնը զլուխ հանելէ յետոյ, Նինուէ վերադարձաւ :

Այնուհետեւ, ամէն տարի, իր տեղը Մարաց նահապետներէն Չրադաշտ անուն մէկը փոխանորդ զնելով Նինուէ, ինք Հայաստան կուգար, ամառը հոն անցընելու համար :

Միկիլիացի Դիողորոսը կը պատմէ թէ Շամիրամ, 150 ոտք երկայն և 24 ոտք հաստ անազին քար մը հանել տալով Հայաստանի լեռներէն, սայլերով զայն զետը բերեր իջեցուցեր, և լաստերով փոխադրել տուեր է Բարելոն. այդ քարը, կ'ըսէ նոյն պատմիչը, արքունի պողոտային վրայ տնկել տուաւ, ճշմարիտ զլուխ գործոց մը, որ աշխարհի եօթը հրաշայիքներէն կը համարուի :

Հ. Մ. Չամբեան հետեւեալ շահեկան ծանօթութիւնները կուտայ Չրադաշտի մասին. —

« Խորենացիին յիշած Չրադաշտին վրայ շատ խօսուած է : Մատենագիրները շատ մը Չրադաշտներ կը թուեն, որոնց մասին զանազան բաներ կը խօսին, յորջորջելով զանի Զօրօսադը, Զարադէ կամ Զարդնես, եւայլն :

« Առաջին Չրադաշտը պարսիկ կը թուէր ըլլալ՝ ըստ Լայէրտէսի և մարապարսիկ՝ ըստ Շուիտի. Պարսից մէջ մոգութեան հեղինակը կը համարուի ան, և, ինչպէս կը գրէ Պլատոն, Որմիզդի որդին էր : Ասոր վրայ կ'առասպելին թէ՛ հրեղէն լեռնէ մը վար իջած է իր ժողովուրդին քով, և այդ պատճառով է որ կ'ըսուի թէ շանթահար մեռած է Կ'երեւայ թէ ան է նոյն պարսից նահապետը՝ առասպելական Բիւրասպի Ամգահակը, զոր Խորենացիին կը յիշէ (Գիբի Ա. գլ, 31 ի վերջը) :

« Երկրորդը՝ Քաղզէացի կը կարծուի, և ան ալ եղած է քաղզէութեան հարիչը, աստղերու զննողը, և գուշակութիւններ աւանդողը : Հրէից վարդապետները կը պատմեն ասոր համար թէ՛ նոյնինքն Նոյի կրօսիք որդին է, Քամը ։ Այս մօզը 20000 ոտանաւորներ ունէր, զորոնք, ըստ Պլինիոսի (Չ. 1) մեկնած է Հերմիպէս անուն մէկը, և որոնց մէկ քանի կտորները մինչեւ ցարդ կը գտնուին ։ Կ'երեւայ թէ այս է Խորենացիին յիշած Չրադաշտ մօզը (Ա. 5), ևն :

« Երրորդը՝ Բակորիոյ թագաւորն էր, որ Նինոսի հետ պատերազմած է, ևն : Թէև Յուստինոս ասոր համար կ'ըսէ թէ մոգութեան առաջին հարիչն է, սակայն, կ'երեւայ թէ առաջին Չրադաշտին հետ ջիւթելով ըսած է :

« Չորրորդը՝ Մարաց իշխանն էր, զոր Կղեմէս Աղեքոսանդրացին ու կը յիշէ. և ասիկա է զոր ոմանք Ասորեստանցի կը համարեն, այն որ Շամիրամի կողմէն իր թագաւորութեան տեղապահ և խնամատար

կարգուեցաւ, և զոր Խորենացին ալ կը յիշէ, նոյնպէս Եւսեբիոս՝ ժամանակագրութեան մէջ զանի Շամիրամի ժամանակակից կը զնէ :

« Հինդերորդն է Պամիլիացի Երոս Արմնիոսը, զոր ոմանք հայ կը կարծեն : Վագերիոս Մաքսիմոսի և Մակրորիոսի աւանդութեան համաձայն, ասոր մասին Պատան կը գրէ թէ՛ պատերազմի մէջ ինկած մեռած, և տասն օրէն սղջնցած է դարձեալ : Նոյնը կը յիշէ Կըղեմէս Աղեքսանդրացին, աւելցնելով թէ նոյն ինքն այս Զրաղաշտը, իր գիրքին մէջ իր անձի մասին հետեւեալը գրած է. — Ասոնք զբրեց ազգով Պամիլիացի Հայոց որդի Զրաղաշտը : Երբ որ ես պատերազմի մէջ մեռայ, երկրին ներքեւ, աստուածներէն իմաստութիւնը սորվեցայ : Այնորիոս ալ (Ընդդէմ Հերան. Գիրք Ա.), այսպէս կը գրէ. — Զրաղաշտ... հայ՝ Ոստանէի թուր. իսկ մատենագիր Կիւրղերը զանի հայ կը յորջորջէ Ոստանէի որդի » :

« Ասոնց նման ուրիշ քանի մը Զրաղաշտներ ալ կը յիշեն մատենագիրները, և ամէնուն գործերը, ինչպէս նաև անոնց անունները խառնուած են իրարու, որոնց մասին շատ բաներ կը գրէ անգլիացի Թովմաս Լաթանդէս, իմաստասէրներու ազանդներուն վերջը. — (Հաս. Գ. 251-333) ևն. :

« Բայց կ'արժէ գիտնալ թէ, ինչպէս կ'երեւայ, այս Զրաղաշտ բառը մոգ կը նշանակէ, և այդ պատճառով, ոմանք զայն աստիճան քառանկար կրատուգրանեն, ուրիշներ՝ քաղուն կրակին հնարիչը կամ գաղցնիխներուն պահիբը, ուրիշներ ալ ուրիշ տեսակ : Եւ որովհետև աշխարհի մէջ երեւելի մոգերուն, աստղագէտներուն թիւը շատ եղաւ, զանոնք մոգեր կամ զրաղաշտներ կոչեցին, իսկ մոգութեան իրերը զրաղաշտական կամ զրաղեշական, ինչպէս կը տեսնուի Եղիշէի Պատմութեան մէջ (Գլ. Ը. 143) : Թերեւս այս մտքով է որ Խորենացին Զրաղաշտը յիշելուն՝ անոր կը կցէ մոգ բառն ալ իբրև անոր բացայայտիչը, ևն. » :

Ազգերու պատմութեան մէջ, իրաւ է, պատերազմները կարեւոր տեղ մը կը զբաւեն, սակայն ուրիշ ազգակիներ ալ կան, որոնք ո՛չ նուազ չափով մը կը ներգործեն անոնց ճակատագրին վրայ : Այս ազգակիներն են տեղափոխութիւնները, արշաւանքները, ևն. : Ուստի, ընդհատելով պահ մը մեր պատմութեան թելը, կը փափագինք մեր ընթերցողները տեղեակ ու գիտակ ընել, մեր ժամանակակից գիտուններուն հնախուզական ուսումնասիրութեանց արդիւնքին, յիշելով միեւնոյն ժամանակ ՚ին դարերու պատմագիրներուն վկայութիւնները, որոնք կը վերաբերին մասնաւորապէս մեր Արմենեան և Հայ անուններուն, ինչպէս նաև Քեսացիներուն ու Արմենահայ ցեղախումբերու շուերուն :

Գէորգ Ասլան իր Հայ ժողովուրդին վրայ Պատմական Ուսումնասիրութիւններ անուն ծանօթ գրքին մէջ ամփոփած է արդէն բոլոր այդ ծանօթութիւնները, զորոնք թարգմանարար կ'արտագրենք այս էջերուն մէջ. —

« Փոքր Ասիոյ հիւսիս-արեւմտեան կողմը, հոն ուր Հելլետայոնտան ու Վոսիորը հազիւ կ'անջատեն Ասիան Եւրոպայէն, պատմութեան նախագոյն դարերուն սկիզբէն ի վեր իբր անցքի տեղ մը ծառայած է թափառական ազգերու տեղափոխութեան համար, Պալքաններու թերակղզին գալթած ժողովուրդները, ինչպէս Թրակացիները, Տրէրները, կորեցին անցան ծովին այն երկու բազուկներէն, որոնք գիրենք Ասիայէն կը բաժնէին: Նոր ցեղերու խառ մը քիչ քիչ զբաւած էր թերակղզին, մաս մը՝ հին բնիկները հոնկէ վճռաւ, մաս մըն ալ՝ անոնց վրայ տեղաւորուելով՝ զանոնք կլլած էր: Եւրոպական արմատէ այս ազգերուն մէջէն Փուլգները, զասական հեղինակներու Փուլգիացիները, իրենց մէկ մասը Թրակիա թողուցին ու իրենք խուժեցին Ասիա (Հերոդոտ է. 37. — Ստրաբոն ԻՖ. 3): Ասոնք գրաւեցին Միւսիան, Բիթլիւնիան և իրենց ճամբան շարունակելով, գացին հաստատուիլ Սանգարիոսի ու Մէանդրի բարձր հովիտներէն ոռոգուած դաւառներուն մէջ: Իրենց նոր հայրենիքը, որուն Փուլգիա անունը տուին, կը տարածուէր Պրոպոնտիսէն մինչև Ալիս: Բարձրագիր Սանգարիոսի աւազանին մէջ է որ կը բարձրանային ազգին ամէնէն պատկառելի պետերուն կամ թագաւորներուն՝ Միդասի, Դորիլոսի, Դորիլոսի բերդաքաղաքներն ու դղեակները: Այս հեռաւոր լեռնադաշտին վրայ, Փուլգիացիներուն քաղաքակրթութիւնը, իր կզգիացման պատճառով, մասնաւոր դրոշմ մը կը կրէր: Իրենց կրօնքը բազադրեալ էր իրենց քաղաքակրթութեան պէս, խառնուած էր ասիական ու եւրոպական տարրերով: (Մասք. Հին Պատմութիւն Արեւելեան ժողովուրդց): Թրակեան մասնաբաժնաներուն խմորէն եղող Փուլգիական լեզուն՝ Արիական ընտանիքի եւրոպական բաժանումին կը վերաբերէր: Շատ փոփոխուած էր ասիական լեզուներուն հետ շփուելով, սակայն, իսկապէս միջնորդ օղակ մը կը կազմէր յունարէնի և իրանեան մասնաբաժնաներուն հետ, ինչպէս կը գրէ Կիւրդիոս: Փուլգեան այբուբենը, սակաւաթիւ արձանագրութիւններէն դատելով, յունական ծագում ունի. տառերը խիստ շատ կը նմանին յունական ամենահին տառերուն, ինչպէս է Թէրայինը: Բաց ի քանի մը յատուկ անուններէ, գիտունները մինչև ցարդ չեն կրցած ո՛չ մէկ խմատ հանել Փուլգեան արձանագրութեանց ընթերցումէն, որոնց զօրածութիւնը դադրած ըլլալ կը թուի գրեթէ է. Դարուն կէսէն ի վեր (Ք. Ա.), Կիմերեաններուն արշաւանքէն աւերուած, Փուլգիան չուտով ինկաւ Լիւդիոյ թագաւորներուն լուծին տակ. անհետացաւ

պատմութենէն և թողուց լո՛կ գերեզմաններ, ապառաժի մէջ փոր-
ւած քարանձաւներ ու մէկ քանի քանդակներ:

Փոխգլխացիները, ինչպէս նաև Փոքր Ասիա խուժող միւս թը-
րակեան ցեղախումբերը, չէին կրցած վռնտել Մուշքիները, Տարալ-
ները, Մէշէխներն ու Ս. Գրքի աւանդութեանց Տուբալները, զանա-
զան ծագումներով ժողովուրդներ, որոնք ամենա՛հին ժամանակներէ ի
վեր Կապադովկիոյ ու դասական Պոնտոսի մէջ կը բնակէին: Մուշքի-
ները կը գրաւէին նաև Կատանիան և Կապադովկիական Կիլիկիան^(*)
ուրկէ ծագում առաւ Կատանացիներուն անունը, որով սկսան յոր-
ջորջուիլ անոնք ժամանակ մը վերջ: Ասոնք հիմնած էին Մաժական,
Արգէտսի ոռքը, և Կոմանուն կամ Կոմանան՝ Տօրոսի մէջ: Երկար
ժամանակ Ասորեստանի հետ կռուի բռնուած և Ասուրբանիբալէն Ա-
սուրհադոնէն նուաճուած, Փոխգլխացիներուն պէս, իրենք ալ քան-
դրւեցան ու ցիր ու ցան եղան Կիմերեան արշաւանքին տակ:

Փոխգլխոյ հարաւակողմը, Տօրոսի շրջանակին մէջ կ'ապրէին Խե-
տիները, Հատիները, Աստուածաշունչին Քետացիները, այսպէս յոր-
ջորջուած՝ Խետի կամ Խատի ըսուած դաւառի մը անունովը, զոր և-
գիպտական և ասորեստանեան արձանագրութիւնները մեզի կը ճանչ-
ցընեն ժԹ. դարէն իվեր (Ք. Ա.): Այս ժողովուրդները, որոնց՝ Քե-
տացիներ կամ Հիթիանք անունը տուած են զիտունները, հաւանա-
կանօրէն այսպէս ծագումներ ունէին. ոմանք սեմական ցեղէ, ու-
րիշներ՝ արիական ցեղէ և կը ներկայացնէին տարբեր ազգեր, որոնք,
հիւսիսի կողմերը, Կապադովկիոյ Մուշքիներուն մօտ էին ու կը խառ-
նուէին անոնց հետ: Սիւրիոյ հիւսիսի կողմը, Կիլիկիոյ մէջ, Տօրոսի
մէջ, Կօմազինէի ու Կատանիոյ մէջ, կազմած էին փոքրիկ պետա-
ւթիւններ, որոնց մէկ քանիները մարտնչած էին Եգիպտոսի և Ասորես-
տանի դէմ:

Ժ. և ԺԱ. դարուն (Ք. Ա.) Քետացիները տարած էին իրենց
զէնքերը Փոքր Ասիոյ լեռնադաշտին վրայ, Գաղատիա և նոյնիսկ մինչ-
չև Եգէական ծովը: Սիւրիոյ Քետացիները կռուած էին Եգիպտոսի Փա-
րաօններուն դէմ, և դաշնակցութիւն մը կնքած էին Թամաէս Բ. ի
հետ: Խատիի գերիշխանութիւնը (հեգեմօնի) ինկաւ Սարգօնի վեր-
ջին հարուածին տակ 115ին(Ք. Ա.): Քարքէնիչ եղաւ ասորեստանեան
կառավարիչի մը բնակավայրը, և Տօրոսի, Կօմանայի, Մելիտի նա-
հանգը, մէկ քանի տարի վերջ, ուրիշ ասորեստանեան նահանգ մը կազ-

(*) Կաստնիան, Ստրաբոնի խիստ յսակ նկարագրութեան համա-
ձայն, իսկ եւ իսկ ազդի Ալպսանի գաւառակն է, որուն մէջէն կ'անցնի
Պիւրամոսը (Ջահան), որուն ակը դաշտին կեդրոնը՝ կը գտնուի: (Տե՛ս
Սարգսոն, ԺԲ. 2):

մնց: Յետոյ ասոնք տլ տասնորդուեցան ու ցիրուցան եղան Կիմերեան-
ներէն: Իրենց տիրապետութեան յիշատակը բոլորովին անհետացաւ
յետագայ սերունդներուն միտքէն, և իրենց անունը ջնջուեցաւ պատ-
մութենէն: Ի վերջոյ շփոթուեցան իրենց եգիպտական ու ասորեստան-
եան հակառակորդներուն հետ:

Եգիպտացիներուն վերագրուած է Փոքր Ասիոյ յաղթական զրա-
ւում մը, և Քարաբլի պատերազմիկները, Իզմիրի մօտ, Սեսոսարխի
պատկերը նկատուեցան, ինչպէս կը գրէ Հերոդոտոս: Գաղատիոյ մէջ
Բագադ - Քէնիի, Էօրդիւքի քետական յիշատակարանները, քիչ ժա-
մանակ առաջ, Ասորեստանցիներուն ու Մեղացիներուն կը վերադրու-
ւէին: Այն արձանագրութիւնները, զորոնք Քեսացիները թողուցած են
Սիւրիոյ հիւսիսակողմը, Տօրոսի մէջ, Գաղատիոյ և Մելիտինէի մէջ,
ցոյց կուտան թէ այս ժողովուրդները, նոյն վաղնջական ժամանակնե-
րուն մէջ, հասած էին քաղաքակրթութեան որոշ աստիճանի մը, հա-
րըստացած էին երկրագործութեամբ և նոյնիսկ ճարտարարուեստով.
կառուցած էին անթիւ բերդեր, քաղաքներ, ինչպէս Քարքէնի՝ Եփ-
րատի վրայ, որ մեծ միներանոցը դարձած էր Սիւրիայէն Միջագետք
զացող կտրաւաններուն: Իրենց մեհնական գիրի սիստէմը, եգիպտա-
կան սիստէմէն խիստ տարբեր, ղեռ անյուժելի կը մնայ^(*) և արձանա-
գրութիւնները բաւականաչափ տեղեկութիւններ չեն տար մեզի ղերին
վրայ, զոր ասոնք կատարած են Փոքր Ասիոյ պատմութեանը մէջ:

Քեսացիները կամ իտալիները, որոնք տարածուած էին թերակղզ-
դիին արևելեան կողմը, Մելիտինէի և Մօփիքի մէջ, հարկադրուած էին
գլուխ ձուլու գիրենք չըջապատող սաղմիկ ցեղերուն առջև. քանի
քանի անգամներ հանդիպած էին Ուրարտուի թագաւորներուն և Ասո-
րեստանեան ինքնակալներու զէնքերուն: Նուաճուեցան Սարգուրիսէն,
Ռուսասէն և պարտաւորուեցան տուրք վճարելու Սարգօնի և ասոր յա-
ջորդներուն, որոնք չարունակ կ'աւերէին անոնց երկիրը: Ինչպէս կը
տեսնուի, խաղաղ բնակչութիւններ էին, հովիւներ կամ հողագործներ,
իրենց աշխատութեան արդիւնքովը կ'ապրէին, երբ ի վերջոյ, Կիմեր-
եան արշաւանքը վրայ հասաւ փճացնելու թէ՛ գիրենք և թէ՛ Ալիսի
բարձր հովիտներուն իրենց եղբայրները: Իրենցմէ վերապրողները ձուլ-
ուած են անտարակոյս ուրիշ ժողովուրդներու, հաւանականօրէն արմեն-
եան ցեղախումբերու զանգուածին մէջ, որոնք հաստատուած էին Եփ-
րատի երկիրներուն մէջ, կիմերեան արշաւանքի հոսանքէն մղուած:
Պատելով իսկ անունէն զոր Արմենեանները կուտան իրենք իրենց,

(*) Շատ մը գիտնականներ, Սէյս, Մրնո, Եկնարն յաջողած են արգէն
քափանցել անոնց իմաստը, Հիբեան արձանագրութիւններուն մաս-
նաբարբաւը մօտեցնելով ճիշդ եւրոպայիս լեզուներուն:

կարելի է ենթադրել թէ՛ պատմական դարերու արմենեան ժողովուրդը կազմուած է երկու տարրերէ, մէկը՝ Փոլագեան կամ Թրակեան ծագումէ, Արմէն կոչուած, միւսը՝ ասիական խմորէ, հայ կոչուած, բայց որուն յիշատակը չը գտնուիր ոչ ուրեք: Մինչև ցարդ, ո՛չ մէկ վաւերաթուղթ չըսեր մեզի թէ՛ այս հայ անունը որոշ ցեղախումբի՞ մըն է թէ՛ Խասի, Խաս, կամ Խեսիէն այլասերած ձևը, կամ թէ՛ չորոշեր Արարատի նախնի բնակիչները՝ Խալախները: Հայի կամ Խալսի հանգիտութիւնը հաւանական կ'երևայ, երբ նկատենք սա իրողութիւնը թէ՛ Ուրարտուի Խալախ աստուածին անունը ստուգուած է Հայերուն մէջ, Հայի ձևին տակ, և թէ՛ Մովսէս Խորենացին այս միտքբանական անձնաւորութեան մէջ կը տեսնէ Հայերուն նախահայրը: Իրենց ամբողջական առումովը, Հայերը, այս կերպով, խառնուող մը կը ներկայացընեն Արեւմուտքէն եկող Արմեններուն և Արարատի Խաղախներուն:

Ասով կը հաստատուի այն աւելի կամ նուազ տարտամ աւանդութիւնը, որ Հայերը կը սերեցնէ Ասքանազէն, (*) այսինքն Սկիւթացի ժողովուրդներէն: Բայց Հայերը գիտեն Խալդի կամ Խաղդիբ յորջորջումը, և զայն իրենց սղզային անունին հետ չեն շփոթեր: Վանի յիշատակարաններուն և արձանագրութիւններուն մէջ կը տեսնեն Շամիրամի ձեռակերտը և իրենցինէն տարրեր լեզու մը: Եւ դարձեալ, մեր օրով երևան հանուած յիշատակարանները ցոյց կուտան թէ՛ Խալախները հասարակաց ոչինչ ունին Հայերուն հետ, լեզուին, կրօնին, բարքերուն և քաղաքակրթութեան կողմանէ:

Ամէն պարագայի մէջ, Արմենահայերը, իրենց պատմութեան արշալոյսին մէջ, կ'երևան այնպիսի դիմագծերու տակ, որ Ուրարտուներուն ու Հերոդոտի Ալարողեաններուն հետ իրենց հանգիտութիւնը խիստ մեծ առարկութիւններ կը յարուցանէ: Մինչև ցարդ Հայ յորջորջումին նկատմամբ մեր ունեցած տգիտութեան մէջ Յ. Միւլլէրի հետ կը հարցնենք թէ՛ արդեօք ասիկա պարզ մակդիր մը չէ՞, սանուկրթուէն ծագած, հասի կամ հախի բառը տէրջ կամ մեծաւորի իմաստունեւորով: Բայց երբ աչքի առջև բերենք Ալիսի ու Եփրատի սահմաններուն մէջ Խալախներու գոյութիւնը, հնդեւրոպական լեզուն, զօր

(*) Հայերուն մեջ պահուած աւանդուրիւն մըն այ գանոնք Թորգոմէն (Թօգ-Ուրմա) եւ Աստանագէն կը սերեցնէ: Թօգ-Ուրմայէ սերող Արմենները, Հայերը, այդ աւանդուրեան համաձայն, Սկիւթացիներէն ծագում առած են եղեր. բան մը, որուն մինչև ցարդ կը հաւասան Վրացիները, եւ որուն համեմատ իբր քե Իբրացիները Լեզիներն ու Հայերը միեւնոյն ծագումէն են եղեր եւ այս վերջիններուն նախահայրը Աբաս՝ կամ Աբոս անուն անձնաւորուրիւն մըն է եղեր:

Խատինները կը խօսէին ըստ երեւոյթին, ինչպէս նաեւ Փոքր Ասիոյ ժողովուրդներուն մեծագոյն մասը, Խասի կամ Հասսի յորջորջումներուն աչքի դարնող նմանութիւնը՝ Հայի հետ, պէտք է ընդունինք որ Հայերը՝ նոյնինքն Ալիսի ու Եփրատի բարձր գետանովիաներուն Խատիններէն վերապրողներն են։ Այս վերջինները համաձուլուեցան Արմեններուն հետ, բայց պահեցին իրենց անունը, որ եղաւ յետոյ Հայ ազգային յորջորջումը։ Սակայն ձուլումէն ծագումաւ ժողովուրդ մը, որ այդ երկու տարրերուն ընդունակութիւններն ու բարքերն ունէր, խաղաղ, աշխատասէր, բայց նաեւ յամառ ու տոկուն, և առիթը ներկայանալուն, ճակատամարտի դաշտերը վազելու կարող։

Արմէնները երեւութապէս թրակեան ծագումէ ցեղախումբերը կը կազմէին, որոնք Փոխզիացիներուն նախորդած ու յաջորդած էին իրենց տեղափոխութեան մէջ զէպի Փոքր Ասիա։ Հերոզոտ կը հաստատէ Արմենեաններուն ազգականութիւնը՝ Փոխզիացիներուն հետ, ինչպէս նաեւ Եւզոքս, որ գիտէ թէ անոնց լեզուն փոխզեան մասնաբարբառին կը նմանի։

Եթէ պատմութիւնը համր է Արմէններու չուն նկատմամբ, մենք, աւանդութենէ գիտենք որ անոնց նախնիքները Փոքր Ասիա եկան Թրակիոյ կողմէն, նախապէս անուանադիր հերոսի մը առասպելական ձեւին տակ, զոր կը պատմէ Սարարոն, որուն համաձայն, Թեսալիացի Արմենիոսը իր ծննդավայր Արմենիոն քաղաքը թողլով՝ Պոնտոսեան երկիրները մտաւ Յասոնի ետեւէն։

Եթէ հաւատ ընծայել պէտք է Փարսպացի Կիրեղ ու Լարինցի Մետրեոս պատմիչներուն — երկուքն ալ Մեծն Աղեքսանդրի զէնքի ընկերները —, Արմենիան իր անունը պարտի եղեր Արմենոսին(*)։ Յունական աւանդութիւններուն իբր նեցուկ, ազգային պատմագիրները՝ մարդկութեան որդիներու ծննդաբանութիւնը մը մէջ կը բերեն,

(*) Եեկարն. — Հիբեանի եւ Արմենեանի. — Սքազպուրկի գիտուն բրոնզեօրին կարծիքով Խասիները կամ Հասիները նախնական Հայերն են, որոնք, երկար ժամանակ Կիլիկիոյ ծովեզերքները բնակելէ յետոյ, մինչեւ Փոխզիա արածուեցան եւ Ը. դարուն (Ք. Ա.) միջոցները մեան արդի Հայաստանը, ուր, հայկական արեւաւնիքն օգտին, իրեցին Փալիսներուն կամ Ուրարդուի բնակիչներուն։ Եեկարն՝ խալ կամ հալ ձեւը Խասիէն առաջ եկած կը համարի, որուն մէջ ի եւ զի այլասերած են հի եւ իի։ Պելլի կ'ընդունի քէ առնչութիւն մը կայ Կիմերեաններուն եւ Արմենեաններուն չուերուն միջեւ։ Ընդհանրապէս արդի բնագոյնները յօժարակամ կ'ընդունին Հայերուն ու Փոխզիացիներուն ազգականութիւնը։ Տօմաշեֆ անոնց մէջ կը տեսնէ Թրակեան սերունդ մը,

որուն մէջ Թորգոմը (Թօղ-Արմա) կը սերի Տիրասէն, զոր Ս. Գրոց Մեկնիչները կ'ենթադրեն Թրակիոյ ներկայացուցիչը: Յարեթէն վերջ երրորդ նահապետը ծնաւ երեք որդիներ, Ասքանազ, Ռիփադ և Թորգոմ. և որովհետեւ ինք էր սեփականատէրը Թրակացիներու երկրին, յարմար դատեց երեքի բաժնել այն թագաւորութիւնն ու իր ուրիշ կայուածները, զանոնք իբր ժառանգութիւն իր երեք որդիներուն տալու համար: Թորգոմ յետոյ իւրացնելով Հայաստանը, և ինք ըլլալով անոր վեհապետը, անունն ու հարստութիւնը պահեց այս թագաւորութեան, որ մինչեւ այն ատեն Ասփանազ անունը կը կրէր: Այսպէս ուրեմն, կը գրէ Յովհաննէս Կաթողիկոս իր Հայոց Պատմութիւն անուն գիրքին մէջ, լաւ գիտցէք որ մենք կը սերինք միանգամայն Ասքանազէն ու Թորգոմի տունէն: Սակայն մենք չենք գիտեր առաջին իջեւանները, որոնց հետեւեցան Արմեն ցեղախումբերը Փոքր Ասիոյ մէջէն անցնելու համար: Ո՛չ մէկ վաւերաթուղթ կայ որ մեզի ծանօթացնէ այս ցեղախումբերու կրած բաղդը, այն թուականներուն մէջ, երբ ասոնք տակաւին սեփականատէր դարձած չէին Եփրատի բարձր հովիտներուն: Անտարակոյս մղուեցան գէպի Ալիսի բարձր հովիտները, ուր երկար ժամանակ ապրեցան անծանօթ վիճակի մը մէջ:

Ասոնք բաղխումներ ունեցան այս սանձաններուն մէջ բնակող ուրիշ ցեղախումբերուն հետ. ճանչցան Մեկնիներն ու Տուբայները, խոնարհեցան Ասորեստանի բանակներուն առջև, բայց պահեցին իրենց լեզուն ու անհատականութիւնը: Այս հեռաւոր դարերէն մեզի հասած միակ արձագանգը՝ դարձեալ Մովսէս Խորենացիին առասպելական պատմութեան է, Արամի և Զայրմայրի, ինչպէս նաև ասոնց բնակութեան մասին Կապադովկիոյ և Փոխիզիոյ սանձաններուն մէջ: Արամ, ազգին առաջին նահապետներէն մէկը, կուռի բռնուկը է եղեր Ասորեստանցիներուն հետ և Քաղկայ որդին Պայսալիս Տրտանը հալածեր է, Կապադովկիոյ մէկ մասը գնելու համար իր տիրապետութեան տակ, այն դարուն, երբ Նինոս կը թագաւորէ եղեր Ասորեստանի մէջ: Զայրմայր, Արամի յաջորդներէն մէկը, Տրովադայի օգնութեան գացեր է եղեր: Արմենները կ'ապրէին ըստ բաղդի, իրենց պետերուն իշխանութեան տակ, երբ Սարգօնի բանակները Կապադովկիա ու Մեկնիտինէ ասպատակեցին (718-710): Պարտաւորուեցան կրել Նինուէական երկրակալին ծանր թախը. իր պետերը հարկ վճարեցին և երդումով հնազանդութիւն ուխտեցին մահուրնէ կամ աքսորէ ճողոպրելու համար: Կը թուի թէ ասորեստանեան տիրապետութիւնը՝ ազդանշան եղաւ նոր գաղթային հոսանքի մը ղէպի արեւելք, գաղթականութիւն մը, որ նպաստաւորուեցաւ Ռուբարուի թագաւորներուն ընծաներով, որոնց քաղաքականութիւնը կը կայանար բարեօք յարաբերութիւններ մշակելու Փոքր Ասիոյ ժողովուրդներուն հետ, զանոնք

պատե՛հ ստիժի՛ն իրենց տուե՛ն քաշել տանելու համար Ասորեստանի ղէմ իրենց մղած կռիւին մէջ: Անին կամ արեւմտեան Եփրատի վրայի կամախը, զոր տղզային պատմագիրները իբրև արքայական դերեղմաններու տեղ մը կը ցուցնեն մեզի: Կ'երեւայ թէ իջեւանին գլխաւոր կէտերէն մին եղած է(*): Դէպի արեւելք խաղաղքը շնչուեցաւ անտարակոյս անսպասելի ղէպքի մը պատճառով, որ արեւելեան աշխարհը պիտի յեղաշրջէր և պիտի դիւրացնէր Հայերուն կողմէ Եփրատի բարձր հովիտներուն ստացումը:

Կովկասի հիւսիսակողմը, ևւրոպական ցամաքին լայնատարած դաշտերուն մէջ, ղէպի Պալուս - Մէօսիդի հիւսիս արեւելեան կողմը, վայրենի ցեղախումբեր կ'ապրէին, Հերոդոտի և Ստրաբոնի Կիմերեանները, սեպագիր յիշատակարաններուն Դեմիւրիները(**): Ասոնք պալքանեան երկրի Տրէններուն հետ համացեղ ժողովուրդ մըն էին: Օքսոսի դաշտերուն բնիկ ցեղախումբերէն Սկիւթացիներուն կամ Սֆուդայիներուն ևւրոպա ժամանումը՝ պարտաւորեց զանոնք թողուլ հեռանայ անկէ: Տեղախումբերէն մէկ քանիները զատուելով ամրացան տարիկեան Քերսոնէսի մէջ, բայց ստուարագոյն մասը մէօսիդեան ճահիճներէն անցին չարունակեց իր չուն և Փոքր Ասիա մտաւ, ևւքսիսեան Պոնոսի եզերքին երկայնքը քերելով և Չանոնք հետապնդող Սկիւթացիները, Արաքսի արեւելեան աւազանին մէջ տեղաւորուեցան, Մաննայի և Ուրարդուի սահմաններուն վրայ, ճիշդ իրենց հրոսախումբերուն քովը, որոնք կէս դար առաջ, ուրիշ ճամբով մը մտած ու հաստատուած էին այս գաւառին մէջ, որ իրենցմէ ընդունեց Աագաեկ(***) անունը: Կիմերեանները ղէպի արեւմուտք գացին, Եփրատի, Ալիսի, Թերմիսոնի բարձր գեակերքներուն վրայ բնակեցան ու տարածուեցան մինչև Փոխգիա: Կերեւայ թէ այս գեակերքներուն մէջ միացած են ուրիշ հրոսախումբերու, որոնք արդէն մէկ քանի տարիներ առաջ, Թրակիայէն ցամաք ելած են, Վոսփորի նեղուցին

(*) Տօմաեքի մէկ ուսումնասիրութեան նայելով, նայ գաղբականները անցած են եղեր Իփսի ու Լիւկոսի բարձր հովիտներէն, Սասայի կիրճէն Հայաստան մտնելու համար:

(**) Շրայեւ. — Դիմերեանները կը պակասեին հնդեւրոպական մեծ քնճանիին (Մաւրոն): Հայ մասեկագիրները Գամիրք արձանագրած են ասոնց անունը, և Գամիբ կոչած են դասական Կապադովկիան, ի յիշատակ Դեմիւրիներուն սիրապետութեան՝ այդ երկրին վրայ:

(***) Մաւրոն, ժ.Ա. — Պարսից Սիսական գաւառն է, Հայերուն Սիւնիքը, Սագեկ, Սագաեկ կամ Սկիւթացիներէն ծագում առած:

վերեւէն, և որոնց մէջ մասնաւորապէս Տրէրները կը յիշատակուին նախնի պատմիչներուն կողմէն: Փռիւղիայէն տարածուեցան Բիթլիւնիոյ, Կապադովկիոյ, Տօրոսի վրայ, և բովանդակ թերակղզիին մասնըւեցաւ իրենց ասպատակութեան՝ Է. Գարուն վերջերը (710(?)), Կիմերեան հրոսախումբերը, որոնք զէպի արեւելք արշաւած էին Ասորեստանցիներուն բաղխեցան և Կապադովկիոյ մէջ Ասարհադզոնէն յաղթահարուեցան 678ին: Կիմերեաններուն ասպատակութիւնները զեռ կը շարունակուէին, երբ Կասպեան ծովին եզերքէն խուժող Սկիւթացիները, նոր արշաւանքով մը Մարացիները պարտութեան մասնեցին այն պահուն, երբ որ ասոնք զեռ նոր համախմբում մը կը կազմէին Ասորեստանի վրայ յարձակելու համար: Այս վերջինը շարունակական պատերազմներով ուժասպառ եղած էր, բայց կործանել անաջ, Ասարհադզոնի որդի Ասուրբանիպալով իր կորովին մէկ վերջին փորձը ցոյց պիտի տար: Ասուրբանիպալ Ուրարդուն կարեց անցաւ Արսիանիէն ու Հարսիէն(*), Վանայ լճին հիւսիսային կողմը, Արածանիի հովիտը մտաւ, գուռառապետները հարկադրեց իրեն յարգանք ընծայելու, և հոնկէ, զէպի Արաքս ուղղուեցաւ: Գողի որդի Սահի պետը(**) ջախջախելու համար (660):

Այս ուղղով մըրիկը կարգի բերաւ ամէն մարդ, զերինները բազմաթիւ եղան և աւարը՝ ամբաւ: Սակայն զո՛ւր էր, ա՛յ կարելի չէր երբէք կասեցնել արշաւանքը, որ պիտի խուժէր Ասորեստանի վրայ: Մարաստանը պարտուեցաւ, ասպատակողները խոյացան ուղղակի Ասորեստանի վրայ: Նինուէն զերծ մնաց անոնց յարձակումէն, բայց միւս արքայանիստ քաղաքները, Քազախ, Ասուր, հիմնայատակ հըրդեհուեցան: Անոնց անցքին վրայ ամէն ինչ աւերակ դարձաւ, ճիշդ մեր ՃԱ. և ՓՆ. դարերու թրքական ու մոնղոլական արշաւանքներու օրերուն պէս. Ուրարտուի թագաւորութիւնը մահացու հարուած մը կրեց: Մուշքիներն ու Տարալները, որոնք զիմադրած էին Ասորեստանցիներուն, հազիւ ազատեցան կործանումէ: Ասոնց բեկորները հալածուեցան Եւքսինեան Պոնտոսի լեռներուն ու Եփրատի բարձր հովիտներուն մէջ, ուր Յոյները յետոյ իրենց յաջորդներ ճանչցան Մոսքերը կամ Մոսիսիկները և Տիրարէնները, ինչպէս կը գրէ Մարարոն: Անկասկած, անոնց նախորդները, այսինքն Կիմերեանները, ձուլուեցան անոնց հրոսախումբերուն մէջ, ինչպէս նաև պարտուած ժողովուրդներուն շատերը. — Մուշքիները, Տարալները, Միտիները, Ար-

(*) Արսիանիէր յայնի է րէ՛ դասական աշխարհագրութեան Արսիան պէտէ է ըլլայ, հայոց Արեւեք: Իսկ Հարսիէն՝ Պլենիսսի Արատէնը, կամ հայոց Հարքը:

(**) Սահիսն հաւանականօրէն Սասի մէկ ուրիշ ձեւն է:

մենները, Այաթները և թերակղզիին միւս ցեղախումբերը: Բայց ամէն տարի նոր պատերազմներու բռնուած այս հրոսախումբերը զժուարաւ կը դարձանէին յաղթութեան անոնց կարգերուն մէջ թողած պարագը. անոնց թիւը պակսեցաւ և իրենց զօրութիւնը կործանեցաւ այն արագութեամբ, որով բարձրացած էր, ինչպէս կը գրէ Մասթերօ: Արիւնահեղ պատերազմներէ վերջ, Մարաստանի կայսրութեան հիմնադիր Կիաքսարը, յաջողեցաւ վճռական հարուածը տալ անոնց: Այս տիրապետողներուն իշխանութիւնը քիչ տեւեց, եօթը ութը տարի միայն (634-627), ճիշդ է, բայց այս կարճ միջոցը բաւեց ասիական աշխարհին երեսը փոխելու: Այս հրոսախումբերուն աշխարհաւեր զործին հետ առնչութիւն ունի Երբայեցիներուն կրած սարսափը, զոր եզեկիէլ կը մատնանշէ ժամանակ մը վերջ. — « Ո՛ր ունիմ քեզի դէմ, Գո՛գ, իշխան Ռօսքի, Մեշքի և Տուքալի...: Քեզի զուրս հանել պիտի տամ, քեղ ու բոլոր բանակդ, ձիեր ու ձիաւորներ, Գամեր և իր բոլոր հեծելախումբերը, Թող-Արմայի տունը, Հիւսիսի (Փոքր Արջ) ծայրը, բազմաթիւ ժողովուրդներ որոնք քեզի հետ են...»: Եզեկիէլ մարդաբէն, Բարեւոն գերի տարուած, շատ մտանք գիտէր իրմէ մէկ դար առաջ պատահած դէպքերը:

Կիմերեաններուն երևումին ատենները կամ թերեւ ժամանակ մը առաջ է որ Հայերը գացին Եփրատէն անդին և ձախ եզերքի սահմաններուն մէջ հաստատուեցան: Բայց այս գաղթային շարժումը խրմբովին չեղաւ. շատ մը ցեղախումբեր Ալիսի բարձր հովիտներուն մէջ մնացին, այն գաւառներուն մէջ, որոնք յետոյ Փոքր Հայաստան կոչուեցան: Եփրատի ձախ եզերքին վրայ իրենց բնակութիւն հաստատելը զժուարութիւն չէր կրնար պատճառել այնպիսի չրջանի մը մէջ, ուր Ասորեստանցիներն և Ուրարտուցիները հարկադրուած էին այլուր տանելու իրենց զօրծողութիւնը, հսկելու համար բարբարոս հրոսախումբերուն շարժումները, որոնք կը խուժէին միանգամայն, Կովկասէն և Հելլեասպոնտի նեղուցներէն: Գալով բնիկներուն, ասոնք չէին կրնար դիմադրել, բոլորովին քանդուած ըլլալով նախընթաց պատերազմներէն, և հետեւաբար, կամայ ակամայ պիտի ձուլուէին նորեկներուն հետ: Արմեններուն նոր գրաւած նահանգը՝ լեռնոտ երկիր մըն էր. խորունկ հովիտներէ կտրտուած, որոնք երբեմն կը լայննային կանաչաւէտ դաշտեր պարզելու համար: Կը պարունակէր բազմաթիւ նահանգներ, որոնք աւելի կամ նուազ անկախ հողաւէրներու միջև բաժնուած էին. ասոնց մէջէն արձանագրութիւնները մեզի ցոյց կուտան Սիւպնան (Մոփք), Էնձիտ (Հանձիտ), Երէզ (Աքիլիսէն), Կիրզանու (Սորձէն), Գալինի (Գէրսինի(․)) նկատի ունենալով Ասուրբանիպալի, Թկլազպալասար Ա.ի և Սայմանասար Բ.ի տարած գերիներուն և աւարներուն ցուցակը, երկիրը ԺԲ. դարէն իվեր (Ք. Ա.) բնակուած էր ար-

դէն : Լեռներուն կատարները կային անթիւ անտօիկ դղեակներ, լապաշտպանուած բազմամարդ բերդաքաղաքներ, որոնցմէ մէկ քանիները, ինչպէս Ամիրի կամ Ամիր, Արդնի, Հաննի, Անգղ, Բալու, պահած են իրենց անունը մինչև մեր օրերը : Երկիրը հարուստ էր մտադրներով, գլխաւորապէս երկաթի ու պղնձի հանքերով, լեռները ծածկուած էին անտառներով, փեկան, թմրի, սարոյ, եղևնի ու կաղնի : Հովիտները կանաչ էին ու հովանուտ : Որթատունկը հոն կը ծաղկէր զէպի հարաւ նայող զառիթափներուն վրայ և այգիներուն մէջ տըկըւած էին, մեր օրերուն պէս, ծիրանիներ ու նշենիներ :

Իրենց նոր հայրենիքին մէջ է որ նորեկները, գերակշիռ դիրքի մը մէջ, ճանչցուեցան զբացի ժողովուրդներէն, Արմա, Արմայի կամ Արմենի անուան տակ, թերեւս նոյնիսկ ազգային վեհապետներուն անունովը, որոնք կը կրէին արմա մասնիկը, ինչպէս, Արմենակ, Արմա իս, Արմա սիա, Հարմա, զորոնք ազգային յիշատակները մեզի կը ներկայացնեն իրրեւ ազգին առջին նահապետները : Անոնց իշխանութեան տակ նուաճուած երկիրը կոչուեցաւ Արմենա, Արմենիկ կամ Երիւսեմ, և այս յորջորջումը յարգ գտաւ օտար ժողովուրդներուն մէջ, նախ սեմականներուն ու Երբայեցիներուն քով, Թոգ-Արմա ձեւին տակ, յետոյ Մեղացիներուն ու պարսիկներուն և աւելի յետոյ Յոյներուն ու Հռովմայեցիներուն քով : Աստուածաշունչի Թոգ-Արման(*) մէկ կողմէ Գոմերի և միւս կողմէ Գօգի, այսինքն Կապադովկիոյ ու Արարատի միջև գտնուող երկիրը, բացայայտէն, նոյնիսկ Եփրատի բարձր հովիտներուն դաւառները պէտք է եղած ըլլայ Հերոդոտի Հայաստանը(**) :

Այս յորջորջումը նախ եփրատի հովիտներուն մէջ կիրարկուած, քիչ քիչ տարածուեցաւ Ուրարտու, Բիանիա, քանի՛ Արմենահայք, պարտուած ժողովուրդներով ստուարացած, կ'արժեցնէին իրենց գերակառութիւնը, կը մանէին Արաքսի հովտին մէջ և ամէն տեղ կը պարտադրէին իրենց լեզուն : Ըստ Հերոդոտի, բուն Հայաստանը՝ հին Ուրարդուի հիւսիսարեւելեան մասը միայն կը պարունակէր : Փոխզիացիները՝ արեւելքի մէջ են և Լիւզիացիներուն սահմանակից, յետոյ կուգան Կապադովկիացիները, յետոյ Կիլիկիացիները, որոնց ետեւէն կուգան Հայերը : Մաղիանացիները բնակակից են անոնց : Եփրատ,

(*) Ծննդոց Ժ. 3. — Եզեկիէլ Իլ. ԻՂ. ԻՓ. — Բոլոր նախնի մեկնիչներուն համեմատ, Թօգ-Արմայի տունը կը ներկայացնէ Հայերը : Քրիստոնէութեան հաստատութենէ ի վեր, հայ վարդապետներն ալ ընդունեցին այս մեկնութիւնը. Թորգոմը, Եփրատակից քաղաքներէն Թոգ-Արմային այլաիփոխուած ձեւը, ընկելով ազգին նախահայր մը :

(**) Հերոդոս իր օրով լո՛կ եփրատեան Հայաստանը կը նանչնայ :

որուն մէջէն նաւով կ'անցնին, իրրեւ սահմանագլուխ կը ծառայէ Կիլիկիոյ ու Հայաստանի միջեւ: Այս երկիրը չորս նաւարկելի գետերէ կ'ուղղուի, որոնցմէ անպատճառ պէտք է անցնիլ: Առաջինը՝ Տիգրիս է, երկրորդն ու երրորդը նոյն անունն ունին, թէև շատ տարբեր ըլլան և միեւնոյն երկրէն չը ըլխին, որովհետև առաջինին ազբերակունքը կը գտնուին Հայաստանի մէջ, մինչդեռ միւսինը՝ Մաղիանացիներու երկրին մէջ. (Հերոդոտ, Ե. 49):

Ասորեստանն ինքնակալներուն վերջին պատերազմները, սկիւթական արշաւանքը, և յետոյ Մեդացիներուն յարձակումները վերջ դրած էին Ուրարտուի տէրութեան: Կիմերեաններն ու Սկիւթացիները ճամբան պատրաստած էին Հայերուն, որոնք չը թերացան գետին վաստակելու և արժեցնելու իրենց գերակշռութիւնը նոյն այն վայրերուն մէջ ուր դարերով զահակալած էր Ուրարդուն: Արմաներուն մէկ ճիւղը ծիլ մ'արձակեց ու հաստատուեցաւ ուրարտական վաղնջական վայրի մը մէջ, որ կոչուեցաւ Արմաւիր կամ Արմաւիրա(*), նոյնիսկ Արմաներուն անունովը: Բայց Իրանեաններուն գերիշխանութիւնը, որ չուտով պիտի նշողէր, Հայերուն թոյլ չի տուաւ տէրութիւն մը կազմելու, քաղաքականապէս տիրապետելու Ուրարդուի, ո՛չ ալ ամբողջովին նըպատակեցնելու իրեն նախնի քնակշռութիւնները: Հայերը քիչ յետոյ ընկուղուեցան պարսկական կայսրութեան մէջ և երկար ժամանակ ետքնէ է որ յաջողեցան իրենք իրենց կազմել անկախ թագաւորութիւն մը, երբ Աղեքսանդրի երկրակալութիւնը կործանեց Աքմենեաններուն տէրութիւնը:

Յափշտակիչ ժողովուրդներուն ճամբուն և Արևելքի ու Արևմուտքի ընդդիմամարտ գործողութեան դաշտին վրայ դրուած, Կովկասի

(*) Որովհետեւ ո՛չ մէկ բնագիր չի նշուեր այդ երջանին մէջ Արաքսի հովիտին տիրացումը, քանի մը մասնագիրներ կ'ուզեն դեպի պարսկական կայսրութեան վերջեր սանիլ այդ բուսակներ: Բայց այն ասեմ չի բացատրուիր Հայաստանի տարածութիւնը, զոր Քսենոփոն կը նշանակէ Բիւրուց նահանջին ասեմ, ո՛չ ալ Արմաւիրի հիմնադրութիւնը, որ արդէն գոյութիւն ունեցած ըլլալու եր Կիւրոսի օրով: Քստոմեոս յիշած է Արմաւիրը՝ Արմաւիրա ձեւին սակ: Միջնաբերդը կը բարձրանար Էսիփուսի նահանգին մէջ, (արձանագրութ. Մենուսի) բլուրի մը վրայ, որ այսօր Թէփէ - Տիպի կը կոչուի: Կաւմուրակ լավայի ձեւացած բլուրը դասին մեջեղը կը գտնուի մենացած, Արաքսի յասակին եզերքը: Դեռ կը տեսնուին հոն քանի մը տնէ ւաւերակներ, կիլիկոպեան որմերու փլասակներ: Աստղծները ծառայած ըլլալ կը բրտին պարսկական դրացի վայրին շինութեանը, որ Սարգարապաս կը կոչուի, նոյնպէս ւաւերակ:

աւարառու հրոսախուժներուն ասպատակութեանց ենթարկուած, Հայ-
յեքը շտրունակ ստիպուած էին մնալ պաշտպանողական դիրքին վրայ,
Կանխաւ դատապարտուած էին անփառունակ կեանքի մը, սահմանազը-
լուիներէ և աշխարհագրական համասեռութենէ զուրկ եղող այդ լեռ-
նադաշտին վրայ: Այսպիսի պայմաններ կ'արգիլէին թռիչքը, զոր
կրնային առնել անոնք: Հայեքը դէպի Մարաստանի սահմանները տա-
նող շարժումը սակայն իրենց պատմութեան նշանաւոր փուլերէն մին
է: Հայը կռնակը դարձուց իր նախարնիկ երկրին, այնուհետև մաս
կազմելու համար ասիական աշխարհին:»

Ահա ինչ որ ծանօթ է մեզի հայ ցեղի կազմակերպութեան և զա-
նազան շրջաններու մէջ իրենց կատարած քաղաքակրթական դերի մա-
սին: Այսօր, հաստատուած է վերջնականապէս թէ՛ երկրագնդին վրայ
հայ ազգին երևումը՝ պատկառելի հնութեան մը դրոշմը կը կրէ և թէ՛
ան՝ երկու գլխաւոր սարբեր կը պարունակէ իր մէջ, արմէն և հայ,
որոնք, զարեբու ընթացքին մէջ, ձուլուած են իրարու մէջ և կազմած՝
համասեռ մարմին մը, որ յաջողած է պահել իր զոյութիւնը, լեզուն
ու բարբերը, հակառակ արիւնի հեղեղներուն, որոնց մէջէն լողալով
կրցած է ինքզինք ազատել, ըլլալով Արևելքի և Արևմուտքի միջև
քաղաքակրթութեան կամուրջ մը:

Վերստին առնելով ընդհատուած պատմութեան թելը, կը վերա-
դառնանք Կարդոսի, որ Արայեան Արայ ալ կը կոչուի: Սա, Հայոց
վրայ միապետական նահապետ կարգուելէ յետոյ ծնաւ իր Անուշաւան
որդին: Պէտք է զիտնալ թէ՛ Արմենակ սօսիներու անտառներ տնկած
էր Արմաւիրի մօտ, արքունի սպարանքի դուռին դիմացը, և թէ՛ այն
շրջանին, Հայերը բնապաշտ էին, և պաշտօն կը մատուցանէին եր-
կինքի աստղերուն ու բնութեան զօրութիւններուն, ինչպէս նաև
բներեւոյթներուն: Այդ նուիրական անտառներուն մէջ բազիններ
կային, ուր քուրմերը պատգամներ կ'արձակէին ու զուշակութիւններ
կ'ընէին հմայքներով, և ընդհանրապէս, ժողովուրդին մէջ տարած-
ւած էր այն հաւատքը թէ՛ այդ սօսիներու անտառներուն մէջ աստ-
ւածներ կը բնակէին. ուտտի, սովորութիւն էր մէկը նուիրել կամ շատ
մը թանկազին տոարկաներ ձօնել ու զոհեր մատուցանել այդ աստ-
ւածտնակ անտառներուն:

Ահա՛ այս հաւանող հաւատքին վրայ հիմնուած, Կարդոս նահա-
պետը սօսիներուն աստուածութեան անունին նուիրեց իր Անուշաւան
որդին, որ այնուհետև սրբազան անձնաւորութիւն մը համարուեցաւ
և կոչուեցաւ նաև Սօս ու Սօսանուէր:

Կարդոսի նահապետութեան օրով, Ասորեստանի արքունիքին մէջ
ահագին խոտովութիւն մը պայթեցաւ: Շամիրամի որդիները, իրենց
մօր անբարոյական ու մօլի վարքը տեսնելով կը կշտամբէին զանի,

բայց այս վերջինը բնաւ կարեւորութիւն չէր սար. ընդհակառակը, կըսպաննար անոնց: Ի վերջոյ, իրենց մօր անկարգութենէն ու խառնակեցութենէն յուսահատած, որդիները խորհուրդ ըրին մէջտեղէն վերցնելու զանի. սակայն Շամիրամ, խորամանկ կին, չուտով իմացաւ իրեն դէմ լարուած դաւը, ինք աճապարեց ու ամէնքն ալ սպաննել տուաւ: Այս անգութ կոտորածէն միայն կրտսերագոյն տղան ճողոպրեցաւ, նինուասը՝ որ Զամիստս ալ կը կոչուի:



Համիրամի որդիները (Կարթիկ - Կառմէ) 2/4.

ԱՆՈՒՇԱԻԱՆ ԿԸ ՆՈՒԻՐՈՒԻ ԱՐՄԱԻՐԻ ՍՕՍԻՆԵՐՈՒՆ

Այս Նինուասը Զրադաշտին հետ միաբանած, Ծամիրամին դէմ ընդվզեցաւ և սոսկալի պատերազմ մը ծագեցաւ մօր ու տղու միջև, այնպէս որ Ծամիրամ ստիպուեցաւ փախչիլ ապաստանիլ Հայաստան, Ասորեստանի գա՛ր Նինուասի թողլով ակամայ: Բայց, Ասորեստանի փախստական թագուհին զիւրու յուսանատողներէն չէր. այս անգամ Կարդոսի հետ միացած, նորէն Նինուասի դէմ պատերազմի ելաւ, յուսալով յաղթական Նինուէ մտնել և իր ապստամբ որդիէն վրէժը լուծել: Նոյն պատերազմին մէջ երկու դաշնակիցներն ալ մեռան:

Ծամիրամ վախժուէն երկու տարու էր, քառասուն երկու տարի թագաւորած, իսկ Արայեան Կարդոս՝ երեսուն տարու էր. միայն տասնըութ տարի վարած ըլլալով իր նահապետական իշխանութիւնը:

Կարդոսի մահուընէն ետքը, որդին՝ Անուշաւան, դեռ տասնըոթս տարու պատանեակ մը, ինկաւ Նինուասի ձեռքը, և Ասորեստանի արքունիքը մնաց ո՛չ թէ իրը Հայոց իշխան, այլ իրը գերի իշխանագուն մը: Սակայն երկար չը տեւեց այս գերութիւնը, երբ չափահաս եղաւ ու զորգացաւ Անուշաւան, բարեկամներ միջնորդեցին Նինուասի մօտ, և Անուշաւան ազատ արձակուելով՝ իր երկրին մէկ մասին վերջապէս տիրացաւ, միայն հարկ վճարել խոստանալով անոր: Յետոյ, քիչ քիչ, ամբողջ երկրին բացարձակ աէրը դարձաւ, և չատ մը սըխրագործութիւններով հուշակ հանեց, որովհետեւ հզօր ու սաղանդաւոր իշխան մըն էր:

Անուշաւան իր երկարատեւ իշխանութեան մէջ պայծառացուց ու մեծցուց իր երկիրը, հայրաբար կառավարելով խաղաղ ժողովուրդը: Վախժուընըոթս տարի ալ ապրեցաւ իր հօրը Կարդոսի մահուընէն ետքը, և դժբաղդարար, անզաւակ մեռնելով ինք, երկիրը մատնուեցաւ անիշխանութեան, Հայկի ցեղապետութենէն մէկ քանի մեծ ու փոքրիկ բռնաւորներու փառամոլութեան երեսէն, որոնք իրարու ձեռքէ կը յափշտակէին Հայաստանի այնքան բերրի նահանգները: Եւ Անուշաւանի մահը՝ վերջակէտը դրաւ Հայկազանց հարստութեան նահապետական աշնքան փառաւոր շրջանին:



Պարեւ, Արբակ եւ Ջաւան նահապետները . — Երկու վաղեմի
միապետութիւններ՝ Արեւիկ եւ Սպարսա . — Յունական
բաղաճակերու բնական սկիզբը . — Փառնակ Ա. նահապետը Սեսոսդրիսեկ
կը հալածուի . — Սուր նահապետը . — Տրովադա, Գարգանոն
եւ Իլիոն բաղաճակները . — Իսրայէլացիներու անցիկ
Յորդանանէն . — Քանանացիներուն փախուսքը
Ափրիկէ, Հայաստան, եւն . — Գերուսիներ-
ուն նախաբանութիւնը . — Հաւանակ,
Վաւսակ, Հայկակ Ա., Սմբակ Ա., Առնակ, Շաւարժ Ա.,
Նորայր, Վաստ, Կար, Գոռակ, Հրանտ Ա.,
Ընձակ, Գղակ եւ Հօռոյ
նահապետները:

—

Անուշաւան անգաւակ մեռած ըլլալով, կարելի չեղաւ իրեն յա-
ջորդ մը գտնել եւ Հայաստանը մատնուեցաւ անիշխանութեան: Մէն
մի բերդատէր կամ անկախ հողատէր ինքզինք իշխան կամ նահապետ
հռչակեց, այնպէս որ իւրաքանչիւր գաւառ, նոյնիսկ գաւառակ, ու-
նեցաւ իր յատուկ տանուտէր կառավարիչը, որ կը բռնանար իր ժո-
ղովուրդին վրայ եւ ծանր տուրքերու տակ կը ճնշէր ամբողջ երկիրը:
Եւ այս անիշխանութիւնը տեւեց բաւական երկար ժամանակ:

Խորենացի, Յովհաննէս կաթողիկոս, Գրիգոր Մագիստրոս եւ Վար-
դան պատմիչ, այս շորս ազգային մատենագիրները կը յիշատակեն նա-
հապետներու շարք մը, որոնք, Անուշաւանի մահէն ետքը, շուրջ նա-
զար տարի, յաջորդաբար իշխած են Հայաստանի եւ որոնց արարքնե-
րուն վրայ ստոյգ տեղեկութիւններ կը պակսին:

Աւանդութիւնները կը պատմեն թէ՛ այս բռնաւորիկներուն մէջ
նշանաւոր եղած է Պարեւ երիտասարդը, անպարտելի ճանչցուած, հայ-
կազուն իշխան մը, որ, Անուշաւանէն ետքը, իր իշխանութեան տակ
նուաճած է Հայերը, տիրանալով բոլոր երկրին: Այս ինքնակոչ նահա-
պետը մեծամեծ պատերազմներ մղած է մէկէ աւելի թշնամի ցեղերու
եւ մրցակից թեկնածուներու դէմ:

Պարեւ շուրջ յիսուն տարի ապրած է: Կը կարծուի թէ իր օրով
եղիպտոսի մէջ մեռած է Յովսէփի նահապետը, զոր նախնի պատմա-

բանները Մանեթոս և Ապիոն կ'անուանեն, թագաւոր - հովիւը, իր հայրն ու եղբայրները խաչնարածներ ըլլալով:

Պարեաի կը յաջորդէ Արրակ, որ 42 տարի կը վարէ նահապետական իշխանութիւնը: Արրակի կը յաջորդէ Զաւան անուն հուժկու մարդ մը, որ, ըստ Մազխարոսի, 37 տարի կառավարած է երկիրը:

Զաւանի օրով կը կարծուի հիմնուած ըլլալ Աթենացիներուն միապետութիւնը, ինչպէս կը զրեն Թուկիդիտէս(*), Դիոդորոս, Ապոլոզորոս(**), Պաւսանիաս(***) և Պլուտարք(****) օտար պատմիչները:

Կեկրոպ անուն եղբայրացի մը, որ առասպելներուն մէջ հողի որդի կը կոչուի, Սիդոնի բնակիչները բերելով Ատաիկէ, կը միաբանի այս տեղի բնիկ Յոյներուն հետ, որոնք, Դեկալիոնի որդի Հեյլէնոսին անունովը Հեյլէն կը կոչուէին, և զանոնք խառն բնակեցնէ տասներկու ականներու մէջ, որոնցմէ կը հիմնէ Աթենացիներու պետութիւն մը: Ոմանք կը կարծեն թէ ասկէ կը սկսի Հեյլէնացիներուն հնութիւնը: Այս պետութիւնը տեւած է 485 տարի, տասնեօթը միապետներու ներ-

(*) Աթենացի յոյն պատմաբան, ծնած է 457ին (Ք. Ա.), Թրակիոյ քաղաւորին փեսան էր եւ սպարապետ եղած էր, յետոյ յանքաւի ատուութեամբ եւ իր քսան տարի տեւող ատուութեան մեջ գրեց Աթենքի ու Ապարտայի միջեւ տեղի ունեցած Պելոպոննիսի Պատերազմին պատմութիւնը: Ատոր համար կը պատմուի թէ՛ տղայ հասակէն լսած էր Հերոդոտի պատմութիւնները, երբ սա կը կարգար զանոնք աւագանիին առջեւ, եւ նախանձէն փղձկելով սկսած է լալ: Հերոդոտ ասիկա տեսնելով ըսած է Թուկիդիտէսի հօրք. — « Երանի՛ քեզի որ ունիս բարեմախանձ որդի մը »:

(**) Աթենացի մեծ բերող, Արիստարքոս փիլիսոփային աշակերտը, կ'ապրէր Քրիստոսէ 100 տարի առաջ: Իր երկերէն մնացած են երեք գիրքեր շաստուածներուն, դիւցազուններուն եւ հերանոսական առասպելներուն վրայ:

(***) Մեծ արձանագիտոր յոյն փաստաբան ու պատմաբան, Անտոնիոս իմաստասէր կայսեր ժամանակակից, կ'ապրէր Ք. դարուն, եւ տար գիրքեր գրած է Յունաստանի վրայ:

(****) Յոյն անուանի փիլիսոփայ, պատմաբան եւ փաստաբան, Բեովսիոյ Քերոնիա քաղաքը ծնած, ծագկեցաւ Քրիստոսի Ա. դարուն վերջերը, եւ Ք. դարուն սկիզբները, Ներոնէն մինչեւ Տրայանոս եւ անկէ վերջն ալ: Գրած է յոյն ու հռոմայեցի երեւելի մարդերուն պատմութիւնը, որուն մեջ խօսած է նաեւ Տիգրան Բ.ի եւ անոր ետեւ Մինդրասի մասին, բարոյական նառեր եւ ուրիշ իմաստալից երկեր ալ գրած է, եւ մեր 140 քուականիւն մեռած է:

քեւ, որոնցմէ երկրորդը, Կրանոս ըսուածը, Արիսպագոսը շինած է և տասներորդը, այսինքն հռչակաւոր Թէսէոսը, այն տասներկու աւաններուն բնակիչները ժողկելով՝ կառուցած է Աթէնք քաղաքը: Այս մասին երկարօրէն կը գրէ Պլուտարք: Իսկ այդ միապետներէն ետքը տիրապետեցին աւագները կամ ջոջերը, որոնք Յոյներէն կոչուեցան Արխոնսաներ:

Կեկրոսի ձեռքով Աթէնքի միապետութիւնը հիմնուելէ յետոյ, Լակեդեմոնացիներուն կամ Սպարտացիներուն միապետութիւնն այ հիմնուեցաւ Վորայի մէջ:

Մինչև այդ թուականը, Յոյները չունէին ո՛չ զիր, ո՛չ օրէնք, ո՛չ պաշտամունք, ո՛չ պարկեշտութիւն, ո՛չ մարգասիրութիւն և ո՛չ մէկ արճեստ: Թուկիդիտէս կը գրէ թէ՛ ասոնք զուրկ էին ամէն քաղաքակրթութենէ, չէին զիտեր նոյնիսկ ոստայնանկութիւնը, ո՛չ ալ դարբնութիւնը: Շատ դարեր ետքը, ինչպէս իրենք կը պատմեն, Յոյներուն մէջ մտած են օրէնք ու իմաստութիւն, շնորհիւ Եգիպտացիներուն ու ասիացի ժողովուրդներուն, որոնց հետ չիլուս ունեցած են:

Վերև յիշուած երկու յունական միապետութիւնները հիմնուելէ յետոյ, Եգիպտոսի Թերէ քաղաքէն Ադենովրի երկու որդիները, Կադմոս ու Փիւնիկ, որոնք Տիրոսի ու Սիդոնի կը փրէշին, այդ սահմաններէն մեկնեցան դէպի Յունաստան և եկան վնտոկ իրենց Եւրոպա քոյրը, զոր Կիպրոսի Յոյները առեւանգած էին: Այս երկու եգիպտացիներէն Կադմոսը, Բէռլտիոյ կամ Բիւտիոյ մէջ քաղաք մը շինեց, զոր իր ծննդավայրին անուանովը կոչեց Թերէ, իսկ երկիրը՝ իր քոյր անունով՝ Եւրոպա, ինչպէս ոմանք կ'աւանդեն, և հոն թագաւորեց: Այս Կադմոսը կը համարուի յունարէն գրերուն գտիչը, որ տասնըվեց զիր տուած է Յոյներուն:

Ահա՛ այդ թուականէն է որ, ըստ աւանդութեան, Յոյներէն ոմանք կըսկսին քիչ թէ շատ վարժուիլ գրելու և այդ անչուք շրջանը տեւեց ժամանակ մը, մինչև որ երեւան ելան Մոսոս և Լինոս, յետոյ Որփէոս բանաստեղծը, աւելի յետոյ՝ Հոմեր ու Հեսիոդ, որոնցմէ ետք եկան Եօթն իմաստասէրները, որոնք Կիւրոսի օրով ծաղկեցան: Եւ քիչ քիչ Յոյներուն մէջ ծաղկիլ սկսան գիտութիւններն ու քաղաքակրթութիւնը, օրէ օր աւելի բարգաւաճելով, այն աստիճան պայծառացան ու զօրացան գիտութիւններն ու գեղարուեստները, որ ուրիշ ազգերու քաղաքակրթութիւնը՝ ասոնց քով՝ բոլորովին նսեմացաւ: Այսպէս, Յոյները կոչուեցան իմաստութեան մայր ու դայեակ, և բոլոր ուրիշ ազգերուն զաստարակը:

Յոյներուն նախնի իշխանութեան ու զործերուն մասին անթիւ առասպելներ կը գտնենք իրենց բանաստեղծներու գրուածներուն մէջ, սակայն զանց կ'ընենք յիշելու զանոնք և կը շարունակենք մեր քատմութեան ընթացքը:

Զաւան նահապետին յաջորդեց Փառնակ Ա. որ եզրիպտոսի Սեսոստարիս կամ ըստ ոմանց՝ Սեթոս թագաւորին կողմէ հետապնդուեցաւ և ստիպուեցաւ փախստական ապաստանիլ լեռներուն մէջ, ինչպէս կը գրեն Մանիթոս(*) և Տակիտոս(**): Հերոդոտ ու Սիկիլիացի Դիոդորը կը գրեն թէ, երբ Սեսոստարիս ծնաւ, հայրը՝ Ամնոփ, իր իշխանութեան տակ գանուող տեղերուն մէջ, նոյն օրը ծնած բոլոր արու զաւակները հրամայեց ժողովել, հազար եօթը հարիւրէ աւելի նորածիններ, և զանոնք յանձնեց ընտիր ու զգուշապահ դայակներու խնամքին և ամէնքն ալ Սեսոստարիսի հետ չարքաշուքեան ու պատերազմական հրահանգներու մէջ մարդեց, և երբ չտիահաս եղան, զրկեց զանոնք ստանձին տեղեր ուղղամփորձեր ընելու, և տեսաւ որ ամենքն ալ քաջալարժ էին:

Ամնոփի մահուընէն ետքը, Սեսոստարիս թագաւորեց և խիստ շատ զօրացաւ, և երկրակալութեան տնչչն մղուած, ահազին բանակ մը համախմբեց, վեց հարիւր հազար հետեւակ, քսանըփս հազար հեծեալ և ուրը հազար պատերազմի կառքեր: Նախ եթովպացիներուն, յետոյ Արաբացիներուն տիրեց. Ասորեստանցիներն ալ զարկաւ, յետոյ անցաւ Հայաստան, ուր մեծ աւերներ գործեց ու փախստական հալածեց Փառնակը:

Սեսոստարիս արշաւանքները մէկ նպատակ ունէին միայն, հարւածել, կոտորել, աւերել, հրդեհել ու քանդել: Եւ ասիկա կը հաստատուի իր կանգնած արձաններով ու կոթողներով, որոնց վրայ քանդակել տուած էր իր յաղթութիւնները հետեւեալ ձևով. - « Այս գաւառը զենի ուժով նուանեց արքայից արքայ եւ սէր սէրանց Սեսոստը: » Ասոր մահէն ետքը Ռամսէս թագաւորեց, և ասոր յաջորդեց Ս. Գիրքի Փարաւոնը, որուն օրով տեղի ունեցաւ Իսրայէլացիներուն եզրիպտոսէն ելքը:

Իսկ Փառնակ, Սեսոստրէն հայածական թէեւ, դարձեալ յաջողեցաւ վերակազմել իր միապետական իշխանութիւնը, և հայրենի սահմանները պաշտպանելու նպատակով, նորանոր բերդերու և ամրոցներու

(*) Մեծանուն եզրիպացիին, Հելիոպոլիս ճնամ՝ 270ին (Ք. Ա.). Պտղոմեոս Փիլասէլփիոսի ժամանակակից: Եզրիպտոսի պատմութիւնը գրած է յունարէն, կարեւոր երկ մը, զոր խորեմացիին ալ յիշած է:

(**) Տակիտոս Կուռնէլիոս, անուանի լատին պատմաբան, վեպաստիանոսի, Տիտոսի եւ Գոմեսիանոսի ժամանակակից էր. հիւպատոս եղած է 97 բուականին եւ Տրայանոսի օրով ալ ապրած է: Շատ բաներ գրած է արեւելիի եւ Հռովմայեցիներուն՝ Պարսից ու Հայոց դեմ մղած պատերազմներուն վրայ: Կուռ ու սահուն ոնով մը կը գրէր եւ չնազնարասան մըն էր:

բու շինութեանը ձեռնարկեց և ամբողջ յիսուն տարի ազգը կառավարելէ յետոյ մեռաւ :

Փառնակին յաջորդեց Սուր նահապետը, որ 45 տարի ապրեցաւ իշխանութեան մէջ, արդարացնելով իր անունը : Գրիգոր Մագիստրոս այս նահապետ յորջորջած է սուսեր հասու ընդդէմ բեմակեաց եւ սիրելի իւրոց զօրաց : Այս նահապետին օրով է որ հիմնուեցան երկու հռչակագոր քաղաքները, Դարդաննն և Իլիոն : Ասոնց մասին կ'արժէր հոս տալ մէկ երկու ծանօթութիւններ, որոնք սերտ առնչութիւն ունին մեծ զէպքերու հետ, սակայն ասոնց վրայ պիտի խօսինք յաջորդ զըլխուն մէջ :

Սուր նահապետին օրով է որ Իսրայէլացիները, Մովսէսի առաջնորդութեամբ կը յաջողին Յորդանանի միւս եզերքը վանել իրենց թշնամիները և խոտաացուած երկիրը ժառանգել, Եզիպտոսէ ելքին քառասուներորդ տարին : Ու երբ տարի մը վերջ, Մովսէս կը մեռնի, նոյն տարին Յեսուս Իսրայէլացիները կ'անցնէ Յորդանանէն, վեց տարի կը կուռի Քանանացիներուն հետ, մինչև որ զանոնք կը նուաճէ և Իսրայէլացիներուն ժառանգել կուտայ անոնց երկիրը :

Քանանացիներէն շատերը սարսափահար կը փախին այլ և այլ սամաններ. մաս մը կ'ապաստանի Ափրիկէի եզերքները, ինչպէս կը գրէ Սորենացին (Ա. 18). նոյնը կը հաստատեն Պրոփրոպիոս(*) Վանտաշներու Պատերազմներուն գիրքին մէջ (Բ. 10) և Շուրտաս :

Փախստական Քանանացիներէն մաս մըն ալ Հայաստան կ'ապաստանին, զարձեայ Սուր նահապետին օրով, ինչպէս կը գրէ Յովնանէս Կաթողիկոս : Ասոնց առաջնորդը կը կարծուի Քանանիդաս անուն մեծահարուստ ազնուական մը, որմէ սերած է Հայոց մէջ Քանանիդեան կամ Քանանդեցիներուն նախարարութիւնը, նոյնինքն Գնթուները :

Սուր նահապետէն ետքը կարգով յաջորդեցին իրարու Հաւանակ կամ Հոնակ՝ 30 տարի, Վաշտակ՝ 22 տարի, յետոյ Հայկակ Ա.՝ 18

(*) Պագեսիցի Կեսարիայէն՝ անուանի հոռետ մը, Զ. դարուն կ'ապրէր, Մեծն Յուսիփիանոսի սպարապետ Բելիսարի հօտարն ու խորհրդակալը : Իր ժամանակի պատմութիւնը գրած է 9 գիրքերու մէջ, Պարսից, Վանսպնեռուն, Գորաց պատերազմներուն, արժուի գործերուն եւ Յուսիփիանոս կայսեր շինութիւններուն վրայ : Իր ամբողջ գրուածքներուն մէջ կը խօսի Հայերուն վրայ, քաջեր ներկայացնելով զանոնք, յիշատակելով Կայսեր ծառայութեան մէջ անոնց գործած արութիւնները : Շատ մը մէջբերումներ ալ քրած է Հայոց պատմութեան, զոր Հայոց Յիշատակագիր կը կոչէ, առանց սակայն ճշգրիտակիւն անունը տալու, սակայն, ինչպէս կ'երեւայ, Բիւզանդ պատմագրէն եւ ասոր նմաններէն առած ըլլալու է զանոնք :

տարի: Այս Հայկական համար կ'աւանդուի թէ ազգմասէր, գոռող ու վէս մարդ մըն էր, և պատերազմելով նուաճած է Ասորեստանի Ամինդէս թագաւորը, որուն յաջորդող Բեկոքէին ալ ուզելով յաղթել, չարաչար պարսուած ու ինկած է պատերազմին մէջ:

Հայկակ Ա. ի յաջորդեց Ամրակ Ա. 14 տարի, յետոյ Առնակ 17 տարի, և յետոյ Շաւարշ Ա. 6 տարի, Շաւարշանի հիմնադիրը: Շաւարշի յաջորդը կը կարծուի Նորայր, 24 տարի, յետոյ Վստամ 14, յետոյ Կար՝ 4 տարի, և յետոյ Գոռակ՝ 18 տարի:

Հ. Մ. Չամչեան, այս վերջին երկու նահապետներուն՝ Վստամի և Կարի համար հետեւեալ ծանօթութիւնը կու տայ: —

«Պորենացիի պատմութեան մէկ քանի օրինակներուն մէջ Վստամ և Կար անունները՝ ո՛չ թէ Հայկազանց, այլ Ասորեստանի թագաւորներուն կարգը զրուած են, երկուքը միասին խառնուած, և եղած Վսասակառէ Իսկ ձեռագրի մը մէջ թէև Հայկազանց կարգը զրուած է, դարձեալ միացած, այսինքն՝ Վսասակառ անունով, բայց ուրիշ ձեռագիրներու մէջ զատ զատ զրուած է Հայկազանց կարգը, Վստամ և Կար, ինչպէս որ կ'աւանդեն Յովհաննէս Կաթողիկոս ու Վարդան պատմիչը. Իսկ Գրիգոր Մագիստրոս ասոնց անունները մէջ կը բերէ ստուգաբանելով այսպէս. — «Ո՛ւր Վստամ, սա մեծարու զօրացն՝ Վեհատամ կոչեցաւ. ո՛ր Կար՝ իբրու կարող բոլորին:» Ասկէ ականբեր է թէ՛ առնք ալ մեր նահապետներուն կարգէն էին, եւն. »

Գոռակի մահունէն ետքը նահապետ եղաւ Հրանտ Ա., որ 25 տարի իշխանութիւնը վարեց: Ասոր օրով Եւքսինեան Մովին նեղուցը կը թագաւորէր Բիւզ, Բուզան կամ Բիւզանդոս անուն մէկը, Նեպտոնի որդին: Այս թագաւորը, Սիկիլիացի Դիոդորոսի և ուրիշ պատմագիրներուն, ինչպէս նաև Դազար Փարպեցիին համաձայն, քաղաք մը շինած է հոն, և իր անունով կոչած է Բիւզանդիոն: Այս քաղաքը յետոյ աւելի մեծցաւ ու գեղեցկացաւ Սպարտացիներու Պաւսան թագաւորին ձեռքով, մինչև որ, դարեր ետքը, Մեծն Կոստանդիանոս, աւելի ընդարձակելով և հոյակապ շէնքերով ճախացնելով, իր անունով յորջորջեց զայն Կոստանդնուպոլիս, մեր օրերու Ստամպոլը:

Հրանտի մահէն ետքը նահապետական իշխանութիւնը կարգով անցաւ Ընձակի, Գղակի և Հօրոյի, որոնց առաջինը կառավարեց 15 տարի, երկրորդը՝ 30 տարի և երրորդը՝ 3 տարի:

Այս գլուխը փակելէ առաջ, կը կրկնենք թէ, մեր ազգային աւանդութիւնները յարգած ըլլալու համար է որ ներկայ պատմութեան մէջ ղետեղեցինք Հայկազանց առասպելական շրջանի այս ինքնակոչ նահապետները, որոնց մէկ քանինները միայն յիշուած են օտար պատմիչներու կողմէն, ինչպէս պիտի տեսնենք առաջիկային:

Զարմայր նահապետք. — Ոսկեգեղմին առասպելը .

Արգանաւորդները կը զոյնան Ոսկեգեղմը .

Ոլիմպիական խաղերը . — Հեղինե բազուճին կ'առեւանգուի .

Տրովական պատերազմը . — Զարմայր կըսպանուի .

Աբիլլեւեն, — Պարիս Աբիլլեւը կըսպանեն .

Փայտէ ձին . — Տրովազան կ'առնուի .

Այլ եւ այլ առասպելներ :

Հօրոյի յաջորդեց Զարմայր նահապետը, որ մեծ համբաւ հանեց օտար ազգերու մէջ, մասնակցած ըլլալով Տրովական պատերազմին, ուր օգնութեան գացած էր Պրիամոս թագաւորին :

Մեր բոլոր պատմիչները մեծ գովեստներով կը խօսին այս նահապետին վրայ, Գրիգոր Մագիստրոս՝ զարհուրելի կը կոչէ զանի, որովհետեւ, կը գրէ, իր ահարկու զօրութեամբ, հայրենի սահմաններէն վանեց բոլոր թշնամիները, և սարսափ ու պատկառանք ազդեց մերձաւոր ու հեռաւոր ժողովուրդներուն :

Զարմայրի օրով պայթեցաւ, ինչպէս ըսինք, տրովական հռչակաւոր պատերազմը, զոր Հոմեր երգած է Իլիականին մէջ :

Այս պատերազմին շարժառիթները գրելէ առաջ, աւելորդ չենք նկատեր պատմել հակիրճօրէն քանի մը կարեւոր դէպքեր ու պարագաներ, որոնք անոր նախորդեցին և որոնք համեմուած են զուարճայի առասպելներով : Տեղն է ուրեմն հոս կրկնելու թէ՛ կարելի չէ՛ գտնել ժողովուրդ մը, ազգ մը, որուն պատմութիւնը սկսած կամ խառնուած չըլլայ առասպելներով :

Ակսինք հիմա կարգով պատմել դէպքերը, որոնցմէ ծագում առաւ Տրովական ազետայի պատերազմը, որուն մէջ ղժարազարար սպաննուեցաւ մեր Զարմայր նահապետն ալ : —

Յունաստանի Թերէ քաղաքին թագաւորը՝ Աթամանտէս կամ ուրիշ պատմիչներուն կարծիքով՝ Փոխզիոյ թագաւորը, երկու զաւակներ ունէր, մէկը մանչ՝ Փրիստով, և միւսը ազջիկ՝ Հելլես անունով : Երբ ասոնց հարազատ մայրը մեռաւ, երկուքն ալ սկսան տեսակ տեսակ նախաափնքներ կրել իրենց մօրուէն, որ չարասիրտ նախանձոտ մըն էր, և վայրկեան մը չէր ուզիր տեսնել չէք որբերուն երեսը : Այդ հրէջ մօրուն, օր մը սուտ պատգամ մը հանել տուաւ դարբար-

յէն թէ՛ քանի՛ այս երկու զաւակները մնան հոն, Թերէի մէջ, երկիրը բնաւ չպիտի բերք արտադրէ. և այսպէս, յաջողեցաւ թագաւորին ձեռքով աքսորել տալ երկուքն ալ Պանոսի կողմերը:

Եղբայր ու քոյր նաւ մը նստան, որ կը կոչուէր Ոսկեգեղմ Խոյ: Նաւարկութեան միջոցին, քոյրը Հելլես՝ ինկաւ ծովը և խեղդուեցաւ: Անա՛ այդ թուականէն ի վեր է որ, կ'աւանդուի թէ ծովը կոչուեցաւ Հելլեսպոնոս, նոյնինքն արդի Կէլիպոլոն: Իսկ Փրիսով ողջամբ հասաւ Կողքիս և զնաց ներկայանալ Այեղաս թագաւորին: Հոն Արէսի կամ Հերմէսի մեհեանը կար. ներս մտաւ Փրիսով և խոյ մը մատաղ բրաւ, և անոր գեղմը ոսկեգօծելով՝ նոյն մեհեանէն կախեց, իբրև յիշատակ, և անիկա Ոսկեգեղմ կոչուեցաւ: Առասպելները կ'աւանդեն թէ՛ այս գեղմը իր հետք բերած խոյի մորթէն էր, զոր մատաղ բրաւ էր:

Այդ առեւնները, Արէս կուռքին կողմէն պատգամ մը կը զրկուի Այեղաս թագաւորին, զանի զգուշացնելով այդ գեղմէն. որովհետև, կ'ընէր այն պատգամը, եթէ այդ գեղմը զողջուի օտարներուն կողմէն, զուն պիտի մեռնիս: Ուստի, Այեղաս, կարեւորութիւն ընծայելով պատգամին, մեհեանին մէջ շատ մը զօրքեր պահապան դրաւ, քաւրոսներ անունով, որոնց պետին անունը Տրակոն էր: Արդ, որովհետև տաւրոսը՝ ցույ կը նշանակէ և Տրակոնը՝ վիշապ, առասպելներուն մէջ կը յիշուէր թէ՛ այն Ոսկեգեղմը պահողները՝ ցուլեր ու վիշապներ էին:

Նոյն ժամանակները կը թագաւորէր Թեսալիոյ մէջ Պելեւ, որ ունէր Յասոյն անուն եղբորորդի մը, հովիտ երիտարող մը: Պելեւ կը վախնար Յասոյնէ և կասկածելով թէ՛ օր մը չէ օր մը թագաւորութիւնը պիտի յափշտակէր իր ձեռքէն, կը խորհէր մէջտեղէն վերցնել զանի: Ոսկեգեղմին համբաւը հոն ալ հասած ըլլալով. ժողովուրդին մէջ կը պատմուէր թէ՛ այդ գեղմը յափշտակողը պիտի թագաւորէ: Պելեւ կ'առաջարկէ իր եղբորորդիին երթալ Կողքիս ու գեղմը յափշտակել. կը յուսար թէ այդ ճամբորդութեան մէջ անպատճառ Այեղասէն պիտի սպաննուէր ան:

Յասոյն իր հօրեղբօրը թագուն դիտումները թէև գիտէր, բայց չէր ուզեր ակարութիւն ցոյց տալ, անմիջապէս ընդունեց Պելեւ թագաւորին առաջարկը: Ծուտով, Արգոն անուն ճարտարագետի մը ձեռքով շինել տուաւ նաւ մը, որ զայն շինողին անունովը, կամ, ինչպէս ուրիշներ կը կարծեն, անոր արագ ընթացքին համար: Արգոնաւ կոչուեցաւ: Այս կարծիքէն է նաև Սիկիլիացի Դիոգորոսը, որ կը գրէ թէ արգոն բաւը կը նշանակէ արագ:

Այս նաւը միայն արագընթաց չէր, այն ժամանակի նաւերուն մէջ ամենէն հոյակապը կը համարուէր ու վիթխարին: Ուրիշ ազգերը շուտով իմացած ըլլալով թէ՛ Յասոյն կը պատրաստուէր այդ համբաւաւոր նաւով արշաւանք մը կազմակերպելու, հեռաւոր սահ-

մաններէն վազեցին ու համախմբուեցան անոր շուրջը, հարիւրաւոր կտրիճ կամաւորներ, ամենքն ալ երիտասարդ :

Յասան այս նաւը մտաւ իր մարդիկներով, որոնց մէջէն զատեց յիսունըսորս կտրիճներ, ամենէն նշանաւորները, և տտոնց պետ նշանակեց Հերքիւլէսը, Արամազդի որդին : Ճամբայ կլան Քեսալիայէն և խաղաղ նաւարկութենէ մը վերջ, հասան Տրովադայի սահմանները, ուր Լաւոմեդոնտ կը թագաւորէր :

Արգոնաւորդները ցամաք կան ծովեզերքը, ուր զարմանքով տեսան տաքերը ձեռքերը կապուած կոյս մը : Այդ կոյսը Լաւոմեդոնտ թագաւորին աղջիկն էր, Յսիօնէն :

Ահաւաստիկ այդ մասին աւանդուած առասպելը : —

Այդ ժամանակները, ահագին վիշապ մը ծովին մէջէն դուրս կ'ելլէր ցամաքը, և Տրովադայիները կ'ահարեկէր : Լաւոմեդոնտ թագաւորը, այս փորձանքը հեռացնելու միջոցներ կը փնտռէ, և դարերային կը դիմէ պատգամ հարցնելու : Մենեանին ոգիները կը պատասխանեն թէ՛ վիշապը սիրաշահելու և վտանգը մէջտեղէն վերցնելու միակ միջոցը՝ զո՛ մը տալ է անոր իբրեւ կերակուր : Ուստի, վիճակարկութիւնը կը կատարուի և վիճակ կ'ելլէ թագաւորին աղջկան՝ Յսիօնէի : Արդ, այդ պատճառով է որ թագաւորը կը հարկադրուի ծովեզերքը կապելու իր աղջիկը : որպէս զի վիշապին կեր ըլլայ :

Արգոնաւորդներուն խմբապետը Հերքիւլէս, ցամաք ելլելուն, անմիջապէս կը մօտենայ թագաւորին աղջկան և ասոր բերնէն իմանալով բոյսը մանրամասնութիւնները, կը քակէ անոր կապերը, կ'արձակէ զանի և Լաւոմեդոնտ թագաւորին ներկայանալով, կը յայտարարէ թէ ինք կը ստանձնէ սպաննել այն հրէշ վիշապը, իսկ թագաւորը կը խոստանայ միծամեծ պարգևներով վարձատրել Հերքիւլէսը, նաեւ ազատեալ Յսիօն աղջիկը տալ անոր կնութեան :

Հերքիւլէս կը սպաննէ ծովային վիշապը, և թագաւորէն կ'ընդունի խոստացուած ընծաները, ինչպէս նաեւ անոր Յսիօն աղջիկը : Բայց, Արգոնաւորդները Կողքիս երթալու և ոսկեգեղմը յափշտակելու նպատակով Յասանի նաւը նստած էին, հետեւաբար չպիտի կրնային երկար ստան դեգերիլ չոն, Տրովադայի սահմաններուն մէջ : Լաւոմեդոնտ թագաւորին նոր փեսան Հերքիւլէս, ստիպուած էր իրեններուն հետ ճամբորդել, իբրեւ Արգոնաւորդներուն պետը, ուստի, թէ՛ իր ստացած ընծաները, և թէ՛ իրեն կնութեան արուած Յսիօնէն չոն թողուց իբր աւանդ, Լաւոմեդոնտի արքունիքին մէջ, վերադարձին Տրովադա հանդիպիլ և զանոնք վերադառնալու տանելու պայմանով :

Հերքիւլէս իրեններով մեկնեցաւ : Արգոնաւորդները շարունակելով իրենց նաւարկութիւնը, վերջապէս հասան Կողքիս²⁵ և, ուղղուեցան դէպի տաճարը, ուր Ոսկեգեղմը պահուած էր :

Հոս, Այեղաս թագաւորին աղջկան Մեղէայի հնարքովը, Յասնի ընկերները կը յաջողին գողնալ Ոսկեղեղմը, և Մեղէան ալ առեւանդելով, անմիջապէս նաւ կը մտնեն և Կողքիսէն կը փախչին: Այեղաս թագաւորը կը հետապնդէ փախստականները, որոնք սակայն անվասնզ կը հասնին Տրովաղա. իսկ Այեղաս կը սպաննուի իրեննւրէն, Արէսէն տրուած պատգամներուն համաձայն:

Երբ Յասնի Տրովաղայի նուամտոյցը կը հասնի իր նաւով, Արգոնաւորդներուն խմբապետը Հերքիւլէս՝ պատգամաւորներ կը դրկէ Լաւոմեդոնա թագաւորին, խնդրելու համար որ իրեն վերադարձնէ Յսիօնէ աղջիկն ու բոլոր միւս ընծաները, որոնք աւանդ ձգուած էին անոր քով: Տրովայի թագաւորը կը բանտարկէ Հերքիւլէսի պատգամաւորները, և պատրաստութիւններ կը տեսնէ արչաւելու Արգոնաւորդներուն վրայ, ամենքն ալ իր սահմաններէն փտարելու և նոյն իսկ սպաննելու նպատակով: Լաւոմեդոնոսի որդին Պրիամոս կը միջամտէ և շատ կ'աղաչէ իր հօրը, այդ փտանդաւոր նպատակէն հրաժարելու, և երբ կը մերժուի իր հօրմէն, զազաուկ մը կ'երթայ արքունի բանտը, ազատ կ'արձակէ Հերքիւլէսի բանտարկուած պատգամաւորները, և ինք հուաւոր տեղ մը կը փախչի իր որդիներով մէկտեղ: Իսկ բանտէն ազատ արձակուածները կ'երթան իրենց ընկերներուն իմացնելու եղելութիւնը: Յասնի մարչիկը, ուրիշներէն ալ նոր օգնութիւններ ստանալով զօրացած, կոռուի կը վազեն Լաւոմեդոնա թագաւորին վրայ, որ իրենց դէմ արչաւանք մը կազմակերպած էր: Պատերազմին մէջ կը սպաննուի Լաւոմեդոնա և Արգոնաւորդները Տրովաղա մտնելով, կ'առեւանդեն Յսիօնէ արքայադուստրը, կը կողոպտեն մայրաքաղաքը, բնակիչներէն շատերը կը ջարդեն, և ամբաւ աւարներով, նորէն կը մտնեն իրենց նաւը, Յունաստան վերադառնալու համար:

Աւանդութիւնը կը պատմէ թէ Յասնի յաղթական նաւը Կորնթոսի կիրճը կը հասնի: Հոս, Նեպտոն աստուածին զոհ կը մատուցանեն և անոր կը նուիրեն Արգոնեան նաւը. յետոյ իրարու հրաժեշտ տալէ առաջ, Այիոս գետին եզերքը, Իլիաղայի դաշտավայրերը, ոլիմպեան որմղական աստուածին տաճարին մօտերը, խաղ մը կը հաստատեն, որուն հանդիսադիրը Հերքիւլէս եղած է, կ'ըսուի: Այդ օրէն ի վեր է որ, կարծե՛ք երիտասարդներ սովորութիւն ըրած են ամէն յիսուն ամիսը մէկ անգամ կատարելու այդ յաղթանակի խաղը, զոր Ոլիմպիական խաղ կը կոչէին: Միայն մէկ քանի տարիներ ետքը խափանուած մնացին այդ ոլիմպիական հանդէսները, զոր սակայն, վերստին նորոգեց Իփիտոն, շատ տարիներ ետքը:

Ոլիմպիական թուականը կըսկսի Իլիոնացի Կարերոնին յաղթութենէն, Աշխարհի ստեղծման 3228 թուականին:

Վերադառնանք հիմա մեր պատմութեան: Արդանաւորչները Տրովալէն մեկնելէ յետոյ, Լատովոզոնա թագաւորին սրղին Պրիամոս՝ որ ինչպէս վերեւ գրեցինք, փախստական կ'ապրէր, երբ մայրաքաղաքը վերադարձաւ ու կողոպտուած գտաւ զայն, սաստիկ ցաւ զգաց ու սգաց: Յետոյ իր հօրը յաջորդելով, Տրովազան վերալինեց և չուտով զայն շրջափակեց ամուր պարիսպով մը:

Հին պատմիչներէն Դիլկիւս(*), Դարէս(**), Հերոդոտ, Քուկիդիտէս, Հիւզին և մեր Վարդան պատմիչը, մանրամասնօրէն պատմած են այս դէպքերը:

Պրիամոս զեսպան զրկեց Յոյներուն, իր Եսիօնէ քոյրը պահանջելու, բայց Յոյները մերժեցին, չուզեցին վերադարձնել զանի: Յետոյ Պրիամոս, իր Պարիս սրղին, որ Աղեքսանդր Փոլսգիտս ալ կը կոչուէր, զրկեց ուրիշ երեք իշխաններու, հետ. պատուիրելով որ ամէն հնարքներ ի գործ դնեն ազատելու Եսիօնէն:

Ասոնք նաւարկելով հասան Կիթերայ կղզին (Չէրիկօ), հոս կանգ առին, որովհետեւ, ինչպէս գրած է Դարէս, Յոյները՝ Ասիրոդիտէս զիցուհիին տօնը կը կատարէին, և այդ առիթով, Սպարտայի (Մօ-

(*) Կրետէի Դնոզ Բալպէն, Դարեսի ժամանակակից պատմաբան մը, որ Տրովական պատերազմներուն մէջ գտնուած եւ Փիւնիկեան նշանագրերով ծորը գիրքերու մէջ ամփոփած է բոլոր դէպքերը, որոնց ականատես եղած է ինք: Խոր ձերուքեան հասած, երբ մահուան կը պատրասուէր իր ծննդավայրին մէջ, պատուիւրեց որ իր մարմինին հետ զետեղեն իր գիրքերը կապարէ արկղի մը մէջ, իր վերջին կամօր յարգուեցաւ: Անցան դարեր, եւ Ներոնի կայսրութեան 13րդ տարին, այսինքն Քրիստոսի 66 բուականին, Կրետէի մէջ մեծ երկրաշարժ մը պատահեցաւ, Դնոզի մէջ զետիւր նեղֆոսուեցաւ ու Դիլկիւսի դագաղն ալ երեւան ելաւ: Անցորդ հովիւները տեսնելով, գանձ մը կ'ործեցին զգամ ըլլալ եւ ուրայնութեամբ բացին զայն, եւ գիրքերը գտնելով տարին յանձնեցին Բալպէին իշխանին որ զանոնք զրկեց կայսեր, եւ սա յունարէն գիրի վերածել տուաւ, ուրկէ լոյս ընծայուեցաւ Տրովայի անման ամենեւն սոյոգ պատմութիւնը: Ասոր երկը սպագրուած է Դարեսի երկերուն հետ: Դարես ու Դիլկիւս կը համարուին առաջին յոյն պատմիչները:

(**) Փոլսգիտցի հին պատմիչը, յունարէն գրած է արգոնաւորչներուն ճամբորդութիւնը, հասել Տրովապայի պատերազմը, ուր ինք ալ զինուոր էր, 1180 (Ք. Ա.)-ին: Իր պարզ ու անպանոյն ոճն կը մատնուի անոր հնուրիւնը: Օգտասոս կայսեր օրով, Կուսնէթոս Հաովմայեցի Արեւիկի մէջ գտաւ ասոր ձեռագիրը եւ յատկապէս յարգմանեց զայն: Դարեսի պատմութիւնը սպագրուած է Սիկիլիացի Դիոդորոսի երկերուն հետ:

րա) թագաւոր Մենկլաւոսի կինը Հեղինէն հոն եկած էր: Պարիս, Հեղինէն տեսնելով մենեանին մէջ, կամ, ըստ Դիկտիւսի, երբ Մենկլաւոսի ապարանքին մէջ հիւր կը գտնուէր, սիրահարեցաւ անոր, և իր իսկ հաւանութեամբը զանի առեւանգելով, նաւ նստաւ իր ընկերներով, և Տրովա վերադարձաւ:

Պրիամոս շատ ուրախացաւ, կը խորհէր թէ մեծ յաջողութիւն մը ձեռք բերուած էր. կը յուսար Յոյներուն ձեռքէն ազատել իր Յսիօնէ քոյրը, պատանդ պահելով Հեղինէն:

Հեղինէի եղբայրները, արգոնաւորդներուն ընկերներէն, Կառոյր ու Պոլոքս, երկու առոյգ, հասակագեղ ու տեսքոտ երիտասարդներ, որոնք իրարու կը նմանէին, իմացած ըլլալով իրենց քրոջ առեւանգման լուրը, շուտով նաւակ մը նստած և սկսած էին հետապնդել Պարիսը: Երկար ժամանակ ծովին ալիքներուն վրայ թափառական նաւարկելէ յետոյ, երկու եղբայրներն ալ կորսուեցան Տրովադայի մօտերը: Ասոնց մասին առասպելական ատանդութիւն մը կը պատմուի, իբր թէ աստուածները յափշտակած ու երկինք հանած են զանոնք: Եւ այդ երկու եղբայրներուն խորհրդանշանը կը համարուի Ջողիակոսի տաններկու կենդանակերպներուն մէջի Երկաւորը:

Սակայն ասով չէր վերջանար: Հեղինէի առեւանգման լուրը շուտով տարածուեցաւ ամբողջ Յունաստանի մէջ և Մենկլաւոսի դժբաղդութիւնը բոլոր միւս իշխաններուն քով արձագանդ գտաւ: Սպարտայի թագաւորը յաջողեցաւ ի վերջոյ բաղձապատկել իր դատին համակիրներուն թիւը, և կազմակերպել տալ միացեալ ոյժ մը, երթալու Տրովա և Հեղինէի վրէժը լուծելու համար:

Յունաստանի բոլոր իշխանները, երդուամով խոստացան Մենկլաւոսի հետ արշաւել Տրովադայի վրայ, իրենց սեփական զուեղերով: Երկու տարի շարունակ, պատերազմի լուրջ պատրաստութիւններ տեսնուեցան, երկրին ամէն կողմերէն, հազարաւոր կամաւորներ եկան հաւաքուեցան Սպարտայի թագաւորին շուրջը: Ամբողջ հինգ տարի պատրաստեցին 1200 պատերազմական նաւեր: Դաշնակիցներուն մէջն էին 46 իշխաններ, և մէկ քանի թագաւորներ ալ: Ու այս վիթխարի բանակին սպարապետ կարգուած էր Յասոնի հօբեղբորդի, նոյնինքն Թեսալիոյ Պելլա թագաւորին որդին, Աքիլլէս:

Այս ահազին պատրաստութիւններով ու ուղղամթերքներով, Յունաստանէն մեկնեցան և հասան Տրովադայի սահմանները: Նախ, իշխաններէն Ողյուստի խորհուրդով, պատուիրակներ ղրկեցին Պրիամոսի քով և Հեղինէն պահանջեցին: Պրիամոս, Մենկլաւոսի պատուիրակներուն ներկայութեանը կանչելով Հեղինէն, հարցուց թէ կ'ուզէ՞ր երթալ Իսկ Հեղինէն, վախնալով թէ՛ հաստատական պատասխան մը տալու պարագային, կամ Պարիսի և կա՛մ իր էրկան կողմէն իրեն մահ կրնար պատահիլ, չուզեց երթալ:

Պատուիրակները ձեռնուռնայն վերադարձան Մենկաւոսի քով և պատմեցին եղելութիւնը :

Պատերազմին ազդանշանը տրուած էր արդէն , Յոյները խմբովին խուժեցին Տրովայի վրայ : Պրիամոս չէր քնանար , իր Հեկտոր որդին զրկեց անոնց դէմ , և Հեկտոր , զիմաւորելով իր զօրքերով և յանկարծակիի բերելով ջախջախեց զանոնք և սոսկալի ջարդ մը տուաւ թէ՛նամի շարքերուն , որոնք , պարտուած , փախստական ապաստանեցան իրենց բանակետը :

Այս առաջին հարուածը ցնցեց յայն իշխանները , որոնք խորհրդակցութեան մտան լուրջ յարձակում մը կազմակերպելու համար : «Մեր շուրջի բոլոր գաւառները , կ'ըսէին իրարու , մեզի թէ՛նամի են և զաշնակից՝ Տրովացիներուն , հետեւաբար , քանի՛ պատերազմինք , ա՛յնքան պիտի յաղթուինք և տկարանանք . լաւագոյն է նախ նուաճել այս գաւառներու բնակիչները , որպէս զի այնուհետեւ կարենանք նուաճել Տրովագացիները » Եւ այս խորհուրդին վրայ , իրենց դէնքերը դարձուցին դէպ ի շրջակայ գաւառները , սկսան նեղել ու ահարկել բնակչութիւնները , մինչեւ որ յաջողեցան ամենքն ալ նուաճել և իրենց հպատակեցնել : Այդ կռիւներու միջոցին , Թրակիոյ թագաւորին քով գտան Պոլլուգորը , Պրիամոսի զեռասի մանկիկը , և զանի առին :

Թէ՛նամութիւնները տակաւ կը սաստկանային երկու հակառակորդներուն միջեւ , և Պրիամոս , իրեն զաշնակից ժողովուրդներուն նուաճումէն ետքը , բոլորովին աւանձին մնացած , հեռաւոր ազգերու օգնութեանը զիմեց . զատ զատ նամակներ գրեց և զեսպաններ զրկեց Ասորեստանի Տեստամոս թագաւորին , Հայոց Չարմայր նահապետին , եթէ՛ովպացիներուն և Ամազոններուն(*) :

Ասորեստանի թագաւորը չի կրնալով ինք անձամբ օգնութեան երթալ և մասնակցիլ պատերազմին , զեսպաններ զրկեց Չարմայր նահապետին , որուն յանձնեց Ասորեստանի զօրքերն ալ և յանձնարարեց որ ինք անցնի իր սեփական և Ասորեստանեան զինուորներուն զլուխը և Յոյներուն դէմ անձամբ պատերազմելու համար շուտով համբայ ելլէ : Տեստամոս իր զօրքերուն ալ հրամանատարութիւն յանձնեց Չարմայրի , որովհետեւ յաճախ իմացած էր անոր քաջութեան համբաւը , և զխէր թէ՛ հզօր և անպարտելի պատերազմիկ մըն էր անիկա :

Չարմայր նահապետը , իր ու Ասորեստանի զօրքերով խկոյն

(*) Պատերազմիկ կլիներու ցեղ մը , որոնք մեկ ձիւ միայն ունէին և կը կոչուէին Ամազոն , այսինքն Միասանի :

մկնեցաւ Հայաստանէն Տրովադա, մինչ Յոյները չըջակայ երկիրնե-
րուն մէջ պատերազմներ կը մղէին: Պրիամոս շատ ուրախացաւ ու
սիրտ առաւ տեսնելով Հայոց նահապետը, չըջապատուած իր ու
Տեւտամոսի զինւորներուն ստուար զունդերէն:

Ուստի, պատերազմի նոր պատրաստութիւններ սկսաւ տեսնել
իսկ Յոյները, չըջակայ երկիրները նուաճելէ յետոյ, իրենց զէնքերը
դարձուցին Տրովադայի վրայ, զոր ամէն կողմէ պաշարեցին: Նախ,
պատուիրակներ զրկեցին Պրիամոսի, հետեւեալ պատուէրով. « Եթէ
մեզի վերադարձնես Հեղինէն, մենք ալ քու զաւակդ քեզի ետ կը
դարձնենք և հաշտութիւն կը կնքենք քեզի հետ »:

Պրիամոս ետ ճամբեց պատուիրակները մերժողական պատասխա-
նով մը: Ասոր վրայ յոյն իշխանները զայրացան, և պարխապներուն
ոտքը, Պրիամոսի աչքերուն առջեւ, քարկոծելով սպաննեցին Պոլի-
դորոսը:

Այս եղբերական տեսարանին յաջորդեցին զարհուրելի ճակատամարտ-
ներ, որ տեւեցին երկար ժամանակ: Ամէն օր երկու կողմերէն ալ կա-
տաղի յարձակումներ տեղի կունենային, արիւնը կը հոսէր հեղեղօրէն
և սարսափելի կոտորածներով կը շարունակուէր պատերազմը, և յաղ-
թութիւնը կը մնար միշտ անորոշ, Յոյներուն կողմէ Աքիլլէս, և տրո-
վացիներուն կողմէ Հեկտոր ու Զարմայր, մահ ու սարսափ կը սրփ-
ռէին:

Այնուհետեւ երկու պատերազմող կողմերը, ժամանակի մը համար
զինադադար խնդրեցին: Այս զինադուլի միջոցին, Աքիլլէս, Պրիամոսի
Պոլիքոնէն աղջիկը տեսած ըլլալով, ասոր մօրմէն զաղտնի խնդրեց
այն աղջկանը ձեռքը, և մայրը հաւանեցաւ զանի կնութեան տալու
Աքիլլէսին: Այդ պատճառով է որ, երբ վերջացաւ զինադուլը, և վե-
րստին սկսան պատերազմի, Աքիլլէս, Պրիամոսի աղջկանը սիրոյն
համար, շատ թոյլ կը կուէր և կը վճատեցնէր իր զինակիցներէն
չատերը, այնպէս որ Յոյները կը յաղթուէին Տրովացիներէն, մանա-
ւանդ կը սոսկային Հեկտորի ուժէն: Գանգատները շտացան Յոյնե-
րուն մէջ և ամենքն ալ սկսան ամբաստանել Աքիլլէսը, որ սրբողած,
պատերազմէն ետ քաշուեցաւ: Ասոր վրայ, Տրովացիները նոր ոյժ
առին ու մէկէ աւելի յաղթանակներ տարին Յոյներուն վրայ, որոնք,
զգալի կերպով տկարացած կ'երեւային, յորմէ հետէ Աքիլլէսը քաշ-
ւած էր մարտի ասպարէզէն:

Պրիամոս, իրեններուն յաղթութիւններէն փառացած, մերժեց իր
արջիկը կնութեան տալ Աքիլլէսի, որ, այս անգամ բոլորովին կատ-
ղած, վերստին ասպարէզ նետուեցաւ վրէժխնդրութեան նոր թափով
մը պատերազմելով Տրովացիներուն հետ, աննկարագրելի քաջու-
թիւններ գործեց:

Այս հռչակաւոր ճակատամարտին մէջ երեւելի հանդիսացան էթէտլպացիներն ու Ամազոնները, որոնք, մեր Զարմայր նահապետին պէս, Պրիամոսի հրաւերին պատասխանած և ստուարաթիւ զուգերով անոր օգնութեան հասած էին: Սակայն, Յոյները յաղթեցին ի վերջոյ և ցիրուցան ըրին զանոնք:

Ճակատամարտի հրատապ բույժին, Աքիլլէս յանկարծ խոյացաւ Ամազոններու թագուհի Պինթազիդային վրայ, որ հեծեալ, մատակ սոխուծի մը պէս կը կոռէր. բռնեց անոր գլխի մագերէն և ձիէն վար ձգելով սպաննեց զանի: Պատերազմը սաստկացաւ հետզհետէ. Պրիամոսի որդին Հեկտոր, Տրովպագոյի պարիսպներէն՝ զուրս նետուելով, խիզախ յարձակում մը գործեց Աքիլլէսի վրայ, և ծանրապէս վիրաւորեց զանի, բայց յոյն հերոսը, արհամարհելով իր ստացած վէրքը, օրհասը մերձեցած շիկերէի մը պէս հետապնդել սկսաւ Հեկտորը, զոր բռնեց և անդթօրէն սպաննեց:

Հեկտորի եղբարական վախճանը յեղաշրջեց պատերազմին բաղդը: Պրիամոսի սագովիկներուն զրեթէ բոլոր շարքերը յուսահատութեան մէջ ինկած, սկսան քայքայուիլ:

Այս ընդհանուր լքումին ու սուգին մէջ, Զարմայր նահապետը յանկարծ տապարէզ կ'իջնէ և կը խոյանայ Աքիլլէսի վրայ: Ճակատամարտի դաշտին մէջ ճշմարիտ մենամարտի յուզիչ տեսարան մը կը պարզուի նոյն պահուն: Աքիլլէս ու Զարմայր զէմ առ զէմ կը կրուին և կռիւր կը տեսէ երկար ժամանակ, ու յաղթութիւնը կը մնայ անորոշ. երկու սոխուծներ, որոնք զիրար փարատելու աստիճան կը մօտենան կը փաթթուին, կը միանան իրարու և յետոյ կը հեռանան: Ասլահար, հազարաւոր աչքեր, պարիսպներուն դազաթէն կը զիտն երկու հերոսները, որոնք հաւատար ուժով և հաւատար կատաղութեամբ կը շարունակեն մարանչել:


Ի վերջոյ Զարմայր զետին կը թաւալի, Աքիլլէսէն սպաննուած: Յոյները, Պրիամոսի բանակին մէջէն, երկու հռչակաւոր հերոսներուն անկումը աննկելով, Աքիլլէսին հետ յարձակեցան Տրովպոսներուն վրայ, անինոյ ջարդեցին, մինչև որ Պրիամոս հարկադրուեցաւ իր Պոլիքսենոս աղջիկը ապ Աքիլլէսի կնութեան:

Պահ մը թշնամութիւնները վերստին դադրեցան և Աքիլլէս Ապոլոնի տաճարը գնաց, ամուսնութեան արարողութիւնը հոն կատարելու համար: Ընդդ այդ բույժին, Պրիամոսի որդին Պարիս, արովական պատերազմին սկզբնապատճառը, կամացուկ մը կը մօտենայ Աքիլլէսին, իբր թէ զանի համբուրելու և ամուսնութիւնը շնորհաւորելու համար, և ծոցէն հանելով մարդասպան դաշոյնը, կը մխէ անոր կուշտը:

Աքիլլէս կիսամուտ կ'իյնայ զետին, իր արիւնին մէջ թաւալգոր: Յոյները, որոնք հարսնիքի արարողութեանը ներկայ գտնուելու հա-

մար եկած էին Ապոլոնի տաճարը, անմիջապէս կը շրջապատեն իրենց հերոսը, որ հողեւարքի վերջին նոպաներուն մէջ կը գալարուէր, և զանի կ'առնեն կը տանին իրենց նաւը, ուր կը մեռնի:

Յունական բանակին մէջ մեծ խռովութիւն մը կը պայթի, ամէն կողմէ վրէժի ազդադակներ կը բարձրանան: Ասդին, Տրովաղացիները, Աքիլլէսի պէս անպարտելի հակառակորդի մը սպանման հետեւանքով փոխանակ ուրախանալու և քաջալերուելու, ընդհակառակը, աւելի թուլցան ու վճատեցան: Կը կարծէին թէ Ապոլոն աստուածը պիտի բարկանար իրենց դէմ, որովհետեւ ոճիր մը գործուած էր իր տաճարին մէջ և իրենց մայրաքաղաքը պիտի մասնէր Յոյներուն ձեռքը:



ԶԱՐՄԱՅՐ ԿԸ ՄՊԱՆՆՈՒԻ ԱՔԻԼԼԵՍԷՆ

Այս չարագուշակ կտակածները դժբաղդարար իրականութիւն կը գտնեն շուտով: Յոյները, Աքիլլէսի եղերական մահուան վրէժը լուծելու համար, ուժգին թափով մը կը յարձակին Տրովաղացիներուն վրայ, որոնք յաջորդական պարտութիւններ կրելով, հեռո՛հեռէ կը տկարանան և իրենք զիրենք անզօր կը զգան չարունակելու պատերազմը: Ի վերջոյ, Պրիամոսի փեսան Ենէաս, Անթենորոս և ուրիշ ազդեցիկ իշխանները կը ստիպուին հաւաքական զխմուսով մը հաշտութեան յորդորներ ուղղել Պրիամոսի, Յոյներուն քանի մը զխնայութեան ընելու պայմանով և կը խնդրեն որ շուտով այդ մասին բանակցութեան մասնէ թշնամի բանակին հետ շտակայն՝ Պրիամոս յամառօրէն կը մերժէ:

Տրովադայի իշխանները, իրենց թագաւորին դէմ սրդողած, զաղտնի դաշնադրութիւն մը կը կնքեն Յոյներուն հետ, և այս կերպով աւելի կը զօրացնեն զանոնք Պրիամոսի դէմ, որ լքուած և բոլորովին յուսահատած, կը պարտաւորուի Յոյներուն բանակը հաշտութեան պատուիրակութիւն մը զրկել, խոտտանալով, միեւնոյն ժամանակ, ընդունիլ անոնց բոլոր առաջարկները: Յոյները, Պրիամոսի ազամայ համակերպութիւնը տեսնելով, իրենք ալ կ'ընդունին հաշտութիւնը, և այսպէս, թշնամութիւնները կը դադրին երկուստեք և բարեկամական յարաբերութիւնները կը վերսկսին, երկու բանակներուն միջև ընծաներ ու մեծարանքներ՝ փոխանակուելով, մինչև որ, վերջապէս, մէջտեղէն կը վերնան թշնամութեան կտակածները:

Սակայն, ինչպէս յետագայ դէպքերը ցոյց պիտի տան, Տրովադան՝ յունական նեղաճատութեան զո՛ր պիտի ըլլար ի վերջոյ: Հաշտութիւնը կեղծ էր, և Յոյները, տասը տարի շարունակ պատերազմիկէ ձանձրացած ու յոգնած, կը խորհէին դաւադրական նարքի մը դիմել:

Գիկտիւս Կրետացին, Տրովական պատերազմին ժամանակակից Յոյն պատմաբանը, կը պատմէ թէ՛ Յոյները, ուզելով հնարքով մը տիրել Տրովադայի, Ողիսևսի խորհրդով, անուաւոր ոտքերով փայտէ ձի մը շինել տուին, անճառնի ու վիթխարի մեքենայ մը, և զայն հանդիսաւոր թափօրով մը վարեցին մինչև քաղաքին դուռը, հաստացնելով թէ՛ նոյն քաղաքի աստուածուհին ընծաներ կը տանին, և Տրովադացիները հրաւիրեցին ընդունելու այդ յարգական նուէրը, ինչան խաղաղութեան որ, կ'ըսէին, աստուածներուն օգնութեամբ կարելի եղաւ վերահաստատել: Քաղաքացիները, մեծ ուրախութիւններով ու հանդէսներով բացին քաղաքին դուռները, և պարիսպէն դուրս ելլելով, իրենց կրօնական պաշտամունքներուն համաձայն, ներս մտցուցին զայն, մեծաւաք հանդէսներով:

Յոյներէն շատերը, որոնք դարմանակալ կրտսայէին մօտակայ տեղերը, յանկարծ փայտէ ձիուն հտեւէն քաղաքը մտան իրենց զէնքերով: Ուրիշ աւանդութեան մը համաձայն, սպառազէն Յոյներ կը պահուրտէին արդէն ձի-մեքենայի փոքրին մէջ, և երբ այդ մեքենան քաղաքը մտցուեցաւ, իրենք դուրս ելան մէջէն և սկսան հայածել հոն խռնուած ամբոխը:

Ընդհանուր խռնակութեան միջոցին, պարիսպներուն ստքը ըսպատող միւս յոյն պատերազմիկները ներս խուժեցին, ու տիրեցին Տրովայի:

Թալան, կոտորած, հրդեհ: Գիչերուան արհաւիրքին մէջ սուրբերը կը չողային ու բոցերը կը փայլատակէին, ամէն կողմէ լաց ու կոծ,

վայնասուն . հոյակապ ապարանքներ ու բնակարաններ հրոյ ճարակ եղած , կը փլչէին ու իրենց փլատակներուն սակ կը թաղէին անպաշտպան ընտանիքները , ծեր , կին , աղայ և կոտորածը կը տարածուէր :

Վերջապէս յարձակեցան արքայտկան պալատին վրայ և անդթօրէն սպաննեցին Պրիամոս թագաւորը , նաև իր որդին՝ Պարիսը . իսկ Մենելաոս , արքունիքին մէջ սաղին անդին խուզարկելով , գտաւ իր առեւտնգուած կինը՝ Հելլենէն և իր ձեռքով սպաննեց զանի , բովանդակ չարիքին աղբիւրը :

Այսպէս վերջացաւ Տրոյադայի աւերումն ու կործանումը , տասը տարի տեւող պաշարումէ մը վերջ :

Այն դարու ժամանակակից պատմիչները հետեւեալ մանրամասնութիւնները կը գրեն այս տասնամեայ պատերազմին մէջ երկուտեք ինկած զոհերուն վրայ . — Յոյներէն՝ ութը հարիւր եօթանասուն կամ ութը հարիւր ութսունըվեց հազար հողի , նոյնչափ ալ Տրոյացիներէն . որովհետեւ , միայն պատերազմին մէջ ինկած են վեց հարիւր եօթանասունը վեց հազար , իսկ քաղաքին առման ատեն ջարդուած են երկու հարիւր եօթանասունը վեց հազար հողի :

Դիկտիւս կը պատմէ թէ՛ պատերազմի զոհերուն դիակները ժողովելով և ամփոփելով կ'այրէին , յետոյ հողին տակ կը թաղէին :

Ուրիշ հին պատմիչներ ալ կ'աւանդեն թէ՛ Տրոյացի Անթենորոս մեծ իշխանը , կոտորածէն ձողսպրած , փախած է իրեններուն հետ Իտալիա , Վենետիկի ստճամանները , և Բասուս քաղաքը հիմնած է :

Գալով Պրիամոսի փեսայ Ենէաս իշխանին , ժամանակակից պատմիչները կ'աւանդեն թէ՛ յաջողած է փախչիլ Տրոյադայէն , և ստճանիլ նաւարկութենէ մը վերջ , ցամաք ելած է Իտալիա : Այս իշխանին նկատմամբ պիտի խօսինք յաջորդ գլխուն մէջ :



Առսնին կոխներ. — Շաւարժ, Պերն Ա., Արբուն, Պերն Բ.,
 Բազուկ, Հոյ, Յուսակ, Ամբակ Բ., Կայսլակ,
 Փառնաւազ Ա., Փառնակ Բ. եւ Սկայորգի նահապետները.
 Ենեառ Իսայիա կը մեկնի եւ հոն կը հիմնէ
 Նոր Տրովան. — Ենեառի յաջորդները. — Հռոմուլոս
 եւ իր յաջորդները. — Հայկազանց
 նահապետներուն իշխանութիւնը
 կը վերջանայ:

Զարմայր նահապետին մահը տակնուվրայ ըրած էր Հայաստանը,
 երկու տարի շարունակ, շիտթութիւններն ու խառնակութիւնները
 տեւեցին հայ իշխաններուն մէջեւ, որոնց իւրաքանչիւրը կ'ուզէր ինք
 յաջորդել Տրովազայի պատերազմին մէջ ինկած Հայոց նահապետին:
 Ի վերջոյ. Շաւարժ Ա.ի սերունդէն կայսառ ու կորիճ երիտասարդ
 մը, Շաւարժ անուն, Հայաստանի գանազան գաւառներուն տիրելով,
 կը յաջողի իրեն հպատակեցնել ժողովուրդը, և իրրեւ օրինաւոր յա-
 ջորդ Զարմայրի, ազգը կը կառավարէ 43 տարի, ինչպէս կը գրեն
 Խորենացին, Յովհաննէս Կաթողիկոս, Մազիստրոս, Սամուէլ(*) և
 Վարդան հայ պատմիչները:

Շաւարժ Բ.ի մահէն ետքը, Սիւնեաց նահանգէն Պերն անուն զօ-
 րաւոր իշխան մը կ'ելլէ երեւան և տիրելով Հայաստանի բոլոր գա-
 ւառներուն, ինքզինք յաջորդ կը հռչակէ Շաւարժ Բ.ի:

Պերճ նահապետին առաջին գործը կ'ըլլայ վերանորոգել բանակը,
 զօրացնելու համար զինուորական իշխանութիւնը. այսպէս, մէկ կողմէ.

(*) Սամուէլ երեց Անեցի, Ժ.Գ. Գարու ազգային պատմագիր:
 Ազիւսակներու մէջ ամփոփուած պատմութիւններու հաւաքածոյ մը
 գրած է Ազամեն սկսեալ մինչեւ Գրիգոր Կարողիկոս, Ներսէս Շնոր-
 հալիին եղբայրը. Արդէն նոյն կարողիկոսի խնդրանքովը յօրինած է
 իր երկասիրութիւնը, որ «Քրտիկոն» կամ «Ժամանակագրութիւն» կը
 կոչուի եւ կը հասցնէ մինչեւ Քրիստոսի 1164, կամ Հայոց ՌժՊ
 բուականը: Իսկ կարգ մը պատմութիւններ ու ժամանակագրութիւն-
 ներ, որոնք մէկ քանի օրինակներու մէջ Սամուէլի երկին կցուած կը
 տեսնուին, ուրիշներէն գրուած եւ անհիմն են:

մէկիկ մէկիկ կը նուաճէ հայկազանց իշխանութեան թեկնածու աւատականները, որոնց հպատակ ժողովուրդները կը հարկադրուին ճանչնալ իր իշխանութիւնը. միւս կողմէ, իր զէնքերը տանելով սահմանազրուխէն անդին, հեռուոր գաւառներն այ իր արտապետութեան ներքեւ կ'առնէ և 35 տարիներ իշխանութիւն վարելէ յետոյ կը մեռնի:

Պերճի կը յաջորդէ Արբուն, որ 27 տարի երկիրը կառավարել յետոյ կը մեռնի: Այս նահապետին օրով է որ Սաւուզ թագաւոր կ'օժուի բովանդակ Իսրայէլի ժողովուրդին վրայ:

Արբունին կը յաջորդէ Պերճ Բ., Դաւիթ մարգարէ-թագաւորին ժամանակակիցը, որ իշխանութիւնը վարեց 40 տարի:

Պերճ Բ. ի կը յաջորդէ Երկայնակեաց Բագուկ նահապետը, 50 տարի կառավարելով ազգը: Ասոր օրով կ'ըլլայ հիմնարկութիւնը Սողոմոնի տաճարին, Քրիստոսէ չուրջ հազար տարի առաջ:

Բաղուկ նահապետին յաջորդը կը կոչուի Հոյ, 44 տարի կառավարած և Գրիգոր Մազիսարոսէ հրաւատեսիլ կոչուած է:

Յետոյ յաջորդաբար երկիրը կը կառավարեն Յուսակ՝ 31 տարի, Ամրակ Բ.՝ 27 տարի, Կայսրակ՝ 45 տարի: Այս վերջինը նախնիքներուն շատերէն աւելի հզօր ըլլալով, մեծամեծ քաջագործութիւններով, հայրենի սահմաններէն վնասած է թշնամիները:

Կայսրակի ժաճէն ետքը նահապետ եղաւ Փառնուազ Ա.՝ 34 տարի, յետոյ Փառնակ Բ.՝ 40 տարի: Այս նահապետին ժամանակակից կը համարուի Ասորեստանի Փուս կամ Փուլ թագաւորը, որուն օրով կ'ըսուի թէ Նինուէի մջ կը քարոզէր Յովնան մարգարէն: Եւ այս Փառնակ Բ.ը իր հեղզ ու թոյլ ընթացքով, հակադատները կը համարուի իր նախորդին. իր օրով է որ օտար ազգեր արշաւեցին Հասասանի ներսերը, և շատ մը գաւառներ ինկան Ասորեստանի արտապետութեան ներքեւ:

Փառնակ Բ. ի շարաշուք չրջանը, որ դժբաղդաբար չուրջ քառասուն տարի տեւեց, չուսով կը մտայուի հայ նահապետի մը յաջորդելովը: Այս նահապետը նոյնինքն Սկայորդին էր, Հայկի սոճմէ հուժկու իշխան մը, որ յաջողեցաւ, իր զէնքերուն չնորհիւ, մէկիկ մէկիկ ետ առնել զբաւուած գաւառները, վնասեց թշնամիները, և 17 տարի կառավարեց երկիրը:

Սկայորդի նահապետին ժամանակակից կը համարուի Հոսուլոս, Հոսոյի հիմնադիրը:

Հ, Մ. Չամչեան, քաղելով Գարէսէ, Դիկախէսէ, Վիրգիլիոսէ, Դրոնեսիոս Ալիկառնացիէն, Տրոսու Լիվիոսէ(*) և ուրիշ օտար պատմա-

(*) Տրոսու Լիվիոս՝ անուանի լատին պատմաբանը, Բասուպի սահմաններէն, Հոնով գացած եւ մեծ համակրանք գտած եր Սոգոսոսու

գիրներէ, իր «Պատմութիւն Հայոց» անուն եռահատոր ստուար երկասիրութեան մէջ մէկ քանի էջեր նուիրած է Սկայորդի Նահապետին մամանակակից, պատմական կարեւոր դէպքերուն, որոնք կը վերաբերին օրինակական պատմութեան: Մենք աւելորդ չենք համարիր այս էջերուն մէջ թարգմանաբար արտագրել այդ դէպքերուն ամփոփոյքը:—

«Երբ Տրովան առնուեցաւ, կը գրէ Հ. Մ. Չամչեան, Տրովացիներու նախարարներէն մէկը՝ Ենէաս, Պրիամոս թագաւորին փեսան, այն սահմաններէն մեկնեցաւ, Իտալիա երթալու համար քանըմէկ նաւերով և երեք հազար չորս հարիւր մարդիկներով և նաւարկութեան մէջ, Ադրիական ծովին բերանը հասնելով, երկու քաղաքներ չինեց հոն, Կորկիրոս (Քէօֆէզ) և Մելինա և Յետոյ, Իտալիոյ Տրեբրիս գետին վրայ չինեց նոր Տրովան, ուր նստաւ և իրեն կին առաւ Իտալիոյ Լատինոս թագաւորին աղջիկը Լարինա. այս թագաւորին անունով կոչուեցան Լատինները, որոնք Պելոպոնիսի Յոյներէն սերած էին, ու երբ Լատինոս մեռաւ, ասոր տեղ ինք Ենէասը թագաւորեց: Եւ Ենէասի մահէն ետքը, թագաւորեց Ազքանիոս որդին, իր առաջին կնոջմէն, որ Տրովայի Պրիամոս թագաւորին աղջիկն էր:

«Եւ որովհետեւ Ենէասի երկրորդ կինը Լարինան յղի էր, վախնալով որ չըլլայ թէ Ազքանիոս չարիք մը հասցնէ իր արգանդի երատային, անասուններուն մէջ փախստական ինկաւ և հոն տշխարհ բերաւ արու զաւակ մը, զոր կոչեց Յուլիոս Սիլվիոս, այսինքն՝ անտառային Յուլիոս: Երբ Ազքանիոս իմացաւ ասիկա, թագաւորութիւնը կտակով տուաւ Սիլվիոսի, իբրիւ իրեն եղբորը. և Սիլվիոսէն ետքը յաջորդեցին տասներմէկ թագաւորներ:

«Ասոնցմէ վերջը թագաւորեց Ամուլիոս, որ ուզելով ապահով կերպով սրդիէ որդի թագաւորել, աքսորեց իր նույնտոր եղբայրը, և սպաննեց անոր Եզեստոս անուն որդին, և անոր աղջիկը Ռեան արգելափակեց Վեստասի տաճարին մէջ: Իսկ Ռեա, տաճարի քուրմէն յղի մնալով, երկու զաւակներ ծնաւ, Հոմուլոս ու Հանմոս. երբ Ամուլիոս իմացաւ զայն, հրամայեց Տրեբրիս գետը ձգել զանոնք, ուր, ջուրերու պիքներէն, գետեղբքը հանուեցան. հովիւ մը գտաւ և տարաւ իր տունը, և զանոնք սնուցանել տուաւ իր կնոջը, որ Լուբա կը

կայսեր եով, որ իրեն յանձնարարած է գրել Հոմերի պատմութիւնը: Ագոստո կայսրը կը մեռնի, Լիվիոս՝ Բասուս կը վերադառնայ, ուր Ովիսիոս բանաստեղծին հետ միեւնոյն օրը կը մեռնի, Քրիստոսի 21 բուականին: Մեծ արժեք ունի ասոր պատմութիւնը: Իւ ողջութեանը մեծ հռչակ հանած էր արդէն, այնպէս որ, Պլլինիոս Սպանիացին Հոմոս եկած էր, յասկապէս զանի տեսնելու եւ հետը խօսելու համար:

կուռէր, այսինքն՝ էգ զայլ, և այդ պատճառով ըսուեցաւ թէ՛ կրկուքն ալ զայլէ մնունդ աւին:

« Ասոնք մեծնալով և տեղեկանալով բոլոր անցած դարձածներուն, իրենց գլուխը հաւաքելով շատ մը հովիւներ և յանկարծակի յարձակելով մտան քաղաքը, ուր Ամուլիոս թաղաւորը կը նստէր, և մտնելով անոր, սրախողխող սպաննեցին զանի և թաղաւորութեան զանին վրայ տարին զրին իրենց Նումփոտր հաւը, զոր Ամուլիոս աքսորած էր: Եւ Նումփոտր, ասոր փոխարէն անոնց ընդարձակ տեղ մը պարգեւ տուաւ, և հրամայեց որ քաղաք մը շինեն ու հոն իշխանութիւն վարեն:

« Հռոմուլոս քսան տարու էր արդէն, երբ հեազհեաէ զօրանալով, այն տեղը շինեց Հռոմ հռչակապ քաղաքը, Հայոց Սկայորգի նահապետին իշխանութեան վերջին տարին, 751 (Ք. Ա.) թուականին:

Եւ որովհետեւ քաղաքին պարիսպը ցած էր, անոր Հռեմսս եղբայրը, արհամարհելով ցատքեց անցաւ վրայէն: Հռոմուլոս բարկացաւ և կասկածելով թէ նոյնիսկ իր վրայ պիտի բռնանար, սպաննեց զանի (ինչպէս կը զրեն Լիվիոս, Փլորոս^(*), Պլուտարքոս, Սիւնկել և Ալիկառնացին):

« Հռոմուլոս, այս քաղաքը շինելէ վերջ, անոր մէջ կարգուկանոն դրաւ, և բնակիչները բաժնելով երեքի, իւրաքանչիւր մասին համար վերակացուներ կարգեց, անսակ մը զօրապետներ, և երեք մասերը նորէն բաժնեց տասը կարգերու, որոնց վրայ տասնապետներ դրաւ: Մեծամեծներն ու տոճիկները զատեց աղքատներէն և զանոնք տեսակ տեսակ դատատաններու և իրուռնքներու պաշտօնատարներ նշանակեց, ասոնց ժողովը կոչուեցաւ Սինկլիլոս կամ Ծերակոյտ, որուն մեծամասնութեան կամքին առջեւ պարտաւոր էր խնորհիլ թաղաւորը: Բայց կրը Հռոմուլոս սկսաւ ամենուն վրայ ալ բռնանալ, Սինկլիտոսները զազանի սպաննեցին զանի, 32 տարի իշխանութեան գլուխը մնայէ յետոյ, և տարածայնութիւն մը հանեցին թէ աստուածները զանի յափշտակած են. այդ պատճառով է որ Հռոմուլոս աստուածացաւ սամիկներէն:

« Հռոմուլոսէ վերջ, Հռոմի թաղաւոր նստաւ Նումա Պոմպիլիոս: Ասի՛ Հռոմի մէջ կուսքերու բազիններ կանգնեց, անոնց պաշտօնեաներ կարգեց, և խորութեան օրէնքներ սահմանեց, հոյակապ տաճար մըն ալ շինեց Իտալիոյ սուաջին թաղաւոր Յանտի անունովը, զոր աստուածացուցած էին, և խաղաղութեան տաճար անուանեց

(*) Փլորոս, լատին պատմաբանը, համառօտ ոճով մը գրած է պատմութեան բովանդակութիւն մը, Հռոմուլոսէն սկսեալ մինչեւ Օգոստոս կայսրը:

զայն, այդ սաճարը պատերազմի ատեն կը բանային և խաղաղութեան ժամանակ կը գոցէին: Այս թագաւորը տարին տասներկու ամիսներու բաժնեց (որովհետեւ կ'ըսուի թէ առաջները, տարին տասն ամիս կը հաշուէին այն կողմերը), անոնց վրայ աւելցնելով Յունիսը՝ ի պատիւ Յանոսի և Փետրուարը՝ Հռոմի նորոգուելուն և մաքրուելուն համար, որովհետեւ Փետրուարը մաքրութիւն կը նշանակէ:

Նուազէն վերջը թագաւորեց Տուլլոս Հոստիլիոս, որ Հռովմայեցիներուն մէջ ազգական մրցումներու վարժութիւնը մտցուց, շատ մը յաղթութիւններ Երուս և մեծցուց Հռոմը: Ատոր օրով է որ պատերազմ մը ծագեցաւ Հռովմայեցիներուն և ասոնց ժամանակակից Ալբոնայիներուն միջեւ, և վճական յաղթութեան իբրեւ պայման գրին, երկուստեք երեք այրեր նշանակել, որպէս զի յաղթուող կողմին իշխանները պարտութիւն խտտովանին: Այս ամիսը դարմանալի բան մը կը պատահուի, գրուելու արժանի. իբր թէ այն ատեն Ալբոնայի մէջ միտալին ծնած երեք հարազատ եղբայրներ գտնուեցան, որոնք կը կոչուէին Կորսիսներ, նոյնպէս Հռովմի մէջ գտնուեցան միասին ծնած ուրիշ երեք եղբայրներ, որոնք Ովրասիսներ կը կոչուէին. վեցն ալ մէկ օրուան մէջ ծնած, երկու քոյրերու որդիներ:

Ասանք երկու կողմերէն նշանակուեցան, և երբ դաշտին մէջ իրարու դէմ զարնուեցան, ինկան երկու Ովրասիոսները, իսկ Կորսիսաները երեքն ալ չարաչար վիրաւորուեցան: Յետոյ Ովրասիոսներէն մէկը, ջանալով յաղթել երեք վիրաւորեալներուն, բայց չկրնալով միանգամայն երեքին ալ դէմ դնել, սկսու փախուստ կեղծել, և անոնք հետապնդեցին մինչև որ իրարմէ անջատուեցան: Երբ Ովրասիոս սկսաւ զանոնք իրարմէ դատուած, նորէն ետ դառնալով, մէկիկ մէկիկ զարկաւ սպաննեց զանոնք, և ասով՝ Հռովմայեցիները յաղթող եղան: Իսկ Տուլլոս, Հռոմի թագաւորը, ի վերջոյ, իր ընտանիքին հետ մէկտեղ կրակը նետուեցաւ ու մեռաւ:

Երբմէ ետքը թագաւորեց Անկոս Մարտիոս, որ աւելի մեծցուց Հռոմը, նոր պարիսպով մը պատելով զայն, և յաղթեց Լատինացիներուն: Ասկէ ետքը թագաւորեց Տարկուինոս Պրիսկոս, սա, Հռոմի թագաւորներուն մէջ առաջինը եղաւ ինքնիրեն արքայական շուք ու ձեւ սուղոյ. ծիրանի հազաւ և ձեռքին մէջ բռնեց արքունի գաւազան: Այս թագաւորը՝ ալ աւելի ընդարձակեց քաղաքին պարիսպը և Անկոս Մարտիոսի որդիներուն կողմէն սպաննուեցաւ զաւաղրութեամբ մը:

«Տարկուին Պրիսքոսէն ետքը թագաւորեց Սերվիոս Տուլլիոս: Ունէր երկու աղջիկներ, զորոնք կնուութեան սուսաւ իր նախորդին՝ Տարկուինոսի երկու թոռներուն. երէց աղջիկը, հեզ ու քաղցրաբարոյ որ իր հայրը կը սիրէր, ամուսնացաւ Լուկիոսիս հետ, զաժան ու գա-

զանաճիտ մարդ մը . իսկ կրասեր ազջիկը՝ լիբբ ու վայրենաբարոյ , որ իր հայրն ալ կ'ատէր , կնութեան արուեստու Որոնդէսի , հեզահամբոյր ու խաղաղասէր մարդ մը : Երբ Լուկիոս կը զրգուտէր իր աներոջը զէմ , իր կինը կը հանդարակցնէր զինք . իսկ երբ , Որոնդէսի կինը կը յոխորտար իր հօրը թագաւորութիւնը ձեռքէն առնելու , իր էրիկը զինք կը մեղմէր : Բայց հուսկ յետոյ , վայրագ ազջիկը միտարանելով իր տագերոջ՝ Տարկուին սուպերբոսի , այսինքն Գոռոզի հետ , սպաննել սուաւ իր հայրը Տուլիոս , և կառքով կոսիկաւելով անցաւ անոր զիսկին վրայէն , և նոյնինքն Տարկուինոս Գոռոզը թագաւորեց : Աս հնարեց Հոսի մէջ բանտերն ու տանջանքները , և երբ ծայրայեղութեան տարաւ իր սճիրները , սինկլիտոսները թագաւորութենէ մերկացուցին զանի և աքսորեցին :

« Եւ այնուհետեւ Հոսիմայեցիները Հոսի մէջ ա՛յ ինքնակալ թագաւոր չի գրին , այլ տարուէ տարի երկու հիւպատոսներ , բայց հաճելի ըլլալու համար ժողովուրդին , որոնք կը փափագէին թագաւորի անուանով պարծնայ , ընտրեցին ծերերէն մէկը , և զանի մեհննական իրերու թագաւոր , կամ քրմապետ անուանեցին , իբր թէ լո՛կ կուտքերու պաշտամունքին հոգ պիտի տանէր և ուրիշ բաներու բնաւ չը պիտի միջամուխ ըլլար : Եւ Հոսիմայեցիներուն այս իշխանութիւնը — բաց ի հիւպատոսութենէ , որ տարուէ տարի կը նորոգուէր — , զանազան փոփոխութիւններ կրեց մինչեւ միահեծան կայսրութիւնը , Յուլիոսի , մանաւանդ Օգոստոս կայսեր օրերը » :

Հոսիմէական պատմութեան այս նախնական շրջանի թագաւորներուն ծանօթանալէ յետոյ , մեր ընթերցողները պիտի գարծնալ առիթ ունենան ներկայ Պատմութեանս ընթացքին մէջ հանդիպելու աւելի կարեւոր ու ծանրակշիռ գէպերու , որոնք իշխած են տիեզերքի ճակատագրին : Եւ հայ ազգը , արեւելքի ժողովուրդներուն մէջ թերեւս ամենէն յամառը , ինչպէս առաջիկային պիտի տեսնենք , լրջօրէն զբաղեցուցած է այդ անհղաղօր պետութիւնը :

Այս զլսով կը վերջանայ Հայկազանց Հարստութեան առասպելական շրջանի նահապետներուն իշխանութիւնը , որոնց վերջինը կ'ըլլայ Ակայորդին :



Ք Ա Գ Ա Ի Ո Ր Ն Ե Ր

Փ Ն Ո Ւ Խ Ե Ը .

Արբակես կամ Վարբակես Մարաց իշխանը՝ Սարգանաբայի դեմ.
Հայասանի եւ Բաբելոնի իշխանները՝ Վարբակեսի կը դաճեցանցին.

Նինուէ կը պաշարուի երեք տարի. — Սարգանաբայ ինկնասպան.

Նինուէի առումը. — Պարոյր Հայոց առաջին քաղաւոր.

Ասորեսանի սեռութիւնը կը բաժնուի երեքի. — Թկլասպալասար

կամ Փոքր Նինոս. — Սալմանասար եւ Սենեքերիմ.

Աղբամեյիք եւ Սանասար հայրասպանները Հայասան կ'ապաստանին.

Սանասունք կամ Սասունք. — Արծրունիք եւ Գնունիք.

Ասորեսանի ու Բաբելոնի քաղաւորութիւնները

կը միանան. — Հայերը Մարաց ու Պարս-

կական կայսրութեան օրով:

Մինչ Արեւմուտքի մէջ, Տիրերիս գետին եզերքը, Հուսի, Յա-
ւիտենական Քաղաքին պարիսպները կը բարձրանային, սաղին, Արե-
ւելքի գողը, Տիգրիսի կողերուն վրայ կառուցուած հինաւուրց Նին-
ուէին հիմերը կը սարսէին: Արեւմուտքի մէջ նոր կայսրութիւն մը
կը ծնէր, Հոռովմէականը, որ քիչ յետոյ տիեզերքի տիրուհին պիտի
ըլլար. իսկ Արեւելքի մէջ, հզօր, աճարկու, երկրասասան կայսրու-
թիւն մը, Ասորեստաննանը, գահավիժօրէն կը զիմէր դէպի ճակա-
տագրային կործանումը:

Եւ այս պատմական յիշաշրջումները տեղի կ'ունենային մեր
Սկայսրդի նահապետին մահուան վաղօրոյցայնին:

Այդ տարիները, Նինուէի մէջ կը թագաւորէր Ասորեստանի Թօ-
նոս Կոնկոլիեոսը, կամ որ նոյն է, Սարգանաբայը, Փուղայի որդին,

կնամոյ, կնամարդի, թուլամորթի, զեղիս ու մոլի, և համայութիւնն-
բու հետամուտ, աւելորդապաշտ թագաւոր մը, որ իր արքունիքին
մէջ, իր սեփական կիներուն հետ, հեշտանքի մէջ թաղուած ու ինք-
զինք կերուխումի տուած, երկրին իշխանները կ'արհամարհէր ու
կ'անարգէր, և ժողովուրդը կը կեղեքէր, զայն բեռնաւորիով ծան-
րածանր տուրքերով ։

Սարգանարալի այս ընթացքը, բնականաբար ըմբոստութեան
պիտի առաջնորդէր իր հպատակները ։

Եւ ընդվզումը պայթեցաւ ։

Ապստամբութեան առաջին նշանը տուին իշխանները, որոնց պա-
րագլուխը կը համարուէր Արրակէս Մեղացին, հուժկու և խրոխտ
աւատապետ մը, Սարգանարալի հարկատու իշխաններէն ։

Կը պատմուի թէ այս իշխանը Նինուէ եկած էր օր մը, Սարգա-
նարալի հետ կարեւոր ինդրի մը համար տեսակցելու, և երբ, ար-
քունիքին մէջ կը տեսնէ այս թագաւորը կնոջ տարազով, կիներու
մէջ խնեհացած, սաստիկ կը բարկանայ, և անմիջապէս մեկնելով, կը
խորհի սպստամբութեան դրօշակը պարզել իր վեհապետին դէմ ։

Վարրակէս, իր ծրագիրը գլուխ հանելու համար, կը դիմէ նախ
մեր Պարոյր նահապետին, որ Հոռոմի հիմնարկութեան երկրորդ տարին
յաջօրոյց էր իր հօրը՝ Սկայորդի նահապետին, և կարեւոր բարենո-
րոգումներով կը կառավարէր իր երկիրը, կը դիմէ նաեւ Բարեւոնի
Բելեսի իշխանին, միեւնոյն նպատակով, երկուքին ալ խոստանալով
թագաւորութեան բարձրացնել իրենց իշխանութիւնը, եթէ իրեն հետ
դաշնակցին Սարգանարալի դէմ ։

Պարոյր ու Բելեսի, դաշնակցելով Վարրակէսի, իրենց ստուարա-
թիւ զուճեկերով կ'արշաւեն դէպ ի Նինուէ և կը պաշարեն զայն ։ Տես-
նելով այս անագին բանակները, որոնք մարտիներու պէս կը ծածկէին
չրջակաները, և կը սպառնային պարիսպներէն բռնի ներս մտնել,
Սորգանարալ, սարսափահար կը քաշուի իր արքունիքին խորը. սա-
կայն տեղի տալով իր պալատականներուն, կը ստիպուի թագաստոցն
զուրս կլլել և անցնելով իր զօրքերուն գլուխը, կուր կը մղէ թըշ-
նամի գունդերուն դէմ ։

Սարգանարալ, պատերազմին մէջ չարաչար պարտութիւններ կը-
րած, հագիւ կը յաջողի փախչիլ իր մայրաքաղաքին ներսերը ։

Նինուէ պաշարուած կը մնայ ամբողջ երեք տարիներ. իսկ Սար-
գանարալ, բոլորովին անհոգ, կը շարունակէ վարել նայն ցօփ ու զեղի
կեանքը, արեւելքի զանազան երկիրներէն բերուած գեղուհիներու թե-
ւերուն մէջ ։ Դուրսը թշնամին քայլ սու քայլ կ'առաջանար և կըս-
պառնար պարիսպները բռնաբարել, իսկ ներսը, մահամերձ կայարու-
թեան մը խնեհ զահակալը, գիներբուքներով, ցայգատուն ու պօր-

տախաղ սարքած, ճակատանութեան ախտերուն մէջ մխրճուած, չնահանօրէն կը դիտէր իր մայրաքաղաքին հոգեվարքը, որովհետեւ, պատգամախօսը գուշակած էր թէ՛ նինուէն չպիտի առնուի մինչև որ Տիգրիս գետը չը յորդէ և քաղաքը չողողէ ։

Պաշարումը տեւեց ամբողջ երեք ասօրի, և կարելի չեղաւ աննկքաղաքը, մինչև որ, չորրորդ ասօրին սաստիկ անդատարարի մը Տիգրիս յորդելով, ջուրերը դէպ ի քաղաքը խուժեցին և փյուցցին պարիսպին մէկ կողմը ։ Սարգանաբալ աճաբեկ, յուսահատած, իր ապրտամար իշխաններուն ձեռքը գերի չիյնալու համար, արքունիքին մէջ հսկայ փայտակոյտ մը բարձրացուց, նախ ինք մտաւ մէջը, յետոյ իրենները, համանիներ ու ներքինիներ, հոն անզաւորուեցան բոլոր արքունի գանձերը ։ Սարոյկը միաց, բոցը բարձրացաւ և Սարգանաբալ, իրեններով միասին ողջակէզ եղած, մոխրացաւ ։

Վարրակէս, Պարոյր ու Բելիսի, այս երեք դաշնակից իշխանները, պարիսպին խրամառանց ներս խուժեցին իսկոյն ստուար գունդերով և առին նինուէն ։

Վարրակէս Մեղացին, իր դաշնակիցներուն ձեռքով թագաւոր նստաւ Ասորեստանի մայրաքաղաքին մէջ, որուն բնակիչները զրկարաց ընդունեցին իրենց նոր աէրը, կայսրութեան ազատարարը հոշակելով զանի, այնքան զգուած՝ Սարգանաբալէն ։

Վարրակէս իր խոտտումը կատարեց, երկու դաշնակիցները, Հաստանի Պարոյր նահապետը, և Բարելոնի Բելիսի իշխանը, երկուքն ալ բարձրացուց թագաւորութեան, պայմանաւ որ իրենք անկախօրէն կառավարեն իրենց երկիրը, իսկ ինք՝ Վարրակէս, անցաւ Մարաստան, ուր փոխադրեց միահեծան կայսրութիւնը, նինուէի վրայ թագաւոր կարգելով Թկրատպալասարը ։

Այսպէս, Ասորեստանի անարկու կայսրութիւնը, շուրջ 1500 տարի տեւելէ յետոյ, երեք մասերու բաժնուեցաւ. Բարելացիներուն, Ասորեստանցիներուն ու Մարաց, այս վերջիններուն հետ ըլլալով նաեւ Պարսիկները ։ Իսկ Հայերը, թէևս միւս ազգերուն պէս չէին գտնուեր Ասորեստանի իշխանութեան ներքեւ, բայց իրենց երկիրը պարզ նահապետներով կը կառավարուէր մինչև այն ատեն ։

Ասորեստանի կայսրութեան անդամատութեան կը զուգադիպի ուրեմն Հայկազանց Թագաւորութիւնը, որուն առաջին պսակաւորը Պարոյր եղաւ, Վարրակէսի բազաւոր դաշնակիցը ։

Սորենացին, Յովհաննէս կաթողիկոսը, Հերոդոտոս, Աթենէոս (*).

(*) Արեւեկոս, յոյն մեծամունց քերթող ու մատենագիր, եղիպսոսի սահմաններէն, Բ. Գարուն մեջ կ'ապրէր, Մարկոս Օրելիոսի օրով. նոյն ինքն Անտոնինոս փիլիսոփան ։

Դիողորոս, Յուստինոս, Կաէսիաս, Սիւնկերոս, ինչպէս նաեւ Ովսերիոս ու Կալմէթ(*) , ազգային թէ օտար, բոլոր հին մատենագիրները մանրամասնօրէն գրած են այս պտտմական զէպքերը :

Սարգանարայի զժբաղղ յաջորդը Թկլատպալասար, 19 տարի թագաւորեց Նինուէի մէջ : Օտար պատմագիրները Փոքր Նինոս կը կոչեն զինք, Մեծ Նինոսին անուանովը, որովհետեւ, այս վերջինը՝ Նինուէն նորոգած ու անոր առաջին թագաւորը եղած է, մինչ միւսը, Փոքր Նինոսը, նոյն փառաւոր կայսրութեան բաժանումէն վերջը, Նինուէի մէջ առաջին թագաւոր նստած է. սաի այն Նինոսն է, որմէ օղնութիւն խնդրեց Յուդայի Աքազ թագաւորը, Եսայի մարգարէին օրովը :

Թկլատպալասարի յաջորդը Սալմանասար 15 տարի թագաւորեց, Սամարիան պաշարեց, Իսրայելացիները գերի վարեց և Իսրայէլի թագաւորութիւնը ջնջեց :

Սալմանասարի յաջորդեց Սենեքերիմ, որ Յուդայի Եզեկիա թագաւորին օրով, ահագին ուժով մը քաղեց Երուսաղէմի վրայ, բայց ամօթայի պարտութիւն մը կրելով, գլխիկոր վերադարձաւ Նինուէ, ուր քուրմերէն պտտգամ ստացաւ թէ՛ աստուածները բարկացած են իրեն զէմ և թէ, իրբւս միակ միջոց հաշտութեան, ինք պարտաւոր է Ասրաքի կուռքին զոհել իր երկու որդիները, Աղրամուէք և Սանասար : Նինուէ վերադարձին վրայ յետոն օր անցած էր, երբ օր մը Ասրաքի կուռքին առջեւ կեցած կ'երկրպագէր Սենեքերիմ. յիշեալ երկու որդիները, իմացած ըլլալով իրենց հօրը մտադրութիւնը, յանկարծ յարձակեցան վրան ու սպաննեցին զանի :

Սենեքերիմի յաջորդեց իր միւս որդին Ասորդան կամ Ասարհազդոն. իսկ երկու հայրասպան եղբայրները փախան Հայաստան, Աքարատի երկիրը (Ս. Գիրք, Դ. Թագ. 19. — Եսայի, 37. — Տոր. 1) և ապաստանեցան Պարոյրի քով, որ երկուքն ալ հլւրատիրեց և յետոյ բնակութեան տեղեր յատկացուց անոնց : Սանասար բնակեցաւ Հայաստանի արեւմտեան հարաւային կողմը, Ասորեստանի սահմաններուն մօտերը, ուր, ժամանակ մը վերջ բազմանալով, իրմէ սերած

(*) Օգոսիոնոս Կալմէթ, Ս. Բենեթիկոսի կարգէն, Ֆրանսայի Սենոն քաղաքէն արքայ մը, նշանաւոր գրագէտ մըն էր, գրած է 12 հասորներէ բաղկացած տեղեւորական պատմութիւն մը, ինը հասորներէ բաղկացած Ասուածաւանդի մեկնութիւնը, վեց հասորներով Ս. Գիրքերու մեկնութիւն մը, նոյնպէս Ասուածաւանդի վրայ մեծ բառարան մը : Այս մատենագիրն ժամանակագրութիւնը, ինչպէս նաեւ Պեսալիսիսն ու Ովսերիոսիսը, բոլոր միւսներէն աւելի նշանաւոր ու սոյոգ կը կարծուի :

ընակիչները ծածկեցին բովանդակ Սիմ լեռը, և իրենց նախահօր անունովը կոչուեցան Սանասունք, կամ ուսմիօրէն Սասունք։ Ասոնց իշխանները, մէկէ աւելի քաջութեան արարքներով մեծ հռչակ հանեցին և մեր թագաւորներուն հանդէպ հաւատարմութեան փայլուն զբաւականներ ցոյց տալով, այդ կողմերուն վրայ կառավարիչ կարգուեցան և կազմեցին աւանձին նախարարութիւն մը։

Պարոյր թագաւորը՝ Սանասարի եղբոր Աղբամալէքի ընակութեան տեղ տուաւ Հայաստանի արեւելեան հարաւի կողմերը։ Այս իշխանէն սերեցան Արծրունի և Գնունի հռչակաւոր նախարարութիւնները։ Ասոնք, դարերու ընթացքին մէջ սձեկով ու բազմանալով, շատ զօրացան և զբաւեցին բովանդակ Վասպուրականը։

Բոլոր այս մանրամասնութիւնները զրամ են Խորենացի, Յովհ. Կաթողիկոս և Ասողիկ(*), մեր ազգային պատմիչները, ինչպէս նաեւ օտար պատմագիրներէն Գէորգ Մոնախոս(**), Յովսէպոս(***) և ուրիշներ։

Բարեկոնի մէջ, Բելեոիէն ևաքը, շատ մը թագաւորներ կը նստին մինչեւ Միսեսմորդաք. ասոր մահովը թափուր կը մնայ արքայական գահը։ Ասորեստանի Ասորդան թագաւորը շուտով կը հասնի, Բարեկոն կը մտնէ ու կը արէ։ Այդ թուականէն սկսեալ, երկու թագաւորութիւնները — Բարեկական ու Ասորեստանեան — կը միանան։

Ասորդանի կը յաջորդէ սրդին Սասադոխին, որ Նարուզողոնոսոր ալ կը կոչուի։ Յետոյ կը յաջորդէ Քինալաղանոս զամ Սարակոս։ Ասոր դէմ կ'ապստամբի իր զօրապետներէն Նարուպոլտասար, և նինուէն

(*) Սեւիաննոս Տարօնեցիին է, Ասողիկ կամ Ասողիկ մակդիրով, Գրիգոր Նարեկացիին ժամանակակից, Ժ. Գառուն վերջերը կ'ապրէր. ազգային պատմութիւն մը գրած է սկիզբէն մինչեւ Գագիկ Բագրատունի բագաւոր եւ Սարգիս կարալիկոսը, որուն խնդրանքովը ձեռնարկած է իր երկին, 1000 բուականին։

(**) Մոնախոս յոյն մեծակեացը գրած է բիւզանդական կայսրերու պատմութիւնը, հայագրի Լեոնէն սկսեալ մինչեւ Կոստանդին Պետրուսեանի օրերը։

(***) Յովսէպոս Փլաբիոս, մեծանուն հրեայ պատմաբանը, Կալիոս Կալիզուլա կայսեր օրով ծնած է 37 բուականին։ Շատ մը պատմական երկեր գրած է. մասնաւորապէս Հրէից պատերազմներուն պատմութիւնը, Ապիոնի դէմ երկու գիրքեր, Մակաբայեցիներուն նահատուրեան վրայ պերճաբան ճառ մը։ Տիսոսի եւ Վեսպասիանոսի սիրելիին էր, եւ այս վերջինին անունովը Փլաբիոս ալ կոչուեցաւ։ Յովսէպոսի երկերուն զանազան թարգմանեաց օրինակներ կան, որոնց մէջ փոքր տարբերութիւն մը կը տեսնուի։

պաշարելով՝ ինքնասպանութեան կը մղէ Քինայադանոսը, որ ինքզինք այրել կուտայ իր ընտանիքին հետ: Այնուհետև Նարուզոզոստար կը թագաւորէ Բաբելոնի մէջ, Նարուզոզոստար անուշով: Ասոր որդին, Մեծ Նարուզոզոստարը կ'ամուսնանայ Աժդահակի աղջկան հետ և 43 տարի թագաւորելէ յետոյ կը մեռնի, ու իրեն կը յաջորդէ Եզմարովդաք, որ իր աղտոտ բարքերուն համար կը սպաննուի իր քեռայր Ներիդիստորէն, և այս վերջինը յափշտակելով Բաբելոնի թագը, 4 տարի կը թագաւորէ: Ասոր կը յաջորդէ իր որդին Լարորոսաւորքադ, որ միայն ինն ամիս ապրելէ յետոյ կը մեռնի, և Եզմարովդաքի որդին Պաղասասար՝ իրեն յաջորդելով 17 տարի կը թագաւորէ: Սակայն Կիւրոսէն յաղթուելով, իրեն տեղը կ'անցնի Կիւրոսի քեռին Գարհ՝ մարը, որ Հերոզոտոսէն կոչուած է Լարնէա, նոյնինքն Նարուզոզոստարի կնոջ եզբոր Աժդահակին տղան: Երկու տարի ետք, Կիւրոս կը սպաննէ այս Գարհը, և ինք կ'իջիւէ Բաբելոնը:

Գլով Վարրակէսի, Մարաստանի բացարձակ միապետը դարձած, Ասորեստանցիներէն անկախաբար կառավարեց իր երկիրը, և երբէք չի շացաւ թագաւորի տիտղոսէն, ինչպէս նաեւ իր չորս յաջորդները՝ Մանսոֆիո, Սոսաւոս, Առդիգաս և Կարսիֆեաս, որոնց իշխանութիւնը Վարրակէսէն սկսելով, մինչև Դէովկ թագաւորը, 37 տարի տեւեց, ինչպէս կը գրեն Ուլսերիոս ու Կալմիթ: Ասոնց օրով, Մարերը (նախն՝ Քուրտերը) ցիր ու ցան կը բնակէին զաշտավայրերը, իրարմէ հեռու, անջատ տուներու մէջ, և իրենց երկիրը խառնակութեան մատնուած էր: Ու երբ Բաբելոնցիները կ'արշաւեն ու կ'ստպաւակեն Մարաստանը, Մարերը միաձայնութեամբ իրենց թագաւոր կ'ընտրեն Դէովկ իշխանը, որ ինչպէս կը գրեն Ուլսերիոս ու Պետաւիոս, նոյնինքն Արփաքսադ թագաւորն է, որ Եկրատանը շինած է:

Դէովկ, այսինքն Արփաքսադ, Սասագոսին Նարուզոզոստարի հետ պատերազմելով, կը սպաննուի Հոսագուի սահմաններուն մէջ (Տես՝ Գիրք Յուդիթի գլ. Ա.): Ասոր որդին Փրատրդ յաջորդելով, Նինուէն կը պաշարէ և իր զօրքերով կը սպաննուի, 22 տարի թագաւորելէ յետոյ: Իրեն կը յաջորդէ Կիաքսար կամ Կիվաքսարիս որդին, որ կը թագաւորէ 40 տարի, և իր հօրը վրէժը լուծելու համար, անողին բանակով մը կ'արշաւէ Ասորեստան:

Այդ ատենները, ասոր ու Լիւդացիներու Աղիաթ թագաւորին միջև մեծ պատերազմ մը կը ծագի, որ ամբողջ 5 տարի կը տեւէ, և Մեծ Նարուզոզոստարի միջնորդութեամբ կարելի կ'ըլլայ գոյացնել հաշտութիւնը: Ի նշան այս հաշտութեան, Աղիաթ իր Արիէնա աղջիկը Կիաքսարի գահաժառանգ տղուն՝ Աստիակէս Աժդահակին կնուծեան կուտայ: Իսկ ինք Աժդահակ, իր առաջին կնոջ մէն՝ Անուէն ծնած Ասիդա աղջիկը կնուծեան կուտայ մեծ Նարուզոզոստարին, ինչպէս որ վերև յիշեցինք:

Այնուհետև Աժդահակ, միարանելով իր փեսային՝ Նարեզողոնոսորի հետ, պատերազմի ելան Ասորեստանեաններուն դէմ, Նինուէի տիրեցին ու բնակիչները զերի տարին, ինչպէս կը զրէ Հերոգոսա Այս Աժդահակը Ս. Գիրքին մէջ Աստուերոս կոչուած է: Կիաքսարի մահէն ետքը Մարաստանի վրայ թագաւորեց այս Աժդահակը, որուն թոռանը՝ Կիւրոսի վրայ առիթը պիտի ունենանք զրելու առաջիկային:

Իսկ մեր առաջին թագաւորը Պարոյր, արքայալայել չուքով ու պերճանքով երկիրը խաղաղութեամբ 44 տարի կառավարելէ և զանազան բարեկարգութիւններով զայն շէնցնելէ ու ծաղկեցնելէ յետոյ մեռաւ:

Շահեկանութեանը համար, թարգմանարար հոս կ'արտատպենք հետևեալ ամփոփ տեսութիւնը, Գէորգ Ասլանի ծանօթ ֆրանսերէն զիրքէն, որ պայծառ յոյս մը կը սփռէ սոյն առասպելական շրջանի մշակներուն վրայ, մեզի պարզելով վիճակը, որուն մէջ կը գտնուէին Հայերը, Մեղացիներուն ու պարսկական կայսրութեան օրով:

Արարատի արեւելքի կողմը կ'իջնար Մաննան կամ Ս. Գիրքի աւանդութեանց Միւննին, զոր ամենահին ժամանակներէ ի վեր բռնագրաւած էին արիական ցեղախումբերը: Այդ ցեղախումբերը, որոնք կը պատկանէին Մատայիներուն կամ Մեղացիներուն, ի վերջոյ իրենց մէջ պարփակած էին ինչ քանակութիւնները, որոնց անունովը կը յորջորջուէր երկիրը(*): Մեղացիները կանգ առած էին Իրանի(**) զաշտավայրին վրայ, իսկ Պարսիկները դէպ ի հարաւ արեւելք, դէպ ի էլամ դիմած և բնակութիւն հաստատած էին նահանգի մը մէջ, որ իրենց անունով կոչուեցաւ Պարսկաստան (*): Երբ Թէպտապարսար

(*) Եբրայեցիներն ու Ասորեսացիները Մասայի անունը կու տային Արաւախ սահմանակից գաւառին: Մատային, զոր Ասորիները Մադիաի վերածած են, Հայերէն կոչուած է Մարք, որոնց կը մօտենայ Մահ կամ Մահա ձեր, զոր կը գտնենք մահմետական Պարսկաստանի առասպելներուն մէջ, իբրև Մեղացի ժողովուրդին հետքը (Ֆ. Լընօրմ. Պատմութեան Մագուսները):

(**) Այս յորջորջումը՝ Արեւելեաններուն Արիային Արիյանն իսկ է, Հայիրուն Արիքը, Պարսիկները սակաւին իրենք գիրենք «Իրանի» կը կոչեն:

(***) Յոյներէն այսպէս կոչուած՝ Պերսիդի նահանգին անունովը, տեղացիներուն Պարս, ուր Արեւմտեանները նանցան առաջին անգամ Ասիոյ սիրապետներ, այն է, Արաբներուն Ֆարս: Շատ մը գիտուններու կարծիքով, Արիականները կամ Իրանեանները՝ եւրոպայէն եկան եւ Հարաւային Ռուսիայէն իջան Կուրի եւ Արախի դաշտեր, Կովկասի նամբով: Սբեկել կը կարծէ թէ՛ Ալիսոպայի Արիանեմ-Վալցոն՝ Առանի գաւառն է, մեր օրերուն Դարապաղը:

Գ. ասպատակեց Մարաստան, երկիրը բաժնուած էր մեծ թիւով անկախ պետերու միջև, որոնց իւրաքանչիւրը նահանգի մը կ'իշխէր: Մարգոն վերադարձաւ ինն 713ին (Ք. Ա.) տիրուցաւ քաղաքներու մեծագոյն մասին, և ասորեստանեան քաղաքականութեան նաւատարիւմ, Մարաստանի մարդիկներէն իր կայսրութեան արեւմտեան նահանգները փոխադրեց, երկիրը լեցնելով ասորեստանեան զաղթականութիւններով: Սամարիոյ Հրեաներուն մէկ մասը, այս կերպով աքսորուեցաւ արիական ժողովուրդներու մէջ(*): Սակայն, վերջին աշխարհակալներուն արշաւանքները չարգիլեցին մարական ժողովուրդին կազմակերպութիւնը:

Կիաքսար, մեղացի իշխանի մը շառաւիղ, բոլոր ազգային պետերէն դաշնակցութիւն մը կազմեց, բանակ մը կազմակերպեց, անցաւ միւս իշխաններուն գլուխը, յարձակելու և վրէժ լուծելու համար Ասորեստանցիներէն, որոնք մինչեւ այն ատեն աւերած էին իրենց հայրենիքը: Այս պետը մարական կայսրութեան հիմնադիրը եղաւ: Կիաքսար յաջողեցաւ ինքզինք ազատել Սկիւթացիներէն, որոնք տասպատակած էին Մարաստան, ինքզինք թագաւոր հռչակած Բարեկոնի ասորեստանեան կառավարիչ Նարուպատարի հետ՝ յարձակողական ու պաշտպանողական դաշնակցութիւն մը կնքեց: Ասորեստանը, իր երկու սահմանազուխներէն, արեւելքէն ու հարաւէն յարձակում կրեց թէեւ ատեն մը դիմադրեց, բայց ի վերջոյ ինկաւ Ասուրախիդին Բ.ի, Ս. Գիրքի Սարակոսին հետ մէկտեղ: Նոյն դարու ասորեստանեան յիշատակարաններուն համեմատ, մեղացի թագաւորը ստուարացուցած էր իր զօրագունդերը Կիւսերեաններով, Մաննայի զօրքերով և ուրիշ շատերով, որոնք տարածուած էին Ասորեստանի մէջ, միշտ յարածուն թիւով մը. — « Ահա՛ նա եմ, կարողը քուկզ է, ըսաւ բանակներուն ենովա Սարաւոթը, մոխրի ախտի վերածեմ պատերազմական կուսքերը: Պիտի դադրեցնել տամ երկրին մէջ այս սուրսուութիւնները, . . . և ա՛յ չը պիտի յուսին քու պատուիրակներուդ ձայները(**) . . . »

Նինուէն քանդուած էր և քանի մը տարի վերջ, ասորեստանեան կայսրութիւնը, որ աշխարհը ղողացուցեր էր, առասպելի մը կարգ անցած էր: Դիողորոս կը պատմէր, Կնիդի Կլէսիոսին հետեւելով, թէ մեծ դէպքը տեղի ունեցած էր երկու դար առաջ 887 (Ք. Ա.), Արբակէս անուն մեղացի թագաւորի մը ժամանակ: Այս պատմութիւնէն առնելով, Մովսէս Թորինացին այդ ատենները դրաւ Հայաստանի մէջ

(*) Բ. Թագ. փէ. — Մինչեւ ցարդ Ուրմիա լինին սահմանները բնակող Հրեաները բերես այդ պատերազմներուն ժամանակ հոն փոխադրուած գաղթականներուն սերունդներն են:

(**) Նաւու, Բ. 14:

առասպելական իշխան մը Պարոյր անունով, որ Նինուէի առումին մէջ իբր թէ իր ըրած օգնութեան վարձատրութեանը համար, մեղացի թագաւորին կողմէն թագաւորութեան պատիւին բարձրացած է եղեր(*): Ո՛չ մէկ վաւերաթուղթ ունինք ըսելու համար թէ Արմէնները կազմած էին աղգային մարմին մը և թէ անոնց պետերը կը ներկայացնէին իշխանութիւն մը: Իշխանապետութիւնները զորոնք հայերը կըրցած էին հիմնել մեր թուականէն եօթը դար առաջները, կ'երեւայ թէ խիստ համեստ ճակատագիր մը պէտք է ունեցած ըլլան, ճակատագիրներուն հետը խառնուած՝ այն կէս-քաղաքակիրթ ժողովուրդներուն որոնց հանդիպեցան Մեղացիները՝ իրանեան լեռնազաշտին արեւմտեան կողերուն վրայ, և որոնք ծայրայեղ տուրքերով կը հարստահարուէին լեռնցիներէն, ամէն անգամ որ առիթը կը ներկայանար: Ինչ որ աղօթակի կը տեսնենք այդ հեռաւոր դարերուն մէջէն, այն է թէ՛ Արմայի Հարստութիւնը կիսուած է երկուքի(**), մէկը՝ եփրատեան մասին մէջ, միւսը՝ արաքսեան չրջանակին մէջ: Արեւմտեան նահանգներուն իշխանները պէտք է Չարեհ, Վարդան, Արչամ և ասոնց պէս անուններ ունեցած ըլլային, արքայանիստ ունենալով Արչամուստը՝ Արամնիի վրայ, իսկ արաքսեան նահանգներուն իշխանները յաճախ Որոնտ կամ Հրանտ, Շաւարշ, Տիգրան անունները կուտային իրենք իրենց և մայրաքաղաք ըրած էին Արմաւիրը՝ Արաքսի վրայ: Զիրենք չրջապատող թշնամի ցեղախումբերուն հանդէպ, այս իշխանները յաճախ պաշտպանողական զիրք մը բռնելու ստիպուած էին, պահելու համար գաւառները, զոր նոր տիրակալած էին: Գործ ունէին ո՛չ միայն վաղեմի բնակչութեան բեկորներուն, այլ և նոր ցեղախումբերու հետ, ինչպէս էին պոնտոսեան լեռներուն Խաղիւբները, Մոսքերը, բարձր Եփրատի Տիրարենիները, որոնք հոն մղուած են կեմերեան արշաւանքէն, երբ Ուրարդուի թագաւորութիւնը կործանեցաւ: Խաղիւբները, հայ մատենագիրներու Խաղտիք-

(*) Մովսէս Խորենացի (մ. 20—21) գիտէ որ այս դէպքերը տարբեր տարբեր պատմուած են, բայց չէ՛ ուզեր հաւատք ընծայել միւս պատմուածներուն: Յայտնի է թէ դարբնած է առանց ժամանակագրութեան բազաւորներու ցուցակ մը, առանց ամենագոյզի պատմական իրողութեան, շատ մը դարեր պարունակող շրջանի մը մէջ: Մեկ քանի անուններ կրնան քաղուիլ աղգային յիշատակներուն մէջէն, բայց անկարելի է անոնց բուսական մը նշանակել:

** Ամեն պարագայի մէջ, Մեծ-Հայասանը ե. դարուն (Ք. Ա.) երկու բաժանումներ ունէր, իւրաքանչիւրը իր յատկ նախարարով:

ները, որոնց սերունդները(*) կան տակաւին և մետաղներուն շահագործութեամբը կը պարապին, իրենց նախնիքներուն պէս, ուղղակի բարքեր ունէին: Քաննոփոնի օրով կարճագոյն մը կը հագնէին, որ մինչև ազգը կ'իջնէր, սաղաւարտներ կը դնէին և իրենց մէջքէ վար թուր մը կը կախէին, զոր իրենց գերիները խողխողելու կը գործածէին: Մինչև այն ատեն, Արմաները լո՛կ Հայերը կրցած էին ձուլել իրենց մէջ, չնորհիւ իրենց լեզուին հանդիսութեան, նաև իրենց հանդարտիկ բարքին, բայց այնչափ տկար էին որ չէին կրնար դիւրաւ յաղթել միւս ուղղամասէր ժողովուրդներուն: Ասոնք նուաճելու համար պէտք էր իրենց տրամադրութեան տակ ունենային աւելի զօրեղ, Արմաներէն աւելի լաւ կաղամկերպուած կորիզ մը: Այսպէս, իրենց վրայէն չը կրցան թօթուել Իրանեաններուն գերակշռութիւնը, որ շուտով պիտի հաստատուէր հոն:

Ասորեստանը կործանելէ յետոյ, Արիականները որոնք դեռ նոր կը ծնէին պատմութեան մէջ, կ'ապահովէին արեւմտեան Ասիոյ վրայ իրենց տիրապետութիւնը: Կիսքսար շուտով իր զէնքերը դարձուց զէպի հիւսիս և արեւմուտք, հպատակեցնելու համար մնացած ժողովուրդները, որոնք դեռ ապստամբութեան մէջ էին: Քանի մը տարի վերջ, Ուրարուի մարդիկը, Հայերը, Մուշքիները, Սկիւթացիները կը ճանչնային անոր իշխանութիւնը: Ուրարուի վաղեմի թագաւորութիւնը, Արաքսի հիւսիսի կողմը փոքրիկ կալուածի մը, վերածուած մշտնջենապէս կ'անհետանար (590): Մեղացի թագաւորը շուտով հասաւ Կապադովկիա(**) և առաջացաւ մինչև Սիւրիա, որուն վրայ ձախորդ յարձակում մը գործեց, և ի վերջոյ, հինգ տարի ետքը, ստիպուեցաւ դաշնագիր մը կնքել, որով Ալիւսը սահման եղաւ իր գերիշխանութեան հպատակած երկիրներուն: Երէկուան ծնած մարական կայսրութիւնը կը տարածուէր Հելլեսպոնտի ափերէն մինչև Ալիւսի գետեզերքը(***)։ Բայց այս կայսրութիւնը զանազան ժողովուրդներու

(*) Կիւմիւճանքի քիւսոնեայ բնակիչները, Տրապիզոնէն վեր, հաւանակաւօրէն հին Խալիւքներուն սերունդները պէ՛հ է եղած ըլլան: Իրենց յատուկ դիմագծերով և մասնաւոր դրոշմով մը եզակաւօրէն յատկանշուած յուճարէն լեզուով մը կ'որոշուին: Իրենց նախնիներուն պէս կը պարապին մետաղներուն աշխատութեամբը: Մեր օրերու Կիւմիւճանքէն եր Բիւզանդացիներուն Արկիօքօլիս մայրաքաղաքը:

(**) Կասպասուկա, ըստ Իրանեաններուն, Հայերը պահած են այս յորշորշումը Կասպուսակ ձեւին տակ: Հաւանակաւօրէն Նգիպսացիներուն Քասա Նախնը պէ՛հ է ըլլայ, որ Եւս մը գիտուններու կարծիքով, Խասիներու երկիրը կը նշանակէ եղեր:

(***) Մասքեո, Հին Պասս. Արեւելի ժողովուրդը:

համախմբում մըն էր լուկ, որոնց իւրաքանչիւրը պահած էր իր օրէնք-
ները, իր լեզուն, իր կրօնը, իր աւատական կաղմակերպութիւնը, և
նոյնիսկ իր սեփական իշխանները: Իր յաջորդը Աժդահակ(*) պատե-
րազմի դաշտերու կեանքին համար ստեղծուած չէր, իր կանանոցին
մէջ ապրեցաւ մեղկօրէն. երբէք արշաւանքի մը չը ձեռնարկեց քիչ
թէ շատ ամէն տեղ պայթած ապստամբութիւններուն դէմ: Հայերը,
ինչպէս ուրիշ ժողովուրդներն ալ, առանց նեղուելու, զաղրեցան
սուրք վճարելէ: Իրանեաններուն ստորակարգեալի իր հանգամանքը չէր
արգիլած անտարակոյս հայ ժողովուրդին բարեշրջումը, զոր դասական
հեղինակները ցոյց կուտան այնուհետեւ: Քսենոփոն կը պատմէ գոյու-
թիւնը հայ թագաւորի մը, որ անկախ զիրք մը բռնած է այն պա-
հուն, երբ արքայական հարստութեան փոփոխումով մը, Կիւրոս (**)
աշխարհի տէրը կը դառնար 549 կամ 550ին (Ք. Ա.): Կիւրոսի թա-
գաւորութիւնը, որ 29 տարի տեւեց, բեզուն եղաւ դէպքերով, որոնք
կը մնան բոլոր յիշողութիւններուն մէջ. Լիւզիոյ նուաճումը, Բարե-
լոնի առումը, և հոն բանտարկուած հրեայ գերիներուն ազատագրու-
մը: Կիւրոս, իր երկրակալութիւններուն մէջ, սովորաբար յարգած է
տեղական իշխանութիւնները: Միայն Լիւզիոյ և Քաղզէաստանի մէջ
դրաւ պարսիկ կառավարիչ մը, ուրիշ ամէն տեղ բաւականացաւ հնա-
զանգութեան յայտարարութեամբ մը և կառավարութիւնը յանձնեց
տեղացիներուն ձեռքը, որոնք իսկական թագաւորի մը հեղինակու-
թիւնը շարունակեցին ի գործ դնել: Հայաստանի մէջ թագաւորող
իշխանը, իր թշնամական զիրքէն սպառնացուած. հարկադրուած էր
իր Տիգրան(***) որդին պատանդ զրկել մեծ թագաւորին արքունիքը,
որմէ պաշտպանութիւն կը խնդրէր Խալտիներու, Կորդուացիներու և

(*) Արձանագրութեանց Իսթուրվէկուն, զոր Յոյները Աժդահակ
ըրած են: Մ. Խորենացիին Ազի-Գանակի մեր կը նանչնայ, Վէտաներու
առասպելային Ազի-Գանակիին նման: Հերոդոտէն եւ Խորենացիէն
պատմուած իրողութիւնները, որոնք կը վերաբերին Աժդահակի ու
Կիւրոսի, կ'երեւայ քէ Վէտայի կրօնային դիւցալեպէն քաղուած են:
Հաւանական է քէ՝ Ազի-Գանակը՝ Կիւրոսի յաջորդող իբսանի մը
մակդիրն է: Մովսէս Խորենացիին ասոր կը վերագրէ երկարատեւ պա-
տերազմ մը՝ Տիգրան անուևով հայ ինքնակալի մը հետ:

(**) Պարսիկներուն Քսոքը, որ Արեւ նշանակել կը բուլի, այն-
պէս որ Կիւրոս ալ մակդիր մըն է, ինչպէս Պարսիկ բազաւորներուն
անուններուն շատերը:

(***) Տիգրանի բազաւորութեան մասին, Քսենոփոնէն ու Մովսէս
Խորենացիէն կարելի է քաղել ամենէն հաւանական դէպքեր:

ուրիշ խոնականներու ասպատակութիւններուն դէմ որոնք շարունակ կը հարստահարէին զաշտին հայերը: Տիգրան, ինչպէս կ'երեւայ, քաջարի իշխան մըն էր, որ բանակին մէջ ծառայեց և զիտցաւ վաստկիլ Կիւրոսի բարեկամութիւնը: Լիւղիոյ արշաւանքը վարեց 546ին (Ք. Ա.) իրեն հետը տանելով բազմաթիւ աղեղնաւորներ և չորս հազար ձիաւորներ, Էմպաս հայուն հրամանատարութեան տակ: Մասնակցեցաւ Բարեյունի առումին 538 (Ք. Ա.) իր օժանդակ զօրքերով, և մեծ արքային պաշտպանութեանը վտահ՝, Բարեյունէն վերադարձին, յաջորդեց իր հօրը: Մինչև այն ատեն շատ մը Տիգրաններ — թէև Խորենացին միայն մէկ հայկազուն Տիգրան կը ճանչնայ — յաջորդած էին շատ մը Որոնաներու (Հրանտ) և հայերը բարեշրջուած էին լռիկ ու անշուք կերպով: Շատերը մոռացման դատապարտուեցան, իրենց մթազին գոյութեան պատճառով, և միայն Կիւրոսի ժամանակակցին անունը հասաւ յետագայ սերունդին, չնորձիւ դերին, զոր պարագաները թոյլատրեցին իրեն խողալու կայսրութեան գործերուն մէջ: Ասոր թագաւորութեան փայլը դրուատելու համար, առասպելներ ստեղծած էին իր անունին շուրջը, Փոքր Ասիոյ մէջ երկրակալութիւններ, պատերազմ մը, որուն մէջ Աժդահակը սպաննուեւր է եղեր անոր ձեռքով: Իր պատմութիւը նուազ վիպական է արդարև: Եզրիպոսի երկրակալութիւնը (525) Կամբիւսի(*) օրով, Պարսիկներու ձեռքերուն մէջ գումարած էր ՚ին աշխարհը. բայց քիչ յետոյ, Կայսրութեան զօրութիւնը սարսած կը գտնուէր պայտօի յեղափոխութիւններուն հետեւանքով, որոնք իշխանութեան գլուխը բերին Հիւտասպիի տղան Դարեհը(**), աքեմենեան ընտանիքի ազգականներէն:

Պարսկական կայսրութիւնը, Ասորեստանեանին պէս, հարկատու թագաւորութիւններու, և կիսովին նուաճուած ցեղախումբերու կէս անկախ իշխաններէ կառավարուող նահանգներու ժողովոյթ մըն էր լոկ: Կիւրոս ու Կամբիւս չէին խառնուեւր իրենց իշխանութեան տակ մտած ժողովուրդներուն ներքին գործերուն. բաւականացած էին միայն իրենց գերիշխանութիւնը պարտադրելով Փոքր Ասիոյ վրայ, մինչև Միջերկրականի ծովեզրքները: Արեւմուտքի մէջ, Պարսիկներուն միակ յենակէտը Սարգէս էր, Լիւղիոյ նախկին մայրաքաղաքը, ուր պարսիկ կառավարիչ մը, քաղաքային և միանգամայն զինւորական

(*) Արձանագրութեանց Կոմբուսիան, պարսկական առասպելներուն Քեյ-Քոբսար, որ ինչպէս գիտեմք, խորհրդաւոր մանով մը մեռած է:


(**) Արձանագրութեանց Դարայալաուսը, Արեւելեաններուն Դաւան, Հայերուն Դաւեմը:

անձնաւորութիւնը, բոլոր հարեւան երկիրներուն վրայ ի գործ կը դնէր իր իշխանութիւնը :

Մինչ կայսրութիւնը կը թուէր իր փառքին դադաթնակէտը հասած ըլլալ, գրեթէ ամէն տեղ խռովութիւններ ծագեցան և ապստամբութիւնը պայթեցաւ Քաղզէաստան, Արեւելեան նահանգները, Մարաստան ու Հայաստան : Հայերը դաշնակցած էին Փրաւորդ անուն իշխանի մը — նախկին մեդական հարստութեանց վաւերական կամ կեղծ շառաւիղ մը — հետ, որ վտարանջած էր Պարսիկներուն դերիշխանութեան դէմ : Բոլոր ապստամբութիւնները շուտով զսպուեցան Դարեհի կորովի ազդեցութեամբը : Բազուասի ջանքերով Լիւդիան հանդարտելէ յետոյ, Դարեհ Հայաստան զրկեց Դաթարսիս անուն հայազգի զօրապետ մը, երկիրը կարգի բերելու համար : Այս զօրավարը չկրնայով գործ մը տեսնել, պարտաւորուեցաւ սպասել նոր ուժերու, զէնքով ջախջախելու համար ապստամբութիւնը :

Նոր բանակ մը, Վառամինայի հրամանատարութեան տակ, վերջնականապէս զօպեց ապստամբութիւնը 518 (Ք. Ա.) և Հայաստան վերածուեցաւ նահանգի մը, Դարեհի բղէջխութիւններէն մէկը կազմելով, Արմենիկ կամ Արմինա(*) անունով :

(*) Բենուսունի՝ Դարեհի եւ Քսերքսի արձանագրութիւնները



Պարոյրի մանր. — Հրաշեայ. — Փառնաւագ Բ. — Պանոյն. — Կոռնակ,
 Փաւոս. — Հայկակ Բ. Մեծ Նաբուգոդոնոսորի հետ Երուսաղեմ
 կ'աբաւէ. — Շամբաս իշխանը Հայաստան կը բերուի
 րնցանեօօփ. — Երուանդ Ա. եւ Վարդգէս Մանուկ.
 Տիգրան Ա. Երուանդեան. — Տիգրանի եւ
 Կիւրոսի բարեկամութիւնը. — Աժդահակ Մարաց արքան.
 Տիգրան Ա. կը դաւենակցի Կիւրոսի. — Քսենոփոն
 կը պատմէ Տիգրան Ա.ի հօր՝ Երուանդի
 դասասանը՝ Կիւրոսի առջեւ:

Պարոյր, Հայկազանց Հարստութեան առասպելական շրջանին
 առաջին թագաւորը, կարկառուն զէմք մը կը ներկայանայ մեր
 պատմութեան մէջ, ինչպէս կը վկայեն Խորենացին, Յովհաննէս
 կաթողիկոսը, Վարդան պատմիչը, Նոյնպէս ուրիշ ազգային պատմա-
 գիրներ: Վարրակէսի հետ իր դաշնակցութեան առաջին պտուղը
 քաղած էր արդէն, Հայաստանի թագաւոր հռչակուելով, և այսպէս,
 ապահովելով իր երկրին խաղաղութիւնը՝ թշնամի ժողովուրդներու
 կամ տէրութիւններու պատահական յարձակումներուն զէմ:

Արքայական թագով պսակուած, իր արքունիքը ճոխացուց արեւ-
 լեիան պերճանքներով: Խոհական և հեռատես զահակալ մը, Պարոյր
 գիտէր հնազանդութեան մէջ պահել երկրին զանազան ցեղապետները,
 սրոնք, ուրոյն աւատապետութիւններ, իրաւունք ունէին իրենց
 տրամադրութեան տակ ունենալու որոշ թիւով զինուորական ոյժ մը.
 և իրենց իշխանութեան շրջանակին մէջ գտնուող ժողովուրդներէն
 տուրք աւանելու, ևն.։ Այդ աւատապետութիւնները փոխանակ ջնջե-
 լու, Պարոյր աւելի զօրացուց, ինք ըլլալով անոնց երիցագոյնը,
 կամ, թագակիր պետը: Եւ աւատապետները, մէյմէկ արքայիկներ,
 Պարոյրի հովանաւորութեան տակ, կամայականօրէն կը կառավարէին
 իրենց լուծին տակ ապրող հպատակ բնակչութիւնները:

Պարոյրի թագաւորութիւնը 44 տարի տեւեց, մօտաւորապէս կէս
 դարու ժամանակամիջոց մը, և այս երկարատեւ շրջանում, անի գիտ-
 ցաւ արժեքնել և օգտագործել իր իշխանութիւնը: Հայկազանց առա-
 ջին թագաւորը բարեկարգիչ մըն էր, երկրին տնտեսական կեանքին
 զարգացումը պատրաստող ամէն միջոցներ ձեռք առաւ. երկրագոր-
 ծութիւնը, առեւտուրը, արուեստները ծաղկեցան իր օրով. մասնաւոր

խնամք տարաւ վերտկազմելու բանակը, որուն կը պարտէր իր թագաւորութիւնը: Սահմանազուխներուն մօտերը բերդաքաղաքներ հիմնել առաւ, իր երկրին աւաւապետներուն բացառիկ արտօնութիւններ հնորեց, և ինքզինք սիրելի ընծայեց անոնց: Ներքուստ՝ խաղաղ և երջանիկ, արտաքուստ՝ հզօր ու պատկառելի Հայաստան մը ժառանգութիւն թողով իր յաջորդին, մնաւ Պարոյր:

Ժողովուրդը Պարոյրին մահուան համար մեծ սուգ ըրաւ և անոր գահին վրայ բազմեցուց որդին Հրաչեայ, Յուդայի Եղեկիա թագաւորին ու Նայի մարգարէին ժամանակակիցը: Քսան երկու տարի թագաւորեց, հետեւելով իր հօր քաղաքականութեան, միշտ բարեկամ՝ Հայաստանի բնական դաշնակիցներուն:

Հրաչեայի յաջորդեց իր տղան Փառնաւազ Բ., որուն թագաւորութիւնը տեւեց 14 տարի:

Փառնաւազ Բ.ի յաջորդը՝ Պանոյն որդին, 35 տարուան խաղաղ իշխանութիւն մը վարելէ յետոյ կը մեռնի և իրեն կը յաջորդէ որդին Կոռնակ կամ Կոռնակ, որ կը թագաւորէ միայն 8 տարի: Կոռնակի որդին Փաւոս, իրեն յաջորդելով, 17 տարի կ'իշխէ Հայաստանի և իրեն յաջորդ կը թողու իր որդին Հայկակ Բ., որուն թագաւորութիւնը կը տեւէ 36 տարի:

Հայկակ Բ.ի օրով, Բաբելոնացի Մեծ Նարուզողոնոսոր թագաւորը պատերազմ կը յայտարարէ Յուդայի թագաւորութեան դէմ և իրեն օգնութեան կը կանչէ մեր թագաւորը: Սա, իրբու դաշնակից, Մեծ Նարուզողոնոսորի հետ կ'արշաւէ դէպի Երուսաղէմ: Պատերազմը կը վերջանայ Նարուզողոնոսորի յաղթութեամբ, Յուդայի ժողովուրդը Բաբելոն գերի կը տարուի բոլոր իշխաններովը, որոնց մէջ կը գտնուէր Շամբատ անուն իշխան մը: Հայկակ Բ., Նարուզողոնոսորի արտօնութեամբը, իրեն հետ Հայաստան տարաւ այդ հրեայ իշխանը, ընտանիքովը մէկտեղ և մեծ պատիւներով, անոր բնակութեան տեղ յատկացուց իր երկրին մէջ:

Պորենացին, այս իշխանէն սերած ըլլալ կը կարծէ Բագարատը, որ Վաղարշակի օրով, Բագրատունի նախարարութեան հիմնադիրը հռչակուեցաւ: Ասոնցմէ շատերը Սմբատ կոչուած են, այն է Շամբատ, իրենց նախնոր անունովը, մէկ քանի իշխաններ ալ Աոս կոչուած են, կ'ըսէ Պորենացին, Շամբատի տղուն՝ Ասուղի անունովը: Իսկ Ա. Մ. Գարադաշեան, մեր օրերու քննադատներէն, իր «Բնական Պասուրիւն Հայոց» երկին մէջ ջանացած է, իր բարի սովորութեան համաձայն, հերքել Պորենացիին այդ ենթադրութիւնը: Սմբատ անունը, կ'ըսէ Գարադաշեան, պարսկական ծագում ունի, և է Սիմպատ, սիմ և պատ բառերէն բաղադրուած, որ կը նշանակէ արծարապատ:

Հայկակ Բ.ի որդին Երուանդ Ա. կը յաջորդէ իրեն: Այս թագաւորին իշխանութիւնը 4 տարի կը տեւէ միայն և այդ պատճառով է որ կարճակեաց կոչուած է: Խորենացին՝ Երուանդ Ա.ի քեռայր մը կը յիշէ, Վարդգէս անուն, որ, կ'ըսէ, Քասաղ գետին վրայ ձեռակերտ մը կառուցած է Վարդգէսի ււան անունով, Արտեմիսի նուիրուած Արսիմէդ քաղաքին տեղը: Ժամանակին լիպասանները Վարդգէսի վրայ հետեւեալը կ'երգէին, կը գրէ Խորենացին (Բ. 62). —

«Հասուած գնացեալ Վարդգէսն մանուկ ի Մուրհաց գաւառէն՝
Եկեալ նստաւ զՇրէե բլրով՝ զԱրսիմէդ քաղաքաւ՝ զՔասաղ գետով,
կռել կոփել զգուռնն Երուանդայ արեայի:»

Այս քաղաքը, դարեր ետքը, Վաղարշ թագաւորին ձեռքով պիտի վերայինուէր և պիտի կոչուէր Վաղարշապատ:

Երուանդ Ա.ի մահէն ետքը, Հայկազանց դահը ժառանգեց իր որդին Տիգրան Ա., նոյնինքն Տիգրան Երուանդեանը:

Մեր ազգային պատմիչներուն համաձայն, Տիգրան Ա. եզական դէմք մըն է հայկական պատմութեան մէջ, անշուշտ Հայկէն ու Արամէն ետքը, օժտուած ըլլալով հերոսային առաքինութիւններով: Գեղեցիկ երիտասարդ մը, վայելուչ հասակով, հուժկու, վեհանձն, արդարակորով վեհապետ մը, խոհական ու հեզաբարոյ, իր ժողովուրդին համար անդորրութեան ու բարդաւաճման նոր դարազրուխ մը կը բանայ: Իր սխրագործութիւններով կը գերազանցէ շատերը, թէ՛ մեր և թէ՛ ուրիշ ազգերու թագաւորներէն:

Հակիրճօրէն պատմենք իր գործերը, որոնց մէջ յայտնապէս կը փայլին իր կարողութիւնները:

Օտարները շատ մը սոսնձգութիւններ ըրած էին Հայաստանի ներսերը. Տիգրան Ա. թշնամիները վճռեց և ընդարձակեց իր տէրութեան սահմանները: Այսպէս, հետզհետէ զօրացած, զանազան ազգեր, նոյն իսկ Յոյները նուաճեց և երկար տարիներ հտրկատու ըրաւ զանոնք:

Արտաքին յարձակումներէն երկիրը բոլորովին ապահովելէ յետոյ, ձեռնարկեց ներքին բարեկարգութեանց: Իր օրով, հայ ազգը հակայաքայլ կ'առաջադիմէր քաղաքակրթութեան մէջ: Քաղաքները կը շէննային, առեւտուրը կ'ընդարձակուէր, ճարտարարուեստներն ու երկրագործութիւնը կը ծաղկէին, բնակչութիւնը կը հարստանար, զինւորական նոր կարգեր կը ստեղծուէին. մէկ խօսքով, իւր ու մեզր կը հոսէր Հայաստանի մէջ:

Այս էջերուն մէջ նոյնութեամբ կ'արտագրենք մեր Խորենացիին հետեւեալ տողերը, որոնց մէջ հայելացած պիտի գտնենք Տիգրան Ա.ի շրջանը: —

« Ամենեցունց (կոր. Ա. Գլ. 23) որ առ իւրովն էին ժամանակոք, նախանձելի և յեանոցս ըզձալի՝ ինքն և ժամանակ իւր. զի ո՞քք ի ճշմարիտ արանց, և որոնց ի բարս արութեան և խոհականութեան սիրելութիւն կայցէ, սորա յիշատակօքս ո՛չ զուարճացի և յորդորեսցի այսպէս լինել այր, արանց գլուխ, արութիւն ցուցեալ՝ զազգս մեր բարձրացոյց և զընդ լծով կոցեալս՝ լծադիրս բազմաց և հարկապահանջս կացոյց: Մթերս ոսկւոյ և արծաթոյ և քարանց պատականաց և զգեստուց և պէս պէս զունոց և անկուածոց, արանց հասակաց՝ միանդամայն և կանանց բազմացոյց. որով տգեղագոյնքն իրբեւ զգեղաւորս երեւէին սքանչելիք, և գեղաւորքն ըստ ժամանակին առ հասարակ զիւցազնացեալք: Հետեւականարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալք. և պարսուորքն առ հասարակ զիպաղեղունք. և ղեշաւաւորքն ի սուսեր և ի տէգ նիզակի վառեալք. մերկքն՝ վահանօք և զգեստուք երկաթեօք պարածածկեալք, որոց ի մի վայր հասելոց բաւական էր տեսիլն միայն, և որ ի նոցայցն պահպանակաց և զինուց փաղմուռնք և չողիւնք՝ զթշնամիսն արտահալածել: Սաղաղութեան և յինութեան բերող՝ իւղով և մեղու զհասակս ամենայն պարարեալ: Չայս և որ այլ այսպիսիք բազումք՝ երեք մերոյ աշխարհիս՝ խարտեաչս այս և աղերեկ ծայրիւ հերաց Երուանդեանս Տիգրան, երեսօք զունեան և մեղուակն, անձնեայն և թիկնաւէտն, առոյգաբարձն և գեղեցկոտն, պարկեշան ի կերպուրս և յըմպելիս, և ի խրախճանութիւնս օրինաւոր: Չորմէ ասէին ի ՚ինսն մեր, որք բամբուստք երգէին, լինել սմա և ի ցանկութիւնս մարմնոյն չափաւոր. մեծիմաստ պերճարան, և յամենայն որ ինչ մարդկութեան պիտանի: Եւ զի՛նչ ինձ ի զիրս յայտոսիկ արդեօք իցէ բան սիրելի, քան թէ՛ որ յաղագս սորա էին զովեստք և պատմութիւնք՝ յերկարել: Արդարադատ և հաւասարասէր կշիռս ունելով յամենայնի՝ զամենայն ուրուք զկենցաղ՝ մտացն լծակաւ կշռէր. ո՛չ ընդ լաւագոյնոն խանդայր, և ո՛չ զնուաստն արհամարհէր, այլ՝ ամենեցուն հասարակաց հնարէր զինամոցն իւրոց ի վերայ տարածանել զգեստ: »

Այս գեղեցիկ նկարագրութենէն ետքը, կորնացին կը շարունակէ գրուածել Տիգրան Ա. ի քաջութիւնները, հետեւեալ տողերով. —

« Գովեմ զքաջահասակն զիմ, և զնիզակաւորն, և զամենեւին բոլոր անդամօք համեմատն, և ի գեղեցկութիւն աւարտեալ հասակի. քանզի առոյգ ամենայնիւ ըստ երեարս պատշաճեալ, և ուժով ո՛չ զոք իւր ունենալ զսոյզ: »

Եւ յետոյ կ'աւելցնէ. — (կոր. Գլ. 30),

« Հաւատարի պատմել զարդարեւ զբուն և զտաաջին Տիգրանն, և որ ինչ ի նմանէ գործք, սիրելի՛ որպէս ինձ պատմողիս, ի մէջ իմոց

բանից՝ որ ինչ յաղագս Երուանդեանս Տիգրանայ բանք, եղիցի և քեզ ընթրոցողիդ, որպէս այրն և զորքք, այնպէս և զնժանէ բանք: Դասն որոյ սիրեմ կոչել այնպէս ըստ քաջութեան, Հայկ, Արամ, Տիգրան. քանզի ըստ իմ քաջաց քաջքն, իսկ միջոցքն որպէս դէպ ումք թուիցի կոչել. բայց ըստ զիւցազնութեանն կարծեաց, ճշմարիտ է և ասելս մեր, ո՛չ Արամազդ ոք, այլ ի կամեցողն լինել Արամազդ. չորիցս և այլոց անուանելոց Արամազդ, յորոց մի է և կունդ ոմն Արամազդ: Այսպէս և բազում անուանեալք Տիգրան, մի է և միայնակ ի Հայկազանցս (Երուանդեան Տիգրան):»

Մեծ Տիգրան Ա. ու Պարսից Կիւրոս թագաւորները ժամանակակից էին և իրարու բարեկամ. ինչպէս գրած է Հերոդոտ, Կիւրոսի առաջին պատմիչը:

Ահաւասիկ ինչ որ կը պատմեն Հերոդոտ, Կտեսիա, Յուստինոս և ուրիշ օտար պատմագիրները Կիւրոսի ծագման, անոր թագաւորութեան զօրացման և մեր Տիգրան Ա. ի նետ անոր մշակած բարեկամութեան պարագաներուն և ուրիշ կարեւոր դէպքերու մասին: —

Աժդահակ, Մարաց Կիւքսար թագաւորին տղան, որ տակաւին թագաւոր պսակուած չէր, այլ միայն իր հօր ողջութեանը զանակից էր անոր, օր մը երազին մէջ կը տեսնէ որ իր երկրորդ աղջկան — ո՛չ Անուշ, ո՛չ Արիենա թագուհիէն, այլ Աժդահակի ուրիշ կնոջմէ մը ծնած — Մանդանէի բերնէն ջուրի՛ հեզել մը կը հոսէր ու կը լեցնէր ամբողջ քաղաքը, ոչ ոքիւմ բովանդակ Ասիան: Անմիջապէս աստղաբաշխ մոգերը կը կանչէ և երազին մեկնութիւնը կը պահանջէ անոնցմէ: Մոգերը կը պատասխանեն. — «Աղջիկդ պիտի ծնի այնպիսի մեկը, որ համբո՛րն Ասիոյ պիտի իւրիւք:»

Աժդահակ, մոգերուն գուշակութենէն վախնալով, Մանդանէն Մարաց ազնուատո՛մ իշխաններէն մէկուն նետ չամուսնացուց, այլ Կամբիւս անուն հասարակ պարսիկի մը նետ, յուսալով այս հերպով արգիլած ըլլալ չարիքը:

Մանդանէի ամուսնութեան առաջին տարին, Աժդահակ ուրիշ երազի մը մէջ կը տեսնէ որ միեւնոյն աղջկանը փորէն որթատունկ մը կ'ելլէր, որուն շուքը բովանդակ Ասիան կը պարածածկէր: Իսկոյն զիմեց մոգերուն, որոնք պատասխանեցին. — «Մանդանէի ծնելիք գաւաղը Մարաց եւ բոլոր Ասիոյ բազաւորութիւնը պիտի ձեռքէդ առնէ:»

Աժդահակ, մոգերուն այս գուշակութիւնը լսելէն ի վեր, կըսպասէր տղուն ծնունդին:

Եւ ծնաւ գուշակուած տղան, զոր Աժդահակ հրամայեց բերել իր ներկայութեանը, և, իր մտերիմ իշխաններէն մէկուն՝ Արբակի ձեռքը յանձնեց պատուիրելով որ իր տունը տանի և զաղանի սպաննէ դանի:

Մակայն Արքակ կը վախնար գործադրելու թագաւորին հրամանը, որովհետեւ կը կասկածէր թէ նորածինին մայրը Մանդանէն կ'իմանայ և աղուն վրէժը կը լուծէ իրմէ: Ուստի, կը կանչէ արքունի հովիւներէն մէկը, որ Մատարազատ կը կոչուէր, և ի դիմաց Աժդահակի կը պատուիրէ ամայի տեղ մը նետել տղան, որպէս զի այնպէս, մեռնի, և եթէ չկատարես պատուէրս, կրկին ու կրկին կ'ըսէ հովուին, զլուխդ վրայ պիտի տաս:

Հովուը կը գործադրէ Արքակի պատուէրը, իր տունը կը վերադառնայ և կնոջը կը պատմէ եղելութիւնը: Նոյն գիշերը, հովուին կինը մեռած զաւակ մը կը բերէ աշխարհ, իսկ հովիւը, կ'առնէ այդ մեռած երախան, կը տանի կը դնէ այն ամայի վայրը, ուր ձգած էր Մանդանէի տղան Կիւրոսը, և այս տղան առնելով կը բերէ իր տունը:

Հովուին կինը կ'առնէ այս գեղեցիկ, առոյգ ու կայտառ երախան, կը սիրէ, կը դիւցնէ ու կը մեծցնէ իբրև իր հարազատ զաւակը: Իսկ Արքակին ծառաները, անոր պատուէրին համաձայն, կ'երթան, մեռած կը գտնեն դաշար ձգուած տղան, և զանի Կիւրոսը կարծելով, կը թաղեն:

Կիւրոսի մայրազիր հովուին կինը կը կոչուէր Րժայակ, այսինքն՝ քած, այդ պատճառով է որ, դարեր ետքը, առասպելներ կը պատմուէին, իբր թէ մատակ շուն մը դիւցուցեր է եղբր Կիւրոսը, ինչպէս որ Հումուլոս ալ՝ դայի մը կաթովը սնած էր...

Կիւրոս կը մեծնայ և կ'ըլլայ տասը տարու, երբ Աժդահակ Մարաց գահը բարձրացած էր հինգ տարիէ ի վեր:

Օր մը, երբ տղաքները կը խաղային, Կիւրոս ալ կը յարի անոնց և խաղին մէջ թագաւոր կ'ընտրուի: Խաղին մէջ, այս աղոց նետ կը գտնուէր Աժդահակի սիրելի իշխաններէն մէկուն զաւակը, որ կ'ըմբոստանայ Կիւրոսի դէմ, երբ սա իւրաքանչիւրին կը բաշխէր իր դերը, Կիւրոսը խտիւ կը պատմէ զանի. յետոյ պատժուած տղան կ'երթայ, և եղելութիւնը կը պատմէ իր հօրը, որ իր կարգին, թագաւորին ականջը կը հասցնէ լուրը: Աժդահակ իր ներկայութեանը կը կանչէ պատանեակ Կիւրոսը, զոր կը սկսի հարցաքննելու:

— Ինչո՞ւ ձեռեցիր իշխանին տղան, կը հարցնէ Աժդահակ:

— Չէի ձեռեր զինք, անվախօրէն կը պատասխանէ Կիւրոս, եթէ հրամանիս դէմ հետամտ չըլլար:

Թագաւորը, Կիւրոսի համարձակութիւնը, բարեձեւ կեցուածքը, խօսուածքը տեսնելով.

— Քանի՞ տարու ես, կը հարցնէ, և որո՞ւ զաւակն ես:

Աժդահակ, Կիւրոսի պատասխանէն և ուրիշ շատ մը նշաններէ կը կասկածի թէ ան տղան իր թոռը չըլլայ, և զանի ազատ կ'արձակէ, աւանց քան մը ստուգելու: Յետոյ, օրեր ետքը, Կիւրոսի կարծեցեալ

հայրը՝ ծանօթ հովիւը կը կանչէ և վերահասու կ'ըլլայ իրականութեանս Արբակ իշխանն ալ կը խոստովանի իր արարքը, թէ ինչպէս, ինչպէս յով նորածին երախային, չէր սպաննած զանի :

Աժդահակ սաստիկ կը զայրանայ այս յայտնութիւններուն զէմ, բայց զսպելով իր բարկութիւնը, կը պատուիրէ Արբակին երթալ փնտելի Կիւրոսը, և զանի բերել իր արքունիքը. յետոյ կը դառնայ Արբակին ու կ'ըսէ .

— Քու աղաղ ալ զրկէ՛ ինծի, յետոյ զուն ալ պալատ եկո՛ւր, իրիկունը միասին ընթերլու ինծի հետ :

Արբակ կը գործադրէ թագաւորին հրամանները, իր մատղաշ աղեկը կը զրկէ Աժդահակի, և Մատրաղատ հովուին առնել կ'երթայ, կ'առնէ Կիւրոսը, զոր կը բերէ արքունիքը :

Աժդահակ մորթիկ կուտայ Արբակի աղեկը, կը պատուիրէ պահել անոր զուլիը, ոտքերուն և ձեռքերուն թաթերը, մնացածը եփել ու իր սեղանը բերել կուտայ միւս կերակուրներուն հետ :

Արբակ իշխանը պատանեակ Կիւրոսին հետ պալատը կը վերագառնայ : Թագաւորին ծառաները սեղանին վրայ կը բերեն և Արբակին առջեւ կը դնեն իր զուկին միւր, զոր չգիտնալով, ախորժակով մը կ'ուտէ : Ընթրիքէն ետքը, Աժդահակ անոր առջեւ կը դնէ իր զուկին զուլին ու թաթերը, և ցոյց տալով .

— Կը ճանչնաս ատենք, կը հարցնէ անոր .

— Այո՛, կը պատասխանէ իշխանը, իմ զուկիս զուլին ու անդամներն են, բայց ի՛նչ կրնամ ըսել, թագաւորիս արտաքին զէմ չեմ կրնար գանգատիլ :

Սակայն, ներսի զին փոթորկած, խռովակոծ, հագիւ ինքզինք զսպելով, կ'ելլէ կ'երթայ իր տունը, վրէժխնդրութիւն ուխտելով Աժդահակի գազանութեան զէմ :

Գալով Աժդահակի, դարձեալ մոզերուն խորհուրդովը, Կիւրոսը Պարսկաստան կը զրկէ իր հօրը Կամբիւսին քով, որուն կը հաղորդէ բոլոր անցած դարձածները : Տղան կ'ընդունուի իր հօրը տունը, ուր, տարուէ տարի զարգանալով, մեծ համբաւի մը կը տիրանայ : Եւ որովհետեւ Հայաստանի ու Պարսկաստանի միջեւ յաճախակի երթեւեկութիւններ կ'ըլլային, Կիւրոս ծանօթութիւն կը հաստատէ մեր Տիգրանին և կը բարեկամանայ անոր հետ :

Կիւրոսի քաջագործութեանց համբաւը կը տարածուէր ամենուրեք : Արբակ իշխանը, իր մատղաշ զուկին եղբրական մահուանը վրէժը ներսիդին խմորուած, և իմացած ըլլալով Կիւրոսի զէնքերուն յաջողութիւնները, նամակ մը կը գրէ անոր և յիշեցնելով անոր կեանքի բոլոր իրադարձութիւնները, մանրամասնօրէն պատմելով Աժդահակի գործած վայրագութիւնները, սպրտամբութեան կը յորդորէ

զանի, խոստանալով իրեն ամէն աջակցութիւն: Եթէ, կը գրէր Արբակ, Պարսիկները գրգռուին Մարաց դէմ սպառամբելու, ես ալ կը խոստանամ Մարերը հեռացնել և ուժացնել Աժդահակէն ու քեզի հպատակեցնել զանոնք:

Կիւրոս, Արբակի նամակէն քաջալիրուած, և օգտուելով Պարսից իշխաններուն տրամադրութիւններէն, որոնք վաղուց դժգոհ էին Մարաց տիրապետութենէն, յաջողեցաւ պարսկական կարեւոր ուժեր համախմբել իր շուրջը, և քալել դէպի Մարաստան, Աժդահակի վրայ:

Կիւրոսի արշաւանքին լուրը շուտով կը հասնի Մարաստան և Աժդահակ, յանկարծակիի եկած, կը շուարի: Կը մոռնայ փութը անցնելը, իր գործած քսամակի ոճիրը, և բանակին հրամանատարութիւնը յանձնելով Արբակ իշխանին, ահագին գունդերով կը զրկէ զանի Կիւրոսի դէմ:

Իսկ Արբակ, վաղուց արդէն նախապատրաստած ըլլալով ներքին սպառամբութիւնը, կուռի միջոցին, իր հրամանատարութեան յանձնուած բանակին ամենէն ընտիր գունդերովը Կիւրոսի կողմը կ'անցնի:

Աժդահակ, չարաչար պարտուած, իր կատաղութիւնը կը թափէ երազահան մոզերուն վրայ, որոնք զինք խրատած էին Պարսկաստան զրկելու Կիւրոսը:

Այսպէս, Կիւրոս կը տիրէ Պարսկաստանի, ուր ինք կ'ըլլայ առաջին թագաւորը, որովհետեւ, ստուգապատում աւանդութիւնները կը հաստատեն թէ՛ իրմէ առաջ հոն թագաւոր չէր նստեր, այլ կուսակալ իշխան մը, նախապէս Ասորեստանցիներուն, յետոյ Մարաց կողմէն: Այնուհետեւ, Կիւրոս զօրանալով տարուէ տարի, իր յաղթական զէնքերը շատ հեռուները կը տանի, կը յաջողի նուաճել բոլոր շրջակայ ազգերը, և ինքզինք տիեզերակալ թագաւոր կը հռչակէ:

Կիւրոսի զօրութեան ու փառաւոր յաղթանակներուն համբաւը լսելով, Տիգրան Ա. շատ կը հրճուի իր վաղեմի բարեկամին յաջողութիւններուն վրայ, ինչպէս կը գրէ Քսենոփոն(*), թէեւ քիչ մը տարբեր կերպով:

(*) Քսենոփոն յոյն պատմագիրը, Արեւնացի Գրիւղէի որդին, ծնած է 450 (Ք. Ա.)ին, Սոկրատի մեծանուն աշակերտներէն, իր վարպետին եով սովորեցաւ փիլիսոփայութիւնն ու բարոյականը: Մեծ Կիւրոսի գործերը պատմած է ի լրոյ, 8 գիրքերու մէջ, նաեւ 7 գիրքեր յօրինած է Փոքր Կիւրոսի վրայ, ահանաճես ըլլալով սուր արարեցներուն: Գրած է նաեւ 7 պատմական գիրքեր Յոյներուն, գիրք մը Լակեդեմոնացիներուն, 4 գիրք՝ իր վարպետին Սոկրատի վրայ, նոյնպէս այլ եւ այլ դեպքերու վրայ զանազան գիրքեր: Փոքր Կիւրոսէն սիրուած, անոր նիզակակից եղած է, անոր Արսաեսու եղբորը դէմ: Փոքր

Այս երկու թագաւորներուն միջեւ վաղեմի բարեկամութեան մը կապերը հաստատուած էին և երկուքն ալ զիրար կը սիրէին փոխադարձաբար: Քսենոփոն իր վարժ Կիւրոսի անուն գիրքին մէջ (Գիրք Գ.) կը զրէ թէ՛ Կիւրոս շատ կը սիրէր Հայոց թագաւոր Տիգրան Ա.ը, կը հիանար մանաւանդ ասոր տաղանդին ու վեհանձնութեան վրայ:

Տիգրան Ա. պատուիրակութիւն մը ղրկեց Կիւրոսի արքունիքը, մեծարժէք ընծաներով, պաշտպանողական ու յարձակողական դաշնակցութիւն մը կնքեց անոր հետ, ամէն կերպով իրարու օգնելու համար: Այս զինակցութեան հիման վրայ է որ, կ'ըսէ Քսենոփոն, Կիւրոսի մղած բոլոր պատերազմներուն մէջ, իրեն հետ միասին կը գտնուէր ու կը կռուէր Հայոց թագաւորը:

Նոյն պատմագիրը կը կարծէ թէ՛ Կիւրոսի ու Տիգրանի թագաւորելէն առաջ մեռած էր Մարաց Աժդահակ թագաւորը, որուն տեղը կը թագաւորէր որդին՝ Կիաքսար, կամ ուրիշ անունով, Կիւրոսի քեռին՝ Դարեհ: Պարսկաստանի մէջ կը թագաւորէր, կ'ըսէ Քսենոփոն, Կիւրոսի հայրը՝ Կամբիւս, յետոյ, այս ենթադրութեան վրայ հիմնուած, հետեւեալ հետաքրքրաշարժ զէպքերը կը պատմէ: —

« Ասորեստանի — ըստ Ուլսերիոսի՝ Բաբելոնի — թագաւորը Ներիդիոսոր, Մարաց Կիաքսար թագաւորին դէմ պատերազմ յայտարարեց, իրեն թեւ ու թիկունք ընելով բազմաթեւ ազգեր, որոնց գլխաւորներուն մէջ կը գտնուէր Կրեսոս Լիւդացին, իսկ Կիաքսար օգնութիւն խնդրեց Կիւրոսի հօրմէն՝ Կամբիւսէն, որ Պարսից վրայ կը թագաւորէր: Կամբիւս, ընդունելով Կիաքսարի հրաւերը, երեսուն հազար ընտիր զօրքերով Մարաց օգնութեան ղրկեց իր որդին Կիւրոսը, զանի սպարապետ կարգելով այդ բանակին: Բայց, պատերազմին պատրաստութիւնները տակաւին կարգի չը մտած, Կիւրոս տեսնելով թէ ժամանակը կ'երկարի, հետեւեալ առաջարկը բերաւ Կիաքսարի:

« Քենէ իմացայ, կ'ըսէ Կիւրոս, թէ՛ Հայը, այսինքն Հայոց թագաւորը, նոյնինքն Տիգրան Ա.ի հայրը երուանդ. տէրութեանդ դէմ ապստամբած է, և քեզի ո՛չ զօրք կը ղրկէ, ո՛չ ալ պայմանադրեալ սուրբք կը վճարէ: Կիաքսար կ'ըսէ. — « Այո՛, այդպէս է, Կիւրոս, և ես ալ շուտրած եմ թէ ի՛նչ պէտք է ընեմ, անոր վրայ պատերազմի

Կիւրոսի պատմութեան մեջ, ո՛չ այնչափ հետեւած է նեմարսուրեան, որչափ Կիւրոսը վարչագիտութեան մեջ հրահանգելու նպատակին, ինչպէս կը վկայէ Կիկերոն: Քսենոփոն, իր բազր ոճին համար կը կոչուի Հեյլենացիներու Մեղու եւ Աթենացիներու Մուսայ: Մեռած է 360 (Ք. Ա.)ին, 80 տարու հասակին մեջ:

ելլե՞լ թէ առ այժմ այնպէս թողուլ, որպէս զի մեր թշնամիները չաւելցնենք: Կիւրոս կը հարցնէ:

— Անտոխ կ'է անոր բնակավայրը:

— Այնչափ ամուր տեղերու մէջ չի բնակիր, կը պատասխանէ Կիաքսար, բայց կան լեռներ, որոնց մէջ կրնայ ապահով թաղասոց մը գտնել, եթէ աճապարէ. և սակայն կարելի է զանի այն լեռներուն մէջ պաշարել, ինչպէս որ ժամանակաւ Աժդահակ հայրս ալ ըրաւ:

— Եթէ կ'ուզես, կը յարէ Կիւրոս, բաւական ուժերով զրկել զիս հոն, մտադրած եմ աստուածներուն օգնութեամբը շուտով նուաճել և առաջուրնէ աւելի քեզի բարեկամ ընել զանի:

— Գիտե՞մ, կ'ըսէ Կիաքսար, զու՛ն կրնաս տափկա ընել, որովհետեւ իմացած եմ թէ հոն, ժամանակին, անոր ազաքները քեզի հետ որսի, զբօսանքի վարժուած են. հետեւաբար, թերեւս հիմակ ալ քովդ կուգան, և եթէ զու՛ն զանոնք ձերբակալես, այն Հայր (Յրուանդ) մեր ուզածը պիտի ընէ:

— Ուրեմն, կ'ըսէ Կիւրոս, ինձի կը թուի թէ աւելի լաւ է հիմակուրնէ տարածայնել թէ այն կողմերը մեծ որսորդութեան մը պիտի երթամ ես, և թէ՛ այդ նպատակին համար՝ քննէ առած եմ հեծելազօրքերը. որովհետեւ այս չկերպով, Հայերը կարծելով թէ որսի համար է իմ արշաւանքս, և ո՛չ թէ կուռի, առջևէս չպիտի փախչին, կամ գոնէ պատերազմի չպիտի պատրաստուին և ես զիւրաւ պիտի որսամ զանոնք:

— Ազուր կը խօսիս, կ'ըսէ Կիաքսար, բայց ես հիմակ շատ զօրք չպիտի տամ քեզի, այլ փոքր թիւով մը, և երբ զու՛ն սակաւաթիւ մարդերով որսի ելլես, բաւական թիւով հեծելախնոր ու հետեւակներ կը զրկեմ քեզի, զորոնք հետդ առնելով, շուտով կ'արշաւես Հայոց վրայ, իսկ ես, մնացեալ զօրքերով կը ջանամ քու մօտերդ զեզերիլ, որպէս զի պատեն ժամուն օգնութեան հասնիմ քեզի:

«Այս խորհուրդին համեմատ, Կիւրոս մէկ քանի ընկերներով որսի եղաւ Հայոց աշխարհի լեռներուն սահմանները, և հոն, մէկ քանի օր ետքը, լուր առնելով թէ՛ Կիաքսարի զրկած գուռերը կու գան, անոնց քով գաղտնի պատգամաւոր մը զրկեց, պատուիրելով որ վաթեուն ասպարէզ հեռու իջնան և հոն սպասեն: Յետոյ, իրեն քով կանչելով զօրավարները, որոնք արդէն տեղեակ էին գործին, ըսաւ.

— Ո՞վ մտերիմներ, Հայր վաղուց Կիաքսարի գաշնակից էր ու տնոր նպատակը, բայց հիմա, անոր թշնամիներուն ընդվզումը լսելով, կ'արհամարհէ զանի, և այդ պատճառով, ո՛չ զօրք կը զրկէ մեզի, ո՛չ ալ տուրքերը կը վճարէ, արդ, մենք հոս եկած ենք զանի որսալու, եթէ կրնանք: Ուստի, ես այսպէս ընել կը նախընտրեմ.

դուն Խրիւսանդէ, որովհետեւ յաճախ գտնուեր եւ Հայոց սահմաններուն մէջ, քեզի հետ ա՛ռ մեր Պարսիկներուն կէսը, և առաջ անցնելով, գրաւէ՛ այն լեռները, որոնց մէջ Հայը սովորութիւն ըրած է փախչիլ սպաստանելու, երբ վտանգ մը հասնի իրեն. իսկ մենք կրնանք պահուըտիլ անտառախիտ տեղեր, որոնք այս կողմերը կը գտնուին: Սակայն, դուն պէտք է առաջուց արձակես քանի մը զինուած, թիւով ու տարազով՝ աւազակներ կարծուող մարդեր, որոնք, եթէ քանի մը Հայերու հանդիպին, բռնեն զանոնք և արգիլեն, որպէս զի ուրիշներուն լուր մը չհասցնեն, իսկ ձեռք չինկածները՝ թող հետապնդուին առջեւէն զացող քանի մը մարդիկներէն, և այս կերպով Հայերը չեն կրնար քու ամբողջ գունդդ տեսնել յայտնապէս, այլ միայն քանի մը քիչերը տեսնելով՝ աւազակներ պիտի կարծեն. ուրեմն ըրէ՛ դուն այնպէս, ինչպէս որ քեզի ըսի:

«Իսկ ես, արշալոյսէն առաջ, հետս կ'առնեմ հետեւակներուն կէսը, նաեւ բոլոր հծեկայները, դաշտային ճամբով և անընդհատ արշաւանքով կ'առաջանամ մինչև Հայոց թագաւորին սահմանները, և եթէ ընդդիմութեան հանգրիպինք, կուտի կը բռնուինք. եթէ դաշտէն փախչին, մենք դիւրու կը հետապնդենք զանոնք, իսկ եթէ լեռներուն մէջ սպաստանին, այն ատեն, դուն պիտի ցոյց տաս հրաշքդ, այնպէս որ, հոն հասնողներէն ո՛չ մէկը պիտի չլծողուս որ ձեռքէդ ազատի. որովհետեւ այս արշաւանքին մէջ պէտք է մենք ընենք այն, ինչ որ կ'ընեն գազաններու որսորդները. ինչպէս որ ասոնք, դեռ գազանները չըզգացած, անտառները կը փակեն ամէն կողմէ և իրենք կը պահուըտին, որպէս զի գողանները չը խրաչին, մենք ալ այնպէս պիտի ընենք»:

«Կիւրոս, այս ու ստոր նման խրատներով, զորոնք Քսենոփոն ընդլայնած է, առաջ արձակեց Խրիւսանդ զօրավորը: Իսկ ինք, ատուն լուանալուն, զեւ ներսերը չառաջացած, զեւպան մը զրկեց Հայուն այս պատգամով:

— Կիւրոս կը հրամայէ քեզի, ո՛վ Հայ, որ անյապաղ իրեն քով գաս, քեզի հետ բերելով զօրքերը, նաեւ տուրքերուն գումարը, զորոնք պայմանագրութեան համաձայն, պարտիս վճարել Մարաց թագաւորին»:

«Յետոյ, պատգամաւորին պատուիրեց ըսելով.

— Եթէ Հայը հարցնէ քեզի թէ ո՛ւր եմ ես, ըսէ՛ իրեն, քու սահմաններուդ մէջտեղ կը գտնուի. իսկ եթէ զարձեւայ հարցնէ թէ՛ Կիւրոսն եմ ես, որ իրեն վրայ կուգամ, «չե՛մ գիտեր» ըսէ՛ իրեն. իսկ եթէ հարցնէ թէ՛ քանի՞ հողի ենք, քեզի հետ մէկ մը թող դնէ, և ան թող զայ տեղեկանայ»:

Պատգամաւորը զրկելէ յետոյ, Կիւրոս պատրաստուեցաւ և զգոյշ քայլերով սկսաւ առաջանալ Հայուն վրայ: Զօրքերուն պատուիրեց որ զգուշանան բռնարարութենէ, և եթէ պատահին Հայերէն մէկուն, աղբարարեն իրեն որ բնաւ չի վախնայ. և եթէ այն Հայերէն մէկը, ուզելովը, ծախսւ ըսն մը բերէ իրենց քով, թոյլ տան որ ծախէ:

Երբ Հայը (Երուանդ) լսեց Կիւրոսի պատգամը, յիշեց իր դժուար՝ Մարաց հետ կնքած զաշինքին դէմ, և սոսկաց, աւելի վախցաւ. այն պատճառով որ Կիւրոսի պատգամաւորը տեսաւ պարխպին շինութիւնը, զոր ինք կանգնել կուտար, զաշնադրութեան հակառակ: Եւ երբ ինքզինք անհնարին զիրքի մը մէջ գտաւ, չուտով պատուէր զրկեց իրեններուն, զօրքերը համախմբել. նոյնպէս հրամայեց իր կրտսեր որդին Շաւարշը լեռներուն մէջ տանել, անոր հետ կիներն ալ, թէ՛ իր և թէ՛ իր Տիգրան զաւկինը, նաեւ աղջիկները, մեծարժէք զարդերն ու սպանները:

Յետոյ լրտեսներ արձակեց չորս կողմը, տեսնելու համար թէ ինչ կ'ընէ Կիւրոս: Բայց նոյն պահուն ուրիշներ կը հասնէին շտապով, զուժելով թէ Կիւրոս եկած է:

Այն ատեն, չի կրնայով գուցէ կազմել, փախչելով ինքզինք կ'ազատէր: Երբ Հայերը տեսան ասիկա, իրենք ալ ջիւրուցան եղան, և հեռաւոր տեղերու մէջ փախցուցին իրենց գոյքերը: Կիւրոս տեսնելով թէ անազին ամբողջ մը զաշտերուն մէջ խուճապահար կը վազվզեն, պատգամ կը զրկէ անոնց ու կ'ըսէ.— Ես թշնամի չեմ անոնց որոնք կը մնան, այլ միայն՝ փախչողներուն: Եւ այս պատգամով, շատերը փախչելէ ետ կեցան: Իսկ անոնք որ առաջուրէն զացած էին իրենց կիներուն հետ, Խրիւսանդի զօրքերուն պատահեցան և շատերը բռնուեցան, որոնց հետ կը գանուէր նաեւ թագաւորին կրտսեր տղան, ինչպէս նաեւ կիներ ու աղջիկներ և անոնց բոլոր ինչքերը: Իսկ թագաւորը, երբ իմացաւ եղածները, չզիտնալով թէ ո՛ր պիտի դիմէ, ինքզինք ազատեց անմատչելի բլուրի մը վրայ: Եւ Կիւրոս լրտեսելով, իր գունդով պաշարեց բլուրը, և մարդ զրկելով Խրիւսանդի, անոր պատուէր տուաւ իրեն քով գալ անոնց հետ, զորոնք բռնած էր, ևն. ւ)

Եւ Քսենոփոնն ուրիշ շատ մը խօսքեր յերկրելով կը շարունակէ: Կիւրոս, կ'ըսէ, պատգամաւոր զրկելով Հայուն քով, այսպէս կը հարցնէր.

— Ըսէ՛ ինձի, ո՛վ դուն, Հայ, այդ բլուրը կ'ուզես կենալ, և սովին ու ծարաւին դէմ կուտի՞, թէ դաշտ իջնել և մեզի հետ կուտի բռնուիլ:

Հայը պատասխան տալով, կ'ըսէ.

— Ես ոչ մէկ մարդու հետ չեմ կուտիր:

Ասոր վրայ, Կիւրոս անգամ մըն ալ պատգամաւոր զրկելով, կ'ըսէ .
— Ուրեմն ի՞նչ նասեր հոտ կը կենաս :
— Հապա ի՞նչ ընեմ, կ'ըսէ Հայր :
— Պէտք չէ՛ կասկածիս, կ'ըսէ Կիւրոս, այլ պէտք է իջնես ու
դատաստանով համար տաս :

— Ո՞վ է դատաւորը, կ'ըսէ Հայր :
— Ան է, կ'ըսէ Կիւրոս, որուն Աստուած շնորհեց իր ուզածին
պէս վարուիլ քեզի հետ, նոյնիսկ առանց դատաստանի :

Ըսել կ'ուզէր թէ . — Աստուած ինձի արտօնեց դատել զքեզ, ինչ-
պէս որ ինձի հաճոյ թուի, թէ՛ դատաստանով, թէ՛ առանց դա-
տաստանի :

Հասկցաւ Հայր թէ հարկ է բլուրէն իջնել, ուստի Կիւրոսի քով
եկաւ, և Կիւրոս զանի և իր բոլոր ունեցածները, զօրքերուն մէջ
արգելափակեց չորս կողմէն :

Այն միջոցին, հեռաւոր երկրէ մը կը վերադառնար Հայուն երէց
որդին Տիգրան, այն է Տիգրան Երուանդեանը, որ ատենօք համոր-
սորդ եղած էր Կիւրոսի, և եղած դէպքերը լսելով, շուտով եկաւ
Կիւրոսի քով, և երբ գերի բռնուած տեսաւ իր հայրը, մայրը, քոյ-
րերը և իր կիներ, արցունք թափեց : Իսկ Կիւրոս անոր նայելով
կ'ըսէ . — Յարմար ժամուն հասար, հօրդ դատաստանը լսելու : Յե-
տոյ շուտով ատեան կանչեց Պարսից և Մարաց զօրքերուն պետերը,
ատնց հետ կանչեց նաեւ Հայերուն ազնուականները, հոնկէ չհեռա-
ցուց նաեւ կիները, որոնք, կառքերու վրայ կը կենային իրեն մօտ,
ատնց ալ թոյլ տուաւ հոն կենալ ու մտիկ ընել :

Ու երբ ատեանը բացուեցաւ, Կիւրոս, սկսաւ խօսիլ ու կ'ըսէ
Երուանդի .

— Ո՞վ Հայ, նախ և առաջ քեզի խորհուրդ կուտամ այս ատ-
եանին մէջ շխտակը խօսիլ, որպէս զի, այս մէկ բանը, որ խիստ
ատելի է, պակաս ըլլայ քենէ, որովհետեւ, ինչպէս որ գիտես, տկ-
նեբեւ ստութիւն մը մեծապէս արգելք կ'ըլլայ մարդուն՝ ներողու-
թեան արժանի գտնուելու, թող որ այդ կիներդ ու աղաքներդ,
ինչպէս նաեւ հող գտնուող Հայերը գիտեն և իրազեկ են թէ ի՞նչ
գործեր ես ըրեր դուն, եթէ քու ըրածէդ տարբեր կերպով մը խօսիս,
նոյնիսկ ատոնք քեզ պիտի դատապարտեն :

Եւ անի կ'ըսէ .

— Հարցո՛ւր, Կիւրո՛ս, ի՞նչ որ քեզի հաճոյ է, որովհետեւ ատոնց
առջև, շխտակը պիտի խօսիմ և թո՛ղ ըլլայ ինչ որ պիտի ըլլայ :

— Ըսէ՛ ինձի, կ'ըսէ Կիւրոս, դուն իմ մօրս հօրը՝ Աթդահակին և
ուրիշ Մարաց հետ պատերազմ ըրած ես ժամանակով .

— Այո՛, ըրի, կը պատասխանէ Երուանդ .

— Յաղթուեցա՞ր անկէ, կ'ըսէ Կիւրոս, և հաւանութիւն տուի՞ր իրեն հարկատու ըլլալու մասին դաշինք կնքելու և պատերազմի երթալ յանձն առնելու ո՛ւր որ ինք հրամայէ. խոստացա՞ր նաև քեզի համար ամբոյ չը կանգնել:

— Այո՛, կ'ըսէ Երուանդ, արդարև ճշմարիտ են խօսքերդ.

— Ուրեմն, կ'ըսէ Կիւրոս, ինչո՞ւ հիմա տուրքերը չվճարեցիր և զօրագունդեր չդրկեցիր, և ինչո՞ւ պարսպապատ բերդեր ալ չինեցիր.

— Ազատութեան կը ցանկայի, կ'ըսէ Երուանդ, որովհետև գեղեցիկ կը թուէր ինձի ազատ ըլլալ և ինչ ետքը նոյն ազատութիւնը թողուլ իմ զաւակներուս.

— Գեղեցիկ է, այո՛, կ'ըսէ Կիւրոս, ազատութիւնը վնասել և պատերազմի ելլել, ծառայ չըլլալու համար, բայց եթէ մէկը, պատերազմի ելլելէ, և ծառայութեան մասնաւելէ յետոյ, ջանք ընէ իր վրայէն թօթուել նստել իր արող իշխանութիւնը, այնպիսիին ի՞նչ ընել կը վայելէ, դուն ըսէ՛, եթէ դուն այն մարդը բռնած ըլլայիր, զանի կը պատուէիր իբրև բարեգործ և պատուարժան մէկը, թէ կը պատմէիր զանի իբրև ապերախտ մը.

— Կը պատմէի, կ'ըսէ Հայր, որովհետև ինձի չես ներեր սուտ խօսելու.

— Արդ, կ'ըսէ Կիւրոս, ասիկա ալ ըսէ՛ ինձի յայտնապէս, եթէ մէկը քու կողմէդ աւագութեան պաշտօնի մը վրայ նշանակուած ըլլայ և ծանր յանցանք մը գործէ, այլևս իրեն թոյլ կուտաս՞ այն իշխանութիւնը վարելու, թէ ուրիշ մը կը կարգես անոր տեղը:

— Ուրիշ մը կը կարգեմ տեղը, կը պատասխանէ Երուանդ.

— Եթէ անի ունենայ մեծ դանձ մը, կ'ըսէ Կիւրոս, անոր թոյլ կուտաս՞ հարստութեան մէջ մնալ, թէ կ'աղքատացնես զանի:

— Իրմէ ետ կ'առնեմ, կ'ըսէ Երուանդ, ինչ որ ունի:

— Հապա եթէ իրագեկ ալ ըլլաս որ, կ'ըսէ Կիւրոս, պիտի ազատամբի անի և թշնամիներուն կողմը պիտի անցնի, ի՞նչ կ'ընես անոր:

— Այն մարդը կը մեռցնեմ, կ'ըսէ Հայր, որովհետև ի՞նչ պէտք ունիմ ստելու և ստութեան պատճառով վատանուն մեռնելու, լաւագոյն չէ՞ ճշմարտախօս ըլլալ և քաջութեամբ վերջացնել կեանքը:

Երբ անոր Շաւարշ սղան լսեց ասոնք, խոյրը նետեց ու պատմուածանը պատուեց, նոյնպէս կիները վայնասուն ձգած կուլային, ինչպէս եթէ Հայր մահուան մասնաւած ըլլար և թէ՛ իրենք ալ ետևէն պիտի մեռնէին: Բայց Կիւրոս՝ անոնց պատուիրեց լսել և կ'ըսէ զարձեակ, — Այսչափը կը բաւէ, արդ, ո՞վ Հայ, ասոնք քու կողմէդ իրաւացի նկատուած են, բայց մեզի ի՞նչ խորհուրդ կուտաս դուն ասոնց վրայ:

Հայր լուսթիւն կը պահէ միայն, ինքիբն վարանամ, թէ արդ-
ևօք խորհուրդ տար Կիւրոսի, որ զինք սպաննէ անձամբ, և կամ
խրատ մը տար անոնց հակառակ, զորոնք ընել՝ իրաւացի դատած էր:

Այդ միջոցին, անոր որդին Տիգրան, առջ կը նետուի և Կիւ-
րոսի խօսելով.

— Ըսէ՛ ինձի, Կիւրոս՝ս, կ'ըսէ, որովհետև հայրս վարանած կ'ե-
րևայ, կ'ուզե՞ս որ ևս տամ անոր տեղը, այնպիսի խորհուրդ մը
զոր քեզի համար օգտակար կը համարիմ:

Եւ Կիւրոս, որովհետև լաւ կը ճանչնար Տիգրանի բնածիր տա-
ղանդը, և անոր անձնական սքանչելի նկարագիրը, որուն վրայ իր
գաղափարը կազմած էր արդէն, կրր անոր հետ որսի կ'ելլէր ժամա-
նակին, խիստ կը փափաքէր լսել Տիգրանին խօսքերը, ուստի անմի-
ջապէս հրամայեց որ իր կարծիքը յայտնէ:

Ու Տիգրան կ'ըսէ.

— Եթէ դուն իրօք ընդունելի գտնես հօրս գաղափարները կամ
գործերը, մեծապէս կը թախանձեմ քեզի որ անոր հետեւիս. իսկ եթէ
քեզի այնպէս թուի որ թէ՛ խորհրդով և թէ՛ գործովը մեղանշած է,
ևս քեզի խորհուրդ կուտամ որ չը հետեւիս իրեն.

— Ուրեմն, կ'ըսէ Կիւրոս, եթէ արդարութիւնը գործադրեմ, ո՛չ
մէկ կերպով պիտի հետեւիմ յանցաւորին.

— Շատ լաւ, կ'ըսէ Տիգրան.

— Հետեւաբար, կ'ըսէ Կիւրոս, քու խօսքիդ համաձայն, պատ-
ժելու է հայրդ, որովհետև արդար է պատժել անիրաւը.

— Կիւրոս՝ս, կ'ըսէ Տիգրան, հօրս այդ պատիժը քեզի օգո՞ւտ մը
կը նկատես թէ փեսա մը.

— Եթէ ինձի փեսա համարէի, կ'ըսէ Կիւրոս, ատով ինքզինքս
կը պատժէի.

— Դուն քեզի մեծապէս կը փեսաս, կը յարէ Տիգրան, եթէ յանցա-
ւորը սիրաշահելով, մեծ բան մը կրնաս ընել ու չես ընել, զանի պատժել
ուզելով. բայց հիմա ըսէ՛ ինձի Կիւրոս՝ս, ե՞րբ կարելի է, անիրաւնե-
րը կշտամբելով, վաստակի մէկը, և վաստակելով մեծ բան մը գործել.

— Ինձի այնպէս կը թուի թէ. կ'ըսէ Կիւրոս, կրր կշտամբուզ-
ները խելօքնան.

— Ինձի այ ճիշդ այդպէս կը թուի, Կիւրոս՝ս, կ'ըսէ Տիգրան, և
արդէն ատիկա՛ է ամենէն մեծ շահը. արդարև իմաստութենէ՛ տելի
մեծ ի՞նչ բան կայ. իսկ ասանց իմաստութեան, ի՞նչ օգուտ կայ առա-
քինութենէն, որովհետև եթէ անխելք է մարդ մը, ի՞նչ կրնայ ընել
զօրաւորի մը ձեռքով, ի՞նչ՝ այրութի ձեռքով, ի՞նչ՝ հարուստի մը
ձեռքով, և կամ ի՞նչ՝ իշխանի մը ձեռքով, բայց բարեկամ մը կարե-
ւոր է և ծառայ մը՝ պատուական, կրր իմաստուն են.

— Ըսել կ'ուզես թէ, կ'ըսէ Կիւրոս, քու հայրդ ալ, որ անխելք էր, այս մէկ օրուան մէջ խելացի եղաւ :

— Այո՛, կ'ըսէ Տիգրան, կատարեալապէս .

— Ուրեմն, կ'ըսէ Կիւրոս, դուն կը կարծես թէ՝ մարդուս իմաստութիւնը հոգիի փոփոխական կիրք մըն է և ո՛չ թէ ուսում մը . չէ՞ որ իմաստութեան պատրաստող մը պէտք է նախ անոր մէջ կրթութի միթէ անխելք մարդ մը յանկարծ խելացի կ'ըլլայ :

— Հապա ի՞նչ, կ'ըսէ Տիգրան, դուն դեռ չես լսած թէ ո՛վ որ անխելքութեամբ պատերազմ կը մղէ իրմէ աւելի ուրիշ զօրաւորի մը դէմ, պարտութեան մասնուելէ յետոյ, կը զողորմ անխելք ըլլալէ, և իմաստութիւն ստացած կ'ըլլայ :

— Հօրդ ո՛ր պարտութիւնը կ'ըսես, կը յարէ Կիւրոս, որ այնքան եռանդով կ'աշխատիս զանի խելօքցած ցոյց տալու :

— Աստուածներուն վրայ կ'երդնում, կ'ըսէ Տիգրան, ա՛նաւասիկ հայրս իր անձին չափը ճանչցաւ և պատկանեցաւ քու քաջ հնարքներէդ, որով, յանկարծակի վրան հասնելով, թունեցիր զինք իբրեւ ծուղակի մը մէջ :

— Հիմա դուն կը կարծես թէ, կ'ըսէ Կիւրոս, պարտութիւնը բաւական է մարդս խելօքցնելու, այնպէս որ իր անձին չափը ճանչնայ, ուրիշները իրմէ լաւագոյն համարէ և անոնց հպատակի, առանց պատիժ կրելու .

— Անշնճւտ, կ'ըսէ Տիգրան, յազթութեանէն աւելի կ'ազդէ պարտութիւնը .

— Հայրդ, կ'ըսէ Կիւրոս, տակաւին ո՛չ մէկ վնաս կրած է, միայն վախի մէջ է .

— Դուն այդպէս կը կարծես, կ'ըսէ Տիգրան, բայց կա՞յ բան մը որ այնքան աւելի ընկճէ մարդը, որքան սաստիկ վախը, որուն մատնուած է հիմակ հայրս .

— Ես ալ կը հոււատամ, կ'ըսէ Կիւրոս, թէ այդպիսի տաղնապ մը կը կրէ հայրդ այս պահուս, որովհետեւ, այնպիսի մէկը կը թուի ըլլալ, որ յաջողուածքի մէջ արհամարհանքով կը վարուի . բայց եթէ վերըստին ուժովնայ, զարձեակ կը ստնքայ և կը յոխորտայ ուրիշներուն վրայ .

— Ծիտա՛կ է, Կիւրո՛ս, կ'ըսէ Տիգրան, ատիկա այդպէս է, և նոյնիսկ այդ պատճառով է որ հաւատք չէք ընծայեր իրեն . բայց քեզի կ'ըսեմ Կիւրո՛ս, արդեօք ներկայ ժամանակիս մէջ կրնա՞ս զտնել մէկը, որուն՝ իմ հօրմէս աւելի մեծ երախտիքներ ցոյց տուած ըլլաս . հօրս ներելով՝ աւելի մեծ բան մը պիտի ըրած ըլլաս, քանա նոր չարիք հասցնելով :

Կիւրոս լսելով Տիգրանի խօսքերը, մեծապէս կ'ուրախանար, որովհետեւ կը յուսար զլուսն հանել այն ամէնը, զոր ինք խոտտացած էր Կիւքսարի, կը յիշէր իր բաժն խօսքը. — « Անանկ բան մը կը յուսամ ընել, որ Հայը քեզի բարեկամ ըլլայ, առաջուրնէ՛ աւելի: »

Յետոյ սկսաւ հարցնել Հայուն.

— Հիմա եթէ իշխանութիւնդ քեզի յանձնեմ, ինծի ս՞րբքան զօրք պիտի արամադրես և ս՞րչափ ստակ պիտի տաս:

— Ուրիշ ըսելիք մը չունիմ, Կիւրոս, ըսաւ Հայը, միայն անկեղծօրէն պիտի բերեմ առջեւդ դնեմ բոլոր ինչ որ ունիմ, և դուն ա՛ն սրբան կ'ուզես, թէ՛ ինչքեր, թէ՛ զօրքերէս, հոս ինծի թողով միայն թագաւորութեանս պահապանները:

— Ըսէ՛ ուրեմն, կը յարէ Կիւրոս, ս՞րբքան զօրք ունիս հիմակ և ս՞րչափ ինչք.

— Հայոց հեծելազօրքերը, կ'ըսէ Հայը, շուրջ ութը հազար են, և հեռեւեակները՝ զրեթէ քսուստուն հազար. իսկ ինչքերը, գոնձերով մէկ տեղ, որոնք իմ հօրմէս մնացին, երեք հազար սաղանգ արծաթ աւելի են:

Կիւրոս կ'ըսէ.

— Զօրքերուդ կէսը Մարաստան արձակէ՛ ինծի հետ, և մնացածները քովդ պահէ՛, դէմ դնելու համար Խաղտիք^(*) յերուն, որոնք քեզի դէմ պատերազմ կը բանան: Իսկ ինչքերէդ, փոխանակ յիսուն տաղանդ տուրքին, զոր պարտ էիր տալ, կրկինը պիտի վճարես Կիւքսարի, որովհետեւ այնչափ ժամանակ չես վճարած. ինծի ալ ուրիշ հարիւր տաղանդ փոխ տու՛ր. ասոր փոխարէն կը խոտտանամ, եթէ աստուած ինծի օգնէ, աւելի մեծ երախտիքներ հատուցանել քեզի ես կը զարձնեմ. իսկ եթէ անկարող ըլլամ խոտտուս կատարելու, այն ասեմ, նկատի ունենալով կամքէս անկախ պարագան, պատշաճ է որ, չնորհես ինծի, փոխանակ անիրաւութիւն մը համարելով, դատապարտելու զիս:

Հայը կը պատասխանէ.

— Ո՞րջ են աստուածները, Կիւրոս, այդպէս մի խօսիր, հակառակ պարագային, երբեք չեմ կրնար վստահիլ քեզի, սեպէ՛ թէ բոլոր իմ քովս թողուցածներդ ալ քեզի կը պատկանին ինչպէս անոնք, զորոնք հետդ կը տանիս:

(*) Խաղտիք բառով յայտնի չէ րե ո՛ր ազգը կը հասկնայ Քսենոփոն. յունարէն Քալդէի գրած է, որ կրնայ նշանակել նաեւ Քաղդէացիք եւ կամ Խաղտիք. սակայն Քաղդէացիները գործ չունին Քսենոփոնի այս պատմութեան մէջ. եւ այդ պատճառով է որ Խաղտիք գրուած է:

Յետոյ Կիւրոս կը հարցնէ ու կ'ըսէ .

— Հիմա ինձի ի՞նչ փրկանք պիտի տաս կնոջդ ազատութեան համար :

— Ո՛րչափ որ կրնամ տալ, կը պատասխանէ ան :

— Հապա ո՞րքան պիտի տաս որդիներուդ համար .

— Անոնց համար ալ, ո՛րչափ որ կրնամ տալ, կը պատասխանէ Հայր :

— Բայց բոլոր այդ խոստացածներդ, կ'առարկէ Կիւրոս, չէ՞ որ ունեցածներուդ կրկնապատիկն են :

Յետոյ դառնալով Տիգրանին .

— Իսկ դուն, Տիգրան, կ'ըսէ Կիւրոս, քանի՞ դին կը կտրես քու կինդ քեզի ետ դարձնելու համար :

Եւ որովհետեւ Տիգրանը դեռ նոր ամուսնացած էր և խիստ կը սիրէր իր կինը, կ'ըսէ .

— Կիւրո՛ս, անձա փրկանք կուտամ կնոջս համար, միայն թէ անի երբեք ազախին չըլլայ ուրիշի մը :

— Ուրեմն, կը յարէ Կիւրոս, ա՛ն քեզի կինդ, զանի գերի առնուած չեմ սեպեր, որովհետեւ դուն բնաւ ապստամբած չես մենէ :

Յետոյ դառնալով Երուանդի .

— Իսկ դուն, ո՛վ Հայ, կ'ըսէ, Կիւրոս, քեզի ա՛ն քու կինդ ու դաւախներդ, որպէս զի ազատութեամբ քու քովդ վերադարձած տեսնեն իրենք զիրենք : Եւ հիմա մեր քով ըրէ՛ք ընթրիքը, այնուհետեւ գացէ՛ք ուր որ հաճոյ թուի ձեզի :

Ու երբ բազմեցան ու աւարտեցին ընթրիքը, Կիւրոս Տիգրանին հետ խօսեցաւ ուրիշ մէկի մը վրայ, որ Երուանդէն սպաննուած էր, և կ'ըսէ .

— Ըսէ՛ ինձի, Տիգրան, հիմակ ո՞ւր է այն գովելի վարքով մարդը, որ մեզի հետ կը քալէր որսի միջոցին .

— Չէ՞ որ, կ'ըսէ Տիգրան, այս հայրս սպաննեց զանի .

— Ի՞նչ էր յանցանքը, հարցուց Կիւրոս :

— Որովհետեւ, պատասխանեց Տիգրան, հայրս կը նեղուիմ կ'ըսէր անոր կենակցութենէն . բայց դուն ալ զիտես, Կիւրո՛ս, թէ որքան համեստ ու բարի մարդ մըն էր անի . նոյն իսկ հոգեվարքի պահուն, զիս իր քովը կանչելով ըսաւ . — Քեզի՛ կ'ըսեմ, Տիգրան, հորդ հետ մի՛ գժտուիր ու բարկանար իմ մահուանս համար, որովհետեւ չարակամօրէն չգործեց այս ոճիրը, այլ անգիտակցօրէն . իսկ մարդիկ երբ անգիտակցօրէն կը գործեն յանցանք մը, ակամայ գործուած կը նկատեմ զայն :

Կիւրոս, լսելով այս պարագաները, շատ ցու զգաց և ափսոսաց այն մարդուն համար :

Վերջապէս, հաշտութիւնը կայացաւ և Հայերը, կրննորով մէկտեղ կառքերը նստան և մեկնելով ուրախ զուարթ վերադարձան իրենց բնակավայրը: Եւ հոն, կ'ըսէ Քսենեփոն, իրարու կը պատմէին, մէկը՝ Կիւրոսի իմաստութիւնը, ուրիշ մը՝ անոր վեհանձնութիւնն ու հեղութիւնը. ուրիշ մըն ալ՝ անոր զեղեցկութիւնն ու շքեղութիւնը:

Այդ միջոցին, Տիգրան իր կնոջը կը հարցնէ.

— Իրաւ, քեզի ալ զեղեցիկ երեւցա՞ւ Կիւրոսը.

— Շիտակը խօսի՞մ, ըսաւ կինը, անոր չէի նայեր իսկ.

— Ուրեմն որո՞ւ կը նայէիր, հարցուց Տիգրան:

— Ըշմարիտ կ'ըսեմ, պատասխանեց կինը, կը նայէի անոր, որ ըսաւ թէ՛ իր անձին տուգանքովը պիտի գնէր իմ գերութիւնս:

Հետեւեալ օրը, Տիգրանի հետ գալով Հայը, շատ մեծարանքներ ու ընծաներ բերաւ Կիւրոսի ու իր զօրքերուն. և իրեններուն հրամայեց հոն հաւաքուիլ երրորդ օրը, անոնք որ Կիւրոսի հետ պատերազմի պիտի երթային. իսկ Կիւրոսի պահանջած զբաժին կրկնապատիկը բերաւ տուաւ անոր, բայց Կիւրոս վար զնելով այնչափ միայն որչափ որ ինք հրամայած էր, մնացածները թողուց անոր:

Կիւրոս հարցուց յետոյ.

— Ձեր երկուքին մէջէն ո՞րը պիտի գայ ձեր զօրքերուն առաջնորդելու:

Երկուքը մէկտեղ պատասխանեցին.

— Որո՞ւ որ հրամայես.

Եւ Տիգրան յարեց.

— Արդարեւ քեզի կ'ըսեմ, Կիւրո՞ս. ես չեմ կրնար քենէ բաժնուիլ, թեկուզ բեռնակիր ըլլամ.

Կիւրոս այս խօսքին վրայ, ժպտելով կ'ըսէ.

— Ո՞րքան ամօթ պիտի սեպէիր, եթէ կրնդ լսէր որ զու՞ն բեռ կը կրես.

— Ի՞նչ կ'ըլլայ, եթէ լսէ, ըսաւ Տիգրան:

Այնուհետեւ Կիւրոս, դառնալով Տիգրանի.

— Հիմա ժամանակն է կազմ ու պատրաստ զինելու զօրքերը, Տիգրա՞ն.

— Սեպէ՛ թէ պատրաստ եկած հասած են, յարեց Տիգրան:

Ու երբ զօրքերը հասան հոն, հանգիստ ըրին:

Միւս օրը, Կիւրոս իրեն հետ առնելով Տիգրանն ու իր մարդիկներէն մէկ քանիները, Հայաստանի մէջ քննական պտոյտ մը ըրաւ. կը գիտէր թէ ո՞ւր յարմար էր պարսպապատ ամրոց շինել. ու երբ հասաւ բարձր տեղ մը, հարցուց Տիգրանին ու ըսաւ.

— Ո՞ր լեռներն են անոնք, որոնց մէջէն կապտիքները կ'ասպատակեն ձեր երկիրը:

Տիգրանց ցոյց տուաւ իրեն այն լեռները :

Ասոր վրայ, Կիւրոս դարձեալ հարցուց .

— Անմարդի՞ են այդ լեռները ,

— Ո՛չ, պատասխանեց Տիգրան, բայց հոն միշտ Խաղափքներուն լրտեսները կան, որոնք ուրիշներու կ'ազդարարեն ինչ որ կը տեսնեն իրենք :

— Է՛հ, ըսաւ Կիւրոս, ի՛նչ կ'ընեն այդ ուրիշները, երբ իմանան ազդարարութիւնը .

— Անմիջապէս այդ լեռներուն գլուխը կուգան դիրք կը բռնեն, պատասխանեց Տիգրան :

Ասոնք և այսպիսի շատ մը տեղեկութիւններ հաւաքելով, Կիւրոս բանակը վերադարձաւ :

Երրորդ օրը. Տիգրան սպառազէն եկաւ կեցաւ հոն մօտը, և իրեն քով կը համախմբուէին Հայոց հեծեալներէն չորս հազար, և աղեղնաւոր հետեակազօրք՝ տասը հազար, նոյնչափ ալ վաղակաւորներ, և մինչ ասոնք կը հաւաքուէին, Կիւրոս մատաղներ կ'ընէր :

Ու երբ ամէն բան լինցաւ, Կիւրոս իր քով կանչեց Պարսից ու Մարաց զօրապետները, սկսաւ անոնց խօսիլ ու ըսաւ .

— Այդ լեռները, զորոնք ահա՛ մեր դիմացը կը տեսնենք, Խաղափքներուն են. եթէ ատոնց սեփականատէր դառնանք և ամբողջ կանգնենք անոնց գլուխները, և մերիններէն պահապաններ կարգենք հոն, թէ՛ Հայերը, թէ՛ Խաղափքները, հարկադրուած՝ մեզի կը միանան և որովհետեւ այս գործը գլուխ հանելու միակ միջոցը՝ փութկոտութիւնն է, շուտով դէպի վեր առաջանանք ուրեմն այդ տեղերը գրաւելու և տիրելու, տակաւին թշնամիները հոն չը գումարուած : Մ'ն ուրեմն, թո՛ղ ամէն մարդ զէնքի դիմէ. և դուք Մարն'ր, մեր քովէն դէպի ձախ թե՛ր գացէ՛ք, իսկ դուք, Հայն'ր, երկուքի բաժնուեցէ՛ք, կէս մը աջ թե՛ր, կէս մըն ալ առջևէն գացէ՛ք, և դուք, հեծեալներու գունդն'ր, մեր ետևէն եկէ՛ք, և խրախուսելով զօրքերը դէպի վեր փութացուցէ՛ք, և եթէ մէկը քիչ մը դանդաղօրէն շարժի, բռնի վարեցէ՛ք զանի :

Կիւրոս, այս խրախոյսը տալէ յետոյ, ինք անձամբ առաջ կ'անցնէր զօրքերուն առաջնորդելով : Երբ իրագեկ եղան Խաղափքները թէ ասոնք դէպի վերերը կ'արշաւեն, շուտով ազդարարեցին ուրիշներուն, և միահամուռ ազադակով մը, տեղ մը կը կուտակուէին :

Իսկ Կիւրոս կ'ըսէ .

— Ո՛վ Պարսիկներ, ասոնք մեզի նշան կուտան ածապարելու, որովհետեւ, եթէ աւելի շուտ հասնինք գագաթները, ասոնք բան մը չպիտի կրնան ընել :

Եւ երբ Կիւրոսի զօրքերը մօտեցան լեռներու գագաթներուն, Տիգրանն, որ Կիւրոսի հետ մէկտեղ կ'երթար, կ'ըսէ .

— Գիտե՛ս արդեօք, Կիւրո՛ս, թէ պէտք է նախ մենք աճապարենք կռուի մէջ մտնելու, որովհետեւ Հայերը չեն անոնցմէ, որոնք կրնան թշնամիներուն համբերել :

— Ե՛ս ալ գիտեմ, կ'ըսէ Կիւրոս :

Եւ դառնալով Պարսիկներուն .

— Շուտ, պատերազմելու շիրք բռնեցէ՛ք, որպէս զի Հայերը՝ թշնամի Խաղտիքներէն կեղծ վախով մը ետ ետ փախչին, դուք անոնց առջեւ ելլէք ու հալածէք :

Եւ երբ Խաղտիքները տեսան Հայերը մօտ եկած, բարձրագոյ վազեցին ասոնց վրայ, և Հայերը կռնակնին դարձուցած փախան և իրենց ետեւը ձգեցին զանոնք. այն ատեն Պարսիկները վրայ հասան, Խաղտիքներէն շատերը զարկին, ուրիշներ ալ ձերբակալեցին, և ուրիշները վախով անկից, վեր ելան և լեռներուն կատարները զբաւեցին :

Կիւրոս, զօրքերը մէկտեղ հաւաքելով, հրամայեց որ ճաշեն, և ճաշէն ետքը, խորհեցաւ ամրոց մը շինել այն տեղը. Տիգրանին ալ հրամայեց մէկը զրկել իր հօրը քով և պատուիրել որ իրեն քովը գայ, հետը բերելով զորձաւորներ ու ճարտարապետներ : Նոյն պահուն, Կիւրոսի առջեւ բերին գերիները և մէկ քանի ուրիշներ, որոնք վերաւորուած էին Կիւրոս տեսնելով զանոնք, կալանաւորները քակել տուաւ և բժիշկներ կանչելով հրամայեց զարմանել տալ վերաւորները : Յետոյ այն Խաղտիքներուն ըսաւ. — « Ես ձեզ կորսնցնելու, կամ պէտքի մը համար պատերազմելու եկած չեմ հոս, այլ կ'ուզեմ խաղաղութեան հաշտութիւն մը կնքել ձեզի ու Հայերուն հետ : Գիտեմ թէ այս լեռներու կատարներուն զբաւումէն առաջ, այսպիսի խաղաղութեան մը կարօտ չէիք դուք, որովհետեւ ապահովութեան մէջ էին ձեր զօրձերը, և Հայերուն ստացուածքները յափշտակելով կ'իւրացնէիք ձեզի. իսկ երբ այս լեռներու գագաթները զբաւուեցան, կը տեսնէք թէ ի՞նչ վիճակի մէջ կը գտնուիք : Արդ, ես զձեզ ազատ կ'արձակեմ ձեր տուները. և ձեզի ու միւս Խաղտիքներուն խորհելու միջոց կուտամ. մեզի զէմ կռուի՞ ելլել կ'ուզէք թէ բարեկամանալ մեզի հետ : Եթէ կռուի յօժար էք, առանց զէնքի մի՛ գաք հոս, իսկ եթէ խաղաղութիւնը կը նախընտրէք, եկէ՛ք առանց զէնքի և ինձի յանձնեցէ՛ք ձեր դատաստանը :

Խաղտիքները լսելով այս խօսքերը, խիստ զոգեցին Կիւրոսը և խնդագին վերադարձան իրենց տուները : Իսկ Հայը, խմանալով Կիւրոսի պատուէրը, իրեն հետ զորձաւորներ ու շինուածանիւթիքեր առաւ և ուրախ զուարթ փութաց գալ անոր քով : Այն ատեն է որ Խաղտիքներն ալ եկան, Կիւրոսի ազատ արձակածները, և նոյն օրը, Կիւրոս ինք անձամբ խաղաղութեան դաշինք մը զբաւ Հայերուն ու

կազարիքներուն միջև . և յետոյ , ամէնքը միասին սկսելով՝ ամբողջին պարիսպը կը շինէին և գործին բոլոր պիտոյքները կը բերէին : Եւ իրիկունը՝ Կիւրոս երկու կողմին ալ ընթրիքի ընդունելութիւն մը սարքեց , ինչպէս երկու բարեկամներու :

Այնուհետեւ , երբ Կիւրոս աւարտեց ամբողջին շինութիւնը , հոն թողուց իրեններէն բաւական թիւով գործաւորներ , որոնց վրայ վերակացու կարգեց Մարերէն մէկը , և յետոյ անկից ելաւ զնաց իր ունեցած ու Հայոցմէ առած զօքերով : Ու երբ իջաւ գիւղերը , Հայերէն ո՛չ ոք առնը փակուած մնաց , ո՛չ այր , ո՛չ կին , այլ առ հասարակ մեծ ուրախութեամբ և խաղաղութեան հաշտութեանը վրայ ցընծալով ընդառաջեցին . և ամէն ոք իր ունեցած մեծարժէք իրերը կը բերէր , ընծայ կ'ընէր անոր :

Յետոյ Հայուն կինն ալ դիմաւորեց իր աղջիկներով ու կրտսեր որդիով . և ուրիշ ընծաներէ զատ՝ ոսկի ալ բերաւ Կիւրոսի , որ նախ չէր ուզեր ընդունիլ զայն : Երբ Կիւրոս տեսաւ ասիկա , ըսաւ . մի՛ ստիպէք զիս որ վարձքի շնորհիւ բարերար ըլլամ , դո՛ւն , ո՛վ կին , զնա՛ և ինձի բերած ինչքերդ քովդ պահէ՛ և զանոնք ալ մի՛ տար այլ եւս Հայուն , թերեւս գետնին տակ կը թաղէ , այլ տառնցմով վայելչօրէն զարգարէ՛ զուակդ և ինձի հետ պատերազմի զրկէ՛ զանի . իսկ մնացած ստացուածքներդ քո՛ւ որդիներուդ ու աղջիկներուդ պէտքերուն համար պահէ՛ , և անոնցմով զարգարուեցէ՛ք և ձեր կեանքը ցնծութեամբ անցուցէ՛ք , որովհետեւ գետնի տակ մարմիններ թաղիլը բաւական է , երբ ամէն մարդ իր կեանքը վերջացնէ :

Այսպէս խօսեցաւ Կիւրոս ու ձին քշեց , իրեն կ'ուղեկցէին Հայը , ուրիշ բոլոր մարդիկներով , որոնք զանի բարերար կը կանչէին : Եւ յետոյ Կիւրոս անոնցմէ բաժնուելով , վերադարձաւ Տիգրանի և Պարսից մեծամեծներուն հետ և Մարաստան եկաւ Կիւրքսարի քով (այսինքն Դարեհ) : Մէկ քանի օր անցնելէ յետոյ , Բարեկոնի վրայ պատերազմի զացին :


Հ. Մ. Չառչեան , Քսենոփոնի այս վիպոյցին պատմուածքը զրելէ յետոյ , հետեւեալ տողերով կը վերջացնէ իր դիտողութիւնները :

«Այս պատմութիւնը՝ Աթենացի Քսենոփոնոսին է , երուանդեան Տիգրանի՝ Մեծ Կիւրոսի հետ ունեցած բարեկամութեան վրայ , որուն խօսքերը համառօտելով , քիչ մըն ալ պարզելով , հոս արտագրեցինք : Ասիկա մէջ կը բերէ Չոնարաս(*) ալ , մէկ քանի տողերու մէջ ամ-

(*) Յովհաննէս Չոնարաս յոյն հուշակաւոր պատմաբան , ԺԲ. դարու : Նախ կարեւոր պատճենով մը կը գտնուէր Կ. Պոլսի կայսեր զուրք , յետոյ Ս. Բարսեղի կարգի կրօնաւորներէն ելաւ : Ունի պատմագրութիւն մը , աբխազի սկիզբէն մինչեւ Ալեքս Ա. Կոմնենոսի մահը , 1118 թուականին , 18 գիւղերէ բաղկացած , ինչպէս նաեւ ուրիշ երկասիրութիւններ :

փոփելով: Բայց այս խօսքերը, յայտնապէս կը տեսնուի, շինծու են, կամ ռամկօրէն ըսեմ, յայտնի մասալ են և սիւզլիէ խօսք, որով Քսենոփոն կը ջանայ ցոյց տալ թէ ո՛րքան զարմանալի էր Կիւրոսի կառավարութիւնը, և կ'ուզէ նաեւ օրինակ տալ թէ ինչպէ՛ս կը վայելէ մեծ իշխանի մը, ինչպէս էր Կիւրոս, վարուիլ այսպիսի պարագաներու մէջ: Բայց այս մէկ բանը միայն իսկապէս կը հաստատուի այդ խօսքերուն մէջ թէ՛ ուրեմն մեր Տիգրանը նշանաւոր էր այն ժամանակ և Կիւրոսի աչքին ալ սիրելի, և անոր մտերիմը, օգնականը, անոր բոլոր կեանքին մէջ, ինչպէս որ յայտնապէս կը տեսնուի Քսենոփոնի գրուածքներուն մէջ, Գ.էն մինչև Ը. Գիրքը, որոնց մէջ Տիգրանը կը ցուցնէ իբրև Կիւրոսի գլխաւոր աջակիցը:»

Երուանդի և իր սղուն Տիգրան Ա.ի մասին օտար պատմագիրներուն աւանդած ծանօթութիւնները հաւտարմօրէն հոս արտագրելէ յետոյ, կը վերադառնանք մեր պատմութեան ընթացքին, մեր ընթերցողներուն յաջորդաբար ծանօթացնելու համար Տիգրան Ա.ի, Հայկազանց Հարստութեան այս մեծ թաղաւորին քաջութեան գործերը զորոնք մանրամասնօրէն պիտի պատմենք յաջորդ գլխուն մէջ:



Աժդահակի կասկածները Տիգրան Ա.ի եւ Կիւրոսի բարեկամութեան մասին. — Աժդահակ զարհուրելի երազ մը կը տեսնէ եւ խորհրդակցութեան կը կանչէ մոգերն ու արժունիքի խորհրդականները. — Տիգրան Ա.ի փոյր Տիգրանունին կնութեան կ'ուզէ նամակով մը. — Տիգրանունի՝ Մարասանի արժունիքին բազուկին. — Աժդահակի դաւադրութիւնը Տիգրան Ա.ի դէմ. — Տիգրանի եւ Աժդահակի պատերազմը.
 Աժդահակ կը սպաննուի. — Տիգրանի յաղթական վերադարձը. — Տիգրանակերտի հիմնարկութիւնը:



Աժդահակ, Մարաց թագաւորը, իմացած ըլլալով Տիգրան Ա.ի և Կիւրոսի դաշնակցութիւնը, և այս երկու վեհապետներուն սերտ ու բարեկամական յարաբերութիւնները, որոնք տակաւ կ'ամրապնդուէին, սկսած էր սեւ կասկածներէ տանջուիլ: Աւելի մեր Տիգրան թագաւորէն կը վախնար քան թէ Կիւրոսէն, որովհետեւ Տիգրանի համբաւը լսած էր, և զանի անպարտելի հերոս մը կը նկատէր, մինչդեռ, Կիւրոսի կարեւորութիւն չէր տար, վերջապէս իմ թոռս է կ'ըսէր, օր մը չէ՛ օր մը կա՛մ կը յաղթեմ անոր, և կա՛մ կը հաշտուիմ անոր հետ: Այս կասկածներուն վրայ կ'աւելնար ուրիշ հոգ մըն ալ, և Աժդահակ իր հանգիստը կը կորսնցնէր, կը վախնար թէ Բարեկատանի թագաւորն ալ Կիւրոսի հետ միաբանելով, երեքը միասին իր թագաւորութիւնը պիտի վերցնեն մէջտեղէն:

Այս անգութ ու սեւ կասկածներուն մէջ ինկած ալեկոծ, զիչեր մը զարհուրելի երազ մը տեսաւ և սոսկումէն յանկարծ արթնցած, զիչերով իր քովը կանչեց պալատին մոգերն ու իր խորհրդականները. և զանոնցամ սրտով մը սկսաւ անոնց պատմել իր երազը: —

«Երազիս մէջ, ըսաւ Աժդահակ, անձանթի երկիր մը կը գտնուէի, բարձր լեռան մը մօտ, գազաթը սառնամանիքներով սրտած, որուն համար կ'ըսէին թէ Հայոց աշխարհն է: Եւ լեռը զիտելով՝ անոր ծայրը, ծիրանազգեստ ու բարձրահասակ կին մը տեսայ նստած, երկունքի ցաւերէն բռնուած: Եւ անա՛ կինը յանկարծ ծնաւ երեք չափահաս հերոսներ, որոնց մէկը նստած՝ առիւծի մը վրայ, արեւմուտքը կը սլանար, երկրորդը, ընձի մը վրայ նստած՝ դէտ ի հիւսիս

կը վազէր: Իսկ երրորդը, ամենէն հզօրը, վիշապի մը վրայ նստած, մեր տէրութեան վրայ կը յարձակէր և արծուօրէն խոյանալով՝ կը խորհէր մեր աստուածները կործանել: Իսկ ես ինքս Աժդահակ, մէջտեղ նետուելով, անոր հետ մարտ մղեցի, և այն պատերազմին մէջ նիզակով զիրար վիրաւորելով, արիւնի առուներ վազեցինք և մեր ապարանքին երեսները ներկեցինք արիւնով, բայց կսիւր կը վերջանար իմ կործանումովս:

«Այսպիսի երազներէ՝ արիւն քրտինք թաթխուած, քունէս արթնցայ, միտքս զարհուրած ու վրդոված. ու հիմա անկարելի տագնապէ մը պաշարուած եմ և չեմ կարծեր թէ ողջ եմ եւս: Որովհետեւ, ինչպէս որ ինձի կը թուի, երեք հերոսներէն այն որ մեր վրայ յարձակեցաւ, նոյնինքն խրոխտ Տիգրանն է, որուն արչաւանքովը մեր Մարաց անպարտելի իշխանութիւնը պիտի նուաճուի: Կիւրոսի ձեռքին տակ՝

Աժդահակ, տեսնելով թէ մոգերն ալ կը հաստատեն իր կարծիքները, դարձաւ ըսաւ անոնց.

— Հիմա, աստուածներուն օժանդակութենէն ետքը, ո՞վ արդեօք մեզի պիտի սատարէ անոնց ձեռքէն ճողպարելու:

Արքունի աւագանին խորհուրդ տուին իրեն, ստուարաթիւ բանակ մը համախմբել Մարաց քաջերէն, և շրջակայ ազգերէն, մանաւանդ Վիւղացիներուն: Կրեոս թագաւորէն, որ Աժդահակի աներորդին էր, և այդ ահազին ուժերով ո՞չ միայն Տիգրանի, այլ և Կիւրոսի զիմադրել:

Իսկ Աժդահակ պատասխանեց անոնց. —

— Ատով, իբրաւ է, կրնանք ընել բան մը, բայց կարելի չէ միանգամայն երկուքին ալ զիմադրել, հետեւաբար, ինձի աւելի լաւ կը թուի ո՞չ միայն ձեր խորհուրդին համաձայն, բանակ մը գումարել, այլ և ուրիշ միջոցներու ալ ձեռնարկել, որպէս զի՝ մէկովը՝ մէկուն, և միւսովը՝ միւսին կարենանք յաղթել: Կիւրոսը բազմաթիւ զօրքերով նուաճել զիւրին կ'երեւայ ինձի, իսկ Տիգրանը՝ խաբելով ու դաւելով, և ասիկա անտարակոյս պիտի յաջողի, եթէ անոր քոյրը Տիգրանուհին ինձի կնութեան առնեմ և զանի խաբելով՝ իր ձեռքովը կորսնցնել տամ իր Տիգրան եղբայրը:

Աժդահակ այս մասին իր աւագանիին հաւանութիւնը ստանալէ յետոյ, արձակեց զանոնք և իր ամենէն մտերիմներէն մէկը դեսպան զրկեց Տիգրանին քով ընծաներով մէկտեղ և համակով մը, գրէթէ հետեւեալ իմաստով. —

«Քու սիրելի եղբայրութիւնդ գիտէ, աստուածներէն պարզելուած աշխարհիս այս կեանքին մէջ, չի կայ օգտակարագոյն բան մը, քան սիրելիներու բազմութիւնը, և ասիկա՝ իմաստուններուն ու ամենէն զօրաւորներուն համար արգարեւ: Որովհետեւ այսպէս դուրսէն ալ

երբեք խռովութիւններ չեն կրնար գայ, և եկածներն ալ շուտով կը վտարուին. իսկ ներսը, այսպիսի չարիքներ ո՛չ մէկէ մը մուտ գտնելով՝ կը հայածուին: Արդ, տեսնելով այսպիսի օգտակարութիւն մը, որ բարեկամութենէ առաջ կուգայ, մտածեցի աւելի հաստատ ու խորունկ հիման մը վրայ դնել մեր մէջի սէրը. որովհետեւ, երկուքս ալ, ամէն կողմերէ ամրացած, մեր տէրութիւնները պիտի պահենք ողջ ու անսասան: Եւ ասիկա կ'ըլլայ՝ երբ որ դուն ինձի կնութեան տաս՝ քու Տիգրանուհի քոյրդ, Մեծ Հայոց Օրիորդը. զիտեմ որ պիտի հաւանութիւն տաս, որովհետեւ թագուհիներու թագուհի պիտի ըլլայ: Ողջ եղի՛ր մեր թագակից և սիրելի եղբայր:»

Իսկ ինք՝ Աժդահակ, զեպարնը զրկելէ յետոյ, սկսաւ զանազան օգգերէ զինւորներ ժողովել, կիւրոսի դէմ սպաներազմի պատրաստուելու համար:

Տիգրան չէր զիտեր Աժդահակի նենգամիտ դաւաճանութիւնը, հաւանեցաւ անոր կնութեան տալու իր քոյրը. ուստի արքայական օրէնքով ու սպաններով՝ զանի անոր զրկեց: Եւ Աժդահակ իր սրտի նենգութիւնը գործադրելու և մանաւանդ Տիգրանուհիին գեղեցկութեանը համար, զանի իր բոլոր կիներուն վրայ թագուհի կարգեց: Եւ անոր իմաստութիւնը փորձով տեսնելով, ամէն բան անոր խորհուրդովը կ'ընէր, և հրամայած էր որ ամենքն ալ անոր ակնարկին հնազանդին, որպէս զի անոր միտքը դարձընէ և եղբօրը Տիգրանին սպաննութեան համար զանի որսայ իր կամքը կատարելու:

Օր մը հետը խօսելով, կ'ըսէ.

— Ձեռն զիտեր թէ՛ եղբօրդ կինը Չարուհին, քու տիկնութեանդ վրայ նախանձելով՝ զանի զրգուած է ինձի ու քեզի դէմ. և քու եղբայրդ, կիւրոսի հետ միացած, կը խորհի սպաննել զիս ու քեզ, և Մարաց վրայ թագաւորել, որպէսզի Չարուհին ամենուն վրայ տիկին ըլլայ:

Սակայն Տիգրանուհին, խելացի կին, զիւրաւ համոզուողներէն չէր, թէ և Աժդահակ շունչը կը հատցնէր: Վերջապէս, շատ մը խօսքերէ վերջ, տեսնելով իր կնոջ յամառութիւնը, Աժդահակ բացայայտօրէն կ'ըսէ անոր.

— Կամ պէտք է միջոց մը խորհիս եղբայրդ սպաննելու համար, և կամ հակառակ պարագային, տիկնութենէդ ինկած, բոլոր կիներուն առջև պիտի խայտառակուիս:

Իսկ Տիգրանուհի թագուհին, ինչպէս ըսինք, խորագէտ կին, էրկանը դաւաճանութիւնը զիմանալով մէկտեղ՝ անուշ լեզուով մը կը խօսէր, և առ երեսս հաւանութիւն ցոյց կուտար: Բայց, զաղտնապէս, մտերիմ ու հաւատարիմ մարդիկներու ձեռքով, իր եղբօր իմաց տուաւ Աժդահակին դաւադրութիւնը:

Գալով Աժդահակ թագաւորին, հնարքով մը Տիգրանի քով պատգամաւոր մը զրկեց, իրեն տեսութեան գալու, երկու թագաւորութիւններու սահմաններուն մէջ որոշեալ տեղ մը, պատրուակելով թէ իրեն հետ այնպիսի բանի մը վրայ պիտի խօսէր որ, կարելի չէր գիրով կամ պատգամաւորի միջոցաւ յայտնել: Իսկ Տիգրան, իր քրոջ ազարարութեանը հորհիւ, կանխաւ իմացած ըլլալով անոր սրտին նեն-



ՏԻԳՐԱՆՈՒՆԻ ԵՒ ԱԺԴԱՀԱԿ

գութիւնը, ետ ճամբեց պատգամաւորը, յայտնելով իրեն Աժդահակի դաւադրութիւնը. ահա՛ կուգամ, ըսաւ, ո՛չ թէ տեսութեան, այլ պատերազմի:

Յետոյ, Տիգրան լուր զրկեց Կիւրոսի, որ ուրիշ ազգերու պատերազմներու մէջ կը գտնուէր, Աժդահակի վրայ քայելու. իսկ ինք Կապադովկիոյ, Վրաց, Աղուանից սահմաններէն, և Հայոց բոլոր կարիճները հաւաքելով, Մարաստանի կողմերը քայլեց:

Ասդին, Աժդահակ, իր գորքերը կազմ ու պատրաստ ըրած էր արդէն անոր դէմ:

Պատերազմեցան իրարու հետ հինգ ամիս: Պատերազմին երկարելուն երկու պատճառներ կային. նախ՝ Տիգրան Կիւրոսի գալուն կը սպասէր. երկրորդ՝ Տիգրան կ'աշխատէր Աժդահակը չբարկացնել Տիգրանուհիին դէմ, և այսպէս երկարաձգելով գործը, կը Զանար իր քոյրը կորզել անոր ձեռքէն:

Վերջապէս Տիգրանուհին յաջողեցաւ ազատել և իր եղբօրը բանակը նետել ինքզինք. ուստի, Տիգրան սաստկացուց պատերազմը՝ ձիւղ այդ միջոցին հասաւ Կիւրոս ալ իրեններուն հետ :

Ճակատամարտի տաք բոսէին, երբ թշնամի շարքերը խառնուեցան իրարու, Տիգրան յարձակեցաւ Աժդահակի վրայ, ինք անձամբ ամրիտւրի մը պէս անոր սիրտը մխեց իր նիզակին անագին տէզը, և նորէն ետ քաշելով նիզակը, անոր թոքերուն կէսը դուրս հանեց թափեց :

Եւ Աժդահակ, կոնակին վրայ տապալկելով ինկաւ ու մնաւ :

Սակայն, պատերազմը շարունակելով, Տիգրան բոլորովին ջախջախեց ու հալածեց Աժդահակի զօրքերը, որոնցմէ գերի վարեց չուրջ տասը հազար, որոնց հետ առաւ Աժդահակի կիներն ալ : Իսկ Կիւրոս սիրեց Մարաստանի, իրրեւ այն թագաւորութեան ժառանգը, ինք ըլլալով Աժդահակի թուր. բայց իր քեռին Դարեհն ալ, այն է կիաքսարը՝ Աժդահակի որդին, բոլորովին չի մերժեց, այլ պատուի մէջ կը պահէր :

Տիգրան ամբաւ աւարով ու գերիներով վերադարձաւ, և իր ընտրը Տիգրանուհին զրկեց իր անունով շինած աւանը, այսինքն Տիգրանակերտ, և այդ տեղի գաւառները կալուած տուաւ անոր :

Խորենացին կը պատմէ թէ ասոր զարմէն սերեցաւ Ոստան կամ Ոսանիկ կոչուած ազատական նախարարութիւնը, որ, Տիգրանակերտի կողմերը, թագաւորական ցեղ մը կը նկատուէր : Եւ ասիկա այն նախարարութիւնն է որ Եղիշէի գիրքին մէջ արժուցի սուկ կը կոչուի, որ կ'ըսէ. «Ազատ մարդիկ, զոր ոսանիկսն անուանեցին յարժուցի սուկ» (Գլ. Գ. էջ 91) :

Իսկ Աժդահակի աւաջին տիկինը՝ Անուշ, և անոր միւս կիները, և անոնց պատանիները, տասը հազար գերիներով մէկտեղ, այս ամբողջ Տիգրան բնակեցուց Արարատի մեծ լեռան արևելքի կողմէն մինչև Իողթն գաւառի սահմանները, զատակերաններուն մէջ, որոնք կը կոչուէին Տամբաս, Ոսկի, Իսիս, Դամգոյն և ուրիշ աւաններ ալ, նրասխի եղերքը, որոնցմէ մին էր Վրանջուցիք, մինչև նախջուանի դիմացի տեղերը, որոնց մէջ են ուրիշ երեք աւաններ ալ, Խրամ, Ջուղայ, և Խոսակուցիք :

Աժդահակի կիներէն ու պատանեակներէն սերածները՝ Հայերէն կոչուեցան Վիւսպագուց, այսինքն՝ Աժդահակէ սերածներ, որովհետև Աժդահակ՝ վիշապ կը նշանակէ :

Խորենացին (Ա. 29) Տիգրան Ա.ը կը ճանչնայ Տիգրանակերտի հիմնադիրը՝ Սակայն, թէ՛ ազգային և թէ՛ օտար պատմագիրներու վկայութիւններուն համաձայն, կրնանք ըսել թէ՛ երկու Տիգրանակերտներ կան, զաս զաս տեղեր շինուած. մէկը՝ Ամիդ է, այն է

Տիարպէիւր, Աղձնիքի մէջ, Տիգրան Ա. էն շինուած. իսկ միւսը կ'երևայ թէ Միւնիքի մէջ է. թերևս Ապարան քաղաքը կամ Ապարներ, թերևս Տիգրան Բ. էն կառուցուած: Կարծողներ ալ կան թէ՛ այս Ապարան քաղաքը Տիգրան Ա. էն շինուած է, իսկ Տիգրանակերտը՝ Տիգրան Բ. էն:

Գալով Աժդահակի ու Կիւրոսի պատմութեան միջև տեսնուած հակասական կէտերուն, Հ. Մ. Չամչեան հետեւեալ ծանօթութիւնները կուտայ այդ մասին.

« Աժդահակի ու Կիւրոսի մասին ինչ որ կը պատմեն Հերոդոտ, Քսենոփոնտ ու Մովսէս Խորենացին, այս վերջինը՝ Մատերասէն առնելով, եթէ իրարու հետ բաղդատենք, երեքն ալ՝ այլևայլ թագաւորներու այլևայլ պատմութիւններ ըլլալ կ'երևան, որովհետեւ քանի մը կէտերու մէջ թէև համաձայն են, բայց շատ մը կէտերու մէջ մեծապէս կը տարբերին իրարմէ: Հերոդոտինը՝ քիչ մը կը թուի առասպելներով շաղուած ըլլալ. Քսենոփոնինը, ըստ Կալմեթի վկայութեան, յերկուուած կ'երևայ, ցոյց տալու համար թէ թագաւոր մը ի՛նչպէս պէտք է վարէ իր թագաւորութիւնը, և շատ մը կէտերով ներհակ է Հերոդոտի: Իսկ Մարիբասինը, զոր մասամբ մը մէջ կը բերէ Խորենացին, ուրիշ պատմութիւն մըն է: Բայց մենք ջանացինք, որչափ որ կըցանք, երեքն ալ իրարու հետ միաբանեցնել, այնպէս որ երեքն ալ նոյն կէտին մէջ կը համաձայնին ու կը տարբերին:

« Դիտելի կէտ մըն ալ. Հերոդոտ կը պատմէ թէ նախ Աժդահակ պատերազմեցաւ Կիւրոսի հետ ու պարտուեցաւ, ու Կիւրոս, զանի բռնելով, խնայեց անոր կեանքին, և ձեռքէն առնելով թագաւորութիւնը, զանի վար դրաւ իրեն քովը, իշխանութենէ զուրկ, կամ, ուրիշներու կարծիքով, բանտարգել ըրաւ: Իսկ Յուստինոս (Ա. 6) կ'ըսէ թէ՛ անոր խնայելով, Վրկանաց երկրին մարզպանութիւնը տուաւ անոր: Բայց ամենէն հաւանականը՝ Խորենացիէն աւանդուածն է (Ա. 28):

« Չանց կ'ընեմ մէջ բերելու հոս ուրիշ մատենագիրներու ուրիշ խօսքեր ալ, որոնցմէ ոմանք Աժդահակն ու Գարեհը նոյն անձը կը համարին, և կ'ըսեն թէ անի՛ Եսթերի էրիկն էր, Արտաշէսը, ևն. »

Դիտելի է թէ՛ Տիգրան Ա. ի և Աժդահակի պատերազմին և միւս բոլոր պարագաներուն պատմութեան միակ աղբիւրը մեր Խորենացին է. օտար պատմիչները բնաւ չեն յիշեր այդպիսի դէպք մը, բացի Տիգրան Ա. ի հօր Երուանդի՛ Կիւրոսի առջև դատուելէն, որուն մանրամասնութիւնները զրինք այս էջերուն մէջ. սակայն Քսենոփոնի այդ պատմութիւնը վիպական արժէք մը միայն ունի, չունենալով ո՛ր և է վաւերականութեան գրոշմ:

Լիւղիոյ քաղաւորը Կրետոս՝ Տիգրան Ա.ի դէմ. — Կիւրոսի ու Տիգրան Ա.ի պատերազմները՝ Կրետոսի դէմ. — Կրետոսի համբողջութիւնը լեզուի կը բացուի. — Տիգրան Ա.ի յազրական վերագարձը՝ Հայաստան. — Կրետոսի նշանակութիւնը. — Կրետոսի դաշնակից Իկոնիոյ բնակիչները կը հպասակին Կիւրոսի. — Կիւրոս ու Տիգրան Ա. կ'առեւտեն Բաբելոն. — Կիւրոս միահեծան քաղաւոր կը հռչակուի Պարսից, Մարաց, Ասորեստանի եւ Բաբելոնացիներու հետ. — Կիւրոս պատերազմի կ'երթայ Սկիւրացիներու քաղաքի Քամիրի վրայ. Քամիրի տղան՝ ինքնասպան. — Կիւրոս մացառներու մէջ ինկած. — Կիւրոսի եղբրական մահը եւ սպանագիրը. — Կիւրոսի մահուան վրայ շահեկան ծանօթութիւններ. Կիւրոսի յաջորդները եւ իրենց գործերը:



Կրետոս, Լիւղիոյ երջանիկ ու փարթեմ թագաւորը, վաղուց կը վախնար Տիգրան Ա. ի ու Կիւրոսի բարեկամութենէն եւ իրենց միջև կնքուած դաշնակցութենէն. երբ իր քեռայր Արտաշէսին պարտութիւնները լսեց եւ անոր եղբրական վախճանը՝ պատերազմի մէջ, նաև Կիւրոսի փրկարարութիւնը՝ Մարաց վրայ, մեծ մտահոգութեան մը մէջ ինկաւ եւ սկսաւ լրջօրէն կշռել կացութիւնը, որ այսպէս, իրեն համար ա՛յնքան սպառնական կը դառնար:

Պատերազմի կը խորհէր Տիգրան Ա. ի դէմ, սակայն, Կիւրոսի ու Տիգրանի դաշնակցութեան մղձաւանջը կը հալածէր զինք. եւ յետոյ, իմացած էր Հայոց թագաւորին համբաւը, եւ կը ստկար անոր զօրութենէն: Ուստի, պատերազմի պատրաստութիւնները տեսնելէ առաջ, կը դիմէ Ապոլոնի պատգամախօս Պիթիլային կամ Թեւտիային, պատգամ հարցնելու դարձրայէն, որ հետեւեալ պատասխանը կուտայ. —

« Կրետոս, Ալիւս գետը կտրել անցնելով, պիտի քանդուի իշխանութիւնները:

Ահա՛ այս պատգամին ապաւինած, Կրետոս կը համարձակի պա-

տերազմի ելլել, կարծելով թէ պատգամին մէջ յիշուած իշխանութիւնները պիտի բանդէ պարբերութիւնը ո՛չ թէ իրենք, այլ ուրիշներունը կ'սկնարկէր: Այսպէս, աճազին բանակով մը, Բարեխաջիններութեաւորէն այլ օգնութիւն գտնելով, կը պատրաստուի քայլել Կիւրոսի դէմ:

Կիւրոս կ'իմանայ Կրեստի առաջխաղացումը, և շուտով օգնութիւն կը խնդրէ մեր Տիգրան թագաւորէն, որ անմիջապէս կը հասնի իր զօրականներով:

Պատերազմը կը սկսի և հակառակորդները կը մարտնչին գրեթէ հաւասար քաջութեամբ, մինչեւ որ, ի վերջոյ, Կրեստի բանակը տկարացած ու քայքայուած, կը հալածուի Տիգրանի ու Կիւրոսի յաղթական զօրքերէն: Սակայն, Լիւդիոյ թագաւորը, միշտ իր բաղդաւորութեան վրայ վստահ, և մանաւանդ, Սպարտի պատգամէն խրախուսուած, վերստին ոյժ կ'առնէ, և կատաղօրէն կը շարունակէ պատերազմիլ, առանց վնասելու: Բաւական երկար կը տեսնեն ընդհարումները, և յաղթութիւնը դեռ անորոշ, թշնամութիւնները կը դադրին ժամանակի մը համար և բանակները կը բաժնուին իրարմէ ու կը հեռանան կռուի ասպարէզէն:

Կրեստ կը քաշուի Սարդի քաղաքը, հոն ձմերելու համար, և իր զօրքերը ձմերոցներու մէջ կը ցրուէ, սպասելով գարնան, վըճառական ճակատամարտ մը կազմակերպելու և իր բոլոր ուժերով յարձակելու համար Կիւրոսի և անոր դաշնակցին վրայ:

Կիւրոս, իմացած ըլլալով Կրեստի զօրքերուն ցրուիլը, յանկարծ յարձակում գործեց անոր վրայ Սարդի քաղաքին մէջ: Կրեստ շուտաւոր ու սարսափահար, իր քովի փոքրաթիւ հեծելազօրքերով ելաւ անոր դէմ. իսկ Կիւրոս, ուզելով դիւրաւ վերջացնել գործը, անոր հեծեալներուն դէմ հանեց ուղտերու երամակ մը, որոնցմէ խրաչելով Կրեստի գունդերուն ձիերը, կը խանդարէին կարգերը, և հեծեալներուն թոյլ չէին տար պատերազմելու, այնպէս որ հեծեալները պարտաւորուեցան վար իջնել ու ոտքով կռուիլ:

Յուսահատական մաքառումներէ վերջ, Կրեստի զօրքերը շարաչար յաղթուեցան ու փախտական ինկան Սարդի, ուր Կիւրոս իր զօրքերով մանելով, տասնըչորս օր պաշարեց գայն և ի վերջոյ առաւ քաղաքը:

Այս պատերազմներուն մանրամասնութիւնները կը գտնենք նախնի պատմագիրներէն Հերոդոտի, Քսենոփոնի, Դիոդորոսի, Պլուտարքոսի, Յուստինոսի և ուրիշներու գիրքերուն մէջ:

Կը պատմուի թէ, Սարդի քաղաքին առձան միջոցին, Կիւրոսի զօրականներէն մէկը Կրեստի կը պատահի, և զանի չը ճանչնալով, ձեռքի սուրը կը բարձրացնէ և կ'ուզէ զարնել. նոյն պահուն, հոն

կը գանուէր կրեսոսի տղան, որ ի ծնէ համբ էր. տեսնելով իր հօր մահուան վերահաս վտանգը, առաջ կը նետուի և, յանկարծ, հրաշքով մը լեզուն բացուած, հողեվարքային թափով մը կ'ազազակէ. «bis fave!» բազուկը, կեսոս նախ կը սպաննես:»

Ասոր վրայ, զօրականը քաշեց կրեսոսի ձեռքէն և ողջ ողջ բերաւ զանի Կիւրոսի քովը, որ իսկոյն հրամայեց զանի երկաթէ տապակի մը վրայ զնել ու խորովել:

Մինչ պաշտօնակալները կ'ուզէին թագաւորին հրամանը կատարել, կրեսոս յիշեց իր Աթենացի բարեկամին՝ Սոլոնի խօսքը, հառաչեց և ողորմուկ ձայնով մը կանչեց. — Ը՛վ Սոլոն, Սոլոն...:

Քովինները լսելով այս բացազանչութիւնը, պատմեցին Կիւրոսի թէ՛ կրեսոս նոր աստուած մը կը կանչէ իրեն օգնութեան: Եւ Կիւրոս զթալով անոր, հրամայեց իր առջեւը բերել զանի, և հարցուց անոր.

— Ի՞նչ կը խօսէիր:

— Սոլոնի խօսքերը յիշեցի, պատասխանեց կրեսոս:

— Ի՞նչ խօսք, հարցուց Կիւրոս:

— Փամանակով իրեն հարցուցած էի թէ, պատասխանեց կրեսոս, ինչ աւելի երջանիկ մէկը տեսած ես երբևէ:

— Է՛, շարունակեց Կիւրոս, ի՞նչ ըսաւ Սոլոն:

— Ինծի ըսաւ թէ, պատասխանեց կրեսոս, մարդու բարեբաղդութիւնը կարելի չէ՛ երանել, առանց սպասելու վախճանին:

Կրեսոս, իմանալով այս խօսքերը, վրան խղճաց և արգիլեց մահուան պատիժին գործադրութիւնը:

Այնուհետեւ, Կիւրոսի զօրքերը կը սկսին աւարի տալ գրաւուած քաղաքը, մինչ կրեսոս, ապահար, կը դիտէր տեսարանը:

— Կրեսոս, հարցուց Կիւրոս, ինչո՞ւ այդպէս զարմանահար կը նայիս:

— Անշուշտ կը զարմանամ, պատասխանեց կրեսոս, թէ ի՞նչպէս քու զօրքերդ աւարի կուտան այդ քաղաքը, որ այլ ևս կրեսոսին չէ՛, այլ Կիւրոսի:

— Ի՞նչ կը վայլէ ընել ուրեմն քու կարծիքով, հարցուց Կիւրոս:

— Արգիլէ՛ աւարառութիւնը, պատասխանեց կրեսոս, և պահապան դի՛ր այդ քաղաքին վրայ, որպէս զի անոր շքեղութիւնը տեսնողները՝ պարծանքով գովեստը տան անոր, որ զայն առաւ, իսկ եթէ՛ զօրքերդ յափշտակեն քաղաքին կողոպուտը, ո՞չ միայն քաղաքը պիտի անշքանայ, այլ նոյն իսկ զօրքերը, աւարով հարստացած, ա՛յլ չպիտի անսան քեզի:

Կիւրոս հաննելով կրեսոսի դիտողութիւններուն, կ'արգիլէ աւարառութիւնը: Յետոյ, շատ մը հանձարեղ խօսքեր իմանալով անոր բերնէն, կը համակրի, կը սիրէ, կը մեծարէ և ի վերջոյ իրեն խորհրդական կը կարգէ զանի:

Փառաւոր յաղթութիւններով կը վերջանայ պատերազմը, և Կիւրոսի անբաժան բարեկամ ու զանակիցը Տիգրան, մեծ շուքով ու հանդիսաւորութեամբ իր երկիրը կը վերադառնայ, ուր իրեն համար ջերմագին ընդունելութիւն մը կը վերապահուէր ժողովուրդի բոլոր դասակարգերուն կողմէն, որոնք առհասարակ կը պաշտէին իրենց իմաստուն ու յաղթող թագաւորը :

Հ. Մ. Չամչեան հետեւեալ շահեկան ծանօթութիւնները կուտայ Կրեսոսի ձերբակալման պարագաներուն վրայ. —

«Յոյներուն, կըսէ, և ուրիշ ազգերուն պատմիչները կ'աւանդեն առհասարակ թէ՛ Կրեսոս կ'ապրէր Կիւրոսի օրով և թէ՛ Կիւրոսն է ձերբակալեր զանի : Իսկ Խորենացին (Ա. 11 և 12) յիշելով չորս յոյն պատմագիրները — Պոլիկրատէս(*), Եւազրիոս, Փլեդոնիոս և Կամադրոս, որոնց զիրքերը մէջտեղ չիկան հիմա —, այդ մասին կը տարակուսի, և աւելի հաւանական կը գտնէ թէ՛ Վաղարշակի թուր պարթիւ Արտաշէսը ձերբակալած ըլլայ Կրեսոսը : Սակայն առաջին կարծիքն ալ հաւանական կը թուի իրեն, ինչ որ ճիշդ է, որովհետեւ ասոր առաջին պատմիչը՝ Հերոդոտ եղած է, որ Կիւրոսի մահուընէն 45 տարի վերջը ծնած է, կամ ուրիշ բացատրութեամբ մը, Արտաշէսի թագաւորութենէն 366 տարի առաջ, և ինք որոշակի ու երկարօրէն պատմած է այն ճակատամարտը, որուն մէջ Կիւրոս յաղթած է Կրեսոսի : Արդ, ի՞նչպէս կրնար գրել այնպիսի դէպք մը, որ դարեր ետքը անդի ունեցած պիտի ըլլար, եթէ ընդունինք որ Արտաշէսի ժամանակակից էր Կրեսոս : Նոյնը կը պատմէ Քսենոփոնտ, որ Արտաշէսի թագաւորութենէն 336 տարի առաջ ծնած է. նոյնը կը յիշատակէ Կտեսիաս ալ, Քսենոփոնի ժամանակակից պատմիչը :

«Թերեւս ըսուի թէ՛ հարի պատմիչները՝ Հերոդոտոս ու Քսենոփոնի և ուրիշներու պատմագրութեանց մէջ մտցուցած են Արտաշէսի գրբ-

(*) Սամոսի բռնաւորը, Անակրեոնի բարեկամը, խաչուած 521 (Ք. Ա.)ին : Նախնիք՝ Բազդին չէին վստահեր, երբ սա կը յամառեր նպասաւորելու մարդ մը : Պոլիկրատ, որ շարունակ բաւսուն արի, անխառն երջանկուրիւն մը վայելած էր, ինկզիմ ի վերջոյ անհանգիստ զգաց այստան հաստատ երջանկուրեցէ մը, եւ կարծելով քէ խուսուր կորուստով մը պիտի իր վրայ հրաւիրէր ձախորդութեան հարւածները, ծովը նետեց մասնի մը, որ իրեն համար խիստ բանկարձի էր : Բազդը շրջուցեց երբեք այս «կամաւոր զոհաբերութիւնը». մասնին վերսին գտնուեցաւ ձուկի մը փորին մէջէն եւ բերուեցաւ բռնաւորին, որուն կասկածները սակայն պիտի շուտով կասարուէին : Ռոնէստ, Դարենի տղակալը, սիրեց Սամոսի, բռնեց բռնաւորը, եւ խաչեց զանի :

ծերը . բայց ասիկա անտեղի է , որովհետեւ այն երկուքն ալ , ա՛յնչափ ընդարձակ մանրամասնութիւններով ու կարգով , երկարօրէն կը գրեն այդ դէպքերուն վրայ , որոնք Կիւրոսի օրերուն միայն կը պատշաճին : Եւ դարձեալ անոնք կը պատմեն թէ Կրետոս բարեկամ էր Սուրն փիլիսոփային . արդ , ամենուն յայտնի է թէ Սուրն փիլիսոփան , եօթն իմաստասէրներէն մէկը , Կիւրոսի ժամանակակից էր , և հետեւաբար , անոր օրովը կ'ապրէր , և ո՛չ թէ Արտաշէսի ժամանակ : Հասաւ ո՛ւր թողունք այս պարագան ալ . — բոլոր պատմիչները կ'աւանդեն որ Կրետոս՝ Կիւրոսի հաւուն՝ Աժդահակին աներօրդին էր , ըլլալով ասոր կնոջ եղբայրը :

« Իսկ եթէ մէկը կարծէ թէ ուրիշ Կրետոս մը կար Կիւրոսի օրով » և ուրիշ մըն ալ՝ Արտաշէսի օրով , ասիկա ալ ճիշդ չէ . որովհետեւ , եթէ այդպէս ըլլար , պէտք էր այն ատեն , առաջին Կրետոսի ընծայուածէն տարբեր պատմութիւն մը վերագրուէր վերջին Կրետոսին , բայց Կրետոսը Արտաշէսի ժամանակակից ընողները նոյն առաջին Կրետոսի պատմութիւնը մէջտեղ կը դնեն :

« Եթէ այս այլեւայլութեան պատճառը քննելու յազնաբ , կ'երեւի թէ պատմագիրները շփոթութիւն ունեցած են անուններու մասին , ինչպէս որ անոնցմէ մէկ քանիները , Լիւդիոյ Կիւրոս իշխանին անունը խառնելով ասոնց Կրետոս թագաւորին անունը , և Պարսից Արտաշէս թագաւորին անունը մեր Արտաշէս պարթեւ թագաւորին անունին հետ մէկուն պատմութիւնը միւսին տուած են , և ուրիշ ժամանակի մը մէջ գործուածը՝ տարած դրած են Մեծ Կրետոսի ժամանակներուն մէջ : Այդ մասին երկարօրէն գրած են երկու ժամանակակից յոյն պատմիչները — Քսենոփոն և Կտեսիաս — , ինչպէս նաև Սիկիլիացի Դիոդորոս և ուրիշներ :

« Ասոնք կը պատմեն թէ Պարսից թագաւորը Գարեհ Բ . որ Նոթոս կը կոչուէր , երկու որդիներ ունէր , երէցին անունը՝ Արտաշէս , իսկ կրտսերինը՝ Կիւրոս : Գարեհ՝ թագաւորութիւնը առաւ իր երէց սղուն՝ Արտաշէսի . իսկ կրտսերը Կիւրոս՝ Լիւդիոյ երկրին մարզպան կարգեց . բայց այս վերջինը , գո՛հ չը մնալով ասով , նախանձեցաւ իր եղբորը , և պատերազմի գնաց անոր դէմ : Արտաշէս գերի բռնեց և իր մօրը խնդրանքին վրայ , ազատ արձակեց զանի , որ , յետոյ նորէն պատերազմի ելաւ Արտաշէսի դէմ , որմէ սպաննուեցաւ : Արդ , թերեւս մատենագիրներէն ոմանք , Արտաշէսի՝ իր Կիւրոս եղբայրը — Լիւդիոյ մարզպանը — ձերբակալելը՝ սխալմամբ վերագրեցին մեր Արտաշէսին և ըսին թէ՛ պարթեւ Արտաշէսը ձերբակալեց Լիւդիոյ Կիւրոս , կամ Կիւրոսս , և կամ Կրետոս թագաւորը :

« Որքանացին ուրիշ առարկութիւն մը մէջ կը բերէ ասոր դէմ . ինչպէս որ կը գտնենք , կ'ըսէ , Եգիպտոսի վերջին թագաւորը Նեք-

տանիրոս, Մեծ Ազեքսանդրի հօր՝ Փիլիպպոսի ժամանակակիցը, Կիւրոսէն ու Կրեսոսէն երկու հարիւր տարի ետքը կ'ապրէր. իսկ մեր Արտաշէսը՝ Նեքտանիրոսէն նոյնքան և աւելի տարիներ ետքը կ'ապրէր: Եւ եթէ այսպէս է, կարելի չէ ուրեմն Արտաշէսը Կրեսոսի ժամանակակից համարել: Գիտնալու է նաև թէ, Խորենացիի զանազան օրինակներուն մէջ, այս Կրեսոսը՝ երբեմն Կիւրոս զրուած է երբեմն ալ Կիւրոսս և երբեմն ալ՝ Կրեսոս. նոյնպէս, մերթ Լիւքացի զրուած է, մերթ Լիւզացի. բայց յայտնի է թէ Խորենացին կ'ակնարկէ Լիւզացի Կրեսոսը:

«Իսկ Վարդան ուրիշ կերպով մը կը պատմէ: Մեծն Տիգրան, կ'ըսէ, Աժդահակը սպաննեց, և Կրեսոսը ձերբակալեց և արձակեց, փոխանակ գրկու թէ՛ Տիգրան օգնած է Կիւրոսի, Կրեսոսը գերի բռնելու գործին մէջ: Բայց Ստեփաննոս Ասողկը (Գիրք Ա. Գլ. 5) կը գրէ. — «Կիւրոս սպաննելով Կրասոսը, ջնջեց Լիւզացուց իշխանութիւնը: Եւ յետոյ, յաջորդ զլիսուն մէջ կ'ըսէ թէ՛ Արտաշէս ձերբակալեց Լիւզացուց Կրասոս թագաւորը: Նոյնը կ'ընէ Սամուէլ Անեցին ալ, որ երկու կարծիքներն ալ մէջ կը բերէ: Ինչ որ ճիշդ է սակայն, վերև գրուածներէն կը հասկցուի:»

Կրեսոսի պարտութեան յուրը շուտով կը տարածուի և կը հասնի Իկոնիոյ կողմերը, որուն բնակիչները, Կրեսոսի զաշնակիցներ, կ'ահաբեկին և կ'աճապարեն Կիւրոսի ղեսպաններ ղրկելով, ազալել որ բարեկամանայ և դաշնակցութիւն մը կնքէ իրենց հետ: Իսկ Կիւրոս, ինչպէս իրեն սովորութիւն ըրած էր նման պարագաներու մէջ, առակով մը կը պատասխանէ Իկոնիոյ բնակչութեան պատգամաւորներուն ու կ'ըսէ.

— «Որտորդ մը, ջուրի մէջ շատ մը ձուկեր տեսնելով, իր նուագարանը հնչեցուց, սպասելով որ ձուկերը ձայնին քաղցրութենէն զիւթուած, կուզան իրեն անձնատուր կ'ըլլան, բայց տեսնելով թէ անոնք երբեք կարելորութիւն չեն տար իր նուագներուն, ուռկանը նետեց ու բռնեց անոնցմէ շատերը, որոնք սկսան կայտուել ծովեղերքի վրայ: Այն ատեն ձկնորսը հեզնելով ըսաւ անոնց. — Աւելորդ է հիմա ձեր պարելը, որովհետև քիչ առաջ շուղեցիք ընել ատիկա, մինչ ես անուշ անուշ կը նուագէի:»

Ստիացիները՝ Կիւրոսի առաջին իմաստը հասկցան ու պատերազմի պատրաստուեցան: Բայց, Մարաց Արբակ սպարապետը վանեց զանոնք և ամենքն ալ Կիւրոսի իշխանութեան տակ հնազանդեցուց:

Այնուհետև, քանի մը տարիներ անցնելէ վերջ, Կիւրոս պատերազմի ելաւ Բաբելոնցիներուն դէմ և առաւ Բաբելոնը, երբ հոն կը տիրէր Բալդասար թագաւորը, և իր քեռին, Աժդահակի տղան Դարեհը Բաբելոնի գահը բարձրացուց: Այս յաղթութեան մէջ ալ Կիւ-

բոսի նիզակակից էր իր սիրելի բարեկամը, Նոյնինքն մեր Տիրգրան Ա. թագաւորը, ինչպէս կը տեսնուի Քսենոփոնի Պատմութեան մէջ (Գիրք 2.-Ը.): Նոյնպէս, Երեմիա մարգարէն, գուշակելով Բաբելոնի այս առումը, յայտնապէս Հայերը կը հրաւիրէ այդ արշաւանքին ու կ'ըսէ. —

«Առե՛ք նեան ի վերայ երկրիդ. փող հարե՛ք ընդ ազգս ամենայն, հրաւիրեցե՛ք ի վերայ դուռ գունդս, պատուեր տո՛ւք յինե՛ն արարածսն թագաւորուրեանցն եւ Աստուծոյն գնդին, կանգնեցե՛ք զնովա նեակալս, ելե՛ք ի վերայ (Երեմ. ԾԱ. 27):

Սակայն. երկու տարի ետքը, Կիւրոս գտտուեցաւ իր քեռիին՝ Դարեհի նեա, և ասոր ղէմ պատերազմելով, յաղթեց ու ինք թագաւորեց Բաբելոնի մէջ, և հռչակուեցաւ Պարսից, Մարաց, Ասորեստանեայց ու Բաբելոնացոց միանեծան թագաւորը:

Կիւրոս մէկ տարի թագաւորած էր Բաբելոն, երբ Իսրայելացիներու գերութեան եօթանասուն տարիները լրացան: Անմիջապէս հրամայեց Երրայեցիներուն երթալ իրենց երկիրը, անոնց պատուիրելով միանգամայն որ Աստուծոյ տաճարը կառուցանեն Երուսաղէմի մէջ:

Կիւրոսի կենսագիր արտաքին պատմիչները կ'աւանդեն թէ՛ Կիւրոս այնուհետեւ պատերազմի գնաց Սկիւթացիներու թագունի թափրի վրայ, որուն չկրնալով յաղթել, խարէական միջոցներու ղիմեց. բանակավայրին մէջ առատօրէն գինի ու միս թողուց և ինք իր զօրքերով փախչի կեղծեց: Կիւրոս գիտէր թէ՛ Սկիւթացիները միայն ու գինիին վրայ պիտի թափին ու կերուխումի տան իրենք զիրենք:

Եւ ինչ որ գուշակած էր Կիւրոս, կատարուեցաւ: Կեղծ փախուսանքն ետքը, յանկարծ բանակետողը վերադարձաւ գիշերով, զանոնք հարբած ու թմրած գտաւ և առանց դժուարութեան ջարդեց անոնց մէկ մասը, և շատերը գերի վարեց: Այս գերիներուն մէջ կը գտնուէր Նոյնպէս թագունիին տղան:

Հերոդոտ, Դիոդորոս, Վաղերիոս(*) Յուստինոս, Ամմիանոս(**)

(*) Վաղերիոս Մաքսիմոս, հռչակաւոր լատին պատմաբան Ա. Դարուն, Վաղերեանց ու փաւիոսեանց ընթանիքէն. Մեծ Պոմպեոսի զօուն՝ Սեփսոս Պոմպեոսի հետ գնաց պատերազմի, ուրկէ վերադառնալով հռովմեական երեւելի դէպքերէն ու գործերէն, ինչպէս նաեւ նեակալու մարդիկներու կեանքէն քաղուած հաւաքածոյ մը շարագրեց ու զայն ձօնեց Տիբերիոս կայսեր:

(**) Ամմիանոս Մարկելիմոս Անտիոքացի, Դ. Դարու լատին պատմիչը, խիստ կարեւոր պատմաբան մը գրած է, որմէ մնացած են

և ուրիշներ, մանրամասնօրէն կը պատմեն այս պատերազմները: Ատոնցմէ Յուստինոս ու Անմիանոս, հետեւեալ միջադէպը կը յիշեն թամիրի մասին:—

Թամիր թագուհին, իմանալով իր տղուն գերութեան լուրը, իսկոյն, մեծամեծ ընծաներով ու խոստումներով, պատգամաւորութիւն մը կը դրկէ Կիւրոսի, զաւակին ազատութիւնը խնդրելու համար: Սակայն Կիւրոս կը մերժէ և արքայազուն գերին, ի վերջոյ, չը կարենալով հանդուրժել, ինքնասպանութեան կը դիմէ: Թագուհին իր զաւակին եղբրական մահը կ'ողբայ դառնապէս և անոր արիւնին վրէժը լուծելու նպատակով, վերստին պատերազմի կ'ելլէ Կիւրոսի դէմ:

Այս անգամ, թագուհին կը խարէ զանի. կեղծ փախուստով մը կը յաջողի իր ետեւէն ձգել Կիւրոսը, որ, Սկիւթացիները հետապնդելու միջոցին, կ'իյնայ կը կորսուի մացառներու մէջ, թէ՛ ինք և թէ՛ իր երկու հարիւր հազար մարդիկները: Թամիր իր զօրքերուն խուզարկել կուտայ մացառներուն բոլոր խորշերը, և Կիւրոսի դիակը գտնելով, անոր գլուխը կը կտրէ, և մարդկային արիւնով լեցուն տիկի մը մէջ նետելով զայն, կը կոծէ ցաւագին ձայնով մը.

— Անգո՛ւր, մահուրնեզ ետք կեսայի՛ր արիւնով որմէ չեիր յագեցնար կեանքիդ մեջ...:

Անո՛ւ այսպէս վերջացաւ Կիւրոսի փոթորկայից կեանքը, եօթանասուն տարու հասակին մէջ: Երեսուն տարի թագաւորեց, քսաներեք տարի՝ Պարսից ու Մարաց, և եօթը տարի՝ Բարեկացւոց ու Ատորեստանեայց, նաև Պարսից ու Մարաց վրայ:

Կը պատմուի թէ Կիւրոսի մարմինը ձեռք բերած էին իր ծառաները, և Պարսկաստան տանելով, թաղած էին Պասարգատ կամ Վասկերա քաղաքը, հոյակապ գերեզմանի մը մէջ:

Մարտոն մեզի կ'աւանդէ Կիւրոսի տապանագիրը.

«Ո՛վ մարդ, ե՛ս եմ Կիւրոսը, որ Պարսից բազաւորութիւնը կանգնեցի եւ եղայ Ասիոյ բազաւորը. ուրեմն բո՛ղ նախանձ չ՛եսարժի գերեզմանիս վրայ:

Մեր ընթերցողներուն ուշադրութեանը կը յանձնենք Հ. Մ. Չամչեանի հետեւեալ տողերը, որոնք բաւական չահեկան ծանօթութիւններ կը պարունակեն Կիւրոսի մահուան վրայ, որուն շուրջը շատ մը հակասական կարծիքներ յայտնուած են զանազան պատմագիրներու կողմէն:

միայն 18 գիրքեր: Այս պատմագիրը րեւել հերանոս եր, բայց զովեսով կը խօսի քիսոսնեական կրօնի վրայ, ինք արդեւ գորավար եր Ուրացոյ Յուլիանոսի բանակին մէջ:

Մտիկ ընենք ուրեմն, ինչ կ'ըսէ այդ մասին մեր բազմամուտ պատմագէտ Մխիթարեանը.

«Քսենոփոն (Գիրք Ը.) կը կարծէ թէ Կիւրոս, իր անկողնին մէջ հանգիստ մնած է, կտակով պատուէր տալով իր թագաւորութեան և իր տիրած երկիրներուն նկատմամբ Կտեսիաս (Գիրք Փա) կ'ըսէ թէ Կիւրոս, Վրկանաց սահմանակից Գերբուկներու Ասոր թագաւորին դէմ պատերազմելով, նետահար ինկաւ և երեք օր ետք, այն վէրքէն մեռաւ:

«Նմուլիոս Պորոս, նախնի թագաւորները յիշատակելով, կ'ըսէ թէ՛ Մասքթաց երկրին պատերազմին մէջ ինկաւ: Ասոր կը համաձայնի Փիդղոնիտի խօսքն ալ, Խորենացիէն մէջ բերուած (Բ. 12), երբ կ'ըսէ. — Կիւրոս, Մասքութներուն հետ պատերազմելով, ա՛յնքան չը թշուառացաւ:»

Իսկ Հերոդոտ (Գիրք Ա. Գլ. 214) և Յուստինոս (Ա. 8) ու Վաղերիոս Մաքսիմոս (Թ. 10) և ուրիշներ կը պատմեն թէ՛ Սկիւթացիներու կամ Մասքութներու Թամիր թագուհիին հետ պատերազմելու միջոցին սպաննուած է Կիւրոս, ասոր վրայ կ'աւելցնէ Դիոդորոս Սիկիլիացին (Բ. 11) թէ՛ թագուհիէն գերի բռնուելով՝ կախաղան հանուեցաւ:

«Քայց զիսնալու է թէ, անոնք որ այդպէս կ'ենթադրեն, այսինքն թէ Կիւրոս յաղթուած ըլլայ Սկիւթացի Թոմիրէն, Երասխ գետի կողմերուն իշխան մը կը համարեն Թոմիրը, և կ'ըսեն թէ՛ Թոմիր թէ՛ և կրնար Կիւրոսի արդիւնի Երասխ գետէն անցքը, բայց թող տուաւ որ անցնի մանէ իր տէրութեան երկիրը, անոր զիւրաւ յաղթելու համար:

Ասոնց այս խօսքը տարակոյսի տեղի կուտայ և ուրիշ բանի մը կ'ակնարկէ. որովհետեւ յայտնի է թէ՛ այն ժամանակները՝ Թամիր ի իշխանութեան տակը չէր Երասխ գետը. այլ Հայոց Տիգրան թագաւորին: Եւ, հետեւաբար, կրնայ ըսուիլ թէ՛ կա՛մ այդ պատմութիւնը սուտ է, և կամ այն Թամիրը՝ Սկիւթացիներու իշխան չէ՛, այլ Հայոց թագաւոր է: Իսկ թէ՛ պատմիչները թագուհի կ'անուանեն Թամիրը, առիկա կասկածելի կը թուի, որովհետեւ, ինչպէս որ Իսահակ Վոսիոս, բազմամուտ անձը, կը զրէ Յուստինոսի ծանօթութեանց մէջ (էջ 12), Թամիր կամ Թովիր անունը կը նշանակէ արեւելեան թագաւոր քան թէ թագուհի:

«Ասոնք դնելով՝ այդ բաներուն վրայ կը տարակուսինք, և տարակոյսներու տակ կրնանք ըսել թէ՛ թերեւս Կիւրոս, ժամանակներ ետքը, Տիգրանի հետ թշնամանալով ու անոր հետ պատերազմելով՝ անկէ ձերբակալուած ըլլայ: Թերեւս այդ մտօք է որ Յովհաննէս Կաթողիկոս կը զրէ թէ՛ Տիգրան Երուանդեան, վիշապներու մայր՝

Անուշէն (Մարաց թագուհի) օժանդակութիւն դանկելով և Կիւրոսը բռնելով՝ Մարաց ու Պարսից իշխանութեան ինքը կը տիրանար: Թերեւս Խորենացին ալ այս մտքով կը գրէ (Ա. 30) թէ՛ Մարաց ու Պարսից իշխանութիւնը յափշտակեց, բայց որովհետև չենք կըրնար ասիկա հաստատել ուրիշ կողմէ, և առհասարակ կը կարծուի թէ Կիւրոս յաղթուած ու սպաննուած է Թամիր թագուհիէն, մենք ալ ըստ այնմ գրինք պատմութեան մէջ: Բայց թո՛ղ ո՛չ ոք զարմանայ թէ ինչո՛ւ Կիւրոս ունեցաւ այսպիսի վախճան մը, որովհետեւ, անի թէ և Աստուծո՛ւմ կանչուելով՝ անոր աջովը բարձրացաւ, բայց չը ճանչցաւ զԱստուծո՛ւմ, ինչպէս կը գրէ Յսայի (ԽՅ. 4-5):»

Մենք չպիտի այսքան մանրամասնօրէն պատմէինք Կիւրոսի կեանքն ու անոր պատերազմները, եթէ պարսկական կայսրութեան այս հզօր հիմնադիրը՝ մեր Տիգրան Ա.ի բարեկամը, միեւնոյն ժամանակ, անոր անբաժան զինակիցը չըլլար, Կիւրոս իրաւունք ունէր իրեն յատուկ տեղ մը գրաւելու ներկայ պատմութեանս էջերուն մէջ, իր կեանքին ա՛յնքան հարուստ ու փառաւոր դրուադներովը, որոնք արդէն կը պատկանին տիեզերական պատմութեան: Այդ տեսակէտով, ո՛չ նուազ շահագրգիռ կը գտնենք Կիւրոսի յաջորդներուն գործերը, մեծապէս ազդած ըլլալով անոնք՝ այն չըջանի բոլոր զրացի ու չըջակայ ազգերու կեանքին վրայ, որոնց առաջին կարգը կը գտնուէր հայ ազգը:

Կիւրոսի մահով, Պարսկաստանի ու Բարեկաստանի գահը թափուր չը մնաց, անոր Կամբիւս որդին յաջորդեց, գինեմով, անգութ, արիւնուռուչ բռնաւոր մը, որ իր գործած ոճիրներուն համար պէտք է կոչուի Արեւելքի Ներոնը:

Այս բռնաւորը, օր մը, գինտութեան մէջ, կը բարկանայ իր մտերիմներէն Վրեհշար անուն մէկու մը դէմ և նետը քաշելով, շնտակի կը մխէ այդ մարդուն տղուն սիրտը, այդ կերպով ցոյց տա ուզելով թէ՛ հարբած վրձակին մէջ անգամ խելքը գլուխն է:

Տասներկու խորհրդականներ ունէր, որոնք զինք ուզուիլեան և զգաստութեան յորդորելու յանցանքը գործած էին, բոլորը մէկտեղ սպաննեց: Նոյնպէս սպաննեց իր քոյրը Մերոյէ: Եւ սակայն առաքինի թագաւորի համբաւ կը վայելէր. երբեմն արդարադատի հովեր կ'առնէր, յետոյ երկու վայրկեան վերջը, ճիւղալային վայրագութիւն մը կը գործէր:

Օր մը, կը լսէ թէ իր իշխաններէն մին անիրաւ դատաստան մը տեսած է, անմիջապէս կը հրամայէ զանի ողջ ողջ մորթազերծ ընել և դատաւարութեան միջոցին իր բազմած աթոռը պատել անոր մորթովը. յետոյ, այդ իշխանին տղան կը բազմեցնէ այս աթոռին վրայ, որպէս զի հօրը մորթին վրայ նստելով, միշտ իր պաշտօնը յիշէ և արդարութեամբ դատէ:

Կամրիւս, իր թագաւորութեան չորրորդ տարին, պատերազմի գնաց Ամասէի տղուն՝ Եգիպտոսի Պսամնիտ թագաւորին դէմ և Պելուսիտ քաղաքը պաշարեց, զոր սակայն, ամբողջեանը պատճառով, չը կարենայով առնել, ճարտար հնարք մը խորհեցաւ. քաղաքին վրայ արձակեց այնպիսի կենդանիներու ջուլիւր մը, զորոնք Եգիպտացիները սուրբ կը համարէին և որոնց վրայ չէին համարձակեր նետ արձակել: Ահա՛ այս հնարքով, առանց դժուարութեան առաւ Պելուսիտ քաղաքը, յետոյ Մեմփիսը, և տիրեց Եգիպտոսի:

Այս յաղթութենէն ետքը, Կամրիւս, Եթովպիոյ թագաւորին քով պատգամաւորութիւն մը ղրկեց, անոր հետ բարեկամական կապեր հաստատելու նպատակով. իսկ Եթովպիոյ թագաւորը, լրտեսներ կարծելով, երես չը տուաւ անոնց, և ձեռքին մէջ առնելով խոշոր ու լայնակիճ ազեղ մը, զոր Պարսիկները չէին կրնար լարել, աչքերնուն առջև ուժով մը լարեց և անոնց յանձնեց որ Կամրիւսի տանին զայն ու ըսաւ.

— Երբ Պարսիկերը ա՛յն աստիճան ուժովեան որ կարենան ասանկ մեծ աղեղ մը լարել, ա՛յն ասէն թո՛ղ համարձակին խրոխտալ Եթովպացիներուն վրայ:

Պատգամաւորները ձեռնունայն վերադարձան և բերին աղեղը յանձնեցին իրենց թագաւորին: Պարսիկները, աղեղը տեսնելով, վրդովեցան և ո՛չ ոք կրցաւ լարել զայն, բաց ի Շմերդէ, որ Կամրիւսի եղբայրն էր: Ասոր վրայ, Կամրիւս նախանձելով իր եղբօրը, Պարսկաստան ղրկեց և սպաննել տուաւ զանի, որուն վրայ վաղուց կը կասկածէր արդէն, որովհետեւ երովհեւ մէջ տեսած էր որ անի իր թիո՞ւր նստած էր: Յետոյ, ինք ա՛նգլին բանակով մը քայլեց Եթովպացիներուն վրայ. սակայն, բանակին մեծագոյն մասը խեղդուեցաւ աւազներուն մէջ, շատերն ալ սովահար, սկսան ճամբան զիրար ուտել, այնպէս որ Կամրիւս ստիպուեցաւ վերադառնալ Եգիպտոս:

Օր մըն ալ, Լիւդացի Կրեստը, որ տակաւին կ'ապրէր և Կամրիւսի հետ կը գտնուէր խորհրդականի պաշտօնով, կ'ազդարարէ իրեն որ ինքզինք զսպէ, Կամրիւս կը զայրանայ և կը հրամայէ սպաննել զանի. բայց ծառաները չեն գործադրեր թագաւորին հրամանը և կը յետաձգեն անոր սպաննութիւնը: Ժամանակ մը վերջ, երբ Կամրիւս զզջացած կ'երեւայ Կրեստի մասին, իր ծառաները կ'իմացնեն թէ ողջ է անի: Իսկ Կամրիւս, թէև կ'ուրախանայ այս լուրին վրայ, բայց անոր ազտտարարները սպաննել կուտայ:

Երբ Կամրիւս Եգիպտոսի մէջ նոր երկրակալութիւններ կը ծրագրէր, ասդին, Պարսկաստանի մէջ, Մարաց Պարզիտ իշխանը, զոր ինք Շօլի կոտավարիչ կարգած էր, տարաձայնութիւն մը կը հանէ

թէ Կամբիւսի Շմերդ եղբայրը դեռ կ'ապրի, չէ՛ սպաննուած. և ինք
Կամբիւսի Շմերդ եղբորը խիստ շատ նմանող, Շմերդ անուն եղբայր
մը ունենայով, որուն ականջները կարած էր Կամբիւս, զանի կը թա-
գաւորեցնէ Պարսից, Մարաց ու Բարեկացւոց վրայ, նոյնինքն Արսա-
մոզը, Արսաւես Ա. կոչուածը, որուն անունը կը յիշուի Ս. Գիրքի՛
մէջ ալ (Բ. Եզր. Կ)։ Կամբիւս իմացած ըլլալով Պարզիտի խաբերա-
յութիւնը, բանակովը կը քալէ ասոր վրայ։ Սակայն, արդեօք շտապով
ձիէն վար իջնելու թէ ձին հեծնելու միջոցին, պատեանէն դուրս
ելած դաշոյնը կը խրի կողին, և քիչ յետոյ կը մեռնի Կամբիւս, մի-
այն եօթը տարի և հինգ ամիս թագաւորիչ յետոյ, ինչպէս կը գրեն
Հերոդոտ, Վաղերիոս, Յուստինոս և ուրիշ պատմագիրներ։

Գալով Պարսից նախարարներուն, ասոնք կը կասկածէին թէ
արդեօք այդ Շմերդը Կամբիւսի՞ թէ Պարզիտի եղբայրն էր. ի վեր-
ջոյ, անոնց մէջէն Ովղան տնուն նախարար մը, որուն ազջիկը Շմեր-
դի հարձեքէն էր, կը պատուիրէ իր ազջկանը, զննելու թէ Շմերդ
ականջ ունի՞ թէ չունի. և ստուգուելիչ յետոյ թէ չունէր, Պարսից
վեց երեւելի իշխաններուն հետ համախորհուրդ, միաձայնութեամբ
կ'որոշին ոպաննել Շմերդը, որ միայն եօթն ամիս թագաւորած էր։

Կայսերական գահը թափուր կը մնայ, որովհետեւ Կամբիւս ան-
ժառանգ մեռած էր։ Այս եօթը մեծ իշխանները, որոնց մէջ կը գըս-
նուէր նաև Հիտաոպի կամ Վչտաոպի տղան Դարեհ, կը խորհին իրենց
մէջէն մէկուն յանձնել թագաւորութիւնը։ Բաւական երկար խորհրդ-
դակցութենէ վերջ, կ'որոշին հետեւեալ օրը, առտուն կանուխ, պա-
րտաբ երթալ միտսին դէպի մեհեանը, և թագաւոր ընդունիլ զանի,
որուն ձին, ճամբան կը խրինջայ ամենէն առաջ։ Դարեհի ձիւնը,
իմացած ըլլալով այս օրոշումը, առաջուրնէ իր տիրոջը ձիուն հետ
զամբիկը կը բերէ այն տեղը, և յետոյ ձին ետ կը դարձընէ և յա-
ջորդ օրը, երբ եօթը նախարարները ժամադրաւայր կուգան, իւրա-
քանչիւրը հեծած իր ձին, Դարեհի ձին, երբ կը հասնին այն տեղը,
ուր առաջուրնէ մատակ ձիուն հօտը առած էր, կը սկսի խրինջալ։

Անմիջապէս, միւս վեց նախարարները վար կ'իջնեն իրենց երի-
վարներէն և կը պտանն։

— Կեցցէ՛ Դարեհ, Պարսից թագաւոր։

Եւ կը բերեն զանի, արքայական գահը կը բազմեցնեն։

Դարեհ, զահը բարձրանալէ յետոյ, Արսաւես Բ. կը կոչուի. որ
իւր թագաւորութիւնը հաստատելու համար, կնութեան կ'առնէ Կիւ-
րոսի երկու ազջիկները, Ասովսէ և Արիստոնէ կամ Ասրինէ։ Ասի է
այն Արտաշէսը, որ իրեն կնութեան առաւ Մուրթքի Տորեղբօր ազ-
ջիկը՝ Եսթեր, և իշխեց 36 տարի։ Ասոր թագաւորութեան վեցեր-
րորդ տարին աւարտեցաւ Երուսաղէմի տաճարին շինութիւնը։

Դարեհի կը յաջորդէ իր որդին՝ Քսերքսէս Ա. :

Հերոդատ, Դիոդոր, Վայերիոս, Պլուտարղոս, Յուստինոս և ասոնց ժամանակակից ուրիշ պատմիչներ, նկարագրած են այս երկրակալին մղած պատերազմները, մասնաւորապէս Յոյներուն կամ Լակեդեմոնացիներուն դէմ :

Քսերքսէս երեք տարի անընդհատ պատրաստութիւններ տեսաւ, խոշոր նաւեր շինել տուաւ հազար երկու հարիւրէ աւելի, և իր ընդարձակ կայսրութեան հպատակ բոլոր երկիրները զօրահանութեան հրամաններ ղրկեց :

Կը պատմուի թէ Լիւդացի Պիւթան անուն ծերունի մը կար, շինգ որդիներու հայր, որ Քսերքսէսէ կը խնդրէ իր զաւակներէն դոնէ մէկը թողուլ մնալ իրեն քով, իր վերջին օրերը մխիթարելու համար : Քսերքսէս, ծերունին կանչելով իր ներկայութեան, կը հարցնէ .

— Ո՞րը կ'ուզես որ քովդ մնայ :

— Ահա՛, կ'ըսէ հայրը դողդոջուն ձայնով մը, ցոյց տալով շինգ որդիներէն մէկը :

Վայրագ թագաւորը, միւս եղբայրներէն զատել կուտայ այդ տղան և կը հրամայէ անմիջապէս, զժրաղզ հօր աչքին առջև, մէջքէն յօշոտել զանի երկուքի, կէսը տալ հօրը, միւս կէսն ալ կախել քաղաքին դուռը, որուն մէջէն զօրանցքը տեղի պիտի ունենար : Իսկ Հերոդոտ կը պատմէ թէ Քսերքսէս յօշոտուած աղուն երկու կտորները կախել տուած է դուռին երկու կողմերը, որոնց մէջէն անցած են իր բոլոր զօրքերը : Զօրքերուն թիւը կը հաշուեն ոմանք երկու, ուրիշներ՝ շինգ միլիոն :

Կը պատմուի թէ Քսերքսէս, փափագելով միանուագ տեսնել իր զօրքերուն անթիւ շարքերը, բարձր տեղի մը վրայ ելած կեցած ու սկսած է դիտել. նախ մեծ հաճոյք մը զգալով կ'ուրախանայ և ինքզինք երջանիկ կը համարի որ կ'իշխէ այդ ահագին բազմութեան . սակայն, յետոյ մտաբերելով թէ հարիւր տարի վերջ, ասոնցմէ ո՛չ ոք պիտի ողջ մնայ. կըսկսի լալ ու կ'ողբայ մարդկային դժբաղդութիւնը :

Յունաց դէմ պատերազմելէ յետոյ, ուրիշ երկիրներու ալ կը տիրէ և մեծագոր ինքնակալի մը փառքովը կը թագաւորէ տասներկու տարի :

Քսերքսէսի համար կ'ըսուի թէ սպաննուած է իր Արտաւան սննկապետէն, որ իր գործած ոճիրը ծածկելու նպատակով, կ'երթայ Քսերքսէսի կրտսեր տղան Արտաշէսը կը գտնէ ու կ'ըսէ անոր .

— Քու երէց եղբայրդ Դարեհ, փափաքելով աւելի կանուխ թագաւորել, հայրդ սպաննեց :

Իսկ Արտաշէս կը հաւտայ Արտաւանի յերիւրոնքին, սաստիկ կը զայրանայ ու կը բորբոքի և կ'երթայ, կը խողխողէ իր Դարեհ եղ-

բայրը, երբ սա կը քնանար զահին մէջ: Եւ այսպէս, Արտաշէսը Գ. ղեռ պատանի, զահը կը բաղմի և կը թագաւորէ 48 տարի: Արտաշէս Գ. Երկաշնարազուկ ալ կոչուած է, որովհետեւ, կը պատմուի թէ իր աջ բազուկը ձախէն աւելի երկայն էր, և թէ՛ իր ձեռքին երկայնութեան համեմատ, առատածեռն ալ եղած է:

Արտաշէս Գ. Արտաւանի մասին կասկածներ կ'ստուգանէր արդէն, երբ օր մը կ'իմանայ թէ իրեն դէմ դաւաճանել կ'ուզէ ան. ուստի կը խորհի վերջացնել այդ վտանգաւոր բարեկամին⁽²⁾ կեանքը. անմիջապէս կը հրամայէ պալատի զօրքերուն, որ հետեւեալ օրը, առտուն կանուխ զան արքունի դուռը հաւաքուին, որպէս զի տեսնէ թէ ինչ բանի պէտք ունի անոնցմէ իւրաքանչիւրը:

Արքայական հրամանին համաձայն, բոլոր զօրքերը կը համախմբուին յաջորդ օրը, նոյնպէս Արտաւան կուգայ անոնց հետ:

Արտաշէս ալ զրտն հագած էր, կը սկսի պատրուակել թէ անյարմար է իրենը, և դառնալով Արտաւանի, կը հրամայէ վրայի զրահը հանել, իրենին հետ փոխանակելու համար. և երբ Արտաւան կը պատրաստուի հանուիլ, Արտաշէս կը մօտենայ և իբր թէ ուզելով անձամբ առնել զրահը, սուրը կը քաշէ ու կը մտէ Արտաւանի սիրտը, և այս վերջինը վայրկենապէս կը մեռնի:

Արտաշէս Գ.ի թագաւորութեան քսաներորդ տարին սկսաւ Լակեղեմոնացիներուն և Աթենացիներուն միջեւ այն սոսկալի պատերազմը, որ Պելլոպոնակացի պատերազմ կը կոչուի և զոր այնքան մանրամասնօրէն գրած է Թուկիդիտէս երեւելի պատմաբանը, թէեւ կիսաւարտ թողուցած, յանկարծ մահը վրայ հասած ըլլալով պատերազմին 21րդ տարին:

Արտաշէս Գ. կը մեռնի և իրեն կը յաջորդէ որդին Քսերքսէս Բ. որ միայն մէկ տարի կ'ապրի զահին վրայ: Ասոր կը յաջորդէ Սեկունդէս կամ Սոզդիանոս եղբայրը, որ միայն 7 ամիս կը թագաւորէ, սպանուելով իր Գարն Բ. կամ Նոթոս եղբորմէն, որ 19 տարի կը թագաւորէ: Ասոր կը յաջորդէ իր երէց որդին Արտաշէս Գ. ՄԳնման կոչուածը, որ հեզ ու բարի մարդ մըն էր:

Կը պատմուի թէ օր մը, հովիւ մը փափաքելով պատուաւիրել այս թագաւորը, որուն տալու արժանաւոր բան մը չունէր սակայն, ափովը ջուր կ'առնէ և խոնարհ ու պարզմիտ ձեւով մը կը մատուցանէ անոր. թագաւորը սիրայօժար կ'ընդունի հովուին նուէրը, և փոխարէն կը պարգեւէ անոր ոսկիով լեցուն աման մը: Մնեմոն խիստ վաւաչոտ է եղեր և ունեցեր է 115 ազաքներ: Ասոր հարազատ որդիներէն մէկը, Ոքոն անուն, ժանտաբարոյ և անխիղճ մարդ մը, տեսնելով թէ հայրը շատ կը սիրէ իր խորթ եղբայր Արշամը, կասկածելով թէ գուցէ անի պիտի թագաւորէ իր հօրը մահէն հաքը, դաւաղրութեամբ

մը զանի կը սպաննէ: Հայրը լսելով Արշամի մահը, սաստիկ կը տիրի ու մեծ սուգի մը մէջ իննալով, քիչ յետոյ կը մեռնի 44 տարի թագաւորելէ յետոյ: Բայց Ոքոն լաւ զիակը որ, եթէ խնացուէր հօրը մահը, Պարսից նախարարները զինք արհամարհելով՝ իր եղբայրներէն ուրիշ մը պիտի թագաւոր հռչակեն, ուստի, իրեն համախոհ ներքինիներով, ջանաց ժամանակ մը զազանի պահել անոր մահը, և իր ողջ կարծեցեալ հօրը բերնով հետեւեալ հրամանը հանեց. — « Կ'ուզեմ որ ինե ետէր թագաւոր նստի Ոֆոն սղաս եւ ասոր դեմ հակառակող մը բո՛ղ չը գնուի: »

Այս հրամանը հրապարակ հանելէ անմիջապէս ետքը, կը յայտարարէ թէ հայրը մեռած է, և ինք փառաւորապէս զահը կը բազմի և կը կոչուի Արսաշես Ե.: — Եւ որպէսզի ամրապնդէ իր զահը, իր եղբայրներէն ութսունը, ինչպէս նաև մերձաւոր ազգականներէն մէկ մասը կը ջարդէ, շատերը հողին տակ ողջ ողջ թաղել տալով, մաս մըն ալ նետահար սպաննելով և ուրիշներ ալ զանազան շարչարանքներով ու տանջանքներով մէջտեղէն վերցնելով: Եւ այս զարհուրելի սճիւններուն դէմ բարձրացած ժողովրդային բողոքներն ու շփոթութեան ազմուկները շուտով կը յաջողի խեղդել մահուան սպառնալիքներու և ուրիշ սոսկալի պատիժներու տակ: »

Այդ ժամանակներուն մէջ, նորէն կը պայթի եգիպտական սպըստամբուժիւնը, զոր Ոքոն կը յաջողի զսպել, վանելով Եգիպտոսի վերջին թագաւորը Նեքտաներ: Սակայն Եգիպտացիները կ'ատէին Ոքոնը, զոր, իր արտառոց վարքին ու բարքին համար կը նախատէին ու եւ կը յորջորջէին:

Ոքոն կը կատողի, և քինախնդիր ոգիով մը կը խորհի Եգիպտացիներուն այս նախասախնաք փոխարինել:

Օր մը, Եգիպտացիներէն իրրև աստուած պաշտուած եզ մը տեսնելով, կը հրամայէ մորթիլ, իշու մը զոհել զայն և այնուհետև էչը պաշտել իրրև աստուած. նոյնպէս մորթուած եզին միսէն կը պատուիրէ խորտիկ չիներ և իր առջեւը դնել: Արքունի վերակացու և թագաւորին սիրելի մտերիմներէն Բագու անուն անձ մը, տեսած ըլլալով Ոքոնի այս սրբապիղծ արարքը, կը զայրանայ, թունաւորելով կը սպաննէ զանի, զիակը չուններուն ու կատուններուն առջեւը կը նետէ, անոր ոսկորներու կտորներէն սուրի երախակաշներ չիներ կուտայ, մարդիկներուն ուզելով ցոյց տալ թէ՛ Ոքոն չի գազդիր մարդու վնասելէ, նոյնիակ իր մահէն վերջը: Իսկ անոր զիակին տեղ ուրիշ մը դնել սուտու անոր գերեզմանին մէջ: »

Դիողորի, Ստարսոնի, Պլուտարքոսի, և ուրիշ պատմիչներու վկայութեան համեմատ, Ոքոն 23 տարի թագաւորած ու իրեն յաջորդ կարգուած է իր Արսանէս կամ Արշէս որդին, արքայասպան Բագուի ձեռքով:

Արշէսի օրով Պարսից ու Յունաց միջև թշնամութիւնները սաստկացած ըլլալով, պատերազմ ծագած էր: Արշէս դեսպանութիւն մը կը գրկէ Յունաստան, Մակեդոնիոյ Փիլիպպոս թագաւորին, ազդարարելու համար որ ան յապաղ վճարէ սովորական տուրքը, զոր անչէր ուզեր վճարել: Փիլիպպոսի տղան Աղեքսանդր, որուն վրայ ընդարձակօրէն պիտի գրենք առաջիկային, կը վճարէ Արշէսի պատգամաւորները, պուալով անոնց երեսին:

— Պարսիկները բոլ չսպասեն այսուհետեւ սուրբ ստանալ Մակեդոնացիներէն:

Արշէս հազիւ երկու տարի թագաւորած էր, երբ Բագու, ծանօթ արքունի վերակացուն, կը թունաւորէ զանի և տեղը կը նստեցնէ Դարեհ Գ. ը, Կողոմանոս կոչուածը, որ վեց տարի կը թագաւորէ:

Օտար պատմագիրները զանազան պատմութիւններ կ'աւանդեն Դարեհի Կողոմանոսի մասին: Յուստինոս և ուրիշներ — իրմէ քաղելով — կը պատմեն թէ այս Դարեհը, թագաւորելէն առաջ, Պարսից ու Կատչաց պատերազմին մէջ սպաննած էր Պարսից սուկավիթիտար հակառակորդը, այսպէս, փառաւոր յաղթանակով մը վերջացնելով պատերազմը և վերահաստատելով խաղաղութիւնը. յետոյ կ'աւելցնեն թէ՛ այդ պատճառով է որ Դարեհ աւագութեան պատիւ ստացած ու Հայոց իշխան կարգուած է:

Իսկ Սիկիլիացի Դիոդորոսը, որ Յուստինոսէն աւելի առաջ կ'ապրէր, այդ յաղթութիւնը պատմելով, կը գրէ թէ մեծամեծ փառքի ու պատիւներու տիրացած է, բայց երբեք չը յիշեր թէ Հայոց իշխան կարգուած ըլլայ Դարեհ:

Այս աւանդութիւններէն կարելի է հետեւցնել միայն թէ՛ Դարեհ դեսպան զրկուած է թերեւ Հայաստան կամ այս երկրի մէկ մասին վրայ միայն իշխան նշանակուած է, որովհետեւ այդ շրջանին մէջ Հայաստան ունէր արդէն իր բնիկ թագաւորը:

Թագաւորներու թունատու Բագու Եգիպտացին, իր սովորութեան համաձայն, կը պատրաստուէր թունաւորել նաև Դարեհը, երբ սա կ'իմանայ մահափորձը, և պատրաստած թոյնը բռնի խմցնելով Բագուի, մէջտեղէն կը վերցնէ ասոր կեանքը:

Դարեհ Կողոմանոսով կը վերջանայ Կիւրոսի հիմնած պարսկական կայսրութիւնը, որ տեւած էր 229 տարի:



Տիգրան Ա.ի մահը. — Տիգրան Ա.ի որդիները՝ Բաբ, Տիրան
 եւ Վահագն. — Հայ վիպասանները կ'երգեն Վահագնի ծնունդը.
 Վահագն յաջորդ՝ Տիգրան Ա.ի. — Վրացիները կը պաշտեն
 Վահագնի արձանը. — Վահուցի կամ Վահնուցի.
 Վահագնի կը յաջորդէ Առաւան. — Առաւանի
 յաջորդները՝ Դերեսն, Չարեն, Արմոզ, Բայլամ եւ Վան.
 Վան քաղաքին վերաշինութիւնը. — Վահե՝ Հայկազանց վերջին
 քաղաւոր. — Աղեփանդր Մակեդոնացին եւ իւր կեանքը.
 Աղեփանդր կը յաղթէ Գարեն Կողովանոսի. — Վահե՝
 պատերազմի կ'ելլէ Մեծ Աղեփանդրի դէմ,
 որմէ կըսպաննուի. — Աղեփանդրի նոր
 յաղթանակները եւ մահը. — Հայ-
 կազանց Հարսուսիւնը կը
 վերջանայ:

—

*Տիգրան Ա. Երուանդեան, Մեծ Կիւրոսի դաշնակից բարեկամը,
 Հայկազանց Հարսուսիւնի մեծագոյն վեհապետը կը համարուէր. իր
 օրով, Հայաստանի փառքը փայլեցաւ, բովանդակ ազգը մեծութեան
 երջանկութեան ու զօրութեան կատարը հասած ըլլալ կը թուի: Իմաս-
 տուն թագաւոր, նախ երկրին մէջ հարսուսիւնի ազբիւրները բազ-
 մապատկեց, զարկ տուաւ երկրագործութեան, վաճառականութեան
 և արդիւնաբեր արհեստներուն. յետոյ, իր դաշնակից Մեծ Կիւրոսի
 հետ, յաղթանակէ յաղթանակ առաջնորդուելով, գիտցաւ գերակշիռ
 դիրք մը գրաւել զրացի ազգերու ընդդիմամբա ուժերուն մէջ, և
 այսպէս ընդարձակել իր երկրին սահմանները:*

*Տիգրան Ա. քառասունը հինգ տարի թագաւորելէ յետոյ կը մեռ-
 նի, Կիւրոսի մահուան հինգերորդ տարին և կը թողու երեք որդիներ
 Չարուհի թագուհիէն ծնած երեքն ալ. — Բաբ, Տիրան և Վահագն:*

*Հ. Մ. Չամչեան հետեւեալ ծանօթութիւնները կուտայ Տիգրան
 Ա.ի որդիներուն վրայ. —*

*« Այսպէս կը գրէ Խորենացին, Մեծ Տիգրանի որդիներուն հա-
 մար. — « Սորա որդի՝ Բաբ, Տիրան, Վահագն »: Եւ այսպէս կը գրէ
 Յովհաննէս Կաթողիկոսը, առանց եւ չաղկապի, այսպէս յարելով. —
 « Բաբ Տիրանի մասին կ'ըսուի թէ Վրաց նահանգին մէջ զոհերով կը
 պատուէին, և ասոր տոհմէն կը սերին Վահուցիները »:*

« Ոմանք հետեւցուցին ասկէ թէ՛ այդ երեք անունները մէկ մարդ կը նշանակեն, այսինքն՝ Վահագն: Բայց յայտնի է թէ վրիպակով մը վերցուած է այդ խօսքերուն մէջէն եւ շարկապը, և Յովհաննէս Կաթողիկոսին խօսքերը քանի մը գրչագիրներու կողմէ խանգարուած են: Որովհետեւ, Գրիգոր Մաղխարոս, իր ողբերուն մէջ, յայտնապէս կ'աւանդէ այդ երեքին ալ անունները, զորոնք զատ զատ մէջ բերելով, կ'ըսէ. — « Ո՛ւր Բաբ, դուռն բարեաց. ո՛ւր Տիրան՝ որպէս Տիգրան, միով պակասեալ գծիւ կրստը գոյ նմա: Ո՛ւր Վահագն, որ եւ երկնէ երկիր, եւ որ զկնի առասպելին առումն: » Հետեւաբար, պէտք է ըսել թէ՛ այս երեք անուններն ալ ո՛չ թէ մէկ, այլ Տիգրանի երեք որդիները կը ցուցնեն, որոնցմէ Վահագնը թագաւորեց, և այս վերջինէն Վահունիները սերեցան: »

« Գիտնայու է նաեւ թէ ոմանց կարծիքով, այս Վահունիները Վահէէն այդպէս անուանուած ըլլան, բայց այս կարծիքը՝ բառերուն մերձաւոր հնչումին վրայ հիմնուած կը թուի. այլապէս, Խորենացին և ուրիշներ՝ Վահագնէն է կ'ըսեն, ո՛չ թէ Վահէէն, նախնի Հայկազանց իշխանութեան վերջին թագաւորէն: »

Իր եղբայրներուն մէջ ամենէն քաջարին էր Վահագն, որուն ծնունդը կ'երգէին այն ժամանակի ազգային վիպասանները, ինչպէս կը վկայէ Խորենացին, աւելցնելով թէ ինք իր ախանջներով լսած է իր ժամանակակից երգիչներուն բերնէն հետեւեալ երգի կտորը. —

« Երկնէ երկին եւ երկիր,
Երկնէ եւ ծիրանի ծով.
Երկն ի ծովին ունէր զկամրիկ եղեգնիկն.
Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող՝ բոց ելանէր,
Եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր,
Վազէր խարեաւ պատանեկիկ.
Նա հուր հեր ունէր,
Ապա բոց ունէր զօրոս,
Եւ աշկունքն էին արեգակունք: »

Վահագնի հերոսային արարքները դրուատող վիպասանները, կը պատմուի թէ, ուրիշ երգեր ալ հիւսած էին, որոնց մէջ կը յիշէին թէ Վահագն յաղթական պատերազմներ մղած է վիշապներուն հետ, ասով թերեւս ակնարկել ուզելով Աժդահակէն սերած Մարաց սզգը, որ վիշապազուն ալ կը կոչուէր:

Վահագն, ինչպէս վերեւ յիշեցինք, ըլլալով իր եղբայրներուն մէջ հզօրագոյնը, ինք կը յաջորդէ իր հօր և իր մեծամեծ քաջութիւններով ու յաղթութիւններով կը փառաւորէ Հայկազանց գահը: Վահագնի համբաւը կը տարածուի չրջակայ ազգերուն մէջ, որոնք զանի կը բազդատէին Հերակլէսի կամ Հերքիւլէսի հետ: Այդ ազգերէն վրացիները, իրենց երկրին մէջ, Վահագնի փառքը յաւերժացնելու համար, անոր անունին արձան մը կանգնեցին ճիշդ անոր հասակին բարձրութեամբ, և աստուածներուն կարգը դասելով, զո՛նք կը մատուցանէին անոր ու կը պաշտէին զանի: Վահագնի տոհմէն սերած է Վահունիք կամ Վահնունիք նախարարութիւնը, որ դարեր ետքը, քրմութեան վերածուած, հանդիսաւոր պաշտամունքներ կը կատարէր ի պատիւ իր նախահօր՝ Վահագնի:

Մեր ազգային պատմագիրներու վկայութեան համաձայն, Վահագն քսանըեօթը տարի թագաւորելէ յետոյ կը մեռնի և իրեն յաջորդ կը թողու իր կրտսեր որդին Առաւան, որ միայն տասնութը տարի կը թագաւորէ: Առաւանէ սերած է Առաւանեան նախարարութիւնը:

Առաւանի մահէն ետք, յաջորդաբար Հայկազանց գահը կը ժառանգեն հետեւեալ թագաւորները. Ներսէս, որ կը թագաւորէ երեսունըճինգ տարի. յետոյ Զարեհ, քսանըվեց տարի, որմէ սերած են Զարեհաւանեանք: Զարեհի որդին՝ Արմուգ, ինը տարի կը թագաւորէ և թագը կը թողու իր Բայգամ տղուն, որ տասնըչորս տարի կը կառավարէ ազգը: Բայգամի կը յաջորդէ Վան, որ իր քսան տարուան թագաւորութեան խաղաղ չրջանին մէջ կը վերաշինէ Շամիրամակերա քաղաքը, զոր իր անունովը կը յորջորջէ Վան:

Վանի կը յաջորդէ որդին Վահէ, որ Հայկազանց վերջին թագաւորը պիտի ըլլար: Ասոր օրով, Հայաստան արտաքին թշնամիներէ կը նեղուէր: Վահէ, վերակազմելով իր տէրութեան զինուորական ուժերը, իր երկրին բոլոր սահմանները պաշտպանելու համար, կը պարտաւորուի պատերազմ մղել թշնամի ազգերուն դէմ, որոնք իր նախորդներուն թուլութենէն ու տկարութենէն օգտուելով, ասպատակած էին երկրին ներսերը, և կը հարստահարէին բնիկ ժողովուրդը: Վահէ կը յաջողի հետզհետէ իր սահմաններէն վանել թշնամիները, ասպանելով այսպէս իր երկրին խաղաղ բարգաւաճումը:

Սակայն յանկարծ, արեւմուտքէն հրապարակ կ'իջնէ անարկու, անպարտելի թշնամի մը, որուն յաղթական քայլերուն առջեւէն հալածական կը փախչէին ասիական հզօր ազգերու բանակները: Այդ թշնամին էր Մակեդոնիոյ Փիլիպպոս թագաւորին տղան Աղեքսանդր, որ սահմանուած էր տիրելու տիեզերքին և հիմնելու միահեծան ու լայնածաւալ, թէ և խիստ կարճատե կայսրութիւն մը, Գանուբէն մինչև Ինդոս ու Գանգէս, այն սոսկայի Մակեդոնացին, որ տիեզերական պատմութեան լեզուովը կը կոչուի Մեծն Ալեքսանդր:

Այս մեծ աշխարհակալին կեանքը կ'արժէ անշուշտ ծանօթացնել մեր պատմութեան ընթերցողներուն, մանաւանդ այն պատճառով որ, մեր Վահէ թագաւորին հետ ալ չափուած է ան:

Դիողորոս, Վալերիոս, Ստրաբոն, Կորտիոս, (*) Պլուտարքոս, (**) Յուստինոս և ուրիշ հին ու նոր պատմիչներ զրամ են Մեծն Աղեքսանդրի կեանքը, ո՛յնքան կարճ, քայց ա՛յնքան փոփոկակից ու բեղուն՝ արիւնոտ զրուագներով:

Մենք նոյնութեամբ կ'արտագրենք այս էջերուն մէջ Հ. Մ. Չամչեանի հետեւեալ առգերը, որոնք քաղուած են յիշեալ պատմագիրներու երկերէն և որոնց մէջ զբէթէ խաացած է Մեծ Մակեդոնացիին կեանքը:

«Աղեքսանդր Մակեդոնացին, որ Մեծ կը կոչուի, ծնած է աշխարհի ստեղծման 3648 կամ ըստ եօթանասնից՝ 4847 թուականին, և անոր ծնունդին, ինչպէս որ կ'ըսեն, մեծամեծ նշաններ տեղի ունեցան, ահագնազգորդ որոտումներ և շատ տեղեր՝ երկրաշարժներ. կ'ըսուի նաև թէ, այն ամբողջ օրը, Աղեքսանդրի ծնած ապարանքին վրայ երկու արծիւներ երևցան, Եւրոպայի և Ասիոյ տիրապետելու գուշակութեան ի նշան: Կը պատմուի դարձեալ թէ, անոր ծնած օրն իսկ, Եփեսոսի Արտեմիսին, այն է Տիանայի տաճարը հրոյ ճարակ եղաւ. հեթանոսները, ծաղրելու մասք տուստել մը կը պատմէին. այսինքն թէ Արտեմիս չաստուածը, այն օրը զիւցազն Աղեքսանդրի ծնունդին հոգեբովը զրաղած ըլլալով՝ չի կրցաւ հասնիլ իր տաճարին օգնութեան: Իսկ երբ ձերբակալուեցաւ տաճարը հրդեհողը և խոչտանգումներու ենթարկուեցաւ, խոստովանութեան մէջ ըսաւ. — Ես այդ գործը գործեցի, որպէս զի բովանդակ տիեզերքի մէջ լսուի իմ անունս: Այդ պատճառով, Ասիոյ ամէն կողմերը պատուէր սըր-

(*) Կուիկոս Կոսիոս մեծամուն լախն պասմաբանը կ'ապրէր Վեսպասիանոսի ու Կոդիոսի կայսրութեան օրով, լախներէն պասմուրիւն մը գրած է Մեծն Աղեքսանդրի վրայ:

(**) Պլուտարքոս, նշանաւոր յոյն փիլիսոփայ, պասմաբան ու փաստաբան. Բեովսիոյ կամ Բիւղիոյ Քերոնիա քաղաք ծնած. քրիստոնէութեան Ա. Դարուն վերջերք, եւ Բ. դարուն սկիզբներք ծաղկած, Ներոնի ժամանակէն մինչեւ Տրայանոսի օրերք, եւ աւելի վերջերք կ'ապրէ: Գրած է Յունաց եւ Հռովմայեցոց երեւելի անձեռուն պասմուրիւնք, որուն մեջ երկարօրէն կը խօսի նաեւ մեր Տիգրան Բ. ի եւ իր քեռայր Միհրդատի մասին. գրած է նոյնպէս քարոյական նաեւ եւ ուրիշ քաղանկալից երկեր: Մեռած է Քրիստոսի 140 թուականի միջոցներք:

ւեցաւ որ ո՛չ ոք բերան առնէ այդ մարդուն անունը, որ սակայն գիրքերու մէջ անցաւ ու տարածուեցաւ: Այդ մարդը կը կոչուէր Լեռոսրասոս Լեզգամոս:

« Երբ Աղեքսանդր տասներկու տարիքը մտաւ, իրեն վարժապետ կարգուեցաւ մեծն Արիստոտէլ^(*), որուն քով սովորեցաւ բոլոր ազատ արուեստները, մասնաւորապէս իմաստասիրութիւնը: Շատ մեծարանք կ'ընծայէր անոր. ես աւելի պարտական եմ, կ'ըսէր, Արիստոտէլի քան թէ ծնողքիս, որովհետեւ ասոնք ինձի կեանք տուին, իսկ անի՛ աղէկ ապրիլը սովորեցուց:

« Եւ որովհետեւ Աղեքսանդր առատաձեռն էր իր տղայութեան ատեն, երբեմն զոհերու հանդիսաւոր պաշտամունքներուն ներկայ դաճուելու միջոցին, կուռքերուն առջև լիարուսն խունկ կը ծխէր: Արքունի տան վերակացուն Լէոնիդէս, տեսնելով անոր առատաձեռնութիւնը, առանձին կ'ըսէ անոր.

— Ա՛յն ասեմ միայն այդքան առատօրէն խսւցնկ վասնէ՛, երբ խնկաբեր աշխարհներուն տիրես:

« Այս խօսքը, Աղեքսանդրի մտքին մէջ, անջնջելիօրէն տպաւորուեցաւ, և երբ, ժամանակներ ետքը, Արաբիան իր իշխանութեան ներքեւ նուաճեց, խունկով լեցուած նաւ մը զրկեց Լէոնիդէսի ու կ'ըսէ.

— Այսուհետեւ խնայելով խունկ մի՛ ծխեր աստուածներուն. այլ, լիարուսն առատութեամբ ծխէ՛.

« Օր մը, երբ Աղեքսանդր ելաւ ցլազլուխ կոչուած ամենի ձիու մը նիւսը, ուր ո՛չ ոք կը համարձակէր հեծնայ, անոր հայրը Փիլիպպոս, տեսնելով տղուն վեհօգի բնաւորութիւնը, համբուրեց անոր գլուխը, և կ'ըսէ, ըստ Պլուտարքոսի.

— Զաւա՛կս, աշխատէ՛ զսնել քեզի պէս հերոսի մը արժանի քաղաւորութիւն մը, որովհետեւ Մակեդոնիան չպիտի կրնայ քեզ գոհացնել:

Ու երբ, իշխաններու դաւադրութեամբը մեռաւ իր հայրը Փիլիպպոս, զանի թաղելէ առաջ, անոր սպաննիչները նախ սպաննեց,

(*) Արիստոս կամ Արիստոսէլ, մեծանուշակ յոյն իմաստասէր, Մակեդոնիոյ Ասակիր քաղաքը ծնած, Մեծն Աղեքսանդրի վարժապետը, եւ «Պերիպատետիկեան»ներու զարոյցին հիմնադիրը. ամբողջ Միջին դարուն, սփոխաստիճաններու փիլիսոփայութեան ու աստուածաբանութեան պատգամը եղած է, Եւքլայի հայկիս քաղաքը մեռած է. 384-322 (Ք. Ա.)ին: Թողուցած է բազմաթիւ երկասիրութիւններ, զոր արդի գիտութիւնները մեծապէս կը գնահատեն այսօր: Արիստոսէլի անունը յանախ կը յղեցողուի իբրեւ փիլիսոփայական միտքին անձնաւորումը:

յետոյ իր հօրը թաղումը կատարեց, և ինք Մակեդոնիոյ վրայ թագաւորեց քսան տարիքին մէջ, ասի հզօր ու մեծասիրտ էր առիւծի մը պէս, անգիններ ու սագմասէր:

« Օր մը, երբ հանդիպեցաւ Աղեքսանդր անունով զինուորի մը որ վեճերտա ու վատասիրտ էր, կ'ըսէ անոր.

— Ո՛վ դու, կամ անունդ փոխէ, կամ սիրադ:

« Այնուհետեւ, արչաւանքի, ձեռնարկելով Աղեքսանդր սկսաւ նուաճել առհասարակ թէ՛ մերձակայ և թէ՛ հեռաւոր ազգերը. և շատ մը պատերազմներու մէջ անձամբ մտնելով և ինքզինք մահուան վրտանգին մէջ նետելով, իր օրինակովը կը խրախուսէր իր զօրքերը, աներկիւղ և բոլոր հոգիով յարձակելու թշնամիներուն վրայ:

« Արիստոտել վարժասպետը խրատեց անոր որ ինքզինք ժամանակ մը դապէ ու հանդարտ բռնէ պատերազմական տաժանքներէն, մինչև որ իր ֆիզիքականը զօրանայ: Աղեքսանդր կը պատասխանէ.

— Պէտք է գործածել ժամանակը, որուն պատեհութիւնը մեր կամքէն կախում չունի:

« Օրէ օր Աղեքսանդրի զօրքերը շատցան և շատ ազգեր կուզային և անոր կը յարէին, այնպէս որ, աւելի զօրանալով, մեծամեծ հերոսութիւններ գործեց. զարկաւ վանեց թէրայեցիները, և հրդեհի մատնեց անոնց թիբէ քաղաքը, շատ մը դաւաւաներու վրայ քայեց, մէկ մասը բռնի, մաս մըն ալ յօժարակամ իրեն հնազանդեցուց:

« Կ'ըսուի թէ, երբ Աղեքսանդր Փոիւզիա եկաւ, Տրովայի Իլիոն քաղաքը, հոն Սկամանդր գետը տեսնելով, յիշեց Հոմերի մէկ խօսքը, որ զարմանալիքներով գրած էր թէ ինչպէս Աքիլլէս վաղած ցատկած էր անոր վրայէն. և որովհետեւ գետը լայն չէր այնչափ, որչափ ցոյց արուած էր Հոմերի բանաստեղծութեան մէջ, չի զարմացաւ: Բայց յետոյ, երբ Աքիլլէսի գերեզմանը տեսաւ, կ'ըսէ.

— Երանի՛ քեզի, Աքիլլէ՛ս, որովհետեւ քեզի քարոզող ունի՛ս Հոմերը, որ այնչափ մեծցուցած է զործերդ.

« Այն ատեն բանաստեղծ մը մօտեցաւ անոր ու կ'ըսէ.

— Թագաւոր, մենք աւելի լաւ պիտի գրենք քու գործերդ, քան զոր Հոմեր գրած է Աքիլլէսի վրայ.

« Աղեքսանդր կ'ըսէ.

— Ես կը փափագիմ թերսիտէս ըլլալ Հոմերի պատմութեան մէջ, քան թէ Աքիլլէս՝ քու կինիդ մէջ:

Այս խօսքը Յովհաննէս Երզնկացին ալ մէջ կը բերէ քերականութեան մեկնութեանը մէջ:

« Աղեքսանդր երբ իմացաւ թէ՛ Լամսակեցիները Պարսից Դարեհ թագաւորին կ'օգնեն իրեն դէմ, սկսաւ ահաղին զօրութեամբ մը քալել անոնց վրայ, միտքը դնելով հիմնովին քանդելու Լամսակը:

Անաքսիմէն(*) իմաստասէրը, որ նոյն քաղաքէն էր, ասիկա իմացած ըլլալով, Աղեքսանդրի առջեւ ելաւ, անոր բարկութիւնը հանդարտեցնելու համար, որովհետեւ անոր հօրը Փիլիպպոսի օրերէն ի վեր անոր մտերիմն ու սիրելին էր ինչ: Երբ Աղեքսանդր տեսաւ զանի, հասկցաւ որ քաղաքին կողմէն իրեն կուգար ազատելու համար. բարկացաւ ու կ'ըսէ.

— Կ'երդնում աստուածներուն վրայ, որ այս անգամ չպիտի մտիկ ընեմ անոր աղաչանքներուն, և ինչ որ խնդրէ, անոր հակառակը պիտի գործեմ:

« Անաքսիմէն մօտենալով իրեն, կ'ըսէ.

— Կը խնդրեմ քեռէ, թագաւոր, քանզի՛, կործանե՛ սա Լամասկը, և ատոր բոլոր բնակիչները թուրէ անցուր ու բնաջինջ ըրէ՛:

« Այս խօսքին վրայ, Աղեքսանդր ապշահար մնացած խնդաց, և իր ըրած երգումը գործադրած ըլլալու համար, Անաքսիմէնի խօսքերուն հակառակը գործելու, Լամասկեցիներուն ներեց և չարիք մը չըրաւ անոնց:

« Աղեքսանդր ա՛յ աւելի զօրացած, և քաջալերուած՝ երազներէն, որոնց մէջ Աստուծմէ յայտնուած էր իրեն թէ ամէն բանի մէջ յաջողութիւն պիտի գտնէր, կը յոխորտար պարսից մեծազօր կայսրութեան և բովանդակ Ասիոյ տիրելու. և այդ պատճառով, երբեք չէ՛ Դարեհի զրկեր տուրքը, զոր իր նախորդները կը վճարէին անոր: Իսկ Պարսից Դարեհն Կողոմանոս թագաւորը, անոր գործերը դիտելով ու տեսնելով թէ իր սահմաններուն շատ մը տեղերը կ'ասպատակէր ոտնակոխ ընելով, սաստիկ բարկութեամբ մը կատղեցաւ, և անոր դէմ պատերազմի ելաւ անթիւ անհամար զօրքերու բազմութեամբ մը, սակայն շատ անգամներ, կորակոր ետ դարձաւ:

« Եւ Դարեհ, իր Մեմնոն զօրավարին մահէն ետքը, հրաման տուաւ Բաբելոն համախմբելու բոլոր ցրուած զօրքերը, ինչպէս նաեւ ուրիշ մեծ թիւով ազգերէն, և այդ ահագին ուժով քալելու Աղեքսանդրի վրայ: Եւ իր զօրքերուն թիւն էր Պարսից ազգէն՝ հարիւր հազար, Մարացիներէն՝ վարսուն հազար, և ուրիշ անհամար բազմութիւն մը զանազան ազգերու շատ մը կողմերէն: Հայոց Վահէ թագաւորն ալ զրկեց անոր քառասուն հազար հետեւակազօրք և եօրը հազար հեծելազօրք, ինչպէս որ Կուինդոս Կորաիոս ալ կը յիշէ:

« Դարեհ այս պատրաստութիւններով ելլելով Աղեքսանդրի դէմ, չի կրցաւ անոր անպարտելի զօրութեանը դիմադրել, և իր զօրքերէն

(*) Անաքսիմէն Լամասկեցի, դասփարակներէն մին է Աղեքսանդրի, որուն պատմութիւնը գրած է յետոյ:

չատերը, ըստ Պիուտարքոսի՝ չուրջ հարիւր տասը հազար հոգի, չարաչար ջարդուեցան և քառասուն հազար հոգի գերի ինկան. իսկ ինք, Դարեհ թագաւորը փախչելով կ'ազատուէր Աղեքսանդրի ձեռքէն: Իսկ Աղեքսանդրի զօրքերէն զրէթէ հինգ հարիւր հոգի վիրաւորուեցան և, ըստ Կորդիոսի, երեսուն երկու հետեւակ ու հարիւր յիսուն հեծկազօրք ինկան: Աղեքսանդրի զօրքերը զրաւեցին նաև Դարեհի բանակեացը, ուր ձերբակալեցին անոր մայրն ու կինը, անոր վեց տարու Ոքոն սրդին և երկու աղջիկները, որոնց հետ կը գտնուէին մեծամեծներուն շատ մը կիները: Աղեքսանդր հրամայեց պահել զանոնք ապահով տեղ մը և պատուասիրել ամէն ինամով: Այս մեծ յաղթութենէն ետքը, շատ մը քաղաքներ ու գաւառներ ինքնակամ անձնատուր եղան անոր և երկիրը դողաց անոր երեսէն:»

Պարսկական կայսրութեան ու հայկական թագաւորութեան միջև վաղուց հաստատուած դաշնակցութեան մը զօրութեամբ, մեր Վահէ թագաւորը պարտաւոր էր օգնել Դարեհի. այդ պատճառով է որ, ինչպէս վերև յիշեցինք, Աղեքսանդրի դէմ Դարեհի օգնութեան համար զրկած էր հայկական բանակէն քառասուն հազար հետեւակ և եօրր հազար հեծեալ:

Երբ Դարեհի պարտութեան տխուր լուրը կը հասնի Հայաստան, Վահէ կը յուզուի, և մանաւանդ, ստուգելով հայկական գունդերուն քայքայումը, սաստիկ կը զայրանայ Մակեդոնացի հակառակորդին դէմ, և կը խորհի երթալ անձամբ չափուիլ անոր հետ և լուծել իր դաշնակից Դարեհի պարտութեան վրէժը: Ուստի, սրտաշարժ կոչ մը կ'ընէ բոլոր հարեւան երկիրներու, հեռաւոր թէ մերձաւոր, այլ լաղելու և այլակրօն բնակչութիւններուն — որոնք արդէն Հայաստանի բնական դաշնակիցները կը համարուէին, իրենք ալ, Հայերուն պէս, ըլլալով ասիականութեան զինւորները —, զինւորական ստուար ուժերով գալ իրեն միանալու, երթալ մարանչելու համար հասարակաց թշնամիի մը դէմ, որ կը սպառնար իրենց անկախութեան ու գոյութեան:

Վահէի կոչին վրայ, բոլոր շրջակայ երկիրներէն ստուարաթիւ գունդեր կը հասնէին Հայաստան, ուր արդէն ահագին պատրաստութիւններ տեսնուած էին: Ժողովուրդը, իր քառասուն հազար հետեւակներուն ու եօթը հազար հեծեալներուն ժամ առաջ կ'ուզէր օգնութեան հասնիլ. ուստի, երկրին բոլոր անկիւններէն, բոլոր բերդատէրները, բոլոր նախարարները, իրենց սեփական գունդերով, հետզհետէ կուգային կը հաւաքուէին Վահէի շուրջը, որ վրէժխնդրութեան բոցը սրտին մէջ, կ'աճապարէր թուչելու պատերազմի դաշտը, ուր Մեծն Աղեքսանդր ա՛ն ու մա՛ն կը սփռէր:

Ալանները, Հոնները, Աղուանները, Վրացիները և Կովկասի զանազան ազգերը, Կորդուացիները, վերջապէս պարսկական կայսրու-

Թեան հպատակ բոլոր ցեղերը, Վահէի զօրակոչին պատասխանելով, փութացած եկած էին իրենց հետեւակ ու հեծեալ զունդերով:

Վահէ, այս պատկառելի ուժերով կը քայէ Մեծն Աղեքսանդրի բանակին վրայ, որ՝ զբաւած էր արդէն սազմազիտական կարեւոր դիրքերը: Երկու թշնամի բանակները դէմ առ դէմ ճակատած, երկուստեք արիւնը կը հոսէր հեղեղօրէն: Պահ մը, մակեդոնական շարքերու մէջ խուճապ ինկաւ, և Վահէ, յաղթութեան դափնին խելու համար, ամենի յարձակումներով, բիւրաւոր զօրքերու կարգերը կը ճեղքէր և ընդհանուր խառնակութեան ու տաղնապին մէջ, վրէժ ժայթքող աչքերովը փնտտելով իր անպարտելի ու սարսափելի հակառակորդը, կը փափազէր զանել զանի ու մենամարտել անոր հետ:

Սակայն, ճակատագրական ժամը շուտով կը հնչէ. Վահէ, աջ ու ձախ հարուածներ իջեցնելէ ու իր շուրջը դիակներ փռելէ յետոյ, Աղեքսանդրի ձեռքով վիրաւորուած, դիտապաստ կ'իյնայ գետին ու կը մեռնի: Մակեդոնացի աշխարհակալը յայն շունչ մը կ'առնէ և կը հրամայէ զօրքերուն շարունակել ճակատամարտը:

Հայկական զօրագունդերը ջախջախուած, հազարներով կը ջարդուին. մէկ մասը գերի կը բռնուի, և մնացեալները, հալածական ու ցիր ու ցան, լեռներ կը փախչին և հազիւ կը յաջողին ազատել իրենց կեանքը:

Վահէ թագաւորին պարտութեան և եղբրական վախճանին վրայ, Մեծն Աղեքսանդրի երկրակալութեան արտօմակը սրուեցաւ. կը խորհէր ընդարձակել իր յաղթական արշաւանքները: Ուստի, մասնաւոր դեսպանութիւն մը կը ղրկէ Երուսաղէմ, Հրեաները հրաւիրելու համար իր գահին հպատակութեանը, հրամայելով որ այլ եւս դադրեցնեն տուրքերու վճարումը Դարեհի արքունիքին և իրեն բանակը զօրք ղրկեն ի նշան հնազանդութեան: Յազդուս քահանայապետը, ընդունելով մակեդոնական դեսպանութիւնը, կը պատասխանէ անոնց.

— Դարեհի հետ խաղաղութեան ուխտ կնքած ենք մենք և չենք լկրնար ղրժել, ցորչափ ան ողջ է:

Մեծն Աղեքսանդր, հրէից քահանայապետին պատասխանը ստանալուն պէս, սաստիկ կը բարկանայ և իր բանակով կը քայէ Երուսաղէմի վրայ: Իսկ քահանայապետը, իմանալով աշխարհակալին ժամանումը, կ'աճաբեկի, և զոհերով ու պատարագներով, իր բովանդակ ժողովուրդին հետ, Աստուծոյ կը դիմէ, փնչպէս կը գրէ Յովսէպոս, իր Նախնեաց Գիրքին մէջ (ԺԱ. 8), ուր կը պատմուի թէ Աստուած Յազդուսի կ'երեւի տեսիլքին մէջ ու կը պատուիրէ անոր բնաւ չը վախնալ Աղեքսանդրէն, այլ ընդհակառակը, հանդէսով ընդառաջել անոր, ինք ու իր քահանաները. քահանայական զգեստներով, իրեն հետ ունենալով բովանդակ ժողովուրդը, և թափորով քաղաքին մէջ ընդունել յաղթող երկրակալը:

Յարդուս քահանայապետը կէտ առ կէտ կը գործադրէ աստուածային պատուէրը, որ իրեն հաղորդուած էր անսկիզբին մէջ, և տօնական շքեղ զգեստներով զարդարուած, քահանայական դասէն ու ժողովուրդի բազմութենէն շրջապատուած, հանդիսաւոր թափորով մը կը դիմաւորէ Մեծ Մակեդոնացին, որ երբ կը տեսնէ քահանայապետը, պաշտօնեաներու բազմութեան հետ միասին, մեծաշուք հանդէսով, անմիջապէս վար կ'իջնէ ձիէն, և կ'երկրպագէ Աստուծոյ անունին, որ քահանայապետին ճակատը գրուած էր:

Աղեքսանդրի հետևորդ իշխանները, ապշահար, կը հարցնեն անոր.

— Ինչո՞ւ համար կ'երկրպագես Հրէից քահանայապետին.

— Ես երկրպագութիւն չըրի, կը պատասխանէ Աղեքսանդր, Հրէից քահանայապետին, այլ Աստուծոյ, որ ձիչդ այս զգեստով երևցաւ ինձի Մակեդոնիոյ մէջ և խոստացաւ ամենուրեք օգնական ըլլալ իմ զօրքերուս:

Աղեքսանդր Երուսաղէմ կը մտնէ այսպէս, և հրէական ծէսով, Աստուծոյ պատարագ կը մատուցանէ. և հոն, տաճարին մէջ, Դանիէլ մարգարէի գիրքէն ստուգելով թէ՛ Յոյներէն մէկը պիտի քանդէ Պարսից իշխանութիւնը, աստիկ կ'ուրախանայ, որովհետև կը հասկնայ թէ իրեն համար եղած է այդ մարգարէութիւնը: Յետոյ, իրեն եղած ջերմ ընդունելութեան համար շատ գո՞ մնացած, կը հրամայէ Հրեաներուն խնդրել իրմէ ի՞նչ որ կ'ուզեն: Իսկ այս վերջինները, իրենց քահանայապետին բերնով, կը խնդրեն որ թոյլատրուի իրենց օրէնքները պաշտել համարձակ, ուր որ ալ գտնուի Հրէից ազգը, և եօթներորդներուն տարին, ուր արտերու մշակութիւն չէին ընեն, սուրքերէ ազատ ըլլայ: Մեծն Աղեքսանդր կը կատարէ անոնց խընդրանքները, և մեծ սէր ու համակրանք ցոյց կուտայ անոնց հանդէպ, և իրենց կրօնքը պահելու պայմանով, մեծ թիւով զօրք կ'առնէ իրենց հաւանութեամբը:

Մակայն ս'չ Հայոց պարտութիւնը, ս'չ ալ Հրէից ինքնակամ անձնատրութիւնը, չէր կրնար կասեցնել Աղեքսանդրի առաջխաղացումը, որովհետև պարսկական կայսրութիւնը դեռ կանգուն էր և Դարեհ կողմանոս, թէեւ յաղթանարուած, տակաւին կ'ապրէր ու կ'աբհամարէր իր զօրութիւնը, այսպէս կը խորհէր Մակեդոնացի երկրակալը: Իսկ Դարեհ՝ բոլորովին յուսահատ էր, վերջնականապէս համոզուած էր թէ չպիտի կրնար այլ եւս դիմադրել արևմուտքի այս անհղ ուժին, և կը խորհէր հաշտուիլ անոր հետ, դաշնակցութիւն մը կնքել, և ինչան խաղաղութեան, իր աղջիկը տալ անոր կնուծեան, և իբրև օժիտ՝ իր թագաւորութեան կէսը: Եւ այս մտօք պատգամաւորութիւն մը կը դրկէ Աղեքսանդրի, որ սակայն կը մերժէ Դարեհի առաջարկը, ըսելով.

— Երկինքը չի կրնար տանիլ երկու արեւներ, ո՛չ ալ Ասիան՝ երկու թագաւորներ :

Այդ միջոցին, աւագանիէն Պարմենիոն անուն մէկը կ'ըսէ Ազեքսանդրի .

— Իրա՛ւ կ'ըսեմ, եթէ ես Ազեքսանդր ըլլայի, այդպիսի պայման մը յօժարակամ կ'ընդունէի :

Մեծն Ազեքսանդր հեզնելով կ'ըսէ .

— Իրօ՛ք, ե՛ս ալ եթէ Պարմենիոն ըլլայի, ստոր կը յօժարէի :

Յետոյ պատգամաւորները ճամբեց, պատուիրելով որ իրենց թագաւորին ազդարարեն թէ պատերազմը միայն պիտի կրնայ վճռել երկուքին ճակատագիրը :

Եւ Դարեհ ճարահատ, կը պատրաստուի երկրորդ անգամ փորձելու պատերազմի բաղդը :

Վճռական և վերջին ճակատամարտը տեղի ունեցաւ Ասորեստանի կողմերը, Դարեհ Կողոմանոսի բանակը չարաչար յաղթուած, ջախջախուեցաւ . զօրքերուն մէկ մասը փախստական ինկաւ ու ցիրուցան եղաւ . իսկ ինքը Դարեհ, կռուի ամենատաք ըսպէին, իր ապերախա զօրապետներուն կողմէն դաւաճանօրէն վիրաւորուած ինկաւ, պատերազմի դաշտին վրայ :

Դարեհի մահուան լուրը շուտով կը տարածուի թշնամի բանակին մէջ, և Ազեքսանդր կուգայ անձամբ տեսնել իր հակառակորդի անչնչացած մարմինը . դառնապէս կուլայ, վրայէն կը հանէ իր ծիրանիները, որոնցմով 'ը պատէ Դարեհի դիակը, և մեծ պատիւներով կը դրկէ զայն մօրը, որպէս զի փառաւոր հանդէսով մը թաղու՛մը կատարէ :

Այսպէս, բացարձակ և միահեծան տէրը կը դառնայ բոլոր ասիական ազգերուն, Ասորեստանի, Բաբելաստանի, Մարաստանի և Պարսկաստանի, ուր կը կարգէ վերակացուներ : Իսկ Հայաստանի մէջ Միհրան անուն կուսակալ մը կը նշանակէ, ինչպէս կը գրեն Դիոդորոս և Կորտիոս, նոյնպէս, Վրաստանի մէջ մարզպան կը կարգէ Դարեհի նախարարներէն Միհրդատ անուն մէկը, ինչպէս գրած է Խորենացին : Պարսից կայսրութեան մահացու հարուած մը տալէ յետոյ, Ազեքսանդր իր ստուար գունդերով կ'առաջանայ դէպի հարաւ, տիրելու համար Հնդկաստանի, որուն Պիւռոս թագաւորին կը յաղթէ, երկրին ամէն կողմերը սարսափ կը սփռէ :


Յուստինոս կը պատմէ թէ՛ երբ Ազեքսանդր կը հասնի Հնդկաստանի քաղաք մը, ինք անձամբ պարիսպէն ներս կ'անցնի և առանձին կը սկսի քայլի հրապարակին մէջ : Քաղաքին բնակիչները տեսնելով զանի, մոլեգին յարձակոււմ մը կը գործեն բովանդակ աշխարհի վրդովիչը մէջտեղէն վերցնելու նպատակով . սակայն արի հերոսը մի-

նակը զէմ կը զնէ, կռուելով անոնց հազարաւորներուն հետ, որոնց նետերուն, նիզակներուն ու սուրերուն հարուածները զերև հանելով, իր բազուկներուն ուժովը տեղն ի տեղը սուրէ կ'անցընէ ու զեափն կը փռէ շատերը, և այնպէս ձեղքելով անոնց ամբողջը, կը յաջողի ճողպորիլ, մինչև որ կը հասնին իր թիկնապահներն ու զօրքերը, և կը սկըսին կռուիլ նոյն քաղաքի բնակիչներուն հետ. հոն, Աղեքսանդր վէրք մը կը ստանայ մէկէ մը, զոր իր ձեռքովը կը սպաննէ անմիջապէս:

Հնդկաստանի և չրջակայ բոլոր երկիրներուն տիրապետութիւնը վերջացնելէ յետոյ, յաղթական բանակովը կը վերադառնայ Բաբելոն, ուր ինքզինք կը յանձնէ կերուխումի, մեղկանքի, շուայա ու զեղխ կեանքի մը, մէկ խօսքով իր հերոսութեան անարժան արարքներու:

Երիտասարդ հասակին մէջ, երեսուներեք տարու, կը վերջնայ այս փոթորկալից կեանքը, որ շարունակ տասներկու տարի սասանացուցած էր տիեզերքը, Եւրոպան թէ Ասիան: Գիշեր մը, ցայգատօնի մը գիներբուքէն ետքը, մեռած կը գտնուի անկողնին մէջ, թողով երկու որդիներ, մէկը՝ խորթ, Հերքիւլէսը, իսկ միւսը՝ հարազատ, որ տակաւին Ռոքսանէ թագուհիին արգանդը կը գտնուէր:

Իսկ Հայկազանց Հարստութիւնը, Հայկ Նահապետէն սկսեա մինչև և Վտնէ թագաւորը, չուրջ քսան դարու ժամանակամիջոց մը, իր փառաւոր գոյութիւնը պահպանելէ յետոյ, Մեծն Աղեքսանդրի ձեռքէն կ'ընդունի վճռական հարուածը, և Հայաստանը, կորսնցնելով իր քաղաքական անկախութիւնը, հարկատու կուսակալութեան մը կը վերածուի, մակեդոնական իշխանութեան տակ:



Յեսադարձ ակնարկ մը՝ դեպի ասորեսանեան գերիշխանութեան
 քաջանք. — Ասորեսանի պետութեան ծագումը՝ արդի հնախօսներուն
 կարծիքովը. — Սեպաձեւ արձանագրութիւնները կը խօսին
 Հայոց մասին. — Հայ Դաւեանկցական պետութիւնը՝
 վեց փոքր իշխանապետութիւններով. — Թիլասպալասար Ա.
 կը նուանէ Նայիրին (1130). — Ասուրեասիրբայ կ'արժուէ դեպի
 Նայիրի եւ Մաննա (882 - 857). — Ասորեսանի բազաւորները կը
 պատերազմին Ռուրասուի բազաւորներուն դէմ, Մաննայի
 սիրապետութեան համար (841-726). — Հայասան՝
 ասորեսանեան քաղաքակրթութեան ազդեցութեան տակ.
 Ասորեսանի Սարուին բազաւորը կը պատերազմի Ռուրասուի
 Ռուսա բազաւորին ու ասոր Դաւեանկցներուն դէմ.
 Խոսապատի մէջ կարելուք արձանագրութիւն մը.
 Արգիսիսի զենեքուն յաջողութիւնները.
 է. դարուն (Ք. Ա.) Հայասանը:

Հաւատարմօրէն և քայլ առ քայլ հետեւելով ազգային թէ՛ օտար
 բոլոր հին պատմագիրներնեքուն աւանդած վկայութեանց, այս էջե-
 րուն մէջ ամփոփեցի Հայկազանց Հարստութեան պատմութիւնը, կար-
 գով ներկայացնելով բոլոր իրադարձութիւնները, որոնք տեղի ունե-
 ցած են այս առասպելական չրջանի ընթացքում, սկսեալ Հայկէն —
 որ ըստ Մ. Խորենացիի և ուրիշ ազգային պատմիչներու, մեր ազգին
 նախահայրը պէտք է համարուի —, մինչև վերջին հայկազուն թա-
 զաւորը՝ Վահէ:

Ասիկա հարկ մըն էր, զոր պարտ էի վճարել մեր նուիրական
 աւանդութիւններուն, որոնք ընդթ ունին շոյելու մեր տոհմային,
 շատ բնական և արդար հպարտութեան զգացումները, սակայն պատ-
 մութիւնը, հետի ըլլալէ վիպային բաղադրութիւն մը, անհերքելի իրա-
 կանութիւններու և անողոք ճշմարտութեան վրայ պէտք է հիմնուած
 ըլլայ, և ընդունակ դիմանալու գիտական քննադատութեան: Ուստի,
 մեր ընթերցողները հայկական հին փառքերու անոյշ յիշատակներով
 օրօրելէ և իրենց ազգային փառասիրութիւնը զգուող սփիւռներու և
 ոլորտքերու մէջ պարտցնելէ յետոյ, իրբեւ ուսումնասիրող ու հետա-
 զօտող խոնարհ միտք մը, պարտ կը զգամ յետագարձ ակնարկ մը

նետել զէպի ասորեստանեան գերիշխանութեան շրջանը, այնքան հարուստ՝ պատմական անտիպ զրուագներով, որոնց այսպէս յանկարծ տեսարան գալը՝ արդի գիտութեան հոյակապ հերոսներուն կը պարտի երախտագէտ մարդկութիւնը:

Մեր պատմութեան ընթացքին մէջ տեսանք թէ Արայ Գեղեցիկի մահը վերջապէս կը զնէր հայ նահապետական իշխանութեան և թէ Կարդոս, Արայի որդին որ Արայի հոշուեցաւ Շամիրամ թագունիէն, իր սիրական Արային յիշատակին համար, պարզ կուսակալի մը պաշտօնով կը կառավարէր ազգը, մէկ քանի իրաւասութիւններով, օրինակի համար, ինք անկախօրէն կը վարէր երկրին ներքին գործերը, և իր երկրին մէջ բանակ մը կը պահէր, նշանակուած տարեկան տուրքը կանոնաւորապէս Նինուէի արքունիքին վճարելու պայմանով:

Այսպէս ուրեմն, Արայ Գեղեցիկին մահէն ետքը, իրարու յաջորդող բոլոր նահապետները, որոնց անունները միայն հասած են մեզի, — այն ալ մարիբասեան աւանդութենէն, զոր ընդօրինակած է մեր պատմութեան հայրը —, շարունակած են կախում ունենալ Ասորեստանեան պետութենէն, և իբրև հարկատու կուսակալութիւն մը, կէտ առ կէտ զործադրել բոլոր նախկին յանձնառութիւնները:

Սակայն ենթադրելով թէ աւանդութիւնները չեն ստեր, Կարդոսի աղան, Արմաւիրի սօսիներուն նուիրուած Սօսանուէր Անուշաւանը, հանձարեղ ու բարեմօյն երիտասարդ մը, Նինուէի մէջ իր գերութեան օրերուն, յաջողած էր առինքնել Նինուէի պալատականները, և Հայաստան վերադառնալով, տիրանալ նախ մէկ մասին և յետոյ, քիչ քիչ, ամբողջ Հայաստանի, լոկ հարկատու մնալով Ասորեստանի անեղ պետութեան:

Եւ Անուշաւանի յաջորդները, երեսուն նահապետներու շարք մը, կը պահեն իրենց կէս-անկախութիւնը, տեսակ մը ինքնավարութիւն կամ հարկատու իշխանապետութիւն, և իրենց ազգին քաղաքական գոյութիւնը կը հասցնեն անփոփոխ և անխաթար մինչև Պարոյր, Հայկազանց առաջին թագաւորը, երբ արդէն Ասորեստանի անեղազօր ու հսկայ պետութիւնը կործանած, ուրիշ նոր պետութիւն մը կը հիմնուի անոր աւերակներուն վրայ, այն է Մարականը:

Մտիկ ընենք հիմակ արդի հնախօսներուն կարծիքը. տեսնենք թէ ինչպէս կը պատմեն Ասորեստանի պետութեան ծագումը, իր զօրացման ու ընդարձակման պարագաները, ևն:

Կանխենք նախ ըսել թէ՛ նորագոյն խուզարկութիւնները թանկագին արդիւնքներ տուին հին ազգերուն ու պետութիւններուն ծագման ու բարգաւաճման մասին. արդի հնախոյզներուն կը պարտինք նոր, բոլորովին նոր պատմութիւն մը, որ հիմնովին կը քան-

դէ բոլոր յոյն պատմիչներուն կառուցուած առասպելային թէ իրական շէնքերը: Նորագոյն գննութեանց ուսումնասիրութեանց համաձայն, մինչև ցարդ մեղի ծանօթ եղող պատմական անուններուն ու դէպքերուն մեծագոյն մասը զոյութիւն ունեցած չէ. կամ, աւելի ճիշդը, յունական կամ լատինական աղբիւրները պղտոր կը նկատւին և ոչինչ կ'արժեն, մանաւանդ, Քրիստոսէ տասը տասնը՛ինգ դար առաջուան արեւելեան մեծ դէպքերուն համար: Առնենք նախ Ասորեստանի Նինոս թագաւորն ու Շամիրամ թագուհին, երկու շահագրգիռ դէմքեր, երկուքն ալ կարծեցեալ երկրակալներ, որոնց վերագրուած արշաւանքներուն և յողթանակներուն պատմութիւնները, սերունդէ սերունդ աւանդուեցան դարերով: Այսօր, այդ առասպելի նսկաները, Գիտութեան ծանր թաթի մէկ հարուածովը, վար ինկած են իրենց գահէն և պատմական նշանակութենէ զուրկ, դիցարանութեան կամ բանաստեղծութեան առատ նիւթ մը միայն կրնան մատակարարել: Հէք Շամիրամ, մէկ կողմէ կ'ամբաստանուէր վաւաչոտ, այրասպան կին մը, փառամոլ երկրակալուհի մը, միւս կողմէ կը փառաւորուէր իբրև աշխարհաշէն թագուհի մը, որ, դարերէ ի վեր ժողովուրդի խաւերուն մէջ շրջան ըրած զրոյցներու համեմատ, հիմնած պիտի ըլլար մեր Վան քաղաքը, Շամիրամակերքը: Քանի՛ քանի հրաշալիքներ գործուած են Ասորեստանի այդ անգոյ բռնակալներուն ձեռքով, քանի՛ քանի արեւելեան արքայիկներ ու իշխաններ, որոնք, զանազան դարերու մէջ, Ասորեստանի պետութեան թագաւորներուն իբր թէ բարձրացուցած չքեղ ու պեճ կառոյցներով զարդարած են իրենց երկիրները...: Հազար ու մեկ գիշերներու տեսակէն հրաշապատուած վէպեր, որոնք դարեր ու դարեր ծառայած են լո՛կ բորբոքելու Արեւելքի սիրահար երեւակայութիւնները: Եւ այսօր, բոլոր այս շէնքերը, օգտակառայց դղեակներ, մէկիկ մէկիկ կը փլչին: Սակայն ի՞նչ կրնան նորագոյն ուսումնասիրութիւնները, և ի՞նչ կը խօսին սեպածե արձանագրութիւնները, որոնց բանալին զանուած է արդէն.—

Առնք, արդի հնախօսները, արձանագրութեանց յայտնութիւնները վկայ բռնելով, կը յայտարարեն թէ ո՛չ Նինոս մը զոյութիւն ունեցած է, ո՛չ ալ Շամիրամ մը, թէ՛ Ասորեստանի նախնի սիրականները քուրմեր էին, որոնք Քրիստոսէ հազար հինգ հարիւր, հազար ուրը հարիւր տարի առաջ կը թագաւորէին. թէ՛ այդ քուրմ-իշխանները, կամ թագաւոր — քուրմերը բացարձակ տէրերն էին Ասորեստանի, կառավարութեան սանձը ձեռքերին առած, որոշ տուրք մը միայն կը վճարէին Եգիպտոսի փարաւաններուն, որովհետև այս վերջիններուն իշխանութիւնը կը տարածուէր Նեղոսի հովիտէն ու Ափրիկէի Յամաքէն անդին, մինչև Տիգրիս:

Յետոյ, հետապնդելով արձանագրութեանց յայտնութիւնները, կը տեսնենք թէ, այդ հարկատու թագաւոր-քուրմերէն ետքը, Ասորեստանի պետութեան լուսն թագաւորները կուզան, որոնք Եգիպտոսի հարկատու ըլլալէ կը դազրին, աւելորդ է ըսել, ո՛չ առանց պատերազմներու: Այս անկախ թագաւորները, եգիպտական գերիշխանութեան լուծը թօթփկելէ յետոյ, երկրակալութեան ձգտումներէ մղուած, իրենց զինուորակոմն ուժերը կը փորձեն չրջակայ ժողովուրդներուն վրայ, և իրենց իշխանութիւնը Բաբելոնի վրայ կը տարածեն: Այսպէս, տիրելու բնազդը կը վերաթինայ և հետզհետէ կը զարգանայ, ա՛յն աստիճան որ, Ասորեստանի թագաւորները, Փ.Ք. դարուն կէսէն սկսեալ, ա՛յ իրենց բան զործ կ'ընեն արշաւանքները, երկրակալութեան տենչով և նոր երկիրներ բռնազրաւելու միակ նպատակով: Նախ կը նստածեն հարեւան աղգերը, զանոնք իրենց իշխանութեան հպատակեցնելով. յետոյ, հեռաւոր աղգերը կը պարտաւորեն տարեկան հարկ մը վճարելու իրենց հիմնած լայնածաւալ պետութեան:

Սեպաձև արձանագրութիւնները պայծառօրէն կը պատմեն այդ կարգի երկրակալ բռնապետներուն արարքները, և ասոնց տարած յաղթութիւնները զանազան երկիրներու վրայ, որոնց կարգէն է նաև մեր Հայաստանը:

Արդի հնարոյց գիտունները, յենյով ասորեստանեան և վանեան արձանագրութեանց վրայ, կուզան հաստատել թէ՛ Հայաստանը ներկայացնող նահանգները, այդ դարերուն մէջ, Դաշնակցական պետութիւն մը կը կազմէին, վեց կտոր մեծ ու փոքր իշխանութիւններէ բաղկացած:

Ահաւասիկ ասոնց անունները.—

1.— Ուրարդուի թագաւորութիւնը (Արարատեան) Հայաստանի ճիշդ կեդրոնը, բոլոր միւս քովի նահանգներուն ամենէն հզօրը, ամենէն ընդարձակը, հետեւաբար ամենէն ազդեցիկը: Ուրարդուի թագաւորութիւնը կ'իշխէր չրջակայ մեծ ու փոքր նախարարութիւններուն, որոնք աւատական դրութեամբ երկիրը կը կառավարէին իւրաքանչիւրն ունենալով իր սեփական նահանգը, բերդերը, զօրքերը և հպատակները: Արձանագրութեանց մէջ յիշուած այդ երկիրներուն սահմանները մինչև ցարդ ճշդուած չեն, և անունները միայն յայտնի են:

2.— Մաննա կամ Բիանիա (Վան), Բզնունեաց, այն է Վանայ ծովին հարաւ արեւելքի կողմը: Այս ընդարձակ, բարեբեր ու զեղեցիկ նահանգը պիտի կոչուէր յետոյ Վասպուրական:

3. Մուսաբիւր կամ Մուսասիւր (Մուշ) կամ Արշիւա (Արճէշ), զարծեալ նոյն ծովու հիւսիս արեւմտեան կողմը, որուն սահմանը կը սկսէր Արճէշէն և կը վերջանար Մուշ:

4. Նայիրի, Եփրատ ու Տիգրիս գետերուն վերի կողմերը կը տարածուէր ու կը պարունակէր Հայաստանի հարաւ-արեւմտեան երկո. նահանգները — Ալմնիխ ու Մուփի — :

5. Միլիզ, Նայիրիի արեւմտեան կողմի նահանգը, որուն մայրաքաղաքը Մելիտանէն էր, մեր օրերու Մալաթիան :

6. Միլզիս, հիւսիսեան Կարնոյ նահանգը, ինչպէս կը կարծեն արդի հետազոտները :

Այս վեց թագաւորութիւնները, ինչպէս յիշուեցաւ, հարկատու էին Ասորեստանի պետութեան, որուն լուծը թօթվելու համար յաճախ պատերազմներ կը մղէին անոր դէմ, միացեալ ուժերով : Հայ Դաշնակցական Պետութեան անդամներէն Մուշաշիր ու Միլզիս, կամ մեր հասկցած լեզուովը, Կարին ու Մուշ, սերտօրէն կապուած էին Ուրարդուի, որուն թագաւորներուն հետ միացած, կը պատերազմէին Ասորեստանի բռնակալներուն դէմ, ինչպէս ըսինք, անոր ազդեցութենէն ազատելու համար Հայաստանի հարաւային նահանգները, յոյն է, Մաննայի ու Նայիրիի թագաւորութիւնները, որոնցմէ Նայիրիի՝ մէկ մասը՝ վաղուց արդէն հարկատու եղած էր :

Ահաւասիկ այդ պատերազմներուն համառօտ նկարագրութիւնը, սեպածե արձանագրութիւններէն քաղուած :

Թկլատպալատար Ա. (1130), նոյնինքն Ս. Գիրքի Թագաւորութիւնը, կը մտադրէ Նայիրին ամբողջովին նուաճել : Տեսէք, ինչպէս այս երկրակալը կ'արձանագրէ իր յաղթութիւնները. «Անցայ, կ'ըսէ, անմատչելի ճահիճներու և ջերմոս կլիմայով երկիրներու մէջէն, ուր նախկին թագաւորներէն ո՛չ մէկը ոտք կոխած էր երբէք. գացի դժուարանցունելի ճամբաներէ և խիտ խիտ անտառներու մէջէն :»

Գարձեալ արձանագրութիւններէն կարելի է հետեցնել թէ՛ Վերին Եփրատի արեւելեան եղերքները բնակող ցեղերը, զրեթէ առանց ընդդիմութեան և առանց ո՛ր և է պատերազմական ձեռնարկէ, հպատակած էին Թկլատպալատար Ա.ի, որ սակայն, աճաղին դժուարութիւններու հանդիպեցաւ, երբ անցաւ Եփրատէն և Նայիրիի սահմաններէն ներս մտաւ : Նայիրիի բռնեքեք թագաւորները, կ'ըսէ արձանագրութիւնը, հաւաքեցին իրենց զօրքերը, քաջարար ճակատամարտ մղեցին Ասորեստանի դէմ, բայց ի վերջոյ յաղթուեցան և իրենց արզաքները պատանդ տարուեցան, ևն. :

Թկլատպալատար Ա. իր յաղթանակները յաւերժացնելու փափազով, Տիգրիսի սկունքներուն մօտերը կոթող մը կանգնելով, հոն արձանագրութիւն մը փորագրել կուտայ, որուն մէջ կը պարձենայ թէ՛ ինք երբ անգամ նուաճեր է Նայիրին : Բայց այդ սեպագիր յիշատակարանը, Ասորեստանի աշխարհակալին յաղթութիւններէն

աւելի, հայ ցեղին յամառ մաքառումը կ'ապացուցանէ, իր ազատութիւնը ձեռք բերելու համար. նոյնիսկ յաղթողներու խոստովանութիւններէն դատելով, կ'երևայ թէ Նայիրին մինչև վերջը մղած է իր պայքարը, Ազատութեան համար, պատեհ առիթներու սպասելով օտարին լուծը բողբոլովին թօթափելու համար: Բարեբաղդաբար սպասուած առիթը չուշանար, չուտով կը ներկայանայ: Թկատպարտասար Ա.ի յաջորդները թուլամորթ բռնապետներ էին, որոնց օրով Նայիրի կը յաջողի երկար ժամանակի մը համար ապահովել իր անկախութիւնը, այսպէս, ազատ մնալով ամէն արտաքին յարձակումներէ: Սակայն Ասորեստանի պետութիւնը, յետագայ դարերուն մէջ, կը վերստանայ իր նախկին զօրութիւնը, և Նինուէի թագաւորները, իրենց երկրին սահմանները կը փորձեն ընդարձակել նոր երկրակալութիւններով:

Այս երկրակալ բռնապետներու աչքին փուշ մըն էր Հայաստանը. սակայն այս գեղեցիկ երկրին լեռնոտ զիրքը, և բնակիչներուն յամառ ընդդիմութիւնը մշտական խոչընդոտներ էին: Թ. դարուն, իրարու յաջորդող թագաւորները, շարունակ յարձակումներ կը գործեն Հայաստանի վրայ, և կատաղի ընդհարումներէ և արիւնահեղ կոիւններէ վերջ, հազիւ կը յաջողին իրենց իշխանութեան տակ պահել Տիգրիսի գետահովտին վերին գաւառները միայն, և Վանայ ծովուն հարաւային կողմերը: Այնուհետև, մերթ ընդ մերթ կը փորձեն անցնիլ այդ սահմաններէն անդին, ասպատակելու համար լոկ Սև Մովու և Կասպից եզերքներուն գաւառները:

Նայիրի սակայն կը սրահէր իր անկախութիւնը. Ասուրնասիրբալ (882-857) կ'արշաւէ առաջին անգամ դէպի Հայաստանի արեւմտեան սահմանները, Նայիրիի վերնադաւառը: Հոս, արձանագրութիւնը կ'ըսէ թէ, բնիկները չը կարենայով ձակասամարտ մղել տափարակ դաշտի վրայ, կըստիպուին քաջուիլ լեռնոտ բարձունքները, և կ'ապաստանին անմատչելի տեղեր, անկոխ լեռներու կատարներուն վրայ:

Ահաւասիկ Ասուրնասիրբալի արձանագրութեան յիշեալ հատուածը. —

«Անմատչելի լեռներ քաջուեցան և ապաստանեցան անոնց կատարները, որպէս զի ես չը կարենամ ետեւնուն հասնիլ, որովհետև վեհափառ կատարները սրածայր սուրբրու պէս կը բարձրանան և միայն երկինքի թռչունները ճախրելով կրճան հասնիլ այն տեղ... Երեք օրէն բարձրացայ լեռան գագաթը, սարսափ տիտեցի անոնց թագատոյներուն վրայ... Անոնց դիակները ծառի տերեւներու նման ծածկեցին զառիվայրերը, իսկ մնացածները փախան ապաւինեցան ապաւամներու մէջ:»

Յեսոյ, Ասուրնասիրբալ, այդ կողմերու բոլոր գիւղերը կը հրդեհէ և իր աշխարհաւեր քայլերը կ'ուղղէ դէպի Կարփի կամ Կուրփիէ գաւառը, ուր, կ'ըսէ. «Սուրս քաւեցի, երկու հարիւր վարսուն պատերազմիկներու գլուխներ կտեցի, եւ անոցմէ բուրգեր կանգնեցի:»

Ասորեստանի այս արինսուշա բոնաւորին արշաւանքը կը կըրկնրէի 880-879ին: Նայիրին սասպտակելէ և անուր խոզթութիւններ ի գործ դնելէ յետոյ, երկրորդ անգամ կը մտնէ Կարփի երկիրը:

Հետեւեալ արձանագրութիւնը կը նկարագրէ Ասուրնասիրբալի այս երկրորդ արշաւանքին նախճիրները. —

«Քնակիչները թողուցին իրենց ամբողջներն ու զգեակները, և իրենց կեանքը փրկելու համար, փախան դէպի Մաննի հզօր երկիրը: Չանոնք հալածեցի, անոնց հազարաւոր պատերազմիկներուն զիակները լեռան վրայ ցանեցի, լեռը ծածկեցի և խոռոչները լեցուցի զիակներով: Երկու հարիւր գերիներ ողջ ողջ ինկած էին ձեռքս, ասոնց դաստակները կտրեցի:»

Ասուրնասիրբալ, Կարփին աւերելէ ու նուաճելէ յետոյ, իր բանակով կը քալէ դէպի արեւելք, Մաննայի թագաւորութեան սահմանները:

«Ճամբան, կ'ըսէ, հեղեղներու և դժուարանցանելի սեղերու հանդիպեցայ, ձգեցի կտրփերս ու ձիերս, և ոտքով ատաջացայ:»

Մաննայի մէկ մասը միայն նուաճած էր, երբ լուր կը հասնի թէ՛ արեւմտեան կողմերու բնակչութիւնները դարձեալ ապստամբած են. ուստի, կը ստիպուի ետ քաշուիլ ու վերստին յարձակում գործել Նայիրիի վրայ, սակայն, հոն ուրիշ աւելի վտանգաւոր ապստամբութեան մը դէմ գտնելով ինքզինք, կը պարտաւորուի ետ դառնալ և քաշուիլ իր պետութեան հարաւային կողմերը:

Ասուրնասիրբալի յաջորդը Սարմանասար Գ. (857-822) կը նուաճէ Նայիրին, զոր մինչև իր մահը կը պահէ իր իշխանութեան տակ: Յետոյ, իր հօր օրինակէն թելադրուած, կը փորձէ Մաննան ա նուաճել:

Այդ շրջանին է որ Ասորեստանի և Ուրարդուի թագաւորներուն միջև կը ծագին արձանագրութեանց մէջ յիշուած հռչակաւոր պատերազմները, որոնք տարիներով կը տեւեն և արիւնի հեղեղներով կ'ողողեն ամբողջ երկիրը: Նինուէի աշխարհակայները, եթէ հաւատք ընծայենք ասորեստանեան սեպածեւ արձանագրութեանց պարունակութեանը, իբր թէ փոռաւոր յաղթութիւններ տարած են Հայոց վրայ, բայց, ստոյգ է թէ՛ այդ պատերազմները շատ աղետաբեր եղած են Նինուէի թագաւորներուն համար, որովհետև Ուրարդուն աննկուն և աննուաճ մնացած է:

Սարմանասար Գ.ի ժամանակակից էր Ուրարտուի Արամ թագաւորը:

ւորը, որ իր դաշնակիցներով կը դիմադրէ Ասորեստանցիներուն, երբ ասոնք, առաջին անգամ ըլլալով, կը մտնեն Ուրարտու (841)։ Սակայն ի վերջոյ կը յաղթուի Սալմանասար Գ.էն։

Արամի կը յաջորդէ Սարգուրիս, որ պատերազմը կը շարունակի Սալմանասար Գ.ի դէմ, և սակայն, իր նախորդի բաղդին կը հանդիպի, երկու անգամ պարտութիւն կրելով (832 և 829)։ Այս յաղթութիւններով Սալմանասար կը յաջողի քանդել Ուրարտուի քաղաքներն ու բերդերը, ծանր տուրքերու տակ ճնշել ժողովուրդը, զրաւելով նոյնիսկ Արնիէ մայրաքաղաքը, սակայն այս բոլոր հարուածները չեն տար բազմացուած արդիւնքը. Հայերը կը մնան անընկճելի և Ուրարտուի հետ միացած, Մաննան ու Նայիրին ալ կը շարունակեն մաքսով, կատաղի կոխներ մղելով Ասորեստանցիներուն դէմ։ Յետոյ, Սալմանասար Գ.ի յաջորդը (822-810) մէկ քանի ասպատակութիւններ կը կազմակերպէ Նայիրիի վրայ, ինչպէս նաև անոր թուր Բին-Նիրարի Գ. (810-780) երկու անգամ կ'արշաւէ Մաննա։ Իսկ Սալմանասար Գ. (780-770), իր թագաւորութեան բոլոր տարիները կը պատերազմի Ուրարտուի դէմ, վեց անգամ կ'ասպատակէ իր վիթխարի բանակներով Հայաստանի այս հզօր թագաւորութեան վրայ, առանց սակայն կարենալ ձեռք բերելու ո՛ր և է յաջողութիւն, որովհետև Հայաստանը դարձեալ անուճակելի կը մնայ։ Ասորեստանի արշաւանքները կը դադրին այնուհետև մինչև Թէկլատպալասար Բ. (745-726)։ Այս հզօր երկրակալը կ'արշաւէ երկու անգամ Ուրարտու, որուն Սարգաթագաւորին յաղթելով, հաշտութեան կը ստիպէ զանի։

Արդի հնախօսներուն կարծիքով, այս յաջորդական պատերազմները, քաղաքակրթութեան տեսակէտով, բաւական արդիւնաւոր եղած են։ Թշնամական յարաբերութիւնները, որոնք դարերով շարունակուած են Ասորեստանի ու Հայաստանի միջև, մեծ ազդեցութիւն գործած են այս վերջինի բնակչութիւններուն բարքերուն ու անարկակերպին վրայ։ Հայերը, իրենց յատուկ ձիրքերով ու հակումներով, իւրացուցած են Ասորեստանցիներուն դաստիարակութիւնը, արուեստները, նոյնիսկ անոնց զրելու զրութիւնը։ Կը պատմուի թէ, Ուրարտուի թագաւորներէն Բելիզուրիս Ա., Նինուէէն իր արքունիքը բերել տրւած է զբազիրներ, որոնք իրենց լեզուով ու գիրերով արձանագրած են անոր գործերը, Ասորեստանի երկրակալներուն յատուկ գովեստներ հիւսելով ու տիտղոսներ չալչելով անոր։

Այս թագաւորին օրով, Ուրարտուն կ'որդեգրէ Նինուէէի լեզուն, որուն ուսուցումը պարտաւորիչ կը զառնայ մինչև Իշպուհին Ա.ի ժամանակը, երբ Ասորեստանի սեպագրութիւնը փոփոխութեան կ'ենթարկուի և տեղական բարբառներու վրայ կը ձեւուի, և այնուհետև

արքունական բոլոր արձանագրութիւնները հայերէն լեզուով կը խմբագրուին :

Թղլատոպոլսար Բ.ի ճնշման տակ կատարուած հաշտութիւնը չէր կրնար տեւական ըլլալ: Ասորեստանի ահարկու հակառակորդ մը կը ժառանգէ Ուրարտուի գահը, Ուրսա թագաւորը — ոմանց կարծիքով նոյնինքն Հրաչեայ կամ Հրչէ — , որ իր երկրին մեծութեան ու փառքին նախանձախնդիր, կը խորհի ասորեստանեան գերիշխանութիւնը ջնջել և հարաւային Հայաստանի սահմաններէն վանել անոր սղոյն-ցութիւնը: Ուստի, միաբանելով բոլոր իր զաշնակիցներուն հետ, կը փորձէ իրագործել այդ նպատակը: Նախ կը ջանայ Ասորեստանի պետութեան զաշնակցութենէն անջատել Մաննայի թագաւորը, և այս վերջինէն մերժուելու պարագային, անոր դէմ ապստամբութեան կը գրդուէ Մաննայի ժողովուրդը:

Ասորեստանի Սարուքին թագաւորը (721-704), իմացած ըլլալով այս զէպքերը, օգնութեան կը փութայ իր զաշնակիցին, յարձակումով կը գրաւէ Մաննայի Սուանդաքու ու Դուրդուքա քաղաքները, որոնք Ուրարտուի թագաւորին հաշուին ապստամբած և անցած էին անոր կողմը, երկու քաղաքներն ալ կը հրդեհէ և բնակիչները կը փոխադրէ Ասորիք (719):

Ասորեստանի թագաւորը կը պատրաստուէր իր յաղթական գունդերով առաջանալ Ուրարտուի վրայ, երբ կը լսէ թէ իր երկրի գանազան նահանգներուն մէջ նոր ապստամբութիւններ պայթած են: Շուտով Ասորեստան կը վերադառնայ և այդ ապստամբութիւնները զսպելու համար, ամբողջ երկու տարի կը կուռի, մոխրակոյտի մը վերածելով այդ նահանգները: Յետոյ, դարձեալ կ'ապագատակէ դէպի Հայաստան, ուր մեծ փոփոխութիւն մը կատարուած կը գտնէ. Մաննայի իրանդու թագաւորը մեռած, իր Ազա որդին խոռովութեան մէջ սպաննուած և ասոր յաջորդած էր Ուլուսուն, որ, Ուրարտուի Ուրսա թագաւորին քսաներկու բերդաքաղաքներ տուած էր իրր գրաւական իր հաւատարմութեան:

Ասորեստանի երկրակալը վրայ կը հասնի, Ուլուսունը կը հայածէ ու փախուստի կը մատնէ, և առաջ կը տանի իր ասպատատակութիւնները դէպի այն գաւառները, որոնք Ուրմիա լճին ու Վանայ նովուն միջեւ կը գտնուին:

Սարուքինի այս արշաւանքը նշանակուած է սեպագիր արձանագրութեանց մէջ. — «Միլդիս լեռան թագաւորը Բագատատի, կ'ըսէ, ձեռքս ինկաւ, և զանի ողջ ողջ մորթագերծ ըրի այն տեղը, ուր Ազան սպաննուած էր: Ապստամբ Ուլուսունը, վախնալով որ չըլլայ թէ իր գլխուն ալ գայ նոյն դժբաղդութիւնը, թողունի պէս փա-

խաւ, բայց յետոյ եկաւ իմ ոտքս ինկաւ և ներեցի և իր թագաւորութեան մէջ վերահաստատեցի զինք, ևն. 10)

Շարունակելով արձանագրութեանց ընթերցումը, կը տեսնենք թէ Սարուքին՝ Ուրարտուի Ուրսա թագաւորն ալ կ'ուզէր ձեռք ձգել, երբ ուրիշ նոր ապստամբութիւն մը կը հարկադրէ իրեն զէնքերը զէպի հարաւ դարձնելու (716)։ Ճիշդ այդ շրջանին է որ Ուլլուսուն, Ուրսայէն թելադրուած, վերստին կ'ընդվզի, թէ և Սարուքինի երկուսը բաւական կ'ըլլայ հանդարտեցնելու ապստամբութիւնը, և Ուլլուսունի երկիրը նուաճելու (714)։

Իսկ Ուրսա, առանձին, ճակատամարտ կը մղէ Ասորեստանի յաղթող երկրակալին դէմ, և չարաչար պարտութիւն մը կրելով, կը ստիպուի փախստական ապաստանիլ լեռները, որոնց մէջ, ամբողջ հինգ ամիս կը թափառի, առանց ապահով թաղստոց մը կարենալ գտնելու։ Ուրարտուն աւարի ու աւերի կը մատնուի և քաղաքներուն շատերը կ'անցնին Ուլլուսունի ձեռքը։ Յետոյ, Ուրսայի վերջին դաշնակիցը՝ Մուսասիրի Ուրզանա թագաւորն ալ կը յաղթուի։

Ուրարտուի տարարախտ թագաւորը, Ուրսա, լեռները թափառական, երբ կ'իմանայ այս ձախողութեանը արտաքին լուրը, յուսահատութենէն ինքնասպանութեան կը դիմէ և այդ կերպով վերջ կը դնէ իր կեանքին։

Այս վերջին զէպքերը քաղուած են Խորսապատ(*) զիւղին մէջ վերջերս գտնուած կարեւոր արձանագրութեան մը մէջէն, որուն շահեկան մանրամասնութիւնները կը փութանք տալ մեր ընթերցողներուն. —

« Մաննացի Իրանզուն, իր բոլոր կեանքին մէջ, հաւատարիմ ու հնազանդ մնացած էր աէրութեանս, բայց ճակատագիրը զանի առաւ տարաւ։ Իր հպատակները գահին վրայ բազմեցուցին անոր Ազա որդին։ Ուրարտուցի Ուրսան, Միլդիսի, Զիկարտուի և Միսիանտի լեռներու ժողովուրդներուն ու Մաննայի մեծամեծներուն հետ դաշնակցած, անոր հպատակները մղեց ապստամբութեան։ Ասոնք իրենց տիրոջ մարմինը լեռներու կատարներուն վրայ թողուցին։ Ազայի եղբայրը, Մաննացի Ուլլուսունը, զոր գահը բարձրացուցած էին, հակեցաւ Ուրսայի կողմը, որուն քսաներկու ամուր քաղաքներ տուաւ իրենց պահպան զօրքերով մէկտեղ։ Արամտութեանս մէջ հաշուեցի Ասուր

(*) Խորսապատ, Մուսուլի հիւսիսակողմը, զիւղակ մըն է, ճիւղն Իննուէի տեղէն մեկ քանի մըն հեռու։ Այդ զիւղակին մէջ, Պօրա, Ֆրանսական հիւպատոսը, ճիւղ պալատի մը աւերակները գտած է, Քրիստոսէ եօրր դար առաջ շինուած, Սաբուրին բողաւորին ձեռնովը, որուն գործերուն արձանագրութիւնն ալ կայ եղեր նոյն պալատին մէջ։

աստուծոյ բոլոր զինւորները և այն երկրին վրայ յարձակելու համար առջ քալեցի: Մաննացի Ուլլուսունը, մօտենալս տեսնելով, երեւան ելաւ իր զօրքով և բարձր լեռներու խոռոչներուն մէջ, բարձր տեղ մը կեցաւ: Գրաւեցի և մօխի դարձուցի անոր մայրաքաղաքը, նաև Իղիրիա և Արմիտ ահագին ամրոցները: Սպաննեցի Ուրարտուցի Ուրսային բոլոր կուսակիցները, իրենց բարձրարեւձ լեռներուն մէջ, իմ ձեռքովս երկու հարիւր յիսուն հօգի բռնեցի անոր գերդաստանէն, գրաւեցի 55 պարսպապատ քաղաքներ, որոնցմէ ուրը՝ հասարակ քաղաքներ էին, և Տասնըմէկ ալ՝ անմատչելի բերդեր: Ասորեստանի կցեցի Ուլլուսունի քսաներկու ամուր քաղաքները, զորոնք Ուրուան էր առեր: Այն ատեն, Ուլլուսուն իր բարձր լեռներէն վար իջաւ թռչունի արագութեամբ և եկաւ ինծի պազատելու: Ներեցի անոր իր անթիւ յանցանքները, իրեն ետ դարձուցի իր երկիրները և զինք վերստին հաստատեցի իր թագաւորական գահին վրայ: Ուրսայի գրաւած երկու ամրոցները, նաև քսաներկու մեծ քաղաքները տուի Ուլլուսունի և շատ աշխատեցայ ասոր երկրին խաղաղութեանը համար: Ուրսանա, Մուսասիր քաղաքին թաղաւորը, Ուրարտուցի Ուրսային ապաւինելով, մերժեր էր ինծի հպատակելու: Զօրութեամբս ու խորամանկութեամբս տիրեցի Մուսասիր քաղաքին և ան—Ուրզունա—, փախստական ապաստանեցաւ լեռներու մէջ: Տիրարար վարուեցայ Մուսասիրի դէմ, Ուրզանայի կինը, որդիները, աղջիկները, անասունները, պալատին մէջի գոյքերն ու գանձերը վերցուցի, և երկու հազար հօգի զերի տարի: Առի Ուրսայի Խալտի ու Բաղարատտի աստուածները, նոյնպէս Ուրզանայի աստուածները, իրենց բոլոր սրբազան անօթներով մէկտեղ: Ուրսա, Մուսասիրի առումը, և Խալտի աստուածին առեւանգումը լսելով, ինքնասպան եղաւ դաշոյնով և ինկաւ իր աւագանիին զիրկը: »

Սակայն, ինչպէս վերեւ յիշեցինք, Ուրսայի մահովը չը նուաճեցաւ Ուրարտուն: Իր եղբայրը՝ Արգիստիս (Ակայորդի^{*)}) յաջորդեց իրեն, շարունակեց պատերազմը և յաջողեցաւ ասորեստանցիներէն ետ խլել իր եղբոր կորսնցուցած գոււառները: Արգիստիսի յաղթական զէնքերէն սոսկումնահար, Ասորեստանցիները չկրցան իրենց ձեռքերուն մէջ պահել գոնէ Մաննայի երկիրը, որուն համար ձեռնարկած էին պատերազմի: Արգիստիս, այդ ուխտեալ թշնամիները դուրս վտարեց այդ նահանգէն. զոր իր տէրութեան կցելով, իր սեփական բնակութեան համար նոր քաղաք մը շինեց Վանայ ծովուն եզերքը: Եւ այս քաղաքի կառուցման համար, Նինուէէն մեծ թիւով ճարտարապետներ բերել տուաւ, որոնք հոյակապ շինութիւններով զարդարեցին զայն: Արգիստիսի անուան ու գործերը, որոնք կը յիշուին Վանայ

արձանագրութեանց մէջ, կարծել կուտան թէ այս թագաւորին կառուցած դաստակերտը պէտք է եղած ըլլայ նոյնիսկ Վանը:

Ասորեստանի երկրակալներուն մէջ, չնականորէն անգութ ու վայրագ բռնաւոր մը կը ներկայանայ Ասուրնասիրբայ (885-860), գերազանցելով գրեթէ բոլոր իր նախորդները, նոյն իսկ Թիլատպալասար Ա.ը (1108-1080), որուն ա՛յնքան եղերական գործունէութիւնը կը պատմեն արձանագրութիւնները:

Տեսէ՛ք, ի՛նչպէս ամբարտաւան ոճով մը կը թուէ իր... սխրագործութիւնները(°):

«Իէպի կասիարի առաջ խաղացի, կը պարծենայ Ասուրնասիրբայ իր տարեգրութեան մէջ: մօտեցայ կինարուի, որ Խուլայիայի բերդաքաղաք մըն է: Զօրքերուս գրո՛ տալովը, կատաղի ճակատամարտովս խոյացայ, տիրեցի քաղաքին: Անոնցմէ վեց հարիւր ռազմիկներ զէնքով գետին փռեցի, երեք հազար գերիներ կրակին մէջ այրեցի, անոնցմէ ո՛չ մէկը ողջ թողուցի իբր պատանդ: Անոնց քաղաքապետը, Խուլային՝ ողջ ողջ ձեռք ձգեցի: Անոնց դիակները ցիցերովրայ տնկեցի, անոնց տղաքները, մանչ թէ աղջիկ, խարոյկի մէջ այրեցի: Խուլային — անոնց քաղաքապետը — մորթազերծ ըրի, և հիւսեցի զանի Դամդամուսայի պարիսպին մէջ, աւերեցի քաղաքը, քանդեցի, հրով այրեցի: Տիրեցի Մարիբու քաղաքին և իր գաւառին. անոնց պատերազմիկներէն յիսուն հոգի զէնքով գետին կործանեցի. անոնցմէ բռնուած երկու հարիւր գերիները կրակի մէջ այրեցի» (Տարեգր. Ա. 106-111):

Նոյն տարեգրութեան մէջ (Ա. 116-Բ. 1) կը հանդիպինք հետեւեալ յիշատակարանին, որ չնականութեան կողմէ կը զլէ կ'անցնի բոլոր նախընթաց արձանագրութիւնները. —

«Առի անոնց աւարը, ինչքերը, արջառները, ոչխարները, կրակի մէջ այրեցի բազմաթիւ գերիներ, շատերն ալ ողջ ողջ բռնեցի, ասոնց ձեռքերն ու թեւերը կտրեցի, ոմանց քիթը, ականջները կտրեցի, շատերուն աչքերը փօրեցի. իսկ վերապրած մարդիկներուն մարմիններէն աչտարակ մը բարձրացուցի, կոթող մըն ալ՝ անոնց կառափներէն կանգնեցի: Իրենց քաղաքի ձառերուն վրայ վարսեցի անոնց զլուխները, անոնց արու տղաքները, աղջիկները կրակի մէջ այրեցի, աւերեցի քաղաքը, քանդեցի, կրակի տուի, ոչնչացուցի:»

Մասբէրօ, նոյն տարեգրութեան մէջ (էջ 430) Ասուրնասիրբայի արձանագրութեան կցած է հետեւեալ հատուածը. —

«Իէմքս կը զուարթանայ աւերակներու վրայ, բարկութեանս յագեցուաին մէջ կը գտնեմ գոհունակութիւնս:»

Ասորեստանեան պատմութիւնը, ակներև կը տեսնենք, անվեր-

ջանալի շարք մըն է արիւնագանգ արչաւանքներու, վայրագութիւններու և աներևակայելի ոճիրներու, որոնք, դժբաղդաբար, համաճարակի մը պէս, շուտով տարափոխուած են ուրիշ ժողովուրդներու: Այդ տիեզերակայ պետութեան բոլոր բռնաւորները, մարդակերպ ճիւղներ էին, որոնց նախճիրները, բեւեռագիր յիշատակարաններով յաւերժացած, խորհրդանշանը պիտի ներկայացնեն մարդկային անգթութիւններուն:

Նինուէի բռնաւորներէն վար չեն մնար Ուրարդուի վեհապետները, որոնք շուտով վարակուելով անոնց երկրակալութեան ախտովը, իրենց ճիւղնապատ լեռներուն գագաթները թառած, յանկարծ դէպի դաշտերը կը խուժէին հեղեղօրէն և հուրի սուրի կը մասնէին հանդարտարարոյ բնակչութիւնները: Ատոնց մէջ առաջին կարգը զրուած է Ուրարդուի թագաւորներուն ամենէն հռչակաւորը, Արգիստիս Ա., Ասուրնասիրբալի երկրորդ տագաբութիւնը, որ (Տարեգր. Արգիստիս Ա. ի Ա. 12-15), իր հակառակորդներուն՝ Ասորեստանի երկրակալներուն օրինակին հետեւելով, արձանագրութեանց մէջ ո՛րքան պարծանքով կը պատմէ թէ ինչպէս այրեց տաճարները, քանի՛ քանի քաղաքներ քանդեց. Արգիստիս Ա. մէկիկ մէկիկ կը թուէ իր գերիները, և ասոնց վրայ ի գործ դրուած դժօխային խոշտանգումները. ո՛րքան խրոխտ շեշտող մը կը պատմէ կիներու, աղջիկներու և տղաքներու առեւանգումներ, հազարաւոր մարդերու սպանութիւններ, ճիւղերու, արջառներու և ոչխարներու կողոպուտ ու թալան: Նոյն արձանագրութեանց մէջ կը յիշէ թէ գերի բռնած է տասնինը հազար երկու հարիւր յիսունըհինգ մանուկներ, տասը հազար հարիւր քառսուն ազատ մարդիկներ, քսաներեք հազար երկու հարիւր ութսուն կիներ, տասներկու հազար վեց հարիւր եօթանասունըհինգ զինուորներ, հազար հարիւր չորս հրիվարներ, երեսունըհինգ հազար տասնըվեց եզներ, և տասնըմէկ հազար ութը հարիւր քսաներեք ոչխարներ: Գարձևալ Արգիստիս Ա. ի արձանագրութեանց մէջ կը կարդանք թէ ինք քսանըչորս հազար երկու հարիւր եօթանասունը չորս այրեր, կիներ ու տղաքներ կապաղովկիայէն գերի տարած է մինչև Վան: Նոյնպէս գերի վարած Միլիդի աղջիկները, նաև Տուալասուի պատանիները, ևն.:

Ուրարդուի թագաւորներուն մէջ միայն Արգիստ Ա.ը չէ՛ որ արձանագրել տուած է իր յաղթութիւնները. Սարգուրիս Բ., Ուրսա կամ Ռուսաս Ա., Մենուաս, ևն. գրեթէ միւսնոյն գործերը կը պատմեն:

Այս էջերուն մէջ կ'արտագրենք կարգով միւշև ցարդ երեւան հանուած սեպաձև արձանագրութիւնները, որոնց մէջ, Մենուաս, Արգիստիս Ա. Սարգուրիս Բ., Ուրսա կամ Ռուսաս Ա. Բ. Գ. և

Ուրարդուի ուրիշ թագաւորները կը նկարագրեն իրենց յաղթական արշաւանքները .

Անա՛ Մենուասի արձանագրութիւններէն երեք նմոյշներ, որոնք ծանօթ են Քաւարունի արձանագրութիւն անունով :

Ա. — « Ես կ'ազօթէի Խաղդին (չաստուած), հզօր տիրապետին, որ Էրիդուահի երկիրը տուաւ, որ Լուհիունիինի քաղաքը տուաւ ընծայ Մենուային, Խալտի Տուշին, Խալտի Հզօրին, Պարդեւողին, ողորմած Խալտիացիներուն կ'ազօթէի ես Իշպուենիի որդի՝ Մենուային համար: Ես ընծաներով մօտեցայ Խալտիին: Մենուա կ'ըսէ. — Ես եկայ Էրիդուահի երկիրը, Լուհիունիինի քաղաքը, արքայական քաղաքը այց ելաւ Խալդի՝ Մենուային՝ Իշպուենի որդիին: Ես տիրեցի քաղաքին, Լուհիունիինի անոր անունը: Մենուա կ'ըսէ. Ո՛վ որ այս արձանագրութիւնը կը հեռացնէ, ո՛վ որ անունը կը ջնջէ, ո՛վ որ գետին կը կործանէ զայդ. Ուրիշ ո՛վ որ կ'իւրացնէ (ըսելով թէ) ե՛ս նուաճեցի Լուհիունիինի քաղաքը: Խալտի, Թէէիբա, Արդինի աստուածները այդպիսի մարդուն անունը, անոր ընտանիքը, անոր քաղաքը կրակին ու ջուրին կը մատնեն: »

Բ. — « Իշպուենիի որդին Մենուա վերականգնեց Խալտի աստուածին տիրոջ այս քանդուած տունը, վերականգնեց կործանուած արքունիքը, շինեց Մենուայի բնակութեան տեղ, Մենուանիինի կոչեց. — « Մեծ Խալտիացոց, Մենուային, Իշպուենիի որդիին, հզօր թագաւորին, Բիւնիայի (Վան) երկրին արքային, Տուշպա քաղաքը բնակողին: »

Գ. — « Ողորմած Խալտիացոց Մենուա Իրկուանի երկիրը, աշխարհի քաղաքը Լուհիունիին. այս Մենուա վերականգնեց յետոյ Խալտիինի կործանուած պալատին դռները, Մենուա կ'ըսէ. « Վերանորոգեցի, շինեցի, Մենուա (որդի) Իշպուենիի: »

Արգիշտիս Ա.ի զէնքերուն յաջողութիւնները կը գտնենք պատմբուսման Սարգամբեի, Սուրմալուի, Վուլիւնանի և Գանլընայի սեպագիր արձանագրութեանց մէջ:

Ա. — Սարգամբեի արձանագրութիւնը քանքովեց տղերէ բաղկացած, 1878ին երեւան հանուած է Ա. Գ. Երիցեանցի ձեռքով, որմէ տեղեկութիւններ ստացած է Իվանովսկի, և զոր Նիկոլսկի թարգմանած է.

« Ես տիրեցի քաղաքին Անուրեանի,
Աշտուհանի երկրին քաղաքներուն,
. բերդ կանգնեցի,
Աշտուհանի քաղաքին ես տիրեցի,
Էտիունի ոռոգեալ երկիրը .
. »

. Սալտի .

Արգիշտի կ'ըսէ .

Ըստ հրամանի աստուածին Սալտի ,

Թէիշրա , Արդինի աստուածներուն

Յաջողութիւն տան ինծի աստուածները

Երկու կանգուն . . . ես խլեցի

Կարտախի քաղաքէն

. . . ես բաժնեցի զանոնք

100 20 100

150 6000 100

Մեծ Սալտիացիներուն ,

Արգիշտի , Մենուայի որդիին ,

Հզօր արքային , Բիանայի երկրի արքային ,

Որ Տուշպա քաղաքը կը բնակի :

Արգիշտի կ'ըսէ .

Ով որ այս արձանագրութիւնը կը հեռացնէ ,

Ով որ այս մարդուն անունը կը ջնջէ ,

Սալտի , Թէիշրա , Արդինի աստուածները . . .

Մնացեալ երկու տողերը վերձանելի չեն :

Բ. Սուրմալուի արձանագրութիւնը , 1886ին , Սմրատեան Տ .

Մեսրոպ Արքեպիսկոպոսին ձեռքովը գտնուած , Սուրմալու գաւառի Ղազանջի գիւղին մէջ , Երասխի աջ եզերքը , Արմաւիրէ տասնըհինգ վերստ հեռաւորութեան մը վրայ : Յետոյ Գալուստ Տէր Մովսէսեան ընդօրինակած է զայն և ղրկած՝ Մոսկուայի Կայսերական Հնագիտական Ընկերութեան :

«Մեծ Սալտիացիներուն , Արգիշտի , Մենուայի որդին շինեց այս տունը : »

Գ. Ղուլիմանի արձանագրութիւնը . — Ղուլիմանը եօթանասուն տուներէ բաղկացած գիւղ մըն է , Արագածէն բղխող Գարանկա լեռնոտ գետակին եզերքին վրայ շինուած , Աղեքսանդրապօլէն 16 վերստ հեռու : Այս արձանագրութիւնը թարգմանուած է Նիկոլսկիէն . —

«Սալտիին կ'ազօթէի ես , հզօր տիրոջ , որ Կուլիտինի երկիրը ընծայ տուաւ Արգիստիսին . ընծաներով մօտեցայ Սալտիին : Արգիշտիս կ'ըսէ . ես նուաճեցի Գուրուբանի քաղաքը—Կուլիտիինի երկիրը : »

Դ. Գանլընայի արձանագրութիւնը . — Գանլընա , խորունկ ու լայն ձորի մը մէջ , Արփա Չայի (Ախուրեան) ձախ եզերքը , Ալեքսանդրապօլէն 8 վերստ դէպի հիւսիս արեւմուտք , մեծատարած գիւղ մըն է հին Մարմաշէնի շքեղ սաճարովը : Նիկոլսկին թարգմանած է այս արձանագրութիւնը , որուն մէջի Էրիանի անունը Երասխի հետ կը նոյնացնէ :

«Մեծ Խալտիացիներու Արգիշտի կ'ըսէ. ես նուաճեցի Էրիանի երկիրը, ես նուաճեցի Իրդանիունի երկրէն Իշխաուլու:»

Ո՛չ նուազ շահեկան են Արգիտտիսի յաջորդներուն արձանագրութիւնները, զորոնք քաղելով Գէորգ-Մեսրոպի «Ուրարտու»էն, հոս կ'արտագրենք:

Ահա՛ Սարդուրիս Բ.ի սեպածեւ արձանագրութիւններէն մէկ քանիները:

Ա. Ղազալուի բեւեռագիրը. — Նիկուլսկիի Թիւ ժե. բեւեռագիրն է այս: Հինգերորդ տողին Ուրտահինի անունը նոյնացուցած է Ուրարտուի հետ:

«Ես կ'աղօթէի Խալտիի, հզօր տիրոջ,
Որ տուաւ Արքուքինի (Արկուկինի) երկիրը.

Սարդուրի կ'ըսէ, մօտենալով(.²)

Ես նուաճեցի Արքուքինի երկիրը

Չատեցի Ուրտահինի երկրէն,

Մեծ Խալտիացիներուն

Սարդուրի, որդի Արգիշտիի

Հզօր արքային, մեծ արքային, երկիրներու արքային,

Որ կը բնակի Տուչպա քաղաքիս մէջ:» [արքայիցա րքային,

Բ. Աղամխանի բեւեռագիրը. —

«Ազատ Խալտիացիներուն

Սարդուրի, որդի Արգիշտիի,

Կ'ըսէ. Տուլիհունի քաղաքը, արքայական քաղաք,

Սինայիբիի Լուերիի որդիին,

Իրբեւ աւար նուաճեցի, Սինայիբի

Թագաւորը, այրերը, կիները, ես հանեցի

Չատեցի Ուտուրիեանէնի երկրէն:»

Գ. Մոլլապայազիի բեւեռագրերը. — Ասոնք երեք բեւեռագրեր են, 1884ին, Սմբատեանց Մեսրոպ Արքեպիսկոպոսին ձեռքովը գտնուած, Մոլլապայազիտ գիւղին մէջ: Ասոնցմէ առաջինը, կարծելով թէ բոլորովին անընթեռնկի են, գտնուած տեղը կը թաղէ, և վերջին երկուքը միայն կը փոխադրէ Էջմիածին: Նիկուլսկի, 1893ին Էջմիածին գալով, կ'իմանայ եղելութիւնը, թաղուած արձանագրութիւնն ալ Էջմիածին փոխադրել կու տայ և կը կարդայ զայն. իսկ քարը Գէորգեան շէմարանին թանգարանը կը գրուի:

Ահաւասիկ այդ երեք բեւեռագրերը:

1. — «. . . Չո՛ն Սարդուրի, Արգիշտիի որդի. . . . ասպարհներ, Մեծ Խալտիին, հզօր ու ողորմած Խալտիին. . . երջանիկ օրեր. . . ջրմուղ ամուր: Սարդուրի 20 տուհինի (յայտնի չէ ինչ) արեգական

աստուածին առջև բերաւ ընտրելագոյն աշխարհներու Մեծ խալտիաց-
ւոց Սարգուրի, Արգիշտի որդիք»

2. — Քաղաք փայտէ շինութիւններ այս ձեռնարկութիւնը...
զոհ խալտինա... Սարգուրի, Արգիշտի որդի... ասպարհներ խալտի
հօր, ողորմած»:

Մնացեալը 1ի Վերջին տողերուն կրկնութիւնն է:

3. — «Խալտի տիրոջ այս տունը, Սարգուրի, Արգիշտի որդին
վերականգնեց. կործանուած ասպարհները նորոգեց, զարդարեց,
ամուր պատերը, իւրաքանչիւրը, Սարգուրի, Արգիշտի որդին բարձ-
րացուց.»

Ահա՛ Ռուսաս Ա. Բ. և Գ. թագաւորներուն արձանագրութիւն-
ները.

1. Գոլանը գրոսնի բեւեռագիրը, որ Ռուսաս Ա.ի կը պատ-
կանի.

«Ողորմած խալտիացուց... Ռուսաս,
Սարգուրիի որդին՝ ես, երբ այս կրկիրը
Մէկ վարչութեան(°) ... ենթարկուեցաւ,
Երկիրն Աշահունի, երկիրն Ուէլիդա, երկիրն Կումերուհի,
Երկիրն Արքուքինի 4 թագաւորներ այխարհին, որ կը կոչուի
«լճային»(*)
Երկիրն Ուրիմնի, երկիրն Շանատուաինի, երկիրն Տէրուիշաինի,
Երկիրն Ռիշուաինի, երկիրն Զուաինի, երկիրն Ակուանի, երկիրն
Ամանենի
Երկիրն Իրկիմաինի, երկիրն Էլաինի, երկիրն Էռիէլտուաինի,
Երկիրն Արդամանիունի, երկիրն Գուրիաինի(**), երկիրն Ալգիրանի,
Երկիրն Պերուաինի(***) , երկիրն Մելաինի, երկիրն Ուշեղուինի,
Երկիրն Ատաղայնի, երկիրն Էրիաինի, երկիրն Ագաիբուունիինի,
19 թագաւորներ այխարհին, կը կոչուի Ռիդուանի, հեռուոր երկրի.

(*) Այս արձանագրութեան հինգերորդ տողին «լճային» բարգման-
ւած բառը՝ Սիւրիա է, որ, Նիկոլաբի կարծիքով, հաւանականօրէն
Կեօֆ Զայի կամ Գեղամայ ձովին նախկին անունն էր, ուրկէ ծագած
կը բուի նահանգին անունը՝ ՍԻՆՆԻՔ:

(**) Այս արձանագրութեան իններորդ տողին մեջի գուրիաինի
անունը՝ Գաւնի հետ նոյնը կը կարծէ Նիկոլսկին.

(***) Դարձեալ այս արձանագրութեան 10րդ տողին մեջ Պիւ-
ւաինին՝ Ագարանը կը կարծէ Նիկոլսկի, նոյնպէս, Մելաինին՝ Մող-
նին, եւ Ուշեղուինին՝ Օշականը:

Հարկատու ընդամէնը 23 թագաւոր միասին եւ առի .
 Այր (և) կին Բիայնա, երկիրն ալ դուրս հանեցի այս տարի .
 Ես նորոգեցի Ռուսա պալատներ
 երկիրներ

Ռէխչրա աստուածին այս կործանուած մեհեանը եւ նորոգեցի
 Ռէխչրա աստուած . . . »

Արգիշտի որդին Ռուսաս Բ. կանգնած է Զուարթնոց եկեղեցիից
 արձանագրութիւնը, որ 47 տողերէ բաղկացած, թարգմանուած է ծա-
 նօթ բանասէր Կ. Յ. Բամսաջեանէ, (Բանասէր, Դ. Տարի 1901, էջ
 37-38) :

« Առ Խաղզի աստուածն , տեառն աշխարհի , այս
 Կոթողը Ռուսա

Արգիշտեան շինել տուաւ :

Առ մեծանուն խալտիացիս :

Արգիշտեան Ռուսա

Կ'ըսէ . — Կուսուրլի գաւառը նուաճեցի ,

Ամէն ինչ որ ամէն կողմէն կը պատկանէր անոր

Եւ իր ամբողջ սահմանը . . .

Իշխանն երկրի , Խաղզի , շնորհեց ինձ (.^o) .

Ես այս յուշարձանը

Կանգնեցի , նոճի (.^o) և կաղնի (.^o) ծառերով այգի մը

Անոր կեդրոնը (.^o) անկեցի .

Անոր կեդրոնը քաղաք մը հաստատելու համար

Իդարունի գետէն ջրմուղ մը

Պեղել տուի և գինեձօնք՝ — յանուն

Գործադրութեան Ռուսայի (հրամանաց) —

Ընդունեցիս Ջրմուղի տան պարիսպը շինուեցաւ (.^o) :

(Արգ) Խաղզի աստուածին գառնուկ մը

Պարտին զոհել : (Դարձեալ) Խաղզի աստուածին ոչխար մը ,

Զոհի ոչխար մը Թէխչրա աստուծոյ , ոչխար մը Արգի աստուծոյ ,

Այդ աստուածներուն իրր ընծայ ներկայելով (.^o) :

Ջրի աւազանի առատութեան համար (.^o)

Ուլ մը պէտք է զոհել Խաղզի աստուծոյ , (դարձեալ)

Ոչխար մը Խաղզի աստուծոյ , զոհի ոչխար մը Թէխչրա աստուծոյ ,

Ոչխար մը Արգի աստուծոյ , — այդ աստուածներուն իրր ընծայ

Ի զիմաց Արգիշտեան Ռուսայի . (որ է) [ներկայելով (.^o) :

Արքայ հօր , արքայ մեծ , արքայ

Աշխարհի , արքայ Վանեցոց ,

Արքայ արքայից եւս և

Տոսպ քաղաքի :

Ռուսա Արգիշտեան

Կ'ըսէ . ո՛վ որ այս արձանագրութիւնը
Եղծէ , ո՛վ որ (վրայի) անունը ջնջէ ,
Ո՛վ որ այս կարգադրութիւններն իրեն վերագրէ ,
Ո՛վ որ գետին տապալէ ,
Ո՛վ որ ջրի մէջ ձգէ ,
Ո՛վ որ ինչ տեսակ անձ ըլլայ թող ըլլայ՝ պնդէ թէ
« Ես կանգնեցի » , ո՛վ որ
Անունս ջնջէ և իր
Անունը հոն դնէ , — ըլլայ ան
Վանեցի մը , ըլլայ
Լուլուբեցի մը , — որ Խաղզի ,
Թէխչրա , Արդի աստուածները
Թէ՛ անոր անունը , թէ՛ անոր
Ամբողջ ընտանիքը (.) և թէ՛
Ազգականները (.) , բոլորը մէկէն ,
Ջնջեն երկուս վրայէն : »

Արմաւիրի ստորոտը Ռուսա Գ.ի արձանագրութիւն մըն այ գրա-
ծուած է դարձեալ Սմբատեանց Մեսրոպ Արքեպիսկոպոսին ձեռքովը ,
1869ին : Մինչև 1893 թուականը կարգացում չէր այդ արձանագրու-
թիւնը , զոր Նիկոլսկին լուսանկարած ու կարգացած է :

Ահա՛ւասիկ թարգմանութիւնը .

« Ռուսա , որդի էրիմենի , այս սուր շինեց ամբացուց այս 1432
Մարտի... »

Թէ՛ Ասորեստանի և թէ՛ Ուրարտուի թագաւորներուն բեւեռագիր
արձանագրութիւնները բաւական պերճախօս են , հաստատելու համար
այս երկու պետութիւններուն միջև անընդհատորէն տեղի ունեցած
արիւնհանգ ընդհարումները , միեւնոյն ժամանակ , Ուրարտուի անկախ
դիրքը , զոր կրցած են իր թագաւորները պահել երկար տանն :

Յաւէտ ողբացեալ ուսուցիչ Ստեփան Պալասանեան , հակիրճօրէն
պատմելէ յետոյ ասորեստանեան գերիշխանութեան շրջանին մէկ քանի
կարեւոր դէպքերը , հետեւեալ կուս սոգերուն մէջ կ'ամփոփէ է . դա-
րու (Ք . Ա .) Հայաստանը .


« Այնուհետեւ , կ'ըսէ Պալասանեան , երբէք յիշատակութիւն մը
զինքն ընեք Հայաստանի մասին , մինչև Ասորեստանի պետութեան կոր-
ծանու մը (708-606) . Կա՛մ այն է թէ այդ 100 տարուան ընթացքում ,
Հայերը բոլորովին անկախ են եղեր և Հայաստան ազատ է մնացեր
Ասորեստանի թագաւորներուն ազդեցութենէն , և կա՛մ , թերեւս պա-

տերազմներ տեղի ունեցած են, բայց ձախող ելք են ունեցեր Ասորեստանցիներուն համար և այս պատճառով չեն արձանագրուեր: Հայոց պատմութեան մէջ վկայութիւն մը կայ, որով կը հաստատուի թէ Հայաստանը է. զարուն (Ք. Ա.) ազատ էր Ասորեստանցիներու իշխանութենէն: — Սենեքերիմ թագաւորին որդիները, Ագրամելէք և Սանասար, իրենց հայրը սպաննելով, Հայաստան ապաստանեցան և և սիրալիր ընդունելութիւն մը գտան Պարոյրի հօր՝ Սկայորդի նահապետին կողմէն (680): Եթէ այդ զարուն, Ասորեստանցիները ո՛ր և է ազդեցութիւն ունեցած ըլլային Հայաստանի վրայ, ո՛չ հայրասպան իշխանները կը համարձակէին փախչիլ հոն, ո՛չ ալ Սկայորդին կրնար ընդունիլ և ասոնց բնակութեան տեղեր յատկացնել իր երկրին մէջ: »

Ասորեստանի լուծը ծանր էր Հայաստանի համար և այդ պատճառով է որ մեր թագաւորները յաճախ մարտնչած ու մաքառած են, ձեռք բերելու համար իրենց երկրին բացարձակ անկախութիւնը: Սակայն, ասորեստանեան տիեզերակալ պետութեան ալ վերջին ժամը կը հնչէ և այդ վիթխարի հսկան կը տապալի երկու նոր ու հզօր հակաակորդներու հարուածներուն տակ:

Աւելորդ է ըսել թէ, այդ երկու հակաակորդները Մարաստանի ու Պարսկաստանի պետութիւնները պիտի ըլլային, որոնց սահմանուած էր իրենց միահեծան գահը հիմնել Ասորեստանի անհուն աւերակներուն վրայ, ինչպէս արդէն տեսանք ներկայ պատմութեանս ընթացքին մէջ:

Ուստի, յաջորդ գլուխներուն մէջ, պիտի ջանանք պայծառօրէն պատկերացնել հայ ազգին կեանքը և անոր դիրքը, մարական ու պարսկական գերակշիռ ազդեցութիւններուն հանդէպ, չը մոռնալով միեւնոյն ժամանակ, ամիոփ ուսումնասիրութեան մը մէջ, վերապրեցնել մեր նախաքրիստոնէական-ազգային քաղաքակրթութիւնը, իր բազմապատիկ ձևերուն մէջ:



Ասորեսանի ժառանգորդներ՝ Մարասան, Բարեխասան, և յետոյ՝
Վարակասան. — Պարակական մեծ պետութիւնը և իր ներքին
կազմակերպութիւնը. — Արուսիքի զեղխութիւններ.

Նախարարութիւններ՝ մանրանկարներ կեդրոնական արուսիքին.

Հայոց դերը՝ յունապարսկական պատերազմներուն մէջ.

Արեւմուտքին յաղթանակը՝ Արեւելի վրայ. — Մոլար
կարծիքներ. — Կրօնային ազգակցութիւն.

Աղետաւորի երեւումը. — Հայերը

Հելլենականութեան հանդէպ.

Հայերը պարսկական ազդեցութեան տակ.

Պենիսուսի քաղաքային արձանա-

գրութիւնը. — Հայասանի

սասրապութիւնը:

—

Պատմութեան ընթացքին մէջ տեսանք արդէն թէ ի՛նչպէս կոր-
ծանեցաւ Ասորեստանի տիեզերակալ պետութիւնը, թէ ի՛նչպէս փլաւ
այդ վիթխարի շէնքը, իր սեփական ուժին ներքեւ, և թէ ի՛նչպէս,
Մարաստանի, Հայաստանի, Բարեխաստանի միացեալ ուժերը Նինուէ
խուժեցին և այդ երկրասասան նակայի գլխուն իջեցուցին վճռական
մահացու հարուածը:

Այդ շրջանը, տիեզերական պատմութեան մէջ, ամենէն շահեկան
շրջանը կը համարուի, այնպէս որ կարելի չէ հարեւանցի ակնարկով
մը բաւականանալ: Ուստի կը փափաքինք մեր ընթերցողներուն տայ
հետեւեալ տեսութիւնները, քաղելով զանոնք յարգելի Լեօի Ս. Մեծ-
րովիցէն: —

«Մարաստանը, կործանելով Ասորեստանը, տիրացաւ անոր ժա-
ռանգութեան: Պարզակեաց, խտտաբարոյ ժողովուրդ մըն էր, բայց
ստացած ժառանգութիւնը շուտով փոխեց զանի: Նինուէի ամբաւ
հարստութիւններուն հետ, ասորեստանեան կարգերն ալ մտան Մա-
րաստանի մէջ: Բայց իրեն վիճակուած չէր երկար առին վայելել
ասիական մեծ պետութեան փառքը: Անոր ժառանգորդն ալ պատ-
րաստ էր արդէն, նոյնինքն իր ցեղակից Պարսկաստանը:

«Պարսից ժողովուրդը պատմական բեմին վրայ կ'երևնայ նոյն-
պէս պարզասէր, հանգարտ երկրագործ, արիական ազգ մը, որ ունէր

խաղաղութիւն և աշխարհաշինութիւն քարոզող կրօնք մը: Բայց Պարսկաստանը չմնաց կոյս երկիր մը: Չեռք առաւ նուաճողական քաղաքականութիւնը. անչափօրէն ընդարձակեց իր սահմանները, և ինքզինք ենթարկեց ասիական մեծ պետութեան ճակատագրին: Մարասանէն ստանալով Ասորեստանի ժառանգութիւնը, կազմակերպուեցաւ միեւնոյն բնապետական սկզբունքներու վրայ, իր բարքերը փոփոխելով, սակաւապէս ապրելակերպէն անցնելով դէպի պերճանք ու փառկասիրութիւն: Նոյն իսկ իր կրօնը, օտար ազդեցութեանց տակ, սկսաւ կերպարանափոխուիլ, կորսնցնել իր նախնական պարզութիւնը, իր վերին աստիճանի գեղեցիկ բարոյական հիմքը:

«Իրանի պետութեան փայլին և ուժին առջև նսեմացաւ նոյնիսկ Ասորեստանը: Ասիան դեռ չէր տեսած այդպիսի տնազին տարածութիւն մը, մէկ իշխողի զայնսունին ենթարկուած, Հնդկաստանէն մինչև Միջերկրական Օվոլը, և Նեղոսի հովիտէն մինչև Արալեան լիճը, ամէն ազգ, ամէն լեզու, Պարսից գէնքին հպատակած էին: Այս վիթխարի մարմնի կեդրոնն ալ, ինչպէս Ասորեստանի մէջ, անսահման միանձեան թաղաւորն էր, որուն առջև ամէն ինչ կը սողար ստրկօրէն: Պարսկական բնապետութիւնը քանի մը քայլ անդին անցաւ իր ասորեստանեան նախատիպէն: Աւելի սաստկացաւ նուաճողական թափը, աւելի նպատակայարմար կարգեր մտցուեցան, աճագին տարածութիւններու վրայ սիւսուած միլիոնաւոր ժողովուրդները կառավարելու համար:

«Աքեմենեան Շահերուն մէջ կան մէկ քանիներ, որոնք մեծ հռչակ հանած են պատմութեան մէջ: Ասոնք նուաճելու զացին այն ամէնը, ինչ որ կարելի էր նուաճել, յաճախ առանց նախապէս գիտցած ըլլալու թէ ո՛ւր կը գտնուին այդ նուաճելի ազգերը, թէ՛ ո՛ր երկրի զաւակներ են ասոնք: Քանի մը բարենորոգումներ, որոնք այդ երկրակայներու գործերն են, ցոյց կու տան թէ բռնակալութիւնը ձգտումներ ունէր կատարելագործուելու: Այսպէս, Աքեմենեանները մտցուցին դրամի զրութիւնը, ստեղծեցին բոսրայի հաղորդակցութիւնը, որ սակայն լո՛ւկ զինւորական նպատակներու կը ծառայէր: Բարկաւութիւնները չփոխեցին, ի հարկէ, ասիականութեան ոգին: Բռնապետութիւնը նոյնն էր, ժողովուրդը՝ իրաւաչուրկ ու խեղճ: Ութսուն միլիոն հպատակներու բերած հարկերը կը զիջուէին Շահերու պալատներու նկուղներուն մէջ, ուր կ'մնային առանց գործածութեան, միմիայն առասպելային քանակութեան մը հասցնելու համար Իրանի տիրոջ հարստութիւնը:

«Պետական կազմակերպութիւնը մնաց անփոփոխ, նոյն իսկ այն մտաին մէջ ալ, որ նուաճեալ ազգերուն կը վերաբերէր: Պարսկական երկրակալութիւնը քանի՛ տարբեր ազգեր ու մշակոյթներ հաւաքած

էր իր ձեռքին տակ: Բայց ատիկա, ներքին կապերէ, փոխադարձ համերաշխութիւնէ զուրկ հաւաքածոյ մըն էր: Եւ այդ բոլոր բաժան բաժան մասնիկներուն վրայ՝ լուծը միայն կը թազաւորէր, հպատակութեան լուծը, որ կ'արտայայտուէր լոկ հարկեր տալով: Պարսիկները չէին դպչեր իրենց նուաճած ազգերուն տեղական ներքին կազմակերպութեան, այնպէս որ մէն մի ազգ կը կառավարուէր իր ունեղական սովորոյթներով:

« Թէ ի՞նչ բարբարոսային ըմբռնումներ կը տիրէին Իրանի լայնատարած պետութեան մէջ, ցոյց կուտան այն հարկերը, զոր իւրաքանչիւր երկիր կը վճարէր Պարսից արքունիքին: Հերոդոտ կը պատմէ թէ Պարսից թագաւորը՝ Բարեղունէն և Ասորեստանէն կը ստանար ամէն տարի 1000 տաղանդ արծաթ և 500 ներքինացած երախաներ. իսկ Կողքիսցիները, կը շարունակէ նոյն պատմահայրը, իւրաքանչիւր հինգ տարին անգամ մը կուտային 100 երախաներ և 100 ազջիկներ: Այսպիսի հարկեր տուող երկիրները զժրջող էին, բայց նուաճ զժրջող էր ընդունողը:

« Եւ միլիոնները կը կեղեքուէին այսպէս, առասպելական փարթաւութեան մէջ պահելու համար Իրանի վեհապետը: Մասնախումբեր նշանակուած էին, որոնք պետութեան մէջ կը շրջէին և ամէն տեսակ համադամներ և ըմպելիներ կը փնտռէին Շահի սեղանին համար: Մէն մի երկիր իր լաւագոյն, անուանի բերքերը կը զրկէր Պարսից Դուռը: Շոյն մասնագիր մը կը պատմէ թէ՝ Շահի ճաշը 400 տաղանդ օրական ծախքի մը կը կարօտէր, այսինքն չուրջ 700000 բուրբիլ: Որքան ալ չափազանցութիւն գտնուի այդ թուանշանին մէջ, այս փաստը կը մնայ թէ՝ Պարսից արքունիքին շտապութիւնը՝ առասպելներ ստեղծելու ընդունակ էր: Եւ այս գումարը շատ հեռու չըլլար հաւանականութենէ, և թէ նկատի առնենք բունակային կանանոցը, արքունիքը, ուր տասնեակ հազար մարդիկ կ'ապրէին:

« Երբ Շահը կը ճամբորդէր իր երկրին մէջ, իր հետեւորդները, կիները, այսպէս կը յափշտակէին ու կը թալլէին շրջականները, որ կարծես թէ մարտիս անցած էր այդ վայրերէն: Վերջապէս, սեմական ազգերու բունապետութեան աւելի նմանած ըլլալու համար, Պարսկաստանի մէջ, ինչպէս կը վկայեն յոյն պատմագիրները, մարդագոհներ ալ ունէին գոյութիւն, թէեւ ատիկա հակառակ էր Պարսից կրօնի ոգիին:

« Բանապետական դրութիւնը լո՛կ արքայական պալատներու համար չէր նուիրագործուած: Մեծ բունապետը՝ բազմաթիւ բունապետիկներու տիպարը կը հանդիսանար: Պետութիւնը բաժնուած էր 20 մասերու, որոնց կառավարիչները սասրապ (նախարար) կը կոչուէին: Ասոնք ալ մէյ մէկ թազաւոր էին իրենց տեղերուն մէջ, սա տարբերութեամբ միայն որ Շահինչար՝ Անուրա Մալլուս աստուածը կը

ճանճար իրմէ բարձր, որուն ողորմութիւնը միշտ իրեն հետ էր: Իսկ նախարարները, կը դողային Շտնին առջև, որովհետև ասոր մէկ խօսքը բաւական էր, որպէս զի այսօրուան ամենակարող սասրապը՝ վազը մերկ ու թշուառ ստրուկ մը դառնար:

«Նախարարներու տխմար շոպյութիւնն ու կամայականութիւնները՝ առածի կարգ անցած էին: Հերոդոտ կը պատմէ թէ՛ Բարեկոնի նահանգին մէջ 4 դաւառներ պորտաւոր էին, հարկի փոխարէն, կերակրել ու պահել նախարարին աճազին հնդիկ շունները: Նոյն այդ նախարարը տէր էր 16800 ձիերու: Աւելցուցէ՛ք նաեւ նախարարական ուրիշ քմահաճոյքները, մանաւանդ կանանոցները, որոնք Պարսկաստանի իսկական կառավարիչներն էին, և դուք մօտաւորապէս գաղափար մը կը կազմէք թէ՛ ազգարնակութիւնը ի՛նչ գրութեան մէջ պիտի պահէր ինքզինք, իր սեփական հարստութիւններով յեղճնելու համար անթիւ խոշոր ու մանր բռնապետներու կոկորդը:

«Հայաստան ալ պարսկական նախարարութիւն մըն էր: Ծիշդ է, պատմագիրներէն ոմանք կ'ենթադրեն թէ՛ հայթաղաւորները նախարարի պաշտօնը կը կատարէին, բայց եթէ այդպիսի բացատրութիւն մը նոյնիսկ տեղի ունեցած ըլլայ մեր երկրին հաճար, ատիկա՛ ալ փաստ մըն է թէ՛ Հայաստանը պարսկական միապետութեան մէկ կտորը կը կազմէր հարիւրաւոր տարիներու ընթացքում:

«Եւ ա՛նա՛, ասիականութեան այս լայնատարած, վիթխարիներկայացուցիչն էր, որ ուղեց իր սարսափելի զէնքով ոչնչացնել եւրօպականութիւնը, ազատ ոգին, Պարսկաստանը պատերազմներու ձեռնարկեց Յունաստանի դէմ: Բայց ի՛նչ պարզուեցաւ այդ աճաւոր ընդհարումներէն, բիրտ ուժը չի կրնար յաղթահարել լուսաւորութիւնը, և մտաւորական ոյժը՝ անհամեմատօրէն զերազանց հանդիսացաւ ֆիզիքական անճունի ուժին վրայ:

«Պարսկաստանը՝ Ասիայէն Եւրոպա փոխադրեց բանակ մը, որ առնուազն 8 - 9 հարիւր հազար հոգիներէ բաղկացած էր: Հոն էին Պարսից երկրին մէջ տարող բոլոր ազգերը, որոնք կուռելու գացած էին յանուն այն միակ սկզբունքին, որ կը կոչուէր Պարսկական Շահի հրաման: Չկար Ասիոյ մէջ ազգ մը, որ չմասնակցէր այդ արշաւանքին, կը զրէ՛ Հերոդոտ: Ուրեմն, բառական իմաստովը, բովանդակ Ասիան ստքի կանգնած էր, փոքրիկ ազգ մը նուաճելու համար:

«Բայց չկրցաւ նուաճել: Ազատ ոգին, ժողովրդային-աամկավարական սկզբունքը զիմադրեց, յաղթեց և Քսերքսէս կորագլուխ վերագարձաւ Ասիա, Եւրոպական քաղաքակրթութիւնը փրկուած էր: Բայց ասիկա վերջին պատերազմը չէր՝ Ասիոյ ու Եւրոպայի միջև...:

«Ի՛նչ էր հայ ազգը, երկու աշխարհաճայեացքներու, երկու սկզբունքներու այս ընդհարման մէջ: Մենք ասիականութեան զինուոր

էինք: Ասիկա բնական էր, շատ հասկնալի: Համեմատաբար տկար ու փոքր ազգ մը, մենք, Ասիոյ մէջ բնակելով, ենթարկուեցանք այդ միջնադարի ոգիին, որ, տեղն է ըսել, զարգացման ստորին մակարդակին վրայ դանուող ազգերու մէջ բնական է: Հայերն ալ Քսերք-սէսի բանակին մէջ, Յունտոսան գացած հին քողաքակրթութիւնը ջնջելու, և Հերոդոտ կը նկարագրէ նոյն խոյ մեր հագուստը: Մենք, կրթութեամբ, բնաւորութեամբ, ձգտումներով մ'յն էինք, ինչ որ էր մենէ շատ մեծ, մեզի դիտող ազգը: Իրանը մեր մէջ կ'ապրէր:

«Պահպանելով մեր լեզուն, ազգային անհատականութեան պատկառելի բշտը, պահպանելով մեր աւանդական ինքնուրոյն, ցեղային յատկութիւնները, մենք մեր սեփական տեղը կը գրաւէինք ազգերու այն խառնարանին մէջ, որ Իրանի Պեհլուիւն կը կոչուէր: Բայց, միեւնոյն ժամանակ, մենք կը հակէինք զէպի իրանականութիւնը, ներարկումով կը ծծէինք իրանական ազդեցութիւնը, մշակոյթի, հասարակական և սեփական հասկացողութիւնները:

«Քսենոփոն, Քրիստոսէ 400 տարի առաջ, իր Տասը Հազար Յոյներուն հետ կ'անդնէր Հայաստանի վրայէն: Հայ գիւղի մը մէջ մտնելով, կը հանդիպի ջուրի գացած կիներու և պարսկերէն լեզուով կը խօսակցի անոնց հետ: Եթէ այդքան քաջածանօթ էր պարսկերէնը՝ Հայերու անշուք գիւղի մը մէջ, հասկնալի է թէ ինչ կ'ըլլար այն, աւելի մեծ կեդրոններում, մանաւանդ այն երկրամասին մէջ, որ Քսենոփոնի տեսած տեղերէն աւելի մօտ էր Պարսկաստանի: Հայերը, առհասարակ դիւրաւ կ'ենթարկուէին շրջապատող ազգերու ազդեցութեանը, այնպէս որ, Քսենոփոնէ քանի մը դար ետք ապրած յոյն մեծանուն աշխարհագրագէտը, Ստրաբոն ալ կը զարմանայ թէ՛ Հայերը, Ասորիները, Արարները զատ զատ ազգեր կը համարուէին, մինչդեռ ասոնք բոլորն ալ, իրենց նիստ ու կացով, նկարագրով, լեզուով ու դիմադժութեամբ իրարու կը նմանին, այն վայրերու մէջ, ուր իրարու մօտիկ կ'ապրին: Հայերու միեւնոյն նմանութիւնը կը տեսնուի նոյնպէս Պարսիկներուն ու Մարերուն հետ:

«Յոյն հեղինակին այս կարծիքը, տարակոյս չը կայ թէ միակողմանի է և չափազանցութիւն: Ազգերը չեն կազմակերպուիր արհեստակա՞մ միջոցով, քմահաճոյքով, այլ ցեղային որոշ պայմաններու ազդեցութեան տակ: Բոլոր յիշուած ազգութիւնները կարելի չէ մէկ համարել, մանաւանդ այն պատճառով որ Ասորիներն ու Արարները սեմական ցեղին կը պատկանին: Բայց անկարելի է չը խոստովանիլ նաեւ սա պարագան թէ՛ Ստրաբոնի դիտողութիւնը՝ արդիւնք է այն հանգամանքին որ Արեւմտեան Ասիոյ մէջ տեսակ մը քաղաքակրթութիւն կը տիրէր, և ասոր կ'ենթարկուէին հոտ ապրող բոլոր

ազգերը, որոնք սեփական, առանձնայատուկ, աչքառու քաղաքիթութիւն մը չէին կրնար մշակել :

« Այդ անկարողութիւնը շատ ակներեւ է մանաւանդ հայերուն նկատմամբ, որոնք չկրցան նոյնիսկ իրենց սեփական, անկախ, ինքնուրոյն կրօնք մը ստեղծել և կ'երկրպագէին ասորական, մանաւանդ իրանական աստուածներուն, որքան մեղի ծանօթ է, շատ ջնջին բնակութեամբ և նշանակութեամբ ազգային պաշտամունքներ ունենալով : Մեր բարքերուն պատկերը լրացնելու համար յիշենք նաև թէ, մարդազոհն ալ, այդ զարչելի պաշտամունքը, որ արեւմտեան Ասիոյ մեծ տէրութիւններուն մէջ տարածուած էր, անծանօթ չէր Հայաստանի մէջ : Մովսէս Խորենացիին վերագրուած պատմութեան մը մէջ ըսուած է թէ՛ Լայաստանի լեռներուն մէջ վիշապներու զոհ կը բերէին կոյս աղջիկներ և անմեղ պատանիներ :

« Այս մտաւորական եղբայրակցութիւնը պատմական բազմաթիւ փաստերով ալ հաստատուած է : Գ. դարուն (Ք. Ա.), 49 հազար հետեւակ և 7 հազար ձիաւոր հայեր պարսից Գարհն թագաւորին հրամանատարութեան տակ կը կուռէին Ալեքսանդր Մակեդոնացիին դէմ :

« Բայց ի՞նչ էր Ալեքսանդրը :

« Արեւմտեան քաղաքակրթութեան ներկայացուցիչը, որ Արեւելքը կը նուաճէր, հելլենական ոգին տարածելու համար : Այս անգամ Արեւմուտքն էր որ կը յարձակէր. այս անգամ ան կը ձգտէր զէնքի ուժով ասիականութիւնը ջնջել և անոր տեղը դնել եւրոպական սկզբունքները : Եւ Ալեքսանդրի առջև բան մը չի դիմացու, վիթխարի Պարսկաստանը հին Ասորեստանի նման ցիր ու ցան եղաւ մէկ ուժեղ հարուածով : Մակեդոնական զօրքերը Հնդկաստան հասան և Ալեքսանդր, արեւելեան Պարսկաստանի ծայրերն ալ քաղաքներ հիմնեց, և անոնց մէջ հելլէն ազգաբնակութիւն տեղաւորեց : Ամէն եռանդ զօրծ կը դնէր երիտասարդ երկրակալը, սր պատմութեան մէջ Մեծ տիտղոսին արժանացած առաջին մարդն է : Բայց այդ մեծ Միտքը ունեցա՞ւ աչքառու յաջողութիւն մը : Դեռ կարելի էր նուաճել Արեւելքը, ոչնչացնել պարսկական պետութիւնը, բայց կարելի՞ էր փոփոխել ասիական ոգին, կարելի՞ էր դարերով ստրկութեան մէջ ապրած և ստրկութիւնը զարգացուցած ժողովուրդներուն ըմբռնել ասպառութեան իմաստը :

Ալեքսանդրի ուսուցիչը, Արիստոտէլ, յոյն մեծանուն փիլիսոփան, անկարելի կը կարծէր այդ բանը : Անի լաւ գիտէր թէ ի՞նչ է Ասիան և ի՞նչ է հելլէնականութիւնը : Ուստի, իր աշակերտին խորհուրդ տուած էր հելլէններուն հետ վարուել բարեկամներու և ցեղակիցներու հետ, իսկ Ասիացիներու հետ՝ իրրեւ անասուններու և քոյսերու հետ : «Ասիոյ ազգերը, կ'ըսէր Արիստոտէլ, օժտուած են կենդանի

մտքով և արուեստներու մէջ ճարպիկութեամբ, բայց քաջութենէ զուրկ են. ուստի անոնք հրամայողներ ունին, իսկ իրենք սարուկներ են. յոյն ազգը նոյնքան քաջ է, որքան մտածող, այդ պատճառով անի ազատութիւն ունի և պետական լուսազոյն կեանքէ»

«Աղեքսանդր ուրիշ կերպ կը մտածէր: Անի կը կարծէր թէ կարելի էր փոխել ասիական ոգին, հիմնուելով անշուշտ այն մտքին վրայ թէ՛ ազգերը չեն այսպէս կամ այնպէս ծնիր ի բնէ, և թէ՛ անգործութիւնը ճակատագրական չէ: Այդ միտքին մէջ մեծ ճշմարտութիւն մը կայ, բայց և այնպէս, անսխալ հանդիսացաւ մեծ փրկիստփային կարծիքը և այսօր ալ ճիշդ է այն, արեւելեան շատ ազգերու վերաբերմամբ:

«Ինչէ՞ն էր այս հակասութիւնը, ինչէ՞ն էր որ մարդկային առաջդիմութեան օրէնքը սնանկ կը հանդիսանար արեւելքի մէջ:

«Առաջդիմութիւնը, քաղաքակրթութիւնը՝ նուաճողին հրամանով ու կարգադրութիւններովը չի մտնէր երկրի մը մէջ, այլ ժողովուրդին յօժարակամ, երկարատեւ աջակցութեամբը: Մեծ երկրակալին կամքը չէր կրնար մէկ քանի տարիներու մէջ կերպարանափոխել Ասիան: Որքան ալ Աղեքսանդր կը ջանար ցոյց տալ թէ իր նոր պետութեան մէջ նուաճողներ ու նուաճուածներ չիկան, այլ ամենքը հաւասար են, որքան ալ խօսքով ու գործով անի կը յարգէր տեղական սովորութիւնները, իր հպատակներուն ցեղային և տոհմային առանձնայատուութիւնները, սակայն և այնպէս, մէկ մարդ էր անի՝ անթիւ ազգերու և լեզուներու մէջ: Անի խորթ հրամայող մըն էր ասիական աշխարհին համար, խորթ՝ իր հայեացքներով ու ձգտումներով: Երկրակալի կամքին հակառակող մը չկար, և, հելլէն լեզուն ու մշակոյթը կը տարածուէին Ասիոյ մէջ մինչև Հնդկաստան: Բայց ատիկա արտաքին յաղթութիւն մըն էր, խորթ եկեօր մը, որ երբեք չընտանեցաւ ասիական ազգերուն, չի հայեցաւ անոնց մէջ, չի մարտուեցաւ: Եւ ատկէ զատ, հելլէնականութիւնն այլ ազճատուեցաւ Ասիոյ մէջ: Նուաճողները յարմարիլ կ'ուզէին տեղական սովորոյթներուն, տեղացիներուն հետ մտերմանալ, ուստի իւրացուցին շատ մը ասիական կարգեր: Այդ կերպով, Աղեքսանդրի պետութիւնը, փոխանակ զուտ հելլէնական ոգին արտայայտելու, եղաւ կէս-եւրոպական կէս-ասիական միապետութիւն մը:

«Իսկ Աղեքսանդրը չունեցաւ երկար կեանք մը, որպէս զի համոզուէր թէ՛ Ասիոյ մէջ իր քաղաքակրթական դերը չէր կրնար նոյնքան մեծ ըլլալ, բայց պատմութիւնն ունի իր առջև այդ իրողութիւնը:

Աղեքսանդր ո՛չ ևս էր, բայց անոր պետութիւնը բաւական երկար ժամանակ պահուեցաւ Արեւելքի մէջ: Աղեքսանդրի յաջորդները, խել-

քի աւ հոանդի կողմէ՛ն ո՛րքան այ հաւատար մարդիկ ըլլային, սակայն զիտելի սրտազայ մը կար, այն է թէ՛ պարսկական հին պետութեան հոգին վրայ երկու հարիւր տարիէ աւելի իր գոյութիւնը պահպանեց Եւրոպացիներու ձեռքով հիմնուած պետութիւն մը, որուն մէջ տիրապետող տարրը՝ յոյն ազգն էր:

«Ի՛նչ կրցու ընել այդ պետութիւնը Ասիոյ համար:

«Նշանաւոր է այն զիրքը, զոր Հայաստան գրուած էր մակեդոնական տիրապետութեան ժամանակ: Այլքսանդրի մահէն հետքը, Պարսկաստան և Արևմտեան Փոքր Ասիան մտան Սելեւկիան թագաւորութեան մէջ: Հայաստան մնաց մասամբ մը Վասսալական գրութեան մէջ, յետոյ, անկախութիւն ալ ստացաւ:

«Սակայն մեզ աւելի շահագրգռող կէտ մը կայ, այն է թէ, ի՛նչ էր ան: Իր աւանդութիւններով ու ձգտումներով պարսկական աշխարհը կը ներկայանար անիկա և թէեւ յաճախ կը շփուէր մակեդոնական աշխարհին հետ, բայց հելլենականութիւնը գրեթէ երբեք ազդեցութիւն մը չըրու անոր վրայ: Հայաստան և իրեն հետ Կապադովկիան և Պոնտոսը, անկախութիւն ստացան, վերանորոգեցին իրենց թագաւորութիւնները՝ Սելեւկեան արքունիքի համաձայնութեամբ: Ատիկա չէր նշանակեր թէ հելլենականութիւնը մէկ քայլ առաջ գնաց Ասիոյ մէջ: Բոլորովին ո՛չ. ընդհակառակը, ասիկա ցոյց կու տար թէ իրանականութիւնը կ'արթնար և թէ ասիական պետութեան զաղափարը չէ՛ մոռցուեր: «Իա առաջին քայլն էր զէպի փոփոխութիւններու նոր շարք մը, կ'ըսէ հելլենականութեան հանրածանօթ պատմագիրը Տրոյզէն. դա առաջին զիջումն էր, զոր նուաճող օտար տարրը կ'ընէր Արևելքին, առաջին դո՛ր, զոր կը բերէր մակեդոնական իշխանութիւնը, որպէս զի իրեն հետ հաշտեցնէ Ասիան և անոր վրէժխնդրութեան առաջին առնէ:»

«Ահա ի՛նչ էր Հայաստանը: Իր անկախութեամբ, վտանգաւոր պատուար մը կը ստեղծուէր մակեդոնական տիրապետութեան զէժիմնդիւր չէր թէ ո՛րքան ուժեղ էր այդ պատուարը, խնդիրը հոն էր որ, այդ անկախութիւնը կը նշանակէր թէ՛ ասիական սկզբունքը վերտախն պիտի գլուխ բարձրացնէ և ետ խլէ այն տեղերը, զորոնք Այլքսանդրի սուրը նուաճած էր, և բողոքական մշակոյթի համար:

«Եւ ճիշդ, Պարթևներուն հարստութիւնը, նորէն իրանականութեան գիրկը նետեց Արևելքի հողերը: Սակայն, և բողոքական արշաւանքն ալ կանգ չառաւ: Մակեդոնական տկար պետութիւնը՝ անցաւ Հռովմայեցիներուն, որոնք նոյնպէս հելլենական քաղաքակրթութեան ներկայացուցիչներ էին և շարունակեցին հին արիւնոտ պայքարը Արևելքին զէժմ:»

Հոս կը վերջանան յարգելի ԼէՕի տեսութիւնները:

Իսկ մենք, վերագտնայով մեր պատմութեան ընթացքին, կը տեսնենք թէ Հայաստանի ամբողջութիւնը չէր ինկած պարսկական տիրապետութեան տակ. հիւսիսային արեւելքի մասին — Երասխ ու Կուր գետերուն նովիաները — Տիգրան Ա.ի յաջորդները կ'իշխէին, անկախ թագաւորներ, իսկ հարաւային արեւմտեան մասը միայն հպատակ էր Պարսից պետութեան, որուն 20 նահանգներէն 11ը կը կազմէր: Եւ այդ նահանգը, հնչուն դրամէն դատ, Պարսից թագաւորներուն տարեկան հարկ կը դրկէր 20,000 ձիեր, որոնք թէեւ փոքրամարմին, բայց խիստ կրակոտ էին, ինչպէս կը գրեն յոյն պատմիչները:

Վերջերս, հետխոյզները, Պեհիստունի քորածայտին վրայ սեպածեւ արձանագրութիւններ գտան, որոնք, Վշտասպեան Դարեհի հրամանով փորագրուած, այս պարսիկ երկրակալին գործերը կը պատմեն (521-486): Այս քորածայտը, 400 մէդր բարձր, կը գտնուի Քիրմանշահէն(*) գրեթէ մէկ մղան հեռու, դէպի հիւսիս կողմը: Կողերուն վրայ փորագրուած են վիթխարի պատկերներ, սեպածեւ արձանագրութիւններով շրջապատուած, որոնք, ինչպէս կը գրէր անգլիացի հնագէտ մը, ընդօրինակուելու համար, առնուազն երկու ամիսներու կը կարօտին: Այս քանդակներէն մէկը՝ թագաւոր մը կը ներկայացնէ խաղաղիկ գիրքի մը մէջ, որուն առջեւ շղթայակապ շարուած են գերիները: Այդ թագաւորը, որ տանակոխ կ'ընէ պարտուած թշնամիներէն մէկը, նոյն ինքն Դարեհ Վշտասպեանէ, իսկ շղթայակապ գերիները՝ այն իշխաններն են, որոնք Շմերդի յարուցած խռովութիւններէն օգտուելով, ապստամբած էին գրեթէ բոլոր նահանգներովը: Արձանագրութիւնը կը պատմէ Դարեհի զահակալութիւնը, և կը թուէ անոր աէրութեան նահանգները:

Այդ արձանագրութիւններէն հատուած մը, որ Հայաստանի կը վերաբերի, կը վկայէ թէ Հայերը, որքան յամառ մաքառու մով մը մարտնչած են Դարեհի դէմ, իրենց երկրի ազատութեան համար, որուն մէկ մասին վրայ կ'իշխէր Դարեհ:

Հոս նոյնութեամբ կ'արտագրենք Դարեհի բերնէն արձանագրուած այդ հատուածը. —

«... Յետոյ Հայաստան զրկեցի Դադարսէս Հայը, որ իմ ծառայ է, և ըսի իրեն. — «Գնա՛, խորտակէ՛ այն ապստամբ բանակը, որ ինձի չի՛ հնազանդիր»: Դադարսէս զնոց Հայաստանը նուաճելու: Ապստամբները պատերազմեցան իրեն դէմ, բայց Որմիզդ օգնութեան

(*) Պարսկական Քուրդիստանի գլխաւոր քաղաք մը, 12,000 բնակիչներով:

հասաւ ինձի, և իմ բանակս շատ մարդ կոտորեց թշնամիի բանակէն:

«Թշնամիները յարձակեցան երկրորդ անգամ Դադարէսի վրայ: Որմիզդ օգնեց ինձի և իմ բանակս չարաչար յաղթահարեց ապստամբներուն բանակը:

«Երրորդ անգամ ինկան ապստամբները Դադարէսի վրայ: Որմիզդ ինձի օգնութիւն չնորհեց, և իմ բանակս դարձեալ շատ մարդ սպաննեց թշնամիներու բանակէն: Յետոյ Դադարէս սպասեց Հայաստանի մէջ, մինչև և իմ ժամանուսն՝ Մարտատան:»

Ինչպէս ականերեւ կը տեսնենք այս արձանագրութիւնէն, մէկդի դնելով Դարեհի պոռոտ խօսքերը, որոնք չափազանցութիւններ կրնան ըլլալ, Պարսից բանակները, երեք անգամ պատերազմներ մղած, բայց չեն յաջողած զսպել Հայոց զարմանալի ընդդիմութիւնը. ընդհակառակն, ինչպէս յայտնի կ'երեւայ հետեւեալ արձանագրութիւնէն, այս վերջիները քշած են Պարսիկները, մինչև Ասորեստանի ընդարձակ դաշտերը, և Դարեհ՝ հարկադրուած է Հայաստանի վրայ նոր զօրավարներ զրկել նոր բանակներով: Ահաւասիկ այդ հատուածը. —

«Որմիսէս իմ ծառայ է: Ես զանի Հայաստան զրկեցի և ըսի. — «Գնա՛, ոչնչացու՛ր այն ապստամբ բանակը, որ ինձի չի հնազանդիր:» Որմիսէս գնաց արիւրու Հայաստանի: Ապստամբները պատերազմելու համար ձակապեցան Որմիսէսի դէմ: Ասորեստանի մէջ երկիր մը կայ (անընթեանյի) անունով. հոն պատերազմեցան: Որմիզդ օգնութեան հասաւ ինձի, իմ բանակս շատ մարդ սպաննեց ապստամբներու բանակէն:»

«Երկրորդ անգամ թշնամիները ճամբայ ելան Որմիսէսի դէմ պատերազմելու համար: Հայաստանի մէջ Անրիպարա(՝) անունով երկիր մը կայ. հոն մղուեցաւ կռիւր: Որմիզդ իր օգնութիւնը չնորհեց ինձի և իմ բանակս շատ մարդ ջարդեց թշնամիներէն: Յետոյ Որմիսէս Հայաստանի մէջ սպասեց մինչև և իմ Մարաց երկիրը հասնիրս:»

Դարեհ՝ վշտասպեանի արձանագրութիւնները լռութիւն կը պահեն սակայն այդ պատերազմներու վախճանին վրայ. մինչդեռ ուրիշ ապստամբ ազգերուն նուաճումը յայտնապէս յիշուած է արձանագրութեանց մէջ, մանաւանդ թէ ինչպէս Դարեհ՝, սոսկալի տանջանքներով սպաննած է ապստամբութեան առաջնորդներն ու պարագլուխները:

Հայերը, կը զրէ Քսենոփոն, Պարսիկներուն դէմ ապստամբած, իրենց կրնորուն և որդիներուն հետ կ'ապաստանէին սարերը, ուր իրենց չէին մօտեցներ Պարսիկները, խոշոր քարածայրեր զլորելով այս վերջիներուն վրայ. սակայն, իրրեւ վարձկան զօրքեր, արքայից արքային կը ծառայէին ունենալով իրենց յասուկ զէնքերը, նետ, աղեղ, վահան և սարձաւարս:

Այս գրութիւնը փակելէ առաջ, կ'որժէ քանի մը ծանօթութիւններ տալ պարսկական դերիշխանութեան վերաբերեալ շրջանում իր անկախ գոյութիւնը պահպանած Հայաստանի սատրապութեան մասին, որուն վրայ հետեւեալ շահեկան ուսումնասիրութիւնները կը գտնենք Գ. Ասլանի «Պատմական ուսումնասիրութիւններ հայ ժողովուրդին վրայ» Ֆրանսերէն գրքին մէջ .

«Հայաստանի սատրապութիւնը, կը գրէ Գ. Ասլան, իր նախագոյն ստորաբաժանման համեմատ, երկու մասեր կը պարունակէր. մին՝ Երասխեան կամ Արեւելեան, և միւսը՝ Եփրատեան կամ Արեւմտեան: Հայաստանի սատրապները, որոնց ո՛չ անունները, ո՛չ ալ արարքները արձանագրած է պատմութիւնը, ընդհանրապէս արքայակոսն ընտանիքին յարած մեծ իշխաններ էին. երբեմն, տեղացի իշխաններ էին, որոնք արքունիքին վստահութիւնը շահած էին:

Արքունի տուրքը, զոր Հայաստանը պարտ էր վճարել, կը բազկանար 30000 մտրուկներէ և քանի մը նախնական արծաթի տաղանդներէ: Այս տուրքը ընտել չափազանցեալ չէր, բայց սատրապները չունէին ո՛չ մէկ թոշակ, իրենց սեփական հաշուին, երկրին վրայ կը դնէին ծանր տուրքեր: Միւս հարկատու ժողովուրդներուն պէս, Հայերը պարտաւոր էին նաև զօրագունդեր պատրաստել և, պատերազմի ժամանակ, մեծ արքային տրամադրութեան տակ դնել զանոնք: Սատրապութիւնները ստեղծելով, ինքնօրէն կառավարութիւնները կը փնջուէին, և Դարեհ՝ կառավարութեան նոր ձեւ մը կը հնարէր, որ յետոյ Հռովմայեցիներուն իրրեւ տիպար պիտի ծառայէր:

«Սատրապը(*) բացարձակ տէրն էր իր կառավարութեան, տուրքը վճարել կուտար այնպէս ինչպէս որ ինք կ'ըմբռնէր, դատեր կը վարէր, կեանքի և մահուան իրաւունքը ձեռքին մէջ ունէր, բայց, ամէն վայրկեան, կրնար ըլլալ որ ետ կանչուէր և առանց դատաստանի մահուան ենթարկուէր ինք:

Մերթ կը հրամայէր երկիրը գրաւող բանակին, և մերթ այդ հրամանատարութիւնը կը յաճնուէր զօրավարի մը, որ նոյնպէս, թագաւորին կողմէն կը կարգուէր: Դարեհի կազմակերպածը՝ պետութիւններուն ամենէն լայնատարածն է, որ երբեք գոյութիւն ունեցած ըլլաւ. իր սահմանները կը սկսէին Միջերկրականէն և կը տարածուէին արեւելքի կողմը, մինչև Զինաստանը գատող լեռնաշղթան: Այնուհետև, պարսկական պետութիւնը լո՛կ մէկ կողմէ կրնար մեծնալ, հիւսիսային արեւմտեան կողմը, ուր կը գտնուէր Յունաստանը, ու

(*) Պարսիկներուն ճաշբապը կամ ճաշբապավանը, Հայերուն Ճահապը, որ, ինչպէս կը բուի, երկրին խնամակալը կը նշանակէ: Մ. Հ.

րուն անկախութիւնը կը զայրացնէր մեծ արքային հպարտութիւնը : Կիւրոս Ասիոյ տիրած էր, Կամրիւս ալ Ափրիկէի մէկ մասին . իսկ Դարեհ, վար չ'մնալու համար իր նախորդներէն, յարձակեցաւ Եւրոպայի վրայ : Սկիւթացիները ժամանակով ասպատակած էին Ասիա : Այս նախատինքին յիշատակը, և Թրակիան ու Յունաստանը նուաճելու փափաքը, մղեցին Դարեհը վճռականորէն ընտրելու իր սազմական գործողութեան թատերաւայրը :

« Կարեց անցաւ Վոսփորը, իր ետեւը քաշելով 7—8 հարիւր հազար հոգի, կ'ըսեն, որոնց մէջ էին Հայերն ու ասիացի Յոյները :

Հայերը, մարական պատերազմներուն (480), Քսերքսէսի բանակին մէջ ալ գտնուած էին : Ըստ Հերոդոտի, Հայերը կը զինուէին Փոսիդիացիներուն պէս, սողաւորա կը գնէին, վահաններ, նեակեր ու դաշոյններ կը կրէին . երկուքն ալ (Հայք և Փոսիդիացիք) կը զանուէին Արտոկմ իշխանի մը հրամանատարութեանը տակ, որ Դարեհի մէկ աղջիկը կնութեան առած էր : Բայց մարական պատերազմները պետութիւնը սաստիկ սարսեցուցած էին, նահանգները պարտականութեան մէջ պահող այժը հազիւ գոյութիւն ունէր :

« Արտաքսերքսէսի(*) թագաւորութեան օրով (464—425), սաստապութիւններուն թիւն ու սահմանները փոխուած էին : Այն չըջանում, երբ Հերոդոտս կ'այցելէր պետութեան նահանգները, Հայաստան, 13րդ սատրապութիւնը(**) կը կազմէր . Մաղիանացիները, Սասլիքները և Այարոդեանները՝ 18րդ . Մօսկերը, Տիրարացիները և պնտոստարնակ Մաիրացիները 19րդ, կը կազմէին : Արքայական իշխանութեան հանդէպ Հայերուն հաւատարմութիւնը բնաւ չէր ստան Դարեհ Բ. ի, ո՛չ ալ Արտաքսերքսէս Մնեմոնի օրով . Կիւրոս Կրտսերի ապստամբութեան միջոցին չէին խրտած անոնք, մինչդեռ արեւմտեան նահանգներուն մեծ մասը կուսակից էր այս վիւրջինի : Եւ որովհետեւ ժամանակակից յիշատակարանները ո՛չ մէկ նշանաւոր դէպք ցոյց կուտան Հայաստանի մէջ, մենք պարտինք խորհիլ թէ խաղաղութիւնը չի խանգարուեցաւ հոն, մինչդեռ Եգիպտոսը, Փոքր Ասիան ու Մարաստանը կարգով կ'ապստամբէին Դարեհի յաջորդներուն օրով : Քսենոփոն, որ (400 Ք. Ա.) ի միջոցները Հայաստանէն անցաւ, կը պատմէ

(*) Պարսկական առասպելներուն Արտաքսէս-Տիրագ-Տեպըր կամ Երկայնամետն, Արտաքսէսեպ, Արտա-Շատրափ մեկ ազգաւազոււմ, որ մեծ արքայ հաւանակել կը թուի :

(**) Հերոդոտ (Պ. 93). — Նախապէս 23 նահանգ կար : Պերսեպոլիսի արձանագրութիւնը կը թուէ 24, Նաւ-Ի-Բուսպանիք՝ 28, իսկ Հերոդոտ միայն 20 կը հաշուէ :

թէ Արտաշէս Մնեմնի թագաւորութեան օրով, Հայերէն բնակուած երկիրը, հիւսիսէն սահման ունէր Խալիւքներն ու Տափները, հարաւէն Կորդուացիները, և Տիգրիսի օժանդակ գետակներէն Կենտրիլի ընթացքը՝ իրր սահման կը ծառայէր այդ կողմէն: Կորդուացի լուսահանները գրեթէ անկախ էին, Հայերուն հետ թշնամութեան մէջ էին, և երբ առիթը կը ներկայանար, կ'առաջապահէին ու թալանի կուտային հայ գիւղերը: Այդ լուսահանները յօժարակամ կը ծառայէին նաև իբրև վարձկան զինուորներ, երբ սատրապները կը դիմէին իրենց, թէև շարունակ կ'ապստամբէին արքայական իշխանութեան դէմ: Կորդուացիները Բիւրուց Անցիքն դէմ խափանարար ընթացք մը բռնեցին, բայց Յոյները, իրենց գործադրած սազմական հնարագիտութեան շնորհիւ կրցան անցնիլ կիրճերէն առանց մեծ կորուստներու:

« Հայաստանի մէջ կային մեծ թիւով բերդաքաղաքներ ու գիւղեր, որոնց մէկ քանիները՝ ամուր աշտարակներ և իշխանական սպարանքներ ունէին: Բիւրճեթուն կտրած անցած նահանգին սատրապը Տրիբազ կը կոչուէր. բարձրատախճան անձնաւորութիւն մը, արքայական ընտանիքին խնամի, որ կարեւոր դեր մը խաղցած է պետութեան գործերուն մէջ և որ յետոյ զրկուած է Յօնիա, ուր ունեցած է եղերական վերջ մը:

« Արեւելիան Հայաստանի սատրապը, կը թուի թէ Որոնդէս (Հրանտ) անունով հայ մըն էր: Տրիբազ հաւանած էր արտօնել Յոյներուն որ անցնին ազատօրէն, պայմանով որ խնայեն երկիրն և ո՛ր և է աւարտութիւն չի գործեն: Եւ սակայն, վարձկան զինուորները տիրացան Տրիբազի վրանին, ուր արծաթի ոտքերով մահճակայներ գտան, ինչպէս նաև նոյն մետաղէ անօթներ ու գործիքներ: Աւելի դէպի հիւսիս, Բիւրեղը Եփրատը կտրեցին անցան, և հանդիպեցան ստորերկեայ գիւղերու և բնակարաններու, որոնց բացուածքը ճիշդ հորի մը բերնին կը նմանէր, բայց ներսը խիստ ընդարձակ էր և մէկ մասին մէջ արջատը կը պտտապարուէր: Այդ գիւղերուն մէջ կը զըտնէին այլևր, կլկիլ, պահձու բանջարեղէններ և կլկրագինի, խիստ շատ ալքօրացած ըմպելի մը զոր խոշոր կարամներու մէջ կը պահէին: Այս հայ գիւղերը շատ հիւրասէր էին: Ամենուրեք առասա էին ուտեստները, գառնուկը, ուլը, խոզը, հորթը, հաւերը: Զիեր այ կը մեծցընէին հոն, արքունի տուրքին համար: Սակայն, լոկ երկիրին հունձքը, արջաաբուռութիւնը չէ՛ր որ կը կազմէր բնակչութեան ամբողջ հարստութիւնը: Հայաստանը սոզոտան էր կարաւաններուն, որոնք Ինդոսի բերքերը կը փոխադրէին Եւքսինեան Պոնտոսի եղերքները: Հայերը մընչևե Փիւնիկէ կ'երթային առևտուրի համար, ուր ձիեր ու ջորիներ կը ծախէին: Թօզ-Արմայի տոհմայինները ձիերով ու ջորիներ-

րով կը լեցնէին շուկաները: (*) Նաւակներ կը շինէին մորթի տիկերէ, Եփրատի ճամբով մինչև Բարելոն ապրանքներ փոխադրելու համար:

Ամբողջացնելու համար այս պատմական ուսումնասիրութիւններու շարքը, հոս կ'արտագրենք հերու լոյս տեսած «*Mercurus*» ի մէկ պատմական տեսութիւնը, սեպածև արձանագրութեանց գիւտին վրայ ուր մեր խոստացող բանասէրներէն Պր. Գ. Մեսրոպ յաջողած է խոսքընել նոր ժամանակներու գրեթէ բոլոր հնախոյզ գիտուններուն փորձերը, հին աշխարհի զանազան կէտերուն վրայ դրոշմուած այդ խորհրդաւոր յիշատակարաններուն իմաստը վերլուծելու համար: —

«Ամենահին ժամանակներէ ի վեր, Հայաստանի բարձունքներուն՝ ժեռուտ կողերուն վրայ, հոս ու հոն կը նշմարուէին կարգ մը նշանագրեր, արձանագրութիւններ, որոնք երբեք չէին խօսեր զիրենք շրջապատող ժողովուրդներուն: Ի՞նչ բաներ էին ատոնք, ո՞չ ոք գիտէր: Ծատերը չէին հետաքրքրուեր անգամ. իսկ հետաքրքրուողները կը գոհանային ժողովրդական առասպելներով. որոնք շինուած էին այդ խորհրդաւոր արձանագրութիւններուն շուրջ: Աստուծոյ մին է Մհերի առասպելը, Մհեր Գաբուսու կոչուած վանեան արձանագրութեան շուրջը դարբնուած: Նոյնիսկ հայ պատմիչին համար, անոնք չէին դադրեր առասպելական ըլլալէ: Ծատ շատ, եթէ ո՛չ հայ աշխարհակալի մը. գէթ Ասորեստանցի Ծամիրամի մը քմահաճոյքին սրղիւնքը պիտի ըլլային անոնք (**):

«Այդ խորհրդաւոր գիրերուն նման արձանագրութիւններ կ'երևւային նաև Պենիստունի հսկայ քարաժայռին, Ասորեստանի ու Քաղզէաստանի սահմաններուն վրայ, նոյնքան անխօս, նոյնքան խորհրդաւոր: Ո՛չ ոք կար, որ կարենար հասկնալ ու բացատրել անոնց լեզուն, յարութիւն տալ դարերէ ի վեր մնած, զիականացած այդ գրականութեան:

«ԺԸ. դարուն վերջերը, քանի մը գիտուններ, ինչպէս Նիրուր (1765), Տիւշէն (1797), Միւշոյէր (1800) հետաքրքրուած էին այդ արձանագրութիւններով, ճամբան հարթած, պատրաստած էին Գրօզըֆէնտի առջև, որ առաջին անգամ (1802), կը յաջողի գտնել գաղտնիքի թիւը. պատրաստել պարսիկ սեպածև արձանագրութեանց այբուբենքը: Փորձը հետզհետէ կը կատարելագործուի Քրանսացի Էօժէն Պիւրնուֆի, գերմանացի Քրիստիան Լաւենի և անգլիացի Հէնրիք Բոյինսընի միջոցաւ: Այս վերջինը, ա՛յնքան կատարելութեան կը հասցնէ աքեմենեան (պարսիկ) արձանագրութեանց ուսումնասիրու-

(*) Եգեկիեկ Իէ. 13-14:

(**) Մ. Խորենացի, (Գիրք Ա. Գլ. ԺԵ. էջ 39):

թիւնը, որ իրմէ ետքը, Օբերդի և Շպիկէլի աշխատութիւնները կը կայանան աւելի մանրամասնութեանց ճգրտումին մէջ և չեն բերեր ո՛չ մէկ արմատական կամ հիմնական փոփոխութիւն(*):

«Աքեմենեան արձանագրութեանց ընթերցումէն ետք, երբ ո՛չ միայն սեպագրական լեզուի նշանագրերուն կամ գաղափարագրերուն ճանաչումը ձեռք բերուած էր, այլ և Պարսի Պեհիստունեան արձանագրութեան նման երեքլեզուեան — ակեմենեան, մարական և ասորեստանեան — գրուածքներ ալ ճանչցուած էր, փոքրիկ քայլ մը կը մնար միայն Ասորեստանի սեպագրութիւններուն ընթերցման համար: Այդ միջոցներուն է որ Մուսուլի ֆրանսական հիւպատոսը Պօթա (1846), նախկին Նինուէի տեղը կը դսնէ ու կը պնդէ. Լէյարտ Անգլիացին՝ Պօլունճուզի և Նեմրուտի պեղումները կը կատարէ, որով ի յայտ կու գան բազմաթիւ նոր արձանագրութիւններ, որոնց վրայ մեղուի նման կը սկսին թոռիլ Րօլինսըն, Հինքս, Փաքէթ, Րասք, Պիւրնուֆ, Տայլոտ, Սոսի, Օրերդ, Շպիգէլ: Հետզհետէ կը թարգմանուին ասորեստանեան, քաղղէական, մարական (չօչական) բեւեռագրութիւնները. կը յայտնուին նոր դէպքեր ու դէմքեր, ամբողջ պատմութիւն մը և գրականութիւն մը կը վերկենցալին իրենց դարերու մեռելութենէն: Երեւո՛ւ կու գան հսկայ ազգերու գործերը: Մեծ աշխարհակալներ կը սկսին իրենք իսկ պատմել իրենց խոշոր ձեռնարկները, հեռաւոր ու ահաւոր արշաւանքները, կրօնային ու ճարտարապետական զարմանալի ձեռակերտները: Կը նկարագրեն անձանօթ երկիրներ, կը թուեն նորայուր ազգերու կամ պետութիւններու անուններ: Մարդկային պատմութիւնը բոլորովին կը կերպարանափոխուի. մինչև այդ ատենուան պատմական ճշմարտութիւնները կեղծիքի կը փոխուին. առասպելական քօղով մը կը ծածկուի հինը, տեղի տալով նորին, այն է արձանագրական պատմութեան:

«Անմասն չի՛ մնար նաև հայ ժողովուրդի պատմութիւնը: Ան ալ կը հազնի նոր կերպարանք: Զեռք բերուած վանեան յիշատակարանները նոր լոյս մը կը սփռեն անոր վրայ: Նոր անուններ, ազգային աւանդութեան թուած անուններէն բոլորովին ուրիշ յորջորջումներ մէջտեղ կ'ելլեն. նոր անցքեր ու դէպքեր կը յայտնուին. հինը, իր բովանդակ մանրամասնութեանց մէջ, կը ներկայանայ առասպելական ու շինծու. իսկ նորը՝ այլախերպ և այլատարազ: Ասորեստանեան ու պարսկական արձանագրութեանց ընթերցումէն ետք, անու-

(*) Մասքրօ, Հին Պատմ. 810:

չաղիր չէին կրնար անցնիլ Հայաստանի հողին վրայ նշմարուած բեւեռագրութիւնները: Այն նշանագրերը, որոնք Ասորեստանի վաղեմի քաղաքներուն քարերը կը զարդարէին, և որոնք մեծ յաջողութեամբ սկսան կարդացուիլ, յարեւմտան էին Հայաստանի մէջ գտնուած արձանագրութիւններուն, նոյն գաղափարագրերը, նոյն նշանները և անտարակոյս, նոյն գաղափարները: Այս իսկ բաւական էր, գործի սկսելու համար: Բայց դժուար կէտ մը կար. կարելի էր հասկնալ այդ յիշատակարաններուն իմաստը, բայց կարելի չէր գիտնալ թէ ինչ լեզուով գրուած էին անոնք և կամ թէ՛ անոնց լեզուն ինչպիսի քերականական կազմութիւն ունէր: Հայաստանի այդ արձանագրութեանց հղինակները կրնային յաջողութեամբ գործածել քաղղէական սեպածեւ գրերը կամ բառերը. կրնային ասորեստաներէն մարդ նշանակող գաղափարագիրը գործածել, բայց հնչել զայն բուրբուխի ա՛յլ կերպով քան ինչ որ չէին հնչեր Ասորի արձանագրութիւնները: Այսպիսի պարագաներու ներքեւ, մենք դիւրութեամբ կրնայինք հասկնալ հայ արձանագրութեանց իմաստը, բայց չպիտի կրնային վստահօրէն ըսել թէ՛ ինչ լեզուով գրուած են անոնք, կամ թէ ինչ կերպ կը հնչուէին:

«Հայ հողին վրայ գտնուած այսպիսի անձանօթ յիշատակագրութեանց լեզուն գտնելու համար, ամենէն առաջ ինչ ենթադրութիւն կրնայ ծագիլ խուզարկու գիտունին մօքին մէջ: Անշուշտ այն, որ այդ արձանագրութիւնները կրնան գրուած ըլլալ հայերէնով:

«Այսպէս մտածեցին Հինքս(*) և Մորթման(**): Բայց չը յաջողեցան դժբաղդարար: Այս ուղղութեամբ դեռ կը պնդեն Հ. Յ. Հիսարլիան և Հ. Յ. Սանտայճեան(***) : Ընդմարիտ է որ զուտ ասորերէն լեզուով արձանագրութիւններ ալ գտնուած են մեր մօտ: Այդ պիտի կրնար ստատրել հասկնալու համար «հայկական սեպածեւ»ներուն իմաստը, բայց լեզուն ո՛չ:

«Պրպտող գիտունին համար արժէք չունին սակայն իր առջեւ կյած այդօրինակ դժուարութիւնները: Եւ մենք այսօր ունինք բաւական թիւով աշխատող գիտուններու անուններ, որոնք կապուած են վան-

(*) Հիւնթս, վանի արձանագրութեանց վրայ, Արքայական Ասիական Անկերուրեան Թերթը, հս. Թ. էջ 387-449:

(**) Մորթման, Հայ բեւեռաձեւ արձանագրութիւններ, բարգմ. Ա. Ազուլլանեան, Կ. Պոլիս 1872 էջ Ա-Գ, 57:

(***) Հմմտ. Ուարսական, սեպածեւ արձանագրութեանց մասնաբարբառը, Հոտմ, 1898:

եան քեւեռագրութեան զիւտին ու ընթերցման պատմութեանը հետ : Շուլձ(*), Սէյս, Սիւննիս. Դ. Միւլէր, Կիւլեար, Հիւլէրնա, Եէն-սէն, Բասմաջեան, Նիկոլաքի, Հ. Ֆոն Շալլ, Լէյարտ, Քէստնէր, Տոմաշէկ, Մեսրոպ եպս. Տ. Մովսէսեան, Միարան Գալուստ Տէր Մկրտաշէան, Հ. Ներսէս Սարգիսեան, Տոք. Բուպերզ, Վարդեմար Բելք և Բրոֆ. Լէման, և ուրիշներ եղած են այդ յոգնաջան աշխատութիւնները : Բայց շատ բան կը պարտինք մանուաւոր Սէյսի, Բելքի, Լէմանի, և Նիկոլաքիի. Սէյսի՝ իր հարուստ մեկնութիւններուն համար, իսկ միւսներուն՝ իրենց քննական տաժանքտ արշաւանքներուն, պեղումներուն, գիւտերուն համար :»

Սեպածեւ արձանագրութեանց զիւտին վրայ սոյն ծանօթութիւնները տայէ յետոյ, կ'անցնինք մեր պատմական, քանազով յաջորդ զյուսներուն մէջ ամբողջիւ ժակեղոնական տիրապետութեան և այդ շրջանի հայկական ներքին կեանքի պայմանները, ինչպէս նախնի չին քաղաքակրթութիւնը :

Այս ատիւ կարեւոր է զիտնալ թէ՛ պարսկական գերիշխանութիւնը Հայաստանի կարեւոր մասի մը վրայ՝ եղած է զարգացման ու բարգաւաճման շրջան մը, և միւսնոյն ժամանակ, իազազ առաջիմութեան ու բարեկեցութեան նոր դարադուխ մը : Ո՛ր է և նշանաւոր դէպք մը տեղի չէ՛ ունեցած, մինչև պարսկական վիթխարի տէրութեան կործանումը : Հայերը, այն աստիճան սերտիւ կապուած էին արքայական իշխանութեան հետ, որ աղեղնաւոր թէ՛ ձիււոր, տասնեակ հազարներով, Գարեհ Կողմանասի օգնութեան վազեցին Մեծն Աղեքսանդրի դէմ, Իսսի ճակատամարտին մէջ, ինչպէս կը գրէ Կուլինոսս Կուրոսս(**) : Յայտնի է թէ, հայ թագաւորները — որոնք զանազուրկ եղած էին 518 (Ք. Ա.)ին —, տակաւին չէին անհետացած : Իրենց յաջորդները կը դանենք նոյն իսկ սելեւկեան տիրապետութեան շրջանում, ուր անոնք զեռ մէկ քանի առանձնաշնորհուներ և մեծ յարգանք կը վայելէին, այնպէս որ արքայական ընտանիքին հետ ամուս-

(*) Շուլձ, 1828ին, Ֆրանսական կառավարութեան հրամանով, նախորդած է Հայաստան և հաւաքած շուրջ 42 արձանագրութիւններ : Սակայն, դժբաղդաբար, դեռ իր ուսումնասիրութիւնը չաւարտած ու չհրատարակած, ձուլամեկի Բուրս պեկին դաւաճանութեամբ սպաննուած է : Այս գիտնիկն ընդօրինակութիւնները հրատարակած է Ժիւլիլուս Մոնլ, *Փռուհայ Աղեղաղիք* բերքին մեջ, Ապրիլ-Մայիս-Յունիս, 1840, էջ 257-323 :

(**) Կուլինոսս, Ա. դաբեաւ լախին պատմիչը գրած է *Աղեքսանդրի պատմութիւն* մը :

նութիւններ կը կնքէին և երբեմն, սատրապի տիտղոսին տակ, երկիրը կը կառավարէին անկախօրէն։

Ինչպէս արդէն տեսանք, պարսկական տիրապետութեան բովանդակ տեւողութեանը մէջ, Հայերու հոծ ու ստուար թիւ մը կեդրոնացած էր Արարատի նահանգին մէջ. հոն համախմբուած էին Հայերուն մեծագոյն մասը, ինչպէս հասարակաց մօր մը շուրջը, և հետեւաբար, Արարատը նկատած էին իրենց բնիկ երկիրը, ճշմարիտ հայրենիքը, և Աստուածաշունչի այդ սրբազան լեռը կը հովանաւորէր հայ ազգին գոյութիւնը, հպաձանքի դարերու մէջէն։

Ղազար Փարպեցին իրաւամբ ուրեմն ըսած է թէ՛ Արարատը՝ Հայաստանի գլուխն ու կեդրոնն է։

Եւ այսօր, նոյն Արարատը, Հայոց Ազատ Մասիսը, միւս բոլոր լեռներէն աւելի դերազանցօրէն մօտիկ է մեր սրտերուն, Արարատով մենք կ'ըմբռնենք պատկառելի դարերու շիջելափառ անցեալ մը. և տակաւին կը յուսանք ու կը սպասենք որ Արարատի գագաթէն նորէն ծագի Խաղաղութեան և Ազատութեան Ծիածանը։

ԿՈՒՍԱԿԱԼՆԵՐ

Պ Լ Ո Ւ Խ Ծ Ե .

Մեծն Աղեփանգրի կսակր. — Ներքին խոսվութիւններ. — Հարաւային արեմտեան Հայասանի վրայ մակեդոնական գերիշխանութիւնը. — Նեոպսղոմեոս կուսակալը. — Հայոց Արզուարդ իշխանը կը վաճէ Նեոպսղոմեոսը. — Նեոպսղոմեոս երկրորդ անգամ կուսակալ կը կարգուի Հայասանի. — Նեոպսղոմեոսի վախճանը. — Արզուարդ Հայոց մեծ իշխանը Կապադովկիոյ կ'օգնէ մակեդոնացի զօրավար Ամինդէսին դէմ. — Մեծն Աղեփանգրի երկիրներուն բաժանումը. — Չորս տերութիւնները (մակեդոնական, ասիական, եգիպտական եւ սելեւկեան). — Եօթանասունը կը բարգձմեն Ասուածառուշը. — Հայասան՝ սելեւկեան գերիշխանութեան սակ. — Արւակ պարբեր. — Հրաճի իշխանապետին մահէն ետքը, Արսուազ իշխանը կ'ապստամբի Սելեւկիոյ դէմ. — Արսուազ իշխանին մահը:

Մեծ Մակեդոնացին, ինչպէս տեսանք, յանկարծ կը մեռնի Բաբելոնի մէջ, երբ, իր փառքի զենիթը հասած, Հնդկաստանէն նոր կը վերադառնար իր յաղթական բանակին հետ: Սակայն իր ողջութեանը խորհած էր կտակով յանձնել իր յայնածաւալ պետութիւնը չորս անուանի զօրավարներու, իր զինակից ու սննդակից ընկերներուն, որոնք կը կոչուէին Կասանդրոս, Անտիգոնոս, Պտղոմէոս ու Սելեւկիոս. պատուիրելով ասոնց որ իշխանութիւնը վարեն մակեդոնական անունին տակ. նոյնպէս կտակով իր արքայական մասնին յանձնած էր Պերդիկկասի, մակեդոնացի մեծ իշխանին:

Բայց Աղեփանգրի մահէն ետքը, այնքան ընդարձակ նահանգ-

ներու բաժանման ամբիւ աճագին խառվութիւններ կը ծագին յիշեալ չորս զօրավարներուն ու զօրքերուն միջեւ, այնպէս որ երկիրը կը մասնուի ներքին երկպառակութեան: Այս առանին կռիւներուն մէջ յաղթող կը հանդիսանայ Կասանդրոս իշխանը, որ կը սպաննէ Մեծն Աղեքսանդրի խորթ որդին Հերքիւլէսը, այսպէս գրկելով զանի Մահեղանիոյ գահը ժառանգելէ:

Ներքին խռովութիւնները կ'ընդարձակուին, հետզհետէ սուր հանգամանք մը կը ստանան, և ի վերջոյ, Մակեդոնիոյ աւագանին գումարուելով, աշխարհակալին խորթ եղբոր՝ Արիդէոսի կը յանձնեն տէրութիւնը, Մակեդոնիոյ թագաւոր կը կարգեն և իր հօր անունովը Փիլիպպոս կը կոչեն զանի: Նոյնպէս Մեծն Աղեքսանդրի նորածին երախան Աղեքսանդրը Փիլիպպոսի կը յանձնեն, զաչինք զնկով որ իր մահէն ետք՝ անի պիտի թագաւորէ: Դժբաղդարար այս նոր Փիլիպպոսը, վատ ու ապիկար մէկը, չի կրնար կառավարել երկիրը. ուստի, աւագանին բովանդակ տէրութեան խնամակալ և ընդհանուր հրամանատար կը կարգեն Պերդիկկաս իշխանը, իրրեւ եպարքոս, որ Մեծն Աղեքսանդրի մասնին կը գնէր, ինչպէս նաեւ այլ և այլ զոր-ձակալներ՝ անոր ձեռքին տակ: Պերդիկկաս, իրրեւ տէրութեան խնամակալ և ընդհանուր հրամանատար, իշխաններ ու կուսակալներ կը կարգէ բոլոր նուաճուած նահանգներուն վրայ:

Մեր ազգային պատմիչները, Խորենացիէն սկսեալ, որոշ յիշատակութիւն մը չեն ըներ մակեդոնական գերիշխանութեան հարիւր ութսուն տարի տեւող չրջանի մասին. ո՛չ մէկ ստոյգ ծանօթութիւն՝ Հայաստանի կացութեան վրայ, այդ խառնակ ու շփոթ, այդ փոթորկալից չրջանին մէջ: Արդէն, Հայկազանց վերջին թագաւորին Վահէի մահուան հետ, մարիրասեան հին պատմութիւնը կը վերջանայ. և այդ պատճառով է որ, մեր Խորենացին, Վահէի մահը պատմելէ յետոյ, կ'ըսէ. —

«Յայսմնեսկ մինչեւ ցրագաւորութիւնն Վաղարշակաց ի Հայս՝ ոչինչ նեմարեացոյն ունիմ պատմել քեզ. քանզի շփոթ իմն ամբոխից լեալ, այդ զարամբ ելանէին սիրել աշխարհիս:»

Հետեւաբար, ազգային այրիւրները ցամբած են այդ մասին և պէտք է դիմենք օտար աղբիւրներուն, այն զարեբու յոյն պատմագիրներուն: Տեսնենք, ի՞նչ կ'ըսեն ասոնք:

Եթէ հաւատ ընծայենք յոյն պատմիչներուն, Հայաստանի ամբողջութիւնը չէ՛ նուաճուած Յոյներէն. մաս մը միայն ինկած է մակեդոնական գերիշխանութեան տակ, երկրին այն նահանգները միայն, որոնք առջուց կը գտնուէին պարսկական գերիշխանութեան տակ. և այդ նահանգները՝ Հարաւային Աքեմենեան Հայաստանը կը

ներկայացնեն: Մեծն Աղեքսանդր, իր ողջութեանը, 325 (Ք. Ա.)ին, Հայաստանի այդ մասերուն վրայ կուսակող կարգած էր Միհրան անուն պարսիկ իշխան մը, որ իրեն յանձնած էր Սարգայի ամրոցը: Սակայն երբ մեծ երկրակալին կանխահաս մահը վրայ կը հասնի և տիեզերական պետութիւնը կը բաժնուի շորս զօրավարներուն մէջև, հարաւային Հայաստանը բաժին կ'իյնայ Փրատափէոնէս իշխանին, ինչպէս կը գրէ Յուստինոս պատմիչը (Վիլի մ. Գ. Գլ. 4): Միւս կողմէ, Պերդիկկաս եպարքոսը, Միհրան կուսակալին մահէն ետքը, ասոր ամրոց կը կարգէ Նէոպաղոմէոս մեծանուն իշխանը, արեւմտեան Հայաստանի վրայ. ամբարտաւան, դաժան ու ժանտարարոյ մարդ մը, որ շատ կը նեղէ ու կը հարստահրէ Հայերը, զանոնք յուսահատութեան մղելու աստիճան:

Նոյն տարիները, Կապադովկիոյ Արիարաթ թագաւորը մակեդոնական իշխանութեան դէմ ապստամբած ըլլալով, Մեծն Աղեքսանդրի ժառանգորդներուն ինամակալ Պիրդիկկասը ստուար բանակով մը դէպի Կապադովկիա կ'արշաւէ, ահռելի աւերներ ու կոտորածներ կը տփռէ ամենուրեք և ապստամբ թագաւորը բռնել ապով ողջ ողջ, մորթապեծ կ'ընէ և յետոյ կը խաչէ զանի: Յետոյ Կապադովկիոյ վրայ կուսակալ կը կարգէ Եւմենէս անուն ազդեցիկ ու հզօր իշխան մը, որ ժամանակով Մեծն Աղեքսանդրի քարտուղար եղած էր: Իսկ արքայորդին Արիթէս, փախստական, իր փոքրաթիւ մարդիկներով կ'ապաստանի Հայաստան, ինչպէս կը գրէ Սիկիլիացի Դիոդորոս և ուրիշ օտար պատմիչներ: Արիթէս, ականառես ըլլալով Հայոց կրած տառապանքներուն և մանաւանդ Նէոպաղոմէոսի վայրագութիւններուն, կը սկսի ապստամբութեան մղել ժողովուրդը բռնաւոր կուսակալին դէմ:

Հայերը գրկարաց կ'ընդունին արքայորդին և Արդուարդ հայ սատրապը, որ մեծ հռչակ հանած էր իր քաջութեան համար, իր դրօշակին տակ կը համարժեք պատկառելի բանակ մը, Սիրենաց և ուրիշ նահանգներէն, և յանկարծ կը յարձակի բռնաւոր կուսակալին՝ Նէօպաղոմէոսի վրայ, որ մազապուր փախչելով կ'ազատի: Այսպէս, Արդուարդ իշխանը կը յաջողի վճռել Հայաստանի կեղեքիչը, կուսակալութեան երկրորդ տարին և ինք, զօրքերուն և իշխաններուն կողմէն իշխանապետ կը հռչակուի:

Պերդիկկաս եպարքոսը բնականաբար չպիտի անտարբեր մնար այս դէպքերուն հանդէպ, բայց, անընդհատ պատերազմներու մէջ, ինք անձամբ չպիտի կրնար գլուխ հանել Հայաստանի նուաճումը. ուստի, Կապադովկիոյ կուսակալ Եւմենէս իշխանին կը հրամայէ անմիջապէս Հայաստան երթալ և ապստամբութիւնը զսպել: Եւմենէս ահազին բանակի մը գլուխ անցած՝ կը քայլէ դէպի Հայաստան, բայց

ի վերջոյ, կը համոզուի թէ չպիտի կրնայ նուաճել ապստամբները, ուստի, կը մտածէ առանց արիւնհեղութեան վերջացնել խնդիրը: Հաշտութեան համար բանակցութեան կը մտնէ Արղուարդ իշխանին հետ, ու կ'ըսէ. «Հայոց երկիրը թող ամօթ չհամարի գանուելու մակեղոնական իշխանութեան մեծազօր ձեռքին տակ. ուստի դուն, որ փրպացած ես երկիրդ, Նէօպօղոմէոսն ալ ընդունէ՛ իրրու այդ կողմերուդ կուսակալ, և վայելուչ մեծարանքներով պահէ՛ զանի և տուրքը՝ տարուէ տարի վճարէ՛ անոր ձեռքովը:»

Արղուարդ իշխանը հաւանութիւն յայտնելով, հետեւեալ պատասխանը կը զրկէ Եւմենէսի. — «Հերոսներու աշրութիւնը խաղաղութեան մը թող ըլլայ, հոգ չէ՛ թէ Նէօպօղոմէոս, մակեղոնական իշխանութեան սպասուորը մեր երկրին մէջ ալ ըլլայ վերակացու և հարկահան, մինք ալ մարդուն համեմատ գիտնաք ընծայել իրեն արժանի մեծարանքը, միայն, ա՛յ թող չը վարուի առաջուան պէս:»

Հաշտութիւնը կնքուեցաւ, Նէօպօղոմէոս Հայաստան եկաւ երկրորդ անգամ և մեծ պատիւներով ընդունուեցաւ Արղուարդ իշխանէն, որուն երկրորդականի հանդամանքով պիտի վարէր երկրին կուսակալի պաշտօնը: Բայց, ինչպէս վերեւ յիշեցինք, զոռոզ ու խռովարար մարդ, Նէօպօղոմէոս իր առաջուան կեղեքումները մոռցնող վայրագութիւններ սկսաւ գործել, այսպէս, ուզելով լուծել իր երբեմնի կրած նախատինքներուն վրէժը:

Կապաղովկիոյ Եւմենէս կուսակալը միշտ կը յորդորէր և յաճախ, պտտգամաւորներու միջոցաւ, խորհուրդ կու տար Նէօպօղոմէոսի, որ սիրաչաճի ժողովուրդը. զուր էր ամէն յորդօր, ամէն խրատ, ամէն ջանք, Նէօպօղոմէոս պատերազմի կը պատրաստուի Եւմենէսի դէմ և կեղծուպատիր միջոցներով կը համոզէ նաև Արղուարդ իշխանը, իրեն օգնութեան տալու հայ զօրքեր, որոնց հետ միացնելով նաև բազմաթիւ Մակեղոնացիներ, ուղղակի կը քայլէ Կապաղովկիոյ վրայ, առաջին ընդհարումով մը, չարաչար կը յարթուի և հաղիւ կը յաջողի ինքզինք ազատել ամօթալի փախուստով մը: Ծակատամարտը չի վերջանար ատով, երկու հակառակորդները դէմ առ դէմ կը ցցուին երկրորդ անգամ:

Թարգմանարար հոս կ'արտագրենք Հ. Մ. Չամչեանէն հետեւեալ հատուածը, յիշեալ ճակատամարտէն կենդանի պատկեր մը:

«Երբ երկրորդ անգամ իրարու զարնուեցան, այդ ճակատամարտին մէջ երկուքն ալ, ամենի գազաններու պէս կատաղած, մոլեգին յարձակեցան իրարու վրայ, և կարծես թէ զիրար պատուել ու կլկել ուղելով, սաստիկ բարկութենէն, երկուքն ալ իրենց ձիերուն սանձերը թողուցած, իրարու սկսան զարնել, և իրենց գլխէն ձգեցին սաղաւարտը և զրահները կը քաշքշէին. երբ անոնք այսպէս կը կուռէին,

իրենց ձիերը տակերնու՛ն փախան և երկուքն ալ գետին ինկան, իրարու պլլուեցան, և սկսան զէնքով մենամարտիլ, նոյն մարտին մէջ եւմենէս վիրաւորեց Նէոպոլոմէոսի սրունքը, և զանի զարկաւ գետին տապալեց. անի, թէև իր կորովը պահելով, ծունկի վրայ կեցած. երեք անգամ ուժով մը զարկաւ Եւմենէսի ազգրը և բազուկը, բայց այս վերջինը, կրկնելով իր հարուածը, անոր զուտը կտրեց: Իսկ զօրքերը փախչելով, վերադարձան Հայաստան, նոյնպէս ուրիշներ ալ՝ իրենց սեղերը:»

Նէոպոլոմէոսի եղբրական վախճանովը, Հայաստանի համար նոր կացութիւն մը կը ստեղծուի: Դիողորոս Սիկիլիացին թագաւոր կ'անուանէ Արդուարդ իշխանը, որ, երբ, քանի մը տարի վերջ, Պերդիկկաս եպարքոս ու կուստկայ Եւմենէս կը մեռնին, Հայաստանի բոցարձակ տէրը կը դառնայ: Իր առաջին գործը կ'ըլլայ Կապադովկիոյ Արիթէս արքայորդին — որ իրեն քով փախած ապստամանած էր — բազմեցնել իր հօրը գահին վրայ. ուստի, պատկառելի բանակ մը տալով անոր, կը զրկէ զանի Կապադովկիա, երթալ տիրելու իր հայրենի ժառանգութեան:

Արիթէս արքայորդին, հայկական գունդերով կը հաննի Կապադովկիա, ուր բուռն ճակատամարտ մը կը մղէ մակեդոնացի Ամիւնդէս զօրավարին դէմ, զոր կը սպաննէ, և բոլոր թշնամիները հալածելով ու վտարելով իր հայրենիքի սահմաններէն, կը տիրանայ իր հօրը գահին: Յետոյ, հայկական զօրքերը, մեծամեծ պարգեւներով կը վերադարձնէ իրենց երկիրը. չմոռնալով թանկագին բնձաներ զրկել մի եւ նոյն ժամանակ Արդուարդ իշխանին, ինչան երախտագրութեան:

Իսկ Արդուարդ իշխանը, 33 տարի երկիրը խաղաղութեամբ և զրեթէ անկախօրէն կառավարելէ յետոյ, կը մեռնի և իրեն յաջորդ կը թողու Հրանտ կամ Ռոնտ անուն իշխան մը, որ 45 տարի կ'իշխէ Սելեւկեան տիրապետութեան տակ, իրրեւ հարկատու կուսակալի մը:

Մեծն Ադեքսանդրի մահէն ետքը ծագած ներքին խռովութիւնները տամներկու տարի տեւեցին, մինչեւ որ, ի վերջոյ, ծանօթ չորս զօրավարները — Կասանդրոս, Անտիգոնոս, Պաղոմէոս ու Սելեւկիոս — յաջողեցան զսպել ապստամբութիւնները, և մեծ աշխարհակալին ընդարձակ երկիրները բաժնել իրենց միջեւ:

Այսպէս. Ադեքսանդրի երկիրներուն բաժանումովը, չորս տէրութիւններ կը կազմուին հետեւեալ կարգով. —

Մակեդոնական տէրութիւնը, Կասանդրոսի իշխանութեան տակ, որ թագաւոր հռչակուեցաւ Արիդէոս Փիլիպպոսէն ետքը:

Ասիական սերուքիւնը, Անտիգոնոս իշխանովը .

Եգիպտական սերուքիւնը, Պողոսմէոս իշխանովը .

Սելեւկեան կամ Ասորեսանեան սերուքիւնը, որուն իշխանն էր Սելեւկիոս ։

Մեր պատմութեան սահմանէն դուրս է թէև, բայց պիտի ջանանք հակիրճօրէն հոս դնել այդ չորս տէրութեանց յաջորդութեանց կարգը, հետևելով ազգային թէ օտար պատմիչներուն, որոնք այդ շրջանին վերաբերող խիստ շահեկան մանրամասնութիւններ կ'աւանդեն ։

Ա. Մ Ա Կ Ե Դ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Է Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Մեծն Աղեքսանդրի մահէն սկսեալ, 155 տարի տեւած է, յաջորդաբար ունենալով 17 թագաւորներ, որոնց անունները, նաև մէկ քանիներուն արարքները կը դնենք ստորև ։

1. Արիդեոս, Մեծն Աղեքսանդրի խորթ եղբայրը, Փիլիպպոս Բ. յորջորջուած, որ, ինչպէս տեսանք, իր ապիկար ու թոյլ ընթացքով արատաւօրեց Մակեդոնիոյ թագը, ա՛յն աստիճան որ, աւագանին հարկադրուեցաւ անոր վրայ ինամակալ և ընդհանուր հրամանատար կարգել Պերդիկկաս եպարքոսը ։
2. Կասանդրոս, չորս զօրավարներէն, որոնց յանձնած էր Մեծն Աղեքսանդր իր լայնածաւալ պետութեան կառավարութիւնը, ասի՛ է որ անոր Հերքիւլէս որդին սպաննեց, որպէս զի անի գրկուի գահին ժառանգութենէն և իրեն կնութեան առաւ մեծ երկրակալին քոյրը ։
3. Փիլիպպոս Գ.
4. Անրիպասրոս Ա., որ թագաւորեց իր Աղիֆանդը եղբոր հետ միասին ։
5. Դեմետր Ա.
6. Պիւոնոս
7. Լիսիմաքոս
8. Աքսինոյե, Լիսիմաքոսի կինը
9. Պսղոմեոս
10. Մէլեագրոս
11. Անրիպասրոս Բ.
12. Սոսթենես
13. Անտիգոնոս Ա.

14. Գեմեսր Բ.

15. Անտիգոնոս Բ.

16. Փիլիպպոս Գ., որ Կարթագինեցիներուն հետ դաշնակցելուով, Հռովմայեցիներուն դէմ կռուեցաւ, թէեւ չկրցաւ ընել բան մը :

17. Պերսեոս, մակեդոնական վերջին թագաւորը, որ նորոգելով Կարթագինեցիներուն հետ իր նախորդին կնքած դաշնակցութիւնը, ինք ալ պատերազմեցաւ Հռովմայեցիներուն դէմ, որոնցմէ չարաչար պարտուած, գերի տարուեցաւ Հռոմ, ուր երկու տարի մնալէ յետոյ, մեռաւ :

Իսկ մակեդոնական տէրութիւնը վերջացաւ և ինկաւ հռովմական պետութեան տակ :

Բ. ԱՍԻԱԿԱՆ ՏԷՐՈՒԹԻՒՆ

Այս տէրութեան կեանքը կարճատեւ եղաւ, սակաւամիւ թագաւորներով :

Առաջին թագաւորն էր Անտիգոնոս, որուն գահակից եղաւ նաև իր որդին Գեմետր : Ասոնք, Սելեւկոյ թագաւորին հետ պատերազմի բռնուած ըլլալով, չարաչար յաղթուեցան և ասիական տէրութիւնը վերջացաւ ու սելեւկեան կամ ստորեստանեան տիրապետութեան տակ ինկաւ :

Սակայն, ի վերջոյ, զանազան տէրութիւններու բաժնուած, հռովմական պետութենէն նուաճուեցաւ :

Գ. ԵԳԻՊՏԱԿԱՆ ՏԷՐՈՒԹԻՒՆ

Այս տէրութիւնն ալ, ինչպէս յիշեցինք վերև, Մեծն Աղեքսանդրի մահէն անմիջապէս վերջ հիմնուած, 293 տարի տեւած է, ունենալով հռչակաւոր թագաւորներ :

Եգիպտական տէրութեան առաջին թագաւորը՝ Պտղոմէոս Լագեան եղաւ, որ 39 տարի և 4 ամիս թագաւորեց : Հռովմայեցիներէն Սոդիւր կոչուած է, այսինքն Ալզասիչ, որովհետև ասիական տէրութեան թագաւորներէն՝ Անտիգոնոսի ու Գեմետրի բռնութենէն ազատած էր զիրենք : Պտղոմէոսի համբաւը տարածուեցաւ շրջակաները, իրեն ի պատիւ, կռուքերու պաշտամունքին համար անտառներ ձօնուեցան և իր անունով յորջորջուեցան իր յաջորդները : Իր թագա-

ւորութեան զերջին տարին էր, իր ձեռքով թագաւորութիւնը յանձնեց իր տղուն, Պսլոմէոս Փիլառէլիոսի:

Փիլառէլիոս, որ եղբայրասէր կը նշանակէ, չափազանց գրասէր թագաւոր մըն էր, գիտութեան և գրականութեան սիրահար: Յունաստանէն և ուրիշ քաղաքակիրթ կեդրոններէ բազմաթիւ ձեռագիր երկեր հաւաքել ապով, Աղեքսանդրիոյ մէջ հոյակապ գրատուն մը հիմնեց, ուր տեղաւորել տուաւ երկրի զանազան կողմերէն բերուած երբքեր և հնութիւններ: Այդ գրատան վրայ տեսուչ կարգեց Դեմետր Փալեր փիլիսոփան, որ Աթէնքի իշխաններէն էր:

Դեմետր Փալերի առաջին գործն եղաւ գրատունը տեղաւորուած ամէն տեսակ մատանները թարգմանել տալ յունարէնի, թագաւորին փառքին և յիշատակին յաւերժացմանը համար: Արիստէաս, Յովսէպոս ու Եւսեբիոս պատմիչները կը գրեն թէ Աղեքսանդրիոյ գրատունը՝ երկու հարիւր հազար գիրք կը պարունակէր:

Դեմետր հմուտ էր հրէական օրէնքներուն և իմացած էր թէ այդ օրէնքը արուած էր Աստուծոյ կողմէն. ուստի, թագաւորէն խնդրեց որ արտօնէ Աստուածաշունչի յունարէնի թարգմանութիւնը, որովհետեւ, կ'ըսէր, բոլոր մատաններուն մէջ ամենէն կատարեալը կը համարուի: Պալատականներէն Արիստէաս, համամիտ ըլլալով Դեմետրի, թագաւորին խորհուրդ կուտայ, Ս. Գիրքի ընագիրը ձեռք ձգել կարենալու համար, ազատել բոլոր հրեայ գիրիները, որոնք կը գտնուէին Եգիպտոսի մէջ: Թագաւորը կը համոզուի և անմիջապէս կը հրամայէ գնել այդ գիրները, 100,000 թիւով. որոնք կը գտնուէին հեթանոսներու ծառայութեան մէջ, և որոնց համար կը ծախսէ չորս հարիւր տաղանկ: Այդ ազատագրուած գիրիներուն մեծ մասը կ'ընդունի արքունի ծառայութեանց մէջ:

Յետոյ, Պսլոմէոս Փիլառէլիոս, Հրէից Եգիպտոս քահանայապետին նամակ մը կը գլէ գերիներու ազատագրումը ծանուցանող, և, այդ գործին մէջ իր բարերար դերը յիշելով, կը խնդրէ որ Աստուածաշունչի ընագիրներէն ընտիր օրինակ մը, նաև երբայական և յունական լեզուներուն քաջահմուտ գրագէտներ զրկէ իրեն, որպէսզի յունարէնի թարգմանեն Ս. Գիրքը:

Այդ նամակը քահանայապետին ամենըւ պաշտօնով, Աղեքսանդրիայէն Երուսաղէմ կը մեկնին պալատի հուսատարիմ պաշտօնեաներէն Արիստէաս և Անդրէաս, թէ՛ Սոզոմոնի տաճարին և թէ՛ քահանայապետին համար, հետեւեալ թանկարժէք ընծաներով. — Ոսկեծոյլ, երկու քուկէս կանգուն երկայն, մէկուկէս կանգուն բարձր և կէս կանգուն լայն, հոյակիրտ սեղան մը, երկու մարէ աւելի կշտող արծաթի երկու նոխրանոցներ, քսան սկեղէն, և երեսուն արծաթեղէն ախէներ, որոնց շինութեան համար յիսուն կշիւ սակի տաղանդ ծախ-

սուած էր, յետուած՝ հինգ հազար կտոր թանկագին քարերով, ոսկիէն հնգապատիկ աւելի արժէքով. նոյնպէս տաճարին զոհերու և սպասաներու պէտքին համար՝ հարիւր տաղանդ արծաթ:

Սգիտագար քահանայապետը կ'ընդունի բոլոր այս արքայական ընծաները, նամակին հետ, և անմիջապէս, երբայական 12 ցեղերէն վեցական բարուհիներ կ'ընտրէ, եօթնասուուն երկու թիւով, ամէնքն ալ իմաստուն զրագէտներ, օրէնագէտներ, ազնուազարմ մարդիկ, երբայական, յունական լեզուները խորապէս իւրացուցած, և նամակ մը գրելով, զանոնք ընծաներով կը դրկէ թագաւորին:

Եօթնասուուն երկու բարուհիները կը հասնին Ազեքսանդրիա, կը ներկայանան Փիլատոսին թագաւորին, որուն կը մատուցանեն քահանայապետին ընծաները, ինչպէս նաև, ոսկեկար տառերով, մագաղաթի վրայ դրոշմուած Աստուածաշունչի բնագիր մը:

Թագաւորը ջերմագին ընդունելութեամբ մը կը մեծարէ օրերով, ճոխ խնջոյքներ կը սարքէ և իրեն սեղանակից կ'ընէ հիւրերը, և իր զոհնազան հարցումներուն անոնց տուած պատասխաններէն դատելով, կը զնահատէ անոնց տաղանդն ու հմտութիւնը, իւրաքանչիւրին երեքական տաղանդ կը նուիրէ և պատանեակներ կը կարգէ անոնց քով, ծառայութեան համար:

Յետոյ, Ազեքսանդրիոյ մատենադարանին տեսուչը Դեմետր, կը հրաւիրէ զանոնք Փառոն կոչուած տեղ մը, ամբոխէն մեկուսի, բոլորովին անքոյթ առանձնոց մը: Այսպէս, պայտաի մը մէջ քաջուած, այս եօթնասուներկու Երբայեցիները, կը ձեռնարկեն Ս. Գիրքի թարգմանութեան: Ամէն օր, առտուները կու գային թագաւորը բարեւելու և իրենց առանձնոցը կը վերադառնային. իրենց բոլոր պէտքերը լիառատօրէն կը հոգացուէին արքունիքէն: Զարմանալի պարագայ մը կը պատուի, այն է թէ, այս եօթնասուուն երկուքները՝ 72 օրուան մէջ գլուխ կը հանեն ամբողջ թարգմանութիւնը:

Երբ գործը կ'աւարտի, Դեմետրի հրամանով, Ազեքսանդրիոյ գրեթէ բոլոր հրեայ բնակչութիւնը տեղ մը կը հաւաքուի: Ասոնց առջև տեղի կ'ունենայ թարգմանուած Աստուածաշունչին հրապարակային ընթերցումը, միահամուռ հաւանութեան ու գովեստներու ծափերու մէջ: Յետոյ, ներկաներէն, նաև թարգմանիչներէն և մեծամեծներէն շատերը կ'աղաչեն Դեմետրի՝ անխախտ և անփոփոխ պահել այս թարգմանութիւնը, որովհետև, կ'ըսեն, շիտակ, մաքուր և խնամալ թարգմանութիւն մըն է, և հետեւաբար, պէտք է ամէնը նոյնութեամբ անխախտ մնայ, ինչպէս որ է, և ո՛ր և է փոփոխութիւն չը կրէ: Դեմետր իր հաւանութիւնը կը յայտնէ և սոսկալի սպասուած լիքներ կու տայ անոնց, որոնք երբեք այդ թարգմանութեան վրայ յաւելում մը յանդգնին ընել և կամ անկէ բան մը պակասեցնել:

Այս արարողութենէն ետքը, թագաւորին կը տանին և առջեւը կը կարդան թարգմանուած Ս. Գիրքը, որուն պարունակութեան, օրէնսդրին և երբայական օրէնքներուն վրայ իր հիացումը յայտնելով, կը հրամայէ մեծ խնամով ու պատուով պահել զայն: Յետոյ, իւրաքանչիւր բարունիի երեք աղուոր պատուահաններ, երկու տաղանդ ոսկի, մէկ տաղանդ արծէքով բաժակ մը, և սեղանի ամրողջ սպաս մը նուիրելով, ճամբու կը դնէ զանոնք, Եղիազար քահանայապետին համար ալ բազմաթիւ մեծարժէք նուէրներով, խնդրելով, միեւնոյն ժամանակ, որ երբեմն երբեմն թոյլատրէ բարունիներուն, երբ որ ուզեն, իրեն այցելութեան գալու Աղեքսանդրիա:

Աստուածաշունչի յունարէն թարգմանութիւնը տեղի ունեցած է Պաղովէոս Փիլատելիոսի թագաւորութեան եօթներորդ տարին:

Այս կարեւոր դէպքին բոլոր մանրամասնութիւնները գրած է նոյն ինքն Արիստէաս պալատականը, ժամանակակից և ականատես պատմիչ մը, այն որ պատգամաւոր զրկուած էր Երուսաղէմ, Եղիազար քահանայապետին քով: Արիստէաս մէկիկ մէկիկ յիշած է իր գիրքին մէջ Եօթամասուն երկու թարգմանիչներուն անունները, ինչպէս նաև ուրիշ յարակից սարգապաներ: Նոյնպէս, Յովսէպոս (Գիրք Նախնեաց, ԺԲ. 2), Եպիփան (Գիրք Չափուց), Եւսերէոս (Վանխա. Աւեսար. Գիրք Ը.) մեր Խորենացին (Ա. 1), Վարդան պատմիչը, և ուրիշ մէկէ աւելի ազգային պատմիչներ, ընդօրձակօրէն գրած են Ս. Գիրքի թարգմանութեան մասին, որ կը կոչուի Նօրանասնից: Այս թարգմանութիւնը մեծ յարգ վայելած է ո՛չ միայն Յոյներուն, այլ և բոլոր քրիստոնեայ ազգերուն մէջ, և այդ պատճառով է որ Ս. Սահակ և Ս. Մեսրոպ, յունական ձեռագիր օրինակի մը վրայ կատարեցին Աստուածաշունչի հայկական թարգմանութիւնը, որ քաղուհի բարգմանութեանց կը կոչուի, և որուն վրայ պիտի խօսինք իր կարգին:

Եգիպտական տէրութիւնը, ինչպէս վերև յիշեցինք, 293 տարի տարեցաւ. աճաւասիկ, Պաղովէոս Փիլատելիոսէ վերջ, իրարու յաջորդող եգիպտական վեհապետներուն անունները. — Պաղովէոս Եւերգետէս(բարերար), Պաղով. Փիլոպատր (հայրասէր), Պաղով. Եպիփան, Պաղով. Փիլովէատր (մայրասէր), Փիսկոն Եւերգետես Բ., Պաղով. Լատր, իր մօր՝ Կլէոպատրա Ա. ի հետ, յետոյ Աղեքսանդր կրասեր որդին (որ իր մայրը կը սպաննէ ու կը փախչի Կիպրոս), Կլէոպատրա Բ., մայրասպան Աղեքսանդրը (որ կ'ամուսնանայ Կլէոպատրայի հետ և սպաննելով թագուհին, կը փախչի Տիւրոս, ուր կը մեռնի). Պաղով. Նօթոս, Աւլեսէս մակղիրով, յետոյ Բերենիկէ և Տրիտենա թագուհիները: Իսկ Պաղովէոս Աւլիսէս, որ Հում ապաստանած, Յուլիոս Կեսարէն ու Պոմպէոսէն պաշտպանութիւն կը խնդրէր, անոյս կը վերադառնայ Եփեսոս, և յետոյ Գարխանոսի ձեռքով վերստին ձեռք կը ձգէ իր գահը:

Պաղոմէոս Աւետէս կը մեռնի, ձգելով չորս զաւակներ. Պաղոմէոս Մանուկ, Պաղոմէոս Փոքր, Կլէոպատրա Գ. և Արսինոյէ: Պղոմէոս մանուկ, երէց որդին, իր հօրը կտակին համաձայն, իր երէց քոյրը կնութեան կ'առնէ և անոր հետ մէկտեղ կը թագաւորէ հսովմէական թեաւրիութեան տակ: Սակայն, ժամանակ մը վերջը, իր քոյր-կնոջ հետ զժտուելով, մէկ քանի անգամ կ'ապստամբի և պատերազմ կը մղէ Յուլիոս Կեսարի դէմ, որմէ չարաչար կը յաղթուի նեղսի եղբւրքը, և բեռնարարձ Նաւ մը նետելով լնճովնք, փախչելու միջոցին կը խեղդուի: Իսկ Յուլիոս Կեսար կը տիրէ Եգիպտոսի, զոր չուզեր սակայն հռոմէական նահանգ մը նկատել, ուստի զայն կը պարզուէ Կլէոպատրայի, որուն շնորհիւ կրցած էր ձեռք բերել այս ռազմական յաջողութիւնները, և որպէս զի չմեղադրուի թէ՛ երկրի մը կառավարութիւնը կնոջ մը ձեռք յանձնած է, կը հրամայէ Կլէոպատրայի ամուսնանալ իր միւս եղբոր՝ Պաղոմէոս Փոքրի հետ, որ դեռ տասներմէկ տարու եր, և ասոնց կը յանձնէ թագաւորութիւնը. բայց Կլէոպատրա կը վարէր իշխանութիւնը: Կեսար իրեն հետը կը տանի Կլէոպատրայի քոյրը՝ Արսինոյէն, որ ժամանակ մը վերջ, իր երկիրը կը վերադառնայ:

Եգիպտոսի փեղեբրանոչակ թագուհին է այս Կլէոպատրան, որ, ամուսնութենէն չորս տարի ետքը, թունաւորելով կը սպաննէ իր եղբայր-էրիկը, տասներհինգ տարու պատանի մը, և ինք առանձին կը թագաւորէ. յետոյ իր հոմանի Անտոնինոսի ձեռքով թունաւորել կուտայ նաեւ իր քոյրը, Արսինոյէն: Կլէոպատրա թագուհին կը մեռնի վերջապէս, և իրմով կը վերջանայ Մեծն Ազգեքանդրի եգիպտական տէրութիւնը:

Գ. Ս Ե Լ Ե Ի Կ Ե Ա Ն Տ Է Ի Ո Թ Ի Ի Ն

Սելեւկեան կամ ասորեստանեան տէրութիւնը, որ 243 տարի տեւած է, սկսեալ Մեծն Ազգեքանդրի մահուան 12րդ տարիէն, ունեցած է քսանէ աւելի թագաւորներ, մինչև որ, ի վերջոյ, հսովմէական պետութեան տակ ինկած է:

Իպսոսի(*) հռչակուար ճակատամարտին իբր անմիջական հետև-

(*) ԻՊՍՍՍ, նախկին Փոլսիոյ բերդափաղակ մըն էր, ուր, Ազեկ-սանդրի զօրավարներուն միջեւ մղուեցաւ մեծ նահատակարար մը, 301 ին (Ք. Ա.): Ասիական տէրութեան Անտիոքոս քաղաքը, Սելեւկոսն ու Լիսիմախոսն յաղրուած, այդ նահատակարարին մէջ կ'իյնայ եւ իւ տէրութիւնը Սելեւկեաններուն ձեռքը կ'անցնի:

ւանք, մակեղոնական երկիրներուն երկրորդ բաժանու՛մը տեղի կ'ու-
նենայ, և այդ բաժանումով, Հայաստանը բաժին կ'իյնայ Սեյւեկեան
տէրութեան, որուն գերիշխանութիւնը բաւական երկար մասնաւ
պիտի տեսէր:

Սեյւեկեան տէրութիւնը, քիչ ատենուան մէջ կը տիրէ գրեթէ
բոլոր արեւելեան ազգերուն, Պարսիկներուն, Մարերուն, Հայերուն
ու Պարթեւներուն, որոնց վրայ կը յաջողի հաստատել և ստրածել իր
գերիշխանութիւնը, իր կուսակալներուն ձեռքով: Այս նոր տիրապե-
տութեան զէմ ո՛չ ոք կը համարձակէր գլուխ վերցնել, այնքան սար-
սափ սփռած էին սեյւեկեան թագաւորները:

Սեյւեկեան և ասորեստանեան տէրութեան Անախոքոս Թէոս Բ. ի
թագաւորութեան էրդ սարին, Պարթեւներու իշխաններէն մէկը,
Արշակ Արքաճամի քեռուրական սերունդէն, սեյւեկեան իշխանու-
թենէն կ'ապստամբի, Պրեկէս կուսակալը կը վճռուի և ինքզինք
Պարթեւներու թագաւոր կը հռչակէ Քուշաններու երկրի Բանջ քա-
ղաքին մէջ:

Արշակ օրէ օր կը զօրանայ և տեղեկեական համբաւ մը կը ստա-
նայ, այնպէս որ, իր տիրած երկիրներուն բոլոր ազգերը, Պարսիկ-
ները, Հայերը, Մարերը, ամենքն ալ իր ազգին անունովը պարբեւ
կը կոչուին: Արեւելքի այս նոր վեհապետը զրամ կը կարէ իր անու-
նով, զրամին մէկ երեսին վրայ փորագրել տալով իր անունը, և
միւս երեսին վրայ՝ իր ամբողջ արծանը, աթոռի մը վրայ բազմած, և
ձեռքը կարկառած՝ աստուածունին ձեռքէն արեւունի ռօտը ստա-
նալու ձեռով մը, զրամին շուրջը յունարէն տառով փորագրուած՝ հե-
տեւեալը. — Վասիլեոս Վասիլեոն Արաբու եվերդեսու եբիֆանիս
ֆիլիլեկոս ա մեկոս զօրբիւու. այսինքն՝ Արքայից արքային՝ Արշակի,
բարերարի, մեծանունի, յունաւէրի, զօրէի մէջ (մակեղոնական ամիս):

Արշակի և իր յաջորդներուն գրեթէ բոլոր զրամներուն վրայ կը
գտնուի նոյն զրոյժը, ինչպէս կը հաստատեն մինչև ցարդ արքունի
գանձատունները գտնուող զրամները: Եւ օրովհետեւ յունասեր բառը
կայ այդ զրամներուն վրայ, շատ մը պատմիչներ, որոնց մէջ է նաև
մեր Խորենացին (Պիբե Բ. Պլ. 2), ասկէ կը հետեւցնեն թէ՛ Ար-
շակ և իր յաջորդները բարեկամական յարաբերութիւններ մշակած են
Հռոմէացիներուն հետ:

Այս Արշակ Պարթեւը կը պատերազմի Անախոքոս Թէոսի ազուն՝
Սեյւեկիոս Կալինիկոս Բ. ի զէմ, զոր գերի կը բռնէ և ինք այդ
կերպով կը տիրէ Բաբելոնի. իսկ Կալինիկոսը զօրձեալ ազաւ կ'ար-
ձակէ երթալ նստելու Անախոք, իր արքայական աթոռը:

Կ'ուսանողուի թէ, այս Արշակին օրով Փլուսիլ կոչուած նորա-
նշան թուշուր, Եղիպատի Հելիոպոլիս քաղաքին վրայէն թուշկով:

ուրիշ անթիւ թռչուններէ չըջապատուած, կ'երեւնայ Արշակի օրով: Տակիտոս (Surtqur, գիրք 9, գլ. 28) կը գրէ թէ այս երեւումը բարեգուշակ նշան մըն էր Արշակի պարթեւական տէրութեան ծագման եւ ընդարձակման:

Սելեւկեան տէրութեան կողմէն Հայաստանի կուսակալ կարգուած Հրանտ իշխանապետը կը մեռնի այդ ատենները, և, երկրին ազդեցիկներէն Արտաւազ կամ Արտաւազան անուն խրոխտ ու կորովի իշխան մը կ'ելլէ մէջտեղ. բռնի կը տիրէ երկրին և իր իշխանութիւնը կը տարածէ մինչեւ Ատրպատական և չրջակայ նահանգներուն սահմանները, ինչպէս կը գրէ Պոլիւք, նոյն դարու ժամանակակից. նախնի մատենագիրներէն (Վիլք Ե. 399) * Յետոյ, սելեւկեան տէրութեան դէմ ապստամբութեան զրօշը պարզելով, սովորական տուրքերուն առաքումը կը զարդեցնէ:

Արտաւազի ապստամբութեան լուրը շուտով կը հասնի Սելեւկիա, և Անտիոքոս Գ. թագաւորը, որ Մեծ կը կոչուի, սաստիկ բարկացած, մեծ պատրաստութիւններով կ'աշակէ Հայաստան: Հայոց իշխանը չի' համարձակիր պատերազմիլ անոր դէմ, և մեծամեծ ընծաներով պատուիրակութիւն մը դրկելով անոր, հաշտութիւն կը խնդրէ և կը խոստանայ այնուհետեւ անխափան վճարել տարեկան տուրքը: Այսպէս, առանց արիւնհեղութեան, կը յաջողի ետ դարձնել թշնամին և ինք անվրդով իշխանութիւնը կը վարէ շատ աարիներ:

Անտիոքոս, կէս ճամբան հասած, կը ստիպուի մեծ բանակով մը քալել պարթեւ Արշակի վրայ, սակայն մեծկակ վնասներով կը պարտաւորուի ետ դառնալ իր երկիրը, ինչպէս կը գրէ Պոլիւք (Վիլք Ժ.):

Նոյն տարիները կը մեռնի Արշակ պարթեւ, 34 տարի անկախ թագաւորութիւն մը վարելէ յետոյ, և իրեն կը յաջորդէ իր Արտաշէս որդին: Պոլիւք կը պատմէ թէ, այս Արտաշէսի վերջին օրերուն հանդիպեցաւ մեր Արտաւազ իշխանին մահը, իսր ծերութեանը մէջ, ամբողջ կէս դարու միջոց մը վարելէ յետոյ անկախ իշխանութիւն մը:

Անտիոքոս թագաւորը, իմացած ըլլալով Արտաւազ իշխանին մահը, անմիջապէս Հայաստան կը դրկէ իր աւագանիներէն երկու բոլեշխներ կամ կուսակալներ, մէկը՝ Արտաշաս կամ Արտաշիաս՝ Մեծ Հայքի վրայ, միւսը՝ Դարեհ կամ Զահրաս՝ Փոքր Հայքի վրայ:

Արտաշաս իր աթոռը կը հաստատէ Արարատի մէջ, Երասխի եզերքը, իսկ Դարեհ՝ Մոփաց աշխարհին մէջ, Եփրատի եզերքը:

Բնագաւազութիւնը՝ յայոց մեջ. — Պաշտամունքի սրբավայրերը.
 Ուրարսուի կրօնը. — Մենեան արձանաւորութեան 46 ասուածները.
 Ուրարեան Պանթեոնին երրորդութիւնը եւ ուրիշ երկրորդական,
 երրորդական ասուածները. — Կրօնապատմական երեւոյթ մը.
 «Խայտի» գերագոյն ասուածին եւ Հայկի առնչութիւնը.
 Խալճեաններու դիցաբանութեան մեջ՝ ասորեստանեան
 կամ քաղղեական ազգեցութիւնը. — «Մարդուկ»
 ասուածը՝ իր քառեակ հետեւորդ շուներով.
 Ազգային դիցանամար մը՝ «Ակոբի
 Գուռ» կոչուած (Մենե Գաբուսի)
 արձանագրութեան քաղուած.
 Կրակի պաշտամունքը
 Հայոց մեջ :

Կրօնը մարդուն հետ կը ծնի, և առանց կրօնի ո՛չ մէկ ժողովուրդ
 կրնայ ապրիլ, կ'ըսեն իմաստասէրներէն շատերը: Պատմութիւնը մեզի
 ցոյց կուտայ թէ՛ մարդկային ազգը, իր գոյութեան ամենահին շըր-
 ջաններէն սկսեալ, կրօնքի մը ծառայած է, և առանց կրօնի չէ կըր-
 ցած ապրիլ, ինչպէս որ անկարելի է կեանքը՝ առանց օդի. ջուրի ու
 սնունդի: Եւ Հայերը, իբրև վաղեմի ժողովուրդ մը, նախապատ-
 մական դարերու մէջ իսկ, ունեցած են իրենց յատուկ, սեփական
 կրօնը. Բնագաւազութիւնը: Երկինքի երկու մեծ լուսաւորները — Արև
 ու Լուսին — կը պաշտէին, և յետոյ, աստղերը:

Այս կարծիքին մէջ համաձայն են թէ՛ հին և թէ՛ արդի բանա-
 սէրները. նոյնը կը հաստատեն սեպածեւ արձանագրութիւնները, ինչ-
 պէս նաև վերջին գիտական հետազոտութիւնները:

Հայաստանի զանազան ժողովուրդները, հովիւ, երկրագործ թէ
 որսորդ, երկինքը կը համարէին երկրի բոլոր դէպքերուն նախապատ-
 ճառն ու անօրինողը: Արեւին օրական ծագումն ու մուտքը, լուսնի
 մտած պարբերական փոփոխը, աստղերուն տարեկան շրջանը, մոլո-
 րակներուն փոփոխ ընթացքը. մէկ խօսքով, բոլոր երկնային բներե-
 ւոյթները, այս ամէնը մեծապէս կ'ազդէր վաղնջական ժողովուրդնե-

րուն ապրելակերպին վրայ, այնպէս որ, այդ երեսոյթներէն սովորած էին օրերուն, ամիսներուն ու եղանակներուն բաժանումը, ինչպէս և իրենց այլ և այլ զրազումներուն կանոնաւորումը:

Բնապաշտութիւնը, յայտնի է, անյիշատակ զարերու ընթացքում, ա՛յն աստիճան զարգացած է որ՝ երկրագնդի նախաքնիկները սկսած աստղերու շարժման մէջ որոնել իրենց ճակատագրին խորհուրդը: Մեր հայերը, ընդգրկած էին զիրենք շրջապատող ուրիշ ժողովուրդներու կրօնը, Բնապաշտութիւնը:

Այս կրօնի աստուածներուն տաջինը կը համարուէր Արեգակը, արու աստուածութիւնը, և երկրորդը՝ Լուսինը, էգ աստուածութիւնը ասոնցմէ հոտքը կուգային աստղերը, որոնք, առհասարակ, այլ և այլ անուններու տակ, կը պաշտուէին: Արեւի պաշտամունքը խորունկ արմատներ ձգած էր Հայաստանի մէջ, այնպէս որ, ինչպէս պիտի տեսնենք պատմութեանս ընթացքում, Քրիստոնէութեան մուտքէն յետոյ իսկ, ժողովուրդին մէջ, իրենց նախնի կրօնին կառչած յամառներ չէին պակսեր, օրինակի համար, Արեւուդիւններ որոնք քրիստոնէական շրջաններուն մէջ ալ արեւը կը պաշտէին, և որոնց սերունդէն են այսօրուան Եկեղիսիները:

Թէ որքան զարգացած էր արեւապաշտութիւնը Հայկական խաւերուն մէջ, պարզ է. առէք Շարականները, մեր եկեղեցական գրականութեան հատընտիր գո՛րծները. տեսէք ինչպէս Արեւը բաղդատուած է Աստուծոյ և Փրկիչի հետ, «Արեգակն Արդարութեան», և, հայկական ամիսներէն մին Արեգ կը կոչուի, նոյնպէս Երասխի հիւտիւսային կողմը, Հայաստանի գաւառներէն մէկը՝ Արեւիմ, կամ որ նոյն է, Արեւի կուսակիցներ: Կարծողներ ալ կան թէ վանի հնագոյն անունը պէտք է եղած ըլլայ ո՛չ թէ Շամիրամակերտ, այլ Շամ-Միհր-Կերս, արեւաքաղաք, որովհետեւ Շամ-Միհր զենդերէն կը նշանակէ Թագաւոր կամ Աստուած-Արեւ: Նոյնպէս, Վանի հարաւային կողմերը, ուրիշ քաղաք մըն ալ Ոսան կը կոչուէր և Լուսնի նուիրուած էր:

Հայերը, Արեւի, Լուսնի և աստղերու պաշտամունքին հետ կը միացնէին նաև ջուրի պաշտումը, ջուրին, զոր Աղբիւր-Եղբայր կը կոչէին: Եւ սակայն օդէն, արեւէն, յուսնէն, աստղերէն, ջուրէն զատ, ուրիշ աստուածներ ալ սանդձած էին մեր բնապաշտ նախահայրերը: Ասոնցմէ զատ, որոնք աստուածային նուիրապետութեան առաջին կարգը կը կազմէին, կային նաև հայկական ուրիշ երկրորդական աստուածներ, տարրեր նկարագիրներով և զօրութիւններով օժտուած. օրինակի համար, Թարալիզ կամ Առլիզ, Քաջի, Պարիկ, Յուսիկապարիկ, Համբարու, ևն. անուններ, որոնք յաջողած են պահել իրենց յիշատակը քրիստոնէական մատենագրութեան մէջ:

Հայերը նահապետական շրջանում, երբեք սովորութէն չունէին

բազիլներ, արձաններ ու մեհեաններ կանգնելու իրենց աստուածներուն համար, որոնց պաշտամունքի սրբավայրեր ընտրած էին ընդհանրապէս անտառներու խորերը, և լեռներու կատարները: Կուռք ու տաճարներ կանգնելու սովորութիւնը վերջէն մուտ գտած էր, Ասորեստանի ու Փոքր Ասիոյ ուրիշ ազգերէն փոխ առնուած: Լեռներու գագաթները կը բարձրանային և հոն զոհ կը մատուցանէին Արեգ-Աստուածին, իսկ Լուսնի երկրպագութեան յատկացուած էր Սեպուհ լեռը:

Մարդկային ընկերութեան նախնական կեանքի դարերուն մէջ կը տեսնուի թէ՛ նահապետները, տանուտէրները կամ իշխանները, որոնք իրենց ձեռքին մէջ առած էին երկրին քաղաքական իշխանութիւնը, քրմապետներ էին միեւնոյն ժամանակ, կրօնի բարձրագոյն պաշտօնեաները: Յիշենք առասպելական շրջանի նահապետներէն Հայկի որդին Արմենակը, որ Արմաւիրի մէջ կը տնկէ Սօսիներու սրբազան անտառը, որուն սաղարթներուն սօսափէն ու տերեւներուն խաղաղ կամ խռով շնջիւնէն այլ և այլ բարի կամ չար գուշակութիւններ կը հետեւցնէին քուրմերը. յիշենք նոյնպէս, Արայեան Կարդոսի որդին տաղանդաւոր Անուշաւանը, որ իր հաւուն՝ Արմենակի տնկած սօսիներու անառախ պաշտամունքին նուիրուելով՝ Սօսանուէր կոչուած է: Չմոռնանք նաեւ հին երգերուն մէջ աստուածացած Վահագնի սերունդը, որոնք ոտանձնած են նաեւ քրմապետութեան պաշտօնը:

Այս ամէնէն կարելի է հետեւցնել թէ՛ Հայերը պաշտամունքի յատուկ սրբավայրեր չեն ունեցած, բաց ի լեռներու գագաթներէն և անտառներէն:

Ֆրանսացի ժԹ. դարու պատմագիր և հուշակաւոր եգիպտաբան Մարէրօ, հետեւեալ շահեկան ծանօթութիւնները կու տայ մեր Ուրարտուի կրօնին նկատմամբ (Մարք. Հիմ Պատմ. հս. Գ. 60):

«Գոնէ դուրսէն գիտողի մը համար, Ուրարտուի տաճարներուն ու պալատներուն միջեւ շատ փոքր տարբերութիւն մը կայ. առաջինները կանոնաւոր որմածք ունէին և աւելի զիտական գիրք մը: Պղնձէ աւազանը և արձանները կը խափանէին դուրիթի ճամբան: Կահարասիքը՝ սեղաններ էին կամ բազիլներ, նուիրման վէմեր, մարդու կամ անասունի կուռքեր, խառնարաններ յարեւմտան անոնց, որոնք գոնուեցան եփրատեան սրբարաններուն մէջ, սակայն ծանօթ չէ թէ ինչի կը գործածուէին անոնք, չենք գիտեր պաշտամունքին ո՛չ բնութիւնը, ո՛չ նալ մանրամասնութիւնները:

«Գերագոյն էակ մը՝ Խալսի — Երկինքի տատուածը — կը պաշտպանէր բովանդակ ազգը, որբան կարելի է ենթադրել, և իր անունը կուտար անոր, ինչպէս Ասուր՝ Ասորեստանցիներուն, Կուսուս՝ Կուս-

սացիներուն, Խասու՝ Խատիներուն կամ Քեասացիներուն: Եւ այս Խալտին, տիեզերքի կառավարութեանը մէջ իրեն ընկերակից ունէր Տիեապաս՝ օդին աստուածը, և Արդիւնիս՝ արեւին աստուածը: Այս դերագոյն երրորդութեան կը կապուէին երկրորդական աստուածներու հոյեր:

«Միակ արձանագրութիւն(*) մը կայ որ 46 կը հաշուէ ասոնց թիւը, որոնց մեծ մասը կը պաշտուէին որոշ վայրի մը մէջ: Կ'երեւայ թէ այս Պանթէոնը ընիկ դիցունի մը չէ՝ ընդունած երբեք. մինչեւ ցարդ անոնց մէջ նշանակուած միակ դիցունին՝ Աարխս կամ Շարխ, հաւանականօրէն Նինուէի կամ Արբելայի Իշտարին մէկ տարրեր տիպը պէտք է եղած ըլլայ. շատ վերջերը փոխ առնուած՝ Ասորեստանցիներէն: »

Ահաւասիկ այդ 46 աստուածներուն անունները, Սէյսէ թարգմանուած և Բանասերին մէջ հրատարակուած (1906, էջ 85):

1. Աղարուտաշ	24. Հանապշաշ
2. Արդինիշ	25. Հարուբախինիշ
3. Ադիաշ	26. Իպխարիշ
4. Այրանիշ	27. Իրմուշինիշ
5. Ալղուտուշինիշ	28. Կիլիրանիշ
6. Ալուշ-Ուրուլիվէ-Շիվալի	29. Կուէբաշ
7. Արազաշ	30. Խայրախինիշ
8. Արդուհարախիբուշ	31. Խարաշ
9. Արդիշ	32. Խուդուինիշ
10. Արհաշ	33. Նաշախինիշ
11. Արնիշ	34. Շիրիտուշ [տուած]
12. Արդիմէլաշ	35. Շէլարդիշ (լուսնի աս-
13. Արցիբադդիինիշ [աստուած]	36. Շինիրիշ
14. Աուիշ կամ Ավիշ (ջրի)	37. Շուբաշ
15. Այաշ (հողի աստուած)	38. Շարդիշ (տարւոյ աստուած)
16. Բարաշ	39. Շիլիաշ
17. Բարցիաշ	40. Յինուխարդիշ
18. Դէտուախինիշ	41. Տալապուբաշ
19. Դուբանիշ	42. Ուաշ կամ Վաշ
21. Էլիհահաշ	43. Ուիաշ կամ Վիաշ
20. Դուշպուշ (Տոսպի աստուած)	44. Ունիինիշ
22. Էլիպրիշ	45. Ուբաշ
23. Էրինաշ	46. Զուկուինիշ

(*)Այդ աստուածները բունդ արձանապուրիւնը կը գտնուի Վանայ Բաւապալուերէն մէկուն՝ Մհեր Գարուսիի վրայ:

Այս աստուածներուն անունները հոս դնելէ յետոյ, Հայոց հիւ
կրօնին նկատմամբ աւելի յստակ ու պարզապէս գաղափար մը տարու
փափագով այս էջերուն մէջ կ'արտագրենք «Աւարտութիւն» թանգրի
դիւանակ Պ. Գ. Մետրոպոլիտանի տողերը, որոնք ուսումնասիրու
թիւն մը կ'ամփոփեն, քաղուած ըլլալով արդի գիտուններուն երկերէն:

«Աստուածները, որոնք կը գրէ Պ. Գ. Մետրոպոլիտան, ակնարկելով յիշ
եալ 46 աստուածները, որոնք արարական Պանթէոնին մէջ կը յիշուին
նաև ո՛չ միայն Խաչատուրի երկերէն, այլ և Խաչատուրի ինքն
Սարգսի կամ Շարիշ, Բուզմաշտու կամ Բաղրարդու Սամսոն կամ Շամ
սու (Արեւի աստուած), ևն:

«Մհերեան այդ նշանաւոր արձանագրութիւնը կը խօսի նախ
«Տուրի 4 խաչիցներ»-ու (տող 12, 21), «Ժողովուրդներու խաչիցներ»-ու
Բերքի խաչիցներուն (տող 12, 19) Պաշտօնական խաչիցներու և ու
րիշներու վրայ: Այսպէս, երկրին բոլոր աստուածները հասա
րակ անուն մը կարծես թէ ունէին և առհասարակ կը կոչուէին Խաչ
սի, ճիշդ ինչպէս Խաչատուրի կամ Քեղարարներուն աստուածները կը
կը կոչուէին Սիւլեյիս կամ Սիւլիս:

Իւրաքանչիւր գաւառ ունէր իր առանձին աստուածը, գուցէ իր
առանձին բարքերով և աւանդութիւններով: Եւ սակայն, ինչպէս որ
զանազան աւանդները հնազանդած էին Բիւրիւնի կամ Աւարտութի
թագաւորներուն մականին տակ, նոյնպէս, բոլոր այն աւանդներուն
մէջ պաշտուած աստուածութիւնները Մեծն Խաչատուրի հեղինակութեանը
տակ նուաճուած էին, Խաչատուր, որ էր «Վանի թագաւորներուն պաշտ
պանը», Աւարտական երկրութեան գլուխը, և երկրորդական աս
տուածներու պէտք (*):

«Կրօններու պատմութեան բազմազան աստուածներու թիւը
յոյց կուտայ թէ հոն, Հայաստանի մէջ ալ, տեղի ունեցած է կրօ
նապատմական այն երեւոյթը, զոր կը տեսնենք սուրանական ուրիշ
ժողովուրդներու, քանանական բնակչութեանց և Եգիպտոսի մէջ
Ազգային զիցարանութիւնները՝ գաւառային զիցարանութիւններու
ամփոփոյք կամ ժողովածու եղած են միշտ Գերագոյն և ամբողջ աս
տուածութիւնները ծնունդ առած են կարծես աշխարհակալներու հետ
երբ Մեծիփի կամ Թերէի իշխաններէն մին իր իշխանական կայսր
կ'ընդարձակէր ու աէր կ'ըլլար ուրիշ գաւառներու (Նօմ), Մեծիփի
կամ Թերէի աստուածներն ալ, իրենց կարգին, ամբողջ կը դառնային
նուաճուած աստուածներու վրայ:

(*) Մտրկան, էջ 106-107: Հմմտ. Գաւառ Վանեան արձանագրու
թիւններ, մասնաւորապէս Արքիպիստ Ա. Սարգսիսի իս. բեւե
ռագիր, 9. 10. 24. էլիսի 9. բեւեռ. 1-4. Զուարթնոց Եկեղեց
Արձանագր. 19. 20. 23. եւայլն:

« Երբ Իսրայելի սրղինները յաղթական մուտք մը կը գործէին քանտնի երկիրը, իրենց աստուածը, Սինայի տեղական աստուածը, անկորստայինն Եհովէ, յաղթող ու տիրող կ'ըլլար Պաղատինի բոլոր տեղական Բահայներուն, Բեթէլներուն վրայ: Երբ Ասորեստանի բանակները, աւեր ու քանդ կը դաձնէին ուրիշ երկիրներ ու կը նուաճէին դաննք, երբ Ասուրը պաշտող աշխարհակալները մերթկի մը նման կը սուբային երկրէ երկիր ու միահնձան տէր կը դառնային անոնց, Ասուրն ալ նոյն աշխարհակալութիւնը կը կատարէր կարծես թէ նամի աստուածներուն վրայ: »

« Ահա՛, այս միեւնոյն երեւոյթին համեմատ, Ուրարտուի անկախ իշխանապետութիւնները, ունէին իրենց անկախ աստուածները, բայց երբ կը նուաճուին ու կը միանան անոնք, մասնաւոր Խալտիներն ալ կը միանան կարծես ազգային դիցարանութիւն մը կազմելու համար: »

« Այսպէս, մասնաւոր քաղաքներու կամ բերդերու Խալտիները միացած, նոր նախարապետութիւն մը կը կազմեն: Գուշպուշ, Գուշպա (Տոսպ - Վան) քաղաքի, Էլիհաշ՛ Էլիաինի(՛) երկրին կամ քաղաքին, ևն. բնիկ աստուածները կուգան կը միանան, կը խմբուին տիրապետող աստուածներու շուրջը: Չենք գիտեր թէ Խալտի յորջորջումը՝ ընդհանուր աստուածներով տրուած անուն մըն էր թէ միակ աստուածի մը յատուկ անունը: Գուցէ հասարակ անուն մըն էր ան ի սկզբան, բայց յետոյ, Բիաինիայի կամ Ուրարդուի իշխաններու սեփական կամ բնիկ մեծ աստուածին վրայ կեդրոնացաւ, թանձրացաւ: Եթէ ուզէինք հակառակ թեզը պաշտպանել, պիտի կրնայինք ըսել թէ նոյնքան հաւանական է ընդունիլ որ Խալտի՛ մասնաւոր աստուածի մը անունն էր նախապէս, բայց յետոյ, իր տիրապետութեան հանգամանքովը, իր այդ անունը դարձաւ պատուի, հասարակաց անուն մը: Ինչ ալ ըսենք, սա ստոյգ է թէ՛ Բիաինիայի թագաւորները, իրենց արձանագրութեանց մէջ կը յիշեն անունը Խալտի գերագոյն աստուածի մը, զոր կը պաշտէին իբրև երկիրնքի տէր և իրենց երկրին ու իշխանութեան պաշտպանը: »

« Անձանօթ է մեզի Խալտիի նկարագիրը, բայց կ'արժէ ընել զիտողութիւն մը: Սին կամ Ասուրը, քաղզէս-ասորեստանեան աստուածութիւն մը, ինչպէս կը ցուցնէ իր խորհրդաւոր պատկերը, կը կը ներկայանայ իբրև աղեղնաւոր: Այս նկարագիրը կը յիշեցնէ քաջ, աղեղնաւոր, կորովառէզ Հայկը, որ արիական աստուած մըն է, ՚ին Հայերէն պաշտուած: « Հայկ գեղապառչած և անձնեայ, քաջագանգուր, խայտալին և հաստարազուկ » կը գրէ Խորենացին (Ա. Գլ. Ժ.) տալով Հայկի նկարագիրը: Այլուր (Ա. Գլ. ԺԱ.) կ'ըսէ, « Աղեղնաւոր Հայկ յառաջ վարէ զինքն, ի քարէ պիղզ զայնալիմն, զիպուցանէ զերեքթեանն կրծից տախտակին և շեշտ ընդ մէջ թիկանցն (Բիւայ) թափանցիկ լեալ յերկիր անկանի սլաքն »: »

Մեզի կը թուի թէ, Հայկի մասին տուած այս նկարագիրը, որքան արիական, նոյնքան սեմական է: Հայկը զուցէ, ըլլալով հանդերձ զուտ արիական աստուած մը, առած է իր վրայ նաեւ Սինի կամ Սասուրի նկարագրէն շատ բան: Բայց, նկատելով որ արիական Հայերը չեն կրնար ուղղակի Ասորեստանցիներէն ազդուած ըլլալ, մենք կը կարծենք թէ Ուրարտուի բնիկներն են միջնորդը: Այս վերջինները, հաւանաբար, Ասուրի նկարագիրը փոխ տուած և պատշաճեցուցած են իրենց Խալտի գերագոյն աստուածին, ուրկէ շատ ետքը արիական Հայերը ընդունած, և բարդած են իրենց Հայկ աստուածի նկարագրին վրայ: Ասով ըսել չենք ուղեր անշուշտ թէ Ուրարտական Խալտին է Հայկը, ինչպէս ոմանք ուզած են ընդունիլ, այլ մենք կը նկատենք նկարագրի փոխառութիւն մը միայն, այնպիսի երևայթ մը, որ գրեթէ բոլոր կրօններու յատուկ է:

«Խալտի գերագոյն աստուածին հետ իրրեւ անոր անմիջական ընկեր, կը յիշուի նաև Տէխչպաս կամ Տէխսպաս: Տէխչպաշի անունը յատկանշող գազափարազիրը նման է Ասորեստանի Ռամման կամ Ռամմանու աստուածին գազափարազրին. Ռամմանի, որ օդի կամ միջնորդի, որոտման, կայծակի և առհասարակ ջրային արրերու աստուածն էր: Տարակցս չիկայ որ, ինչպէս կ'ըսէ Նեկոսիկի (*), Տէչպասի և Ռամմանուշի բնաւորութիւնը մէկ է: Այն տաճարը, զոր յանուն արեւ աստուածին կանգնած ու վերանորոգած է Ռուսաս Ա. (730-714), Սեւանայ մեծ լիճին այնքան մօտիկ, բաւական հասկնալի է, որովհետև, Սիւնեաց աշխարհին նշանաւոր լիճը, «Իր խօժառօռայնրով, հոգմերով և այեկոճութեամբ, գեղեցիկ կապուտակ կոհակներով, կենդանեաց ճոխութեամբ, կարող էր համարուիլ իրրեւ բնակութեան տեղի ջրային տարեց շատուածի:

Արդինի կամ Արդինիս՝ Երեքութեան միւս աստուածն էր: Ան կը համապատասխանէր Բաբելական Երեքութեան Շամաե-Արեգակ-աստուածին: Կը թուի սակայն թէ՛ Հայաստանի նախաւոր բնիկներուն մէջ լուսինը աւելի կարեւոր պաշտօն մը ունէր քան արեւը: Ըստ որում, լուսինը կը պաշտէին անոնք ո՛չ միայն առանձին, իրրեւ երկրորդական աստուածութիւն մը—Շէլարդիլ—, այլ և աստուածներուն պետը—Խալտի— կը նկատէին իրրեւ երկինքի տէրը, որ կը համապատասխանէր բաբելական Երեքութեան Սին(Լուսին) աստուածին:

«Այս աստուածներու զոհերն էին ոչխար, եզ, ձի և երբեմն, ուղտ: Քրաական դասակարգ մը գոյութիւն ունէր անշուշտ, որոնց

(*) Բեւեռ . արձանագր . Ռուսաց Հայաստ . էջ 58-59.

գլուխը կը ճանչցուէր թագաւորը, իրրեւ Քրմալիս: Թագաւորը շատ անգամ ինք անձամբ կը մատուցանէր զօճը: Իր պատերազմները՝ ինչպէս իրեն, նոյնպէս ալ Խալտիի փառքին համար էին: Պատերազմի աւարներէն՝ աստուածներն ալ ունէին իրենց բաժինը: Եւ ասիկա՝ շատ չնչին բան մը չէ՛ր սակայն: Արգիստիս Ա. (780-755) իր առած գերիներուն, աւարներուն և ռազմամթերքներուն մէկ վեցերորդ մասը նուիրած է Խալտիի, իր գերագոյն տիրոջը:

« Կրօնական գետնի վրայ, Ասորեստանի ազգեցութիւնը նախահայերուն, կամ աւելի ճիշդը, նախահայաստանցիներուն մէջ, շեշտուեցաւ արդէն: Ինչպէս տեսնաք, ասորեստանեան կամ քաղզէական յայտնի ազգեցութիւն մը ստիպուած ենք նշմարել՝ Խալտեաններուն ազգային զիցարանութեան մէջ: Քաղզէաստանի Երեքութիւնը, Սինը կամ Ասուրը, Շամաւն ու Ռամմանուն եթէ ո՛չ անուններով, գէթ նկարագրով կը նոյնանան ուրարտեան երեքութեան հետ:

« Քաղզէական Մարդուկը կամ Մերովդակը նոյնպէս, իր չորս հետեւորդ շուններով, պէտք է գաղթած ըլլայ դէպի հիւսիս. յարախզներու առասպելի շուքին տակ ծածկուելու համար(*):

« Առլէզներու կամ Յարայէզներու պաշտամունքը բաւական կարեւոր տեղ մը զբաւած է, նոյնիսկ ուրարտական շրջանէն ալ շատ ետքը: Մեր հնագոյն մատենագիրներէն ոմանք կը յիշատակեն զայն: Շամիրամի և Արայի պարագան ա՛յնքան ծանօթ է որ՝ չենք ուզեր կրկնել հոս:

Ահա՛ Փ. Բուզանդի մէկ շահեկան յիշատակութիւնը: Եւրոպացի Մամիկոնեան քաջ սպարապետը կը մեռնի պատերազմի դաշտին վրայ, ընտանիքը չեն հաւտար անոր մահուան. — «Կէսք յառնելոյ նմա ակն ունէին, կը գրէ Փաւստոս Բուզանդ, մինչև զգլուխն անդէն ի կոծեղն կարեայ կցեցին, և հանին եղին ի տանիան աշտարակի միոյ. ասէին, զի վասն զի այր քաջ էր, Առլէզք իջանեն և յարուցանեն զնա:» (Բուզ. Դպր. Ե. ԳԼ. ԼԶ:)

«Առլէզներու պաշտօնն էր, պատերազմի դաշտին վրայ ինկած քաջ վիրաւորները լիզելով առողջացնել: Թէ ի՞նչ կերպարանք ունէին անոնք, բաւական որոշ է այժմ: Անոնք շուրջ կը նկատուէին կամ շունի կերպարանքով աստուածներ: Ասիկա կը հասկցուի, ինչպէս Եղնիկի, նոյնպէս վանական վարդապետի նման հայ մատենագիրներու յիշատակութիւններէն:

(*). Հմմտ. Կ. Բասմաջեան, Համեմատ. Հետազոտ. միջ Յարալի-զազ, Եւն. Վեցեթիկ. 1898:

«Ճիշդ միւսնոյն նկարագիրն ունի նաև բարեյական աստուածութիւններէն մէկը՝ Մարդուկը՝ իր հետևորդ շուներով: Այս շուները կը կոչուէին

- 1.— Ակկումու — Յախտակիչը
- 2.— Ակկուլու — Ուտիչը
- 3.— Իլբուդա — Կորզիչը
4. Իքթբու — Յաղեցուցիչը:

Մարդուկը, արձանագրութեան մը մէջ, յիշուած է նաև իրրև «կենդանացուցիչ դիականց» կամ «կենդանացուցիչ մեռելաց»: Թէպէտ երկրորդական աստուածներէն, իրրև պահապան՝ Լուսնրագ մոլորակին, բայց յետոյ կրցաւ հաւասարիլ Բելի, կամ աստուածներու առաջին կարգը զատուիլ: Այսպէս ա՛նա՛, Մարդուկի կամ Մերովզակի պաշտամունքը, Բարելոնի սրբարաններէն դուրս ելլելով, կ'արշաւէ դէպի հիւսիս, Ասորեստանցիները կը պաշտեն զանի, մինչև իսկ Յակոբ Սրճեցիի ժամանակները, մեր մօտիկ օրերուն, ան կը պաշտուի Խառանի մէջ: Անշուշտ Ուրարտուի բնիկները զայն Ասորեստանցիներէն ընդունեցին եւ յետոյ իրենք ալ. աւանդեցին արիական Հայերուն, որոնց մէջ, բաւական երկար դարեր, նոյնիսկ քրիստոնէութիւնն ընդունուելէ ետքը, կը պաշտուէր այնքան ամուր կերպով(*):

«Մարդուկին հետ յիշենք նաև Սարիսը կամ Շարիչը, որ իսկ և իսկ ասուրական Պանթէոնի ծնունդ է, և եկած մտած է հիւսիսի ժողովուրդներուն սրբարաններէն ներս: Այլ և այլ ժողովուրդներու մէջ զանազան անուններ ու դիմայեղութիւններ ունեցած է ան.— Իսդար կամ Իշդար, Շամիրամ, Ադար-Ադի, Սարիս, Ասդարովթ, եւն. Փիւնիկեան կամ սիւրիական բնակչութեանց մօտ կը պաշտուէր ան՝ իրրև Իշդար և Աօդարովդ Քհտացիներուն մօտ՝ իրրև Սարիս կամ Շամիրամ, որ իրրև խորհրդանշան ունէր աղաւնին կամ տատրակը(**):

«Հոս հաւանական է որ Ուրարտուի մէջ քրմութիւնը բարձր և առանձին զասակարգ մը կը ներկայացնէր, ինչպէս էր Քաղդէայի մէջ, Քհտացիներուն մէջ, ուրիշ Սպիտակ Այացեղերու մէջ: Քրմութիւնը

(*) Հմմտ. եզնիկ, Ա. ԻԴ.— Հին Հաւասք Հայոց, Հ. Ղ. Ալիբան սիպ. 1910 էջ 192—194, 444.— Կ. Յ. Բասմաջեան, նոյն անդ Մադիկ Հանդէս, 1895, էջ 602—603:— Լանկլուա, Ֆրանսերէն Հաւասք. Պատմ. Հայաստանի էջ 26, ծանօթ. 1:

(**) Հմմտ. Սեյս. Հիւսացիներ Գլ. Զ.— Մասքեր. էջ 345:— Հ. Ղ. Ալիբան, Հին Հաւասք (էջ 207):

միշտ զօրաւոր աջակիցն եղած է տիրող իշխաններու և մինչեւ իսկ երբեմն կամ գրեթէ միշտ հպատակեցուցած է զանոնք իր նուիրապետութեան տակ և հրահանգած է զանոնք:

Ուրարտուի 46 աստուածներուն անուններու ցանկը տեսանք քիչ մը վերեւ: Այդ ցանկը, ինչպէս ըսինք արդէն, ձեռք բերուած է մհերեան արձանագրութեան Սէյսի թարգմանութեանէն, որ մինչեւ ցարդ կ'ընդունուի հնախոյզներուն կողմէն իրրեւ վաւերականը: Սակայն, ատկէ զատ, ուրիշ թարգմանութիւն մըն ալ կայ, Մորթմանինը, որ ունի իր մասնաւոր արժէքը, միեւնոյն ժամանակ, իր կարեւորութիւնը, որովհետեւ ինչպէս որ յիշեցինք անգամ մը, Մորթմանն՝ հայերէնով կը լուծէր ուրարտական բեւեռագրերը, հետեւաբար, ո՛չ նուազ շահեկան կը գտնենք այս թարգմանութիւնն ալ ընդօրինակել նոյնութեամբ այս էջերուն մէջ, որպէս զի ընթերցողները զայն բաղդատութեան դնեն Սէյսի թարգմանութեան հետ:

Դ Ի Ց Ա Շ Ա Մ Ա Ր Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Քաղեալ ի մեծ արձանագրութեցէ

ՈՐ յԱԿՐԻԻ

(Առ Շուլցի. Թիւ 115)

	Եզ Ոչխար	
1. Առ Հայրենի դիս Անահիտ, Դիասպ և Փառ		17
2. » Անահիտ խնամակալ	17	34
3. » Դիասպ	6	12
4. » Է (է)	6	12
5. » Խուղի (Պարսկ. Խուտա Գերմ. Կոթ)	2	4
6. » Դուրա (Տուր)	1	2
7. » Ուա	2	4
8. » Վադի (Վաչէ.°)	2	4
9. » Զիպփառ	2	4
10. » Արսիմիդ (Արշամ)	2	4
11. » Համասփա	1	2
12. » Տիտուա (Դատուան)	1	2
13. » Վիլարափ	1	2
14. » Անահիտ հովտաց	1	2
15. » Ադալի	1	2

	Եզ	Ոչխար
16. Առ Գուրբա	1	2
17. » Իլուր	1	2
18. » Կաւրայի	1	2
19. » Ատարուղա	1	2
20. » Նիրուաի (Ներսէս . ²)	1	2
21. » Լուսին լրացեալ	1	2
22. » Վարբարչի (Բարչամ որդի հակայից և հակա- ռակորդ Արամայ որ յետ մահուանն անցեալ ի կարգ Աստուածոց)	1	2
23. » Իրմա (Արամ հակառակորդ Բարչամայ)	1	2
24. » Շինիրի	1	2
25. » Ունիվա	1	2
26. » Աիրային (Երանային , Աստուած բաղդի . ²)	1	2
27. » Աստուած քաղաքին Սուժարուէ կամ Շու- ժարուի	1	2
28. » Խարա	1	2
29. » Արազա կամ Ազարուա	1	2
30. » Զիուքու	1	2
31. » Ուրա (Ուրճա , ՈւրՖա , Եղեսիա)	1	2
32. » Արսիվիա	1	2
33. » Առնի	1	2
34. » Անահիտ մեծի տաճարին Անւոյ	1	2
35. » Անահիտ չորսնագեղ	1	2
36. » Անդրին Անահտայ	1	2
37. » Անահիտ արանց	2	4
38. » Դիասպ արանց	2	4
39. » Արդուարասա (Արտագերս . ²)	2	4
40. » Աստուած քաղաքին Բատտի	1	2
41. » » » Քուվինու	—	—
42. » » » Դուսրա	1	2
43. » Աստուածս Անահտական քաղաքին	1	2
44. » Աստուածս քաղաքին Արծունու (Արծէն)	1	2
45. » Անահիտ գերանդաւոր	1	2
46. » Հուպա (Պարսկ . խօսպ , Գերմ . Հիւպշ)	1	2
47. » Անահիտ արքունի դրան	1	2
48. » Դիասպ աստուած դրան քաղաքին Իրիտիա (Երիզա)	1	2
49. » Փառ , աստուած քաղաքին (անընթեռնլի)	1	2

	Եզ	Ոչխար
50. Առ Էլիա	1	2
51. » Անահիտ Առնի (արանց)	1	2
52. » Անահիտ շնորհագեղ	1	2
53. » Աստուածս ձմերոցաց	1	2
54. » Աամարուբա	1	2
55. » Քիլիպա	1	2
56. » Աստուած թշնամի երկրին	1	1
57. » » երկրին Վատունի (Վահունի)	1	2
58. » » բնակչաց (անընթեռնլի)	1	2
59. » » » Լիմայ (Լիմա կղզեակ և Լիմ, գիւղ ի Տոսպ գաւառի)	2	4
60. » (խանգարեալ)	2	14
61. » Հայրենի դիս	4	18
62. » Անահիտ անոխակալ	2	4
63. » բնակիչս տաճարին Նիսիպին քաղաքին (Մծբին)	—	2
64. » բնակիչս երկրին Պապա	—	10
65. » Հա (անընթեռնլի) պա	կէս	1
66. » Պապա (բար)	կէս	1
67. » (անընթեռնլի) դունիարվա	կէս	1
68. » Աւի	կէս	
69. » Աեա կամ Աիա	կէս	
70. » Հիրաի	կէս	
71. » Շինուարողի		2
72. » Զուխարի		2
73. » Սիա		1
74. » Զիտա		1
75. » Արա (Արա գեղեցիկ)		1
76. » Ատիա		1
77. » Ուիա		1
78. » Հայմաւ		4
79. » Առուի (Արէս, պատերազմի աստուած)	1	2
80. » Ինուամաւ		17

Մեր ազգային մատենագիրները ստոյգ տեղեկութիւն մը չեն աւանդեր մեզի, նախապատմական շրջանի կրօնի մասին. իրենց բոլոր գրուածները՝ հեթանոսական կրօնին վերջին վիճակը միայն կը ներկայացնեն, այսինքն այն շրջանի կրօնը, երբ Հայաստանի մէջ,

մէկ կողմէ Փոքր Ասիայէն, և միւս կողմէ Միջագետքէն, արեւմտեան ու հարաւային այս երկու հարեւան երկիրներէն կու գեր ու քուրմեր փոխադրուեցան և իրենց զիցարանութիւնը մտցուցին հօն:

Էզդուի բազդատական փոքրիկ քննութիւն մը կր բաւէ բացատրելու զբազաշտական վարդապետութեան գոյութիւնը Հայաստան մէջ. առնենք, օրինակի համար, հետեւեալ կրօնական բառերը. — Արամազդ = Աուրամասդա, Հրեթակ = Հրիչդէ կամ Ֆրիչդէ, 'Նել = Դեւա, Դժոխք = Դուզախ. ասոնք, յայտնի կ'երեւայ, պարսկական կրօնի բառարանէն փոխ առնուած և պահած են մեր մէջ իրենց իսկական իմաստը, և, մենք, բառերուն հետ ընդունած ենք նաեւ պարսկական կրօնին վարդապետութեան գլխաւոր մասերը:

Քաղդէան, Փիւնիկէն, Ասորեստանը. ահա՛ երեք օրօրոցներ անգութ ու վայրագ աստուածներու որոնք շատ կ'ախորժէին մարդազոհերէ և նուէրներէ: Իսկ Հայոց հեթանոսական կրօնը բոլորովին տարբեր էր, երբեք չէր նմաներ այդ երեք երկիրներու դաւանած զեղիս ու ծայրայեղ նիւթապաշտութեան, աւելի մօտ էր Ներքին Ասիոյ — Հնդկաստան ու Չինաստան — յստակ ու պայծառ կրօնին, և մասնաւորապէս ազդուած էր հարաւային և արեւելեան զրացի ազգերուն՝ Մարաց ու Պարսից մազդէութենէն:

Այս վերջինին ազդեցութիւնը զօրաւոր էր, այնպէս որ, Հայաստանի մէջ Քրիստոնէութեան մուտքէն դարեր ետքն ալ, ապրեցան ժողովուրդին մէջ մարական ու պարսկական վարդապետութեան հնոտի գաղափարները. և բառերը գրեթէ անփոփոխ մնացին Հայոց քրիստոնէական կրօնի լեզուին մէջ, իրենց նախնական նշանակութիւնը քիչ մը սրբազրուելով և քրիստոնէական գաղափարներուն մէջ նոյնանալով:

Ստոյգ է սակայն թէ, աչքի առջեւ ունենալով Հայոց երկրորդական աստուածներուն նկարագիրը, և իրենց վերագրուած յատկութիւնները, մենք, հեթանոսական շրջանին մէջ, որգեղբրած ենք մեզի սեփական կրօնային դրութիւն մը, որուն գլխաւոր աստուածները, դարերու հոլովումէն ետքը, ձուլուած են արիական ու ասուրաբաբելական ցեղերու աստուածներուն խառնարանին մէջ, թէ և դարձեալ պահած են իրենց նախկին բնաւորութիւնը, որով Հայիրը զանոնք ուզած էին օժտել:

Ահաւասիկ չորս գլխաւոր աստուածները, որոնք կը պաշտուէին Հայաստանի մէջ առհասարակ. —

1. Անանիս Տիկլին, Ասորեստանցիներուն Բիլխիւր կամ Բիլասը, որ տիկին կը նշանակէ, և այս միեւնոյն անունով կը պաշտուէր նաեւ Պարսիկներէն.

2. Ասդիկ, Ասորեստանցիներուն Իւզարը, Փիւնիկեցիներուն Ասսւրսան .

3. Նանէ, որ Ասորեստանցիներէն ալ կը պաշտուէր Նանա անունին տակ .

4. աւբամ, Ասորեստանի Բար-Շեմ աստուածը, Ասորեստանցի երկրակալներուն ձեռքով Հայաստանի մէջ փոխադրուած :

Այս աստուածներուն մէջէն Անահիտ Տիկիւնը, որ Լուսինը կը խորհրդանշէր, ժամանակի ընթացքին մէջ, հետզհետէ աւելի մեծ նշանակութիւն մը կը ստանայ և կը հռչակուի Հայաստանի պաշտօնական աստուածուհին, ինչպէս կը տեսնուի անոր ընծայուած ստորագիւցումներէն . «Ոսկիամայրն, Ոսկեծղին, Մայր ամենայն զգասուբեանց, փառք եւ կեցուցիչ ազգին, շունչ եւ կենդանութիւն Աբխարհին Հայոց : »

Անահիտ Տիկիւնի գլուխը գտնուեցաւ վերջերս Երիզայի մօտերը : Հայոց Աշխարհին փառք ու կեցուցիչ, մայր-դիցունհին, այդ քաղաքին մէջ ունէր իր սեփական մեհեանը, ուր տարուէ տարի, Վարդավառին, Հայաստանի զանազան կէտերէն ուխտաւորութիւն մը կը համախմբուէր, և ուր, մեծամեծ հանդէսներ կը կատարուէին ու զօհեր կը մատուցուէին անոր :

Անահիտէն ետքը կու գար Ասդիկը, ո՛չ նուազ ժողովրդականութիւն մը վայելող դիցունհին, որուն ջերմեռանդ երկրպագուները, իրենց խելայեղ պաշտումին մէջ, մեր անմահացած հերոս Վահագնի կիներ կը հռչակէին դանի : Արսաւեստան (Արշակունեաց) հարստութեան շրջանում, Ասդիկի ձօնուած մեհեան մը կար, որ Վահագնի Սենեակ կը կոչուէր :

Հին հայերէնի մէջ քանի մը կրօնային բառեր կը գտնուին, որոնք, ինչպէս քիչ մը վերեւ յիշեցինք, հին պարսկերէնէն փոխ առնուած ըլլալ կը կարծուին, և յատուկ են միայն Պարսից և Հայոց : Այս կրօնական անունները բաւական կը բացատրեն Զրադաշտի վարդապետութեան իմաստը, ինչպէս նաեւ Հայոց վրայ արիական ցեղերուն ազդեցութիւնը :

Այս ազդեցութեան հետեւանքով, նոր աստուածներ մուտ գտած էին Հայաստանի մէջ : Արամազդ էր գերագոյն էակը, Զենդաւեստի Ահուրամազդան, զրադաշտական վարդապետութեան մէջ «Երկնի եւ երկրի աւարիչ» ընդունուած, նոյնինքն Պարսից Ուրվզըր :

Որմիզըր, Պարսից կրօնքին մէջ, հակառակօրդ մըն ալ ունէր, Արիմն = Ահրիմանը, զոր Հայերը չէին ընդուներ, թէեւ ասոր հպատակող ու ծառայող երկրորդական աստուածներ ու ոգիները կ'ընդունէին, ինչպէս բարի ու չար հրեշտակները, Ֆրիզդե ու Դեւա, Դժոխքը, Դեւերուն ընակարանը, ոգիներ, որոնք Պարսկաստանէն

Հայաստան անցած և ապրած են նոյն իսկ քրիստոնէական վարդապետութեան մէջ :

Պարսկական նոր կրօնին մուտքովը . Հայաստանի մէջ, Բնապաշտութեան կը յաջորդէր կրակապաշտութիւնը, որ արդէն կարեւոր դիրք մը գրաւած էր զբազաշտի վարդապետութեանը մէջ : Հայերը, Պարսիկներուն պէս, Արամազդի որդի մըն ալ կը պաշտէին, Միմբ անունով, նոյնինքն հուրը : Սակայն փոքրիկ տարբերութիւն մը գոյութիւն ունէր Հայոց ու Պարսից կրակին միջև . Հայոց կրակը շօշափելի չէր, անտեսանելի հուր մըն էր, տարին մէկ անգամ միայն երեւան ելած՝ Խարոյկի ձեւին տակ, մինչդեռ Պարսիկներունը՝ նրկական, մշտավառ կրակ մըն էր, զոր միշտ անչէջ կը պահէին :

Պարսկաստանէն ուրիշ աստուած մըն ալ փոխադրուած էր Հայաստան . Տիւրը, Պարսիկներուն Տիւրը, որուն պաշտօն յանձնուած էր հակել մարդկային ընկերութեան վրայ, և Կենաց Գիրքին մէջ արձանագրել թոյր չար ու բարի արարքները :

Ժողովուրդը Գրոյ կը կոչէր Տիւր աստուածը, իսկ քուրմերը՝ Արամազդի Գրիչ և Ճարտարութեան Ուսուցիչ կ'անուանէին զանի, և նանբապաշտներուն կը հաւտացնէին թէ Գրող աստուածը, մարդիկներուն հոգին, իրենց մահէն ետքը, կը տանի Արամազդին առջև, որ անոնց դատաստանը կը տեսնէ Կենաց Գիրքին մէջ արձանագրուած իրենց արարքներուն համաձայն :

Մինչև մեր օրերը, ինչպէս քաղաքներու, նոյնպէս յետին գիւղերու մէջ, «Գրո՞ղը քանի, հակաքիս ա՛ս եր գրուած» առածովը, ժողովուրդը կը պահէ այս աստուածին յիշատակը :

Ամիտփելով սոյն հակիրճ տեսութիւնը՝ հին Հայոց կրօնին վրայ, բնապաշտականէն սկսեալ մինչև մինչև զբազաշտականը, կը տեսնենք թէ, անոնք, անյիշատակ ժամանակներէ ի վեր, դարերով պաշտած են Բնութիւնը, երկինքը, արեւը, յուսինը, աստղերը, և բոլոր բնական զօրութիւնները, առանց սակայն կանգնած ըլլալու անոնց արձանները, որոնք յետոյ միայն մեր մէջ մուտ գտան, քաղղէական, ասորեստանեան ու փիւնիկեան ազդեցութիւններուն շնորհիւ :



Երեք քաղաքակրթութիւններ (եգիպտական, քաղղեական,
ասորեստանեան) Հայաստանի մէջ. — Աւրասուի նայ
նախաւարտութիւններուն ծագումը. — Բնական
բարեբ. — ճարտարուեստները. — Ռազմական
արուեստը. — Երկրագործութիւնը. — Յամաւային
ու ծովային վաճառականութիւնը. — Կտու-
վարութեան զանազան դրութիւնները
Հայկազանց շրջանին մէջ :



Վաղնջական աշխարհին երեք գլխաւոր ներկայացուցիչները :
Եգիպտոսը, Քաղղեան և Ասորեստանը, գտնաւորն չըջաննելու մէջ,
իրենց քաղաքակրթութեան ազդեցութիւնը տարածած են չըջակայ
երկիրներուն մէջ : Ասանց կարգէն է նաև Հայաստանը, որ արդի
բանասէշներուն ու հնագէտներուն կարծիքովը, իր ծոցին մէջ ըն-
դունած և դարերով պահպանած է յիշուող ազդերուն քաղաքակրթ-
ութեան հետքերը :

Այս նիւթը շօշափող շահեկան տեսութիւններու կը հանդիպինք
Աւրասուի մէջ, տեսութիւններ, որոնք Հայաստանի նախնի կեանքով
պարագող պատկանելի գիտուններու կարծիքները կը բովանդակեն,
խտացած ու կուռ առդերու մէջ, և գործնք նշոյնութեամբ այս էջերուն
մէջ կ'արտայայտենք :

«Մինչև և վերջին տարիներս գտնուած են հայ Ազգային Պատ-
մութեամբ զբաղողներէն այնպիսիներ, որ կարծած են թէ՛ Հայաս-
տան ամբողջ դար մը. ժՁ.-ժԵ. (Ն. Ք.), Եգիպտոսի աշխար-
հակայնքու տիրապետութեան տակ մնացած է և հետևարար ուղ-
ղակի եգիպտական քաղաքակրթութեան ազդեցութեան ենթաբ-
կուած : Այսպէս, ի մէջ այլոց Հայերը, իրրեւ թէ Եգիպտացւոց կը
պարտին աստղագիտական կամ աստարական հմտութիւնը, զարե-
ջութի պատրաստութիւնը, կենդանապաշտութիւնը և շն. » :

Եզիպտոսի մեծագոյն փարաւոններէն՝ մին, Թուփմոսիս կամ Թուփմէս Գ. Վերին Միջագետքէն անդին չէ կրցած անցնել երբեք: Մեծն Սեսոստը անգամ չի թուիր թէ Փոքր Ասիայի արեւմտեան ծայրերը հասած ըլլայ: Հերոտոտոսի նկարագրած Քարապէլի եզիպտական կարծեցեալ յիշատակարաններն ուրիշ բան չեն, եթէ ոչ, քետական պետութեան յուշարձանները^(*):

Եզիպտական արձանագրութեանց Լամնսուցիները, որ Հայոց հետ կը նոյնացուէին, Լիբանանու լեռնային բնակիչները պէտք է ըլլան^(**): Իսկ Բմեհէք Արմէնիայի հետ համեմատելը բառախաղի մը սպաւորութիւնը կը թողու կործնել^(***):

Չի թուիր նաև որ Հայերն ուղղակի ընդունած ըլլան աստեղագիտական կամ ասմարական այնպիսի ծանօթութիւններ, որոնց ծագումը եզիպտոսի մէջ հարկ ըլլայ փնտռել:

Գարեջուրի գործածութիւնը եզիպտոսէն սորվելու պէտք չունէին, և ո՛չ ալ Ասորեստանէն. արիական սովորութիւն մըն է ան, որ հազիւ է. (Ն. Ք.) գարուն Հայաստան մտած պիտի ըլլայ^(****):

Իսկ կենդանաբաշտութիւնը փղերական երեւոյթ մըն է, մանաւանդ ո՛չ այնքան անձանօթ՝ սպիտակ ալյացեղ ժողովուրդներու: Արարատեան ժողովուրդները եթէ եզիպտոսի քաղաքակրթութիւնը յիշեցնող բաներ մը ընդունած են, անուղղակի միջոցներով է այն:

Այդ անուղղակի միջոցները քաղղէական, ասորեստանեան, փիւնիկեան, քետական, պարսկական և յունական խողովակներն են, որոնցմէ ղէպի Հայաստան թորած է եզիպտական գիտութիւններու կամ քաղաքակրթութեան նեկտարը, և այն՝ յոյժ աննշան չափով մը միայն:

Հայաստանի համար, իրրև քաղաքակրթական արտաքին ազդեցութիւն, ամէնէն հինը և կարեւորներէն եղած է Ասորա-քաղղէական քաղաքակրթութիւնը, որ իր բնական պատճառներն ունի:

Թէ՛ աշխարհազրտական և թէ՛ քաղաքական դիրքով. Հայաստանը սերտ յարաբերութեան մէջ եղած է Քաղղէաստանի և Ասորեստանի հետ շատ հին՝ անյիշատակ գարեթէ ի վեր: Եփրատն ու Տիգրիսը՝

(*) Հերոդ. Բ. 102 եւն. Լը Պա, «Ազի Միմեոս, էջ 9, 10. Սէյս, «Հեկացիներ», գլ. Գ. 68, 2: Տէ՛ն Ա. Մաս, Ժ. գլ. էջ 58 այս հասարկի:

(**) Մասթեո, «Հիմ Պասմ», էջ 238 ծանօթ. 1:

(***) Բ. Խալաբեանց, ՀԱ. 1903, անդ էջ 294:

(****) Թե կարեւոր գործածութիւնը ամամօր չէր արիական ժողովուրդներուն, սեւ Տակիս. Բարժ Գեւո. Ի. Գ:

իրենց րեզմուտը որ ավերով՝ իրրեւ քաղաքակրթութեան բնական որ-
բաններ, իրարու կը կապեն այս երկիրները :

Եվրասոր, մանաւանդ սուրեւտովի վաճառականութեան բնական
ուղին էր այս երկու երկիրներուն մէջ^(*) : Նկարագրութիւնը, զոր
կ'ընէ Հերոզոտ Հայոց նաւարկութեան մասին, ամէնէն պատմական և
ամէնէն ճշգրիտ նկարագրութիւնն է :

«Պիտի խօսիմ, կը գրէ ան, ուրիշ հրաշալիքի մը մասին, որ
(Բարեւոն) քաղաքէն ետք, այդ երկրին մէջ տեսնուած զարմանա-
լիքներուն ամէնէն մեծն է • Այն նաւերը, զորս կը գործածեն Բարե-
ւոն երթալու համար, կաշիէ շինուած են և բոլորակ ձեւ մը ունին :
Ասանք, հովիւ Հայերը, որ Ասորեստանի վերին կողմը կը բնակին, կը
շինեն ուռններէ • որոնցմով կը կազմեն նաւուն մարմինը և զոր զըր-
սէն կը պատեն մորթով : Վահանի նման կլորակ կը շինեն զայն, այն-
պէս որ չէ կարելի զանազանել անոնց ո՛չ ցուկը և ո՛չ խելքը • իսկ
յատակը կը լեցնեն եղէգներով : Գետին հոսանքին կը ձգեն զանոնք,
բեւեաւորուած վաճառքներով և մանաւորապէս արմաւաջուրով
(արմաւի գինի) : Ոտքի վրայ կեցած երկու անձեր կը զեկալարեն
զայն՝ իւրաքանչիւրը մէյմէկ ձողով • մին իրենը կը վերցնէ, մինչ
միւս ընկերն իրենը կը մխրձէ : Այս նաւերը հաւասար մեծութեամբ չեն •
մեծեր ալ կան, փոքրեր ալ : Ամէնէն մեծերը՝ մինչև 5000 տաղած դ
(10000 քիլոկրամ) ծանրութեամբ բեռներ կը վերցնեն : Իւրաքանչիւր
նաւու մէջ կը գտնուի էջ մը, մեծերուն մէջ՝ ալ տելի : Երբ Բարե-
ւոն կը հասնին ու վաճառքները կը ծախեն, կը վաճառեն իրենց
նաւին վանդակածու մարմինը և յարգը : Ապա մորթը (կաշի) էշերու
կը բեռցնեն և կը դառնան Հայաստան՝ էշերն առջեւէն քշելով,
որովհետև զեան այնքան արագաստ է որ վեր ելլելն անկարելի է •
և այս է պատճառն որ իրենց նաւերը ո՛չ թէ փայտ կը շինեն, այլ
կաշիէ : Երբ իրենց էշերով Հայաստան դառնան, ուրիշ նաւեր կը
շինեն»^(*), միւսնայն գործը վերսկսելու համար անշուշտ :

Երբ յարարութեան այսքան բնական դիւրութիւններուն հետ
նկատուեք նաև երկու ժողովուրդներու ցեղային նախնական նմանու-
թիւնն ու քաղաքական մրցորդութիւնը, այն ասան ասորթիւնակ չեն
թուիր մեղի, այս երկու երկիրներու բնակիչներուն քաղաքակրթական
հանդիսութիւնները :

Մենք սեսանք արդէն թէ « Կովկասի ամենահին ժողովուրդնե-

(*) Հմմտ. Հ. Խնիսեան, Հնախօս. Հայաստան. հս. Ա. էջ 216-218:

(**) Հեռգ. Ա. 191, Լարսէի Գրանց. բարգմանութեան: Հմմտ.
Հ. Յ. Գաբրէ. Պսմ. Տիեզեր. հս. Ա. էջ 107, 108:

րը, որոնց մասին չին հեղինակներ ծանօթութիւններ կուտան մեզի-
ամէնքն այ տուրանական ցեղին կը պատկանին: Գիտենք սակայն
թէ այս ցեղազարական ճիւղին ներկայացուցիչներ՝ Ակկատները մին-
չեւ Եփրատ ու Որոնդէս իջան»(*):

Արդարեւ Քաղզէաստանի չին բնակիչները երկու տարրեր ցե-
ղերէ կազմուած էին. Ակկասներէն և Մուսերներէն: Առաջինները
տուրանական էին, իսկ վերջինները՝ սեմական(**): Անոնք ունե-
ցած են իրենց բարձր քաղաքակրթութիւնը: Ամենամեծ բաժինը
սակայն՝ առաջիններուն, Ակկասներուն ըլլալ կը թուի: Մեկա-
զրութեան ծագումը մինչև իրենց կը բարձրանայ: Կը թուի թէ
հիւսիսային Սպիտակ Ալյացեղներու (Քետացիք) նման, հարաւի
Սպիտակ Ալյացեղներն (Ակկաղացիք) եղած են նոյն իսկ գիրի առա-
ջին հնարիչները: Քաղզէաստանի այս նախկին բնակիչները, ունէին
զարգացած օրէնսդրութիւն մը և կրօն մը: Քրիստոսէ երեսուն դար
առաջ, նստակ նկարագիր մը ունէին անոնք. գիտէին ցորեն մշակել,
հողէ թրծուն արձաններ շինել, մետաղներ ձուլել(***) : Քաղաքներ
ու յիշատակարաններ կը կանգնէին, հակայազօրձ ճարտարապետ-
թիւն մ'ունէին: Քաղզէական այս քաղաքակրթութիւնը կարծես սե-
մական նկարագրէ մը աւելի արիւտ-տուրանական երանց մը ունէր(*):
Եւ մենք կը զգանք թէ նման եզրեր ունէր Հայաստանի նախաօր
բնիկներու քաղաքակրթութեան հետ:

Երկու ժողովուրդներուն մէջ այ մտաղ ձուլիլու արձեւաջ հասարա-
կաց էր: Ամենէն ապրածուած մետաղը անագապղինձն «բրուն» էր:
Իրենց թագաւորները քուրմեր էին միեւնոյն ասուն(**): Հոն ուր
մշակելի հող կը գտնէին, գերազանց երկրագործներ կը հանդիւանա-
լին: Քաղզէական աւանդութիւններ արժատացած և յարատեւած են
նաեւ Հայոց մէջ: Զրհեղեղի աւանդութիւնը՝ այդ կարգի գեղեցիկ
նմոյշ մըն է ինքնին: Քաղզէական աւանդութեան համեմատ Զրհե-

(*) Մուկան, անց էջ 16, հմմտ. էջ 53-54. 14:

(**) Հմմտ. Մաքեքո, անց էջ 154, Մուկան, անց էջ 53.
Օբքերց. Բաբելոն. Քաղզէա յոյ. ներք բերկ. անսիլլի. ի մէջ: Մուսեր-
ները կը բնակէին Քաղզէայի հիւսիսային կողմը, իսկ Ակկասներ՝
հարաւային կողմը՝ Պարսից ծոցին վրայ: Եղած են զիսուներ ու
Մուսերներու սեմական ծագումը չեն ընդունիր, իսկ ոմանք նոյնիսկ
կը մեծեն Մուսեր-Ակկասեան ցեղային բաժանում մը:

(***) Անետոյս, Հին Պատմ. 1907, հտ. Ա. էջ 85:

(*) Բրնան. Պատմ. Ամ. լեզուներ էջ 61-69:

(**) Բրնան, նոյն անց: Մաքեքո, անց էջ 353, Ֆոնրան, Յու-
նասանը, էջ, 9, Տարեգր. Փագղարսիպապարի, Ա. 2, 31:

ղեղի հերոսին տապանը կորուսաց լեռներու վրայ կը հանգչի: Հայ աւանդութիւնը՝ Ս. Գրոց արդեցութեան տակ՝ նոր գոյն մը ստացած է թէև, բայց քաղզէական հնազոյնը կը պահէ իր մէջ: Աստուածաշունչի արդեցութեան ներքեւ, տապանին գտնուած լիւր Մասիսը կամ Արարատը կ'ըլլայ նոյնիսկ^(***), մինչդեռ ըստ քաղզէա-հայաստանեան հնազոյն աւանդութեան, կորդուաց Սարարատ լեռն է այն^(****):

Հաւանարար այս երկու ժողովուրդներուն, հիւսիսի և հարաւի տարանական արդերուն մէջ, նախաւոր շրջաններուն ընկերական և ընտանեկան կեանքի տեսակէտով շատ աւելի հանգիստութիւններ կային, որոնց մանրամասնութիւնը մեր գիտութեանէն կը վրիպի այժմ:

Սակայն, սա ստոյգ է թէ, Հայաստանի երբեմնի այդ բնակիչները շատ կէտերու մէջ ետ մնացած են իրենց հարաւի ցեղակիցներէն և հետզհետէ հեռացած են անոնցմէ, երբ սեմական, մտրական կամ իրանական արդեցութեան տակ՝ նոր կերպարանափոխութիւններ կրած, նոր քայլեր առած է ան: Այսուհանդերձ, Ասորեստանի կամ Նինուէի աշխարհակալներուն հետ պատերազմական շփումներով, մէկէ աւելի զատեր ընդունած են Հայաստանի Սպիտակ Ալլացեղները: Փէթ իշխանական կամ զինուորական դատակարգը՝ սեմական կամ ասորեստանեան դատարանի ունեցած է իրեն համար: Նախընտրատեան ժողովուրդներու այդ դատարանները, բառին բովանդակութեամբ, ինքնայատուկ քաղաքակրթութիւն չունէին սակայն: Նինուէի կամ Ասորեստանի զինուորական ժողովուրդը, շեշտուած սեմական արդեցութիւն, հարաւի բարեկրեան պետութիւնը՝ այսինքն Ալիստ-Սումերեան կառավարութիւնը գրաւելով, քաղզէական քաղաքակրթութիւնն ընդունած էին:

Այո՛, Ասորեստանցիները, բաց ի իրենց պատերազմական յաղթութիւններէն, ամէն բան ուրիշներէն փոխ առած էին, իրենց արւեսաները Քաղզէացիներէն ու քիչ մըն ալ եղիպտացիներէն, իրենց

(***) Հմմտ. Թեմիզ. Բ. 4: Բանասեր 1903 էջ 61—62, Մծբնայ Սեփակոբ Մասիսի Քրդերուն մեջ, Հր. Անուանան:

(****) Հմմտ. Բուզ. Գ. Ժ. էջ 22, Խոր: Պատ. Առփսիս, էջ 300, Յովսէպոս, Հնախոս. Հեւ. Գիւրգ. Ա. գլ. Գ. հատ. 93—95, Մասքերոսն էջ 180: Ըստ մեզ, Բուզանդի «ի լեառն Սարարասայ» բացատրութեան մեջ գրչագրական տարապում մը չկայ, ինչպէս կ'ուզէ ենթադրել Ֆրէս, Մուրազ (Մուրազ ունի Էրեբ արգուր, Հայտնաբերել, 1901 էջ 34) այդ տղին սկզբնական բնագիրը ենթադրելով «ի լեառնն Ա. արարասայ»:

գիրը Քաղզէայնն էր (*): Իրենց վայրագ անդթութիւններուն և յաղթութիւններուն հետ եթէ անուղղակի միջոց մը եղած են անոնք քաղաքակրթական սերմի փոքրիկ հատիկ մը հետաւոր գետիններ փոխադրելու, այդ փոքրիկ սերմը քաղզէական հողին ծնունդն էր նոյնիսկ:

Հակիրճ ակնարկ մը՝ ուրեմն՝ քաղզէական քաղաքակրթութեան գրական ու ընկերական նկարագրին վրայ:

Բարեկրնի ազատ բնակչութիւնը բաժնուած էր ցեղային ու արհեստաւոր դասակարգերու: Բւրաքանչիւր ընտանիք, իւրաքանչիւր ազգատոհմ, այդ դասակարգերէն մէկին կը պատկանէր: Քուրմերը գիտուններ, աֆէնքն ալ՝ աստեղագէտ, իրաւագէտ, անդաշտի, առանձին դաս կը կազմէին: Տարբեր դասակարգ մըն էին արհեստաւորները, նաւաստիները, դասայնանկները, քարակտիները, դարբինները, երկրագործները ևւն: Ընտանիքին արու գաւալը բնականօրէն պարտաւոր էր հօրը արհեստին հետեւի(**): Զկնորսի մը որդին ձկնորս կրնար ըլլալ, ինչպէս զարբինի մը որդին՝ դարբին, աստղագէտի որդին աստղագէտ, քուրմի որդին՝ քուրմ: Վերին դասակարգերու ներկայացուցիչները թագաւորին անմիջական արբանեակները կը կազմէին: Շարունակ շրջապատուած էին անոնք զուշակներէ, աստղագէտներէ, բժիշկներէ, օրէնագէտներէ, մանաւանդ գայիւններէ կամ քերականներէ, որոնք պարտաւոր էին սորվեցնել իրենց թագաւորին ու անոր հպատակներուն ընթերցումն ու գրելու արուեստը:

Թագաւորը իրեն զերազոյն պտրաք կը նկատէր քերականութեան ուսուցումը, իրրեւ յայնուութիւն մը տրուած՝ Եկրոյլ աստուծմէն ու անոր Տասլիս ամուսինէն: Մենք Աստրինաձիրարագի կը պարտինք հարուստ մասննագարանի մը հաստատումը, որուն բեկորներէն մեծ մասը՝ աղիւսի վրայ գրուած՝ մինչեւ մեզի հասած են, և որոնք կը բովանդակեն այն աստեղի գրեթէ բոլոր ծանօթ գրութիւնները. աստուածաբանութիւն, իրաւաբանութիւն, բժշկութիւն, աստղագիտութիւն, հրէշարանութիւն, չափարանութիւն, թուադիտութիւն ևւն: Մասնաւոր քաղաքներու մէջ գպրօցներ կային, ուր կ'ուսուցուէին քաղզէական այդ գիտութիւնները. Բարեկրն, Բորսիպպա, Սիպպարա, Որբոյէ, Այսպիսի քաղաքներէն մին՝ Ուրուք կը կոչուէր, Գիբեռու Բալախ, Աստղարաշխական կարեւոր գիւտեր, Քաղզէացոց կտակն են ապագայ դարերուն թողուած. գտած էին անոնք Սարսր, 223 լուսնային շրջանակներու կամ 6585 1/3 օրերու շրջանը, ուրկէ հաքր խաւարումներ կրակէին. 19796 օրերու երեքկին շրջա-

(*) Մարքեո, անգ էջ 597:

(**) Մարքեո, Քաղզէական Քաղաքակր էջ 752:

նր, որ առանց կրճատումի. քոյոր օրերը կը ներկայացնէր: Արեւացոյցը, օրուան մամբը, Եօթնօրեայ շաբաթը, քաղղէական գիւտեր են: Բնական գիտութիւններու մէջ ալ կը թուր թէ բաւական առաջացած էին անոնք:

Բարելոնի մէջ բժշկական վարժարաններ գոյութիւն չ'ունէին: Հիւանդները կը ցուցադրուէին փողոցներուն մէջ և ամէն անցնողներ կրնային ու պարտաւոր էին խորհուրդ, կամ, իրենց փորձառութենէն քաղելով, հրահանգներ տալ: Ծառ յաճախ կ'երգուընցնէին հիւանդները՝ վտարելու համար անոնց մէջէն շար ոգիներ, որոնցմով կը կարծէին թէ բնուած են անոնք:

Հոս տեղն է յիշել որ, նոյնիսկ Քրիստոնէութեան ժամանակ, Հայաստանի մէջ, երբ մէկը կը հիւանդանար, կը կարծուէր թէ Այս կամ դիւ մը մտած է անոր մարմնոյն մէջ: Ուստի այդպիսիները բրժշկելու համար, կ'երգուընցնէին ու կը ջանային վանել անոր մէջ բնակող շար ոգին: Եւ կամ կը կարծէին թէ շար ոգին՝ Այսը զարկած էր զայննովմ | ու կը դիմէին մագական միջոցներու: Ատոյզ է թէ արիական ժողովուրդներու մէջ ալ շար ոգիները կամ հիւանդութեանց ոգիները անձանօթ չէին, բայց Հայք աւելի ստուրական կամ տուրանական աղղեցութեան երանգը կը ցուցնեն իրենց այդ կախարդական սովորութեանց մէջ:

Ստուգիւ Քաղղէաստանի գիտունները, ամենէն առաջ մագեր՝ կախարդներ էին: Աստղարաչխութիւնը կ'ուսանէին անոնք առաւելագէտ իրրե առողագիտութիւն, իրրե գուշակութեան արուեստը նոյնիսկ աստեղագիտական բարբաճանքները՝ այս երկրէն տարածուած են, եթէ ոչ հոն ծագում առած: Ընդ է, Քաղղէաստանի մերձակայ երկիրներն ալ նուազ անձնատուր չէին մագական արուեստներուն կամ աւելորդագաշառութիւններուն, Մարաստանը մագերու հայրենիքը կը նկատուի կարծես: Նոյնքան ճիշդ չէ՞ր ըլլար արդեօք Քաղղէաստանը և Տուրանը նկատելի կախարդներու իրրե հայրենիք: Սա ստոյգ է միայն թէ հոն ուր Սպիտակ Այլացեղ տարրը տարածուած է, վնտիներու կամ մագերու սերունդներ վխտացած են միշտ: Իրանի շար ոգիները կարծես Տուրանի ժառանգութիւնն են, որոնց դէմ կը զինուի Զրադաշտի կրօնը, Ո՛վ գիտէ թէ շար ոգիներու գոյութեան հաւատալիքը տուրանական ժողովուրդներու հետ ծնած չէ և անոնց հետ զազմած մինչև Բարելոնի գաշտաղեօինները: Ամէն պարագայի տակ նպաստաւոր գեաին մը կը գանէր Եփրատի ու Տիգրիսի այդ ափերուն վրայ: Հոն, կախարդութիւնը գիտութեան կարգը կ'անցնէր, աստեղագիտութիւնը՝ աստղարաչխութեան տեղ, վնտկութիւնը կամ հմայութիւնը՝ գուշակութեան տեղ, երգուընցնելը՝ բժշկութեան տեղ, ուսման կամ դաստիարակութեան գերագանց ա-

սարկան կ'ըլլայ մոգութիւնը : Հայրը որդւոյն, ուսուցիչն աշակերտին կը կտակէր զայն այնքան գուրգուրանքով : Տախտակներու, պնակիաներու վրայ փոխադրած էին զայն . իրենց հանրագլխարանը աորն սահմաններուն մէջ կը ծրարուէր :

Քաղզէաստան իր այս քրմական քաղաքակրթութեան վրայ տեսաւ տարրեր նկարագրով կառավարութեան մը զարթումը :

Քաղզէաստանի ծաղկեայ իշխանութեան զլխին եկաւ բազմիկ ասորեստանեան հօգօր պետութիւնը : Քաղզէաստանի մայրաքաղաքն էր Բարելոն , Ասորեստանինը կ'ըլլայ՝ Նինուէ :

Քաղզէաստանի հրախաչին Աեմականները, իրենց աստուածին անունով Ասուր կամ Ասորեստանցի կոչուած , քաղզէական տիրապետութեան ներքե կը գնառէին նախապէս : Նոյնիսկ քաղզէական գաղթականութիւնով մը բարեխառնուած էին : Բայց այդ մոգովորդը սահմանուած էր ո՛չ միայն քաղզէական յուժը թօթափելու, այլև աւրեւելքի ամէնէն ահարկու պետութիւնը հրմնելու :

«Ասորեստանցիները՝ անտարակոյս՝ Ասաջաւօր Ասիայի ամէնէն օժտուած ցեղերէն մէկն էին : Նուազ ինքնատիպ քան Քաղզէացիները, իրենց վարպետները՝ քաղաքակրթութեան տեսակէտով, բայց աւելի չարքայ էին ու կրողի : Գերազանց օտարձանով տէր էին անոնք զինւորական յատկութիւններու, ֆիզիքական ուժի, գործունէութեան, ճարտիկութեան, պաղորտիւնի, անխռով քաջութեան, կը հայածէին վիթխարի վայրի ցուլեր, դաղաններ, որոնցմով այնքան լեցուն էր իրենց երկիրը և դէժ սո դէժ կը ճակատէին անոնց : Տգեղ մուգութիւններ կ'անշքէին սակայն՝ իրենց աստքինութիւնները կամ քաջութիւնները : Արիւնզկակ մոգովորդ մըն էին , բնարարող ու ստախօս , վաւաչոս , ծայրայեղօրէն հպարտ , խարերայ և մասնիչ ի հեճուկս հակառակօրդին : Իրենմէ աւելի չէ եղած ազգ մը որ այնքան եղականօրէն չարաչար գործածած ըլլայ ոյժի իրաւունքը : Կ'աւերէին կ'այրէին քաղաքներ իրենց բոյսը անցած տեղերէն , յարդով կը լեցնէին կամ ողջ ողջ մօրթագերմ կ'ընէին ապրտամրապեանները : Հակառակ իրենց քաղաքակրթութեան արտօքինպեճանքին ու նրբութիւններուն , միշտ բարբարոսներ մնացած են անոնք :

Տիգրիսի գազանրուն մէջ ծնած ու մեծցած թոժիւններ էին կարծես , որոնք որդեկատար արջերու նման կը խոչանային իրենց թշնամիներուն վրայ՝ անոնց սրաին առագաստը բզբակելու համար : Երկիրը այնպիսի վայրազ ասպատակներու գործերուն ականատես եղած չէր տակաւին : Անթիւ ու ստակայի արշաւանքներ եղած էին , բայցք անոնց հաւասարած չէին անգթութեան տեսակէտով : Ասորեստանի այս վաղբերը կը յարձակէին սպաննելու , գերելու , աւերելու . համար միայն : Աւրօղջ քաղաքներ , աշխարհներ գերի տանիլ ամենամեծ յաղ-

թութեան նշանն էր անոնց համար: Անոնց բանակները, ինքնատիպ
հարսակներու բեամբ, ո՛չ մէկ ծառայութիւն չէին կրցած մատուցա-
նել մարդկային յառաջդիմութեան: Միջագետքի աւազներէն ծնած
պիժակներու այս խումբերը աւերել, քանդել, գերել զիտէին միայն:
Քաջութիւնը անգթութեան համանշանակ էր: Անոնց աստուածներն
իրենց թագաւորներն էին: Եթէ ապագային Հռոմի կեսարները աս-
տուածներու կարգը կը դասուին, Ասորեստանի ժառանգութիւնն է
ան, Սելեւկեան, Պաղոմեան խողովակներով փոխադրուած (*):

Իրենց այդ բովանդակ անգթութիւնները յանուն իրենց աս-
տուածին, յանուն Ասուրի կը գործէին, որովհետեւ գերազանցապէս
կրօնական ժողովուրդ մըն էին: Ինչքը չեն գործուած արդէն յանուն
աստուածներու, յանուն կրօնի...:

Ասորեստանցի «թագաւորը միշտ ինքզինքը կը դրուատէ, բայց
աւելի կը դրուատէ նաեւ իր աստուածները: Իր փառքին ու իր եր-
կիրն ընդարձակելու համար կը կռուի. բայց կը կռուի նաեւ ուրիշ
ազգերու մերժած աստուածներու փառքին համար, և անոնց պաշտա-
մունքը տարածելու համար հեռու ճանաթ բոլոր երկիրներուն մէջ:
Իր կռիւնները կրօնական պատերազմներ են այնքան որքան երկրա-
կալական պայքարներ. իր շինութիւնները, դէթ անոնք, որոնց վրայ
այնքան հաճոյքով կը նայի, կրօնական շինոթիւններ են»:

Տեսէ՛ք, ինչ մտելածնությունամբ ու հպարտութեամբ կը խօսի
Թաղաթփաղասար Ա., ժԱ. դարուն (1108-1080 Ն. Ք.), իր ար-
ձանագրութիւններէն մէկին մէջ. «Իմ տիրոջ՝ Ասուրի զօրութիւնովը
Սարիա երկրին վրայ և լայնատարած Կարիսի գիււորներուն դէմ
արշաւեցի: Անտառուտ ու բարձր լեռներու մէջէն, որոնց մէջ երբեք
թագաւոր մը ոտք կոխած չէր, Ասուր աւերը հրամայեց որ քայլմ
անցնիմ: Չարնուեցայ անոնց հետ լեռան մը վրայ, որ դժուարագնաց
տեղ մըն էր, պատերազմեցայ, յաղթեցի անոնց: Անոնց պատերազ-
միկներուն դիակները լեռներու բարձունքներուն վրայ շեղջ շեղջ
դիզեցի. անոնց զինւորներուն արիւնը ձորձորներու մէջ ու բարձր
լեռներու վրայ հոսեցուցի»:

Աւելի չնական, անգութ ու վայրագ են Ասորեստանի բարազի (885-
860) խոստովանութիւնները. «Յառաջ խաղացի դէպի Կասիարի,
կ'ըսէ ան իր Տաբգուրեան մէջ, Կինարուին՝ Սուլայիայի բերդա-
քաղաքին մօտեցայ: Չինւորներուս յարձակումովը, բուն ճակա-
տամարտովս խոյացայ, քաղաքին տիրեցի: Անոնց պատերազմիկներէն
600ը զէնքով յերկիր կործանեցի. 3000 գերի կրակին մէջ այրեցի»:

(*) Կեռզ-Մեսրոպ, Նեռած. ժ. Մարգարեից, Ովսէէ, (ձոգր.):

իրը պատանդ՝ անոնցմէ և ո՛չ մէկ կենդանի թողուցի: Խուլային՝ անոնց քաղաքապետը կենդանոյն ձեռք ձգեցի: Անոնց դիակները ցիցերու վրայ անկեցի. մանչ ու աղջիկ տղաքներն խորոյկի մէջ աշ-րեցի: Խուլային՝ անոնց քաղաքապետը մորթազերծ ըրի: Դամղա-մուսայի պարսպին մէջ հիւսեցի զայն. քաղաքն աւերեցի, քանդե-ցի, հրով այրեցի: Մարիրու քաղաքին և իր դաւառին տիրեցի. ա-նոնց պատերազմիկներէն 50ը զէնքով յերկիր կործանեցի, անոնցմէ 200 գերիները կրակի մէջ այրեցի»:

Քիչ մը անդին աւելի վայրագ, և աւելի չնական.

«Անոնց աւարը, ինչքը, արջառը, անոնց ոչխարներն առի, շատ մը գերիներ կրակի մէջ այրեցի, շատ մը մարդիկ ողջ ողջ ձեռք ձգեցի, անոնց ձեռքերն ու թեւերը կտրեցի. ոմանց քիթը, ախանջները կտրեցի, շատերուն աչքերը փորեցի, կենդանի մնացած-ներէն աշտարակ մը կանգնեցի. կոթող մըն ալ անոնց կառավներէն կանգնեցի: Իրենց քաղաքի վիճակին մէջ, ծառերու վրայ անոնց զը-լուխները վարեցի. իրենց արու տղաքը, աղջիկները կրակի մէջ այրեցի. քաղաքն աւերեցի, քանդեցի, հրով այրեցի, ոչնչացուցի»:

«Աւերակներու վրայ իմ դէմքը կը զուարթմանայ, ցասումիս յա-գեցումին մէջ կը գանեմ իմ գոհունակութիւնս»:

Ճիւղաղային անգթութեան աղաղակն է այս: Եւ միայն Ասուրնա-ձիրբաղը չէ որ այս վաւերական կազկանձիւնը կը լսեցնէ: Ասու-րեստանի բոլոր աշխարհակարներուն զազանային արիւնախոսնձ մտըն-չիւնն է ան: Իրենց պատմութիւնը արիւնազանգ տաւաթ մը շղթա-յաւորումն է նոյն իսկ: Տեսակ մը վարակիչ ախտ՝ սակայն՝ որ չու-չացաւ իր չըջակայ ժողովուրդներուն մէջ եւս տարածուելու:

Ասորեստանցիներէն ետքը, գերեվարութիւնը, աւերն ու քան-դումը, ասորեստանեան անգթութեան ամէնէն նրբին արարքները ոտփորական գոյն մը կ'տանեն աշխարհակալներու և յաղթական բա-նակներու աչքին: Հայաստանի բարձուքներուն վրայ թառած բը-նակչութեան խիզախ առաջնորդներն անգամ միեւնոյն ախտէն վա-րակուած են. մարական կամ պարսկական երկրակալ բանակներն իսկ կ'ընդօրինակեն զայն:

Ուրբարաուի ամենէն նշանաւոր թագաւորներէն մին, Արգիշտիս Ա. Ասորեստանի տիրող անգթութիւնէն օրինակուած անշուշտ, իր ար-ձանագրութիւններուն մէջ պարծանքով կը յիշատակէ իր այրած տա-ճարներուն, կործանած քաղաքներուն թիւը, գերիներաւն, սպան-նուած թշնամիներուն, յափշտակած մարդոց, կանանց ու տղաքնե-րուն, կողոպտած ձիերուն՝ եգներուն՝ ոչխարներուն բանակը: Յո-խորտանքով կը գրէ անգամ մը թէ 19255 մանուկ գերի բռնած է ան, 10140 ազատ մարդիկ, 23280 կին, 12675 զինուոր, 1104 երիվար,

35016 եզ ու 11823 ոչխար: Նոյն հպարտ շեշտերով կ'արձանագրէ ան թէ Կապաղովկիայի արեւմտեան կողմերէն 24274 այր ու կին տղայ գերի վարած է զէպի Վան: Գերի սարած է նաև Միլիդասի (—Մայաթիա) աղջիկներն ու Տուպասուի պատանիները:

Նոյն գործերը կը պատմեն մեզի, ինչպէս տեսանք իրենց պատմութեան մէջ, Սարգուրիս Բ., Ռուսաս Ա., Մենուաս և յն.: Ան . ր . ժանն Նաղիրուաղայի աչքերը փորեցի ու շղթայակապ բանտ զրի, և հուսկ ուրեմն սպաննել տուի, աւարի սուած ոսկին ու արծաթը ևս Բիաինիա (—Վան) բերի»: Ասորեստանի աշխարհակալներու լեզուէն տարբերութիւն չունի Ուրարտուցի թագաւորին այս պատմութիւնը:

Ասորեստանեան այս անգութ բարքը շատ երկար ժամանակ իր արտոյայտութիւնն ունեցած է նաև բուն Հայ ժողովուրդին մէջ: Մինչև Գրիստոնէութեան Ե. և աւելի յետին դարեր տիրած է ան Հայաստանի մէջ:

Իրաւ է թէ արիական Հայեր աւելի պարսկական խողովակէ ընդունած են ասորեստանեան այս վայրագ օրինակը. պարսկական բանակին մէջ Հայոց Տիրան թագաւորին աչքերը հրաշէկ երկաթով կը խարեն. Մերուժան Արծրունի և Վահան Մամիկոնեան ուրացող նախարարներուն առաջնորդութեամբ, Պարսից թագաւոր՝ Շապուհ երբ կ'աւերէ, կը գերէ ամբողջ Հայաստանը, «ընդ ցից սայլից հանել» կուտայ նաև ազատանի հայ կիներն ու օրիորդները, անոնց կէսը սայլերու տակ կը ձգէ, անթիւ մասաղ մանկախն գերի կը վարէ զէպի Սասաններու երկիրը:

Ուրիշ առիթներով ալ Հայք Պարսից թագաւորին ասորեստանեան անգթութեան ճաշակն ընդունած են: Հայոց յանդուգն ու քաջ զօրավարներէն մէկը՝ Վասակ Մամիկոնեանը, կը մորթեն Պարսիկներ, մորթը կը հանեն ու խոտով կը լեցնեն զայն, Նոյնպէս Պարգև Անատունիի մասին «տիկտեսակ գործեալ ուռուցմամբ, կը գրէ Խորենացի, հրամայեաց (արքայն Պարսից) ղնել յանդիման Խոսրովայ (Հայոց արքայի) հանապազ»:

Պարսիկներն այնքան իւրացուցած էին ասորեստանեան այս վայրագութիւնները, որ Բուզանդ կը նկատէ զանոնք պարսկական անգութ սովորութիւն մը երբ կը գրէ. «Ըստ Պարսկի օրինակին հրամայէր զմորթն (Վաղարշու) ի բաց հանել, և խոտով լնուլ և ի հրապարակի իւրում ի տեսիլ ծանականաց կանգնել հրամայէր»: Եւ Մուշեղ սպարապետը կարծես Պարսից վրէժը լուծելու համար է միայն որ նոյն անգթութիւնները կը փոխարինէ:

Պէտք է ընդունինք՝ սակայն՝ թէ Ուրարտեան կամ նախահայաստանեան բնակիչները Ասորեստանի անգութ բարքերուն հետ ընդու-

նեցին նաև որոշ քաղաքակրթութեան մը տարրերը :

Հայաստանի Սպիտակ Ալլայեղերու գիրն ու գրականութիւնը, յայտնի է, Ասորեստանէն Քաղզէայէն էին : Լուսիպրիս (845-835), ապա Սարգուրիս (835-820) առաջին անգամ Ասորեստանի սեպագրութիւնն ու լեզուն ներմուծած էին Ուրարտու և անոնցմով կանգնած ուրարտեան առաջին յիշատակարանները : Սարգուրիսի յաջորդն Իսպուլնիս (825-800) նոյն սեպագրական ձևեր կամ զաղափարագիրերը պահելով հանդերձ, սկսած էր երկրին լեզուով արձանագրել իր քաջագործութիւնները :

Ուրարտուի բնակիչներն Ասորեստանէն ընդունած են նաև ճարտարական ու ռազմագիտական ծանօթութիւնները, նոյնիսկ ասուրաքաղզէական աստուածութիւններն :

Հայաստանի գլխաւոր կեդրոններուն մէջ—Ուրարտու, Մաննա, Նալիբի, Մուսասիբ, Միլիլիս, ևն— վաղուց զոյութիւն ունեցած են աւատական իշխանութիւններ, թագաւորութիւն թէ սատրապութիւն, որոնք ինչպէս յիշեցինք նախընթաց զլուիներուն մէջ, դարերով իշխած են իրենց նուաճած ժողովուրդներու ճակատագրին, միւս կողմէ անվերջանալի պատերազմներով պաշտպանելով իրենց երկրին սահմանները՝ զրացի նգոր ւէրութիւններու յարձակումներուն դէմ :

Այս թագաւորութիւններուն ու սատրապութիւններուն ծագումը, մէկէ աւելի բանասէրներու քննադատութեան առարկայ եղած է :

Պ. Կ. Բասմաջեան, իր «Բանասէր» պարբերականին մէջ կարեւոր յօդուածներ նուիրած է այս նիւթին, նոյնպէս Վիէննայի յարգելի Միլիթարեանց «Հանդէս Ամսօրեայ»ն :

Տօղթ. Բագարատ Խալաթեանց երկասիրութիւն մը նրատարակած էր վերջերս, «Մի կարծիք հայ նախաւորութեանց ծագման մասին» տիտղոսով, որուն մէջ, թուելէ յետոյ սատրական բառերու շարք մը, որոնք իր կարծիքով, մուս գտած են հայերէնի մէջ, կ'անցնի բացառելի հայ նախաւորութեանց ծագումը, ջանալով ստուգարանել ու բաղդասել քանի մը նախաւորական ցեղերու անունները, որոնք կը գտնուին ուրարտական սեպագիր յիշատակարաններուն մէջ :

Ահաւասիկ այդ շատեկան երկասիրութեանէն խիստ ամփոփ քաղւածք մը.—

« Թէ Հայերը ո՛րքան մօտ շփում ունեցած են Ասորեստանցիներուն հետ. ասիկա կ'ապացուցուի ասորական բառերու շարքով մը, որոնք կը գտնուին թէ՛ մեր գրարարին, և թէ՛ աշխարհարարին մէջ. օրինակ.

Պիրիզու = Բերդ Քունուքու = Կնիք

Թինիրու = Թինիր

Քիւպու = Գուք

Քամմախու = Կամաք

Թէչու = Թէչ

Շախնու = Իշխան

Քու, քումու = Քո, քումմէ .

Բաղաուու = Պատառեկ

Շարարու = Աճապարեկ (չափար) են .-

Յեռոյ, շարունակելով իր ուսումնասիրութիւնները, կը գրէ սոցթորը .-

« Ես չեմ կրնար սոսկ լեզուագիտական համեմատութիւններով շատանալ, այլ առաջ կը բերեմ քանի մը հայ նախարարական ցեղերու անուններ, որոնց հնագոյն հետքերը դրոշմուած են Ուրարտուի պատմութեան մէջ :

« 1. — Ապահուցիմ : Այս նախարարութիւնը, ինչպէս յայտնի է, կը գտնուէր Վանայ ծովուն արեւմտեան կողմը, նոյն գաւառի անունը՝ Ա-պա-ե-ցի ձեւին տակ երեւան կու գայ Նայիրի երկրին քաղաքեք Իշխանութեանց շարքին մէջ, որոնց տէրերը կուռի ելան Թկլադարլասար Ա.ի դէմ, երբ այս վերջինը դէպի հիւսիս արշաւեց (100 (Ք. Ա.) թուականին Ասիկա՝ Հայաստանի հետ ասուրական թագաւորներուն առաջին մարտն էր, որ յաջողութեամբ պսակուեցաւ :

2. — Արծրուցիմ : Մեր ամենահին և ընդարձակ նախարարութեանց մին է, որ գրեթէ բովանդակ Վասպուրականը գրուած էր, Վան էր (Տոսպ) գլխաւոր քաղաքը : Մոնե-Գաբուսի (Վանայ կամ Շաբաղու քաղ) կոչուած արձանագրութիւնը, թուելով ինչ ինչ քաղաքներու անունները, որոնց աստուածներուն նշանակուած էին զոհուելիք անասուններ, ի մէջ այլոց կ'անուանէ նաև Ար-ծիւ - ցիւ - ի - ցի (*), այլապէս՝ «Ար - ծ(ր) ու - ցի»-ից ցեղից) պատկանող քաղաք» : Առ այժմ յայտնի չէ թէ այս երկիրը՝ ինչ պատմական դէպքերու հետեւանքով անցած էր Արծրունեաց ձեռքը, և թէ ասոնք, ինչ դեր կատարած են հին դարերուն մէջ :

3. — Թեսուցիմ : Այս նախարարութեան կը պատկանէր Վասպուրականի գաւառներէն մէկը, որ նոյն անունով մկրտուած էր, Վանայ ծովուն արեւելեան եզերքը . զուցէ շատ հեռու չենք գտնուիր ճշմարտութենէ, եթէ Ռուսաստանի արարական արքայանունը փոխուէք այս անունին մէջ, յայտնի է թէ, նոյնիսկ մինչեւ այսօր, Վանայ բնակիչները Վ.Ս. - իկ կ'անուանեն իրենք զիրենք, որ ա՛յ տուելի մօտ կը յիշեցնէ նոյն Վանայ պետերուն անունը,

(*) Շուլժ, «Իսուսեակ Ազիպիմ», Ժէ, 15 :

- և միանգամայն կը համապատասխանէ ասուրական ազ-
րիւրներու Ուրաինս :
4. — Երմանդուցիք : Այս անունն ալ, որ չի պարզուիր ո՛չ
մէկ լեզուագիտական մեկնութիւններով, ևս կը բազ-
ղատեմ Երեմեհասի՝ ուրարական 10րդ թագաւորին ա-
նունին հետ :
5. — Մանուագեան Եթէ ճիշդ է Խորենացիի այն տեղեկու-
թիւնը թէ՛ Արշակունիներէն առաջ ալ, Հաբէ գաւառին
մէջ կը բնակէր Մանուագեան նախարարական ցեղը
(Խոր. Ա. ԺԲ.), որ ապա Տրդատի մահէն ետքը, բնաջինջ
եղաւ, հաւանական է այս անունը սերեցնել Մեհուանէն
(Իշպուխի որդի), որուն յիշատակը մինչև ցայսօր դեռ
կ'ապրի Մանագիւտս անունին մէջ, Վանայ ծովէն դէպի
հիւսիս :
6. — Տրուցի : Ես կը համեմատեմ Գար-ի-հու-ցի գաւառին ա-
նունին հետ, որ հաւանականօրէն, Վանայ ծովին հիւսիս
արեւմուտքի կողմը կը գտնուէր : Սէյսի մեկնութիւնը
«ճգօր երկիր», ըստ իս քիչ հիմք ունի :
7. — Սահառուցի : Հմեռ. Սու-բա-հու-է որ կը կազմէր Վա-
նայ տէրութեան գաւառներէն մէկը :
8. — Վարձաուցի : Մեզի մօտ կը իշեցնէ Ու-պար-սի-ու-
ցի երկրին անունը, որ նոյն Թկղարալասար Ա. ը Նա-
յիրիի Բաներեմ իշխանութեանց շարքին մէջ կը դնէ :
Նոյն անունը մեզի կուտայ Արգիշտիսի յիշատակարան-
ներէն մէկը, Ա-պար-սի-ու-ցի ձեւով : Այս իշխանու-
թիւնը կ'երեւայ թէ Վանայ ծովուն հիւսիսային կողմը
փնտռելու է :
9. — Պալուցի : Պէտք է համեմատել Բա-լա-ի-ցի երկրին
անունին հետ, զոր Սէյս, հազիւ թէ իրաւամբ, Վրաս-
տանի մէջ կը փնտռէ :
10. — Խոսխոռուցիք : Թերեւս եկամ ըլլան Խաոխառէն, որ
կը տարածուէր Որմիոյ ծովուն հարաւի կողմը :
- Մեր ազգային պատմիչները դժբաղդաբար շատ քիչ շահագրգ-
ռուած են մեր թագաւորներուն ու նախարարներուն ներքին կեան-
քովը, մեզի չեն աւանդած ո՛չ մեր նախնիքներուն ընտանեկան
բարքերուն, ո՛չ զինուորական, ո՛չ ալ քաղաքային կարգերու մասին
վաւերական տեղեկութիւններ. անոնք, զրեթէ առանց բացառու-
թեան, առասպելական զէպքեր միայն պատմած են, պատերազմե-
րու նկարագրութիւններ, առանին խոռովութիւններու շարք մը, թա-
գաւորներուն ու նախարարներուն միջև, թագաւորներու յաջորդու-

թիւններ, ուրիշ ոչինչ: Հետեւաբար, մեր նախնիքներուն ընտանեկան բարքերուն վրայ զոնէ աղօտ գաղափար մը կազմելու համար ստիպուած էինք դիմել օտար աղբիւրներու, մասնաւորապէս, այն չրջանի ժամանակակից յոյն և ուրիշ աղգերու պատմագիրներուն, որոնցմէ սակայն մեծ բան մը կտրելի չէ՛ եղած քաղիլ, որովհետև, Հայաստանի տնտեսական և ընտանեկան կեանքովը շահագրգռուող պատմագիրները, չըսելու համար հազուադէպ, սակաւաթիւ եղած են: Այդ մասին, Քսենոփոն կ'աւանդէ քանի մը շահեկան տեղեկութիւններ, զորոնք կրցած է քաղել, ինչպէս ինք կը գրէ, Պարսկաստանէն վերադարձի միջոցին, Հայաստանէն անցած ըլլալով:

«Փոլովուրդը, կ'ըսէ Քսենոփոն, վաղեմի նահապետական օրէնքներով կը կառավարուէր, մէն մի զիւր կտոմ աւան, ունենալով իր առանձին աւատուպետը: Գետնափոր բնակարաններ ունէին, դռները նեղ ու խոր, ջրձորի բերնի նման, իսկ ներսի դին ընդարձակ: Միայն կենդանիներուն համար կը բացուէին դռները, իսկ ժարդիկ սանդուխներէն կ'ելլէին կ'իջնէին: Տուներուն մէկ կողմը, աստուներուն մէջ փակուած, այժմ ոչխար, կով, հաւ, միասին կը կերակրուէին. իսկ միւս կողմը, շտեմարաններ շինուած էին, ցորենով, գարիով, զանազան արմորքներով ու բանջարեղէններով լեցուն. նոյնպէս գարիէն հանուած տեսակ մը բարկ ըմպելիով, որ շատ ատորժանամ կը իուէր խմողներուն: Կարասներու մէջ կը պահուէր այս գինին, և ունեցիները, ամէն անգամ որ ծարաւ զգային, եղէգ մը կ'երկնցընէին ու ձծելով կը խմէին: Նոյնպէս, քանի մը զիւրերու մէջ, հին գինիներ կը գտնուէին, և տեսակ տեսակ անուշահոտ իւղեր, որոնցմով հայ գիւղացիները կը քսուէին, յունական սովորոյթին համաձայն, ինչպէս որ այս վերջինները կը քսուէին իրենց ատարիկեան ձէթովը, այսինքն խոզի ճարպով ու բուսկնիէն ու լեղի նուշէն հանուած իւղով: Հայաստանի գիւղացիները կը պատրաստէին ուրիշ անուշահոտ իւղեր ալ, ևն:

«Բիւրուց նանանց»ի հեղինակը, բոլոր այս տեղեկութիւնները գրելէ յետոյ, կը պատմէ թէ ի՛նչ ազնիւ հիւրասիրութիւն մը ցոյց տուին հայ գիւղացիները Յոյներուն: Սեղանին վրայ բերին, կ'ըսէ Քսենոփոն, ամէն տեսակ մսեղէն կերակուրներ, զառ, ուլ, հորթ, խոզնի ու հաւ, ցորենի ու գարիի հաց, նաև գինի, ևն:

Քսենոփոնի տուած այս պատահական տեղեկութեանց վրայ աւելցնելով ուրիշ քանի մը գիտելիքներ, դարձեալ օտար աղբիւրներէն քաղուած, կրնանք բսիլ թէ, մեր նախնիքները, բոլոր նախնական ժողովուրդներուն ու ցեղերուն պէս, հովիւ, անդէօրդ, երկրագործ թէ պատերազմիկներ, միակ պետի մը հնազանդող ընտանիքներէ կազմուած հասարակութիւններու համախմբուած մըն էին: Ամբողջ

ընտանիքը, մէջը հաշուելով զաւակները, թոռներն ու անոնց կիները, միեւնոյն բնակարանին մէջ կ'ապրէին, ընտանիքին հօրը խնամակալութեան տակ, որուն իշխանութեանը կը հպատակէին այդ ընտանիքի բոլոր անդամները, մանաւանդ տղաքներն ու կիները: Կիւնը, գրեթէ բոլոր դասակարգերուն մէջ ալ, հասարակ աղախին մը կը նկատուէր, գերի մը, որ ամուսնութեան ատիթովը, երբէք օժիտ մը չէր բերեր իրեն հետ, այլ կը գնուէր, եթէ բռնի չէր առեւանգուած:

Մեր կովկասահայ պաշտօնակիցներէն մէկը, վերջերս սկսած է հրատարակել շահեկան, ընդարձակ երկասիրութիւն մը, որուն մէջ մանրամասնօրէն կը պատմէ հայ թագաւորներուն ու սատրապներուն ներքին կեանքը, արքունիքի սովորութիւնները, այլ և այլ քաղաքային ու զինուորական կարգերը, որոնք, կ'ըսէ, շատ կը նմանին մարականներուն ու պարսկականներուն:

Աչքի առջև սեննալով այդ ժամանակներու օտար պատմագիրներուն վկայութիւնները, կը տեսնենք թէ, կնոջ անարգ գիրքին մէջ, բացառութիւն մը կը կազմէր նահապետին կիւնը, որ, իբրև ընտանիքին տիրուհին և զաւակներուն մայրը, ընտանիքի բոլոր անդամներուն կողմէն բացառիկ պատիւներ ու յարգանքներ կը վայելէր, և նահապետին բացակայութեանը, յաճախ ինք կը վարէր անոր իշխանութիւնը, իր անդրանիկ տղուն հետ:

Բնակարանին կանոյքը շատ պարզ էր, անզարդ ու համեստ. քանի մը գորգեր, փսիտիներ, խոհանոցի հողէ կամ պղինձէ անօթներ ու գործիներ, աիկեր ու կտրասներ, ուր բնակիչները կը պահուէին: Յորենը ձեռնաղացքով կ'աղային, ալիւրը կը չինէին և անխմոր հաց կ'ուտէին, զօրս կը պատրաստէին տունի կրակարանին մէջ:

Ասոնք էին անա՛ մեր նախնի գեղջուկներուն տնտեսական կեանքի պայմանները:

Սակայն, թագաւորներուն ու սատրապներուն, ինչպէս նաև մեր հողատէրներուն ու ցեղախումբի պետերուն բնտանեկան բարքերը բոլորովին տարբեր էին: Ասոնք, ասորեստանեան, մարական ու պարսկական աղտոտ բարքերուն ու մուլութիւններուն ընդօրինակիչներ, զեղխ ու շուայ կեանք մը կը վարէին: Հարձեր ունէին, ներքինիներ, գերիներ ու ծառաներ: Խաղաղութեան ժամանակ, երբ պատերազմի բռնուած չէին ըլլար, գլխաւորապէս որսորդութեամբ կը պարսպէին: Մարաց ու Պարսից տարազներով կը հագուէին ընդհանրապէս, խոյր կամ վարսակալ կը կրէին, երկայն քղանցքով շրջագլխասներ կը հագնէին, մանեակներ, զինգեր, օղեր, սպարանջաններ կը դնէին, և յն. և յն.: Սատրապները, իրենց աստիճանին համապատասխան զարդեղէններ կը կրէին և արքունիքին մէջ ունէին իրենց յատուկ բարձր:

Մասրէրօ, Արեւելքի ժողովուրդներուն այս բազմաճմուռ պատմագիրը, հետեւեալ սուղերը նուիրած է նախահայոց ճարտարապետութեան, որ, կը գրէ ան, փոխ առնուած է ասորականէն.

«Անոնց քաղաքները փոքր էին, նոյն իսկ արքայանիստները, որոնք չեն կրնար բազդատուից Ասորեստանի քաղաքներուն հետ Անոնք, սովորաբար քառակուսի երկայնութեամբ մը կ'երեւային. պարիսպները, կոշտ կառուցուածքով մը, քառանկիւնի քարէ զանգուածներով և կարգ կարգ խուերով իրարու վրայ նստած, ո՛չ չազօխ ունէին, ո՛չ ալ ուրիշ զօգ: Պարիսպներուն կատարները՝ աստանաձեւ էին, որոնց եզերքը կը բարձրանային, սեղ սեղ, քառակուսի աշտարակներ, իսկ անոնց ամէնէն վտանգաւոր կողմերուն ստորտը շրջափակուած էր արտաքին պարիսպներով: Նեղ ու վտանգաւոր ճամբաներէ կը հաննիս դուռը, ապառաժին ծայրը պսակի ձեւով մը շինուած: Անճամբաներու կամ հասարակաց դռներուն յորինուածքը բաւական պարզ էր, քարէ կամ աղիւսէ ուղղանկիւնի սուրբեր, դուրսէն մերկ դուռներով ձեղքրտուած, բայց, ոմանք, իրենց վերեւ ունէին բաց ձեմկիքներ, կարճ սիւնակներու վրայ հաստատուած: Այս ամէնը կը պսակուէր հարթ և յաճախ երկու զատիթափներով տանիքով մը, որ տափակ երզիքէն աւելի ընդունակ է գիմադրելու ձմեռուան անձրեւներուն ու ձիւնին: Իշխանական պալատները մասնաւորներու ընակարաններէն կը զանազանուէին այլ և այլ մասերու ծաւարովը, նոյնպէս յորինուածքի աւելի մանրակրկիտ խնամքովը: Երբեմն այդ պալատներուն կը յարմարցնէին սիւնազարդ քիւ մը, քանդակաւոր մետաղէ սկաւառակներով կամ վաճաններով զարդարուած: Ներքին սրահներուն որմերը ծածկուած էին սալաքարերով, որոնք արձանազրութիւններով ափսոսած էին: Կանոյքը յարեւմտան էր Նինուէի կաճ կարասիքներուն, բայց ո՛չ անոնց չափ ճօխ, թերեւս անոնց է՛ն թանկարժէք մասերը բերուած էին Ասորեստանէն կամ արամական արուեստանոցներէն (*):

Ուրարտուի տաճարները, ինչպէս վերեւ յիշեցինք սուղէն, ընդհանրապէս, ասորականներուն ընդօրինակութիւնը կը համարուին իրենց կառուցցով ու ձեւով. արդէն նախահայոց քաղաքակրթութիւնը շատ քան կը պարտի Ասորեստանին: Ուրարտուի թագաւորները, ինչպէս կը վկայեն սեպագիր յիշատակարանները, իրենց բարբարոսութիւններով կը մրցէին ասորեստանեան երկրակալներուն հետ, և այս վերջիններուն պէս, իրենք ալ կը շինէին զիթխարի ջրմուղներ և հոյակերտ

(*) Մասրէրօ, Հիւսիս, Հ. Գ. էջ 57-60:

պալատներ ու տաճարներ, որոնց հետքերը կը նշմարուէին մինչև յարդ։ Ահա՛ Վանայ հսկայ բերդը, որ, ինչպէս կ'ըսէ ժամանակակից ազգային բանասէրներէն Գուրեան Սրբազան, այսօր իսկ հիացուկ կ'աղղէ ո՛չ միայն իր բնական հրաշակերտութեան, այլ և յորինուածքի ամբողջական ու մեծութեան տեսակէտով, Ուրարտուի թագաւորներէն մէկին՝ Իսպուխնիսի ձեռակերտն է հաւանականօրէն. իսկ այն ջրմուղը, որ կ'ուղղէ բովանդակ Վանի այդեատանները, Մենուասի մեծագործութիւնը պէտք է եղած ըլլայ(*) :

Հոս կը զետեղենք այդ ջրմուղի ընդօրինակուած արձանագրութիւններէն մէկը. —

«Խալտեայ հօր որդւոյ՝ Մենուաս, որդի Իսպուխնիսի, այս ջրմուղը շինեց. Մենուասայ Ջրմուղ է անոր անունը : Մենուաս կ'ըսէ. — Ո՛վ որ այս արձանագրութիւնը մէկդի կ'անէ, անունը կը ջնջէ, ո՛վ որ զայն հողով կը ծածկէ, ո՛վ որ կը պնդէ թէ ինք է շինած այս ջրմուղը, այդ մարդը՝ Խալիթ, Տէխուպաս, Սամաու աստուածները՝ հրապարակու զինքը, իր անունը, իր գերդաստանը, իր քաղաքը՝ Զուրի ու կրակի ճարակ ընեն» :

Եթէ է ճիշդ է այն ենթադրութիւնը թէ՛ Ասորեստան եղած է նախահայոց ճարտարագիտութեան մայրը, ո՛չ նուազ պէտք է ճշմարտութեան մօտ ըլլայ նաև ազգային հին աւանդութիւն մը, որուն համեմատ, Ասորեստանի մեծ թագուհին՝ Ծամիրամը շինած է Վանի բերդը, նոյնպէս ջրմուղը՝ Աւելորդ է կրկնել սակայն, առասպելական անձ մըն է Ծամիրամ, նոյն ինքն Ասորեստանի Իշգար զիցուհին, որ Խալտեան ժողովուրդներէն կը պաշտուէր Սարիս կամ Ծարիշ անունով :

Տեսէ՛ք, ինչ փափուկ վրձինով մը կը նկարէ մեր Խորենացին Բիաինիայի վեհապետներուն այս սքանչելի մեծագործութիւնները, որոնց առասպելական հեղինակին՝ Ծամիրամի մասին՝ այնքան ձրի դրուատիքներ կը շուայէ ան. —

«Աստ իմն ակնկառոյց լեայ այրատիրան այն և կաթտան Ծամիրամ, հրաման տայ արանց գործաւորաց յԱսորեստանեայց և յայոց իշխելոց . . . ամէկ անխափան ի փափաքեայ տեղին, և գործն հաւասար հրամանին տոնոյր զկատարումն։ Եւ հրամայէ նախ զամբարտակ՝ զետոյն ադրուամիք և մեծամեծ վիժօք շինել, կրով և աւաղով մածուցեայս, անբաւ յայնութեամբ և բարձրութեամբ, որ կայ հասաստուն, որպէս ասեն, մինչև ցայսօր ժամանակի։ Եւ ի պատասուածս նոյն ամբարտակի զետոյն՝ այժմ, որպէս յսեմք, մար-

(*) Պեղ. Արձանագր. բիւ 12 դ. 12 բ. 12 ա. ՀԱ. 1893, էջ 50:

դիկ աշխարհին ի նէն և ի գաղթականս փախստեամբ ամբանան, իբր ի ծայրս քարանձաւաց լիբանց ամրացեալքս եւ թէ զփորձ առնուլ զէս ումեք լինիցի, և ոչ իբր պարսատկաց քար մի արժանաւոր ի շինուածոյ ամբարտակին խել ոք զօրեսցէ, թէ եւ մեծաւ աշխատութեամբ ջանայցէ: Եւ ի հեղուածս արուեստին՝ որ զքարամբք՝ հայեցեալ ուրուք որպէս ճարպոյ ինչ հեղման հայեցողացն երեւեցուցանէ կարծիս: Եւ այսպէս ընդ բազում ասպարէզս անցուցեալ զամբարտակն, հասուցանէ ի նկատեալ տեղի քաղաքին: Շինէ զչքնաղս սմանս և զզարմանալոյ արժանաւորս ըստ պիտոյից ի միջոցաց քաղաքին լուանալիս: Եւ զմասն ինչ գետոյն ընդ մէջ քաղաքին բաշխեալ գնացուցանէ ի պէտս ամենայն պիտոյից, և յարուցմունս բուրաստանաց և ծաղկոցաց, և զայն զեղերք ծովակին յաջմէ և յահեկէ, քաղաքին և բովանդակ չըջակային յարբուցումն: Իսկ զընդդէմ արեգակնս կողմն անձաւին, որ և ոչ գիծ մի երկաթոյ այժմ վերագրել ոք կարէ, զայսպիսի կարծրութիւն նիւթոյ՝ պէս պէս տաճարս և անեակս օթից և տունս զանձուց և վինս երկարս, ոչ գիտէ ոք՝ թէ որպիսեաց իրաց պատրաստութիւն հրաշակերտեաց: Իսկ զամենայն երեսս քարին իբր գրչաւ զմտ հարթել, բազում գիրս ի նմա գրեաց, որոյ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս անէ (*):»

Խորենացիէն ետքը. Մասբէրօ ըրած է Տուսպանայի (Տուսպ = Տուսպաս = Վան) նկարագրութիւնը, որ կ'ամբողջացնէ նախընթացը:

«Տուսպանա, կը գրէ Մասբէրօ, իսկապէս իրարու փաթթուած երկու քաղաքներէ կը բաղկանար, որոնց մէկը զաշտին մէջ կը տարածուէր, զէս ի ծովակին ուղղութիւնը: Յուսթի պարտէզներով չըջապատուած էր, ուր, ամառները, ժողովուրդը կ'երթար հանգիստ վայելելու: Խեցեքարային կրահողի անջառ զանգուածի մը կրթնած էր ան, ձերմակ ու կարմիր, որուն ուղղաբերձ պատերուն մէջ, իրենց բովանդակ բարձրութեան վրայ, խոտչներ ու քարայրներ բացուած էին: Գագաթի սարահարթը, որուն բարձրագոյն կատարը 100 մեզրի կը հասնի, կը բաժնուի 3 զլլաւօր զարատափի, որոնց իւրաքանչիւրը բոլորովին անջառ է միւս երկուքէն և իբրև առանձին բերդ կը ծառայէ, երբ հարկը ներկայանայ: Իսպոլինիս, Մենուաս, Արգիշտիս, և Նոյն իսկ Շարղուրիս Գ., յաջորդաբար, որդիէ որդի, աշխատած էին անոր անառիկ հանգամանք մը տալ, և յաջողած էին: Մասշիլի էր միայն արևմուտքէն, որ տեսակ մը նեղ կածան, զառիվայրին զագաթը դրուած պասկի մը պէս, կը բարձրանար յաստիճանաբար ստորստէն մինչև կատարը: Բիախիայի այդ թագա-

(*) Խոր. Ա. էջ 36-39. Տպ. Վեհեթիկ, 1843:

ւորները՝ քիչ մը կանոնաւորեցին զայն, բայց ամբողջութիւն քովերը, լայն աշտարակներով ու ստրիպներով, որոնք կ'իշխէին անոր ամբողջ երկայնքին: Յետոյ, ստրահարթին վրայ կանգնեցին միջնաբերդ մը, պալատ մը, տաճարներ, ամարանոցներ, ուր բաւական քանակութեամբ զէնք ու պաշար զիջեցին անոնք, սովորական թշնամիի մը համբերութիւնը սպասելու համար: Մասնութիւնը միայն կամ չափազանց երկարաձգուած պաշարում մը կրնար ջախջախել անոնց յանառութիւնը(*):»

Հայաստանի մէջ ճարտարարուեստի գոյութեան մասին աւելի պայծառ դաշափար մը կը կազմուի նաև Ասորեստանի երկրակայնութուն վճարուած տարեկան տուրքերու ցանկերէն, որոնց մէջ մասնաւոր տեղ մը կը զբաւեն ձեռարուեստի արտադրոյթները, իրենց զարգացած հանգամանքովը ներկայանալով: Մասերէս կ'ըսէ թէ՛ ջրմուղներու, ջրանցներու շինութիւնը լո՛կ Միջագետքի վերապահուած չէր, ո՛չ ալ Ասորեստանի վեհապետներուն մենաշնորհը: Հայաստանի նախորդիկներուն և ասոնց հանձարեղ թագաւորներուն պատիւ բերող սրբան հրաշակերաններ գտնուած են այսօր, այն շրջանի աւերակներու մէջէն դուրս հանուած. ինչպէս են, աստուածներուն կամ իրենց մեհեաններուն նուիրուած տնօթներ, սպաններ, արձանիկներ, վահաններ, ևն., որոնք ճաշակի նրբութեան և ոճի զեղեցկութեան կենդանի ապացոյցներ են: Այդ հնութիւններէն մէկ քանիները բարձրաքանդակ են, և ուրիշներ՝ խորաքանդակ: Ասոնց վրայ կը տեսնուին այլ և այլ անձերու և անասուններու նկարներ, որոնք համակեղրոն շրջանակներ կը կազմեն: Ասոնք առ հասարակ ասորեստանեան նմանողութիւններ են, բայց որոշ և ուշադրաւ ինքնատուրթեամբ: Բոլոր այս իրեղէնները, ինչպէս նաև տուրքերուն սեսակները բաւական են ապացուցանելու թէ՛ անձանօթ չէր իրենց մէջ՝ մետաղաձուլումի արհեստը: Անոնք պղինձը կը խառնէին անաղին հետ և անագապղինձը կը բաղադրէին: Ծանօթ էր իրենց արծաթը, նոյնպէս ոսկին, զոնէ ձուլուած վիճակի մէջ: Երկաթն ալ անձանօթ մետաղ մը չէր անոնց համար: Այս բաւական ճարտար ժողովուրդին բոլորովին անձանօթ չէին Հայաստանի աստա հանքերը(**):

(*) Մասբեո, «Հին Պատմ.», ՀՏ. Գ. էջ 154:

(**) Քանկուսի, Արաբուսի և յետոյ Մասբեո, կը յիշատակեն Պանոսի եղբերներ ստրածուած կալիւրներն ու Սասպիւրները (Սպերցի), Ռուրացայիներու ոչ ժողովուրդներ, որոնք մեհապանաւորեան և ուրում, անագ, պղինձ, երկաթ և ուրիշ իսկ արծաթ ու ոսկի կը հալարայրէին արեւելեան ու հեղեղեան ժողովուրդներու մեծ մասին համար:

Այսպէս ըստ անհրաժեշտ է մէջ իրենց մասնաւոր տեղը կը գրաւէին սահմանական կառքերը: Սպիտակասար, Սարգոն և ուրիշ երկրակայներ կը յիշատակին իրենց գրաւած մարտակառքերը, նոյնպէս «պղնձէ անօթներ», «երկաթի զօրծիքներ», «ձիու սարքեր», «զրահներ», «բուրդէ ու կտաւէ հագուստներ», ևւն., ամէնքն ալ իրրեւ տուրք տանուած:

Արդ, այս բոլորը կ'ապացուցանեն թէ՛ զանազան արհեստներ գեւախն գտած էին Հայաստանի մէջ, և թէ՛ բուրդ մանկը, ստալանհրօթիւնը, կահագործութիւնը, ներկարարութիւնը, սակերչութիւնը, ևւն. ևւն., ս'չ միայն սկսած էին ծնունդ առնել նոն, այլ և կերպոււորուիլ ու զարգանալ:

Ուրախուէն կ'արտագրենք հետեւեալ էջերը, որոնք նախաձայոց սահմանական արուեստին, ինչպէս նաև երկրագործութեան ու վաճառականութեան վրայ զաղափար մը կրնան տալ:

«Ռազմագիտութիւնը զարգացած էր մասնաւոր Ռարաթուի մէջ, ուր պատերազմական մեքենաներ, կառքեր, զինավառ երկաթներ մուտ գործած էին արզէն: Նետը, նիզակն ու աղեղը, նախամարդուն այդ յախտնական ու անբաժանելի զէնքերը, ճարտար ձեռքերու մէջ կը գտնուէին կարծես այդ ժողովուրդին մօտ:

Ռազմագիտական հնարքներ կը թուի թէ բոլորովին անծանօթ չէին անոնց: Ասորեստանի նման հասարակաց ահարկու թշնամիի մը դէմ՝ միացած ուժերով դիմադրաւելու քաղաքագիտութիւնը, բաւական զօրեղ կերպով արմատացած կը տեսնուի Վանի թագաւորական սերունդին մէջ: Ռարաթուի ամէնէն զօրաւոր թագաւորները, ինչպէս Ռուսաս Ա., Սարգուրիս Բ., Արգիշտիս Ա., մասնաւոր առաջինը, կրցած են ոչ միայն իրենց շրջակայ մասը իշխանութիւնները հպատակեցնել, այլ և Սպիտակ Ալպայեզներու մեծագոյն մասը իրենց դաշնակից դարձնել Ասորեստանի դէմ, ինչպէս Թորէլը, Մոսոքը, Մուճաճիրը, Միլիդգուն, Զիկիրտուն և Վանայ ծովի հարաւային ու հարաւ-արեւելեան սահմաններուն բնակիչները, Միջագետքի ցեղերը, ևւն. ևւն.: Այսպիսի դարաւոր դաշնակցութեամբ կը դողացնէին նոյն իսկ Սարգոնի նման ահարկու և անդիմադրելի թշնամի մը: Հայաստանի այդ առաջին աշխարհակայները, չափէն աւելի յոգնեցուցած էին Ասորի զօրութիւնը, և՛ կարծես՝ քայքայած էին զայն ու պատրաստած անոր անկումը, զոր կիաքսար ի գլուխ հանած էր վերջապէս:

Բանակի կամ ճամբարի կազմակերպութեան մասին չատ ըստ չենք գիտեր զժրագրաբար: Եւ սակայն սա ստոյգ է որ հետեւեալ ու հետեւեալ բանակներու բաժանումը գոյութիւն ունէր անոնց մօտ: Պատերազմներու մէջ, մասնաւոր դաշտային կռիւներու միջոցին, մարտակառքերն ալ մեծ դեր մը կը խաղային:

Հայաստանի Խաղզիներու բարքին ու զէնքերուն մասին Քսենոփոնի նկարագրութիւնը, կարի շահեկան է: Յոյն իմաստասէր զօրավարին վերագրուած հեղինակութիւնը, Կիւրամարզը, իր ընդհանուր զիծերուն մէջ՝ և մինչև իսկ կարգ մը մանրամասնութեանց մէջ, եթէ անստոյգ ու անվաւեր այ ընդունինք, ինչ որ ստիպուած ենք ընել, զարձեայ պարտուոր ենք խոստովանիլ թէ կան անոր մէջ այնպիսի կէտեր, որոնք ճշմարտութեան թարգմանն ու նկարագիրն են նոյն իսկ: Այդ ճշմարիտ կէտերէն են անշուշտ Հայաստանի Խաղզի ժողովուրդի մասին մէկ քանի ակնարկութիւնները:

«Խաղզիները, կը գրէ ան, զորս անհրաժեշտ է մէկ երկու բառով ճանչցնել, այս կողմերուն (Հայաստան) ամէնէն մարդասէր ու կռուարար ժողովուրդը կը նկատուին: Իրենց զէնքերն են վահան մը և երկու նիզակ: Որովհետև բնականէն կը սիրեն պատերազմը և աղքատ են (զի իրենց բնակած լեռնային երկիրն ընդհանրապէս ամուլ է), կամու ինքզինքնին կը ներկայացնեն իրր վարձկան՝ իրենց ծառայութեան պէտք ունեցողին»:

Խալտեան շրջանի նախահայաստանցիները, կը գրէ Մասէրօ, բարձրահասակ, չորքաշ, թանձրամարմին ու յամուտ մարդիկ էին, իրենց աշխատութեան ու պատերազմի մէջ խիստ ու դաժան, և հպարտ՝ իրենց անկախութեամբ: Ուրարտեան զինուորները քաջավարժ էին զէնքի գործածութեան մէջ, և իրենց սուսային մանկութենէն կը հրահանգուէին ռազմական արուեստին մէջ: Արդէն, այդ լեռնականները, խրոխտ ժայռերու ձագեր, խաղաղութեան մէջ, որսորդութեամբ կը պարապէին. բան մը, որ մեծապէս կը նպաստէր իրենց ֆիզիքական զարգացման՝ զինուորական մարզանքներուն մէջ:

Ասորեստանի ինքնակալները, ինչպէս Ասուրնաձիրարալ, հեծեալ ջոկաաներով, որսի կ'երթային Նայիրի, Կորզուաց անտառաւէտ լեռները, ուր այծեամներ, վիթեր, եղջերուներ ու յամոյրներ կ'որսային: Որսի արշաւանքներու յատուկ անտառներ ու լեռներ կային Հայաստանի մէջ, մասնաւորապէս իշխաններուն ու թագաւորներուն համար, որոնց մենահնորձը կը համարուէր արդէն որսորդութիւնը:

Երկրագործութիւնը, շատ հին գաբերէ ի վեր մուտ գտած էր Հայաստանի մէջ, ուր չէին պակսեր արգասանող հողեր և ընդարձակ ու հարուստ արօտավայրեր: Հողի մշակութիւնը, հովուութիւնը, անասնաբուծութիւնը, ասոնք էին հայ գիւղացիներուն զխաւոր զբաղումները: Այս դժբաղդ, իրաւագուրկ և միշտ կեղեքուած դասակարգը — որ ամէն երկիրներու մէջ այ ժողովուրդին մեծամասնութիւնը կը կազմէ — դատապարտուած էր իր քրտինքով արգասաւորելու հայրենի հողը, որպէս զի անդին, բերդատէր, զղեկամէր, «ստրուպ, թագաւոր, Մարդկութեան մակարոյձներուն այս ընտրեալ

երամակը, կարենային ապահովել իրենց շուայ ու զեղխ ապրելակերպի ամբարիշտ վայելքները:

Հայաստանի բերրի դաշտերը տարուէ տարի կ'արտադրէին առատ արմախքներ, ցորեն, գարի, բրինձ, եւն., խակ մարգաւէտ, լայնատարած ու զեղեցիկ հովիտներուն մէջ կ'արածէին ու կը ճարակէին անթիւ ընտանի կենդանիներ, այծ, ոչխար, էջ, եզ, կով, գոմէշ, ձի, ջորի և ուրիշ արջառներ:

Մէն մի նահանգ կամ գաւառ, իր գիրքին ու կլիմային համեմատ, ունէր իր սեփական բերքը՝ կամ հանքը. այսպէս, հիւսիս արեւմուտքի գաւառները՝ կ'արտադրէին աղ ու բլուրեզ, Աղձնիքի ու Տուրուբերանի նահանգները՝ պղնձի, երկաթի ու կապարի հանքեր. Արարատ ու Սպեր՝ հոչակաւոր էին իրենց ոսկի հանքովը, Փայտակարան իր բամպակովը, Տուրուբերան՝ իր զազպէնով ու մեղրովը, Գողթն գաւառը՝ զիւներէր այգիներովը, որոնք առատօրէն կ'արտադրէին քաղցրահամ զիւնի մը, Տայոց նահանգը՝ թուղ, նուռ, սերկելի, նուշ, մանուանդ զեղծ, Ուտի նահանգը՝ ձիթենի, Արարատը՝ որդան կարմիր ներկը, եւն.: Հոչակաւոր էին Երասխի զետեղերքին, մասնաւորապէս Սիւնիքի ու Փայտակարանի սաղարթախիտ անտառները, որոնց արտադրած աճիքան աղնիւ փայտերը՝ պալատներու շինութեանը կը գործածուէին:

Հայաստանի մէջ երկրագործութեան ու ձիարուծութեան զարգացման, ինչպէս նաեւ հանքերու ճոխութեան մասին աւելի շոյափելի վկայութիւն մը առած ըլլալու համար, հոս կը զետեղենք մէկ քանի սեպածեւ արձանագրութիւններու պատճէնները:

Թեկապաղասար Ա. (1108-1080) կ'ըսէ. — «Բազմաթիւ ձիերու, ջորիներու երամակներ, անոնց (Նայիրիցիներուն) երկրագործական անթիւ ինչէերը առի տարի»:»

Ասուրնաձիրարալ կը պատմէ իր նախնիները. — «Նայիրի երկիրներու թագաւորներուն տուրքը. կառքեր, ձիեր, ջորիներ, արծաթ, ոսկի, պղնձեղէն անոթներ, արջառներ, ոչխարներ, զիւնի տուրքի տեղ ընդունեցի»:»

Վանայ և Որմոյ ծովափներուն չրջակաները տարածուող երկիրները — Խուրուչիա, Կիրզան, Մաննա, եւն. — գրեթէ նոյն տուրքերը կը վճարէին Ասորեստանի բռնապետներուն: Այս տուրքերու ցանկին մէջ կը յիշուի նաեւ ուզոր, մանուանդ երկսապատ տեսակը. որ, Հայաստանի բնիկ կենդանիներէն չրլլալով, կ'երևայ թէ Կեղ-բոնական Ասիայէն բերուած է:

Երկրագործութեան հետ զուգընթացօրէն կը զարգանար վաճառականութիւնը, որ նոյնպէս, շատ հին դարերէ ի վեր մուտ գտած էր Հայաստանի մէջ: Քսենոփոն կը պատմէ (Վարք Կիւրոսի, Գիրք Կ)

թէ ինչպէս Սալտինները, կամ Ուրարտուի ու Նայիրիի ժողովուրդները, սոււտարական շարքերութիւններ կը մշակէին մերձաւոր թէ հեռաւոր ժողովուրդներուն՝ Ելամացիներուն, Հնդկիներուն ու Փիւնիկեցիներուն հետ։ Վաճառականութեան մեծ, ընդարձակ պողոտաներ՝ Հայաստանը կը կապէին Փիւնիկէի ու Միջագետքի շահատաններուն՝ Տիւրոսի, Սիդոնի, Սարքամիսի, Բարսիլոնի հետ, ինչպէս կը հաստատէ Հերոդոտի նկարագրած նաւարկութիւնը, զոր տեսանք նախընթաց էջերուն մէջ։

Հայաստանի ձին ու ջորին հոշակաւոր էին և վաճառականութեան ամենէն գլխաւոր ու շահարեք նիւթը կը կազմէին. այս երկու ընտանի կենդանիները կարեւոր տեղ մը կը զբաւէին Ասորեստանի երկրակալներուն վճարուած տուրքերուն մէջ. յիշենք միայն 20,000 ձիերու տարեկան տուրքը, զոր Դարեհ Վշտասպեան կը ստանար Հայաստանէն։

Եզեկիէլ կը պատմէ թէ՛ Փորգոմայ Տուկէն — եթէ կ'ընդունինք որ Փորգոմի Տուկը Հայաստան է — ձիեր, ձիաւորներ ու ջորիներ կը տարուէին Տիւրոսի ու Սիդոնի վաճառանոցները։

«Ուրարտուցի Արամէ հօր զինուոցս սասակութենէն և ուժգին ճակատամարտէս զարձուրեցաւ.— Սաղմանասար Գ.ի խօսքերն են — : . . . Անոր բանակատեղն առի. սնոր մարտակառքերը, հեծեալները, ձիերը, ջորիները, որթերը, գոյքը, կողպուան ու հարուստ ինչքը լեռներէն առի տարի»։ Այլուր. «Անոր (Արամէի) պատերազմական մեքենաները, արքունի դանձերը, կահ ու կազմածն առի»։ Դարձեալ. «Անոնց բազմաթիւ պատերազմիկները սպաննեցի, 60,500 բնակիչ առի տարի իրենց ստացուածքներովը, իրենց ձիերով, ջորիներով, ուղտերով, եզներով, ոչխարներով ու այծերով»։

Նշանակելի են Սարգոնի առած տուրքերը. ի մէջ այլոց 400,225 ոչխար, 690 ջորի, 920 էշ, նախրիի այլ տուրքերն են. 34 տաղանդ (իրը 1020 քիլոկրամ) ոսկի, 160 տաղանդ արծաթ (իրը 4800 քիլո), 400 տաղանդ անագ (իրը 3000 քիլո), 400 տաղանդ երկաթ, 300 տաղանդ անագապղինձ (իրը 9000 քիլո), 460 ձի՝ իրենց կազմածներով ու զրահներով, 2000 եզ, 5000 ոչխար, երկաթի գործիքներ, բուրդէ ու կտաւէ զգեստներ։

Բոյոր այս յիշատակարանները՝ վաղնջական քաղաքակրթութեան մը գոյութիւնը կը հաստատեն Հայաստանի մէջ, ուր ծաղկած էին երկրադործութիւնը, հովուութիւնը, անասնաբուծութիւնը, վաճառականութիւնը, ճարտարարուեստները, ճարտարապետութիւնը, մետաղաձուլումը, հանքագործութիւնը, ոսկերչութիւնը, կահագործութիւնը, ինչպէս նաև ուրիշ հասարակ արհեստներ։ Հարաւի կամ տեղական վաճառանոցներուն մէջ, մեծ տեղ կը բռնէին ձիերը, իրենց

նաքերով, խոկ արծաթը, ոսկին ու երկաթը փոխանակութեան գլխաւոր միջոցներ էին:

Հայաստանը, կը գրէ Պայտասնեան, բոլորով բնական ու արտեստական բերքերով լեցուն երկիր մը, ժողովուրդին սէպերը լրացնել յետոյ, բնականաբար բնդարձակ վաճառականութեան աստարէզ մը պիտի բանար Հայոց համար: Եւ իրօք, Հայերը նշանաւոր էին իրենց վաճառականութեանք աւենա՛նին ժամանակներու մէջ:

Հայաստանը ցամաքային երկիր մին է թէ եւ, բայց իր շուրջ ունի երեք ծովեր և իր ծոցէն կը բլխին շորս անուանի գետեր, որոնց միջոցաւ կը միանայ յիշեալ ծովերուն հետ: Ընդդէմ գետով կտրուած է Սև Մովին հեռ, և Տիգրիս ու Եփրատ գետերը զայն կը միացնեն, մէկ կողմէ՝ Հնդկաց Ալկիանտին հեռ, խոկ Եփրատը՝ Մարաշի ու Սամաստի կողմէն ժտեցած է Միջերկրական ծովին: Արդ, այս զիրքով, Հայաստանը կրնար դիւրութեամբ առեւտրական յարաբերութիւններ աւնենալ վաղնջական բոլոր ծանօթ ժողովուրդներուն հետ:

Սակայն Հայոց մէջ, ծովային վաճառականութենէն առաջ սկսած է ցամաքայինը: Այս վերջինը, սկիզբները կ'ըլլար ընկ գրացի երկիրներուն հետ, ուր Հայերը կը փոխադրէին իրենց բերքերը: Յետոյ, կամաց կամաց սկսան հեռաւոր երկիրներ երթալ և, հուզկանարներու յարձակումներէն ապահով ըլլալու համար, մեծ կարուաններով կը ճամբորդէին, արեւելեան սովորութեան համեմատ, մինչև որ սկսան գետերուն ու ծովերուն վրայ ճամբորդել: Այնուհետև, ցամաքային վաճառականութիւնը, որ մեծ դժուարութիւններով ու նեղութիւններով կ'ըլլար, երկրորդական անդ մը սկսաւ բանել և ծովայինը՝ հեռոցհեռէ բնդարձակ համեմատութիւններ ստացաւ:

«Արեւելքի հայ վաճառականները՝ Կուր ու Երասխ գետերով կ'երթային Կասպից Մովը, ուրկէ, Եաքսարտէս և Ոքոսս գետերով, Բաղարիացիներուն, Սոգդիացիներուն, Պարթիւներուն ու Հնդկաց երկիրները կ'երթային և այդ տեղերէն իրենց ապրանքները բերելով՝ Սև Մովով Յունաստան և մինչև Իտալիա կը գրկէին:

«Արեւմտեան հարաւի մէջ, կարուաններով, Կապադովկիայէն Փիւնիկէ կը փոխադրէին Հայաստանի բերքերը: Տիրոսի և Միդանի վաճառանոցներուն մէջ կը ծախուէին Հայաստանի նմայդ ձիերն ու ջորիները, որոնց յիշատակութիւնը կ'ընէ Ս. Գիրքը — և յետոյ կը տարածուէին զրացի երկիրները, մանաւանդ Պայեստին: Անոնց տեղ կը բերուէին Հայաստանի վաճառանոցներուն կամ շահաստան քա-

դաքներուն մէջ սակի, արծաթ, դո՛ւարեղէն, ազնիւ կառւելէններ, ներկեր, իւզ ու մեզր :

«Աւելի յաճախակի երթուակութիւններ ունէին Հայերը՝ նինուէ ու Բաբելոն, ուր, Եփրատ ու Տիգրիս գետերուն միջնորդութեամբ, անոնք կը տանէին Հայաստանի գինին, մրգեղէնները, փայտը, տախտակը, և ուրիշ վաճառքներ և անոնց անզ կը բերէին Բաբելոնի գոյնզգոյն կերպամները և զօրդերը, Հերոդոտոս այսպէս կը նկարագրէ Բաբելոն գոյնզոյ հայ նաւերու կազմութիւնը. — Հայաստանի մէջ, կ'ըսէ ան, նաւերու կողերը կը շինեն ուսնիներէ և յետոյ զուրաէն մօրթով կը պատեն. նաւին ո՛չ առաջակողմը յայտնի է, ո՛չ ալ ետեւի կողմը, մօրթինը սուր է, բայց վաճանի նման բոցբակ ձև ունի :

Ամէն ժողովուրդ, իր կրօնքին հետ, պէտք է ունենայ իրեն սեփական կառավարութիւն մը, քանի որ ստիպուած է ընկերութեամբ ապրիլ : Սակայն, կառավարութեան այս կամ այն ձևը սովորաբար կախում ունի երկրին դիրքէն, ժողովրդային կեանքի պայմաններէն և շրջապատոյ ազդերու նկարագրէն : Պատմութեան փիլիսոփայութիւնը մեզի ցոյց կու տայ թէ՛ այն ժողովուրդները, որոնք ծովեղբերքները կը բնակին, քարքրուած ու աւազուած անզերու մէջ, իրենց ապրուստը ճարելու համար պարտաւորուած են յաճախ ասպատակել և աւարի տալ զաշտային երկիրներ : Այս կարգի ժողովուրդներուն մէջ, աւելորդ է ըսել, զերազոյն իշխանութիւնը, առաջին օրէն իսկ, ձեռքը կ'անցնէր այն զերգաստանին, որ ծնունդ տուած էր ճարպիկ ու յանդուգն առաջնորդներու, և այդ կերպով, ժառանգական հարստութիւն մը կազմուելով, անզգայիօրէն կը հաստատուէր միապետական իշխանութիւնը :

Ընդհակառակը, զաշտային երկիրներուն մէջ, ուր խաղաղասէր ժողովուրդ մը կ'ապրէր, հովիւ ու հողագործ, առանձին զերգաստաններ միացած, անզական ընկերութիւններ կը կազմէին ուրոյն ցեղապետի մը պաշտպանութեան տակ : Այդ իշխող ցեղապետին պարտականութիւնը՝ հովուիկ էր իր ցեղը, և անիրաւութեան ու բռնութեան դէմ պաշտպանել անոր սեփականութիւնը. ինչպէս նաև անոր աշխատանքին արդիւնքը :

Գաշտային երկիրներուն մէջ, համարին ընտանիքներ, հետզհետէ, ցեղային խմբակցութիւններ և ընկերութիւններ կազմելով, զերգաստանի հօր իրաւունքներն ալ անցած են ցեղապետին և այս կերպով հաստատուած է կայունամական կամ ամուստիրական կառավարութիւնը, որ, նախնական դարերուն մէջ, յատուկ էր նաև Հայերուն, իբրև հովիւ ու երկրագործ ժողովուրդի : Մեր առաջին նահապետները, Հայկէն մինչև Արամ, ժողովուրդին ճշմարիտ հայերը, իրենց ցեղը կը խնամէին այնպէս, ինչպէս որ ընտանիքի հայր մը կը

Տողայ իր դուռաներուն պէտքերը, կամ, ինչպէս որ, արդի գեղջկական կեանքին մէջ, ամուստքը կամ ձկնը կը կառավարէ իր գիւղը: Տարբերութիւնը նոյն էր միայն որ, մեր նահապետներուն մէջ կար մէկը, որ ժառանգութեամբ կը ստանար ազգին ընդհանուր կառավարութիւնը, և որուն հովանաւորութեան ներքեւ կը գտնուէին միւս ցեղապետները: Այս առաւելութիւնը ունէին, Հայկէն ետքը ուղիղ գիծով յաջորդող նահապետները, որոնց ամուստիրական իրաւունքները հիմնուած էին ընդհանրապէս ժառանգական սեփականութեան վրայ, որով, գլխաւոր նահապետը, ընկալեալ սովորութեան մը համեմատ կամ իր ուղած ձեւովը, կալուածները կը բաժնէր արեւակից ցեղերուն միջեւ, բայց այս գլխաւորութիւնը զգալի չէր այնչափ, այնպէս որ, երբեմն, գլխաւոր ամուստէր նահապետը, իր հայրենի ժառանգութիւնը թողլով, ուրիշ տեղեր կը գաղթէր: Այսպէս ուրեմն, գլխաւոր նահապետին ու երկրորդական նահապետներուն իրաւաստութեանց միջեւ տարբերութիւնը մեծ չէր:

Ան՝ այս ամուստիրական պարզ ու խաղաղ կառավարութիւնն է որ կը տեսէ մինչեւ Արամ: Այս նահապետին օրով է որ բոլոր ցեղերը կը միանան և Հայաստանի մէջ միապետական իշխանութեան մը հիմը կը դրուի: Արամի հիմնած միապետական դրութիւնը շատ օգտաբեր պիտի ըլլար Հայաստանի համար, եթէ Ասորեստանի տիրապետութիւնը չընդհատէր քաղաքական կեանքի խաղաղ զարգացումը, և միացած ցեղերը դարձեալ իրարմէ չի բաժնէր: Նիսուէի ինքնակայնները, ինչպէս ուրիշ նահանգներ, հարաւային և արեւմտեան Հայաստանն ալ կը կառավարէին տեղացի իշխաններու ձեռքով, որոնց գլխաւոր պարտականութիւնը՝ սուրբ հաւաքիչ էր, մէկ մասը՝ Նիսուէի սրբունիքին և միւս մասը՝ տեղական պէտքերուն համար:

Ասորեստանէն կարգուած իշխանները մեծ թիւով զատուորներ ունէին իրենց ձեռքին տակ, երկրի զանազան գաւառներուն մէջ ցրուած: Մէն մի գաւառ ունէր իրեն յատուկ տեղական կառավարիչներ, որոնք առանձին կործուրդի մը միջնորդութեամբ կը մատակարարէին ժողովուրդին պէտքերը:

Յայտնի կ'երեւայ թէ Ասորեստանի տէրութեան վարչական ձեւը մեր ազգին կառավարութեան վրայ ո՛չ նուազ ազդեցութիւն ունեցած է, Հայկազանց Հարստութեան շրջանում, թէ և որոշ ծանօթութիւն մը չենք կրնար ունենալ, քանի որ ազգային թէ օտար պատմագիրները լսութիւն կը պահեն այդ մասին: Ինչ որ գիտենք, այն է թէ, երուանդեան Տիգրան Ա. ի օրերէն սկսեալ, քաղաքային նոր կարգեր հաստատուած են Հայաստանի մէջ, ինչպէս նաև Պարսից և Յունաց զիրբու գործածութիւնը մտած է նոյն:

Հայկազանց թագուորներու ներքին կեանքէն քաղուած հետեւեալ չաճկան դրուագները նոս արտագրելէ յետոյ կը փակենք այս գլուխը:

Հայաստանի թագաւորները վաղուց սրղեզգրած էին Ասորեստանի ու Մարաստանի արքունիքներուն զեղխութիւնները, սերճ ու փարթամ կեանք մը կը վարէին, իրենց սեզանի սպասները ոսկեղէն էին և արծաթեղէն, իրենց հազուստները, զէնքերը, գոհարազարդ ու մարգարտայեւ, ոսկեթել բանուածքով էին: Երկայն վարսեր կը ձգէին և ադամանդակուս վարսակալ կը կրէին: Սակայն, նախարարներն ալ կրնային վարսակալ գործածել թագաւորին արտօնութեամբ, որ երբեմն, անոնց ընծայ կուտար իր սեփական պատմուճանք, վերարկուն: Հայոց թագաւորները, սովորական օրերու մէջ, խոյր կը զընէին իրենց գլուխը, իսկ տօնական օրերու մէջ՝ թագ: Կը հագնէին մետաքսէ նուրբ շապիկ մը, վրայէն երկար կապոյ մը, որուն վրայ կը ձգէին ծիրանին, կարմրագոյն երկայն ծածկոյթ մը, եզերքները սամուրի մուշտակով: Պատմուճանին վրայ կը կապէին ականակուս ոսկի գօտի մը, ուրկէ կը կախէին գոհարազարդ փոքրիկ սուր մը: Կը հագնէին կարմիր կամ ծիրանեզոյն կօշիկներ, և այդ գոյնով կօշիկ ո՛չ ոք կրնար գործածել, սակայն իրբեւ շնորճ, նախարարները կ'արտօնուէին միմիայն մէկ սօքերնին կարմիր կօշիկ հագնելու: Նոյն արքայական արտօնութիւնը կը պահանջուէր նախարարներէն, ոսկեղէն անօթներ և տամաններ գործածել կարենալու համար: Ժամրոզութեան կամ պատերազմի միջոցին, բարուած բոլոր վրաններուն մէջ, արքայական վրանը կարմիր կ'ըլլար, և զազաթին վերեւ կը չոզչոզար ոսկիէ կամ արծաթէ արծիւր, Հայոց թագաւորներուն զինանշանը:

Իրաններուն վրայ, մէկ երեսը թագաւորին պատկերը կը տեսնուէր, և միւս երեսը՝ թագաւորական զինանշանը:

Թագաւորները բազմակին էին, և արքունիքը կանանոց ունէր, սակայն բոլոր կիներուն մէջէն մէկը միայն, որ, արքայազուն իշխանուհի մըն էր, թագուհի կը համարուէր, միւս կիները հարձեր էին լսի: Թագաւորին անդրանիկ գատակը գահածառանգ չէր կրնար ըլլալ, մինչև որ անի ծնած չըլլար թագուհիէն: Հարձեր պահելու սովորութիւնը, որ բնապաշտական գարերէն ի վեր գոյութիւն ունէր հայկական արքունիքներուն մէջ, քրիստոնէութեան մուտքէն ետք ալ չի վերցուեցաւ:

Արքունիքին մէջ շատ մը պալատական պաշտօնատարներ կ'ապրէին. զլիսաւոր պալատականը կը կոչուէր հայր-մարդպետ, նոյն ինքն ներքինապետ, որ կը հսկէր կանանոցին վրայ, ըլլալով միևնույն ժամանակ, արքունական կալուածներուն ընդհանուր կառավարիչը և թագաւորին անձնական գանձապահը: Հայր-Մարդպետէն ետքը կու գային մարդպետները, հայր մարդպետին ստորակարգեալները, որոնք արքունիքի կալուածները կը մատակարարէին և հարկերը կը հաւա-

քէին: Թագաւորը հանդերձապես ունէր, մատուակ, ախտապետ, սեղանապետ, դա՛նապետ, սրսորդապետ, եւ. . . բայց թագադիր սպետար կը համարուէր ամէնէն գլխաւոր պալատականը, որուն պաշտօնը՝ թագաւորին զուխը թագ զնել էր: Կ'երեւայ թէ Հայր-Մարգպետին պաշտօնը համազօր էր մեր օրերու պարսկական սահրազամներու պաշտօնին:

Պետական կամ վարչական պաշտօնեաներու մէջ փոխարքաներ կամ սահմանապահներ կոչին, որոնց թիւը շատ սահմանափակուած էր: Բանակին ընդհանուր հրամանատարը կը կոչուէր Սպարապետ կամ Սպասալար: Կոչին նաեւ դատաւորներ, գաւառապետներ, գիւղական տանուաէրեր:

Նախարարները, իրրեւ իրենց երկիրներուն կամ սատրապու թիւններուն տիրապետող աւատապետներ, միայն ձեւականօրէն կախում ունէին թագաւորէն, խաղաղութեան ժամանակ՝ հարկ վճարելով ասոր, և պատերազմի ժամանակ՝ զօրք տալով. իսկ իրականին մէջ, անոնք այ միանշեման, բունակալ տէրեր էին իրենց երկիրներուն մէջ, և անոնք այ ունէին սպարապետ, մարդպետ, ախտապետ, սրսորդապետ, մատուակ, եւ. . . եւ. . .:

Նախարարները կը բաժնուէին երկու կարգի, Աւագ և Կրտսեր: Արքունիքին մէջ, ասոնց իւրաքանչիւրին համար որոշուած էր որոշն տեղ մը կամ բարձ մը, և յաճախ, այդ բարձին երեսէն, կրտսերներ կը ծագէին, որոնք արիւնշեղութեան կը յանգէին: Բարձերուն թիւը կը հասնէր երբեմն մինչեւ 900, և երբ թագաւորը կ'ուզէր նախարար մը շնորհազուրկ ընել, անոր բարձը վերցնել կու տար:

Հայաստանի մէջ, կառավարութիւնը մշտական զօրք չէր պահեր. միայն, երբ պատերազմ մը ծագէր, մէն մի նախարար, իրեն կամ թագաւորին համար զօրածողով կ'ընէր իր հպատակներէն: Չինւորը Եանանաւոր սոճիկ մը չունէր, բանակին ծախքերը կը հոգացուէր, մասամբ արքունի գանձէն, մաս մըն այ պատերազմի մէջ ձեռք բերուած աւարներէն:

Թագաւորները, յաճախ, օտար երկիրներէ զօրք կը հրաւիրէին վարձքով, և վարձկան զինւորներ կը պահէին: Խաղաղութեան ժամանակ, թագաւոր թէ նախարար, փոքրիկ զօրաբանակ մը կամ թիկնապահ զօրքեր կը պահէին: Չօրաբանակը երեք կարգի կը բաժնուէր, ծանր ու թեթեւ հեծեալներ և հետեւակազօրք: Ծանր հեծելազօրքի թէ՛ ձիերը, թէ՛ զինւորները զրահապատ էին, իրենց զրուխը սաղաւարտ կը զնէին. և տեղ, սուր ու վաճան կը կրէին: Թեթեւ հեծելազօրքը զրահ չէր հագնէր ու կը կրէր երկայն նիզակ մը, սուր ու վաճան. իսկ հեծեալ զօրքը նետով ու աղեղով կը կառէր: Ընդհանրապէս վաղեմի սովորութիւն մըն էր զէնքերը

թունաւորելը, և այդ պատճառով, հարուստները մահացու էին: Հայ ազգինաւորները հռչակ հանած էին իրրեւ քաճամարտիկ նետաձիգներ:

Երկու մեծ դասակարգերու բաժնուած էր Հայաստանի ժողովուրդը, Ազատանի և Ոչ-Ազատ: Ազատանիի դասակարգը կը կազմէին բոլոր ազնուականները, այսինքն՝ իշխանները, նախարարները, մեծ ու փոքր կայսածառերը, քուրմերը, իսկ Ոչ-Ազատները կը բաղկանային վաճառականներէն, արհեստաւորներէն, ու գիւղացիներէն: Ազատներուն զխաւսը զբաղմունքն էր զինւորական մարզանքը, սրսրդութիւնը: Այս դասակարգին համար անվայել կը նկատուէր հողի մշակութիւնը, աւելաւորը, արհեստները կամ ուրիշ քիչ թէ շատ ծանր աշխատութիւնները: Արդէն, բոլոր պաշտօնեաները կը նշանակուէին Ազատներէն, որոնք միայն իրաւունք ունէին զէնք կրելու, սրոչ գոյնով զգեստներ հագնելու, ևւն: Քուրմերն ալ, Ազատներու դասակարգին պատկանելով, ունէին իրենց սեփական կալուածները, և իրենք կը գանձէին տաճարներուն ու մեհաններուն եկամուտները: Իրենց պաշտօնը գծուած էր, մեհաններուն մէջ զո՛ճ մատուցանել աստուածներուն, կրօնային ձէսեր կատարել ու գոշակութիւններ ընել: Յաճախ, քուրմերէն կը կարգուէին դատաւորներ, արքայական կամ նախարարական զբաւնապետներ, քարտուղարներ, որոնց մենաշնորհը կը համարուէր զբաւնութիւնը: Անոնք կը պարագէին նոյնպէս բնական զիտութեամբ, բժշկութեամբ, աստղագիտութեամբ, ևւն: Քրմայական ազգեցութիւնը խիստ մեծ էր արքունիքին մէջ, ինչպէս էր կաթողիկոսինը՝ քրիստոնէութեան չրջանում:

Գալով Ոչ-Ազատներուն, մեծագոյն մասը գիւղացիներէ բաղկացած, կը մշակէին թէ՛ Ազատներուն և թէ՛ քուրմերուն հողերը, և իրենց ստացած արդիւնքին մեծ մասը կու տային անոնց, գիւղացիները կը կատարէին բոլոր միւս ծառայութիւնները, ազնուական դասակարգին քանաճոյքները գոհացնելու սահմանուած սարուկներ, թէ և մինչև ցարդ երբեք երեսան երամ չէ յիշատակարան մը, որ կարենայ հաստատել թէ՛ Հայաստանի մէջ ճորտութիւնը գոյութիւն սնեցած ըլլայ, օրէնքով կամ իրականօրէն: Գիւղացիներէն աւելի յարգանք և ազատութիւն կը վայելէին արհեստաւորներն ու վաճառականները:

Ասանց յիշելու Հայաստանի նախարնիկներուն՝ Հետացիներուն, Ուրարտացիներուն ու Պարթիւներուն հետիւնը, վտանգօրէն կրնանք ըսել թէ՛ պատմութեան մէջ հայ քաղաքական կեանքի սկզբնաւորութիւնը ժամանակակից է երկրիս հնագոյն ազգերուն, որոնք կ'ապրէին Քրիստոսէ 25-30 դարեր առաջ: Սակայն, ասանց վերաւորելու մեր ազգային հարստութիւնը, պէտք է խոստովանինք թէ հայկական հզօր պետութիւն մը, եթէ երբեք գոյութիւն ունեցած ըլլայ, կար-

ճատեւ շրջան մը միայն բոլորած է: Եղած է, ընդհանրապէս փոքր իշխանութիւններէ կամ սասորապութիւններէ բաղկացած թագաւորութիւն մը, կամ յաճախ, մէկ քանի թագաւորութիւններ, որոնք կը բաժնուէին շատ մը փոքր իշխանապետութիւններու: Ակիզքները, Հայաստանի մէջ, մեծ թիւով իշխանութիւններ կազմուած են զանազան փոքր երկիրներէ, որոնց տիրապետող իշխանները նախարար կամ սասրապ կը կոչուէին, ինչպէս տեսանք նախընթաց գլուխներուն մէջ: Այս նախարարութիւններէն մէկ քանիները կը միանային ու թագաւորութիւն մը կը կազմէին. այդ կերպով է որ Հայաստանի մէջ քանի մը թագաւորութիւններ հիմնուած էին միեւնոյն ժամանակ:

Գլխաւոր թագաւորութիւններն էին Բուն Հայաստանը կամ Մեծ Հայքը, Փոքր Հայքը և Կովկաս Աշխարհը: Ինչպէս առիթ պիտի ունենանք տեսնելու, Արարատեան կամ Արսաւեսեան Հարստութեան շրջանում, այսինքն Պարթևներուն ու Արշակունիներուն օրով, միայն Մեծ Հայքը կը պարունակէր 15 երկիրներ կամ մեծ նախարարութիւններ, բոլորը՝ 190 զաւառներէ բաղկացած: Այդ երկիրներուն ու զաւառներուն կառավարիչները, նախարար (մեծ ու փոքր) անունով, երբեմն կը նազանդէին ամէնէն զլխաւոր նախարարին, որ Հայոց Նահապետ կը կոչուէր կամ Արարատի թագաւոր. երբեմն ալ կ'ընդվզէին, չէին ճանար Հայոց Նահապետին կամ թագաւորին նեղինակութիւնը, և ամէն յարաբերութիւն խզելով անոր հետ, կը սկսէին նարկ վճարել ամենազօր ու տիեզերակալ վեհապետներուն, Ասորեստանի, Մարաց, Պարսից, Հռովմայեցիներուն և Յոյներուն: Եւ այդ պատակաւոր, որ կը տկարացնէր Հայաստանի քաղաքական ու զինուորական ոյժը, փութացուց անոր կործանումը: Երկիրներու նախարարները կամ կառավարիչները, յաճախ վայելելով անկախութիւն ու ինքնավարութիւն, և օգտուելով քաղաքական ծանրակշիռ դէպքերէ ու սրահերազմներէ, կ'ապստամբէին թագաւորէն, նարկերու վճարումը կը գազրեցնէին, այսպէս առանձին և անօգնական թողով թագաւորը՝ նայրենիքի թշնամիներուն դէմ:

Ամբողջելով այս տեսութիւնները, կը տեսնենք թէ՛ Հայաստանը դարերով կառավարուած է աւատական գրութեւն ՚որ մը, բունապետութեան նախնական ձեւը, և ինչ, Ասորեստանի, Մարաստանի ու Պարսկաստանի արքունիքներէն ընդօրինակուած մէկէ աւելի մարթիւններ՝ մուտ գտած են նաև նոյն արքունիքներուն մէջ, և չուտով ընդհանրացած ու ստրածուած են ժողովրդային բոլոր խաւերուն մէջ: Հայաստանի բնիկները, դանազան անուններով յորջորջուած, ինչպէս, Աւարատացի, Նայրիցի, Գիլգանցի, Խուրուշկեցի, Բիանեցի, Մանուացի, ևն. ևն. ամէնքն ալ մայր-ցեղի մը ճիւղերը կը համարուին, նկն յոյսովսակ Ալլահեղջ հաստակաց աւերը կրեն, քոյր ազգեր ըլ-

յալով Վրացիներուն, Քետացիներուն, Թարալներուն, Մուշքունե-
րուն, Խալիւսներուն, Քաղղէացիներուն, Կոփկասի և Աւաջաւոր
Ասիոյ գրեթէ բոլոր տուրանական ժողովուրդներուն, և Կեղբունական
Ասիոյ Մանկոյեան հնադարեան ցեղերուն:

Մարդկութեան նախնական դարերուն մէջ երեւցած ամենաբարձր
քաղաքակրթութեան ծնունդը կը պարտինք տուրանական ցեղերուն.
ասոնք են որ առաջին անգամ հնարած են գիր, զրականութիւն,
արուեստներ ու գիտութիւններ, և Հայաստանի մէջ, այդ բարձր
քաղաքակրթութեան ներկայացուցիչները հանդիսացած են մասնաւո-
րապէս Նայիրին և Աւբարտուն, որոնք, իրենց յանդուգն ու ձեռնե-
րէջ երկրակալներուն յաղթանակներովը, յաջողեցան սպառնական
գիրք մը գրաւել, պատկառանք ու սարսափ ներշնչել մերձաւոր ու
հեռաւոր ցեղերուն, և եղաւ ժամանակ մը, ուր, անոնք եղան զե-
կալար ու մերը բոլոր տուրանական ժողովուրդներուն:

Աւատականութիւնը գրեթէ շաղուած էր Հայոց բարբերուն հեռ-
ինչպէս յիշեցինք արդէն նախընթաց էջերուն մէջ, Հայաստանի ամէն
կողմերը ստորագութիւններ հիմնուած էին, և մէն մի քաղաք,
նոյն խակ մէն մի տան ունէր իրեն յատուկ արքայիկ մը, իր երկրի
հպատակներու ինչքին ու կեանքին բազարձակ տէրը, գէթ մեր օրերու
աւատապետէն նուազ անգույթ ու կեղեքոյ բռնաւորիկ մը:

Հայկազանց չրջանին գրեթէ բոլանդակ տեսողութեանը մէջ,
աւատականութիւնը տիրապետած է միայն, և աշխատաւոր ժողո-
վուրդը դարերով տառապած ու կեղեքուած է անպատասխանատու,
մեծ ու սղոտիկ բռնաւորներէ, զատապարտուած ըլլալով, խաղաղու-
թեան ժամանակ, հողը հերկելով և իր քրտինքով ապրեցնելու, և
պատերազմի ժամանակ, իր արիւնով կշտացնելու իր միահեծան
տէրերը...:



Հայոց նին լեզուի բառեր . — Աններու եւ զայբերու յասուկ
անուաններ եւ իրենց իմաստը . — Անգիր գրգրաբխն եւ
իր աւանդաւանները . — Հայկական երգեր եւ
իրենց տեսակները , նիւրբ , արուեստ , նե-
ղինակները . — Հայկական նուագա-
ւանները . — Առակներ . Զայց-
ներ , Առասպելներ եւ
Առածներ :

Յեզի մը կեանքը տարամերժորէն կտայուած է իր լեզուին հետ :
Լեզո՛ւն է որ կը թարգմանէ անոր մտածումները , զգացումները , կիր-
քերը . ան է որ կը բնորոշէ նոյն ցեղին բարքերը , անոր բարոյական ,
մտաւորական ու անտեսական մակարդակը , մէկ խոսքով՝ ազգ մը չի՛
կրնար սպրիլ առանց լեզուի եւ գրականութեան , ինչպէս որ կեանքեր
կը գողրի առանց արիւնի չրջանտառութեան :

Հայոց հին լեզուի մասին դանտայան կարծիքներ յայտնուած են
թէ՛ ազգային եւ թէ՛ օտար բռնասէրներու կողմէն , որոնք սակայն
սակաւին կը մնան լո՛կ կարծիքներ ու ենթադրութիւններ : Մենք
չպիտի պարտուինք սատով , միայն պիտի փորձենք քանի մը բառեր
դնել հոս , հին լեզուէն , որոնք բաւական յտասիրէն կ'ապացուցանեն
Հայաստանի մէջ վաղեմի քաղաքակրթութեան մը գոյութիւնը , մա-
մաւանց անդէսըդութեան ու երկրագործութեան կարեւոր ճիւղերուն
մէջ՝ Հայոց բարգաւաճ վիճակը : Այս բառերը կենդանի վկաներ են ,
երաւխաւորներ՝ հայկական քաղաքակրթութեան մը պատկառելի հնու-
թեան , եւ , միեւնոյն ժամանակ , կը հաստատեն այն ճշմարտութիւնը
թէ՛ Հայերը , անյիշատակ ժամանակներէ ի վեր , Արեւելքի աշխատա-
ւար ու արտադրող ցեղերուն զլուխը գտնուած են , ըլլալով հօտեր
արածող եւ հոգը մշակող խաղաղասէր ժողովուրդ մը :

Ահաւասիկ , այբուբենի կարգով , արածող կենդանիներուն անուն-
ները . —

Արջ, ամիկ, այծ, առն, արջառ, աւղիք (օպիք), բուծ, գառն, եզն, երինջ, զուարակ, բնջուլ, խառն, խոյ, կով, հորր, մաքի, նոխազ, որր, ոչխար, որջ, ուլ, ցուլ, քաղ, քաւռ (ֆօռ). *Նաեւ*, այծեանն, եղն, եղնիկ, եղջերու, խոզ, խոնկո՛ւ, կինն, վարազ, վիթ, քարայծ, *ևւն* .:

Այդ կենդանիներուն խումբը նշանակող բառեր՝ անդեայ, երամակ, կոյս, հօս, վճառ . *ևւն* .:

Արմաթքներու անուններ. —

Գարի, գաւառ, զկուլ, կորեակ, հանար, ոլտոն, սիսեռն, վարակ, ցորեան, *ևւն* .:

Վնասարեր բոյներու անուններ. —

Գաղձն, դժնիկ, եղին, ժանսափուռ, խայրամար, կայծու, որոնն, պատաղին, սրափուռ, քստակ, քաղ, *ևւն* .:

Վնասակար անասուններու անուններ. —

Թրբուր, մարախ, ցորեակ, *ևւն* .:

Երկրագործութեան նախնական գործիքներու անուններ. —

Արօր, ման, կամն, մակզալ, գեբանիլի, քափան, ցափան, *ևւն* .:

Մեր հին լեզուին մէջ կը հանդիպինք նաև սարազագործութեան վերաբերեալ բառերու ճիւղ հանքի մը, ուրիշ կրնանք հետևցնել թէ՛ ստաշնանկութիւնը, ինչպէս նաև ուրիշ ձևաբուրևտաթի ճիւղերը, վաղուց ծաղկած էին Հայաստանի մէջ, և թէ՛ Հայերը, իրենց ժամանակակից ուրիշ ազգաթիկ ժողովուրդներէն կը սարքերէն իրենց հարուստ ապրուստով ու հագուստով:

Հովուութեան, անասնաբուծութեան, երկրագործութեան, ճարտարաբուրևտաթի և ուրիշ ճիւղերու մէջ ստաշին կարգը զբաւոյ մեզի պէս քաղաքակրթութեամբ ազգի մը հին լեզուին բառարանը, անե՛ք, որքան ազգաս է ծովային կենդանիներու կամ բերքերու կողմէն այն իսկ քառեխ ու կողպտ բառերէն զուրկ պիտի մնար այսօր մեր բառարանը, եթէ Հայաստանը Վանայ Մովսէսով օժտուած չըլլար:

Հին լեզուի բառերուն վրայ այս հակիրճ ծանօթութիւնները ստի՛ յետոյ, կ'անցնինք հիմակ անձերու և վայրերու յատուկ անուններուն, որոնք ունին իրենց յատուկ իմաստք: Արդէն, այդ յատուկ անունները անսակ մը կ'ուսանն էին, որոնց չ'որհէ նախնիք ջանացած են յետագայ սերունդներուն աւանդել ազգային պատմական դէպքերու յիշատակները: Օտար ազգերուն մէջ ալ նոյն հակումը կը տեսնուի: Ես չ'եքր, որոնք ա՛յնքան իրաւամբ Առասպելներու հայր կը կրտսին, իրենց պատմական դէպքերը, թէկու՛ղ ըլլան ստատպելային, յսերժացուցած են յատուկ անուններով:

Պատմնք, օրինակի համար, թէ ո՛ւրիշ ծագում ուսած է եղեական ծով յորջորջումը:

Յունական հին առասպելի մը համաձայն, Աթենացիները, իրենց եղէտ թագաւորին որով, կը յաղթուն կրեաէի Մինոս թագաւորէն և կը ստիպուին հաչտութեան ամօթալի գաշինք մը կնքել, այսինքն, յանձնառու կ'ըլլան, ստրուէ տարի, երիտասարդներու և երիտասարդուհիներու խումբ մը զրկել կրեաէ կղզին, որպէս զի հան, Լարիւրինթոսին մէջ որջաղած Մինոս աւոս անուն գաղանին կեր ըլլան անոնք: Անգամ մը, Աթէնքի թագաւորին հուժկու որդին Թէսէոս, ինք ալ կ'ուզէ մանկ կրեաէ զրկուող զոհերու խումբին մէջ, իրեն ստոր քաջութեամբը՝ մարդակեր գաղանք սպաննելու և իր ընկերները փրկելու նպատակով: Այս յանգուզն արքայորդիին աղետ հայրը եղէտ՝ ահամայ կը հաւանի իր գաւկին առաջարկին, և կը սրտուիրէ նաւապետին որ, եթէ զործը յաջողութեամբ պսակուած է, վերագարձին, փոխանակ սեւի, ճերմակ առագաստ մը պարզէ: Թէսէոսի համար զիւրին էր սպաննել հրէչը, Լարիւրինթոսէն զուրս ելլելու խնդիրը զժուար էր, սակայն, ասոր ալ ճարը կը գտնուի: Կրեաէի թագաւորին Արիադնէ աղջիկը, այս կայտաւ երիտասարդին կը խզճայ և Լարիւրինթոսի զոհէն ներս մտնելու միջոցին, կծիկ մը դերձան կուտայ անոր ձեւքը, որպէս զի զժուարութիւն չի կրէ վերագտնուիլու նոյն ճամբով: Թէսէոս հրէչը կը սպաննէ, իր ընկերները կ'ազատէ և նաւը ճախայ կ'ելլէ զէպի Աթէնք: Դժբաղդարօր, նաւապետը, խնդումէն խելահորսոյս, կը մտնայ գործաղբել եղէտ թագաւորին պատուէրը, և չի փոխեր սեւ առագաստը: Մերուտի թագաւորը, Աթէնքի պարիսպէն կը տեսնէ վերագարձող նաւուն սեւ առագաստը, և մեծ աղէտը գուշակելով, յուսահատութենէն ինքզինք ծովը կը նետէ: Ահա՛, այս զէպքէն ի վեր է՝ որ այն ծովը կը կոչուի ելեակակն ծով:

Իսկ մեր քերթողայր Խորենացին յատուկ անուններու երկայն շարք մը կը ստուգարանէ: Այսպէս, կը պնդէ թէ՛ Տարսուկ (Տարօն) գաւառին անունը՝ Սեմի Տարբան գաւկէն ծագում առած է, նոյնպէս Չարուանդ կամ Չարուանդ գաւառինը՝ Չրուանէն, նոյնինքն Սեմէն, որ այդպէս կը յորջորջուէր այդ կողմերու արեւելեան ժողովուրդներու կողմէն: Հարժ լիւնագաչար, կը գրէ Խորենացին, Հայկի բնակավայր եղած է և սակէ՛ առած է իր անունը: Հայկաեկն՝ Հայկի չինած գիւղը, Հայք՝ Հայկի ու Բելի ճակատամարտին վայրը, Գեեեգ մանկ՝ Բելին ինկած տեղը:

Դարձեալ Խորենացին կը կարծէ թէ՛ Հայաստանի քանի մը լիւներն ու քաղաքները մկրտուած են Հայկազանց նահապետներուն անուններովը, ինչպէս Արագած լեռը՝ Հայկի Արմենակ որդիէն, Արմուխը, Հայկազանց այս վաղեմի նուիրական քաղաքը, Արմաշխէն, Մասիք (Մասիս) Ամասիա նահապետէն փոխ առած են իրենց անունը:

ներք. նոյնպէս Սիւնիք կամ Սիսական նահանգը՝ Սիսակէն, Շիրակ գաւառը՝ Շարսայէն, Գառնի գաւառակերտը՝ Գառնիկ նահապետէն. Գեղ լեռը. Գեղարձունի գաւառը, Գեղամի ծովը՝ Գեղամ նահապետէն. Փառախոս ու Յոլակեռ գաւառակերտները՝ Փառսի ու Յոլակ նահապետներէն, որոնցմէ առաջինը Փառսի, կ'ըսէ Սորենացին, իր արտաքին տեսքին փառաորութեան և իր արիւթեանը նամար այգպէս կոչուած է, իսկ երկրորդը Յոլակ՝ եղած է կայսառութեան ու գեղեցկութեան ցոյացում մը: Գարձեպ Սորենացին կը ստուգարանէ ուրիշ նահապետներու անունները, որոնք կը նամապատասխանեն իրենց անձնական յատկութիւններուն: Այս կարգէն են Պետն, Աբբուն, Բագուկ, Սկայոզլի, Էւն. նահապետները: Նոյն Սորենացին (Գիրք Ա. Գլ. Ժ. ԺԲ. ԺԵ.) կը գրէ թէ՛ Արարատ լեռան անունը փոխ աւնուած է Արայէն:

Յատուկ անուններու այս ստուգարանութիւնները, թէև յաճախ քմահաճ և անկարող՝ սակայն արդի քննադատութեան, ունին իրենց կարեւորութիւնը, պէտք է խոստովանինք, անոնց վրայ հիւսուած է մեր նահապետական պատմութիւնը, ունին քան ի ստապելներով:

Գալով անգիր դպրութեան, նուազ ի վեր գոյութիւն ունեցած է ան մեր ազգին մէջ: Անգիր դպրութեան մէջ ժողովուրդ մը կ'ազդի իր յուզումներով, իր սէրերով, իր կիրքերով, իր սովորոյթներով, իր փառքերով, իր մարանչումներով, վերջապէս, իր բովանդակ հոգիով:

Անգիր դպրութեան բազկացուցիչ սարքերը կը կազմէին ժողովրդային առածներ, երգեր, զրոյցներ, առակներ և ուրիշ պատմուածքներ, որոնցմէ, զմտադարար, քանի մը կտորներ միայն նամած են մեր ձեռքը:

Ասոնց նաւասարիտ աւանդապահները, հեթանոսական շրջանին մէջ եղած են քուրմեր, գուսաններ, վիպասաններ, եղբրամայրեր, և յետոյ, քրիստոնէական շրջանում, Աչուզներ, Մուրիկներ ու Մամեր, որոնց մասին պիտի խօսինք ներկայ գլխուն մէջ:

Ընդունելով Արեւելքի մէջ նախկին քաղաքակրթութեան վաղընջական գոյութիւնը, ընդունած պիտի ըլլանք միեւնոյն ժամանակ մեր ազգին մտաւորական մակարդակի բարձրութիւնը:

Դասելով մեզի նամած մէկ քանի երգերէն, ստիպուած ենք խոստովանիլ թէ՛ բնապաշտական դարերուն սկիզբները ծաղկած էր բանաստեղծութիւնը Հայաստանի մէջ. և ազգ մը, որ բանաստեղծներ ունեցած էր կամ այսպէս ըսենք, բանաստեղծութիւնը մշակած էր, յայտնի է թէ՛ ինքզինք կրցած էր ազատել սամկութենէ և կեանքի բիրտ ըմբռնումներու կապերէն, կը նշանակէ թէ՛ օգնուացած էր անոր ճաշակը, և բնութեան գեղեցկութիւններուն, մարդկութեան սիրագործութիւններուն, հերասային ստաքինութիւններուն, և մու-

նաւանդ , հոգեթով տեսարաններուն և սրտի բնածին ցանկութիւններուն հանդէպ անզոյ առ անտարբեր չէր կրնար մնալ : Ի՞նչ հարկ կայ սակաւն ծանրանայ այդ կէտին վրայ . մէկ երկկեր երկկն մը կը բաւէ մեզ համոզելու թէ՛ Գողթան երգիչները սովորական մարդիկներ չէին , ճշմարիտ բանաստեղծներ էին անոնք , բնութեան սիրահարներ , զեղեցկութիւններու և քաջութիւններու վիպասաններ , որոնք պատերազմներուն յաղթանակները , և թագաւորներուն ու նախարարներուն հերոսութիւնները կը փանաւորէին իրենց երգերով :

Կ'արմէ հակիրճօրէն յիշել այդ երգերուն տեսակները , նիւթը , արուեստը , հեղինակները : Կանխենք ըսել թէ՛ անոնք մէկ անգամով կամ միեւնոյն ժամանակի մէջ չինուած չեն , ո՛չ ալ երկու կամ երեք անգամուան մէջ : Չենք ալ կրնանք ըսել թէ՛ հնագոյն ժամանակներու ծնունդ են անոնք . կարծիք մը կայ սակաւն թէ՛ այդ երգերէն մէկ քանինը հեթանոսական շրջանին վերջերը չինուած ըլլան : Պատմութիւնը մեզ կ'ապահովէ թէ անոնք գոյութիւն ունէին նոյն իսկ Քրիստոսէ մէկ ու կէս դար , կամ Հայաստանի մէջ քրիստոնէութեան մուտքէն չորս հարիւր յիսուն տարի առաջ :

Դժբաղդարար , անոնց հեղինակները զեռ անծանօթ կը մնան մեզի , զէթ իրենց անուններով , սակաւն , երգերուն պարունակութենէն դատելով , կարելի է հետեւցնել թէ անոնք չինուած են , ո՛չ քուրմերէ , ո՛չ ալ անոնց ազդեցութեան ներքեւ , ո՛չ կրօնային յիշատակներու , ո՛չ ալ բազմներու առջեւ երգուելու համար , քանի որ , այդ երգերուն շատերը քուրմերուն ու բազմներուն գոյութենէն առաջ էին :

Որո՞նք էին ուրեմն այդ երգերուն հեղինակները :

Պատմութիւնը կը յտէ , մինչեւ ջարդ մտի է մեզի այդ կէտը : Սակաւն , կը տեսնենք թէ արքունիքը միշտ բաց եղած է այդ բանահիւսներուն , դուստներուն ու վիպասաններուն առջեւ , և թէ ասոնք զիրութիւններ և մասնաւոր արտօնութիւններ ունեցած ըլլալ կը թուին բարձրագոյն շրջանակներու մէջ ժամկու և քաղաքը բնելու բոլոր պետական գաղտնիքները , կը տեսնենք թէ՛ հայ վիպասանները , որոնք այս կամ այն թագաւորին քաջութիւնները կ'երգէին , միայն Գողթն դաւառի փասքը չէին կապմեր , ամբողջ հայրենիքին , Հայաստանին կը պատկանէին անոնք , իրենց երգերուն մէջ հայրենի քաղցր յիշատակներուն բուրումները կը զգանք : Հայ վիպասանները գանազան հայ ցեղախումբերուն միջեւ ազգակցի զգացումները փառ պահելու ծառայած են : Պա՛ճ մը կը փորձուինք Հայաստանի մէջ ալ փնտաելու ելլադայի յոնիական ու բիւլակական երգեցիկներու գպրոցները , և նոյն իսկ կարծելու թէ՛ յոյն հազներդուներուն պէս Արքունիքէն և Ազատներէն վարձուած էին Հայոց վիպասաններն ալ , որոնք

պաշտօն անէին երգելու և դրուատիքներով յուերմացնելու թագաւորներուն ու նախարարներուն քաջութեան արարքները, պատերազմներու մէջ անոնց սարած յաղթանակները, արքունիքի ճոխութիւնները, որսի արշաւանքները, թագաւորներուն ու բամբիջներուն սէրերը, զեղեցիկութիւնները, մէկ խօսքով իրենց ժամանակի մեծագոյն զէպերուն շխտակները :

Ստոյգ է թէ վիպասաններուն երգերը, ժողովուրդի բոլոր խււերուն մէջ սարածուած, Նեթանուսական դարերուն Նրապոյրը կը վերարթնեցնէին, և, Նախաակ քրիստոնէութեան նոր լոյսին, որ ճառագայթած էր Հայաստանի վրայ, սերունդներուն համակրանքը կը գարձնէին զէպի բնագաշտական դարերու շիջկախաւ արշաւոյնները, այնպէս որ, Լուսաւորիչի և իր յաջորդներուն քարոզած Տեմչալի Տիրամայր Ասոււածամօր՝ չէր կրնար տակաւին սիրահրէն վանել Ոսկեծղի, Ոսկիամայր Տիկիկն Անամիւք, որուն պաշտամունքը զեռ կը տեսէր Բարձր Հայրի կողմերը :

Խորենացին Հին Հայոց կը վերադրէ «Անիբեկուրիւն երգարանաց բանաւորաց», սակայն իրմէ աւելի հին պատմիչ մը, Փաւստոս Բիզանդացին, Գ. Գարու Հայերուն՝ զէպի վիպական երգերը տածած ու պահած սէրը յիշելով կը գրէ. — «Ջիւրեանց երգս առասպելաց զվիպասանութեան սիբեցեալի ի փոյր կերութեանցն, և ևնին հաւասայեալի և ի նոյն հանուպագորդեալի : » Իսկ Խորենացին (Գիրք Ա. Գլ. Ա.), ինքզինք հերքելով, կը գրէ թէ, Ե. Գարուն, կը գանուէին տակաւին Գողթնացի վիպասաններ, որոնք, երաստի զեակզերքի այդեսաններուն մէջ կը նշեցնէին հայրենի երգեր, և կ'եզրակացնէ թէ՛ անոնց մէջ զեռ վաս էին Նեթանուսական հայրենի կրօնին սէրն ու նախանձախնդրութիւնը Գողթնացիները, ըսած է ԺԹ. Գարու հայ բանասէր մը, Հայոց մէջ, քրիստոնէութեան հանդէպ եզած են այն ցեղը, ինչ որ էին Սաքսոնները Գերմանացիներուն մէջ :

Կորին (Վարք Ա. Մեհարայի) և Խորենացի (Գիրք Գ. Գլ. Խէ. և Կ.) կը գրեն թէ, նոյնիսկ Ե. Գարուն աստջին կէսին մէջ, Գողթնացիներուն մէջ ծածուկ կամ յոյանի յարոյնէր կային Նեթանուսական և թէ Ս. Մեհարայ իր ստաբիլական կեանքի մեծագոյն ժառը գոճած է անոնց գարձին Գուլբան երգիչներու հոչակաւոր սկուտը մը կազմուած կը տեսնենք Ե. Գարու վերջին կէսին մէջ (Խոր. Գիրք Բ. Գլ. ԽԹ. և Գլ. ԿԱ.) : Ժ. Գարուն, Գրիգոր Մագիստրոս կը գրէ թէ ինք լսած է զեղջուկներու բերնէն այդ կարգի երգերէն հետեւալ կարգը. —

Ո՛ր սայր ինն գծուխ ծխանի և գտաւտօսն նաւասարգի,

Զվագելն եզանց և զվագելն եղջերուաց,

Մեկ փոզ հառուտ և բմբկի հաւհանեալ :

Հայկական երգերը զանազան տեսակներէ կը բաղկանան, որոնք, մեր նախնիքներուն լիզուովը, կը կոչուին Վեպ, Վիպաասնուրիւն, Վիպագործուրիւն, Թուելիաց երգեր, Յուցի կամ հաղերգ, Փեղօն, Լալօն, Տալ, Մեմուել, Նուագ, Գով, ևն. :

Վիպական երգը, որ, ամէն ազգերու մէջ ալ, բանաստեղծութեան անդրանիկ ծնունդը համարուած է, երկար դարեր ապրել է յոգովորդներուն ռազմաչափ ընկերները յաղթանակէ յաղթանակէ, սեղի սուած է Քնարականին, որով, ընտանեկան կեանքի յուզիչ գրուածք մը կ'երգուէր, յաճախ գուսաններու կամ բանահիւս աղջիկներու բերնով : Յուցի կամ հաղերգը հրապարակային ուրախութիւններու մէջ կ'երգուէր : Հայկազանց շրջանին, և յաջորդող դարերուն մէջ ալ, Հայերը կիներու և կոյս աղջիկներու երգեցիկ խումբեր կը սահէին, ձայնարկուներ կամ ելերամայրեր, որոնք սեւեր հագած, կ'ընկերանային դամբանական յուղարկուօր թափօրին, և կեղծ, արուեստական ձիչերով ու սղբերով կ'աշխարէին : Մեմուելը կամ Գով մը կ'երգէին այս ջայռամայր երգեցիկները, վախճանային սուրբքը, կեանքը, զանազան ձիրքերը գրուածելով և իրենց կանայքի կոծերով յուզելով յուղարկուօր բազմութիւնը :

Այս երգերուն կ'ընկերանային նաև նուագարաններ, որոնք, դասելով հիններուն կիրարկած գործիքներէն, երևբ տեսակ էին, փչուղական, լարական ու բնական : Եղեգէ փողը կամ երգիւնը, առանձին կամ իրարու կապուած զանազան ձայնի աստիճաններով, եղջիւրէ ու պղնձէ, փոխգեան սրիւնը, որ նուանական է թէ զրոցի աղջկէն փոխ ստնուած էր : Լարական կամ աղիլէ նուագարաններ, բնար, ջնար, սաւիլ, փանդիւն, վիւն, բամբիւն կամ կօնոյ : Իսկ Թնղական նուագարանները կը բաղկանային ծնծղաչէ ու թմբուկէ : Հարանիքներու կամ խրատանքներու մէջ, ել գերուն կ'ընկերանային նաև երբեմն առանձին կախա, կախաւ, կայք կամ վագ, և երբեմն բազմութեամբ իրրեւ պար կամ պարանցիկներ : Եղերամայրերն ալ ունէին իրենց յատուկ արտուած ու սղուօր պարերու տեսակները :

Հայկական երգերուն արուեստը յար և նման էր միջին Ասիոյ բանաստեղծութեան արուեստին, որուն ջիգերը կը կազմեն Չալիակաւնուրիւնը կամ Թուականուրիւն և Համեմատականուրիւն : Երբայական ազգի յուրօրական մատեններուն բանաստեղծութեանը վրայ ձեւուած են անոնք : Եւ Եկեղեցւոյ շարտեանները նոյն արուեստին հետևողութեամբ է որ շինուած են ու կ'երգուին, օրինակները բազմաթիւ են : Մեր հին ու նոր երգերուն միջև հինական ատրրերութիւն մը կայ : հինին մէջ՝ զգացումներն ու մտածումները կը արբէին, մինչդեռ նորին մէջ, ձեւին ու չափին աւելի կարեւորութիւն կ'ընծայուի, քան թէ իմաստին :

Հայաստանի մէջ շատ մը ժողովրդային առածներ, ստակներ ու առասպելներ կային, որոնք աւանդութեամբ հասած են մինչև մեր օրերը, և որոնց նիւթը պատմական կամ բարոյական է: Ասանցմէ յիշենք միայն՝

«Յէ քո ճարայի որկարն է, մեր ճիրակայ ամբարքն չեն»

Առածը, որ ծանօթ է արդէն, կը յիշեցնէ Արմայիտի սղուն ճարայի որկրամոլութիւնը:

Հայկական գրոյցներէն կամ առասպելներէն յիշենք միայն մէկ քանինները:

Արայի գրոյցը, որ մեզի ծանօթ գրոյցներուն մէջ առաջին տեղը կը բռնէ, և որուն վրայ գրած ենք արդէն նախընթաց գլուխներուն մէջ, Շամիրամի սուղը, և Յարալէզները: Այս գրոյցը պատմուած կը դաննէք նաև Պատանի Հասարակապետութիւն զիրքին մէջ. — «Եր անունով պատմիլ լիտայի Հայը, կը գրէ Պատան, պատերազմի մէջ ինկած ըլլալով, 10 օր հաքը, մարմինը դիակներուն մէջէն անկողմ հանուեցաւ և եր խարոյկը հանեցին օր ուրեն, յանկարծ 12դ օրը վերակենդանացաւ. ան և սկսաւ հանդերձեալ ուշաարհին բաները պատմելու.» (Մկրտիչ Էմին, Վ.Էպօն Նոյն Հայաստանի, ասպ. Մոսկուա, 1850, էջ 85-92):

Արատազդի մահուան գրոյցը, զոր պատմած են Եզնիկ Կողբացին ու Մովսէս Խորենացին, թէև Իրարմէ քիչ մը տարբեր ձեւով:

Արծրունեաց գրոյցը, որուն համեմատ, իբր թէ նահապետութեան ժառանգ մանուկ իշխանորդին, իրենց Հաղամակերս ստանին մէջ քնանալու միջոցին, անձրև ու արև, փոփոխակի փասելու միտքանած ըլլալով, արծիւ մը կու գար, երկու թևերովը կը պաշտպանէր մանուկը:

Զերմագէս կը փափաքէինք ներկայ հասոյին կցել նաև հին Հայաստանի — Արարսու, Նայիրի, Մաննա, ևն. — աշխարհացոյց քարէս մը, ինչպէս նաև Հայկազանց Շքանի ժամանակակից մէկ բանի կարեւոր նայ բազում օրութիւններու և սասրազութիւններու երկիրներուն քարտեղեր, սակայն, ասիպուած ենք երկիս վերջին հասոյին մէջ զետեղել զանոնք:

ՎԵՐՋ Ա. ՀԱՏԱՐԷՆ



ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ



Մինչև ցարդ լոյս տեսած Հայոց պատմութիւնները պարզ դասագիրքքեր եղած են, միայն դպրոցականներուն ծառայելու համար ներկայ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, որուն պատրաստութեան աշխատուած է շուրջ քառորդ դար մը, կուգայ խիստ զգալի պակաս մը լրացնելու, մանրամասնօրէն ու հուշատարմօրէն պատկերացնելով հայ ազգին բովանդակ կեանքը, օտար ազգերու հետ տնոր յարաբերութիւնները, դիտական նորագոյն յայտնութիւններով և իրզմախա ուսումնասիրութիւններով ճոխացած, բան մը, որ կը պակսէր մինչև ցարդ հրատարակուած ազգային պատմութիւններուն մէջ և այս ճշմարտութեան համազուելու համար կը բաւէ միայն հարեւանցի ակնարկ մը ձգել ներկայ Ա. հատորին վրայ:

Սակայն, այսքան ընդարձակ, այսքան երկարաշունչ հրատարակութիւն մը գլուխ կարենալ հանելու համար, անհրաժեշտ ճիգերը չեն բաւեր, անհրաժեշտ է հանրային քաջայերանքը, քանի որ, ներկայ նիւթապաշտ դարուն մէջ, մեկեանաներու սովը կը տիրէ, մինչդեռ, մէկ դար առաջ, Եանիմանեան երկու հարագահրարէ կ'անմահանային Հ. Մ. Չամբեանի հետ, Հայոց պատմութիւն եռահատոր երկին տպագրական ծախքը հոգալով:

Մեզի կը մնար գործնական, ներկայ հրատարակութեան անխափան շարունակութիւնը տպահովող միջոց մը, այն է բաժանորդագրութիւնը: Այս Ա. հատորին երեւումին հետ կը դիմենք մեր ընթերցասէր հատարակութեան և կը խնդրենք որ բաժանորդագրուին այժմէն, 60 զրշ.ի չնչին գումարի մը փոխարէն, գտնէ քիչ մը թեթեւցուցած ըլլալու համար մեր բեռը, որ ծանր է և վեր' լոկ անհատի մը կարողութենէն: Անէն ճշմարիտ Հայ, որ կը փափագի ունենալ իր ցեղին լիակատար պատմութիւնը, պէտք է ստով գորդարէ իր գրողարանը, իրբեւ Ազգային Աւետարան մը:

Այս վստահութեամբ և այս հաւատով է որ բացինք բաժանորդագրութիւնը, որ կանխիկ է.

Պոլսոյ համար	Վրո. 60
Դաւառի համար (Թղթատարի ծախքով)	» 70
Արաստիմանի համար	» 70
Ամերիկայի համար	Տոլար 4
Ռուսիոյ համար	Ռուբլի 5

'Իրեւել շեղման' Պոլսոյ Ա. ի, Օրխան պէյ խան, 25
Կամ ՆԱԶԱՐԷԹ Լ.Ֆ. ԱՅՏԵԱՆԻՆ, Պոլսոյ Ա. ի, րի 40

Ա. ՀԱՏՈՐԻՆ ԳԻՆՆ Է 15 ՂՐՈՒՏ

